


390.  
4-6









200

223 RJ

Ս Բ Բ Ա Զ Ա Ն

Պ Ե Տ Մ Ա Լ Թ Ի Ւ Ե

009

Uganda

2004

1684-64

1715

ՄՐԳԱՋԱՆ

ՎՊՊԱՏԱԿ ԹԻՒԴԵ

280.0  
Բ-61

ՅՈՐԴԱՌԱՅԻ

ՏԵ. Հ. ՄԻԿԱՅԱՅ Վ. ԲԺՇԿԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴԻ Ի ՏԱՐԻՒ



1	004
2	005
3	006
4	007
5	008
6	009
7	010



Ի ՎԵՆԵ ՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԴԱՅԱՐՈՒԻ

4838

28(09)



ՅԻՇԱՏԱԿ

ԶԱՐՄԻՆ ԲԺՇԿԵԱՆՑ

ԱԴԱ ՄԱՆՈՒԿԻ, ՅՈՎՍԻՓԱՅ.

ԵՒ ՅՈՎԱԿԻՄԱՅ-ՀԻՄՐԻՒՅ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Ա Ր Բ Ե Զ Ա Յ Ա

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԳԻՐՔ ԶՈՐԾՈՐԴ

ՔԱՆԱԿԱՑԱՊԵՏՔ ԵԿԵՂԵՑԻԱՅ

ՎԻՌԱՍՈՍԻ

1320. **Վ**ԻՌԱՍՈՍ Եկեալ քահանայա-  
պետ հանդերձելոցն բարեաց իւրով արեամբն  
եմուտ միանգամ 'ի սրբութիւնն առ 'ի քա-  
ռութիւն մեզաց և 'ի միրկութիւն հոգւոց ըստ  
սահմանելոյ 'ի յաւիտենից <sup>1</sup> : Որ և յետ կա-  
տարելոյ զմիրկագործ անօրէնութեան խորհուրդ  
ըստ գրոց և յետ հաստատելոյ 'ի վերայ առա-  
քելոց զեկեղեցի իւր , վերացաւ յերկինս առ  
չայր՝ թողլով յաշխարհի փոխանորդ իւր քա-  
հանայապետ Եկեղեցւոյ զաւաքելապետն Պետ-  
րոս և յետ նորա զյաջորդս մինչեւ ցայսօր ժա-  
մանակի (1576) : Արդ զկնի պատմական ճա-  
ռին Եկեղեցւոյ ժամը է 'ի կարդիս բուռն հար-  
կանել զպատմութենէ վարուց նոցա՝ սկսեալ 'ի  
Պետրոսէ մինչեւ ցներկայ քահանայապետ Հռով-  
մայ . հանեալ 'ի գաւազանագրոց անտի յաջոր-  
դութեան քահանայապետաց ըստ վկայու-  
թեան արանց սրբոց և երեկլի վարդապետաց  
ականատեսից :

# ԱՐ ԱՆՁԻՆ ԴԱՐ

Ա

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԵԱԼ

ԱՅ ՏԵՇԱՆ 45, և կայուելութեան ԿՂԾԳԵԱՅ 3 :

1521. **Պ**ԵՏՐՈՍ ԱՌԱՋԵԱԼ ԳՄԼԻԼԵԱԳԻ ԹԱՌԱՋԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՎԵՄ 'Ի ՎԵՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՐԻՍՏՈՆԵԼԻԾ, ՅԱՌԱՋԱԳՈՐԾՆ ՍԻՄՈՆ ԿՈՉԵցԵԱԼ ՈՐԴԻ ՅՈՒԺԱՆՈՆ՝ ԸՆՄՈՐԵցաւ 'Ի ՔՐԻՍՏՈԱՆ և ԿԱԳՈւցաւ ԱԼԵՄ ՀԱՍՏԱՏՈւթեան ամենայն ԵԿԵՂԵցեաց ըստ ՄՐԱՊՅ ԼՈՒՍԱԼՈՐՃԻՆ մերայ<sup>1</sup> : ՈՐ և այնուհետեւ կոչեցաւ Պետրոս, լինելով երեսփոխան Քրիստոսի, Հովուել զհօտիւր առաքելուկան քարոզութեամբ : ՈՐով զառաջինն դարձոյց 'Ի ՀԱՆԱՍԱ զհազարաւրա յԵՐՈՒՍԱՂԵՄ, ուր ձեռնագրեալ զարդարին ՅԱԿՈՎՔ Եղիսակոպոս այնը ԵԿԵՂԵցւոյ: Անտի անցեալ յԱԽԹԻՐՔ ԱԿՈՐԵՈց յամի 38, անդ ՀԱՍՏԱՏԵԱՑ յայինժամ զաթու իւր ամսեօթն անուն ԵԳԵԱԼ ՀԱՆԱՏԱԳԵԼՈց ՔՐԻՍՏՈՆԵԱՅ<sup>2</sup> : Եւ խնամ տարեալ և այլոց ԵԿԵՂԵցեաց՝ ԵԼ յԱյցելութիւն ԵԿԵՂԵցւոյն Երուսաղեմի, ուրանոր և Հրամանաւ ՀԵՐՈՎԼԻ ԱԳՐԻՎԱՊԱՅ արկու 'Ի բանտ (633): Սակայն 'Ի ձեռն Հրեշտակի տեառն զերծեալ անտի էանց 'Ի ՀԱՌՈՎԼ, և քարոզեալ հզօր վարդապետութեամբ և նշու-

<sup>1</sup> ԱԳԹԱԲԱՆ. 340: ԵԿԱԵԲԻԱՆ, ՃԱՄԱՆ. յաժ. 44: ԿԻՊՐԻԱՆԱ ԲԱՆԱՂԱ 71:

<sup>2</sup> ԳԱՐԵՒ ՃԱ. 26: ՄԵԾՆ ԳՐԻԳՈՐ. ՔԼՐ+ 5 և 7. ԲՂԱ. 2 և 40:

նօք գարձոյց զբաղումս յամին կ' : Ապա  
՚ի հետևեալ ամի զկիի եօթնամեայ իշխանու-  
թեան զԵւոդիս կարգեալ եպիսկոպոս եկե-  
զեցւոյն Անտիոքայ (656) փոխադրեաց զքա-  
հանայտակետական աթոռ իւր՝ ՚ի Հռովմ՝ միալ  
անդ զամենայն ժամանակս իւրըստ որբոյն Ին-  
Կովկենախոսի <sup>2</sup> :

Յամի տեառն 51 Կղոդիսս կայսր Հրովարտա-  
կաւ իւրով հալածական արար զՀրեայս ՚ի  
Հռովմոյ , ընդ նոսին և զՊետրոս . որոյ ելեալ  
յԵրուսաղէմ գումարեաց զԺողով առաքելոց  
(646) : Աակայն յետ հինգ ամաց ՚ի մեռանել  
Կղոդեայ գարձաւ անդրէն յամոռ իւր ՚ի  
Հռովմ : Անդ ՚ի ձեռն մեծամեծ հրաշից և ա-  
ռաքելական քարոզութեանց ծաւալեաց զլոյս  
պւետարանին գարձուցանելով ՚ի հաւատաս զան-  
թիւ բազմութիւն : Լուեալ Ներոնի թէ ոչ  
միայն ՚ի Հռովմ , այլ և ՚ի բազում տեղիս մեր-  
ժեալ հեթանոսաց զկուռո՞ գառնան ՚ի քրիս-  
տոնէութիւն , առ գառնութեան սրախն սկիզբն  
արար սոսկալի հալածանաց , կտտորելով անխը-  
նայ զյոլովս ՚ի հաւատացելոց վասն ՚ի Քրիս-  
տոս հաւատոց : Անդ ՚ի նոյն հալածանս կատա-  
րեցաւ և ինքն Պետրոս մահուամբ խաչի դլիսի-  
վայր՝ յետ առաջնորդելոյ Եկեղեցւոյն ամս  
քսան և հինգ : Ընդ նմին գլխատեցաւ յաւոր  
յայնմիկ և Պօղոս յամի ծննդեան փրկչին 69 ,  
և ՚ի հասարակ ամի 66 <sup>3</sup> : Պետրոս թաղեցաւ

1 ԹԱԿՈԴԱՐԵԿԱՍ ԱԽԱԴԱ ԱԽ ՀԱ ԳԼ ԵՐ ԵՐ 14 . հա . 3 :

2 ա ԹԱԿԱԴԱ 18 : Պօղոս Որոսիս , ԳԻՐ + Ղ . պատմ .  
ԳԼ Ե : Բաւըսնիս յամ 39 . 44 . 51 : ԳՎՐԾ + Բ .  
14 . Ե . 8 . ՃԾ . 4 . Ղ . ՃԾ . 6 . 20 :

3 ՚ի հնուան հասարակ ԱԽԱԴԱ ԱԽ ՀԱ ԳԼ ԵՐ ԵՐ

'ի Վատիկան, ուր յետոյ շինեցաւ մեծահռչակ տաճար. և Պօղոս'ի Ճանապարհին Ոստեայ, ուր կառուցաւ այլ տաճար հոյակապ: Զորոց ոչ միայն վարդապետք եկեղեցւոյ, այլ և արտաքին պատմիչք վիպագրեցին<sup>1</sup>:

## Բ

## Ա. ԼԻՌՈՍ

Ա. Տ. 69, և կայսերութեան Ներսոնի 15:

1322. Լինոս ծննդեամբ 'ի Վոլագերայէ Դոսքանայ տշակերտ Պետրոսի վլոմին յաջորդեաց զկնի կատարման նորտ յաթոռ քահանայակետութեան չոռվմայ ըստ Եւսեբեայ և

պնդ էրից ամաց ծննդեան: Կորին աղագուստ ամ ծննդն ունեան յառաջն ունեան աղագուստ ամ ծննդն էրից ամսութեաց պահանակագրութեան պատմութեան ժողովն ունեան գիրք: Այս օրինակ կարգելու և յայս սրբութ գիրք մինչև սամ դեռան 275 ըստ կարգապահութեան ծամանափառաց:

1 Յիշե Տակիդոս պատմիւ կայս առաջին հաւածութեան: Գիրք 15. Գլ. իւ: Տերպուղ: Հագուգ: Գլ. է: Իսկ Ա. Օքոս: ասէ: «Եկեղեցին պատմից» հաւածեցաւ: 'ի Ներսոն յամի ծն: 67. 'ի Պատմականութեան: 'ի 97. 'ի Տըայիանութեան: 'ի 110. ՀԱԿոսինութեան: 'ի 165. 'ի Սեւերութեան: 'ի 205. 'ի Մատուիմութեան: 'ի 238. 'ի Պէտրութեան: 'ի 253. 'ի Վաղերիանութեան: 'ի 260. յՈւղիպանութեան: 'ի 275. 'ի Պիուղեպիանութեան: 'ի Մատուիմութեան: 'ի 287: Գիրք 18. յաղաղապին այ: Գլ. ծբ: Այւ է պարագին Մատուիմութեանու գաղըշը իսուս, Մատուիմուս, Լիինանու յամի 305—325: Եսա և Յուղիանու ուրացող 'ի 364-

այլոց՝ զոր և յիշե Պօղոս ընդ կղօդեայ՝ որ  
համարի հայր Աննոսի ։ Արդ քահանայապետս  
այս 'ի նախնեաց ձայնեալ այր մեծարու յաղ-  
նուական զարմէ՝ յառաջագոյն կարգեալ էր  
օդնական Պետրոսի յառաջնորդութիւն եկե-  
ղեցւոյ ։ և իբրև ընտրեցաւ քահանայապետ  
պահծալի հանդիսացաւ 'ի դառն հալածման  
անդ զօրացուցանելով զհաւատացեալս ։ Երկիցս  
արար ձեռնադրութիւն 'ի միջոցի մետասանա-  
մեայ քահանայապետութեան իւրոյ, ձեռնա-  
դրեաց հնգետասանն եպիսկոպոսունս և ութու-  
տասն երիցունս ։ զորս առաքեսոց 'ի հոգաբար-  
ձութիւն եկեղեցեաց յայլեայլ դաւառս ։ և  
ինքն վայլէր միանդամայն աստուծահրաշ  
սքանչելէօք ։ Ապա յաւուրս Վեսպանիանոսի  
կայսեր նահատակեցաւ 'ի ձեռն Ստատուրնինո-  
սի ։ յետ բժշկելոյ զդուստը նորա 'ի դիւահա-  
րութենէ ։ յինն կազանդացն հոկտ. ։ յամի ծե.  
80. կացեալ 'ի հայրապետութեան իւրում ամս  
11. ամիս 2. և առուրս 23 ։ ։

Արիստանս, Պատրիերամարտ և այլք (730): Լահ-  
պանդիս, իամ Լուսիոն յզ. մահ. հալած. առաս. գլ. ք: Բարոնիսս. յամ 57: Սամուել երես յամ լը:  
1 Պատրիարքիւն եիւշ. գիր+ 3. գլ. ք: Ճամանա-  
կադր. յամ Արքահ. սիք: Են որ+ ասպ իարգէն  
շկզէմէ (1524): ք Տիմոթ. գլ. ք: 21: Բարոն-  
յամ 69: կադելէր. 'ի սահման. առաս. գիր+ 7.  
գլ. իւզ:

2 կաղանդ. առ նախնի հոռովայեցիս նշանակին  
ամսագլուխ. որ և ասել ինն առուբդ+ յառաջ գան-  
դամիսն հոկտէմբեր:

3 Եսուբ. պատմ. եիւշ. գիր+ 3. գլ. ք: Բա-  
հիսս յամ 67. 78: Առ Տերուուշ. ել. 655: Ե-  
րանսս գիր+ 3:

## Գ

## Ա. ԿԴԵԴԱՍ

Ա. Տ. 80, և կայսերութեան վէստասիանուի 10 :

1323. Կղեգոս Հռովմայեցի որդի Եմիլիանայ, աշակերտեալ ձեռնադրեցաւ եպիսկոպոսի Պիետրոսէ . ասպա յետ կառարման Վինոսի յաջորդեալ յաթոռ քահանայապետութեան վարեաց զիշխանութիւն իւր ամս երկոտասան, ամփաս եօթն, և աւուրս երկու : Սա եղեւ տուածին . որ 'ի կիր Էած 'ի կոնդակս զայս բան առղջոյն և օրհնութիւն առաքելական ։ որովէս է տեսանել յամենայն նամակս քահանայապետոցն Հռովմայի Որ և բաժանեաց զչռովմը 'ի քսան և հինգ ժողովրդապետութիւնս՝ կարգեալնոցա զերիցունս 'ի հոգաբարձութիւնն : Հռուսկ յետոյ պատկեցաւ մարտիրոսական մահուամբ 'ի հալածանս Դոմետիանոսի յամի ծն . 93 :

## Դ

## Ա. ԿԴԵՄԵՍ

Ա. Տ. 93, և կայսերութեան Դամետիանոսի 10 :

1324. Կղեմէս Հռովմայեցի որդի Փաւոտինոսի յիշեալ 'ի Պօղոսէ իրրե վաստակակից իւր՝ և կաց շորբորդ քահանայապետ, զոր ոմանք

1 Տէրտուռ. Գով. Ե : Եսաբբ. Ճաճ. Աղե . Պատմ. Էկ. Գիբ. Յ. Գլ. Ճե : Բաբոն. յան 80 : Բառ. 89 :

կարդ են անմիջապես զկնի սրբոյն Պէտրոսի .  
զի լժեպէտնա թղթն առաքելապետն կարգեալ  
էր զնա յաջորդ իւր , այլ նա առ կարի խոնար-  
հութեան հրաժարէալ յայնմանէ՝ առջի ետ 1 ի-  
նոսի (1322) : Սակայն անգադար վաստակէր 'ի  
քարոզութեան աւետարանին ընդ առաքելոց ,  
չարչարակից լինելով Պօղոսի և վաստակակից .  
որով ընտրեցաւ քահանայապետ և պանծալի  
գտաւ 'ի կառավարութեան՝ ծաղկեցուցեալով  
զեկեզեցին ամս ինն , զամփաս և զաւուրս մեց ,  
դժրձուցանելով զբաղումն 'ի ճշմարտութիւն ,  
և ապա մատնեցաւ 'ի ձեռս հեթանոսաց 'ի հա-  
լածանս Տրայխանոսի . զոր գտնիւք և քերա-  
նօք տանջեալ աքսորեցին 'ի Քերաննէս Դաւ-  
րիոյ : Անդ երիտ զբաղմաւթիւն քրիստոննէց  
գատապարանոց վասն 'ի Քրիստոս հաւատոց  
'ի կոփիւլ զվիմափոր սէնեակս և այրս 'ի քա-  
րանձաւաքաղաքն Խնքիրմանու , սրում ա-  
կանատես իսկ եզաք : Անդանօք սուրբն Կղմէս  
ոչ միայն զօրացոյց զաքսորեալս , այլ և սքանչե-  
լի վարդապետութեամբ ծաւալեաց զլոյս ա-  
ւետարանին ընդ թերակղզին Խրիմի հանդերձ  
հրաշագործութեամբ , մինչև Երևելնման հրեշ-  
տակի տեառն և զօրացուցանել : Եւ 'ի բարձր  
ժայռի անդ ջուր քաղցր բվնեցոյց յաւուր  
միում երբ 'ի կարօտութեան էին : Կմին իրի  
ազքունի ոստիկանք կտլեալ զնա կտակեցին ընդ-  
պարանեցն խարիսխ նաւու և արկին 'ի ծովանդը  
յամի 102 • յինն կազանդաց գեկատ .<sup>1</sup> : Մարմին  
սրբոյն յետոյ գտաւ սքանչելոք . զի ջուրին առ-

1 Փիլիպ . Գլ . 7 . 3 : Ասէբ . յառաջաբ . ա .  
թղթ . պիմ : Եպիֆան հերձ . ին . 6 : Բարսն . յան 93 :  
Առաբ հերոնին . յու . երեւել արանց . Գլ . ծէ :  
Պատմ . Առայ . 456 :

զի տուեալ ամըստ ամէ՝ երեւեր ցամաքն . և եզեւ  
ու խոտառե զի հաւատացելոց այն վայր հանդերձ  
հրաշիւք : Յաւուրս սորա առաւել պայծառա-  
ցաւ հաւատո քրիստոնեից . մինչև հանդիսապէս  
պաշտել նոցա զկիւրակէս և զայլ եկեղեցական  
կարդս . նա և զպահս քառասնորդաց և չորից  
եղանակաց , և առնել խուզումն հերաց կղերի-  
կոսաց , 'ի գործ ածեալ և զեպիսկոպոսական  
միթր և զօրհնեալ ջուր և զայլ առաքելական  
աւանդութիւնս :

### ԴԵՊԻ ԱՌԵՎԱՋՆՈՅ ԴԱՄՈՒՆ

ԱՅ. ՃՆ.

ԳՐԱԿԱՆ

~~~~~

1. Գալուստ մագուց յերկրպատկութիւն  
փրկչին :
5. Խաւարումն արեւու ըստմասնեայ 'ի 28  
մարտի :
6. Աբբեզայցոս յետ թագաւորելոց փոխա-  
նակ չերովդի՝ արտասահման լինի 'ի  
գաղղիա :
7. Երկրորդ աշխարհագիր :
15. Տիրեր գահակիցլինի Օգոստեայ , որ յետ  
երկուց ամաց մեռանի :
18. Վաղերիսոս դատաւոր կացեալ չըեաս-  
տանի , ստէալ վովովիսէ զքահանացա-  
պետս չըեից :
32. Քարոզութիւն Յովհաննու 1500 ամօք  
զկնի մավսիսեան օրինադրութեան :
35. Յակովոս եղբայր տեառն ձեռնազըլի  
առաջին եպիսկոպոս Երուսաղէմի :
59. Ադդէ կարգեալ 'ի չայս եպիսկոպոս 'ի  
թագեոսէ՝ նահատակի անդ :

42. Մատթէոս գրէ զաւետարանն յԵրուսա-  
լէմ երկայեցերէն :
50. Մարկոս գրէ զաւետարանն հրամանաւ  
Պետրոսի յԱղեքսանդրիա 'ի լեզու ե-  
դիակտացի :
51. Թագէոս և Սանդուխտ նահատակին 'ի  
Հայս :
52. Ղուկաս գրէ զաւետարանն հրամանաւ  
Պօղոսի յԽնախոք 'ի լեզու ասորի :
53. Բարդողոմէոս նահատակի 'ի Հայս 'ի  
Սանաարկոյ արքայէ :
60. Պօղոս կապի յԵրուսաղէմ, և ապա նա-  
ւէ 'ի Հռովմէ :
64. Մարկոս նահատակի, և յաջորդէ զնոտ Ա-  
նանիոս եպիսկոպոս, և սմա յաջորդէ  
Աքեղիոս :
65. Յակովլոս Եղբայր տեառն նահատակի .  
որում յաջորդէ Ըմառոն յաթու Ե-  
րուսաղէմի :
72. Անդրէաս նահատակի յԱքայիա: Իդնա-  
տիոս յաջորդէ յաթու Անախոքոյ  
զկնի Եւագիոսի :
73. Տիտոս առնու զԵրուսաղէմ, և կորուսա-  
նէ զՃրեայս :
98. Ցովհաննէս աքսորեալ 'ի Պատմոս կղզի  
գրէ զՅայտնութիւնն :
100. Ցովհաննէս գրէ զաւետարանն յԵփե-  
սոս 'ի լեզու յոյն զկնի գարձին յա-  
թու իւր :
- Զայսու ժամանակու յետ Աբգարու թա-  
դաւորէ որդի նորա Անանէ յԵդեսիա . ապա  
Սանաարուկ 'ի Մծրին , ապա Երուանդ Բ  
յԱրմաւիր և յԵրուանդաշտառ . և ապա որդի  
Սանաատրկոյ Աբտաշէս Բ յԱրտաշատ քաղաք :

# ԵՐԿՐՈՒԴԻ ԴԱՅ

## Ս. ԱՆԱԿՂԵՑՈՍ

Ա. Տ. 103. և իայսէրութեան Տըայի անոնի 4:

1325. Անսկղեցոս աթենացի ազգաւ յոյն  
յաջորդէ յաթոռ քահանայապետութեան  
Հոռվմայ զկնի սրբոյն կղեմայ. որ ջան եղ քա-  
ջութեամբ և խմաստութեամբ առաջնորդել ե-  
կեղեցւոյ Քրիստով՝ բարեզարդեալ վայելսա-  
պէս 'ի գառն ժամանակի հալածանաց : Սա  
եղե առաջին, որ կատոյց զեկեղեցի 'ի Վատի-  
կան 'ի վերայ գերեզմանի սրբոյն Պետրոսի, որ  
յետոյ շնչեալ նորոդ և գեղոզարդեալ մեծա-  
գործութեամբ եղե աշխարհաքարող տաճար  
հրաշալի յանուն սրբոյն Պետրոսի : Ուրանիօր  
հաւաքեալ ամենայն քրիստոնէից հազորդէին  
'ի միասին ըստ հրամանի սրբոյն : Որ և հաստա-  
տեաց կոնդակաւ, զի եսլիսկոպոսունք ձեռ-  
նադրեսցին յերից եսլիսկոպոսաց, և կղերի-  
կոսք խուզեսցեն զհերս : Սա յետ բազմարդիւն  
ճգանաց և ազգի ազգի մեծագործութեանց 'ի  
պայծառութիւն եկեղեցւոյ, ըմբռնեալ 'ի հա-  
լածանս Տրայիանոսի զկնի գառն չարչարանաց  
պատկեցաւ մարտիրոսական մահութմբ յե-  
րեքն իդոսաց <sup>1</sup> յուլիսի յամին 112, կացեալ 'ի

1 Խորուս առ նախնին հոռավայեցիս նշանակին  
պհնակէպաստներու օրն մարդի, յուլիսի, և հոկտեմ-  
բերի . իսկ պայման ամսոց զերեփաստներու օրն ըստ-  
ուանեն :

քահանայապետական իշխանութեան ամս ինն  
ամիսս երիս և աւուրս տասն<sup>1</sup> :

## Զ

## Ս. ԵՒԱՄԻՍՏՈՍ

Ա. Տ. 112, և կայսերութեան Տբայիանոսի 13:

1326. Եւարիստոս բեթղեհեմացի յաղգե-  
հրէից յաջորդեաց յաթոռ քահանայապե-  
տութեան Հռովմայ և ղեկավարեաց ղեկեղե-  
ցին իմաստութեամբ զամն ինն և զամիսս երիս:  
Սա հաստատեալ զառաքելական աւանդու-  
թիւնս՝կանոնադրեաց զնաւակատիսկամզնուի  
բաղործութիւնս եկեղեցեաց, պատուիրեաց  
զիսրհուրդ ամուսնութեան կատարել յեկե-  
ղեցւոչ հանդերձ ծանուցմամբ: Օրինագրեաց  
ևս, զի եօթն սարկաւադունք կարդեսցին առ-  
ընթեր եպիսկոպոսին 'ի քարոզելն առ ժողո-  
վուրդն: Խակ զքաղաքն Հռովմ բաժանեաց'ի  
զանազան վիճակս, յորս շինեցան ասկա յիշա-  
տակարանք մարտիրոսաց կամ վկայարանք: յո-  
րոց հոյակալ շինուածք կոչեցան Պառվէլիտայս-  
ինքն աղքունի տունք կամ տաճարը, 'ի սլատիւ  
աղքային երկնի և երկրի, և բաշխեցան յաւադ ա-  
ռաջնորդս: Այսպէս յետ փառաւորելոյ զեկե-  
ղեցին Քրիստոսի սուրբն Եւարիստոս փառաւո-  
րեցաւ վկայական մահուամբ 'ի հալածանս անդ  
Տբայիանոսի յեօթն կաղանդաց նոյ: 121. յո-  
րում աւուրս լինի և յիշատակ նորա յեկեղե-  
ցւով<sup>2</sup>:

1 Ա. Օփոս. 'ի սղ. խոր. 25: Պէտքը Ամբիոն.  
Գիր 3: Բարոն. յան 106. 112:

2 Եսասեբ. պատրի. Էկեղ. Գիր 3. Գլ. լու: Ճա-

## Է

## Ս. ԱՆԵՔՍԱՆԴՐ Ա

Ա. Տ. 121, և կայսերական Առբիանոսի 2:

1327. Աղեքսանդր հռովմայեցի որդի Աղեքսանդրի՝ յաջորդեաց զԵւարիստոս յաթոռքահանայապետութեան հռովմայ յամի 121, յիդոսս նոյեմբերի: Բազում իմաստութեամբ և բարեկարգութեամբ կառավարեաց զեկեղեցին զամն տամն: Հաստատեաց կոնդակաւ ընդայլ կարգաց և զիսառնումն ջրոյ իբաժակ պատարգին յառաքելական աւանդութենի, և դարձեալ օրհնելոյ զջուր հանդերձ աղիւ և վարել զայն յեկեղեցւոջ և ՚ի տունս: Ամս ընծայի սովորութինն սրբագործելոյ զհազորդութիւնն ՚ի բաղարջ անօսր և մանր բոլորաձև, որպէս ցարդ վարէ եկեղեցին: Յետ այնորիկ տեսեալ հեթանոսաց զդերազանց իմաստութիւն և կարգադրութիւնս սրբոյն՝ կալան զնա և ջանահնար եղեն դարձուցանել ՚ի հաւատոց: Վասն որոյ զկնի յերկար բանստարդելութեան՝ դառն տանիջանօք նահատակեցին զնա վասն ՚ի քրիստոս հաւատոց յամի 132, ՚ի հինգն նոյնայց մայխաի ։

Տան ։ սմջ: Բարբոն յամի 112 ։ և ծան: վկայ. հռուց օգոստոս: Բնանա, Գիրք 1. իր. պապ. Գլ. ի 3:

1 Կննայդ առ նախանի հոսովմայեցիս նշանակիչն զմերորդ օրն մարդի, մայդոի, յուշիսի և հոդուեմբերին իսի յայլ ամիսս ուլուբըրդ օրն անք կաղանդաշն:

2 Եասեբ. պապմ. եկել. Գիրք 4. Գլ. ՛ եր. 94:

## Ը.

## Ա. ՔՍԵՍՏՈՍ Ա.

Ա. Տ. 152. և կայսերութեան ԱՐԵՒԱՆԱԿԻ 15 :

1528. Քաեստոս հռովմայեցի յաջորդեաց  
յաթոռ քահանայապետութեան չռովմայ, և  
բարեկարդութեամբ վարեաց զիշխանութիւնն  
ամս տասն : Սա կանոնագրեաց՝ զի բաց յեկե-  
ղեցականաց ոչ ոք համարձակեսցի հոլել 'ի  
սրբազնն անօթս, իսկ եպիսկոպոսունք հաստա-  
տեսցին 'ի վիճակս միայն կոնդակաւ առաքել լա-  
կան աթոռոյն : Են որք ասեն՝ թէ սա ինքն  
սահմանեաց ասել 'ի ովատարագի ղերեքսրբեան  
երդն և Սուրբ սուրբ սուրբ ։ Այլ Բարո-  
նիսս ասէ՝ թէ յառաջագոյն սահմանեալ եր  
երդն այն 'ի սրբոյն Յակովայ : Յետ այնորիկ  
տեսեալ հեթանոսաց զիմաստուն ընթացս  
հռովմապետութեան Քաեստոսի կալան զնան  
մաանեցին տանջանաց, և նահատակցաւ քա-  
ջութեամբ վասն 'ի Քրիստոս հաւատոց յա-  
մին 142 ։

Բարսն, յահն 121. 152. Բակ. 225. Առ Ալ-  
լաբեկանի . յշ. իշ. եկ. գլ. իլ. :

1 Առաջ. սահմանադր. գիր. 8. գլ. ծբ : Բարսն .  
յահն 142 : Եշ-եբ . պատմ. էկել. գլ. է . Ժաման .  
նմլ : Բակ . գիր. 2 . յշ. պատմ . գլ. ծ . 5 .

Ժ

## Ա. ՏԵՂԵՍՓՈՐՈՍ

Ա. Տ. 142, և ի այս էրութեան Անդունինուի  
Պիտուի Յ :

1329. Տեղեսփորոս ազգաւ յոյն, անապատական և այր առաքելաշնօրհ յաջորդեաց յաթոռ քահանայապետութեան, և եկաց 'ի նըմին ամս մետասան, ամիսս ութ և աւուրս ութուտան : Սա հաստատեաց կոնդակաւ զառ 'ի յառաքելոց եղեալ քառամնորդական պահս յամենայն տեղիս միօրինակ պահել, նա և սահմանեաց 'ի սկիզբն պատարագին երդել յարարողութեան լատինացւոց զհրեշտակական երդն ափառք 'ի բարձունս Աստուծոյ ։ Ապա զկնի բազում ուղղութեանց կալան զնա հեթանոսք, որ և յետ բազում տանջանաց պատակեցաւ մարտիրոսական մահուամբ . զօր նահատակութեան սորա որոշակի ոչ գտաք առ հնախօսս, ըստ ումանց յերկուս յուլ . 154 ։<sup>1</sup>

1 Եսսեբ. Ճամ. յան 135 . էր. 712 : Ա. Եւանս . Գիւ + Յ . Գլ. Գ : Բարբուխոս յան 136 . 142 : Բալ . 152 :

## Ժ

## Ս. ՀԻՒԳԵՆՈՍ

Ա. Տ. 154, և կայսերութեան Անդոնինոսի 15:

1530. Հիւգենոս աթենացի յոյն իմաստասէր՝ ընտրեցաւ յաթոռ քահայապետութենուլմայ, և կացեալ յիշխանութեան սրբութեամբ և իմաստութեամբ, զկնի չորից ամաց վոհեցաւ առ տէր: Սա կարգագրեաց զեկեղեցական աստիճանո՞ւ որոշելով զկղերիկոսս յայլեայլ պաշտօն: Կարգեաց նա և զմի կնքահայր և զմի կնքամայր վասն բառնալոյ զերեխայն՚ի մլրտութեան և ընթերակայլինելոյ քահանային: Առ սովաւ վաղենակնոս և կերգոն աղանդապետք չոքանն՚ի հառվմ սերմանել զաղանդս իւրեանց: այլ փութով մերժեցանն՚ի որբոյ հայրապետէն (759): Աակայն հետեւողք նոցա այնչափ աղմուկս յարուցինն՚ի մէջ հաւատացելոց, մինչեւ գրգռեալ կայսրն ընդգէմիւրումն հեղութեան հալածեաց զքրիստոնեայս: այլցածոյց զնա՚ի բարկութենէն սուրբն օուսակնոս՝ ընծայելով նմին զգիրս Զատագովութեան, որով արդարացուցանէ զհաւատագրիստոնէից և զհաւատացեալս <sup>1:</sup>

1 Եսաւի. պապմ. Եիւշ. Գիշ+4. Գլ. Ճա: Ա. Կիու. Բառալ. 74: Ա. Երանոս Գիշ+1. Գլ. Էկ: Ֆիւանլին. Բառնինոս՚ի ծան. Անապ. Գրտու. հապ. 2. Եր. 107: Բաբռն. յամն 154. 158: Բառէ. 156:

## ԺԱ

Ս. ՊԻՌԱ Ա.

Ա. Տ. 158, և վայսելութեան Անդամնեան 19:

1551. Պիտո ագուիլացի որդի Հռուգինոսի,  
 ընտրեալ և հաստատեալ՝ Հիւգենոսէ յաջոր  
 գեաց յաջոռ քահանայապետութեան Հռով  
 մայ յետ նորա, առաջնորդեալ եկեղեցւոյ տան  
 ինն և ամիսս վեց պակաս երեք աւուրբք. իսկ  
 Եւսեբիոս գնէ զամն հնդետասան՝<sup>1</sup> : Այս  
 քահանայապետ կոնդակաւ հաստատեաց պա-  
 հել միօրինակ յամենայն տեղիս զառաքելա-  
 կան աւանդութիւնս վասն կատարելոյ զառն  
 զառկին 'ի կիւրակէի, և վասն մկրտելոյ զգար-  
 ձեւալս 'ի հրէական կամ 'ի կիւրինթեան աղան-  
 դից : Յամի 164, յեօթներորդ ամի քահա-  
 նայապետութեան իւրոյ չորիցս հալածանս  
 յարուցին Մարկոս Աւրելիոս, Անատոնիոս, և  
 Լուկիոս . որոց սուրբն Յուստինոս ընծայեց  
 զերկրորդ գիրս Զատագովութեան քրիստո-  
 նէից, այլ ինչ ոչ շահեցաւ . և ինքն մարտի-  
 րոսական մահուամբ պատկեցաւ, որպէս և  
 Պիտո սուրբ հայրապետ զնոյն նահատակու-  
 թիւն նահատակեցաւ<sup>2</sup> :

1 Եսուս. պատմ. Էկ. և Ճամ. սճթ:

2 Երանոս. Գիր+ 3. Գլ. Գ. և Գիր+ 5. Գլ. Իֆ: Անդամ. Գիր+ 5. Գլ. Դա: Բարբն. 158=167: Բակ. 165:

## ԺԲ

## Ա. ԱՆԻԿՏՈՍ Ա

Ա. Տ. 167. և իայսերունեան Մարիսի Աւու-  
շիսի իամ Ուշշիսի 5 :

1552. Անիկտոս աղքաւ ասորի ընտրեցաւ  
յաթոռ քահանայապետութե Հռովմայ, և կա-  
ռավորեաց զեկեղեցին ամս ութ : Սա անդրէն  
հաստատեաց զառաքելական աւանդութիւնս  
խուզելոյ զձերս կվերիկոսաց և կտարարելոյ զտօն  
զատկին 'ի կիւրակէի որ զկնի հասարակածին  
ընդդէմ Չորեքտասանեան աղանդաւորաց, որք  
սկսդէին թէ 'ի չորեքտասանն լուսնի ընդ Հրէից  
պարտ է առնել զատիկ (775) . որ և ասէր ու-  
սեալ զայն աւանդութիւն յառաքելոց անտի 'ի  
Պետրոսէ և 'ի Յովհաննէ : Առ հայրապետոս այս  
եկն յայցելութի 'ի ծերութե իւրում Պօղիկար-  
պոս սուրբ եղիսակոսոս Զմիւռնիոյ աշակերտ  
Յովհաննու աւետարանչին . որ յետ գարձուցա-  
նելոյ զբաղումն 'ի հաւատոս և պատուամիրելոյ  
յԱնիկտոսէ գարձաւ յաթոռ իւր . ուր և նա-  
հատակեցաւ յութ կաղանդացն ապր . 169 :  
Նոյնպէս և սուրբն Անիկտոս փառաւոր նահա-  
տակութեամբ պատակեցաւ 'ի հնդետաստանն կա-  
զանդաց մայ . 175 : Սա ընդ Պօղիկարապոսի տ-  
րաբ ժողով 'ի Հռովմ (1158) . յորում սահ-  
մանեցաւ զիսորհուրդ չարչարանաց Քրիստոսի  
կատարել յուրբաթաւ , և զյարութեանն 'ի կիւ-  
րակէի անխափան :

1 Եսու պատմ . եկ . գիր + 5 . գլ . իդ . իդ . ժա-  
ման . ամէը : Բնարկն . յանե (67) . բակ . 175 :

Ա. ԱՆԻԿՏՈՍ Ա

ԺԴ

Ս. ՍՈՎՏԵՐ

Ա. Տ. 175, և Քայութը անվետ Ա. Առնելիսակ 15:

1553. Առվտեր նեապօլսեցի՝ ի Փոնտիոյ Կամպանիայ՝ յաջորդեաց զառւրբն Անիկտոս յաթու քահանայսալեառւթեան և եկեց առաջնորդ եկեղեցւոյն ամս չորս, պակաս երկոտասասն առուրբք. որոյ և յիշատակ կատարի յեկեղեցւոջ՝ ի տասն կաղանդացն մայլսի: Ատհաստատել կամելուլ զառապելական առանդութիւնն կանոնադրեաց զի քահանայք ծոմոսպահութեամբ պատարագեցեն, և հաւատաւոր կուսանք մի իշխեսցեն խնկել յեկեղեցւոջ, և կամ մերձենալ ՚ի սուրբ մարմնական: Եմոյժ դարձեալ սովորութիւնն ի հառվմայեցիս՝ նպաստամատոյց լինելոց ողորմութեամբ եղբարց դատապարտելոց վասն սուրբ հաւատոյ յաքսորս և ՚ի մեատղս. նա և որպէս հոյր գթած առանձինն խնամեր զնոսա և միմիթարեր քաղցր բանիւք, աղատելուլ զբազումն ՚ի դառն գերութե, ըստ որում պատմէ Դիտոնեսիոս եպիսկոպոս Կորիթացւոց<sup>1</sup>: Այլ յետոյ և ինքն վկայտկան մահուամբ նահատակեցաւ առ Մարկոսիւ Աւրեղիոսիւ: Թէալէտ արգելեալ էր կայսրն հալածել զբրիստառնեայս ՚ի պատճառս հրաշիցն եղելոց աղօթիւք քրիստոնէից, զի ՚ի մեծի կարօտութեան զօրաց իւրոց անձրեւաց ջուր յորդ, և կայծակնահար վանեցան թշնամիք իւր՝ յորմէայն գունդ կոչեցաւ Ծանելընիւց: Աակայն քուրմք

1 Առ Եսու. պատճ. եկ. Գիւլ 4, Գլ. իդ:

անդադար գրդուելին զդատաւորս՝ ի վրէժիբնդը-  
բութիւն գից տանջել զառւրբս, մանաւանդ  
զքահանայապետս, որպէս արարին և ընդհայ-  
րապետն Սովորեր<sup>1</sup>:

## ԺԴ

## Ա. ԵԼԵՒԹԵՐԻՈՍ

Ա. Տ. 179, և կայսերական Ա. Ա-րէշիսի 17:

1534. Եշեւթերիսս որդի Աբոնասի ազգաւ-  
յոյն նիկոպօլսեցի նստաւ յաթոռ քահանայա-  
պետութեան չոռվմայ, և եկաց յաւաղնորդու-  
թիւն եկեղեցւոյն ամս հնդետասանն և առուրս  
քուան և երիս. որոյ յիշատակ դնի ի վկայա-  
բանութեան չոռվմայ յեօթն կազանդացյու-  
նիսի: Աս օրինագրեաց, զի քրիստոնեայք մի  
խարեսցեն զուտելիս, զորս հաստատեաց Աս-  
տուած՝ ի ալէտս մարդկան: Պայծառացոյց զառւրբ  
հաւասառ ի բազում տեղիս ի ձեռն հզօր քա-  
րոզաց և քաջ վարդապետաց: Արար ընդու-  
նելութիւն մեծ սրբոյն Երանոսի եկաւորելոյ-  
տու նա սակա կարեւոր գործոց եկեղեցւոյն Լիո-  
նի. որում ասկա կարգեցաւ նա եպիսկոպոս  
յԵշեւթերիստէ: Առ այնու ժամանակօք լու-  
ստորեալ Լուկիսի արքային Ծնդվեոյ խընդ-  
րեաց զիմաստուն վարդապետս՝ ի սուրբ հայ-  
րապետէն, և նա առաքեաց զՓոկասիսս և զԴաւ-  
միանոս, որք կործանեալ զկուռաս՝ հաստատեցին  
զքրիստոնեութիւն ի Բրիտանիա<sup>2</sup>:

1. Եսա. Ճամ. ՌՋ: Բարոն. յահն 175, 179:  
Բակի. 177:

2. Հերսնինոս յղ. Երեւելի արանց. Գլ. լե. Ի՛:

## ԺԵ

Ս. ՎԻԿՏՈՐ Ա

Ա. Տ. 194. և կայսերական կամականք 13 :

1535. Վեկտոր կամ՝ բեկտոր ավրիկեցի որդի Փելքոսի՝ յաջորդեալ յաթոռ քահանայապետութեան Հռովմաց խաղաղացոյց զաղմուկը շփոթի Չորեքտասանեան աղանդաւորաց . և անգրեն կանոնագրեաց 'ի ժողովի իւրում . զոր արար 'ի Հառվիլմ 'ի 198 հանդերձ վճռով կատարել ամենայն քրիստոնեից զտօն զատկի 'ի կիւրակեի զկնի գիշերահաւասարին մարտի ըստ աւանդութեան Յովհաննու աւետարանցին . զոր և ապա հաստատեաց ժողովն Նիկիոյ (910) : Մերժեաց նա և զթետոն , որ յանդիմանեալ վասն ուրանալցյն զՔրիստոս 'ի հալածանս , ասէր թէ ես զմարդ ուրացայ և ոչ զԱստուած : Այս սուրբ հայրապետ արար և զայլ ժողովս ընդդէմ թէոգոնի , Երիովիլի , Արտեմանի , և Վաղենաւեայ (1158) : Այլ զկնի բազմապատիկ բարեկարգութեան և ուղղութեան , ևս և յետ տեսանելց զարքայն Ակովիոյ հանգերձ ժողովրդեամբք գարձեալ 'ի քրիստոնէութիւն՝ ապա նոհատակեցաւ յեօթն կազմացն օգոստ . 203 . կացեալ 'ի հայրապետութեան ամս ինն , և աւուրս յիսուն և ուժ <sup>1</sup> :

Ես . պատմ . Եկ . Գիր + 15 . Գլ . Դ : Երանոս ընդդէմ հերձ . Գիր + 3 . Գլ . Գ : Ամերիկան 'ի պատմ . Բարիք . յամ 183 : Բահիկան յամ 192 :

1 Ես . պատմ . Եկել . Գիր + 5 . Գլ . Էֆ . Իգ .

ԴԵՊՔ ԵՐԿՐՈՒԴԻ ԴԱՄՈՒՆ

Ե. Տ.

103. Յովհաննէս աւետարանիչ վախճանի յԵփեսոս. որում յաջորդէ աշակերտիւր Պատիսա հերապօլսեցի: Յայնժամ լինէին աստուածանշանք բազումք 'ի չռովմ և ընդ աիեզերս ըստ Եւսերեայ:
105. Կերդոն եպիսկոպոս նստի յԱղեքանդրիս:
106. Պողիկարպոս զմիւռնեցւոց նահանգին եպիսկոպոս հաստատի 'ի Յովհաննէս աւետարանչէ:
111. Ծմաւոն ազգական Քրիստոսի եպիսկոպոս Երուսաղէմի նահատակի: զօր յաջորդեաց Յոստոս: Կոյնպէս նահատակի եպիսկոպոս Անտիոքայ, արկեալ առաջի գաղանաց 'ի չռովմ. զոր յաջորդեաց Կոււռնելիոս:
112. Աղեքանդրիոյ եպիսկոպոս կարդի Պիթատոս. և Ոնեսիմոս եպիսկոպոս քարկոծի: յԵփեսոս:
115. Յետ Յոստոսի նստաւ յԵրուսաղէմ եպիսկոպոս Զակքէոս. յետ որոյ Տովքիաս, ապա Բենիամին. ապա Յովհաննէս, ապա Մատաթիա, և ապա Փիլիպպոս. ընդ ամենայն ինն:

ԷՌ: Նիւեֆուռս Գիբտ 5. ԳԼ. ԱՌ. ԱՌ: Սուբբ ՀԵՐԻ ՀԵՐԻ. յԱ. ԵԲԵԿԸ արանց. ԳԼ. ԱՌ: ԲԱՄԲԻ. յԱԲԻ  
194=203: ԲԹԻ. 201:

125. Յոստոս նստի Եպիսկոպոս յԱզեքսանդրիա :
127. Յետ Փիլիպպեայ հաստատի յԵրուատցեմ Եպիսկոպոս Ենիկաս, յետ որոյ Յոստոս, յետ որոյ Ղեւի, ապա Եփրեմ, ապա Յովանէփ, և ապա Յուղասողքա ամենեքեան յազդէ Հրէից :
131. Ակիւղաս ալոնտացի թարգմանէ ղաստուածաշունչն 'ի յոյն :
134. Ազեքսանդրիոյ Եպիսկոպոս Եկաց Եւմենէս :
136. Երուսաղէմի Եպիսկոպոս կարգի Մարկոս Ա. յազդէ հեթանոսաց :
145. Անտիոքայ Եպիսկոպոս Երովնի: Յուստինոս Փիլիսոփայ դառնայ 'ի հաւատուքինասոսի, որ 'ի 170 նահատակի :
158. Կեղադիոն նստի Եպիսկոպոս յԱզեքսանդրիա :
163. Երուսաղէմի Եպիսկոպոս Եկաց Կասիանոս, ապա Պոբղիոս, ապա Մաքսիմինոս, ապա Յուլիանոս, ապա Գայիանոս, ապա Սիմաքոս, ապա Գայիոս ապա Յուլիանոս, և ապա Ապիոն. ընդամենայն քսան և հինգ :
172. Ազեքսանդրիոյ Եպիսկոպոս Եղեւ Ազրիալինոս: Ի նմին ժամանակի Սիմաքոս թարգմանէ զաստուածաշունչն 'ի յոյն:
174. Անտիոքայ Եպիսկոպոս Եկաց Թէոփիլոս: Եւ Ապօղինարոս Հերասլուսեցւոց Եպիսկոպոս Եղեւ:
177. Անտիոքայ Եօթներորդ Եպիսկոպոս նստի Մաքսիմոս:
181. Ազեքսանդրիոյ տասներորդ Եպիսկոպոս Յուլիանոս:
185. Երուսաղէմի քսաներորդ վեցերորդ Ե-

ալիսկոպոս նստի Մաքսիմոս, և յետ  
նորա մի ըստ միոնէ Անտոնինոս, Աւո-  
գես, Դուղելիքիանոս, Կարկեսոս, Դիոս,  
Գերմանինիոն, Գորդիանոս, Կարկեսոս  
վերսատին. ընդ ամենայն հաշուին երե-  
սուն և չորք :

195. Ազեքսանդրիոյ մետասաներորդ Եպիսկո-  
պոս Դեմետրիոս, և Անտիոքայ ուժե-  
րորդ Եպիսկոպոս Սրբալիոն :

197. Երուսաղեմի երեսներորդ հինգերորդ Ե-  
պիսկոպոս Կարկեսոս : Եւ Կեսարացւոց  
եկեղեցւոյն Եպիսկոպոս Պօղիկրատէս  
և Բաքիզոս :

Իսմին Ժամանակի Թակողիտուն թարգմանե-  
զաստուածաշունչն 'ի յոյն լեզու : Ի Հայոյ յետ  
Արտաշէսի Բ. թագաւորէ Արտաւազդ Բ.  
տաղա Տիրան Ա. ասկա Տիգրան Գ. և ասկա Վա-  
ղարշ, որ յետ երից ամաց փոխէ զաթուն 'ի  
Ապղարշապատ :

Ե Բ Բ Ա Բ Դ Գ Ա Բ

Ժ Զ

Ա. ԶԵՓԻԼԱՄՆՈՍՈՍ

Ա. Տ. 203, և Կայսերութեան Սեւերուի 9:

1336. Օ վ Փ Ի Ւ Թ Խ Ո Ս Հ Ո Ո Վ Մ Ա Յ Ե ց ի ո ր դ ի  
Ա բ ու ն գ ո ս ի ՝ ը ն ա ր ե ց ա ւ յ ա ջ ո ր դ վ ի կ տ ո ր ի ՚ ի վ ե ց  
ի դ ո ւ ա ց ն օ դ ո ս ա տ . 203 . և կ ա ռ ա վ ա ր ե ա լ զ ե կ ե -  
զ ե ց ի ն ր ա ր ե կ ա ր դ ո ւ թ ե ա մ բ ա մ ն ո ւ թ ե ա տ ա ս ն և  
ա ւ ո ւ ր ս ո ւ թ ե ա տ ա ս ն՝ դ ե ր ա հ ո ւ չ ա կ հ ա ն դ ի ս ա ց ա ւ  
ը ն դ ա ի է զ ե ր ս : Ք ա ն դ ի յ ա ւ ո ւ ր ս ս ո ր ա Ս ե ւ ե -  
ր ո ս կ ա յ ս ր յ ա ր ո յ ց հ ն դ ի ց ս դ ա ւ ն հ ա լ ա ծ ա ն ս ա ն հ -  
հ ն ա ր ի ն ն ե զ ե լ ո ւ լ զ ե կ ե զ ե ց ի ն : Ե ւ յ ա վ մ կ է հ ե ր -  
ձ ո ւ ա ծ ո ց ն թ ո ւ ե ր ե թ է կ ա տ ա ր ա ծ ի ա շ խ ա ր հ ի ս  
ա ւ ո ւ ր ք ի ց ե ն : Ս ա կ ա յ ն ք ա հ ա ն ա յ ա պ ե ա ն ս ո ւ ր ք  
ա ր ի ա կ ա ն հ ո գ ւ ո վ դ ի մ ա գ ր ա ւ ա մ ե ն ե ց ո ւ ն՝ մ ե ր -  
ժ ե ա ց զ ա ղ ա ն դ ա ւ ո ր ս , և ս ա հ մ ա ն ե ա ց բ ա զ ո ւ մ  
կ ա ն ո ն ս ՚ ի հ ա ս տ ա տ ո ւ թ ի ւ ն ո ւ զ զ ա փ ա ռ հ ա ւ ա -  
տ ո յ , ո լ ք պ ա հ ի ն մ ի ն չ և ց ա յ ժ մ : Ո լ ք է ս ա յ ն զ ի  
ձ ե ո ւ ն ա դ ր ո ւ թ ի ւ ն ն հ ա ն դ ի ս ա պ է ս լ ե ց ի յ ե կ ե -  
զ ե ց ւ ո չ . ՚ ի պ ա տ ա ր ա գ ե լ ե պ ի ս կ ո պ ո ս ա ց մ ե ր ձ  
գ ա ց ի ն ք ա հ ա ն ա յ ք . ե պ ի ս կ ո պ ո ս ո ք ե թ է յ ի ն չ -  
ե ի ց է յ ա ն ց ա ն ս ա ն կ ց ի , մ ի լ ո ւ ծ ց ի ա ւ ա ն ց ի շ խ  
խ ա ն ո ւ թ ե ա ն ե կ ե զ ե ց ւ ո յ . փ ա յ տ ե զ ե ն ա ն ս օ թ ք մ ի  
՚ ի վ ա ր ա ր կ ց ի ն ՚ ի ս ո ւ ր ք ս պ ա ս ս + գ ո ն է ՚ ի զ ա տ -  
կ ի ն ն հ ա ղ ո ր դ ե ս ց ի ն ա մ ե ն ա յ ն հ ա ւ ա տ ա ց ե ա լ ք և  
ա յ լ ն : Ա յ լ մ ի ն չ գ ե ռ ն ա զ ա յ ս օ ր ի ն ա կ հ ա ս -  
տ ա տ է ր զ ե կ ե զ ե ց ի ն ո ղ ջ ա մ ի տ վ ա ր դ ա պ ե ա ո ւ -  
տ ո ւ թ ե ա մ ի ՝ ե հ ա ս ն մ ա վ ա խ ա ն կ ե ն ա ց և փ ո -

խեցաւ առ տէր յեօթն կաղանդացն սեպտ  
221 ։<sup>1</sup>

## ԺԵ

## Ա. ԿԱՂԱՎՈՒՄ Ա.

Ա. Տ. 221. և կայութը սեպտեմբերի 2:

1557. Կալիստոս հոռվմայեցի որդի Դոմիտոսի՝ յաջորդեաց յաթոռ քահանայապետութեան՝ ի միւսում աւուր կաղանդիցն սեպտ. յամին 221. և կառավարեաց զեկեղեցին բարեկարգութեամբ ամս հինգ, ամիս մի, և աւուրսերկոտասանն : Որ և սահմանեաց բաց 'ի քառասոնորդական պահոց ծոմապահս չորիցս 'ի տարւոջ 'ի սկիզբն քառեակի եղանակաց վասն ցորենոյ, դինոյ և ձիթոյ . որպէս և սո. քեալք աւանդեալ էին ըստ մադարէութեան Զաքարիոյ : Կանոնագրեաց զասահճանս ազդականութեան ստիս ամուսնացելոց : Կառոյց զեկեղեցի յանուն Առառւածամօրն յայնկայս Տիրերեայ Սուրբ Մարիամ կոչեցեալ : Կա և շնիեաց մեծ դամբարան առ ճանապարհին Առպահիոյ, ուրանօր բազում քահանայապետք և մարտիրոսք հանդչին . որ գոլով երևելի շնուռած ցարդ կոչի Դամբարան Կալիստոսի, որպէս և յաճախ յիշի 'ի վարս լատին սրբոց : Այլ հուսկ յետոյ սուրբ հայրապետն ըմբռնեալ 'ի հեթանոսաց՝ կրեաց զանազան տանջանս վասն սուրբ հաւատոյ . բայց այն ինչ արիական հոգւով վկայէր ճշմարտութեան՝ հարին զնա բրօք, և անսուազ

1 Եասէբ. պատմ. էկ. գիր+5. գլ. իշ. գիր+6. գլ. ա. և է : Բարբոն. յոհն 215 : Բաթ. 219 :

արկին 'ի բանտ : Յետ այնորիկ տեսեալ զհառտատութիւն կամոց նորա , արկին առաջ 'ի պատուհանէ 'ի վայր , և հեղձուցեալ 'ի գբեփառաւոր մահուամք լուսապսակ նահասակեցին աւուրբ յառաջ քան զիգոսս հոկտեմբ . յամին 226 :

## ԺԲ.

## Ս . ՈՒՐԲԱՆԱԾ

Ա . Տ . 226 , և խայսերանեան Աղեգոսանդրի 3:

1538 . Ուրբանոս հումայեցի որդի Պոնդիանոսի յաջորդեաց յաթոռ քահանայապետութեան յեօթն կաղանդացն նոյեմբ . 226 , և զեկովարեաց զեկեղեցին ամս վեց , ամիսն եօթն և աւաւրս չորս : Յաւուրս սորա բազումք 'ի հեթանոսաց դարձան 'ի քրիստոնէութիւն , և արիացեալ յուսով հեղին զարիւնո պանծալի նահատակութեամք : Ուպիսի էր սուրբ կոյսն Զիշիլիա և խօսնայր իւր Վաղերիանոս , նա և եղբայր նորա Տիբուրտիոս . ևս և Մաքսիմոս սենեկապետ կայսեր . զորո ոչ միայն միըրտեալ սուրբ Հայոցապետն լուսաւորեաց ճշմարտութեամբ աւետարանին , այլ և զօրացոյց զնոսսա 'ի նահատակութիւն վասն Քրիստոսի . իսկ զտուն Զիշիլիայ սրբեաց յեկեղեցի : Սա եղետառաջին , որ զոսկեղին և զարծաթեղին անօթս հանդերձ պատուական ակամբք եմոյծ 'ի սպաս պաշտաման տեառն յեկեղեցւոյ : Կա

1 Զատ . Գլ . Է . 19 : Բարսն . յան 226 : Բարի . 224 : Եւսեբ . Ճամ . սմբ : Պօղոս Արինկոս . Գիր 3 . Գլ . Ճամ :

և կանոնադրեաց , զի ՚ի արոց հաւատացելոց  
հաւատատեսցի եկամուռ ՚ի պէտս աղքատաց ,  
սլաշտօնելից , և նորոգութեան եկեղեցեաց : Այլ  
յետ բազում գեղեցիկ կարգաց կալանաւո-  
րեալ՝ ՚ի հեթանոսաց վասն ՚ի Քրիստոս հաւա-  
տաց՝ նահատակեցաւ գլխատմամբ յութ կա-  
զանգացն յունիսի . 233 :

## ԺԹ

## Ս. ՊՈՌՏԱՆՈՍ

Ա. Տ. 233 , և կայսերական Ազեւանութիւն 10:

1339. Պոնտիանոս հռովմայեցի որդի Գայզ-  
րուրիոսի՝ ընտրեցաւ յաջորդ սրբոյն Ուրբա-  
նոսի յաթու քահանայապետութեան հռով-  
մայ յառաջքան զութերորդ օրն կազ. յուլ . 233 .  
և կառավարեաց զեկեղեցին արիաբար ամս  
չորս , ամիսա չորս , և աւուրս քստնեհինդ :  
Զսա կալեալ Ազեքսանդրի կայսեր ՚ի սագրե-  
լոյ անօրէն իշխանաց՝ վասն քրիստոնէական  
հաւատոյ աքսորեաց ընդ հիպովիտոսի քա-  
հանային ՚ի կղզին Պուդգիննա առ Սարդենեաւ :  
Սակայն կայսրն անդէն առ նմին սպատուհաստ-  
կոծ լեալ քարձաւ ՚ի կենաց . ապա յաջորդեաց  
վիա Մաքսիմինոս , որ գոլով թշնամութեամբ  
ընդ զարմին Ազեքսանդրի , յորս յոլովք քրիս-  
տոնէայք էին , յարոյց ապա սաստիկ հալածանս  
ընդդէմ առաջնորդաց եկեղեցւոյ , զի բարձցին  
քարոզքն սուրբ հաւատոյ : Եւ զինի նահատա-  
կելոյ նորա զբազում՝ հրամայեաց գահակոծ

1 Եսակ . Ճամ . ամբ : Բանա , Գիրք 1 . իր . պատ .  
գլ . իւ . 2 : Բարոն . յան 226, 232 : Բակ . 231 :

առնել և զուրբն Պոնտիանոս . և վտիսեցաւ  
նո առ . Քրիստոս նահատակութեամբ յերեք-  
տասան կաղանդացն գեկոտ . 257 . զորոյ զմար-  
մին բերեալ 'ի Հռովմ ամփոփեցին 'ի գամբա-  
րանի սրբոյն Կալիստոսի :

## ト

## Ս. ԱՆԹԵՐԱՍ

Ա. Տ. 257 . և իայսերուաթեան Մագիստրոսի 1 :

1540 . Անթերոս որդի Հռոմուլոսի ազդաւ-  
յոյն՝ յաջորդեաց յաթու քահանայապեաու-  
թեան Հռովմայ յերեքն նոնայց գեկոտ . 257 . և  
զկնի միոյ ամսոյ յերեքն նոն . յունվ . 258 .  
վտիսեցաւ առ աէր . քանզի կալեալ զնա անօ-  
րեն Մաքսիմինոսի դատաւորին վասն քրիստո-  
սական հաւատոյ նահատակեաց : Սա օրինա-  
դրեաց , զի նօտարը զգուշութեամբ հաւաքես-  
ցեն զամենայն դործո մարտիրոսաց և դրեսցեն  
զմկայաբանութիւնս նոցա . զորո առաջնորդք  
հաւատարաբանութեամբ պահեսցեն յեկեղեցւոյ ,  
զի մի՛ անհաւաաք խարդախնացեն . որովէս և  
սուրբն Կղեմէս զառաջինն կանոնագրեալ էր  
զայն : Առ սովաւ սուրբն Կիպրիանոս երևելի  
ճարտարաբան յԱվրիկէ դարձաւ 'ի Քրիստոս  
և յետ սակաւուց ընտրեցաւ եսպիսկոպոս Կալ-  
թագինեայ 2 :

1 Եսուս. պապմ . Եկեղ . Գիր + 6 . ԳԼ . Ի՛շ . Բա-  
րոն . յան 257 : Բառա , Գիր + 2 . ԳԼ . Ի՛շ :

2 Եսուս. պապմ . Եկեղ . Գիր + 6 . ԳԼ . Ի՛շ : Բա-  
րոն . յան 257 . 258 :

## ԻԱ

## Ս. ՓԱԼԻՒԱՆՈՍ

Ա. Տ. 238, և ի այս է բութեան Սրբակի միասն 2 :

1542. Փաւիանոս հառմայեցի որդի Փարիսի՝ ընտրեցաւ յաթոռ քահանայտպետութեան Հռովմայ յեօթնեւտամն կազանդացն փետր. 258. յաւետ իմն սրանցելեօք : Քանզի ՚ի ժողովի անդ աւագ եկեղեցականաց և ժողովրդոց երեւեցաւ աղաւնի մի, որ ըստ օրինակի իջման Հոգւոյն օրբոյ հեզիկ շարժմամբ էջ և հանգեաւ ՚ի վերայ գլխոյ մեծի հայրապետին : Եւ եկաց նա յառաջնորդութեան եկեղեցւոյ գեղեցիկ կարգօք և զարմանալի հսկողութեամբ հնգեւտասան ամս, և աւուրս չորս : Եհան բազում կոնդակս և վճիռս սակս եկեղեցական բարեկարգութեանց . որով և ծաւալեաց զլյոս աւեաարանին ընդ բազում աշխարհօ. հաստատեաց զկանոնս Աքրիկեանժողովյն ընդգեմ աղանդաւորաց . գաստապարաեաց զնիրոգինէս ՚ի ժողովին Հռովմայ : Սահմանեաց, զի սուրբ մեռոնն օրհնեսցի յեպիսկոպոսաց ամբ ըստ ամեյաւագ հինգշաբաթի: Զեօթն նոտարս կարգեալս ՚ի սրբոյն Կղեմայ ՚ի գրել զվարս նահատակաց ձեռնադրեաց կիսասարկաւագու, որպէս զի ըստ ևս հոգ տարցեն պաշտաման իւրեանց և եկամտից եկեղեցեաց : Կարդեաց նաև ՚ի վերայ Հռովմայ զեօթն ատորկաւագու որոշն ինամակալս աղբատաց ըստ եօթն վիճակաց քաղաքին . որ ըստ քաղաքական կարդի ՚ի 14 վիճակս որոշի ըստ բաժանման կայսեր Օգոստեաց : Աքար բազում շինութիւնս ՚ի

վկայարանս սրբոց 'ի հաստատութիւն աստուածագաշտութեան : Այլ հուսկ յետոյ պերճապատկեցաւ 'ի հալածանս Դեկոսի վասն տնուան Քրիստոսի յերեքտասան կաղանդացն մեռք . 253 :

## ԻԲ

## Ա. ԿՈՒՌՆԵԼԻՌԱ

Ա. Տ. 254, և կայսերական Դեկոսի 2 :

1542. Զինի նահատակութեան սրբոյն Փաւիանոսի ոչ փուլթովլընարեցաւ յաջորդ նորասակս դառնութեան ժամանակին յերեսաց հալածանաց անդութիւն Դեկոսի : Վասն որոյ առաքելական աթոռն կառավարեր իբր ամիսս վեշտասան 'ի ձեռն ուխտին եկեղեցւոյ, և կոնդակիքն յանուն երիցանց և սարկաւագաց գրեին, որպէս յայտ է 'ի կոնդակեն որ առառլրբն Կիպրիանոս : Ի նմին ժամանակին բազումք սահեցան 'ի հաւատոց և ապա դարձան անդրեն 'ի հաւատու . յորմէ ծագեցաւ և հակառակութիւն , մինչև ստիպեցաւ ուխտն չուվմայ առնել մաննաւոր ժողովասն նոցա (1159): Ըատք ևս նահատակեցան փուռաւոր վկայութեամբ և ճոխացան հրաշագործութեամբ 'ի սպայծառութիւնն սուրբ եկեղեցւոյ: Զեւս դադարեալ խսպառ խռովովութեանցս՝ ընտրեցաւ քահանայապետ չուվմայ 'ի բազմամբով ժողովի անդ հաւանութեամբ և վկայու-

1 Եասեբ : Կիպրիանոս . Առաջը 55, և Ներազը 3 : Ուստիս Գիրք 7 . Գլ. Էա : Սաւոբ Հերոն . յապայ . ար . Գլ . ծով : Բառի . յոն 251 :

թեամբ տմենեցուն սուրբն կուռնելիոս հոռվա-  
մոյեցի որդի Կաստինի այր մեծահամբաւ-  
սրբութեամբ և իմաստութեամբ : Որոյ անգեն  
գումարեալ ժողով'ի Հռովմ'ի վաթսուն ե-  
պիսկոպոսայ , յերիցանց և 'ի սարկաւագաց,  
նզովեաց զնովատիանոս երեց ընդ Կովառոսի  
աղանդապեաի (784) . և բարեկարգեաց զեկե-  
ղեցին և զուխտն միանգամայն : Խոկ զխոսառ-  
վանողս , որք առ ահի անկեալ էին 'ի հաւասոց  
և անդրէն 'ի զեղջ եկեալք, ընկալաւ 'ի հաղոր-  
դութիւն հանգերձ վճռով : Սակս որոյ արար  
ապա զայլ ժողով'ի Հռովմ'ի հաստատութիւն  
հաւասացելոց . յորում հաստատեցաւ վճիռ  
ժողովոյն Կարթագինեայ , և նզովեցաւ դար-  
ձեալ Կովատիանոս : Այս քահանայապետ ահ-  
զափոխեաց զմարմինս սրբոց առաքելոցին Պե-  
տրոսի և Պօղոսի 'ի գամբարանաց , որպէս զնի  
'ի գաւազանագիրս քահանայապետաց : Զօրտ-  
ցոյց զեկեղեցին և զվկայս 'ի հալածման անդ +  
և ինքն քոչութեամբ , սրբութեամբ և փառա-  
ւոր վկայութեամբ նահատակեցաւ յութու-  
տասն կազանգաց հոկտ + յամին 255 , չե ևս  
լրացեալ կրկին ամաց քահանայապետութեան  
իւրոյ <sup>1</sup> :

1 Կիորի . Եռաշխ 4 , 14 , 22 , 29 , 31 , և 52 :  
Ա . Խոհութուսա սոլոնիացի Գիր + 8 . ԳԼ . Գ : Եռաշխ .  
պատմ . էլ . Գիր + 6 . ԳԼ . ԽԳ : Բարբոն . յամ 253 .  
255 .

## ԻԳ

## Ա. ՂԱԽԿԻՈՍ Ա

Ա. Տ. 255, և ի այսերութեան գաղղռո՞ն  
և վալուսահանոսի 2:

1543. Ղուկիոս հռովմայեցի որդի Պորփիր-  
ըռափի յետ նահասակութեան սրբոյն կուռնե-  
լիսաի ընտրեցաւ յաջորդ նորին յերեքտասանն  
կաղանդացն նոյեմբ. 255. և եկաց յիշխանու-  
թեանն զամմի, ամիսս չորս, և աւուրս երկո-  
տասան : Սուրբն Կիսլիանոս յիշէ զարա քա-  
հանայապետական արժանապատութիւն և  
զգարձն յաքսորանաց : Պատմէ ևս թէ զիտրդ  
վիայլեցաւ խմաստութեամբ, միանդամայն զի-  
նեալ արիապէս ընդդէմ 'Սովատեան հերե-  
սիովտաց, զի եր նա լի չոգւով օրբով, արի և զօ-  
րաւոր . որ և յետ բազում ուղղութեանց մատ-  
նեցաւ 'ի տանջանս անհաւատից, և արիաբար  
պակեցաւ վկայական մահուամբ 'ի չորսն նո-  
նայդ մարտի 257: Գրի 'ի դաւազանագիրս քա-  
հանայապետաց՝ թէ սուրբ Ղուկիոս աահմա-  
նագրեաց՝ զի երկու քահանայք և երեք սարկա-  
ւագունք անպակաս մերձ գտցին եպիսկոպո-  
սին 'ի զգուշութիւն առ 'ի լինելոյ վկայ վա-  
րուց և գործոց նորա ընդդէմ չարախօսաց <sup>1</sup> :

1 Կիպր. Առաղը 58. և 67: Հերոն. յշ. երեւ-  
էլ ար, Գլ. իշ: Բաբոն. յամն 255. 257: Բամի.  
253:

## Ի՞Դ

## Ս. ՍՏԵՓԱՆՈՍ Ա

Ա. Տ. 257, և Խայսերանիւսն Գառլլոսի  
և Ալեքսանդրոսի 4:

1544. Ստեփանոս հռովմայեցի որդի Յու-  
լիսի կամ Յովրիոսի, որ առ քահանայապե-  
տութեամբ սրբոյն կուռնելիոսի և Պուկիոսի  
կարգեալ էր նախասարկաւագ նոցա, ընտրե-  
ցաւ յաջորդ Պետրոսի և վիսիսանորդ Քրիստոսի՝ ի-  
հրեդ իդոսացն մարտի 257. և վարեաց զիշխա-  
նութիւն իւր ամենայն բարեկարգութեամբ  
և արիական հոգւով ամս երիս, ամիսս երիս  
և աւուրս քսաներկու: Սա օրինադրեաց, որ  
պէս դնի 'ի դաւազանագիրս քահանայապե-  
տոց, զիքահանայք և պաշտօնեայք եկեղեցա-  
կան զգեստուքն պաշտեսցեն միայն յեկեղեցւոջ  
տուաջի սեղանոյ և ոչ բնաւ արտաքոյ: Գրեաց  
զահազան կոնդակոյայլ և այլ եկեղեցիս՝ հաս-  
տատեալ զուղղափառոս և զգուշացուցեալ զնո-  
սա յերեսաց հեթանոսաց և աղանդաւորաց:  
Նոյնպէս հաստատեաց զեկեղեցին Ափրիկոյ 'ի  
ձեռն իմաստալից կոնդակաց իւրոց ըստ վկայ-  
ութեան Դիոնեսիոսի աղեքսանդրացւոյ :

Արար և ժողով 'ի Հռովմ ընդդէմ կար-  
թագինեցւոց հետեւզաց Կրկնակնունք հեր-  
ձուածոյն, որք ընդ Կիսլրիանոսի վրիսպմամբ  
անվաւեր համարէին զմկրտութիւն հերետի-  
կոսաց անխարդախ պահողաց զձեւ և զնիւթ :

Զոր մերժեաց զօրաւոր բանիւք, և սահմանեաց  
հաստատութեամբ, թէ ձև և կարդ մկրառու-  
թեան սահմանեալ 'ի Քրիստոսէ Երբ կատարի  
'ի վերայ Երեխայից՝ լինի մկրառութիւն Քրիս-  
տոսի, թէ և մկրառողն իցէ հերետիկոս կամ հեր-  
ձուածող: Յամին 259 արեելեան աթոռք միտ-  
բանեցան 'ի կարծիս, և եղեւ խաղաղութիւն .  
յոյր սակա Ստեփանոս Հայրապետ գրեաց  
թուղթ առ Կիպրիանոս, որպէս սկատմէ Եւ-  
սեբիոս: Հուսկ յետոյ 'ի հալածման Վաղե-  
րիանոսի այն ինչ ժողովեալ Հայրապետին զուխտ  
եկեղեցւոյն սրտապետէր և մկրտէր զերեխայս՝  
ձեռնադրելով զարժանաւորս և բժշկելով զախ-  
տաժէտս, անդ հասեալ հեթանոսաց բռնու-  
թեամբ ածին զնա 'ի մեշեան կռոց խնկել դից-  
այլընդ ազօթել սրբոյն վշրեցան կռռոքն, և ա-  
մենեքեան վախեան անտի: Ապա եկեալ նո-  
րա 'ի վկայարան մի՛ 'ի մատուցանելն անդ զպա-  
տարագ, խորտակեալ դահճաց զդրունս վկայա-  
րանին՝ գլխատեցին զմեծ քահանայապեան Ատե-  
փանոս հրամանաւ կայսեր 'ի չորս նոնայց օգոստ-  
յամին 260 <sup>1:</sup>:

1 Ես-ուեբ ուագմ էլեղ գիր 7 գլ դ: Կիու-  
նուղլ 67: Օդոսա գիր 5. յղ. մլր ընտել Դա-  
նագ գլ. իւ: Ալեքս. Կապաւ. ուագմ էլ դաշ դ:  
վկա 12: Բարսն. յան 257 = 260: Յայսմ, հայ.  
նոյ. 3: Յոյն. Լու. օգոստ. 2:

## ԻԵ

## Ա. ՔՍԵՍՏՈՍ Բ

Ա. Տ. 260. և կայսեր սուլեյան վաղեցիանուի 6:

1545. «Քսեստոս Բ. աթենացի յաջորդեաց զառլըն Ստեփանոս յութ կաղանդացն սեպա. յամին 260, և կառավարեաց զեկեղեցին ամիսս մետաստան և աւուրս երկուտասան ևեթ: Քանզի կայսրն Վաղերիանոս կալեալ սահիպէր զնաց յուրացութիւն: բայց սրբոյն քաջութեամբ անարգեալ զկուռամ՝ խոստավան եղեւ վարիստոս Աստուած: վասն որոյ և մատնեցաւ 'ի տան ջանա: Յայնժամ նախասարկուագ իւր սուրբն Լաւրենտիոս տոչորէր 'ի սրտի մեծաւ տրամութեամբ վասն ոչ լինելոյ հաղորդակից չարչա. բանաց սուրբ հայրապետին յետ այնչափ սպա. սաւորելոյ նմա 'ի սուրբ խորհուրդս: Այլ նորա միսիթարեալ զնամ՝ մարգարէացաւ թէ յետ երից աւուրց և նա ինքն հանդերձեալ է պատ. կիլ մարտիրոսական մահուամբ: Քանզի իբրև կլիստեցաւ սուրբն Քսեստոս՝ յութ իդոսացն օդոստ: 261, զմարմին նորա ամինոփեաց Լաւ. րենտիոս, որով և մատնեալ 'ի տանջանս կատարեցաւ խորովելով 'ի վերայ հրացեալ կատ. կարայի արութեամբ քաջութեամբ հանդերձ 'ի նախատինս հեթանոսաց և անհաւատից: Հայրապետս այս յաղագս մեծի արիութեանն կոչեցաւ 'ի սրբոյն Պանտիոսէ՝ քաջալաւ և խա. ղաղարար քահանայապետ և ամեներանեալ մարտիրոս: զորոյ զմարմինն փոխադրեցին 'ի դամբարան սրբոյն Պետրոսի և Պողոսի 'ի ջերմ

աստուածակաշտութիւն հաւաացելոց : Սա  
գումարեաց ՚ի Հռովմ ժողով, յորում դասա-  
պարտեցան Սաբէլ, Կովկասս և Վազենտի-  
նոս :

## ԻՉ

## Ա. ԴԻԱՆԵՍԻՈՍ

Ա. Տ. 261, և կայսերական Առաջինուն  
և Գուշենոսի 7 :

1346. Դիմնեսիսս ազգաւ յոյն, այս  
սքանչելի և իմաստուն ձայնեալ ՚ի Դիմնեսիո-  
սէ աղեքսանդրացւոյ՝ նստաւ յաթու քա-  
հանայապետութեան յետ կատարման Քուս-  
տոսի աւուրբ յառաջ քան զեդոս սեպաեմբերի  
յամին 261. որ առ Սանկիանոսիւ կարգեալ  
էր երէց Հռովմայ : Սա ըստ Հին սովորութեան  
ձեռնադրեցաւ ՚ի Մաքսիմոսէ Եպիսկոպոսէ Ու-  
տիայ . որպէս վկայէ և սուրբն Օգոստինոս :  
Յամենայն տեղիս զօրացոյց զսուրբ հաւաա-  
դրելով զանազան կոնդակս և մխիթարելով զե-  
կեղեցիս հոգենորոգ վարդապետութեամբ :  
Բայց մամնաւորապէս զօրացոյց զեկեղեցին կե-  
սարիայ : Օրինադրեաց հաւաացելոց ազա-  
տել զաքսորեալս և զգերեալս վասն ՚ի Քրիս-  
տոս հաւաասոց : Արոշեաց զվիճակս եկեղեցեաց  
կարգելով զթեմական երիցունու : Գումարեաց  
ժողով ՚ի Հռովմ և գատապարտեաց զՍաբէլ  
և զայլ հերետիկսս (782) : Ետ բերել թուզի

1 Ի վարս սբբոյն Կիու . ԳԼ. ՃԵ : Ասսեբ . պատճ.  
էլ . Գիւ + 7 . ԳԼ. Է . Հ : Յայսմ Հայ . օգոս . 12 :  
Յ . 10 . Լ . 6 և 10 :

ու զղափառական՝ 'ի Դիտնեսիոսէ աղեքսանդրացւոյ, որ ամբասանեալ էր վասն դնելոյ զղանազանութիւն էութեան յԱստուած. և քննեալ զուղիոլ միտո նորա՝ արդարացոյց 'ի ժուլի անդ : Հուսկ յետոյ նահատակեցաւ 'ի հալածանս Որեղիանոսի յեօթն կաղանդացն յունվ. 272. զեկավորեալ զեկեզեցին վայել չապէս ամս մետաստան, ամիսս երիս, և առուրս չորեքտաստան : |:

## ԻԵ

## Ա. ՓԵԼԻՔՍ Ա

Ա. Տ. 272, Խ կայսերական Աշեղիանոսի 2 :

1347. Փելիքս որդի Կոստանդեայ յաջորդեաց զուրբն Դիտնեսիոս 'ի վերջին աւուր 272 տարւոյն, և եկաց յառաջնորդութեան եկեղեցւոյ ամս ինն և ամիսս հինգ : Սա աշխատ եղե ցրել զաղանդս Սաբելի և Պօղոսի սամոստացւոյ . և յամենայն տեղիս հաստատեաց զուղափառ հաւատս 'ի ձեռն զօրաւոր կոնդակաց, որպէս բերաւ և 'ի ժողովն Քաղկեդոնի գերազանց հատուած մի կոնդակին գրելոյ առ Մաքսիմոս Աղեքսանդրիոյ ընդդեմ Սաբելի և Պօղոսի սամոստացւոյ : Սահմանեաց կանգնել սեղան 'ի վերայ գերեզմանաց սրբոց կամ նշխարաց մարտիրոսաց, և հրամայեաց անդ մասուցանել առ Աստուած զպատարագն

1 Եսսեբ. պատմ. եկեղ. գիրք 7. Գլ. Է: Ա. Հիւար. գիրք 4: Բարոն. յաճ 261: Ա. Բարսեղ. 70: Ա. Աւանոս 'ի նոողմն յշ. ՀՀ. Դիռն. 13. Եր. 252. հայ. 1. յաճ 1: Բարի. յաճ 244:

՚ի պատիւ և ՚ի յիշատակ սրբոց . որպէս յիշե  
և սուրբն Աթանաս <sup>1</sup> : Ապա ՚ի դառն հալած -  
ման անդ Որեղիանոսի Երջանիկ դտեալ ար-  
գեամբք ըստ անուանն՝ նահատակեցաւ յերեք  
կաղանդացն յունիսի յամին 275 <sup>2</sup> :

## Ի՞ն

## Ս. ԵՒՏԻՔԻԱՆՈՍ

Ա. Տ. 275 , և իայսերութեան Ուեշիանոսի 5 :

1348. Եւտիքիանոս լունացի որդի Մարտի-  
նոսի ընտրեցաւ քահանայապետ Հռովմայ ա-  
ւուրբ յառաջ քան զնոնայս յունիսի 275 . և  
կառավարեաց զեկեղեցին ամս ութ , ամիսս հինգ  
և աւուրբ Երիս : Աս օրինագրեաց ՚ի հաստա-  
տութիւն քառասնորդական պահոց գնել զբակ  
լայ ՚ի խորան և օրհնել , նոյնպէս օրհնել և զխա-  
զող . ըստ որում գնի ՚ի գաւազանագիրս քա-  
հանայապետաց : Ի նոյն գիրս որպէս և ՚ի  
վկայաբանութեան Հռովմայ ՚ի վեցն իդոսաց  
դեկտ . պատմի թէ հայրապետս այս ձեռօք իւ-  
րովք ամփոփեաց զերիս հարիւր քառասուն և եր-  
կունահատակս , և սկատուիրեաց զի պաշտօնեայք  
զմարմինս մարտիրոսաց մի թաղեսցեն առանց ու-  
րարի կամ ծիրանագոյն պարեգօսի . ողք և վասն  
տյնորիկ յեկեղեցական երգս ծիրանազգեացք  
ձայնեցան : Զարմանալի շրջահայեցութեամբ  
գլխահար եղե ժանտ աղանդաւորաց , մանա-  
ւանդ Մանիքեցւոց , զորս նանբացոյց զօրա-  
ւոր վճռովք իւրովք : Այլ հուսկ յետոյ նա-

1 Առ Բանայի Գիրք 1 . յշ . պատ . ԳԼ . ԺՌ . 5 :

2 Եսսեբ . պատմ . Եկ . Գիրք 7 . ԳԼ . Լ : Բարոն .  
յան 272 = 275 : Բակ . 274 :

հատակեցաւ առ Կումերիանոսիւ ՚ի վեցն իդու-  
աց գեկտ . յամին 283 . զորոյ զմարմինն փոխա-  
ղբեցին ՚ի հայրենիս իւր ՚ի Լունա :

## ԻԹ

## Ա . ԳԱՅԻՌԱ

Ա . Տ . 283 , և իայսէրութէան կարինոսի  
և Կումերիանոսի 1 :

1549 . Գայիսս ծնեալ ՚ի Սաղոնա Դաղմա-  
տիոյ որդի Գայիսսի մերձաւոր ազգականի  
Դիոկղետիանոսի կայսեր՝ ընտրեցաւ յաթոռ  
քահանայապետութեան Հռովմոյ յեօթն և  
տասն կաղանդացն յունլ . 283 . և կառավա-  
րեց զեկեղեցին ամս երկոտասահն , ամիսս չորս ,  
և աւուրս հինգ : Մեծապէս փայլեին ՚ի նմա-  
խոհականութիւն և առաքինի բարեկարգու-  
թիւն . որ և ըստ հին աւանդութեան որոշեալ  
եօթն աստիճանս կղերիկոտաց՝ հրամայեաց զի  
առանց փոքր աստիճանաց մի ոք ՚ի բարձրադոյն  
կարգս քահանայութեան . և եսլիսկոպոսու-  
թեան ՚ի վեր ելցէ . որպէս դնի ՚ի դործս որը-  
բոյն Սեբաստիանոսի <sup>2</sup> : Որ և յետ յոլովա-  
դունից առաքելական գործոց և բաղմապիսի  
ուղղութեանց և բարեկարգութեանց փոխե-  
ցաւ առ աէր ՚ի տասն կաղանդաց մայ . 256 <sup>3</sup> :

1 Բնանդինոս ՚ի ծան . Անաս . հա . 2 . Տ . 2 . Երեւ  
244 : Բարոն . յան 275 : Բաի . 274 :

2 ԳԵ ՃԵ . առ Բաւլոն . յուննլ . 20 : Բարոն .  
յան 282 = 296 :

3 Եաս . պապմ . Էկ . ԳԵ + Դ . ԳԵ . ԼԲ : Բանա .  
ԳԵ + 1 . յղ . պապ . ԳԵ . Էկ . 16 . 17 : Բաի . յան  
275 :

L

## Ս. ՄԱՐԿԵՂԻՑՈՍ

Ա. Տ. 296. և իսյունը ան գիշեղէ պիտուսի  
և Մարտինոսի 13:

1550. Մարկեղիանոս հռովմայեցի որդի  
Պայտեկառափի յաջորդեաց զսուրբի Գայիսս յա-  
թոռ հայրապետութե՛ ՚ի հինգ նոն մայ . չ96.  
և եկաց քահանայապետ ամս եօթն, տմիսս մե-  
տասան, և աւուրս քոան և երիս : Առ ո-  
րով Դիտկղետիանոս յարոյց դժնդակ հալա-  
ծանս ընդդէմ քրիստոնէից . և ՚ի հրատա-  
բակել կոյսերական հրովարտակացն սկսան կո-  
տորել զանհամար հաւատացեալս, քանդել զէ-  
կեղեցիս և այրել զվկայարանս (731): Յայնժամ  
յառաջ մաստուցեալ Մարկեղիանոսի զօրացու-  
ցանէր քաղցր բանիւք զքաջ նահտակս, և զլէ-  
գէննն դեբանեան, որոյ զօրագլուխ էր սուրբն  
Մարքիանոս :

Առասպելախտառն բանիք են աղանդաւորաց  
զսրոյ հայրապետէս, որպէս եթէ յայլոյ միսս  
եղեալ նորա յերկիւզէ մահու բռնադատեալ  
իցէ խունկ արկանել առաջի կռոց : Զայն  
լուեալ՝ անդէն գումարեցան ՚ի ժողով երեք-  
հարիւր եսլիսկոստունիք քննել զգատ նորա :  
Յայս ժողով Սինվեսիոյ կոչեցեալ չոքաւ Մար-  
կեղիանոս, և յայտնեաց զվիպանս իւր հան-  
գէրձ զղջմամբ սրտի և ապաշխարութեամբ . և  
անդէն զօրացեալ հոգւով ել ասլա յատեան  
Դիտկղետիանոսի տրիաքար, անարգեաց զկուռս  
նորա, միանդամայն և զյանցանս իւր (1265),  
համարձակ խոստովանելով զՔրիստոս Աս-

տուած : Յայնժամ՝ մասնեալ զիա դառն առն-  
ջանաց՝ նահատակեցին ՚ի վեց կաղ . մայ . 304 :  
Սակայն սուրբն Օգոստինս հատատէ՝ թէ ա-  
զանդաւորք հնարկեցին զայսպիսի շանցանս՝ ի վե-  
րայ սրբոյ հայրապետին :

Ա. Տիկի ԵՐԻԱՐԴԻ ԴԱՄԱՒՆ

- 203 . Տերտուղիանոս և Հիպակովիտէս եպիս-  
կոպոս ծաղկին :
- 205 . Աւոնիդէս եպիսկոպոս հայր Ոլտովինի  
և սուրբն Երանեանահատակին :
- 213 . Սուրբ Կղեմէս աղեքսանդրացի ծաղկի :
- 215 . Անախոքայ իններորդ եպիսկոպոս եկաց  
Ասկղեպիադէս :
- 218 . Որոգինէս ծաղկի :
- 219 . Երտուաղէմի երեսներորդ վեցերորդ ե-  
պիսկոպոսնատիյետ՝ Նարկէոսի Աղեք-  
սանդրոս :
- 220 . Անախոքայ տաներորդ եպիսկոպոս Փե-  
լիոպոս :
- 224 . Ազիրիկանոս կատարէ վժամանակադրու-  
թիւն իւր :
- 230 . Անախոքայ մետասաներորդ եպիսկոպոս  
Զերեննոս :
- 237 . Թալմաւտ հրէից յօրինի :
- 237 . Աղեքսանդրիոյ եպիսկոպոս երկոտասա-  
ներորդ՝ եկաց չերակղէս :
- 238 . Սուրբ Գրիգոր սքանչելագործ աշակերտ  
Որոգիննեայ ծաղկի :

1 Բարոն . և Բառ . յան 296 . 304 : Լաւ-  
դակառ . յզ . մեռ . հալ . գլ . ժԷ : Ուռու . գիր + 7 .  
գլ . իԷ . իԷ : Եսսեբ . ուսպամ . եկ . գիր + 8 . գլ . բ :  
Լամբէր . յզ . ծառու . Աւառուծոյ . գիր + 4 . յ . 2 .  
գլ . ժԳ . 8 :

244. Դարձ սրբոյն Կիպրիանոսի :
252. Ազեքսանդրիոյ Երեքտասամերորդ Եպիսկոպոս նստի Դիսնեսիոս Ճարտարաբան :
256. Երուսաղեմի Երեսներորդ Եօթներորդ Եպիսկոպոս Եկաց Մազբանոս :
257. Անտիոքայ Երկուտասամերորդ Եպիսկոպոս Բարելաս նահատակի, և յաջորդէ զիա Բարիանոս :
259. Յետ նորա չորեքտասամերորդ Եպիսկոպոս Դեմետրիոս :
260. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ծնանի :
265. Անտիոքայ Եպիսկոպոս Պօղոս սամուտացի (785) . որ մերժեալ յաղագա աղանդոյն, յաջորդէ Դոմինաս վեշտասամերորդ Եպիսկոպոս :
269. Ազեքսանդրիոյ չորեքտասամերորդ Եպիսկոպոս Մաքիմոս :
269. Երուսաղեմի Երեսներորդ ութերորդ Եպիսկոպոս Հիմենոս :
274. Սուրբ Անտոն Ճգնաւոր գնայ յանապատա:
280. Սուրբ Վըթանէս ծնանի . և զկնի Երկուց ամեաց սուրբն Արիստակէս :
285. Անտիոքայ Եպիսկոպոս Եօթնեւտասմերորդ՝ Կիւրոս :
289. Լուսաւորիչ չարչարի:
289. Ազեքսանդրիոյ հնդեւտասամերորդ Եպիսկոպոս Թէոփիստա :
- Զայնու Ժամնակաւ 'ի Հայաստան թագաւորեաց յետ Վաղարշայ Խոսրավ Ա մեծ, և սպան զիա Անակ' հայր Լուսաւորչին, յետ թագաւորելցն ամս քառասուն : Ապա որդինորա Տրդատ փախուցեալ 'ի Հռովմէ յետքսանեւոթի ստմաց թագաւորէ 'ի Հայս :

# ՉՈՐԲՈՐԴԻ ԴԱՐ

## Ա.

### Ա. ՄԱՐԿԵԴՈՆ Ա

Ա. Տ. Յոհաննես կայութեան կառապանութեայ  
և գաղերիսսի 1 :

1351. Արևեդոս հռովմայեցի որդի Բենեդիկտոսի յաջորդեաց յամուռ քահանայալետութեան հռովմայ 'ի մետասան կաղանդացն գեկտ. Յօհ. և եկաց յառաջնորդութեան եկեղեցւոյ անհնարին վշտօք ամս չորս և առուրս յիսուն և հինգ: Գրի 'ի գաւազանագիրս քահանայապետաց՝ թէ սա հաստատեաց 'ի հռովմքսան և հինգ ժողովրդապետութիւնս և սպաշտօնեայս առ 'ի պաշտել զնորհուրդս եկեղեցւոյ, և միանգամմայն սպաս տանել դամբարանաց մարտիրոսաց և խօստովանողաց նահատակելոց 'ի հեթանոսաց յանուն տեառն. նա և օրինադրեաց ևս խստիւ պահել զիարդս սպաշխարտութեան: Ուր գերապանձ հաջակէ Դատմասս զհրահանգս սորա յապաշխարութիւն, և յաւելու ասել՝ թէ սակս այնորիկ աքսորեցաւ 'ի Մաքսենախոսէ. զոր ապա կալանաւորեալ 'ի կապահնս ստիպէին զի ուրասցի դՔրիստոս և զոհեսցէ կռոց: Այլ 'ի մերժել սրբոյն զանօրէն հրամանն՝ դատապարտեցաւ 'ի հրապարակական ախոռն սպասաւորել 'ի ծառայութիւն անասնոց: Ուր յետ տանելոյ վշտաց յանարդ աշխատանս զայրմանալի համբերութեամբ ամիս ինն, ապա կվերիկոսք գիշերայն զերծուցին զնա անտի, զոր ժողովեաց

՚ի տուն իւր հիւրընկալութեամբ տիկին ուն  
բարեսէր լուգինա անուն, և զպալատ իւր հան-  
գերձ ամենայն ընդիւք ընծայեաց Աստուծոյ, և  
ետ սրբել զայն յեկեղեցի յանուն սրբոյն Մար-  
կեղոսի : Եբրե լուտ անօրէնն Մաքսենտիոս  
բռնաւոր զայս ամենայն՝ անդէն և անդ կար-  
գեաց կեկեղեցին յախոռ, և զսուրբ հայրա-  
պետն ծառաց եղ ՚ի նմին : Ուրանօր մեծաւ  
համբերութեամբ տարաւ դառն վշտաց, մինչև  
վտանդետլ յապականութենէ օդոյ և ՚ի գոր-  
շահոտութենէ տեղւոյն՝ կատարեցաւ յի օթն և  
տասն կազանդացն փեար . Յօց <sup>1</sup>:

## ԼԲ

## Ա · ԵՒՍԵԲԻԱՍ

Ա · Տ · Յօց, և իայսէրունէան Անդին  
Կոստանդիանոսի կ :

1552. Եւսեբիոս բժիշկ կամ որդի բժշկի  
ազգաւ յոյն՝ յաջորդեաց յաթուքահանայա-  
պետութեան Հռովմայ, և եկաց ՚ի նմին հալա-  
ծանօք հանդերձ և ՚ի թագստի՝ զամս երկուս,  
ամիսս եօթն և աւուրս վեշտասան : Աս հաս-  
տատեաց ոչ միայն զվճիռս Ստեփանոսի հայ-  
րապետին (1544), սյլ և զկանոնս Կուռնե-  
լիոսի և Ղուկիոսի քահանայալետացն սակա  
ապաշխարութեան սահելոց . որով շահեցաւ  
զմոլորեալս խոհական քաղցրութեամբ : Մինչ  
զի Արնորիոս երեւլի ճարտասան մերժեալ  
զկուռս՝ դարձաւ ՚ի Քրիստոս և հրատարա-  
կեաց զգերապանծ ջատագովութիւն իւր ՚ի

<sup>1</sup> Եւսեբ . Ճաման . ածե : Բարսն . ՚ի վեայտ .  
հա . ծէ քեփ . և յան Յօց : Բակ . Յօց :

պաշտպանութիւնքիստնելից : Այս քահանայապետ մեծաւ արթնութեամբն 'ի ձեռն բազում աշխատութեանց 'ի հալածման անդամբիծ և անարատ պահեաց զհօտ իւր 'ի բարեկարգութեան : Այլ ինքն հուսկ յետոյ մոտնեալ յանհաւատից 'ի տանջանս վասն 'ի Քրիստոս հաւատոց՝ փոխեցաւ առ տէր 'ի վեց կազմանդացն հոկտ . 311<sup>1</sup> :

## ԼԳ.

## Ս. ՄԵԼՔԻՇԴԻՑ

Ա. Տ. 311, և կայսերական մեծին  
կոսպանդիտնոսի 6 :

1553. Մէլքիսեդէս կամ Միլտիադէս ավրիկեցի երեց եկեղեցւոյն հուսվեայ ընտեցու յաջորդ սրբոյն Եւսեբեայ զկնի եօթն առորց մահուան նորա 'ի հինգ նոն . հոկտ . 311 . և կառավարեաց զեկեղեցին խմաստութեամբ ամս երկուս , ամիսս երկուս , և աւորս եօթն :

Առ սովաւ մեծն կոստանդիանոս զօրութեամբ սրբոյ խաչին յաղթեալ Մաքսենտիոսի բռնաւորին՝ հրատարակեաց յարեմուաս հրովարտակ ազատութեան քրիստոնելից 'ի հարստահարութեանց և 'ի հալածանաց հեթանոսաց : Այլ տակաւին հաւատացեալք յարեելս տագնապէին ընդ բռնակալութեամբ Լիկիանոսի զոր զկնի ամաց ինչ խորտակեալ կոստանդիանոսի՝ խաղաղացոյց զեկեղեցին Քրիստոսի յամենայն վայրս հռովմէական տէրութեան : Ա-

1 Եւսեբ . Ճամ . սյէդ : Ա . Կիոր . Բռազիլ Վէրջին 67 : Բարոն . և Բար : յան 309 = 311 :

պա տեսեալ նորա զյաջողութիւն տեառն՝ վառ  
ու աւորեաց զեկեզեցոյ գլու խն զյաջորդ սրբոյն  
ՊԵտրոսի զՄԵԼքիագես. զի ընծայեաց նմա  
զարքունական պալատն Լատերանու հանդերձ  
պարտուակտաշաճ թոշտկօք և բացարձակ աե-  
րութեամբ, որպէս զի քահանայապետք ըստ  
ծայրագոյն վիճակին փառաւորապէս վարես-  
ցեն զիշխանաւթիւն իւրեանց 'ի պաշատի անգ:  
Ըստ որոյ պատուեաց 'ի բազում տեղիս և  
զայլ հայրապետա՝ գրելով առ նոսա որպէս և առ  
պատին ՄԵԼքիագես նամակոյարդութեան, նա  
և ազատելով զեղերս 'ի ծանրութեանց հարկաց:  
Յայսպիսում բարեպատեհ ժամանակի ամբար-  
տաւանն Դոնատոս Էպիսկոպոս ընդ Դոնա-  
տեանց գլուխ ամբառնայր յԱփրիկէ ընդգեմ  
Շմարտութեան (788): 'Կորին ազագաւ-  
սուրբն ՄԵԼքիագես գումարեաց ժողով 'ի Հը-  
ռովմ յամին 313, և գատապարտեաց զնա. յո-  
րում անպարտ կացուցաւ Կեկիլիանոս (1160):  
Եւ յետ բազում բարեկարդութեանց սակա  
պաշտաման սրբոյ պատարագին և ծուխապահու-  
թեան, ապա փոխեցաւ առ տէր 'ի չորս իդո-  
սացն գեկտ. 313 :

1 Եսուեֆ. պապմ. էկ. Գիշ+10. Գլ. Է: Ապառ-  
ագու Գիշ+1: Օգոս. 'ի համառ. համեմ. ընդ Դոն-  
տ. ծը. 34. նաև Առաջլ 36, և 105: Սամուել  
Երեշ. Ճաման. յամն յժո՞ւ: Բարբոն. և Բահ. յամն  
311=313:

## ԼՒ

## Ա · ՍԵՂԲԵՍՏՐՈՍ Ա

Ա. Տ. 314. և կայսերական մեծին Կառավարութիւն  
նոսի 9:

1554. Աեղքեստրոս հռովմայեցի որդի Հռու-  
փինոսի այր պերճապայծառ լի տատուածային  
իմաստութեամբ՝ ընտրեցաւ յաթու սրբոյն Պե-  
տրոսի զինի ՄԵԼքիադէսի միով աւուրբյառաջ  
քան վկաղանգո փետրվարի, և ձեռնադրեցաւ  
փառօքյառուր կիւրակէի. յորմէ սովորութիւն  
եղեւ ձեռնադրելոյ զպապս 'ի հանդիսաւոր տօ-  
նի: Այս սուրբ հայրապետ տրար բազում բա-  
րեկարդութիւնս յեկեղեցւոջ, և կրեաց հալա-  
ծանս ոչ սակաւ վասն անուանն Քրիստոսի: Ա-  
պա լուսաւորեաց զմեծն կոստանդիանոս լու-  
սով աւետարանին՝ բժշկելով զնա ըստ հոգւոյ  
և ըստ մարմնոյ: 'Նոյնպէս մկրտեալ զբազմու-  
թիւն աւագանուոյն՝ եղեւ լուսաւորիչ Հռովմայ-  
եցւոց երեկը նշանօք. մինչեւ համբաւ մեծի սըր-  
բութեան նորա և խմատութեան տարածեալ  
ընդ աշխարհս հեռաւորս՝ ձգեաց և զսուրբ Լու-  
սաւորիչն մեր 'իտեսութիւն երանելոյն. յորմէ  
ընկալեալնորա զընդարձակ իշխանութիւն պատ-  
րիարդական յարեելո՝ դարձաւ 'ի հայաստան':

Սո եհան յոլով վճիռս վասն օրհնելոյ ե-  
պիսկոսպասց և թ զմեռոն, և դրոշմելոյ քա-  
հանայից զգագաթն կամ զճակաստ մկրտելոց  
այլովքն հանդերձ: 'Նոյնպէս օրինադրեաց սար-  
կաւագաց կրել յահեակ ուսն զուրար, և զմար-  
մեակալն առնել կտաւի:

Յետ հաստատելոյ զկանոնս ժողովոյն Արեւ-  
լատայ գումարելոյ յերկերիւր եպիսկոպոսաց  
ընդդէմ Դոնատանցյամի 315, արար ժողով  
'ի Հռովմեօթանասուն և հինգ եպիսկոպոսաց  
յանդիման Կոստանդիանոսի և Հեղինեայ. յո-  
րում պարտեցան Հրեայք վիճաբանութեամբ  
և հրաշիւք (1160): Ապա արար և զայլ ժողով  
'ի նուանումն աղանդաւորաց, և սակա բարե-  
կարգութեան: Խակ 'ի յառնել աղանդոյն Ա-  
րիստի հրաման արար գործակցութեամբ մեծին  
կոստանդիանոսի գումարել զառաջին տիեզե-  
րական ժողով Նիկիոյ ընդդէմ աղանդապե-  
տին. ուր նախագահ էին գետպանք իւր (910):  
Ապա հաստատեաց 'ի Հռովմ մասնաւոր ժողո-  
վով զամենայն կանոնս և զվճիսա Նիկիոյ <sup>1</sup>: Եւ-  
յետ կառավարելոյ զեկեղեցին քաջութեամբ և  
խմասութեամբ ամս քսան և մի և ամիսս մե-  
տասան՝ լի արգեամբ հանդեաւ. 'ի Գրիստոս  
միով աւուրբ յառաջքան զկաղանդացն յունիլ.  
յամին 335: Յետ այնորիկ 'ի Ժամանակա  
Գրիգորի թ. քահանայապետի կարգեցաւ հրա-  
մանաւ նորա լիառաւոր տօնախմբութիւն  
սրբոյն Աւղենոտրոսի յընդհանուր եկեղեցւոյ <sup>2</sup>:

1 Ըստ Բարոնիոսի այս սռաբբ ծողով յաւել 'ի  
ժառագ հօրն ընդդէմ Արիոսի պատելուածու «Որպէս  
էր 'ի սկզբանէ և այժմ և մշտ և յաւիտեանս յաւի-  
տնից, ամենա» . յամ 325. 335: Յարդ առ Լատինս  
այսուկէս 'ի իր ածի Փառագ հօրն :

2 Եսա. պապմ. եկ. Գիշ 4. Գլ. է՛թ. ի՛ք : Ա-  
մալարիոս յզ. Եկեղ. պապ. Գիշ 1. Գլ. ի՛է : Ա-  
մալալ Երեց յամ յի՛ք : Յայսն. չ=Յ. յունիլ. 2: Բակ-  
յամ 315. 335:

ԱՅ

## Ս. ՄԵՐԿՈՍ

Ա. Տ. 336, և իայսէրութեան մէծին  
կոստանդիանոսի 31:

1355. Մարկոս հռովմայեցի որդի Պրիմկոսի  
՚ի հնդետասան կազանդացն վետ . յամին 336,  
նստաւ յաթոռ քահանայապետութեան չռով  
մայ , և եկաց ՚ի նմին ամիսս ութ և աւուրս  
ութուտասն : Սա առ մեծադով կատարելու<sup>ւ</sup>  
թեանցն արդէն ընարեալ էր ՚ի սրբոյն Սեղբես  
տրոսէ լինել յաջորդ նորա : Եւ սահմանեաց  
երդել ՚ի սուրբ պատարագի զկնի աւետարա  
նին զհանդանակն ՚սիկիոյ փոխանակ առաքելա  
կան հանդանակին : ՚սոյն ինքն հաստատեաց  
կրել Մետրապօլից զհայրապետական զարդն  
Պահուած . զի նախ շնորհեցաւ եպիսկոպոսին Ռո  
տիայ , որոյ էր ձեռնադրել զալասպ ընկերակ  
ցութեամբ կրկին եպիսկոպոսաց (1346) : Ասի  
ևս թէ այս զարդ նախ ՚ի մեծէն կոստանդիա  
նոսէ պարդեեցաւ սրբոյն Սեղբեստրոսի պա  
տուոյ աղագաւ . ապա շնորհեցաւ հայրապետաց  
՚ի նշան կատարեալ իրաւասութեան՝ կանոնա  
դրութեամբ սրբոյ հայրապետին Մարկոսի . որ  
՚ի նմին ամի քահանայապետութեան ՚ի ՚նոն .  
հոկտ . փոխեցաւ առ Քրիստոս :

1 Թէ թէ գէտէքսս պապմ . եիւլ . գիրտ 2 . գլ . ծէ  
Օդսապին . լուղլ 53 : Հերսն . ծաման . յան 335 :  
Հառաւ . գիրտ ծ . գլ . 22 : Բարսն . և . Բարկ . յան  
336 :

19

## Ա. ՅՈՒԼԻՈՍ Ա

Ա. Տ. 336. և կայսերութէան մէծին  
կոստանդիոնոսի 31:

1356. Յուլիոս Հռովմայեցի որդի Հուուս-  
տիկեայ յաջորդեաց զսուրբն Մարկոս յառաջ-  
քան զեօթներորդ օր կաղանդացն նոյեմ. 336.  
և եկոց 'ի հայրապետութեան ամս հնդետա-  
սան, ամիս հինգ, և աւուրս եօթնետասն: Այն-  
շափ էր սորա արիական դիմագրութիւն ընդ-  
դէմ աղանդաւորաց, զի որչափ և զօրացան Ա-  
րիանոսը 'ի ձեռն իշխանաւորաց՝ միշտ դլիա-  
հար եղեալ նոցա զօրաւոր բանիւք և քաջու-  
թեամբ նկուն արար զնոստ: Զբազումոյարե-  
լեան եսպիսկոպոսաց որբ հարստահարեալք յա-  
զանդաւորաց անտի դիմելին առ նա, արիաբար  
ուաշտապանէր 'ի ջատագովութիւն նիկիական հա-  
ւտառոյ: Գրեաց զանազան կոնդակս առ դիմա-  
ւոր եկեղեցին՝ հաստատուն կալ 'ի սուրբ հա-  
ւտաս յերեսաց խոռվարարացն: Խպա կոչեաց  
և զսուրբն Աթանաս ՚ի Հռովմ զզբարտեալին  
՚ի հակառակորդաց անտի. և գումարեալ ժո-  
ղով 'ի յիսուն եսպիսկոպոսաց յամին 341, արդա-  
րացոյց զանազարտելի ախոյեանն ընդդէմ Արիա-  
նիտաց, որ և եկաց 'ի Հռովմ իբր ամս երիս: Այ-  
սորիկ աղագաւ եղի ժողովն Սարդիկեայ յամին  
347 ընդդէմ նոյն աղանդաւորաց, և Աթանաս  
դարձաւ յաթռութիւր(1161): Այլ սուրբն Յու-  
լիոս միով աւուրբ յառաջ քան զիդոսս ասպրի-  
լի 352 փոխեցաւ առ աէր<sup>1</sup>:

1 Ասէրապ. պատմ. Եկէլ. գիր+ 2. գլ. Է. 85:  
Զոսիմ. գիր+ 3. գլ. ը և ծ: Բարոն. յան 352:  
Ճառընչութ. հայ. Հայ. Ամուսն:

## ԱՅ

## ԼԻԲԵՐԻՈՍ

Ա. Տ. 352, և իսյուերաննեան կոստանդնէայ 16:

1357. Ավերիսս հռովհայեցի որդի Օդոս  
տեայ ընտրեցաւ յաջորդ սրբոյն Յուլիոսի յութ  
իդոս . մայ . 352 . այլ բազում գժու արութեամբ  
յանձն էաւ զայն ծայրագոյն իշխանութիւն :  
Եթր զի յաւուրա կոստանդնէայ որդւոյ մեծին  
կոստանդիանսի զօրացեալ Աքիանիաաց աղ-  
մզկեցին զեկեզեցիս՝ յարուցանելով հալածանս  
ընդդէմ ուղղափառաց : Եւ Ավերիսս հայրա-  
սիւտի սկզբան անդ քաջ ախոյեան եկաց ընդ-  
դէմնոյա և նկուն արար զնոսա . և իբրև նորա  
'ի ձեռն կայսեր վարեալ զսուրբին Ամժանասյա-  
թառոյ իւրմէ հալածական արարին յանտապատ-  
ամո հինգ, սա ինքն միշտ պաշտապան եկաց սուրբ  
հաւատոյ և անմեղութեաննորա : Կորին աղա-  
զաւ հրամանաւ կայսեր աքսորեցաւ և ինքն Ավ-  
երիսս ՚ի թրակիա ամս երկուա . և ընտրեաց  
կայսրն ՚ի առ զի նորա զՓելիք զոմն ՚ի սարկաւա-  
դաց նորա . բայց ուխտն Հռովմոյ ոչ ընկալաւ  
զնա առ ժամն : Ավերիսս ընկճնալ յերկիւղէ  
մոհու ակարացաւ մարդկօրէն յառաջին արո-  
թենէ : Եւ կայսեր կարծեցեալ զնա ՚ի կողմն  
իւր՝ հակառակ Ամժանասի ստորագրելուին, զեր-  
ծոյց զնա յաքսորանաց անախ : Այլ նա ընդ-  
դառնալն յաթու իւր՝ անգեն զգեցաւ զառաջին  
ոգի արութեան՝ մուացեալ զմարդկային տկա-  
րութիւն . ել իւրեւ աշտարակ հզօր ընդդէմ ա-  
ղանդաւորաց, ամբացոյց զսուրբ հաւատո՞նիկոյ,  
և մերժեալ զվարիւս և զժողովակս Աքիանոսաց

և Կիսարիանոսաց՝ տպաշտապանն եկաց անմեղութեան որբոյն Աթանասիի : Նմին իրի դարձեալ սրամուեալ կայսեր տքառեաց զնայաթուոյ իւրմէ : որ զարմանալի համբերութեամբ առանձիացաւ յարձակավայրու գամբարանաց մինչև ցվախճան կենաց իւրոց 'ի հինգ իդոսաց սեպտ. Հնդ կացեալ 'ի քահանայապետութեան ընդ ամենայն ամս հնդեատասան , ամիսս չորս և օր մի : Զստ բաց 'ի սրբոյն Ամբրոսիոսէ , Բարսղէ և Եպիփանէ՝ գրուատեցին և Ալիրիկիոս և Թէոդորէ տոս՝ կոչելով զնանախորդ արժանի մեծապանծ յիշտատակի , փառաւոր նահատակ Տշմարառութեան և ամենաժառանդ բիւրազդի դովութեանց <sup>1</sup> : Որ և կառոյց զհոյակապ եկեղեցին Աստուածածնի կոչեցեալ Տիրուհի Յեան 'ի յիշտակ հրաշալի ձեան՝ որ եկն 'ի Հռովմյամառնամիջի 'ի տեղւոջն ուր եկեղեցին այն կառուցաւ :

## ԼՅ

## Ս. ՓԵԼԻՔՍ Բ

Ա. Տ. 355. և իայսէրութեան Կառպանդէայ 19:

1558. Զկնի արտասահմանութեան մեծին Ալբերիոսի յամին 355 ընտրեցաւ Փելիքս տարկաւագ ընդ նորա . զոր ոչ ընկալաւ զառաջինն յեկեղեցւոյ ուխտն Հռովմայ ըստ վերտգոյն ասացելոց ( 1557 ) տարապարտ կատկածանօք կարծեցեալ թէ իցէ 'ի կողմն Կիսարիանոսաց : Ստկայն յետ մերժելոյ նորս զանիրաւութիւն

1 Ի Եղբ . առ Հիմերիս Գլ . ա : Թէսդ . ուսպան . Եիւշ . Գիրք 2 . Գլ . ծէ : Բարսն . և Բաէ . յան 352 = 359 .

կայսեր և յայտնի առնելոյ զուղղափառութիւն  
իւր, գասեցաւ 'ի կարդս քահանայապետաց ·  
ողպէս հաստատէ և սուրբն չերտնիմոս <sup>1:</sup> Ա. Յ. Լ.  
Լիբերիոս վկնի երից ամաց աքսորանաց իւրոց  
իբրև գարձաւ, ժողովուրդն ընկալաւ ղիա մե-  
ծաշուք փառօք իբրև զիւրեանց օրինաւոր հայ-  
րապետ՝ այսպէս գուշելով միահամուռա · Մի Աս-  
տուած, մի հաւատ և մի քահանայապետ : Փե-  
լիքս որ յայնժամ նստէր 'ի մոյր եկեղեցի Յու-  
լետն յայնկոյս Տիբերեայ, առանձնացաւ յայլ  
քաղաք. և յետ ոչ բաղմաց յաւուրս Յուլիանոսի  
մորտիրոսական մահումբ պսակեցաւ 'ի տասն  
կաղանդացն գեկ · 365 · կացեալ 'ի հայրապետ  
տութեան ամս տասն · զոր և յիշատակէ եկեղե-  
ցին <sup>2:</sup>

## ԱՅ

## Ս. ԴԱՄԱՍՈՒՄ

Ա. Տ. 367, և կայսերական Ալաղէնդիանոն  
և Ալաղէնի 4:

1359 · Դամասոսս սպանիտցի որդի Անտոնիո-  
սի՝ զկնի մահուան Փելիքսի յաջորդեաց յա-  
թոռ քահանայապետութեան Հռովմայ յեօթն  
և տասն կաղանդացն հոկտ · 367 · Որ գոլով  
այրերեկի զարդարեալ բաղմապիսի առաքինու-  
թեամբ և առաքելական նախանձու, զեկա-  
վարեաց զեկեղեցին ամենայն բարեկարդու-

1 Յաղագու երեւելի ար · Գլ · ԴԷ · ԶԱԻՄ · ԳԻՐ+4 ·  
ԳԼ · ՃԷ :

2 Ալիայաբ · ՀԱ · ՇԱՂ · ՕԳԱԿՊԱՆԻ · Ա-Ի · ԳԻՐ+  
2 · ԳԼ · ԼԵ · ԲԱՐԵՆ · յամ 357, և 367 · Ս+ԵԼ+ԴՐ+  
ԴԱ · 'ի հն · ԷՒ · հադ · 1 · ՀԱՖ · 2 · ԳԼ · Լ :

թեամբ ամս եօվնեւտասն, ամիսս երկու, և ա-  
ռուրս քսանելվեց : Սակայն 'ի սկիզբն քահա-  
նայապետութեան իւրոյ վիշտո բազումն իրեաց-  
քանդի միաբանեալոմանց ընդգեմնորա առ ա-  
տելութեան զնւրանոս ոմն սարկաւագ եղին  
քահանայապետ 'ի ծածուկ 'ի սիկնեան եկեղե-  
ցոջ . յորմէ ծագեցան բազում շփոթութիւնիք :  
Խակ խմասուն քահանայապետն Դամասոս, 'ի  
որրոյն չերոնիմուէ կոչեցեալ Անարատ վարդա-  
պետ անարատ եկեղեցոյ, արիական համբերու-  
թեամբ տարաւ անիրաւ զբարառութեանց . որով  
և յաղթեաց հակառակորդաց անմեղութեամբ  
իւրավ : Եւ հուսկ յետոյ առանց վնասելոյ զոք  
ցածոյց զիրա ամենեցուն ուղղեաց զանուղղայս  
և բազում խոհեմութեամբ խազազացոյց զեկե-  
ղեցին՝ նուաճեալ 'ի ձեռն զօրուոր կոնդակաց  
իւրոյ զքահանայս և զկրօնաւորս ընդ կարդօք և  
ընդ կոնհոնօք : Յազագս որոյ արար զանազան  
ժողովս 'ի չոռվիր գատապարակայ զԱրիանիստ  
և զԱպազինար ընդ աշակերտի նորա Տիմոթեայ,  
նա և զՄակեդոն, հաստատելով զհամտոյու-  
թիւն սրբոյ Երրորդութեան և զաստուածու-  
թիւն չոգւոյն սլբոյ : Ապա հրաման արար ա-  
րելեան եպիսկոպոսաց գումարել հրամանաւ  
իւրով զերկրորդ տիեզերական ժողով կստան-  
դինուպօլոյ ընդգեմ Մակեդոնի ( 911 ) : Եւ  
յետքազմապատիկ արիական առաքինութեանց  
լի արդեամբք վոխեցաւ առ տէրյերիս իդոսացն  
դեկ . 384 յաւուրս մէծին թէռդոսի :

1 թէռդոր . պապմ . էկ . գիր + 2 + գլ . ծէ : Ա՞է-  
ըտ . գիր + 4 . գլ . էլ : չերոն . յշ . երւելի ար .  
գլ . մդ և մլ : Բարոն . և Բակ . յոն 367 : Պապմ .  
հայ . գիր + 2 . գլ . իւլ :

## Խ

## Ս. ՍԻՐԻԿԻՌՈՒ

Ա. Տ. 385, և իայսէրութեան վաղենպիտանոսի թ. 10,  
և թէոդոսի 6:

1360. Ալիքիկիստհառվմայեցի որդի Դիբուրաստուի  
միով աւուրբյառաջ քան զիգոսս յունվարի 385  
յաջորդեաց զառըն Դամասոս. և եկաց 'ի հայ-  
րավետութեանն իմաստութեամբ ամս երեքտա-  
սան և աւուրծ քառասուն: Աս 'ի սկզբան անդ-  
գրեաց հռչակաւոր նամակ առ Հիմերիս եսլիս-  
կապոս տարագոնացի, որ պարունակէ հնդետա-  
սան գլուխս բանից վարդապետականաց. որովք  
հասաաաէ: զվշիոս նախորդաց իւրոց ընդգեմ  
կրկնակնունք հերձուածողաց. հրամայէ զերե-  
խայս մկրտել 'ի հանդիսաւ որ աօնս զատկի և  
հոդեդալստեան՝ երբ չիք հարկուորութիւն:  
Պատուիրէ քահանացից և սարկաւագաց լինել  
անկին և սրբակրօն ըստ աւանդութեան տուա-  
քելոց՝ այլովքն հանդերձ: Պումարեաց կրկին  
ժողովս 'ի Հռովմ' և դատապարտեաց զնովիւ-  
նիանոս միայնակեաց զուրացող կուսութեան  
Աստուածամօրն (802). զՄանկքեցիս տարա-  
գիր արար 'ի Հռովմայ հանդերձ նզովիւք. և  
զդարձեալս յուղպափառ հաւասա հայրաբար  
ընկալեալ՝ պատուիրեաց ապաշխարել 'ի վանս  
մինչեւ յման, և յայնժամ միայն ընդունել ըզ-  
հազորդութիւն: Եւմեա բարեկարգելոց զեկէ-  
զեցին Ամբովկոյ զվրդովեալն յերեսաց Դոնա-  
տեանց՝ փոխեցաւ առ տէր յութ կաղանդացէ

մարտի 398. զորոյ անուն անցոյց 'ի վկայա-  
բանութեան Հռովմայ Բենեգիկտոս ԺԴ<sup>1:</sup>

## ԽԱ

## Ա. ԱՆԱՍՏԱՍ Ա

Ա. Տ. 398. և կայսերական Արքադեսոն  
և Ռուբենսի 4:

1361. Անաստաս Հռովմայեցի որդի Մաքսի-  
մոսի տյր Երևելի և զօրաւոր յաջորդեաց յալթոռ  
քահանայապետութեան Հռովմայ միովաւուրը  
յառաջ քան զիդոսս մարտի 398. և Եկացյիշ-  
խանութեան աստուածային նախանձու և ա-  
ռատքելական ոգւով զամն չորս և զաւուրս քա-  
ռասուն և Երիս : Այնչափ էր սորա փոյթ և արթ-  
նութիւն 'ի վերայ հօտին, զի ոչ միայն զջոկս  
աղանդաւորաց Մանելքեցւոց, Պեղագեանց և Ա-  
րիանիտաց զօրացելոց յիտալիա և յԱփրիկէ նը-  
կուն արար, այլ և զկեղծաւորեալ ջատագովս  
Որոգինեայ ընդ Հռուփինոսի միայնակեցի դա-  
տապարաեաց : Հաստատեաց և զվճիւս ընդդեմ  
Կրկնակնունիք աղանդաւորաց, որպէս խնդրեալ  
էին ափրիկեցի եպիսկոպոսունիք 'ի ժողովն Կար-  
թագինեայ : Եհան և հրաման՝ զի քահանայք  
յոտին կացեալ ամենայն ակնածութեամբ ըն-  
թերցցին զաւետարանն իրրե. 'ի բերանոյ Աս-  
տուծոյ : Եւ կացեալ նորա 'ի հայրապետու-

1 Բարոն. և Բակ. յան 385: Զայիմս 'ի Առաջն  
առ Հիւսիսոս Գլ. Ք: Ա կայաբ. Հոռ. առ Բարոն.  
'ի Ճ յունվ: Ողպապոս Գիրք. 2: Ամբրոս. Առաջն  
19: Լամբերտինոս. յզ. Ճառ. Աստուծոյ. Գիրք 4.  
Ճ. 2. Գլ. Է:

թեանն ամբիծ վարուք, ճոխ վարդապետութեամբ, և յընտանի մտերմութեան ընդ Ամբոսիսի, Հերոնիմոսի, Օդոսաբինոսի և Ասկերուանի, փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս ՚ի հինդ կաղանդացն մայիսի յամին 402<sup>1</sup>:

Ա. ՏԵՊԻ ՉՈՐԾՈՐԴԻ ԴԱՄՐՈՒՆ

304. Հովիժակիմեան սուրբ կուսանք ՚նահատակին, և սուրբ Լուսաւորիչն ելանէ ՚ի վերապէն:
305. Երուսաղեմի երեսներորդ իններորդ եպիսկոպոս նստաւ Զարդաս և ապա Հերմոն՝ քառասներորդ:
306. Առաջին ասաւուածանօթութիւն Հայոց ՚ի հեգետասաններորդ ամին Տրդատայ, և սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ՚նստի յաթու սուրբ առաքելոյն թագեկոսի:
307. Վահանքայ Եկեղեցւոյն իննեւտասներորդ եպիսկոպոս Տիանոս:
308. Աղեքսանդրիոյ վեշտասաններորդ Եպիսկոպոս Պետրոս:
311. Կոստանդիանոս աեւլետամբ ՚նշանի խաչին հաւատայ ՚ի Քրիստոս:
316. Պետրոս Հայրապետ Աղեքսանդրիոյ ՚նահատակի, յաջորդէ զաթուն Աքիւզաս և օթնեւտասներորդ Եպիսկոպոս:
320. Աղեքսանդրիոյ ութեւտասներորդ Եպիսկոպոս Աղեքսանդր:
321. Արիատակէս կրսեր որդի Լուսաւորչի ձեռնադրի: Կոստանդիանոս պատուիրէ աղաւագութիւն:

1 Ողբագ. Գիրք 5. 5: Հերոն. Առաջին 150: Ա. Անուշին. Առաջին առ Անիսիմոս Եպիսկոպոս: Առ Լոբետ. 4. Եր. 1701: Բարոն. և Բարի. յան 398.

- Հել զկիւրակէս յամենայն աերութեան  
իւրում:
322. Տրդատ և Լուսաւորիչ գնան 'ի հռովմ'  
(1354):
326. Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետ ծաղկի:
327. Գիւտ որբոյ խաչին 'ի ՀՀղինեայ:
334. Սուրբ Լուսաւորիչ Ճգնէր յայրս Մա-  
նեայ, և երեմն երեւէր հաստատել զուխ-  
արն, այլ յետ դարձին Արքատակեայ 'ի  
Կիկիոյ ոչ ևս երեւցաւ, և յաջորդեաց  
զնա Արքատակէս:
336. Լուսաւորիչ վախճանեցաւ, և Ծաղեցին  
հովիւք, այլ յետ բազմաց յայտնեցաննըշ-  
խարք նորա Գառնըկայ Ճգնակորին:
337. Սուրբ Ամենաս աքսորի: Եւ Կոստան-  
դիանոս մկրտեալ յԵւսեբիոսէ եպիսկո-  
պոսէ 'Եիկոմիդէայ' մեռանի:
342. Արքեզայս վասն կշտամբելը 'ի որբոյն Ա-  
րքատակեայ' նահատակէ զնա, և յաջոր-  
դէ Վրթանէս:
346. Տրդատ գեղակուր եղեալ 'ի զօրաց իւրոց  
վախճանի: Գրիգորիս հայրապետ որդի  
Վրթանէսի նահատակի յԱղուանս:
351. Լուսափոյլ խաչ երեխ յերկինս 'ի վերայ  
Երուսաղէմի:
353. Կիւրեղ Երուսաղէմի հայրապետ ծաղկի:
358. Սուրբ Վրթանէս վախճանի, և յաջոր-  
դէ որդի նորա Յուսիկ:
360. Սուրբ Անտոն Ճգնաւոր վախճանի:
364. Սուրբ Յուսիկ նահատակի 'ի Տիրանայ, և  
յաջորդէ Փառներակէ:
369. Մեծն Կերսէս թոռն Յուսկայ յաջորդէ  
յաթառ սուրբ Լուսաւորչին:
371. Գրիգոր աստուածաբան, Բարսէղ և Գրի-  
գոր նիւսացի ծաղկին:

375. Սուրբ Ամենասս վախճանի :  
 377. Եպիփան և Եփրեմ ծաղկին :  
 379. Սուրբն Ամբրոսիոս և Խաղ. Եպիսկոպոս  
ծաղկին :  
 381. Մեծն Ներսէս աքսորի :  
 385. Սուրբն Հերոնիմոս ծաղկի :  
 391. Սուրբ Օգոստինոս մլրախ յԱմբրոսիոսէ :  
 399. Սուրբ Մեսրովակ և Ռոկեբերան ծաղկին :  
 Զայնու Ժամանակաւ յետ թագաւորելոց Տըր-  
դատայ ամս յիսուն և վեց 'ի հայս, թագաւոր-  
քաց որդի նորա խոսրով թ., փոխեալ զաթոռն  
յԱրտաշատ, և անախ 'ի Դուին : Ապա Տիրան,  
ապա Արշակ թ., ապա Պատ, ապա Վարազդատ :  
 Յետ որոյ Արշակ գ. և Վաղարշակ որդիք Պապայ,  
մին 'ի բաժնին Պալոսից և միւսն 'ի բաժնին Յու-  
նաց : Ապա խոսրով Գ., և ապա Վռամշապուհ :

## ՀԵԿԳԵՐՈՐԴ ԴԱՅ

ԽԲ

Ս. ԽՆՈՎԿԵՆՏԻՈՍ Ա

Ա. Տ. 402, և կայսերութեան Աբիադեանի և  
Ոնորիոսի 8:

1562. ԽՆՈՎԿԵՆՏԻՈՍ ալքանիացի որդի խնովկենտիոսի այր հաւակելի իմաստութեամբ և խոհականութեամբ՝ ընտրեցաւ արժանաւոր յաջորդ սրբոյն Պետրոսի, և հաւանութեամբ ուխտին չռովմայ և իշխանաց ձեռնադրեցաւ պատ'ի հնդետասան կազանդացն յունիսի 402: Սա էկաց պաշտպան սրբոյն Յովհաննու Ոսկեթերանին երկիցս յանիրաւի դատապարտելոյ ՚ի հակառակորդաց և արտասահմանելոյ յաթուոյն կոստանդինուպօլոսյ: Որոյ ընդ բողոքել առաւրբ քահանայապետն, արձակեաց զնա ՚ի դատապարտութենէ և գարձոյց զնա յաթու իւր, նուաճեալ և զհակառակորդ եպիսկոպոսունս: և նոքա արդարացուցեալ զարդարն՝ հազիւ մարթացան հազորդել ընդ եկեղեցւոյն: Եւ յորժամ Ալարիկոս արքայն գթաց ունակոսի առնէր զիտալիս, իննովկենտիոս չոքաւ ՚ի չռավեննա առ կայսրն Ոնորիոս՝ ելի հնարս դատանել: Այլ բարբարոսն մտեալ ՚ի չռովմ քահացեաց զբաղում տեղիս բաց ՚ի յեկեղեցեաց, զոր հաշտեցաց պատ' ընդ կայսեր:

Յետ խազաղութեան չռովմայ ձեռն էարկ հայրապետն պատուհասել զՊեղադեան, զնովատեան և զկեղեսաեան աղանդաւորս: Մաք-

րեաց զհօան ՚իբազօւմ տեղիս . և հաստատեալ  
զվճիռու երկրորդ ժողովյան կարթագինեայ և  
Միղեւիդեայ , եհան և կոնդակո հաստատու-  
թեան վարդապետութեան եկեղեցւոյ , բառ-  
նալով զանկարդութիւնս սպրդեալս յանուղղայ-  
ից : Եւ այսպէս փառաւորեալ ՚ի պաշտամանն  
փոխեցաւ տռ. տէր ՚ի հինգ կազանդացն օդոս .  
517. յետ զեկավարելց զեկեղեցին սրբութեամբ  
և խմատութեամբ ամս հնդետառան , ամիսս եր-  
կու և աւուրս տասն <sup>1:</sup>

## ԽԳ

## Ս. ԶՈՒՄՈՍ

Ա. 8. 417. և իայսէբս-նէտ ընորիսսի 23.  
և թէոդոսի Բ. 10:

1563. Չոսիմոս աղդաւ յոյն որդի Աբրահա-  
մու ընարեցաւ յաթու քահանայապետութեան  
հառվայ ՚ի չորեքտասանն կազանդացն սեպտ .  
417. և եկաց ՚ի հայրապետութեան զամմի , ամիսս  
չորս , և աւուրս եօթն : Առ սա դիմեաց խորաման-  
կութեամբ Պեղադիոս և աշակերտ նորաւ կեղես-  
տիոս . այլ ՚ի յայտնել նենգութեան նոցա՝ դա-  
տապարաեցան ՚ի ժողովն կարթագինոյ : Եւ  
սուրբ հայրապետն գուն գործեաց ոչ միայն  
զաղանդ նոցա բառնալ . այլ և լնջել զյիշա-  
տակս նոցա յերկրէ : Զօրացոյց նա զուղղափառ  
եալիսկոպոսունս սկապական վճռովք և կոնդա-

1 Թէոդոս . պատմ . էինչ . գիշ 5 . գլ . իշ : Օ-  
գոս . յշ . ծառծ . գլ . իշ . 4: Պէսապէր . ընտրեմ կ-  
լութունի գլ . իշ . 3: Պալլադ . յնուինք . հապ . 13 .  
ել . 9: Բարոն . և Բատի . յան 402=417:

կօք. սպատուիրեաց կրել սարկառագաց յահեակ  
ուս իւրեանց զուբարբեհեղեց այ: Թոյլ եւ և ժո-  
ղովրդապետաց օրհնել յիւրեանց եկեղեցիս զառ-  
կական մամեղենս, զոր միայն 'ի մայր եկեղեցիս  
օրհնելին և վառելին ցայնժամ: Այսպէս խնամ-  
արեալ մեծի հայրապետին ամենայն արթնու-  
թեամբ կարեւորաց պաշտաման իւրոյ՝ փոխեցաւ  
առ աէր յեօթն կաղանդացն յունվ. 418<sup>1</sup>:

## ԽԴ

## Ս. ՎԱՐՆԻՓԱԿԻՌԱ Ա.

Ա. Տ. 418, և կայսերական ընորդուի 24, և  
թէոդոսի Բ. 11:

1564. Զկնի Զոսիմոսի յաջորդեաց յաթոռ-  
քահանայապետութեան Վանիսիակիս երեց հը-  
ռովմալեցի որդի Հոդունասսի երիցու, այր պա-  
տուաւոր լի խմաստութեամբ և զարդարեալ վա-  
րուք որբութեան . զոր ընարեցին երիցունք հը-  
ռովմայ 'ի հինգ կաղանդացն յունվ. 418. Սա-  
կայն սարկառագունք և ոմանք 'ի քահանայից  
տհաճեալ ընդ ընարութիւնն կամեցան գնել  
զայլ քահանայապետ զԵւզաղիս ուն նախա-  
սարկառագ՝ ձեռնատուութեամբ Աիմաքոսի քա-  
ղաքապետին. որոյ յօդեալ բազմապատիկ պա-  
տիր բանս ջանայր յիւրեանց կողմն որսալ և ըզ-  
կայսրն ընորդիս, որ չէր յայնժամ 'ի Հովմբ.  
մինչև գնալ պատին առ կայսրն և ծանուցանել  
զՃմարտութիւնն: Իբրև 'ի վէր ել չարութիւն

1 Օդու. Գիշ+ 2. յլ. սկզբ. Տեղ. Գլ. թ. 10:  
թէոդ. պատփ. եկ. Գիշ+ 5. Գլ. լը. եր. 244:  
Բարձր. յայն 418:

նոցա, կայսրին հաստատութեամբ ընկալաւ զվու-  
նիվակիոս իբրև օրինաւոր յաջորդ սրբոյն Պետ-  
րոսի. ըստ որում և քաղաքն ամենայն յայն-  
ժամ գուշակ միաձայն անուանէր զնա օրինա-  
ւոր դլուխ և կեղեցւոյ:

Բայց նա ընդ հաստատին յետ դառնալոյ  
յաթոռ իւր նոյն հետայն ջան եղ խաղաղել զա-  
մենեսեան զարմանալի խմաստութեամբ, զի մի  
հերձուած ինչ ծագեսցի 'ի ժողովրդեան: Ա-  
պա հաւանեցոյց և զկայսրն՝ արդելս դնել զի մի  
ոք առ վառասիրութեան յաստիճան առաջ-  
նորդութեան բարձրանալ ժպրհեսցի 'ի ձեռն  
իշխանաց: Նոյնպէս և ինքն կանոնադրեաց, զի  
միայն ընարեալն յուխաէ և կեղեցւոյ ըստ սահ-  
մանադրութեան ընկալեալ լիցի յառաջնորդու-  
թիւն: Եսան զօրաւոր կոնդակ ընդդէմ ու-  
րացողաց զնորհս Աստուծոյ. զորս նկուն արար  
և հրովարակաւ բարեպաշտ կայսերաց, սաի-  
պետ և զսուրբն Օդոսաբինոս գրել դիրս ընդ-  
դէմ Պեղագեանց: Հրաման եհան զի մի հաւա-  
տաւոր կուսանք և կանայք մերձեսցին 'ի սրբա-  
զան իրս կամ իննկեսցեն յեկեղեցւոջ և կամ  
սպասաւորեսցեն 'ի աաձարի: Այսպէս գեղեցիկ  
կարդօք և օրինադրութեամբք կառավարեալ վե-  
կեղեցին զկնի գարձին յաթոռ իւր ամս չորս, ա-  
միսինն, և աւուրս ութեատամն, վոխեցաւ նովին  
սրբութեամբ առ Քրիստոս յութ կաղանդացն  
նոյնէմ. կ25<sup>1</sup>:

1 Առկաս. Գիր+ Դ. Գլ. Ճա. Եր. 285: Բարոն.  
և Բակ. յան 418: Պըսպէտ ընդդէմ Կաղադ. Գլ.  
իս. Եր. 362:

## ԽԵ

Ս. ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Ա

Ա. Տ. 423, և իւյներութեան թէստուի Բ. 16:

1565. Կեղեստիանոս սարկաւագ հռովմայեցի որդի Պրիսկոսի՝ ընալեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի յերիս նոնայցն նոյեմ . 423, և կառավարեաց զեկեղեցին իմաստութեամբ ամս ութ , ամիսս հինգ , և աւուրս երիս : Աս ամենայն զօրութեամբ գուն գործեաց մերժել զնովատեան հերեաիկոս՝ որ զօրացեալ էին 'ի հռովմ և յիտալիա : Հաստատեաց անդրէն զկանոնս ժողովոց և զվճիռս քահանայալեաց նախորդաց իւրոց (784) : Առ ժամանակօք հայրապետիս պայծառացաւ հաւատ Քրիստոսի 'ի Սկովտիս , ուր տռաքեցաւ 'ի նմանէ Պալլատիոս առաջին եպիսկոպոս : Նոյնպէս և 'ի բազում տեղիս առաքեաց զիմաստունքարողիւս . որովք բազումք դարձան 'ի սուրբ հաւատա , և յամենայն տեղիս զօրացաւ ուղղափառութիւնն : Յայնժամ գըլուխ ամբարձ ահօրէն պատրիարքն Կոստանդին նուպօլսոյ Նեստոր ընդդէմ մարդեղութեան բանին , որում գլխահար կացոյց քահանայապետն զսուրբն Կիւրեղ աղեքսանդրացի , դուսարելով ժողովլյազեքսանդրիաւ 'ի հռովմ (1166) : Գրեաց առ նա և թուղթ՝ տալով զաւուրս 10 վասն ապաշխարելոյ . այլ ընդ ըմբոստանալ աղանդապետին՝ դատապարտեաց զնա : Ապա հրաշակեաց գումարել զախեղերական ժողովն Եփեսոսի՝ և հաստատեաց զվճիռս ժողովոյն իշխանութեամբ իւրով , և դաւանելով 'ի Քրիստոս զմի անձն առառւածային և զերկու բնութիւնս :

Օրէնսեգ եկեղեցականացսավմուսէլզկցորդս հարիւր և յիսուն սավմուսաց յառաջ քան զընթերցուածս պատարագին : Ասկա յետ այսր ամենայնի փոխեցաւ առ տէր յութ իդոսացն ապօ . 432 :

## Խ. Զ.

## Ա. ՔՍԵՍՏՈՍ Դ.

Ա. Տ. 432 , և իայսեբութեան թիէոդոսի Բ. 25 ,  
և վաղէնդիանոսի 8:

1366. Քսեստոս երէց հռովմայեցի որդի Քսեստոսի յաջորդեաց 'ի քահանայտավետութեան զկնի սրբոյն կեղեստիանոսի 'ի վեց կաղանգացն մայիսի 432 , և եկաց յառաջնորդութեան եկեղեցւոյ ամենայն արթեութեամբ ամս եօթն , ամիսս մետասան , և աւուրս երկու : Սա 'ի ժամանակէ անտի Զոսիմոսի քահանայտավետին եկաց հզօր ախոյեան ընդդէմ Պեղագեանց հրատարակելով ամենեցուն զվճիռս դատապարտութեաննոցաւ բնդ նստելն յաթոռ քահանայտավետութեան հանդարակեցոյց զհօտ իւր՝ գուն գործէ ալբնաջնին լատոնելզաղանդաւորս : Զառաջննն հաստատեաց զվճիռս սրբոյց ժողովոյն Եփեմոսի դատապարտեալ զնեստոր 'ի ժողովն հռովմայ . զոր մերժեալեղին 'ի աեղինորա զՄաքսիմիանոս սկատրիարդ : Դատապարտեաց և զՅուլիանոս եպիսկոպոս Պեղագեան : Եւ յայլում ժողովի անդ հռովմայ դատապարտեցաւ Բասոս զըպար-

1 Օդու . Առաջ 209. 261: Ա-իշ-պ. Գիշ+ 7. Գւծա: Պըսուգէր. ընտէէ կազմու. Գւ. Ին. Եր. 363: Բանա. Գիշ+ 2. + Գւ. Գ: Բարբոն. և Բան. յան 423: Ամալարիս . Գիշ+ 3. յզ. Ել. պաշտ. Գւ. Ե:

տիչ սրբոյ Հայրապետին ( 1166 ) : Արար խաղաղութիւն 'ի մէջ կիւրդի աղեքսանդրացւոյ և Յօվհաննու անտիոքացւոյ : Եւ այսպէս յարեւելու յարեւմուտս գեղեցիկ կարդօք փոռաւաւորեալ զուղղափառս և զօրացուցեալ զսուրբս՝ փոխեցւառ Քրիստոս'ի հինգ կաղանդացն ասպիլիք կհօ :

## ԽԵ

## Ա · ԼԵՒՈՆ Ա ՄԵԾ

Աւ Տ. 440 , և կայսերական թիւուննի Բ. 55,  
և Առաջնադիմունի 16 :

1567 . Զկնի մահուան սրբոյն Քսեստոսի աւուրս քառասուն մնաց Եկեղեցին Հռովմայ առանցքահանայապետի զիուխտն սպասեալ մնայր գալստեան մեծի նախասարկաւագին Լեւոնի դեղերելոյ 'ի Գաղղիա վասն հաստատելոյ զբարեկամութիւն 'ի մէջ Այեգինոսի և Ազրինոսի : Որոյ ընդ ժամանելին 'ի Հռովմ՝ բերկրութեամբ սրտի համօրէն քաղաքացեաց ընտրեցաւ արժանաւոր յաջորդ սրբոյն Պետրոսի . և վասն մեծի իմաստութեանն և առաքինութեան մականուանեցաւ ՄԵԾ , որպէս Վկայեն երեւլիքն 'ի սրբոց և մեծապանծ գործք իւր :

Սա ըստ եռանդուն հսկողութեան հոգւոյն աշխատ եղեւ յոյժ անհետ առնել զՄանիքեցիս , զՊեղագեանս և զՊրիսկիղեանս : Կոյնպէս և ջատագով կացեալ Հշմարտութեան՝ գատապար-

1 Օֆան . Առաջն 194 . Գլ . ա : Լեւոն 'ի բանն 82 . Գլ . գ : Պրուսու . 'ի Ճաման . յան 439 . Եր . 747 : Կիւրեղ . Առաջն առ Ահակիսս . առ Լաբ . հագ . 3 . Ճաղաղ . Եր 1129 : Բարձր . յան 440 :

տեաց զԵւտիքէս և զկուսակից նորա զԴէսսկո-  
րոս: Զորս 'ի սկզբան անդ կամեցաւ յուղու-  
թիւն ածել ուղափառ. վարդապետութեամբ  
իւրով. այլ յըմբոստանալ նոցա՝ ետ գումարել'ի  
Քաղկեդոն տիեզերական ժողով (915): Ուր  
առաքեաց 'ի ձեռն հրեշտակաց իւրոց և զսահ-  
մանս հաւատոյ կամ զատւմար ընդդէմ Եւտի-  
քեայ. զոր իբրև ընթերցան հարք ժողովոյն, ըն-  
կալան որպէս բան Պետրոսի խօսեցեալ բերանով  
լեւոնի: Յետ այնորիկ հաստատեաց զվճիռս և  
զկանոնս ժողովոյն և յիւրում ժողովի: Գումա-  
րեաց 'ի չուովմ ութիցս ժողով ընդդէմ ծա-  
ծուկ Մանիքեցւոց, ընդդէմ Խլարիոնի եպիսկո-  
պոսին Արելատոյ, և 'ի պատճառս եպիսկոպո-  
սացՍիկիլիոյ վասնողաց զինչս եկեղեցեաց, և վասն  
մերժելոյ զԵւտիքականս և հաստատելոյ զուղ-  
դափառ հաւատս (1167): Սահմանադրեաց կա-  
նոնս վասն կատարելոյ զիսորհուրդ մկրտութեան  
'ի հանդիսաւոր աւուրս զատկի և հոգեգալըս-  
տեան, և վասն խորհրդական խօստովանութեան  
առնելոյ յառանձնութե. զի ցայն վայր հրապա-  
րակաւ ևս խոստովանէին: Եդ զօրէնս հանդիսա-  
պէս ձեռնադրելոյ զքահանայս 'ի ներկայու-  
թեան բաղմամբոխ ժողովրդեան: Արար և զայլ  
բազում ուղղութիւնս և զարմանալի կարգա-  
դրութիւնս, եղեալ մի 'ի մեծամեծ և 'ի սքանչե-  
լի հայրապետացն սրբոց՝ որ միանգամերեսեցան  
յաշխարհի: Եւ յետ կալոյ նորա 'ի հայրապետու-  
թեան ամս քսան և աւուրս քսաննութ՝ փո-  
խեցաւ առ Քրիստոս նովին սրբութեամբ և ա-  
ռաքինի վարուք յերեք իդոսացն ապրիլի 461<sup>1</sup>:

<sup>1</sup> Պէտակ. 'ի Ճաման. Եր. 748: Բարբոն. և Բառ. յահն 440=461: Պէտական. հա. 4. Գիր. 1. գլ.

## ԽԸ

## Ս. ԻԼԱՐԻՈՍ

Ա. Տ. 461, և կայսերութեան Լէտոնի 5.  
և Սէւերոսի 1:

1368. Խլարիոս սարդենիացի որդի Կրիստինոսի ընտրեցաւ յաջորդ սրբոյն Լեւոնի միով աւուրք յառաջ քան զիդոսս նոյեմբերի 461. որ գոլովնախասարկաւագ եկեղեցւոյն Հռովմայ առաքեցաւ դեսպան՝ ի մեծէն Լեւոնէ յերկրորդ ժողովն Եփիեսոսի։ Ապա իբրև ձեռնադրեցաւ քահանայապետ, մեծաւ քաջութեամբ անարատ պահեաց զհօտ իւր յապականցաց անտի, կառավարեալ զեկեղեցին իմաստութեամբ ամս հինգ, ամիսս ինն և աւուրս քսան և ինն։ Սորա գերազանցութիւն հոգւոյ անտի յայտ է, զի զարմանալի արութեամբ ընդդէմ զինեցաւ ամենայն աղանդաւորաց ժամանակին, որք յայլ և այլ կողմանս աշխարհի ՚ի ձեռն իշխանաց և տէրութեանց զօրացեալ էին, մանաւանդ յարեւելս և յԱփրիկէ։ Զորս նկուն արար սա ինքն ՚ի ձեռն զօրաւոր կոնդակաց և վճռոց։ Աս և հաստատեաց զկանոնս ընդհանուր ժողովոց, ընդբանիւ արարեալ և զԵւաիքեանս։ Գումարեալ ՚ի Հռովմ ժողովը ՚ի յիսուն և երկու եպիսկոպոսաց՝ սահմանեաց կանոնս սակս վարդապետութեան եկեղեցւոյ, և արդեւ զի մի եպիսկոպոս ոք

Ճ. 66։ Գէննադիոս յղ. երւելմ. աբ. Գւ. հ. Բոնա. յղ. պատ. Գիրք 2. Գւ. Ճ. Սուրբ Գրիգոր. Գիրք 1. Առաղը 10. և 25. և Գիրք 6. Առաղը 2. Տուամար Լէտոնի հայ։ Պատմ. Հայ. Գիրք 3. Գւ. Ճ. :

ինքնակատմ ընտրեսցէ զոք 'ի յաջորդ իւր : Եւ  
այսպիսի դեղեցիկ կարգադրութեամբ խնամ  
կալաւ հոդալնաև զհօտ իւր յայլ և այլ վայրս :  
Այս ինչ դնացեալ մեծի հայրապետին 'ի Քա-  
լարի մայրաքաղաք կղզւոյն Սարդենիայ՝ կան-  
խեաց առ նա օրհամն . որով և վճարեաց զցան-  
կալք կեանս իւր սրբութեամբ 'ի չորս իդոսացն  
սեպտեմբերի 467<sup>1</sup> :

## ԽԾ

## Ա. ՍՏՄՊՂԻԿԻՌԱ

Ա. Տ. 467, և կայսերական ՀՀ-ունի 12,  
և Անդեմոսի 1:

1569. Սիմազղիկիոս տիրուրտացի որդիկաստինո-  
սի յաջորդեաց յաթոռ քահանայապետութեան  
հռովմայ յերկոտասան կազմոնդացն հոկտեմ-  
բերի 467, և կաց յառաջնորդութեան եկեղե-  
ցւոյն յալէկոծեալ ժամանակի անդ ամենայն  
խոհեմութեամբ և քաջութեամբ ամս հնգետա-  
տան , ամիսս հինգ և աւուրս ութ : Սա ինքնըա-  
զումս աշխատ եղե 'ի մերժել զՊետրոս Կնափոս  
յաթոռույն Անտիոքայ և զՊետրոս Մոնղոս յԱ-  
ղեքսանդրիոյ . թող զայլս , որք էին յԵւակա-  
կանաց : Յանդիմանեաց զԶԵնոն կայսր , որ զԵւ-  
տիքականս կամեր միացուցանելընդ ուղղափա-  
ռաց իրեւ 'ի մի եկեղեցի : Գտանին սորա ութե-  
տասն խմաստուցից նամակք գրեալք առ զանա-  
զան անձինս : Մինչև ցային վայր զիսորհուրդ կար-  
դին կատարէին 'ի դեկահմբերի . Սիմազղիկիոս

1 Բարձր . յան 449. և 461: Ամալ . Գիշտ 2 . յԴ-  
էլ . պաշտ . ԳԼ . 1 . հապ . 14:

Ճեսնադրեաց 'ի վետրվարի : Եւայսպէս գեղեցիկ արթնութեամբ վարեալ զարացոն հովաւապետութեան խրոյ՝ փոխեցաւ առ Քրիստոս 'ի կազմնդս մարտի 483<sup>1</sup> :

## Ծ

## Ա. ՓԵԼԻՔՍ Գ

Ա. Տ. 483, և Խայտերաննեան Զննոնի 10 :

1370. Փելքս հռովմայեցի որդի Փելքսի երիցու ընարկեցաւ յաջորդ սրբոյն Պետրոսի յութեամսայն մարտի 483, և կառավարեաց զեկեզեցին որսկէս քաջնովիւ ամսութ, ամիսս մեասասն և աւուրս եօթնուտամն : Որ 'ի սկզբան անդ ջան Եդուզովել զմիտս կայսեր Զենոնի մոլորելոյ յԵւտիքտկանաց . նմին իրի եհան նոր վճիռս ընդդէմ հրովարտակի նորա, սպառնալով նմա զահեղ բանադրանս . առաքեաց և հրեշտակս առ Ակակիոս եպիսկոպոս Կոստանդինուպոլաոյ : Այլ իբրև արդելան նոքա 'ի բանափ 'ի պաշտօնէից կայսեր՝ գատապարտեաց զԱկակիոս իբրև ձեռնտու Պետրոսի Կնափոսի աստուածաչքարչար հերետիկոսի (815) : Արար և կարգադրութիւնս սակս վիճակաց շեղեալ եպիսկոպոսացն մոլորելոց . զոմանս մերժեաց յիշսանութենէ, և զայլ ուզովեաց հայրաբար :

Այնչափ էր սորա հոգ 'ի վերայ հօտին, զի ոչ միայն յամենայն տեղիս զօրացուցաներ զնուս, այլ և դումարեաց զանազան ժողովս 'ի

1 Նիւեֆուր . 'ի պապ . Եկ : Թէ՛ռ . Գիրք 2 . Եր . 566: Կելսու . ա . Բուղթլ յ . Գլ . ին : Բարքն . և Բահյան 467 :

Հռովմեան է հան վճիռս վասն կազդուրելոյ զգայ-  
թակղեալս յերեսաց Արքանիտաց և վասն գատա-  
պարտութեան Պետրոսի Մոնղուսի (1168) : Աւը  
կարդեցաւ և օրինակ ապաշխարտութեան վասն  
սահելոցն յԱփրիկէ 'ի հալածման Հուներիկոսի  
արքային Վանդալաց, որ ոգւով Արքոսի ապակա-  
նեալ չարչարեաց զսուրբա, նա և 'ի Մաւրիտանիա  
եհատ զեղուս բնակչաց ողջոյն քաղաքի միոյ  
սոկս խոսառվանելոյնոցա զբանառոս Կատուած.  
սակայն և ինքն նոյնօրինակ մահուամբ Արքոսի  
ստուակեցաւ : Յաղակս որոյ գրեաց նամակ սուր-  
բըն Փեղիս առ Զենոն օգնել հաւատացելոց . և  
ինքն անդադար էր 'ի հաստատել զիոսա 'ի հա-  
ւատս : Բայց 'ի հինգ կաղանդայն մարտի 492  
զերծեալ 'ի կապանաց մարմնոյ վերասալացաւ յեր-  
կինս երջանիկն անուամբ և իրօք <sup>1</sup> : Տես և 'ի  
կարգս մասնաւոր ժողովոց :

## ՃԱ

## Ս. ԳԵԼԵՍԻՈՍ Ա

Ա. Տ. 492. Խ. կայսերական եան Անուպասայ 2 :

1571. Գելասիոս հռովմայեցի որդի Վաղե-  
րիոսի յաջորդեաց յաթոռ քահանայապետու-  
թեան հռովմայ 'ի վեցն նոնայց մարտի 492, և  
զեկալարեաց զեկեզեցին առաքելական նա-  
խանձու և իմաստութեամբ ամս չորս, ամիսս  
ութ և աւուրս քսան . զոր ոմանք համարեցան  
լինել ափրիկեցի որդի Վաղերիոսի եպիսկոպո-

1. Թառշնաբն . յզ . հին և նոր եինզեց . Հաբդ . 5 .  
2. Գիր + 2. ԳԼ . ՃՂ . 2 : Մեծն Գրիգոր . Գըայ . ԳԼ .  
ՃՂ : Բարսն . և Բակ . յան 485 :

սին Հիբրոնացւոց . այլ ժամանակն ոչ համաձայնի : Այս քահանայապետ արար ժողով՝ ի Հռովմ յեօթանասուն եպիսկոպոսաց , և սահմանեալ նախ որոշեաց զկանոնական սուրբ գիրս յերկրայականաց , զորս զդուշացոյց չվերծանել անխտիր : Երկրորդ հաստատեաց զըուս տիեզերական ժողովս լինել միապէս ընդունելի և սուրբ : Երրորդ կանոնադրեաց զվարդապետական դըրութիւն նախնի հարց սրբոց լինել պաշտելի յեկեղեցւոջ ըստ որում ուղղափառական :

Դարձեալ գումարեաց զայլ ժողով , յորում արձակեաց զհրեշտակս ֆելքսի զնզովեալսն վն հազորդելոյ ընդ Ակակիոսի ՚ի կոստանդինուալիս(1370) : Ոչ ընկալաւ ՚ի հազորդակցութիւն զԵփիմիոս պատրիարք կոստանդինուալիսոյ սակըս ոչ ջնջելոյ նորա զանուն Ակակիոսի ՚ի դակաիկոնէն կամ ՚ի դասակարգութենէ յիշատակարանին : Գրեաց և նամակ առ Անաստաս կայսր չլինել ձեռնտու Եւտիքականաց , այլ հալածել զնոսա իրեւ ապականիչս : Նոյնպէս մերժեաց զՄանիքեցիս որք իրրեւ ուղղափառ կեղծաւորէին . նկուն արար և զՊեղագեանս , որք զօրացեալ էին ՚ի Դաղմատիա : Կանոնս հաստատեաց վասն մատակարարելոյ զնորհուրդս մկրտութեան , պատարագի և ձեռնադրութեան : Դրտանին սորա բազում վճիռք և նամակք : Բայց սակայն ՚ի մետասան կազանդացն գեկանմբերի կան թողեալ զանցաւոր իշխանութիւնն՝ փոխեցաւ յանանցն <sup>1</sup> :

1 Բարոն . յահն 492: Յովհանն . սարք . ՚ի վարս մեծին Գրիգոր . Գիշէ 2: Գլուխէ . նու և Առազին յո . Գլուխէ . 11: առ Լաբ . հառպ 4:

## Ծ.Բ

## Ա. ԱՆԱՍՏԱՄ Բ

Ա. Տ. 496. և կոյսերութեան Անաստամ 6 :

1372. Անաստաս հռովմայեցի որդի Պետրոսի այր առաքելաշնորհ ընարեցաւ յաջորդ սրբոյն Գեղասիսովի՝ ի չորս կաղանդացն դեկտ. 496. որ նախանձու կրօնասիրութեան ըստանստերիւր շաւզաց նախօրդաց իւրոց առաջնորդեաց եկեղեցւոյ զամ մի, զամիսս մետասան և զաւուրս իննետասն : Սա գրեաց նամակ առ Անաստաս կայսր ՚ի նպաստ ու զզակառառ հաւատոյ : Ասկա գրեաց և թուղթ խնդակցութեան առ Կղծումէոս արքայ Դաղղիոյ . որ այն ինչ հաւատացեալ ՚ի Քըլիսառո՞ խափանեաց զպաշտօն կուց , այլ և ընդ իշխանաւորաց և ընդ սոսկականաց բազմաց մկրանցաւ ՚ի սրբոյն Հռեմիկիսոէ արքեպիսկոպոսէն Հռեմսայ , և օծաւ՝ որպէս պատմի՝ հրաշալի իւղով , զոր երեւալ հրեշտակին մատոյց Եպիսկոպոսին ՚ի հանդիսի անդ առ ՚ի հաստատութիւնուրք հաւատոյ ընդդէմ այլափառաց . որով յայնժամ պանծալի հանդիսացաւ ողջամիտ կրօն : Խակ սուրբ հայրապետն Անաստաս ոչ յերկարեալ ՚ի կեանս , առաքինական վարուք փոխեցաւ առ տէր ՚ի վեշտասան կաղանդացն դեկտ. յամին 498 :

1 Բարձր . յաճ 496: Անաստամ . թուղթ . 1 . 2 . սուրբ . հայք / է . ԵՐ . 1282:

Ճ.Գ.

## Ա. ՍԻՒՄԱՔՈՍ

Ա. Տ. 498. և կայսերունեան Անտառասայ 8:

1373. Սիւմաքոս սարդենիացի որդի Փորտունատոսի ականաւոր նախասարկաւագ՝ յաջօրդեաց օրինաւոր ընտրութեամբ զԱնաստաս պապ յաթու քահանայապետութեան Հռովմայ 'ի տասն կաղանդացն գեկ . 498. Ուր յայնժամ փութացեալ սինկղիտոսին անուղիղ մտօք անդէն հաստատեաց հակապապ զոմն Լաւրենտիոս աւագերեց ծանօթ Անաստասայ կոյսեր որոյ որսացեալ զնա 'ի կողմն իւր՝ ետ սասրադրել յանիրաւ հրովարտակին իւրումանուանելոց ՀԵՆՐԻԿՈՆ : Յորմէ ծագեցաւ ավմուկ մեծ և գոյթակղութիւն . սակայն ուխան Հռովմայ միշտ ընկալաւ զԱիւմաքոս և զնա դիտաց օրինաւոր գլուխ եկեղեցւոյ :

Այս առւրբ հայրապետ կրեաց անհնարին վիշտս յերեսաց հակառակորդաց իւրոց . մինչև ծանր ծանր յանցանս բարդեալ 'ի վերայ՝ զրպարաեցին զարդարն առաջի աղանդաւոր ալքային խտալիոյ թէոդորիկոսի : Սորմն վտան գումարեցան 'ի Հռովմա զանազան ժողովք . 'ի ժողովն եօթանասուն և երկու եպիսկոպոսաց սահմանեցան հինգ գլուխք բանից սակա կարգագրութեան և պատուոյ եպիսկոպոսաց : Ի ժողովն հարիւր և հնդետասասան եպիսկոպոսաց արդարացաւ Սիւմաքոս 'ի զրպարտութենէն . և 'ի ժողովն եօթանասուն և վեց եպիսկոպոսաց կանոնք եղան իւաղալել զիսուվութիւնս հակառակորդացնորա : Իսկ 'ի ժողովն վաթոսուն և հինգ եպիս-

կոպոսաց հաստատեցաւ ընարութիւն Սիւմաքոսի, և նղովեցաւ Անաստատ կայսր. և եղան տասն դլուխք բանից ցրիչք օրինաց Ոգովաքրեայ արքային ընդդեմ եկեղեցական աղատութեան: Ի ժողովին երկերիւր ութուտասն եպիսկոպոսաց նկուն արար Սիւմաքոս զհերձուածողմ՝ որք ըզնախընթաց ժողովին թշնամանէին. և 'ի ժողովին հարիւր և երեք եպիսկոպոսաց նղովեցան որք յափշտակէին զինչս եկեղեցւոյ:

Այսպէս արիասիրտ հովուապետն քաջութեամբ կառավարեաց զեկեղեցին ամս հնդետասան, ամիսս եօթն և աւուրսքսաննեօթն: Արար բաղում ուղղութիւնս, մինչև գտանալ 'ի կոապաշտութենէ'ի սուրբ հաւատուԱղամանդարոսի արքային Սարակինոսաց. սոյնօրինակ գարձաւ յուղղափառութիւնն և Սիդիսմանդոս արիուական արքայ Պուրկոնտացւոց: Նւ հասեալ 'ի վախճան կենաց երաննէլի հայրապետն Սիւմաքոս փոխեցաւ առ Քրիստոս 'ի չորեքտասան կաղանդացն օդոս. 514<sup>1</sup>: Տես և 'ի կարգս մասնաւոր ժողովոց (1170):

### ԴԵՊԲ ՀԽԳԵՐՈՒԴԻ ԴԱՄՈՒՆ

Ա. Տ.

401. Պատր արքայ Հայոց սպան զսուրբն 'Ներսէս դեղով մօհու ըստ Ժամանակադրութեան Սամուէլի:

411. Յովհան Ոսկեբերան նոտի պատրիարք 'ի կոստանդինուպոլիս :

<sup>1</sup> Թէ՛ռու. Վէրծ. Պատմ. Էլ. Գիւտ 2. Եր. 560: Բարսն. և Բակ. յահ. 498: Նիւէֆու. Գիւտ 16. Գւ. լ. Եր. 710: Սիւմ. սու Լուֆ. հայ. 4. Ճուլ. Եր. 1356:

412. Թագաւորք Յունաց և Պարսից յերկուս  
բաժանեցին զաշխարհս Հայոց, 'ի մասն  
Պարսից և 'ի մասն Յունաց :
417. Սուրբ Սահակ որդի մեծին՝ Երակսի յա-  
ջորդէ յաթոռ կաթողիկոսութեան :
420. Սուրբ Հերոնիմոս վախճանի :
424. Գիւտ գրոյն Հայոց 'ի ձեռն սրբոյն Մես-  
րովայ . թարգմանութիւն սուրբ գրոց  
և սկիզբն դպրութեան 'ի Հայս :
426. Եղիկի, Կորիւն և այլ աշակերտք թարգ-  
մանչաց ծաղկին :
428. Աքսորանք սրբոյն Սահակայ :
430. Սուրբ Օգոստինոս վախճանի :
432. Դարձ սրբոյն Սահակայ յաքսորանաց :
434. Աշտկերտք թարգմանչաց առաքին յու-  
սումն Հելլենացւոց :
440. Վախճանի սուրբ Սահակ . և Մեսորովպ  
տեղակալէ :
441. Սուրբ Յովանէփ կաթողիկոս յաջորդէ զնա  
յաթոռ Լուսաւորչի :
443. Մովսէս Խորենացի և այլք ծաղկին :
444. Վախճանի սուրբ Կիւրեղ աղեքսանդ-  
րացի :
453. Մելիտէ կաթողիկոս յաջորդէ զՅովանէփ  
ըստ սահմանադրութեան :
454. Սուրբ Ղեւոնդեանք կատարին 'ի Պարսս :
457. Մովսէս կաթողիկոս յաջորդէ զՄելիտէ :
465. Գիւտ կաթողիկոս յաջորդէ զՄովսէս :
466. Դաւիթ անյազվթ , Մամքրէ և ընկերք նո-  
րա ծաղկին :
473. Քրիստավիոր կաթողիկոս յաջորդէ զԳիւտ:
480. Յովհանն մանդակունի յաջորդէ զՔրիս-  
տավիոր 'ի կաթողիկոսութեան :
486. Ղազար վարդեցի ծաղկի :
489. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորիսի :

499. Երանելին գառնիկ գաանէ զմարմին Լու-  
սաւորչին, և հանգուցանեն՝ ի թորդան :  
Զայնու ժամանակաւ յեա Վռամշապհոյ Ժա-  
դաւորէ ՚ի հայաստան Խոսրով վերստին . ապա  
Շապուհ պարսիկ . ապա Արտաշիր, որ զինի վեց  
ամաց անկեալ ՚ի Թագաւորութենէ՝ բարձաւ  
թագաւորութիւն Արշակունեաց, և տիրեցին  
մարզպանքյամի 428: Ա է Միհրշապուհ պար-  
սիկ նստաւ ՚ի հայս առաջին մարզպան, առ ո-  
րով զօրավարէր քաջն Վարդան : Ապա Վասակ  
սիւնի մարզպան . ապա Ատրարմիզդ պարսիկ . ա-  
պա Ատրվշնասպ պարսիկ . ապա Սահակ բագ-  
րատունի . ապա Շապուհ պարսիկ : Ապա Կի-  
խոր, Անդեկան, և տպա մէծն Վահան մամիկո-  
նեան եղբօրորդի քաջին Վարդանայ . որ անպար-  
ակի քաջութեամբ իւրով տիրեալ աշխարհին՝  
նորոգեաց և զազգն և զաշխարհն, բարեկարգու-  
թեամբ ճոխացուցեալ :

## ՎԵՐԱԲԵՐՅԱ ԴԱՐ

ՃՐ

Ա. ՈՐՄԻՉԴԻԿ

Ա. Տ. 514. և կայսերութեան Անապատաց 24:

1574. ՈՐՄԻՉԴԻԿ կամպանիացի որդի Յուստոսի յաջորդեաց արժանապետ յաթու քահանայա պետութեան Հռովմայ յերօթն կաղանդացի օդոս տոսի 514, և եկաց առաջնորդ եկեղեցւոյ ամենայն բարեկարգութեամբ ամս ինն, և աւուրս մետասան: Սա ինքն ոգւով չափ զհետեղել բառնալ զվէ՞ հակառակութեան Յունաց 'ի մէջ արեելեան և արեմանան եկեղեցեաց վասն բանի Ակակիոսի (1370): «Մին իրի զկնի Անապատաց յաջորդեալ Յուստիանոսի կայսեր, իբրև առաքեաց գեսպանս առ սուրբ քահանայապետն Որմիզդէս գլուխ ճանտչելով զնա ընդհանուր եկեղեցւոյ, նա անդրէն հրեշտակս արձակեալ առ կայսրն յորդոր մատոյց մերժել զհերձուածողս, մանաւանդ զԵւախականս՝ որ զօրացեալ էին յաւուրս Անապատաց կայսեր: Եւ վասն այսորիկ ժողով գումարեալ 'ի Հռովմաննեցաւ, զի ջնջեսցեն Յոյնք 'ի դաքդիկոնէն զանուանս Ակակայ, Եւփիմեայ, և Մակեդոնի հերձուածող պատրիարքաց, ևս և զկայսերացն Լեռոնի և Անապատաց (1171): Այս վճիռ 'ի ձեռն գետպանաց ծանուցաւ Յուստիանոսի և 'ի դործ եղաւ: Բաց յայնմանէ մեծ հայրապետն սահմանադրեաց կղերիկոսաց ասել զսաղմաներ գութիւնս . զծածուկ Մանիքեցիս 'ի յայտ բե-

րեալ առաքեաց յաքսորս, և զաղանդալից գիրս  
նոցա հրապարակաւայրեաց առաջի գրան սրբոյն  
Յովհաննու լատերանեան : Գտանին նորա բա-  
զում նամակք հոգելիցք գրեալք առ զանազան  
եալիսկոպոսունս և իշխանս :

Հիլտերիկոս արքայ Վանդալաց յաջորդեալ  
զհայր իւրյԱփրիկէ՝ եքարձ զհալածանս հօր  
իւրոյ և պայծառացոյց զուղղափառ եկեղեցիս:  
Ընդ այն ժամանակս Կղոգովիս արքայ Գաղ-  
ղիոյ առաքեաց զանդին գոհար մի հանդերձ բա-  
զումոսկեղէն և արծաթեղէն զարդուք առ սուրբ  
հայրապետն : Նոյնապէս Յուստիանոս կայսր ա-  
ռաքեաց առ նա յընծայ հպատակութեան զոս-  
կի պսակ և ղաւետարան ականակուռոսկի ծած-  
կոցիւ, նա և զոսկի սկուտաեղքսան լիպրայ ծան-  
րութեամբ ընդ այլոց ականակալ զարդուց: Ըստ  
սմին օրինակի և արքայն թէոգորիկոս ետ ՚ի  
զարդ եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի արծաթ լիպ-  
րայս հազար և յիսուննմի: Եւինքն սուրբն Ումիզ-  
դէս ետյօրինել ՚ի վերայ խորանի սրբոյն Յով-  
հաննու լատերանեան պսակ մի արծաթի չքնաղ  
և ծանրագին: հանդերձ վեց գեղեցիկ անօթովլք.  
և ՚ի տաճարի սրբոյն Պօղոսի եղ զայլ փառաւոր  
զարդս: Եւյութ իգոսացն օգոստոսի 523 փո-  
խեցաւ առ տէր <sup>1:</sup>:

1 Վարսն . ՚ի պար . հափ . 6 և 8 : Բարչոն . յամն  
514 . 519 : Բանա . գիրք 2 . յլ . պափ . գլ . դ . 4 :

## ԾԵ

Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍ Ա

Ա. Տ. 523, և իսկ բառերուն Յովհաննիսի 6:

1375. Յովհաննիս դոսքանացի որդիկոստանդեայ յաջորդեաց զսուրբն Որմիղդէս յիգոսս օգոստոսի, յամին 523, և եկաց սքանչելի քաղաքավարութեամբ յաթու Հռովմայ՝ մինչեւ ցըմահ իւր . որ և ըստ նմանութեան սրբոյն Կղեմայ հայրապետի աքսորելոյ՝ ի Տաւրիտ (1524), արտասահմանեալ՝ ի Հռովմայ փոխեցաւ յաշխարհէ : Քանզի թէոդորիկոս արիոսեան արքայ Խատիսոյ քռնադատեալ զսուրբն էած՝ ի Հռավեննա, և ընդ դեսպանաց իւրոց առսպեաց՝ ի Կոստանդինուպոլիս առ Յուստիանոս կայսր . որպէս զի տացէ նմայետս դարձուցանել զհրովարտակս ընդդէմ Արիանիտաց, պահելով զնոսա ազատոյազանդ իւրեանց և յանձնելով նոցազեկեղեցիս, զոր առեալ էին՝ ի նոցանէ :

Այլ իւրեւ եհաս սուրբ քահանայապետն՝ ի Կոստանդինուպոլիտ, Յոյնք քանզի չէին տեսմեալ ցային վայր զհայրապետ ոք Հռովմայ, մեծաւ փառօք ելին ընդ առաջ նորս, և մեծաւ շքով մուծին՝ ի քաղաքն . որ ընդ մտանելին երաց սքանչելեօք զաքս կուրի ուրումն : Եւ՝ ի տօնի զատկին մեծահանդէս շքով մատոյց պատարագ՝ ի մայր եկեղեցին լատին արարողութեամբ : Անդ կայսրն՝ ի ծունը իջեալ խորին խոնարհութեամբ ընկալու . ի ձեռանէ նորս զթագ կայսերական : Խակ թէոդորիկոս իւրեւ լուաւ՝ ի դեսպանաց իւրոց՝ եթէ քահանայապետն ինչոք յիշեաց զոր ինքն կամեր, առ դառ-

նութեան սրաին եհան հրովարտակ հալածանաց յիտալիա ընդդէմ ուղղափառաց : Ընդ որ չհանգութեալ սրբոյ հայրապետին՝ դարձաւ յարեւմուտս առ : ՚ի խնամել զհօտ իւր : Այլ անօրէն արքայն ետ բերել զնա ՚ի չռավեննա և արկ ՚ի բանագառն նեղութեամբ . մինչեւ վտանդեալ սրբոյն առ վշտաց՝ ննջեաց վկայական մահուամբ խոստովանութեան ՚ի վեց կաղանդացն յունիսի յամին 526 . կացեալ յիշխանութեան տմն երկուուամիս ինն և աւուրս չորեքտասասան :

## Ճ. Զ.

### Ա. ՓԵԼԻՔՍ Դ

Ա. Տ. 526 , և իայսերութեան Յառագիտանոնի ց :

1376. Փելիքս ուամացի որդի Կաստորի ընտրեցաւ յանձնորդ սրբոյն Յովհաննու յաւետ ձեռնատուութեամբ արքային թակողորիկոսի . որ ընդիշխանութեամբ իւրուլ կամէր գրաւել զեկեղեցական իրաւունս ընտրելոյ զպապս : Նմին իրի ուխտն չռավմայ ոչ ընկալաւ զփելիքս առժամն . բայց յետ բազում քննութեանց և հաւանութեան ամենեցուն և զկնի վաթսուներկուաւուրց ՚ի նոյն իսկ ուխտէն ընկալեալ և հաստատեալ ձեռնադրեցաւ քահանայտպետ յինն կաղանդացն օգոս . յամին 526 : Որոյ կալեալ զւաւիզս նախորդաց իւրոց սրբոց հայրապետաց անտուրիւր վարդապետութեամբ և առաքելական նախանձու կառավարեաց զեկեղեցին ամս

1 Մարիել . ՚ի ծաման . յամն 525 : Անապատ Գրադէտ ՚ի վարս որբոյն Յակու . եր . ց4 . թէստ . ՚ի ծամ . եր . 116 :

չորս, ամիսս երկու, և աւուրս ութուտամն։ Սա հաստատել զսահմանս և զկանոնս նախորդաց իւրոց՝ ի ձեռն զօրաւոր նամակաց, առաքեաց զմաւս սրբոյն Օդոստինոսի որ յազագս շնորհաց, առ կեսարիոս և պիսկոպոս Արելատայ, որ խնդրէր օգնել նմա ընդդէմ կիսապէղագեանց։ Կանոնադրեաց ևս թէ չէ պարա, զի առանց քննութեան և ընտրութեան ելցէ ոք յաշխարհականութենէ յեկեղեցական յաստիճան։ և վճռեաց ևս՝ զի թէ ոք զիրաւունս և զդասոս սեփականեալս առաքելական աթոռոյն արհամարհեսցէ՝ լուծցի։ Արար բազում շինութիւնս, պատուեաց զնահատակս, և առատաձեռնեաց կարօտեց։ Այսպէս գեղեցիկ կարգօք և արդարութեամբ կատարեալ զընթացս կենաց փոխեցաւ առ Քրիստոս ՚ի չորս իգոսացն հոկտ. յամին 530<sup>1</sup>։

## ԾԵ

## ՎՐՆԻՓԱԿԻՌՍ Բ

Ա. Տ. 530, և իայսէրութեան Յուստինիանոսի 1:

1377. Վօնիփակիոս հռովմայեցի որդի Սիդիլփողեայ յաջորդեաց յաթոռ. քահանայապետութեան հռովմայ յեօթնետամն կաղանդացննոյեմ. յամին 530։ Որում՝ ՚ի սկզբան անդան հաւան գտան ումանք ՚ի հերձելոց, և եղին զոմն Դիոսկորոս. այլ յետ սակաւուց վախճանեալ նորա բարձաւ հերձուածն։ Սա վերջետ հակառակութեան կիսապէղագեանց՝ հա-

1 Կոմիսիոն . Գիրք 2. պատ. պէղագ . Գլ. իդ. Բանա . Գլ. Ճ. Յ. Բարոն . և Բակ . յամ 526=530:

ւանեալ ժողովոյն Արաւսիկոյ Բ., որ Եղե՛ ի Գաղ-  
զիա ընդգէմազանդոյ նոցա (1053): Յետ այ-  
նորիկ գումարեաց ժողով ՚ի Հռովմ և ընտրեաց  
զՎ իդիլոս սարկաւագ յաջորդ իւր առ ՚ի խա-  
փանեւ լընտրութիւն արքային Գիմաց, որք կա-  
մէին յափշտակել զիրաւունս եկեղեցւոյ: Սա-  
կայն տեսեալ թէ պարականոն է ընտրութիւնն  
այն, նանրացոյց զվճիռն, զի մի՛ ՚ի կենդանութէ  
պապին ընտրեոցի յաջորդ: Գրեաց և նամակ առ  
կեսարիոս: Բայց հազիւ մի ամ անցեալ զկնի  
ընտրութէ անն՝ փախեցաւ առ տէր յեօթնետասն  
կաղանդաց նոյ. յամին 531<sup>1:</sup>

## ՃԱՐ

## ՑՈՎՀԱՆՆԻՍ Բ

Ա. Տ. 531. և կայսերանիւնան Ցուսպինիանոնի 6:

1578. Ցովհաննէս հռովմայեցի որդի Պրոյ.  
եկուայ մտկանուանեալ Մերժուրիս այսինքն  
ֆայլածու, յաջորդեաց զՎ ոնիփակիոս ՚ի կատա-  
րած գեկտ. յամին 531: Որ զառաջինն ընդգէմ  
զինեցաւ սիմոնականութէ ան յաճախելոց յըն-  
տրութիւնս է սիմոնակուպոսաց, և պատու հասեաց ըդ  
նոյն իակ զապականիչ սիմոնականս աշխարհա-  
կան բռնութէ ամբ Աթալարիկոսի արքային ի-  
տալիոյ. զորս ոչ երկիւդ տեառն և ոչ եկեղեցա-  
կան պատիմք ուղղէին: Գրեաց կոնդակ առ  
Ցուսաբինիանոս կայսր և գումարեաց ժողով ՚ի  
Հռովմ. յորում սահմանեցաւ ընդգէմ Ակե-  
մետեանց, թէ մարթ է ասել զմին յԵրրորդու-

1 Բարոն. յամին 530: Կարիս. Գիրք. 2: պապ-  
ութագ, Գլ. իջ. ել. 531. հապ. 1:

թենէ չարչարեալ 'ի մարմնի (1175) . զոր Ու-  
միզդ կասկածեալ թէ մոլորական իցէ , մեր-  
ժեալ էր ընդդէմ սկիւթացի միանձանց : Յով-  
հաննէս յէտ առաջնորդելոյ եկեղեցւոյն զամո-  
երկուս , ամիսս չորս և աւուրս քսանելվեց , նըն-  
ջեաց 'ի վեց կաղանդացն յունիսի յամին 535 :

## Ծ. Թ.

## Ա. ԱԳԱՊԵՏՈՍ Ա.

Ա. Տ. 535 , և իայսէր ունեան Յուստինիանոսի ց:

1579. Ագապետոս Հռովմայեցի որդի Գոր-  
դիանոսի երիցու նախասարկաւագ եկեղեցւոյն  
Հռովմայ և տեղեակ ամենայն սահմանադրու-  
թեանց՝ ձեռնադրեցաւ քահանայապետ յաթոռ  
սրբոյն Պետրոսի յերեք նոնայց յունիսի յամին  
535 , և եկաց իմաստութեամբ յառաջնորդու-  
թեան եկեղեցւոյ ամիսս տամն , և աւուրս ինն-  
ևտամն : Սա հասաւատեալ զվճիւս Վոնիփա-  
կիոսի , խատիւ ընդդէմ եկաց աղանդաւորաց  
ըստ օրինակի նախորդաց իւրոց : Եւ վասն օդ-  
տի եկեղեցւոյ և 'ի խնդրոյ արքային Խտալիոյ  
թէոդոտոսի չոքաւ առ Յուստինիանոս կայսր  
Կոստանդինուպոլսոյ : Իբրև եհաս յԵլլադա ,  
բժշկեաց զայր մի կաղ և համբ , հաղորդելով  
զնա սուրբ խորհրդոյն . և 'ի մտանելն 'ի թագա-  
ւորեալ քաղաքին ընդ գուռն Ռսկի կոչեցեալ՝  
եբաց զաշս ուրումն կուրի :

Անթիմոս եպիսկոպոս Տրավելոնի զգածեալ

1 Լիբելագոս 'ի ծանագիրս Գև. առ Լաբ . հապ .  
5: Բարսն . և Բառէ . յամ 532 = 535 : Յուստին .  
'ի ԼՂ . առ փական . առ Լաբ . հապ . կ :

եւախքական աղանդիւ՝ յափշտակեալ էր յայն-  
ժամ զպատրիարքութիւն կոստանդինուպօլսոյ  
նալաստիւք թագուհւոյն : Յանդիմաննեաց զնա  
սուրբ հայրապետան Ագապետոս և կայսրն սպառ-  
նացաւ սրբոյն տռագքել յաքսորա . բայց նա եւ  
սպատասիանի արիարար . կարծէի, ասէ, լինել յար-  
քունիս ուղղափառ . կայսեր . բայց գտանեմ զիս  
հանդէպ ուրումն Դիոկղետիանոսի . ոչ երկըն-  
չիմ 'ի սպառնալեացդ , արա զոր կարես : Ապա  
ծանոյց նմա զհանդամանս Անթիմոսի . և հաւա-  
նեցուցեալ զկայարն՝ ընկեց զպատրիարքն յաթո-  
ռոյ , ձեռնադրեալ 'ի տեղի նորա զՄինաս զայր  
ովքամիտ և առաքինի՝ յարքունական եկեղեցւով  
սրբոյն Մարիամու : Բայց յետ սակաւուց խօ-  
թացեալ մեծի քահանայապետին փոխեցաւ առ  
Աստուած 'ի կոստանդինուպօլիս 'ի տասն կա-  
զանդացն մայիսի . յամին 536 . և թաղեցաւ փա-  
ռօք մեծաւ 'ի տաճարի սրբոց առաքելոց . և ա-  
պա փոխադրեալ 'ի հռովմ եղաւ 'ի դամբա-  
րանի սրբոյն Պետրոսի :

## ¶

## Ա. ՍԻԼՎԵՐԻՈՍ

Ա. 8. 536 , և իայնէրութէան Յուսուփինիանոսի 10:

1380 . իբրև լու եղե 'ի հռովմ փոխումն  
սրբոյն Ագապետոսի , ընտրեցաւ յաթու յա-  
ջորդութեան նորա Սիլվերիոս կիսասարհաւագ-  
կամպանիացի . յամունանն յունիսի 536 . որ ամմի

1 Յայնմ . Հայ . յաւլ . 9 . 10 . Յայն . յաւլ . 5 . Լապ .  
յանմ . 21 . և 28: Լիբերտատ . 'ի ժամ . գլ . իբ : Բա-  
րձր . յան . 536:

հաղիւ Եկաց 'ի քահանայապետութեան հալածանք հանդերձ : Քանզի Բելիսարիոս զօրապետ Յուստինիանոսի յաղթական գտեալ յիտալիա ընդդէմ Գլմաց՝ էառ.'ի նոցանէ զչուովմ. յայնժամ թէ ոդորա կայարու հին պաշտպան Անթիմոսի (1379) բռնադատեաց զՍիլվերիոս հաստատել զնա անդրէն յաթոռ պատրիարքութեան կոստանդինուալուսոյ : Այլնորա անսպարակ քաջութեամբ ընդդէմ կացեալ անիրաւ խնդրոյն՝ մերժեաց զնա . իսկ նա միացեալ ընդումանս՝ յերիւրեաց բարուրանս 'ի վերայ սըրբոյն, և յօրինեաց նամակ 'ի գիմաց Սիլվերիոսի . որութեալ զուցանէր թէ նա իցէ 'ի կողմն Գլմաց, և կամի մատնել զչուովմ 'ի ձեռս նոցա : Այսու պատճառանք հրաման արար Բելիսարիոսի աքսորել զնա 'ի Պատարա, և գնել 'ի տեղի նորա զՎիգիլիոս սարկաւագ Ագապետոսի, որ'ի ժամանակէ անտի Վոնիփիակիոսի նշանակեալ էր (1377) : Յայնժամ Եպիսկոպոսն Պատարայ գնացեալ առ կայսրն սպատմեաց նման զանցս Սիլվերիոսի քահանայապետին: Հրաման արար կայսրն գարձուցանել զնա 'ի Հռովմ 'և քննել թէ նորա իցէ գրեալ զայն նամակ առ Գութո: Սակայն կայսրու հին հաստատեալ զբարուրանս իւր՝ աքսորեաց զսուրբն յանմարդաբնակ կղզին Գաղմարիա . ուր անսոււաղ վճարեաց զկեանս վկայական մահուամբ յերկոտասաան կաղանդացն յուլիսի յամին 540<sup>1</sup>: Մեծ եղեւ յայնժամ մսիթարութիւն սրբազնին, երբ լոււաւ զյայտ նիւ սուրբ գաստառակին Քնի յԵղեսիա (651):

1 Բարոն . Ն Բաէ . յահն 536=540 : Աւ Լաբ . հապ . 5 . Ճող . Եր . 407: Անապ . Եր . 102: Լէբերապ . Գլ . ԻՔ: Բուլլ . 20 յունիս :

## ԿԱՆ

## ՎԻԳԻԼԻՈՒՄ

Ա. Տ. 540, և Խայերութեան Յոսափինիանոսի 14:

1381. Վիգիլիոս հռովմայեցի որդի Յովհաննու զկնի մահուան Սիլվերիոսի օրինաւոր ընտրութեամբ հաստատեցաւ քահանայապետ՝ ի 540 ամին հանդերձ հաւանութեամբ ուխտին հռովմայ և Խշանաւորաց : Որ թէպէտ բանիւ բելիարիտսի կտրդեալ էր արդէն պատ, բայց խիթացեալ զի մի հերձուած ինչ ծագեսցի ընտրութեամբ այլը ուրժուք, հաւանեցան ամենեւքին միակամ՝ ընդունել զնա և հաստատել ըստ սահմանադրութեան : Եւ նորա անդէն զայլ ողի զբեցեալ՝ գուն գործեաց շիջուցանել զհերձուածս, ողջամիտ վարդապետութեամբ մերժեալ զամենայն անիրաւ առաջարկութիւն կայսրուհւոյն . և նզովեաց զԱնթիմոս և զայլ ազանդաւոր ընդ կայորուհւոյն . և ապա գնացեալ ի կոստանդինուպօլիս՝ հաստատեաց զՄինաս պատրիարդ յաթոռ իւր, և զսահմանս ժողովոյն Քաղկեդոնի զօրացոյց : Ուրանիօր ընկալեալ զնա ամենեցուն շքով և հիւրամէծարութեամբ պաշացին : Բայց նորա ձեռն՝ ի գործ արարեալ հաւանութեամբ կայսեր գումարեաց զընդհանուր ժողով ընդդէմ Երից գլխոց (914), և բարեկարգեալ զէկէղեցին և նկուն արար զԵւտիքականս : Նմին իլի զքարեալ թագուհւոյն յօդեաց ի վերայ նորա բարուրանս, և ետ աքսորել զնա պատճառահօք ոչ հաստատելցին առ ժամն զսահմանս ընդդէմ Երից գլխոց . զոր ապա իբրեւ հաստատեաց՝ դարձ եղեւ նմայաքսորանաց : Այլ՝

Հասանելնորա'ի Սիկիլիա խօթայաւ հիւանդութեամբ քարի որով և մեռաւ իսկ : Այլ մարմին նորա փոխադրեալ 'ի չոռվմ թաղեցաւ 'ի 'ի ճանապարհին Սալտրիայ յամի 555, 'ի վեշտասաներորդ ամի օրինաւոր յաջորդութեան իւրու : Սորա երեխն ութուատան նամակք գրեալք առանազան անձինս :

## ԿԲ

## ՊԵՂԱԳԻՈՍ Ա

Ա. Տ. 555, և խայսէրութեան Յասուակինիանու 29:

1382. Պեղագիոս որդի Յովհաննու Վիդարեանի, սարկաւագ Եկեղեցւոյն Հռովմայ, և նուիրակ քահանայապետացն Ագապետոսի, Սիլվերիոսի և Վիգիլիոսի առ կայսրն՝ ընտլեցայ յաջորդ քահանայապետութեան Հռովմայ յերեք իդոսացն ապրիլի յամին 555, հանդերձ հաւանութեամբ կայսեր, և ձեռնագրեալ յետիսկոպոսաց Ռոտիայ, Պերուզիայ և Փլորենտիոյ ըստ սովորութեան՝ կառավարեաց զեկեղեցին խոհեմութեամբ և քաջութեամբ ամս չորս, ամիսս տասն և աւուրս ուժեատասն : Քահանայապետա այս աշխատ եղեւ յոյժբարեկարգել զեկեղեցին և միաբանել զեպիսկոպոսունս արեմտից և Ամբիկոյ, որը 'ի պատճառս հինգերորդ ժողովոյն շփոթեալ էին : Նմին իրի հատատելով զայն ժողով և բացարելով զուղափառ սահմանս նորա՝ հաստատեացնոտ և զմիտամենեցուն յողջամիտ վարդապետութեան : Ա.

1 Ա. Գրիգոր . Գիրք 2 . Բառաշխ 51 : Բարսն . Խառի . յահն 540 . 555 : Վիկիգոր . 'ի Ճանան . Եր . 330 :

և աղետոց՝ ի Գաղղիա առ Գիլդեբերտոս արքայ  
զահմանս ուղղափառութեան այնը ժողովոյ՝ ար-  
կեալ ընդ նզովիւք զօտարացեալո՝ ի վարդապե-  
տութենէ նամակի սրբոյն Լեւոնի և ժողովոյն  
Քաղկեդոնի։ Եւ համեալ՝ ի վախճան կենաց իւ-  
րոց՝ փոխեցաւ յաստեացո՝ ի չորս նոնայց մարտի  
յամին 560։ Սորա վեշտասան նամակի քյածին առ-  
մեօք<sup>1</sup>։

## Կ Գ

## ՅՈՎՀԱՆՆԵՍ Գ

Ա. Տ. 560, և կայսերուն էան Յաստեանիանով 33։

1383. Յովհաննէս հռովմայեցի կատելինոս ա-  
նուաննեալորդի Անաստասոյ՝ յաջորդեաց յաթու-  
քահանայապետութեան՝ ի հնդետասան կաղան-  
դացն օգոս. յամին 560, և առաջնորդեոց եկեղե-  
ցւոյ խոհականութեամբ՝ ի վրդովեալ ժամանտ-  
կին ամս երկոտասան, ամիսս մետասան և աւուրս  
քսաննեվեց։ Առ սովաւ եղև մասնաւոր ժողով՝ ի  
Լուգոնն վասն բարեկարգութեան, յորում եր-  
կու եպիսկոպոսունք անկեալք յիշխանութենէ  
իրեւ բողոքեցին առ նա՝ լուաւ զդատ նոցա, և  
յարդարանալ նոցա դարձոյց զնոսա յաթուս  
իւրեանց։ Հաստատեաց և զհինդերորդ ընդհա-  
նուր ժողովն, և զօրացոյց զուղղափառս ընդդեմ  
արիոսեան ազանդոյ Լուգոբարարացւոց, որք աի-  
րեցին յիտալիա զկնի մեկնելոց անտի Սերուէսի  
պատրկի հայկազնոյ, զոր վշտացոյց յանիրաւի  
կայսրն Յուուտինոս թ. Բայց հայրապետն Յով-

1 Բարսն. և Բակ. յամ 556. 559։ Կորիս. յղ.  
Ճոշ. Է. Գլ. Է. Առ Լաբ. հադ. 5. Ճոշ. Եր. 803։

հաննես փութայեալ եհաս առ Ներսէս սկատը  
բիկ ՚ի Նէտպօլիս . և ամոք բանիւք քաղցրա-  
ցոյց զսիրա նորա դաւնալ ՚ի Հոռվիմ և խաղա-  
ղել զիտալիս : Եւ նա եկեալ ազատ կացոյց  
յարշաւանաց նոցա զչոռվիմ և զչոռավեննա , և  
մեռաւ ՚ի Հոռվիմ ՚ի 572 , ըստ Պետաւեայ : Նոյն  
պէս և քահանայապետն այնուհետեւ ոչ յեր-  
կարեալ ՚ի կեանո՝ փոխեցաւ առ տէր յերեք ի-  
դոսացն յուլիսի յամին 573 :

## ԿԴ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա

Ա . Տ . 574 , և կայսերական Յառափինոսի Բ 9 :

1384. Բենեդիկտոս Հոռվմայեցի որդի Վո-  
նիփակիոսի ընտրեցաւ քահանայապետ Հոռվ-  
մայ յերեք նոնայց յունիսի յամին 574 . այլ ոչ  
կարաց վայելել ՚ի խաղաղութեան յերեսաց ան-  
ընդհատ խռովութեան Լոնդոնարատացւոց , որք  
՚ի նմին ժամանակի վեր ՚ի վայր տապալէին զի-  
տալիս : Սակայն և այնպէս քաջութեամբ կա-  
ռավարեաց զեկեղեցին՝ անարատ պահեալ զնա-  
յալանդաւորաց . և ըստ օրինակինախորդաց իւ-  
րոց հաստատեաց զհինգերորդ ընդհանուր ժո-  
ղովին առ ՚ի յուղղել զմիտս ամենեցուն : Տե-  
սեալ նորա զգերազանցութիւնն մտաց և զկատա-  
րելութիւն հոգւոյ Գրիգորի կրօնաւորի առն  
սրբոյ բարձրացոյց յեկեղեցական աստիճան , մին-

1 Եագում + պատմ . եկեղ . Գիր + 5 . Գլ . Ճն . Եր .  
435 : Պօղոս սարի . յլ . Գոր . լոնգոբ . Գիր + 1 . Գլ .  
Շ : Պատմ . Հայ . Գիր + 3 . Գլ . Խոր . յամ 568 : Բարի .  
յամ 572 :

չեւ յետոյ լինել նմա քահանայապետ (1386) : Եւ ինքն բենեգիկառս կատարեալ փառօք ըղպաշտոն հռվտապետութեան հայրական խնամօք ընդ ամս չորս և աւուրս քառասունեռութ, փոխեցաւ առ աէր յերեք կաղանդացն օդոս յամին 578 : Աս կոչեցաւ յոմանց Բոնոզոս <sup>1:</sup>

## ԿԵ

## ՊԵՂԱԳԻՌՍ Բ

Ա. Տ. 578, և իոյնեբութեան Տիբերէայ 1:

1385. Պեղագիոս հռովմայեցի որդի Վինիկիլտեայ յաջորդեաց յաթու քահանայապետութեան հռովմայ միով աւուրբ յառաջ քանզիանգո գեկտեմբերի յամին 578 . և եկաց յիշանութեանն առաքելական նախանձու ամս մետասան, ամսաս երկու և աւուրս տասն: Յընտրութիւն նորա չեղե ձեռնամնւիս աշխարհական պետութիւն, այնու զի Լոնդոնարտացիք 'ի պաշարման ունեին զհռուվմ' և յաղարտ վարէին զիտալիս: Բայց և այնպէս սուրբն Գրիգոր իբրենուիրակ պապին չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս առ կայսրն վսան հաստատութեան: Առ սովաւ եղե մասնաւոր ժողով 'ի Գրատիա վասն փոխադրելոց զաթոռն Ագուիլայ 'ի Գրատիա (1075), յորում գտաւ հրեշտակ սլապին Լաւրենախոս երեց: Անդ բան եղե յաղագս հինգերորդ ընդհանսւր ժողովը ընդդէմ Եղից դվասոց: Զանեգ Պեղագիոս ուղղել զմիսս ոմանց յեպիսկոպոսացն խտալիոյ և Վենետիկոյ գայթակիցելոց

1 Եստիր. Գիր+ 5. Գլ. Ճ՛Հ: Նիկէֆ. Գիր+ 17. Գլ. Ալ: Բարոն. յամ 573 :

վասն այնք ժողովոյ : Սարկաւագաց Սիկիլիոյ պատուեր ետ անկին վարել զարբազան պաշտօն ըստ նտիսկին սովորութեան արևմտեայց :

Առ այնու ժամանակօք Պաւարիացիք դարձան յուղափառ հաւատս : « Սոյնպէս և Սպանիացիք երբեմն ապականեալք արիոսեան ազանդով դարձոն յուղափառութիւն յետ մահուան Երմենեկիլսոսի արքային զորնահատակեաց հայր իւր արիոսեան՝ վասն ընդունելոյ նորա զուղղափառ հաւատս : Այլ եղբայր նորա չուեքարետոս աղդովին ընկալսւ զուղղափառութիւն . որով միսիթարեցաւ յոյժ քահանայապետն Պեղագիոս : Սորա այնչափ էր գութ առ աղքատս և առ տնանկս , մինչեւ լիացուցանել կարենորօք զաղքատանոցս և զհիւանդանոցս : Տարածեցաւ յայնժամ ժանտախտիմն յիտալիտ , որ փուրնդալով մահտցուցաներ զախտացեալս . յորմէ սովորութիւն եմուտ , ասեն , յաշխարհ ողջունել բարեմաղթութետմբ զիւնգացողս : Պեղագիոս հայրապետ ըմբռնեալ 'ի նոյն ժանտախտէ հանդեաւ 'ի տեր 'ի վեց իդոսացն փետր . յամին 590 <sup>1:</sup>

1 Անաս . Գըտապ . 'ի վարս նորա . Եր . 114 : Բարս . յամ 577 : Ս . Գրիգ . Գիրք 9 . Առաղը 68 . Եր : Լաւդավիկ . Թաղմաս . յղ . Վարդ . հին և նոր է . իւշ . Յ . 1 . Գիրք 2 . Գլ . լիք . 2 : Պատմ . Հայ . Գիրք 3 . Գլ . իւմ :

## ԿԸ

Ա. ԳՐԻԳՈՐ Ա ՄԵՇ

Ա. Տ. 590. Ն ի ա յ ս է բ ո ւ թ ե ա ն Ս օ ր ի ա յ հ ա յ ի տ պ ն ո յ 9 :

1386. Գրիգոր հռովմայեցի մականուանեալ Մեծ վասն գերազանցութեան անձին՝ էր 'ի ցեղէ սրբոյն ֆելքսի գ. (1370), և որդի Գորդիանիա կամ Յորդանիսի պատրի, այր զգօն և կատարեալ առաքինութեամբ. զոր 'ի մատաղ հասակի Յուստինոս կայսր կացոյց սինկղիտոս և վերակացու քաղաքին: Այլ նորա հրաժարեալ կրօնաւորեցաւ 'ի վանս սրբոյն Անդրեի, զոր շենեալն էր 'ի տան հօր իւրոյ: Խակ պատին բենեղիկտոս Ա առեալ զնա առ իւր ձեռնադրեաց սարկաւադ (1384). և Պեղագիտոս պատ առաքեաց զնա 'ի կոստանդինուալիս նուիրակութեամբ, որ բազում ինչ տարաւ 'ի գլուխ յաւուրս Տիբերեայ և Մօրկայ: Եւ 'ի գառնալիւրում անդրէն առանձնացաւ 'ի վանս. ուր երեւցաւ նմա հրեշտակ տեառն 'ի կերպարանս աղքատի և էառ երիցս 'ի նմանէ զոլորմութիւն: Այլ զինի մահուան Պեղագիտոսի օծաւ քահանայապետ յաթու սրբոյն Պետրոսի յերեք նոնայց սեպտեմբերի յամին 590. թէպէտ բազում դժուարութեամբ և սահմանամբ ուխտին յանձն էառ զայն ծայրագոյն պաշտօն:

Արարբազում ուղղութիւնս զարդարեաց ըզպաշտամունս եկեղեցւոյն Հռովմայ, և եղել լուսուրիչ Անդղիացւոց, գարձուցանելով զնոսա 'ի հեթանոսութենէ 'ի հաւատոսքրիստոսի 'ի ձեռն աշակերտաց իւրոց: Գումարեաց 'ի Հռովմ զանազան ժողովս առ 'ի միաբանել 'ի սուրբ հա-

ւատս զհերձուածողս . և բարեկարգել զմիան-ձունս՝ ազատ կացուցեալ զինչս նոցա և զնոսա . հաստատեաց զիրօնս սրբոյն թենեգիւտոսի ար-բային , յորմէ կարգել ասի լինել և ինքն . նա և դատապարտեաց զվագրէաս միանձն յոյն հե-րեափիոս և խանգարիչ գրոց :

Գրեաց բազում ճառս , մեկնութիւնս և նա-մակս լիս աստուածային խմաստիւք , և համա-րեցաւ 'ի կարգս երևելի վարդապետաց եկեղե-ցւոյ (886) : Գրեաց կոնդակո և առ արևելիան պատրիարգունս՝ բացատրելով նոցա զովամիտ վարդապետութիւն հաւատոյ և հաստատելով զընդհանուր ժողովս : Թոյլ ետ Սպանիացւոց միով ընկղմամբ մկրտել զեւեխայս . նոյնպէս թոյլ ետ երիցանց Սարգենիոյ մատակարարել զիս "թհուրդ գրոշմին" : Յանդիմանեաց զՅովհան-նէս պատրիարգ Կոստանդինուպոլսոյ , զի զանձն իւր անուաներ Տիեզերական հայրապետ . և 'ի յուղղութիւն նորա եղ 'ի սկիզբն կոնդակի իւ-րոյ և Գրիգոր ծառայ ծառայից Աստուծոյ . զոր ցարդ վարեն քահանայապետք : Օրինադրեաց սպահել զտօն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պո-ղոսի :

Հրաման արար հոգալ զորբս և զայրիս . և զի սեղանակից էին նմա երկոտասան աղքատք , յա-ւուր միում գտեալ զնոսա երեքտասան՝ ծա-նեաւ զի մին հրեշտակ Աստուծոյ էր : Ընտրեաց ինքեան խորհրդական զդիտնական կղերիկոսս և զսրբասէր կրօնաւորս , ընդ որս կենակցէր խո-նարհ կերպարանօք : Որ լսատ ասելոյ սրբոյն Խ-դելիքոնասոսի՝ ոչ 'ի միանձնենութենէ սպակաս գտաւ 'ի պալատան , և ոչ 'ի քահանայապետական աես-չութենէ վերջացաւ յեկեղեցւով : Փայլեցաւ սրբութեամբ մեծին Վնասոնի , ճոռ ոմութեամբ Կիսլրիանոսի , և խմաստութեամբ Օգոստինոսի .

միանգամային ասել՝ կերազանցեաց զամենեք քումբը  
ամենային առաքինութեամբք . և տեսաւ 'ի վե-  
րայ գլխոյ նորա հոգին սուրբ 'ի նմանութիւն  
աղաւնոյ : Այսպէս պանչելի սրբութեամբ կե-  
ցեալ նորա 'ի հայրապետութեան ամս երեքտա-  
տան, ամիսս վեց և աւուրս տասն, փոխեցաւ առ-  
քիատոս 'ի չորս իդոսացն մարտի յամին 604 :

### ԴԵԳԵՐԱԲՐԴԻ ԴԱՄՐՈՒՆ

Ա. Տ.

502. Սուշէ կաթողիկոս նստի յաթոռ սուրբ  
Լուսաւորչին :
505. Բոյեսիոս բանաստեղծ միվլիսովիայ և տո-  
տուածաբան ծաղկի :
510. Սահակ Բ. կաթողիկոս յաջորդէ յաթուն,  
և Վահան մամիկոնեան վախճանի :
515. Քրիստովոր Բ. նստի կաթողիկոս :
521. Ղևոնդ կաթողիկոս յաջորդէ :
523. Սուրբ Բենեգիկոսս աբբայ ծաղկի յի-  
տալիա :
524. Կերոկս Բ. նստի կաթողիկոս :
533. Յովհաննէս Բ. յաջորդէ զեւերակս :
539. Յայտնութիւն գաստառակին Քրիստոսի :
551. Մովսէս Բ. նստի կաթողիկոս :

1 ԽԵՆԵԼՔ . ԳԱԼԵՎ . յ՛Ն . ՀԱԳԷՆԱԳ . ԵՒ . ԳԼ . Թ :  
ՍԱՐԲ ԱՆԴԵԼԻՆ յ՛Ն . ԳԵՂ . ԽԱՍՏԱԾԵԱՆ . ԳԼ . ԷՒ .  
ԿԻ . 13 : ՅԱՀՆ . ԱՄՐԻ . յ՛Ն . ՀԱՐ . ԱՐԵԱՅՆ ԳԵՒԴ :  
ԳԻՐ + 1 . ԳԼ . ԼԵ : ԲԱՐԵՆ . և ԲԱԿ . յահն 581 = 604 .  
ՍԱՐԲ ՊԵՊՐԱՆ ԴԱՄԻԱՆ . ՊԵՊՐԱՆ . 4 . ԵՐ . 26 : ՄԻ-  
ՔԱՆԴԱՆ ԳԼ . ՃԵ . ՀԱՎ . 18 : ԱՆԻԽԱՆ . ԳԻՐ + 1 . յ՛Ն .  
ԲԱԳ . ԽՈՎԱԼ . յահն 601 : ՅԱՅՆ . ՀԱՅ . ՀԱՐՎ . 13 .  
ՅԱՅՆ . ԼԱՎ . 12 :

557. Այս սովիա տաճար շինի՝ ի Յուստինիանու նոսէ :
581. Վրժանես լինի տեղապահ յաթու կաթողիկոսութեան :
587. Հովքարտոս Ա ուղղափառ թագաւոր Սպանիոյ :
594. Աբրահամ Ա նստի կաթողիկոս :
597. Դարձ Անդղիացւոց՝ ի հաւասաս :
- Զայնու ժամանակաւ տիրէին՝ ի Հայաստան մարզպանք՝ ի կողմանէ Պարսից : Զկնի մարզպանութեան Վահանայ մամիկոննենի ամս քըսանեւվեց՝ Եղբայր նորա Վարդ պայազատեաց . այլ զկնի չորից ամաց անկեալ յիշխանութենէ , նստաւ Բուրզան պարսիկ . ապա Մժէժ գնունի . ապա Դենշապուհ պարսիկ . ապա Վշնասպ Վահրամ . ապա Վարազդատ պարսիկ . ապա Սուրէն պարսիկ : Յետոյ Վարդան Բ մամիկոնեան , ապա Միհրան պարսիկ , և ապա Սմբատ բազմայաղթ՝ ի 593:

# ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԴԱՐ

ԿԵ

## ՍԱԲԻՆԻԱՆՈՍ

Ա. Տ. 604, և կայսերութեան Փոխառութ 3:

1387. Սարբինիանոս վոլադերքացի օրդի բառնոսի լեռալ սարկաւադ մեծին Գրիգորի և նուրիքակ առ կայսեր Մօրկայ՝ ընարեցաւ յաթոռքահանայապետութեան չռավմայ յիդոսս սեպ. յամին նօկ, և եկաց յիշխանութեանն աարի մի, ամիսս հինգ և աւուրս ինն. նմին իրի ոչ ժամանեաց սահմանադրել ինչ ՚ի լաւագունից : Սակայն են որք ասե՞ն՝ թէ սա եմոյծ յեկեղեցւոջ զսովորութիւն գործածութեան զանդակի: Անհիմն բանք են որ ասին զսմանէ՝ թէ առ ընչասիրութեան ոչ միայն ոչ պաշտեցաւ յուխտէ եկեղեցւոյ, այլ և երիցու և չորիցու ՚ի տեսլեան գիշերոյ յանդիմաննեցաւ ՚ի սուրբ նախորդէն իւրմէ ՚ի մեծէն Գրիգորէ: Եւ մեռաւ նա յութկազանդացն մարտի յամին նօն :

1 Բնակում ՚ի հնախօսաց դայս պատճութիւն յանդիմաննեւն անհարակար դադին. զի չի ՚ի վարսեծին Գրիգորի այսպիսի ինչ, և ու իսկ յարմարի այսպիսում դուք և մեծարու անձին լինել ընլաւեր, որ չի իարօդ իսիդ: ըստ որում շռացանէ Բաբեկորդիսս բառ առ Բաբեկորդ: ՚ի վարս որբաց մայ. եր. 182: Բարձր. յան 604: Անտապ. Գրադ. և Պօղ. սարի. յը. Գոր. լուդ. Գիւր 4. Գլ. և: Նիկէի. կազմի. գիւր 18. ուստ. եկ. գլ. ծը: Բակ. 605:

## ԿԲ.

ՎՐԱՆԻՓԱԿԻՈՍ Դ

Ա. Տ. 607, և Հայութը մէտեղ Փոքառն 6:

1388. Վոնիվակիոս հռովմայեցի որդի Յով.  
 Հաննու կատավլոսի՝ սարկաւագ. եկեղեցւոյն  
 Հռովմայ և նուիրակ առաքեալ 'ի սրբոյն Գրի-  
 գորէ առ կայսրն Մօրիկ՝ ընտրեցաւ յախո-  
 սրբոյն Պետրոսի 'ի մետասան կաղանդաց մարտի-  
 յամին 607. և Եկաց առաջնորդ Եկեղեցւոյ զա-  
 միս ութ և առուրս քաններկու: Սորա կրկին  
 Եղեն Երևելի գործք, մի՛զի գումարեալ 'ի Հռովմ-  
 ժողով Եօթանասուն և Երկու Եպիսկոպոսաց՝  
 վճռեաց ընդ նզովիք, զի ընտրութիւն պասլին  
 լիցի յետ Երից աւուրց թաղման նախորդին: Եւ  
 միւս ևս՝ զի այնչափ դերապանձ հանդիսացաւ-  
 գովելի արդեամբք յաշս կայսեր ֆոկասու, մին-  
 չե եհան հրովարտակ՝ թէ քահանայտպետն Հը-  
 ռովմայ իցէ գլուխ ընդհանուր Եկեղեցւոյ և  
 ունի ծայրագոյն իշխանութիւն 'ի վերայ ամե-  
 նայն քրիստոնէից: Սակայն ոչ յերկարեալ հայ-  
 րապետին 'ի կեանա՝ կատարեաց զընթացս ան-  
 ցաւոր կենացս առաքինի վարուք և փոխեցաւ առ  
 Քրիստոս 'ի չորս իդոսացն նոյ. յամին 607<sup>1:</sup>

1 Բարբն. յան 607: Պօղոս սուրբ. Գիրք 4. Դւ լէ:

Կ Թ

Ա. ՎՈՒՏՓԱԿԻՌԱ Դ

Ա. Տ. 608, և էայսէրութեան Փոքառն 7:

1389. Վոնիփակիոս վաղերիացի որդի Յովլ  
հաննու բժշկի ընարեալ յաթոռ քահանայա-  
պետութեան Հռովմայ, եկաց ամս վեց, ամիս  
ութ, և աւուրս երկոտասասն: Սա թոյլտուու-  
թեամբ կայսեր Փոկասու զբանթէոն զամե-  
նագից կռատունն՝ շինեալ յԱդրիպապայ՝ սըր-  
բեաց 'ի տաճար Աստուածածնին և համօրէն  
մարտիրոսաց. որ այժմ կոչի վասն ձեւյն սուրբ  
Մարիամ Ռուղօնդա այսինքն Բոլորշի, կամ  
սուրբ Մարիամ ու Վայս. և կարգեաց զտարեոր  
յիշատակ նոցա'ի սկիզբն նոյեմբերի: Ճողովգու-  
մարեաց և սանձեաց զորս տու նախանձու ա-  
սէին՝ թէ կրօնաւորք որովհետև մեռեալ են աշ-  
խարհի և կենդանի յԱստուած՝ չեն ընդունակ  
առաջնորդական վիճակի և մատակարարելց  
զիսորհուրդս ապաշխարութեան և մկրտութեան,  
և ոչ իսկ ունելց զիշխանութիւն արձակման 'ի  
ձեռն քահանայական պաշտաման: Բայց մեծ  
հայրապետն Վոնիփակիոս յետ գեղեցիկ կար-  
գագրութեանց թողեալ զաշխարհ փոխեցաւ  
առ տէր 'ի նոնայս մայ յամին 615<sup>1</sup>:

1 ՈՒՐԵՒՄ ՕԴԻՆ. ԳԻՐ+ 3. ԳԼ. ՖԻՇ: ԲԱՐԵՆ.  
յան 607: Պօղոս սորի. ԳԻՐ+ 4. ԳԼ. ԼԷ:

Հ

## Ս. ԱՍՏՈՒՃԱՏՈՒՐ Ա

Ա. Տ. 615, և կայսերական Հերուսակ 6:

1390. Աստուճատուր հռովմայեցի որդի  
 Սահմանոսի՝ լեալ կիսասարկաւագ առաքինի  
 և բարեկիրժ՝ ընտրեցաւ քահանայապետ յա-  
 թոռ որբոյն Պետրոսի՝ ի չորեքտասան կաղան-  
 դացն նոյեմբ. յամին 615, և փառաւորապէս  
 ձեռնադրեալ զեկավարեաց զեկեղեցին խմա-  
 տութեամբ և սրբութեամբ ամս երիս և աւուրս  
 քսան : Զամանէ բազմապատիկ դովութիւնք  
 գրին ՚ի գաւազանագիրս քահանայապետաց. զի  
 բարերար էր ամենեցուն և սիրելի ուխտին հա-  
 մօրէն, և այնքան բարեգութ առ աղքատս և  
 առ հիւանդս, զի ՚ի ճարակել անդ ելեփան-  
 դական ախտին՝ անձամբ խնամարկէր զախտա-  
 ժէտս . մինչև տարափոխեալ ՚ի նա հիւանդու-  
 թեանն այնորին՝ զրկեաց զսուրբ հայրապետն ՚ի  
 կենաց ՚ի սուրդ ամենեցուն. որոյ երջանիկ կա-  
 տարած եղե ՚ի հինգ իդոսացն նոյ . 618 :

1 Բարոն . և Բակ . յամ 614 = 617: Առ Անուադ-  
 ՚ի Հայու Սպեֆ . գ . եր . 227:

## ՀԱ

## ՎՈՆԻՓԱԿԻՈՍ Ե

Ա. Տ. 619, և իայսէրունէան ՀԵՐԱՔԻԼԻ 10:

1391. Վզնիփակիոսնէապօլսեցի որդի Յովհաննու ընարեցտւ յաթոռ քահանայապետութեան՝ ի տասն կաղանդացն յունգ . յամին 619, և առաջնորդեաց եկեղեցւոյն ամս հինգ և ամիսս տասն Աստորոդեաց զսահմանադրութիս նախնեաց սակս ապատան լինելոյ՝ ի տաճար տեառն, միանդամայն հաստատեալ զվահիոս առաջին քահանայապետաց . և պատուէր ետ մեծաւ իշխանութեամբն քրիստոնեայ թագաւորաց ազատել զԵրուսաղէմ, և զսուրբ խաչն Քրիստոսի՝ գերութենէ խոսրովու Պարսից արքային : Եւ նեքն յառաջ քան զմետասան կաղանդացն նոյ, փոխեցտւ առ աէր յամին 625 :

## ՀԲ

## ՈՆՈՐԻՈՍ Ա

Ա. Տ. 625, և իայսէրունէան ՀԵՐԱՔԻԼԻ 16:

1392. Ոնորիոս կամպանիացի որդի Պետրոնեայ հիւպատոսի ընտրեցաւ քահանայապետ ՚ի վեց կաղանդացն նոյ . յամին 625. և բազում խոհականութեամբ և առաքելական նախանձու կառավարեաց զեկեղեցին՝ շահելով զհերձեալ եպիսկոպոսունս : Գրեաց և առ Ետվինոս ար-

1 Բարոն. և Բակ. յան 625: Առ Լաբ. հապ. 5. Ճաշ. Եր. 1660: Բելաբինոս յղ. գահ. Հռ. Գիր. կ. գլ. Ճ:

քայ Անդղիացւոց նամակ յորդորանաց հաստատուն կալ՚ի սուրբ հաւատու ուղղափառութեան: Յանդիմանեաց զԱկովիացիս վասն տօնելց նոցա զզատիկն 'ի չորեքտասասնն լուսնի յաւուր կիւրակէի ընդդէմ կանոնաց Նիկիոյ ( 910 ): Աշխատ եղե բազումս և հաստատեաց յաթոռիւր զուղղափառ արքայն Լոնգոբարտացւոց զԱդալվալդոս, մերժելով զբռնաւոր արքայն Արիովալդոս արիոսեան աղանդաւոր : «Նոյնպէս մերժեաց զֆորտունատոս պատրիարք Գրատիոյ վասն լինելոյն հերձուածող և մատնիչ հասարակապետութեան, եղեալ՚ի տեղի նորա զսարկաւագն բարեկիրթ : Ոչ սակաւ շինութիւնս արար 'ի Հռովմ. զարդարեաց և շքեղացոյց զբազում տեղիս :

Այլ հակառակ մեծամեծ արդեանց իւրոց նսեմացաւ փառաւոր անուն նորա 'ի զբարտցաց ոմանց. իբր զի կտրի քաղցրութեամբ վարեցեալ նորա ընդ Սերգիոսի պատրիարքին կոտանդինուազօլոյ՝ որ պարագլուխ էր Միակամագաւանից, և Ռնորիոս անտեղեակ նորա մեղմեխ խորհրդոցն, համբաւեցին զնա կուսակից հերձուածոյն այնորիկ, կամակորեալ ըստ խելաց իւրեանց զբանս թղթոյ նորա, զոր գրեալ էր ուղիղ մոռք առ նոյն ինքն Սերգիոս ( 1394 ). այլ բազումք յերևելի մատենագրաց արդարացուցանեն զնա զօրաւոր պատճառք : Եւ յետ վարելոյնորա զպաշտօն քահանայապետութեան ամս երկոտասան, ամիսս մետասան և աւուրս վեշտասան, փոխեցաւ աստի 'ի չորս իդուսացն հոկտ - յամին 638 :

1 Բարոն . և Բակ . յան 626=638: Առէն  
Առաջինս կը օն , Կոստան . առ Բելար . 'ի Գիր Ե-  
ինչ . Տարեն . Եր . 240: Ա . Լէտոն Բ . Առաջին 2 .  
առ Լաբ . հա . 6:

ՀԴ

## ՍԵՒԵՐԻ ԲՆՈՍ

Ա. Տ. 640, և կառերսոնեան հերակլի 51:

1595. Սեւերինոս հռովմայեցի որդի Աբիենուսի՝ այր առաքելինի և ողորմած առ աղքատա՝ ընտրեցաւ յաջորդ Ոնորիասի. այլ յերկարեցաւ օծութիւնն վասն անհաւան գտանելոյ կայսեր Հերակլի ընդ ընտրութիւնն, մինչև դարձան դեսպանքի կոստանդինուպոլսոյի հինգկազանդացն յունիսի յամին 640. որք սակա ընդունելոյ ըդ հաւանութիւն Հերակլի գնացեալ էին անդր : Քտնզի Հերակլ յետ բազում յաղթութեանց ընդգետմ Պարախց և տիրելոյ Երուսաղէմի և ազատելոյ զսուրբ խաչն (1591), շեզեցաւ ի մոլորական կարծիս Միակամադաւանից . և հանեալ հրովարտակ՝ անուանեալ կառեւիս՝ իրը միաբանիչ ամենեցուն յեկեղեցւով՝ ջանայր տալ ստորագրել ամենայն եպիսկոպոսաց : Կոյնօրինակ վարեցաւ և ընդ Սեւերինոսի, որպէս զի նախը ըստ տորագրեսցէ հրովարտակին, և ապա ընկալցի զօծումն քահանայապետութեան : Բայց յետ ձեռնադրութեան նորա իրը գեսականքն մատուցին նմա զայն մոլորական հրովարտակ, զահի հարաւ . և անդէն ժողովեալ զուխտ իւր՝ գտատապարտեաց զայն ի ժողովի : Յորմէ գառնացեալ կայսեր և ոստիկանաց՝ յափշտակեցին զգանձս եկեղեցւոյն Լատերանու, և աւուր աւուր այնշատի տագնատպ հալտծանաց հասուցին նմա, մինչև գտանգեալ՝ և հաս կատարածի կենաց ի նմին ամի ի կազանդսն օգոստոսի, կացեալ յաթու

Քահանայապետութեան զաւորս վաթուուն և  
չորս<sup>1</sup>:

## ՀԴ

## ՅՈՎԱՆԻՍԻ Դ

Ա. Տ. 640. և կայսերութեան հերակլի 31:

1594. Յովաննէս դաղմատացի որդի Աե-  
նանդոսի ուսումնականի յաջորդեաց յաթոռ.  
Քահանայապետութեան միով աւուրբ յառաջ  
քան զծնունդ տեառն 'ի 640: Այլ յառաջ  
քան զօծումն ձեռնադրութեան յառաջարկիլ  
նմա նամակաց գրելոց առ Սեւերինոս և առ  
ինքն յեպիսկոպոսաց և յերիցանց Սկովտիոյ  
եա զպատասխանին, և դատապարտեալ մեր-  
ժեաց զբնակիչս նահանգին այնորիկ, որք կատա-  
րէին զաօն զատկի ընդ հրէից (775): Զորս և  
խրատեալ զդուշացոյց հեռի կալ 'ի մոլորութենէ  
Պեղադեանց (808): Եւ 'ի հետեւեալ ամի գու-  
մարեալ ժողով 'ի հռովմ՝ դատապարտեաց ըզ-  
մոլորութիւնն Միակամադաւանից, համանգա-  
մայն և զմոլորութիւնս իշխանութեալ հրովարտակին  
հերակլեայ: Հաստատեաց ևս՝ թէ նամակ Ոնո-  
րիոսի գտանի ըստ մատաց վարդապետութեան ե-  
կեղեցւոյ, բայց Միակամադաւանիք կամակո-  
րէին: Գրեաց նամակ և առ կոստանդին կայսր  
որդի հերակլի՝ յորդորելով զնա պատառել ըզ-  
հրովարտակն հօր իւրոյ: Այլ նա կարճօրեայ  
եղեալ, որդի նորա կոստանդ յետ թագաւորե-  
լոյ ընդ նորա՝ հրով դատեցաւ զայն: Խոկ քա-

1 Պէտառ - հապ. 4. ածաբ . վարդ . գիր + 1 . յլ-  
մարդեւ. գւ. ժԷ. 5: Առ Լաբ . հապ . 6. եր. 195:  
Բարոն . յան 639:

հանայապետն Յովհաննէս օրինադրեաց կոնդա-  
կաւ իւրով, զի ըստ հին աւանդութեան կար-  
գեսցին կրօնաւորք ընդ քահանայս և ընդ ե-  
րիցունս, և ձեռնադրութեամբ եցեն յաստիճան  
ժողովրդապետութեան. որով շիջոյց զհակա-  
ռակութիւնս յոյն կղերիկոսաց և միանձանց:  
Հաւաքեալ զդանձս եկեղեցեաց՝ ազատեաց այ-  
նու զգերեալս 'ի բարբարոսաց յիստրիա և 'ի  
Դաղմատիս : Այլ 'ի հինգ իգոսացն 642 վո-  
խեցաւ առ տէր, կացեալ յիշխանութեան իւ-  
րում աարի մի, ամիսս ինն և աւուրս ութու-  
ատան <sup>1:</sup>

## ՀԵ

### ԹԵՌՈՒՐՈՍ Ա

Ա. Տ. 642, և կայսերունեան կոստանդի թ. 2 :

1395. Ժեկոգորոս երուսաղէմացի յոյն որ-  
դի թեկոգորոսի եպիսկոպոսի յաջորդեաց զՅով-  
հաննէս Դ յառաջ քան զաւուրս ութ կաղան-  
դացն դեկ. յամին 642, և առաքելականնա-  
խանձու բարեկարգեաց զեկեղեցին ամս վեց :  
ամիսս հինգ և աւուրս ութուատասն : Որ և աշ-  
խատ եղեւ ոչ սակաւ ջնջել զյիշատակ հրովար-  
տակին չերակլի և զաղանդ Միակամադաւա-  
նից : Նմին իրի գումարեաց ժողով 'ի հոռվմ-  
ընդդէմ աղանդաւորացն այնոցիկ . գրեաց ժո-  
ղովական նամակս առ Պօղոս պատրիարք կոս-  
տանդին սւապօլսոյ՝ քննել զգործս նախորդին իւ-  
րոյ Պիւռոսի, զոր մերժեալ էին յաթոռոյ, և  
'ի գալն 'ի զեղջ անդրէն գարձուցեալ : Այլ իր-

<sup>1</sup> Լ. հագ. 5. Ճող. Ել. 1717: Բակ. յաճ.  
590. 639: Բաբոն. յաճ. 690:

րե կըկին շրջեցաւ 'ի նոյն մոլորութիւն՝ թէու դորոս պատ դատապարտեաց զնա . ընդ նմին և զՊօղոս պատրիարք , որոյ յորդորմամբ կայսրն կոստանդ հրատարակեալ էր զթիտոս կամ Տիպ անուանեալ հրովարտակն միաբանելոյ զուղղավառսընդ Միակամադաւանից՝ առանց որոշելոյ զՃշմարտութիւն 'ի մոլորութենէ : Զկնի այնուրիկ իբրև լու եղեւ մեծի քահանայապետին յառաջադիմութիւն Սարակինոսաց և աւեր քրիստոնէից յԱսիա և յԱփրիկէ , առ զաւոց սրախն փոխեցաւ յաստեացս յԵրեք իդոսացն մայիսի յամին 649<sup>1:</sup>

## ՀՕ

### Ա. ՄԱՐՏԻՆՈՍ Ա.

Ա. Տ. 649 , և կայսերութեան կապանդի Բ. 9:

1596. Մարտինոս գոսքանացի որդի Փաքրիստափի այր առաքինի՝ եկաց քահանայապետ Հռովմայ յԵրեք նոնայց յուլիսի յամին 549 , և եկաց յիշխանութեան իւրում արիական ոգուվ ամս վեց , ամիսս երկուս և աւուրս երկոտասան : Որոյ վառեալ նախանձու Ճշմարտութեան ընդդէմ զինեցաւ Միակամադաւանից նմին իրի գումարեաց 'ի լատերանեան տաճարի ժողով հարիւր և հինդ եպիսկոպոսաց . յորում դատապարտեաց զաղանդ Միակամադաւանից և զառաջնորդս նոցա զկիւրոս , զԱերդիոս , զՊօղոս և զՊիւրոս , ևս և զհրովարտակն Հերակ-

1 թէութան . 'ի ժաման . Եր . 219 : Առ Հարգանասի . հապ . 5 . ժող . Եր . 1538 . և հապ . 3 . Եր . 823 : Բաէ . յան 641 = 649 :

լի և կոստանդի (1393), եղեալ և քսան նզովս :  
 Ընդ որ ցասուցեալ կայսեր կոստանդի՝ հրա-  
 ման արար կուսակալին խտալիոյ սպանանել ըզ-  
 Մարտինոս : Այլ իբրև մերձեցաւ ոստիկանն  
 առ սուրբն՝ կուրացաւ առժամայն : Ապա հրա-  
 ման եղե տքառիւլ զնա 'ի կղզին Կաքսոս . ուր  
 զամ մի ողջոյն կրեաց բազում վիշտս հանդերձ  
 հիւանդութեամբ :

Անտի ածեալ զնա 'ի թագաւորեալ քաղաքն  
 փակեցին 'ի բանտի . և ստիպէին կատարել զկամս  
 կայսեր՝ հաւանելով հրովարտակին . այլ նա ան-  
 ընկճելի քաջարառութեամբ իբրև մերժեց  
 զամենայն սպառնալիս բռնաւորաց , բարդեցին  
 'ի վերայ նորա զբարառութիւնս , և դատապար-  
 տեալ մասնեցին 'ի ձեռս դահճաց . որք մերկտ-  
 ցուցեալ ընդ քարշ ածին զնա ընդ վուղոց կոս-  
 տանդինուպօլսոյ անհնարին նախատանօք . և ա-  
 պա արկեալ 'ի շղթայս եգին 'ի բանտ տանջա-  
 նաց : Ուրանօր աեսեալ անդութ Յունաց թէ  
 անբերելի վիշտք ոչ զօրեն ընկճել զսիրտ արի նա-  
 հատակին , առտքեցին զնա յաքսորս 'ի Վերսո-  
 նէս Տաւրիոյ ըստ նմանութեան որբոյն կղեմայ  
 (1324) : Անդ առ մեծի հոգոց վասն հալածա-  
 նաց եկեղեցւոյ՝ վտանգեալ 'ի մահ՝ վկայեաց 'ի  
 վեշտասան կաղանդացն հոկտ . յամին 655 :

1 Առ Լաբ . հագ . 6 . ծոշ . եր . 65 : Բարսն .  
 յան 649 . 652 :

ՀԵ

## Ա. ԵՒԳԻՆԵՈՍ Ա.

Ա. Տ. 654, և կայսերութեան Կռաքանդի թ. 14:

1397. Եւգինէոս հռովմայեցի կղերիկոս 'ի  
մանկութենէ, որդի Հռուփինիանոսի՝ ընտրե-  
ցաւ քահանայապետ իբրև տեղապահ սրբոյն  
Մարտինոսի 'ի վեցիդոսացի սեպ. յամին 654:  
Քանզի զկնի արտասահմանութեաննորա 'ի Յու-  
նաստան 'ի 654, գահերէցն ընդ նախամարկա-  
ւագին և ընդ պոխմիկուռին վարեր զալաշտօն  
նորա ըստ սահմանադրութեան եկեղեցւոյ, որ-  
պէս գրէ և սուրբ Մարտինոս 'ի նամակի իւրում:  
Բայց անզուդական առաքինութիւնք Եւգի-  
նէոսի և խոհեմութիւնն և իսոնարհութիւննո-  
րա ետուն ընտրել զնա առաջնորդ 'ի կենդա-  
նութեան պապին. որ և բազում քաղցրու-  
թեամբ քարեկարգեաց զեկեղեցին ամս երկուս,  
ամիսս ութ և աւուրս քսան և չորս : Խոկ զկնի  
մահուան Մարտինոսի օծեալ հայրապետ՝ ա-  
ռաջնորդեաց զամ մի, ամիսս ութ և աւուրս  
հնդետասան : Սա օրինադրեաց եպիսկոպոսաց  
ունելարգելանս սակս ուղղելոյ զյանցաւոր կղե-  
րիկոսս և զսպելոյ զստահակս : Հեղ էր և առա-  
տասիրտ 'ի տուրս աղքատաց . և որպէս Բարո-  
նիոս ասէ, եկաց նա յաջորդ ոչ միայն աթո-  
ռոյ սրբոյն Մարտինոսի, այլև սրբութեաննորա:  
Եւ 'ի վեց նոնայց յունիսի 'ի 657, թողեալ ըզ-  
կեանս անցաւոր՝ ժառանդեաց զերկնից թագա-  
ւորութիւնն :

1. Եւմուդոս Մարտին . յղ. հն. էկ. ծիսիշ . գիշ+  
1. գլ. շ. յօդ . 3: Բարոն . և Բակ . յան 655:  
Եւ 'ի ծան . վայ . դ . նոն . յոնիս . 657:

## Հ. Բ.

## Ս. ՎԻՏԱԴԻԱՆՈՍ

Ա. Տ. 657. և իայսէրութէան կոսպանդի Բ. 17:

1398. Վիտաղիանոս ծնեալ'ի կամպանիայԱնաստասիոսէ Պոնտրատիոսէ՝ յաջորդեաց զԵւդինէոս յաթոռ. քահանայապետութեան յերեք իդոսացն օգոս. յամին 657, և առաջնորդեաց ամս չորեքտասան, ամիսս վեց և աւուրս եօթնետասն : Որ ըստ պատմութեան Անաստասայ զամենայն եկեղեցական կարգս և կանոնս հաստատեալ՝ պահեաց 'ի գեղեցիկ բարեկարգութեան : Գրեաց կոնդակս առ կայսրն կոստանդ և առ որդի նորա կոստանդին, ցուցեալ զծայրագոյն իշխանութիւն իւր 'ի վերայ ամենայն քրիստոնէից : Զան եղ քեցել կարի իմն խոհականօրէն զկոստանդին 'ի Միակամոդաւանից : Արար ժողով 'ի Հոռվիմ, յորում ցրեաց զվճիռ ժողովցին կրետայ՝ արձակեալ զՅովհաննէս լորիացի . իսկ կոստանդ յղեաց 'ի ձեռն նոյն պատգամաւորաց տռ քահանայապետն յլինծայ զաւետարան ականակապ : Ի գալ կայսեր 'ի Հոռվիմ ել նա ընդ տռաջ նորա հանդերձ ուխտիւն, և մեծապանծ փառօք ընկալաւ զնա : Այլ նորա ապերախտ գտեալ՝ եբարձ զպատուականս 'ի զարգուց և զարձանս քաղաքին : Բայց ոուրբ հայրապետն անդադար զհետ լինէր շինուածոց և ուղղութեանց : Ընդ բանիւ արար զեպիակոպոսն Հռավենեայ վասն ըմբոսառութեանն : Սա ինքն եմոյծ յեկեղեցական պաշտամունս զերդէհոն՝ ոչ միայն յիտալիա, այլ և 'ի Գաղղիա 'ի Բրիտանիա 'ի ձեռն երաժշտին Յովհաննու

Հռովմայեցոյ : Եւ 'ի վեց կաղանդացն փետր՝  
յամին նշան գոխեցաւ առ Քրիստոս :

Հ. թ.

### ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՄ Բ.

Ա. Տ. 672, և իայսէր առնեան Կոստանդնէայ 5:

1599. Աստուածատուր կրօնաւոր հռովմայեցի որդի Յովինիանոսի ձեռնազրեցաւ քահանայապետ 'ի աամն կաղանդացն մոյ . յամին նշան առաջնորդեաց խոհական կառավարութեամբ ամս չորս , ամիսս Երկուս և աւուրս հինգ : Աս նմանեալնախորդին՝ 'ի վար Էարկ զամենայն միջոցս դարձուցանելոյ զանուղղայս և զանհաւասա 'ի ճշմարտութիւն : Աքանչելի էր գութ նորտ առ աղքատս , և քաղցրութիւնն առ ամենեսին : Օրինադրեաց իրաւունսընտրելոյ և կարգելոյ ըզդուքսն Աննետկոյ իշխանութեամբ առաքելական գահին : Այլ 'ի վեց կաղանդացն յուլիսի 'ի 676 , գոխեցաւ առ Քրիստոս :

1 Առ Լուտավիկոսի Կրեսու . Գիր + 3 : Բանայլ .  
առլ . գլ . ժէ . 2 : Ի վարս սրբոյն Գրիգ . մ . գիր +  
2 . գլ . շ . եր . 48 : Բարոն . և Բակ . յահ 655 = 669 :  
2 Պէտրոս Յասոսիանոս . գիր + 1 . գործ . Ալե-  
նէտ . եր . 6 : Բարոն . յահ 669 , և 676 :

## Զ

## ԴՐՈՒՅՄ

Ա. Տ. 676, և վայսերութեան կապանդեայ ց:

1400. Դռնոս հռովմայեցի որդի Մաւրիկոսի ընտրեցաւ քահանայապետ 'ի կաղանդան նոյ . յամին 676 : Որ փոյթ կալաւ հնազանդեցուցանել զարգեալիսկոպոս եկեղեցւոյն Հռավեննայ . որոյ նախորդ ընդվզեալ էր յառաքելական գահէն առ Վիտաղիանոսիւ (1398) : Սա իւլին տեսեալ զդեղեցիկ յօժարութիւն կայսեր կոստանդեայ՝ գուն գործեաց բառնալ զտարաձայնութիւն Յունաց և մաքրել զտրեելեան եկեղեցին 'ի խմորոյ Միակամագաւանից , կոչելով զամենեսեան 'ի մի միաբանութիւն ուղղափառ վարդապետութեան եկեղեցւոյ : Գրեցան վասն այնոր և նամակք 'ի պատրաստութիւն ընդհանուր ժողովոյ : Այլ յառաջ քան զգործադրութիւնն կարեռ՝ եհաս վախճան կենաց քահանայապետին յերեք խոսացին ապրիլի յամին 678 , յետ կալոյ յիշխանութեանն զամմի , ամիսս հինգ և աւուրս տասն ։<sup>1</sup>

1 Բարձն . յան 676 : Հերսնիմ . Հառապէսպապէտ . Հառապէտ . գիր + 4 . Եր . 208 : Թէսդան . 'ի ծանան . Եր . 238 :

## ԶԱ

## Ս. ԱՂԱԹՈՒՆ

Ա. Տ. 678. և իոյսէբութեան Կապանդէայ 11:

1401. Ազաթոն միանձն սիկիլիացի յետ մա-  
հուան Դոնոսի հրաւիրեալ յառաքինակեաց  
մենաստանէ իւրմէ ընարեցաւ յուխաէն Հռով-  
մայ քահանայապետ եկեղեցւոյ Քրիստոսի յա-  
ռաջ քան զօրն հինգերորդ կաղանդացն յուլ.  
678: Որոյ տեսեալ զերկապաւակութիւն Յունաց  
և զաղմուկ արեելեան եկեղեցւոյ ձգեալ 'ի քա-  
ռասուն ամեաց հետէ 'ի պատճառս Միակամա-  
դաւանից՝ ջանահնար եղե բառնալ զայն: 'Նմին  
իրի հաւանեցուցեալ զկայսրն հնարեցաւ հրա-  
տարակել զընդհանուր ժողով 'ի Կոստանդինու-  
պոլիս: Բայց նախ 'ի Հռովմը դումարեալ ժո-  
ղով 'ի հարիւր քսանեհինգ եպիսկոպոսաց՝ գա-  
տապարաեաց զՄիակամադաւանս .ուր և որո-  
շեցան հրեշտակը դնալ յընդհանուր ժաղով 'ի  
թագաւորեալ քաղաքն (1178): Եհան կրկին  
կոնդակս յանուն ժողովոյ և զսահմանս ուղղա-  
փառ հաւատոյ ընդդէմմոլորութեան Միակա-  
մադաւանից: Հաստատեաց ապա և զսահման  
ընդհանուր ժողովոյն Կոստանդինուպոլսոյ Գ.  
և խաղաղացոյց զեկեզեցին Յունաց հանդերձ  
բարեկարգութեամբ (915):

Ես սորա և այլ գործ երևելի . իրեւ զի ընդ-  
այն ժամանակս յընտրութեան պապին ախուն  
Հռովմայ դումարս ինչ գրամոց իբրև տուրս առա-  
քեր առ կայսրն վասն հաւանութեան նորս ընդ-  
ընարութիւնն: Զայսձանը նըրութիւնն եքարձ կայսրն  
'ի խնդրոյ սուրբ հայրապետին: Այսպէս անդիւ-

մադարձ կամօք հլու գտանեէին նմա իշխանաւորք  
ամենային՝ ակնածեալ յառաքինական ջանից  
նորա , որ արդարեւ գերապանծ հոչտկեցաւ 'ի  
որբութեան վարուց և յարիսական խոհակա-  
նութեան , և եզե սիրելի ամենեցուն : Բայց  
ոչ յերկարեալ 'ի կեանս՝ եթող զաշխարհ ան-  
ցաւոր և վերացաւ 'ի գասս երանելեաց 'ի չորս  
իգոսացին յունիվ . յամին 682 . կացեալ յիշխա-  
նութեան ամս երիս , ամիսս վեց , և աւուրս չո-  
րեքտասանն :

## ԶԲ

### Ա. ԼԵՒՈՒ Բ

Ա. Տ. 682 , և խայերսութեան կոստանդնեայ 15:

1402 . Աւուն սիկիլիացի որդի Պօղոսի այր  
ճարտարաբանն և բանիբունն , և հմուտ աստուա-  
ծային դրոց և մեկնութեանց և տեղեակ զանա-  
զան լեզուաց , եկեղեցական կարգաց և երաժը-  
տութեան , ձեռնադրեցաւ քահանայապետ Հը-  
ռովմայ յերից եպիսկոպոսաց՝ Ռստիայ (1346) ,  
Պորտուայ և Վեղիգերայ 'ի վեշտասան կաղան-  
դացին սեալ . յամին 682 . և եկաց յիշխանութեան  
եկեղեցւոյ ամիսս տամն և աւուրս եօթնետամն:  
Սա հաստատեաց գարձեալ զընդհանուր ժողովն  
կոստանդինուսոլսոյ դ (915) , և թարգմա-  
նեալ զսահմանսն 'ի յոյն լեզուէ 'ի լատին՝ ա-  
ռաքեաց զօրինակս առ ամենայն քրիստոնեայս և

1 Փափ . 'ի Գիւս յշ . Ժող . 170: Պօղոս սարէ . յշ .  
Գործ . լնդ . Գիւր 6 . Գլ . Դ : Պէտքըս Ամրէնեան  
Գիւր 8 . յշ . համայ . ժահ . և խայ . Գլ . Է . 10: Ա-  
նասփ . էր . 140 : Բարձն . և Բարէ . յան 682 = 684:

առ եպիսկոպոսունս Սպանիոյ ուղղեալ և շահեալ զմիտր ամենեցուն ։ Ետ հանել հրաման կայսեր Կոստանդեայ զի ըստ հին սովորութեան եպիսկոպոսունք Հռավեննայ ձեռնադրեսցին ՚ի Հռովմ։ Յօրինեաց զանազան երգս և հոգեշտին մեղեգիս երգել յեկեղեցւով։ Այն չափ էր աղքատութիւն նորա և կարեկցութիւն առ կարօտեալս մինչև կենդանւոյն պաշտելի լինել ամենեցուն ։ Կովին առաքինութեամբ և սրբութեամբ փոխեցաւ առ տէր ՚ի հինգ նոնայց յուլիսի 683 ։ Սորա գտանին վեց նամակք ։ Տօնախմբութիւննորա կատարի ՚ի 28 նոյն ամսոյ ։<sup>1</sup>

## ԶԳ

## Ա. ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Բ.

Ա. Տ. 684, և իայներութեան կոստանդեայ 17:

1403. Բենեդիկտոս Հռովմայեցի երեց՝ որդի Յովհաննու՝ այր իմաստուն՝ ընտրեցաւ պապայլ չեւ ևս ձեռնադրեալ քահանայապետ՝ գրեաց նամակ առ Պետրոս նօտար առաքեալ ՚ի Լեռոնէ Բ ՚ի Սպանիա հանդերձ կանոնոք վեցերորդ ընդհանուր ժողովոյն, պատուիրելով նմա բարւոք ՚ի գլուխ հանել զգործն յանձնեալ նմա, և հաւատնեցուցեալ զեսլիսկոպոսունս հաստատել զնշմարտութիւն այնց կանոնաց ։ Եւ ապա օծաւ ըստ սահմանագրութեան յաջորդ սրբոյն Պետրոսի ՚ի վեց կաղանդացն յուլիսի յամին 684.

1 Անտոն Գրաու ՚ի վարս Լյուսնի Բ. Եր. 143: Բարոն. յահն 682: Սիդերերդոս. յղ. Հագենագը. էլ. Գլ. ծլ:

և փոյթ կալաւ բարեղարգել զհօտ իւր և զե-  
կեղեցի, և հաստատել զմիտու ամենեցուն յուղ-  
ղափառութիւն։ Յայնո՞ ժամանակի ընկալաւ  
զեամակս Սպանիացւոց և Տունասոյ չորեքտասա-  
ներորդ ժողովցն եղելց վասն հաստատութեան  
վեցերորդ ընդհանուր ժողովոց (1294)։

Այնշափ եր սորա յարգ յաչս կայսեր կոս-  
տանդեայ և մեծամեծաց, մինչև կայսրն ինքնին  
հրաժարեցաւ յիրաւանց անտի հաւանելոց ընդ-  
ընտրութիւն պապին (1393), և առ մեծի սի-  
րոյն ըստ սովորութեան ժամանակին հատեալ  
զհերս դլիսոյ որդւոց իւրոց Յուստինիանոսի և  
Հերակլի՞ առաքեաց առ պապի՞ նշան անթերի  
հպատակութեան, իրը որդեգրելով նմա զոր-  
դիս իւր։ Այլ 'ի նոնայս մայիսի յամին 685  
լքեալ զանցաւոր կեանս՝ փափաքեաց ժառան-  
գել զանանցն՝ և փոխեցաւ առ տէր, կացեալ  
յառաջնորդութեան ամիսս տասն և աւուրս  
երկոտասաան։<sup>1</sup>

## ԶԴ

### ՅՈՎՃԱՆՆԻՍ Ե

Ա. 8. 685, և կայսերութեան Յուստինիանոսի Բ. 1:

1404. Յովճաննէս անախոքացի ազգաւ ասո-  
քի որդի կիւրակոսի մին 'ի հրեշտակաց սրբոյն  
Ազաթոնի յլնդհանուր ժողովին կոստանդինու-  
պօլսոյ՝ ձեռնադրեցաւ քահանայապետ Հռով-  
մայ 'ի տասն կաղանդացն օդոս։ յամին 685 յե-

1 Առ Լաբ. հապ. 6. Ճաղ. էր. 1278։ Բարոն.  
յան 685։ Բելաբմին։ Գիրք 2։ յղ. Գահան։ Հոռով-  
դւ. Ճե։ Բակի։ յան 684։ Թալմահին։ յղ. Ճիս։  
կին և նոր էին. 5. 2. Գիրք 2. Գւ. Ճղ. 10։

րից Եսլիսկոպոսաց անտի ըստ նմանութեան նախորդին (1402)։ Սա թէպէտ այր իմաստուն էր և խոհական և բարեսէր, որպէս երեէրն, որ և բարւոք վարեաց զավաշտօն իւր դեսպանութեան՝ի թագաւորեալ քաղաքն ոչ սակաւ ժամանակս, սակայն՝ի քահանայապետութեան իւրում ոչինչ արժանի յիշատակաց Եհաս նմագործ գործել՝ի պատճառս երկարատե հիւանդութեանն . և հասեալ՝ի վախճան կենաց իւրոց՝ փոխեցաւ՝ի կաղանդսն օգոստոսի յամին 686, կացեալ յիշխանութեան իւրում զամմի և աւուրս ինն<sup>1</sup>:

## ԶԵ

## ԿՈՆՈՆ

Ա. 8. 686, և կայսերութեան Յուսոպինիանոսի թ. 2:

1405. Զկնի մահուան Յովհաննու և յապաղեաց ընտրութիւն նորոյ քահանայապետի՝ի պատճառս տարածայնութեան երկուց կողմանց. քանզի ուխտն չոռվմայ հաւանէր ընտրել զՊետրոս աւագերէց, իսկ դատաւորք և իշխանազունք՝ զթէոգորոս քահանայ : Իբրև անորոշելի մնայր վէճն՝ շտապեցաւ ուխտն եկեղեցւոյ հնարս խաղաղութեան գտանել. զի փոխեալ զմիտա՞հաստատեցին ընտրել՝ի քահանայապետութիւն զկոնոն երէց զայրն առաքելանորհ ցանկալի ամենեցուն և պատկառելի յաղագս իմաստութեանն, բարեպաշտութեան և

1 Անտառ.՝ի վարս նորա. Եր. 145: Բէնիսս առլաբ. հապ. 6. Ճոշ. Եր. 1286: Բարսոն. և Բակյոն 686:

տիոցն կատարելութեան : Յայսմ՝ ընտրութեան  
միաբանեցան ամենայն եկեղեցականք, և ուխ-  
տեցին նմա հնազանդութեան իբրև գլխոյ ընդ-  
հանուր եկեղեցւոյ . որում խօնարհեցան նոյն-  
հեատին առանց գժուարութեան և հակառակ  
կողմանքն : Ապա միակամ՝ հաւանութեամբ եր-  
կողանցիւր կողմանց ծանուցին զայն թէսոդորո-  
սի կուսակալին խաղիոյ 'ի ձեռն պատգամաւո-  
րաց, որպէս սովորութիւն երժամանակին : Արդ-  
կոնսն թրակացի 'ի մանկութենէ վարժեալ 'ի  
Սիկիլիա և եղեալ երեց եկեղեցւոյն Հռովմայ՝  
ձեռնադրեցաւ յայնժամ պատ յալթու քա-  
հանայապետութեան յերկոտասան կազանդացն  
նոյ . յամին 686 . և կառավարեաց զեկեղեցին  
ամիսս մետասան : Սորա անպայման ցնծութիւն  
այն եղեւ, զի ետես ջեջեալ և բարձեալ զանօրէն  
կռապաշտութիւնն 'ի Փրանկոնիոյ , ուրանօր  
թագաւորեաց յայնժամ քրիստոնէութիւն : Եւ  
ինքն կարի վաճանդեալ 'ի ցաւոց՝ վախեցաւ յաս-  
տեացս 'ի մետասան կազանդացն հոկ . յամին  
687 <sup>1:</sup> :

## 22

## Ա. ՍԱՐԳԻՍ Ա.

Ա. Տ. 687 . և իայսերութեան Յուստինիանոսի Բ. 3 :

1406 . Սարդիս անտիոքացի որդի Տիբերեոյ  
կրթեալ 'ի Սիկիլիա՝ օծաւ քահանայապետ Հռ-  
ռովմայ յութուտասն կազանդացն յունվ . յա-  
մին 687 . և զեկավարեաց զեկեղեցին խօհեմաւ-

<sup>1</sup> Անաստ . 'ի Հարս սուրբն Եր . 147 : Թառվան .  
Տ. 3 . գիշտ . 2 . գլ . ժղ . Բարտ . 686 : Մարտիւլ-  
իոս . ցիշտ . 'ի կարդ Հոռ . գլ . ժղ . 2 :

թեամբ և սրբութեամբ ամս երեքտասան, ամիսս  
ուժ և աւուրս քսանելերիս : Ընտրութեամբ սո-  
րա ՚ի գահ առաքելական՝ վախճան էառ հա-  
կառակութիւնն ծագեալ ՚ի մէջ թէոդորոսի  
աւագերիցու և Պատրաղէսի նախասարկուա-  
գին սակս յաջորդելոյ յամոռ քահանայտպե-  
տութեան . քանիզ ուխտոն եկեղեցւոյ և իշխան-  
ազունք միահամուռ մերժեալ զնոսա՝ հաստա-  
տեցին զԱսարդիս : Որ և սահմանադրեաց զկա-  
նոնս հնգետասաներորդ ժողովոյն Տոլեաոյ ՚ի  
Սպանիա . յորում բացարեցին եպիսկոպո-  
սունք՝ թէ յինչ միտս գրեալ էին առ բենե-  
դիկտոս Բ զայն բան . «Կամքն ծնանի զկամն  
յԱստուածոյ . ըստ որում հրամայեալ էր նա  
մեկին բացարել զայն :

Բազում խոհականութեամբ շահեցաւ զեկե-  
ղեցին Ագուիլայ զօցտեալն երբեմն ՚ի պատճառուս  
Երից գլխոց (824) . որով բարձաւ հերձուածն  
Խոտրիոյ : «Ոյնպէս ջան եդյամենայն տեղիս տա-  
րածել զուղղափառ հաւատս՝ յօդեալ զբազումն  
՚ի մի միաբանութիւն սիրոյ : Օրինադրեաց ինչ  
ինչ և յեկեղեցական պաշտամունս Լատինացւոց,  
ասել քահանայից և ժողովրդոց՝ ի բեկանել հա-  
ցին ՚ի պատարագի . «Գառն Աստուծոյ որ բառ-  
նաս զմեզս աշխարհի , ողօրմեաց մեզ ։ և երգել  
ամը ըստ ամէ դուվասանութիւնս զոր լիթանիս ա-  
նուանեն . ՚ի տօնի աւետման, ծննդեան և նուջման  
Աստուածածնին , ևս և օրբոյն Սիմէոնի : «Կա  
ինքն մկրտեաց զկադովազոս արքայ Անդր-Սաք-  
սոնիոյ , որ յայն սակս եկեալ էր ՚ի Հռովմ . և  
կոչեցաւ Պետրոս . այլ յետ սակաւուց մեռաւ  
ուրախութեամբ և թաղեցաւ ՚ի տաճար սրբոյն  
Պետրոսի :

Ի նմին ժամանակի պատրիարքն Կոստանդի-  
նուպօլսոյ միակամադաւան՝ ՚ի թագաւորեալ

քաղաքն ժողով գումարեաց Տրուղեան ձայնեալ, յորում յաւելին կանոնս ինչ 'ի լրումն կարգադրութեան, զորով զանց արարեալ էին ընդհանուր ժողովքն հինգերորդ և վեցերորդ . վասն որոյ կոչի Հինգվեցեան : Զոր հաստատեալ կայսեր՝ խնդրեաց զի և Սարդիս քահանայապետ հաստատեսցէ իբրև ընդհանրական (1307) : Այլ նա դաստապարաեալ նզուլեաց զայն ժողովլ Յունաց : Յորմէ դառնացեալ կայսեր՝ առաքեաց զզօրապետ իւր զօքաբարիա 'ի Հուովմ, զի կալանաւորեալ զՍարդիս ածցէ 'ի Կոստանդինոսուպոլիս : Այլ ժողովուրդք Հռովմայ, ուր չուներ կայսրն զօրութիւն, ընդդէմ կացեալ՝ յեսսդարձուցին անարդանօք զօքաբարիա : Իսկ կայսրն պատուհանեցաւ չարաչար :

Սակայն մեծահռչակ սրբութիւն քահանայապետին Սարդիս ոչ ազատեցաւ 'ի նախանձուէ անօրէն զըսպարտողաց, որսկէս թէ զաւակ ունելնմա յազգայնոյն : Այլ իբրև հաւաքեաց նա զբազմութիւն մարդկան 'ի մի վայր, և ետքերեւ զաղայն ութօրեայ, և հարց նմա զհայր իւր . և մանկիկն անդէն սքանչելատէս բարբառեալեցոյց զօտար ոմն . որով արդարացաւ անմեղն յամօթքանսարկուին և չարախոսացն : Նովին սրբութեամբ լցեալ զաւուրս կենաց իւրոց՝ փոխեցաւ առ պատկինն սրբոց Քրիստոս յեօթն իդոսացն սեպտ . յամին 701 . զոր պատուէ եկեղեցին 'ի վկայաբանութեան 'ի հինգ իդոսաց նոյն ամսոյ, յորում աւուր ամփոփեցաւ մարմին նորա <sup>1</sup> :

1 Բայրոն . յաճ 687 : Պէտրոս Մարէ . Գիշէ 5 . յշ . համայ . Գլ . Ճ՛ը : Պօղոս սարէ . յշ . Գուծ . լոնֆ . Գիշէ 6 . Գլ . Ճ՛ա : Անաստ . Գրատկ . 'ի Հարս սորան . 154 : Աւագիտութուն Սարաբ . յշ . իշ . ելել . Գլ . Ի՛ք :

## ԴԵՊՔ ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԴԱՄԱՒՆ

Ա. Տ.

600. Յովհան Գ. յաջորդէ յաթու. Լուսաւորչին զկնի Աբրահամու կաթողիկոսի :
604. Եօթն խոտաճարակք կատարին :
610. Յովհան ողորմած պատրիարք նստի յԱղեքսանդրիա :
614. Պարսիկք առնուն զԵրուսաղէմ և գերեն զիսաշն Քրիստոսի :
617. Կոմիտաս կաթողիկոս յաջորդեալ՝ շինէ զվկայարան Հռիփսիմեայ. ապա և զիջմիածին նորոգէ :
622. Մուհամմէտ Ա ամիրապետ բարձրանայ, յորմէ սկսանի թուական Հագարացոց :
625. Քրիստավիոր Գ. նստի կաթողիկոս :
628. Եզր կաթողիկոս յաջորդէ զՔրիստավիոր :
629. Դարձ որբոյ Խաչին յԵրուսաղէմ :
630. Եզր շինէ զվկայարան Գայիանեանց :
633. Խաչն ածի ՚ի Կոստանդինուպօլիս :
640. Աերսէս Գ. կաթողիկոս առաջնորդէ :
649. Յովհաննէս լինի տեղապահ, և առնէ զժողովակ Մանազկերացոյ :
661. Անաստաս կաթողիկոս կարգի :
662. Անանիա շիրակացի ծաղկի ընդ աշակերտացն :
667. Խրայէլ կաթողիկոս նստի :
677. Սահակ Գ. յաջորդէ ՚ի կաթողիկոսութեան, և ապա գերի ՚ի Դամասկոս :
697. Սկիզբն աերութեան Վենետիկեցոց :
- Զայնու ժամանակաւ զկնի բազմայալիթն Սմբատայ նստի մարզպան ՚ի Հայս Դաւիթ սահառունի : Ապա տիրէ ՚ի Հայս Վարադարիոց բա-

գրատունի . ապա Դրաւիթ վերստին . յետ որոյ  
թէոդորոս ոշտունի զօրավար . ապա Վարազմի-  
րոց վերստին . ապա Սմբատ . ապա Համազասպ  
մամիկոնեան . յետոյ Գրիգոր մամիկոնեան .  
ապա Աշոտ բիւրատեան . ապա 'Ներսէհ կամ-  
սարական : Այնուհետեւ Հագարացիք տիրեալ  
Հայոց՝ Աբգլայ առաջին ոստիկան Եկաց , և  
յետ նորա Սմբատ բիւրատեան յամի 695 :

## ՈՒԹԵՐՈՐԴԻ ԴԱՐ

ԶԵ

ՅՈՎՀԱՆՆԻՍ Զ.

Ա. Տ. 701, և իայներութեան Տիբերէայ դ. 4:

1407. ՅՈՎՀԱՆՆԻՍ ազգաւշոյն՝ ոչ յետրազ  
մաց, ձեռնադրեցաւ քահանայապետ յաթոռ  
ոլրոյն Պետրոսի ՚ի հինգ կաղ.՝ նոյ.՝ յամին 701.  
և խաղաղութեամբ վարեաց զիշխանութիւն իւր  
ամս երիս, ամիսս երկու և աւուրս երկոտասամն:  
Դրբեւ լու եղեւ ընտրութիւն սորա ՚ի թագաւոր  
բալ քաղաքին՝ կայսրն Տիբեր փութանակի ա-  
ռաքեաց զօնէովիլակտոս պատրիկ և կուսակալ  
՚ի հռովմը առ.՝ ՚ի աշխատ առնել զնա պատճա-  
ռանօք իմն քննութեան: Սակայն որպէս առ  
Սարդսիւ զփորձ առեալ էին, նոյն օրինակ և  
այժմ զօրք հռովմայ ընդ աւագորերոյ վառե-  
ցան բորբոքեցան պաշտապանել զհայրապետ իւ-  
րեանց. և անշուշտ չարիս հասուցանէին կու-  
սակալին, և թէ հրաման պապին չսանձէր զնոսա:

Առ այնու ժամանակօք Յուստինիանոս պլին-  
չատ կայսր, որ զամս տասն կայրյաքսորս ՚ի  
Քերսոնէս, ձեռնատուութեամբ արքային Բուլ-  
զարաց գարձաւ ՚ի կոստանդինուպօլիս, և սպան  
զՏիբեր և զՎեւոնդիոս, բրեալ և զաջս Կալի-  
նիկոսի պատրիարքիանոյն: Իսկ քահանայա-  
պետն Յովհաննէս հասեալ ՚ի կատարած կենաց՝  
փոխեցաւ ՚ի հինգ իդոսացն յունվ. 707 <sup>1:</sup>:

1 Բարոն. յահն 701: Բակ. 705:

## ԶԼ

## ՅՈՎՀԱՆՆԵՍ Է

Ա. Տ. 705, և խայսէրութեան Յուստինիանոսի Բ. 1:

1408. Յովհաննէս ազգաւ յոյն որդի Պղատոնի՝ նատաւ յաթու քահանայապետութեան չուովմայ՝ ի կաղանդսն մարափ յամին 705, և եկաց՝ ի հայրապետութեան ամս երկուս, ամլաս եօթն և աւուրս եօթնետասն : Առ սա Յուստինիանոս Բ. առաքեաց՝ ի ձեռն հրեշտակաց իւրոց զահմանս և զկանոնս Տրուղեան ժողովոյն . որպէս զի քննեալ՝ զոր միանդամ դացէ համաձայն ողջամիտ վարդապետութեան՝ հաստատեացէ, և զոր արտաքոյ դատանէ ուղղախոհ սահմանաց՝ մերժեացէ : Յոյր սակա գումարեցաւ ժողով՝ ի չուովմ ըստ խնդրոյ կայսեր : Բայց Յովհաննէս երկուցեալ՝ զի մի այնու առիթ տայցէ կայսեր գրդուելոյ, զանց արար զայնու . նմին իրի և չեզեւ ձեռնհաս թողուլ յաշխարհի գործ իմն արժանի յիշատակաց՝ ըստ պանծալի գործոց նախորդաց իւրոց : Որ և ՚ի վեշտասան կաղանդացն նոյ. 707, կատարեաց զընթացս կենաց իւրոց<sup>1</sup> :

1 Բարոն. յան 705: Պօղսա սարի. յ՛շ. Գործ. լոնգ. գիր. 6. գլ. իշ: Թակմասին. յ՛շ. ծիս. հին և նոր եկեղ. յ. 3. գիր. 1. գլ. լեռ. 17:

## ԶԹ

## ՍԻՍԽՆԻՈՍ

Ա. Տ. 708. և կայսերութեան Յանապի-  
նիանոսի Բ. 4:

1409. Ախալներու յասորի աղդէ որդի Յովհան-  
նու՝ ձեռնադրեցաւ քահանայապետ յաթու-  
չուովմայ ՚ի հնգետասան կազանդացն փետր.  
յամին 708: Որ այն ինչ խորհեր նորոգել զպա-  
րիսպաքաղաքին, ընդ նմին և զատճարս, տիրեաց  
նմա ախտ յօդացաւութեան, զի չկարեր շար-  
ժիլ տեղւոջէ ՚ի տեղի: Որով և կնքեաց զկեանս  
իւր յեօթն փետր. կացեալ յիշանութեան  
իւրում աւուրս քսան և թ<sup>1</sup>:

## Ղ

## ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա

Ա. Տ. 708. և կայսերութեան Յանապի-  
նիանոսի Բ. 4:

1410. Կոստանդին ասորի աղդաւ որդի Յով-  
հաննու՝ ընարեցաւ յաթու քահանայապե-  
տութեան չուովմայ յութ կազանդացն ապրիլ  
յամին 708, և եկաց առաջնորդ եկեղեցւոյ  
գեղեցիկ կարգօք ամս Եօթն և աւուրս հնգետա-  
սան: Ի միտ առեալ յայնժամ կայսրն Յուստի-  
նիանոս՝ թէ ՚ի պատճառս խրոխտանալոյ իւրոյ  
ընդդէմ գլխոյն եկեղեցւոյ պատահեցին նմա

1 Բարձր. և Բառ. յան 708:

ձախորդութիւնք , խնդրեաց թախանձանօք , զի պապն անցեալ՝ կոստանդինուալովս ուղղեացէ զսիրտս ամենեցուն և բարձրէ զհերձուածն յունական : Յօժարութեամբ ընկալաւ քահանայապետն զինդրուածս նորա , և 'ի չորս նոնայց հոկտ . յամի 710 նաւարկեալ ել՝ ի ճանապարհ : Եւ ուր և հանդիպէր մեծաւ փառօք ընկալեալ պաշտէին զնա , մինչև մերձեցաւ 'ի թագաւորէալ քաղաքն : Զոյն լուեալ Տիբերեայ որդւոյ Յուստինիանոսի , և Կիւրոսի պատրիարքին՝ ընդառաջ ելին նմա հանդերձ բազմութեամբ աւագանւոյն և սոսկականաց , և արքայակերպ շքով տարեալ ագուցին զնա 'ի քաղաք անդր : Եւ զի 'ի Կիւկիա եր կայսրն , հարկ եղե նովին փառօք գնալ առ նա . որ իբրև ետես զքահանայապետն , յառաջ անցեալ թագ 'ի գլուխ՝ անկաւ յուսս նորա և երկիր եպագ նմա : Խակյառաջիկայ կիւրակեին քահանայապետն պատարագեաց հանդիսիւ , և կայսրն հաղորդեցաւ խորհրդոյն 'ի ձեռանէ նորա : Ապա յետ երից ամսոց գլխաւորէալ քահանայապետին զամենայն կարևորո , և հաստատեալ զաէր և զիսազաղութիւն 'ի մեջ ամենեցուն՝ նոյնօրինակ շքով դարձաւ 'ի չռովմ : Սակայն այս խաղաղութիւն չեղե երկարատե . վասն զի Փիլիպիկոս Վարդանէս ստալատական բռնացեալ՝ սպան զկայարն և զորդի նորա Տիբեր , և յինքն տարաւ զկայաբութիւնն :

Յետայսորիկ զօրացեալ Յովհաննու միակամադաւան պատրիարքի ընդքազմամբոխ եպիսկոպոսաց ժողով գումարեաց , որք և նզովեցին զվեցերորդ ընդհանրական ժողովն (915) : Եւ իբրև առաքեաց կայսրն առ կոստանդին պապ զսահմանս ժողովցն իւրեանց՝ զի հաստատեացէ , նա անդէն գատապարաեաց զայն և զժողովակ նոցա : Այլ իբրև նստաւ Անաստաս Բ կայսր՝ առաքեաց առ

քահանայապեաննամակ ուղղափառ դաւանութեան. զոր ընկալաւնա հաճութեամբ, և յղեաց՝ ի Կոստանդինուպօլիս զՄիքայէլ Երէց պատգամաւոր՝ զի հաշտեցուսցէ զեպիսկոպոսունս, որք վրիտէալ Երբեմն միաբան գտան յայնաց ժողովի. իսկ պապին հասեալ վախճան կենացն յետ դեղեցիկ բարեկարգութեամբ նշանաւոր, ընտրեցաւ ի վեց իդոսացն ապրիլի յամին 715<sup>1</sup>:

## ԴԱ

### Ա. ԳՐԻԳՈՐ Բ

Ա. Տ. 715, և կայսերական Անտառասայ Բ. 3:

1411. Գրիգոր հռովմայեցի որդիՄարկեղիոսի սարկաւագ. եկեղեցւոյն Հռովմայ և դիւանապետ մեծանուն և հմուտ եկեղեցական կարգաց և կանոնաց, և սրբութեամբ նշանաւոր, ընտրեցաւ քահանայապետ յաթոռ սբոյն Պետրոսի հաւանութեամբ ամենեցուն ՚ի չորեքտասան կաղանդացն յունիսի 715: Զառաջննն խորհուրդ ՚ի մահ եղնորոդել զպարիսպս քաղաքին. որում խոչընդուն եղեն Լոնդոնքարտացիք յափշտակելով զաւանն կումանոն: Այլ նորա զամենայն փոյթ յանձին կալեալ թափեաց զայն ՚ի ձեռաց նոցա օգնութեամբ Նէալոլսեցոց: Յետ այնորիկ աշխատեղեքառնալ զանդղիական հերձուածքն հարիւր և յիսուն ամաց, յորմէ հետեւ յամառեալ էին Սկովտիացիք և Բրիտանիացիք տօ-

1 Անտառ. ՚ի վարս Գրիգոր. Բ. Եր. 163: Բարսն. յահն 710: Բառի. 714: Քրիստիան. Լուսուս. ՚ի վաճ. հա. 3. Եր. 172: Բանվիան. ծան. առա Պղափ. Եր. 83:

նել զզատիկն 'ի կիւրակէի'ի չորեքտասանն լուսնի (1394) :

Երիցս գումարեաց ժողով 'ի հոռովմ . նախը ընդդէմ անարժան ամուսնութեանց , յորում արդել ես՝ զի մի կանայք Երիցանց և սարկաւագաց պատկենացին ընդ այլոց : Երկրորդ արդել Կորբիանոսի Եպիսկոպոսին հրաժարել 'ի պաշտամանեն , զոր նա խնդրէր : Երրորդ ընդդէմ Պատկերամարտից , որոյ ազագաւ զամս հինգ ջանաց ուղղելզաիրտ Լեւոնի կայսեր իսաւրացոյ մոլորելոյ յաղանդ պատկերամարտութեան :

1 Լէսոնդ աց՛ որ Շածաղքի ու Եր 'ի Գառառնեն իսաւրիոյ քուտան Ասիոյ , յառաւը միւստեանսութեալ առ աղբէրն սպէր հաց , պատահէցին նման էր սահմարդք 'ի հրեից . որտ Գոռակին նման էին հայոց՝ ենէ մոցէ 'ի զօրո : Ես նա բանիւ նոյանդեւ 'ի պինասութիւնն և յառաջնութեալ եղեւ զօրապէտ . և 'ի մահուան Փիլիպոպէտիոնի իայսէր (1410) Գնացեալ 'ի թափառը եալ փաղան զօրացաւ յացք , և նորու կայոց : Իսկ նախասացէալ հրեայքն լսաւալ պայն 'լուսն առ նա յոշ ջոյն . և հասպատեցին պնա՞ի մալոր իտրծիս 'ի լուս պառել զպապէտիւն և պանդրիս իտապատշատնիւնն է ընդունէմ այ : Այլ նո ու 'ի վեր եհան պբանն 'ի ժամանակ . պի մարդ դնէր ընդ Սարակինուաց , որտ պառակին պատահանդիւնն ու ընդ ծով հարիւրաւոր նասուածք . և Յունաց հուր արսաւնդական հնարեալ որ 'ի ջրի անշնչ Բնայք , այրեցին պնապատիւնն ու ընդ ծով հարիւրաւոր նասուածք . Սակայն պինի սթիմ իսն ամաց ժամամ գունդ առաջ պահանդաւնիւնն իւր ընդունէմ սուրբ պատիւրոց : Զար լուսեալ սըբոյն Գրիգորի պատիւնն առանգիւաց առ նա դնապանս ու շնչել պինք նորու . այլ կայոցն արաւուրէաց պնապատ , և ջան եդ սպանանն է լ պապապն : Այս լուսեալ զդրապէտիւն մեծի մաքնուադարձնին ' յորում էին էրեսուան հաղպար երեւելի մաքնուան , պամենէսին հրէւելու :

Այլ իրեւ 'ի գերե ելին ջանք նորա , ցաւագին նղովիւք գատապարտեաց զնա ընդ աղանդոյն : Եւ առ 'ի սուրբ պահել զիտալացիս յաղանդոյ անտի՝ արդելս եղ չաղորդակցել և ոչ իսկ կալ ընդ հպատակութեամբ կայսեր մոլորելոյ . որով և նկուն եղեն հերձաւածող իշխանք : Եւ օ քէնս եդ 'ի զգուշութիւն յապա եկելոց , զի եթէ ոք յաճախ խրատեալ և կամակորեսցէ և չեկեսցէ յուղղութիւն , մերժեացի : Նկուն արար և զլ ոնդոբարտացիս 'ի ձեռն ֆրանդաց . մինչե զզէնս և զոսկի պատկան արկանելառ ոտսքահանայ . ապետին և խաչարծաթիս ձօննելորբոյն Պետրոսի :

Յեկեղեցական բարեկարգութիւնս զոր արար հայրապետա այս՝ սահմանեաց և 'ի քառամնորդականն հինդ ծումապահս և տօնս : Եւ Վանի մակիոս ոմն եպիսկոպոս տռաքեալ 'ի նմաննէ 'ի գերմանիա առ 'ի քարոզել զաւետարանն , որ հարցանէր 'ի նմաննէ եթէ տղայն 'ի մանկական տիս նուիրեալ 'ի ծնողաց 'ի հոգեւոր կարդ՝ յար բունս հասեալ կարիցէ ելանել անտի և մտանել 'ի կարդ աշխարհի , ոչ ետ թոյլ , այլ պատուի րեաց այնպիսեացն սանձ դնել ցանկութեան : Եւ կացեալ սրբոյն Գրիգորի 'ի հայրապետութեան ամս հնգետասան , ամիսս ութ և աւուրսքսանե չորս , վորսեցաւ առ Քրիստոս յերեք իդոսացն միւտր . յամին 731 : Խակ տօն ծննդեան սորա դնի 'ի մկայաբանութեան չուովմայ յիդոսանոյն ամսոյ :

արար 'ի մոխիլ Շաբաշուշնեալ և պանդիւք մագեանս : Կահապահիւտ պառաբն Գեղմանս պատպը իտուք . Եհափ և պահպահէ Յովնանոս Շամասկացոյ : Կմին իւի պատպն մերժեաց պատյանն Լէտոն և պամընացն աղանդա նոր իւլիանս , որտ անլսող գրանէին եկեղեցաց :

1 Բարոն . յամն 714 : Սոկինիս . գիր + Ք . յղ . թագ . իգաւ . յամն 726 . Եր . 102 : Միկուլուգոս յղ . եկեղ . ողահ . գլ . ծ : Պէպոս . հր . 5 . գիր + 15 . գլ . ժա :

## ԴԲ.

Ա. ԳՐԻԳՈՐ Գ

Ա. Տ. 731, և կայսերութեան Լէանի իստո-  
րոցոց 15:

1/12. Գրիգոր աղքաւ ասորի որդի Յովհանն  
նու զինի հինգ աւուրց մտչուան նախորդին օ-  
ծաւ քահանայապետ ՚ի հնգետասան կազմն  
դայն ասլր . յամին 731 : Որըստ արիտկան արթ-  
նութեան իւրոյ եկաց պաշտպան սրբազն պատ-  
կերաց . գրեաց զօրաւոր կոնդակս առ կայսրն  
Նեռոն . զի ՚ի բաց կացցէ ՚ի չար աղանդոյ անտի ,  
և նզովեաց ևս զՊատկերամարտս : Ա. Յ. Մ. սրբամը-  
տեալ անօրէն կայսերն գրաւեաց յաբքունիս ըզ-  
վազեմի ժառանգութիւնս եկեղեցւոյն Հռով-  
մոյ ՚ի Սիկիլիա և ՚ի Կաղաքըիտ : Սակայն սուրբ  
հայրապետն ոչ գագարէր գլխահար լինել աղան-  
դոյն այնորիկ ոչ միայն գրով և վճռով , այլ և ար-  
դեամբք . քանիզի վայելչացոյց ՚ի մի կողմն տաճա-  
րի սրբոյն Պետրոսի զպատկերս փրկչին և առա-  
քելոց . և ՚ի միւս կողմն զպատկերս Սասուածա-  
մօր և սրբոց կուսանաց . կառոյց և հանգստա-  
րան , յոր հաւաքեաց զնշխարս սրբոց ՚ի պաշտօն :

Հրեշտակս առաքեաց կոնդակօք հանգերձ առ-  
աբքայն Գաղղիոյ Կարոլոս Մարտելլոս հայր Պի-  
ոլինի յօդնութիւն կոչելով զիս ոչ միայն ընդ-  
դէմ Լոնդոնաբատացւոց գրուելոց ՚ի կայսերէ և  
յափշտակողաց զինչս եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի  
՚ի կուսակալութեան Հռավեննայե՝ ՚ի գքառութեան  
Հռովմայ , այլ և ընդդէմ նմին իսկ կայսեր Յու-  
նաց , հաստատեալ միանգամայն դաշինս ընդ-  
կարոլոսի արքայի , որում չնորհեաց և զպատաւ

պատրկութեան պաշտպան լինելոյ եկեղեցւոյ :  
Եւ զօրացեալ յամենայնի առաջին եղեւ, որ զկու-  
սակալութիւն հռավեննայ արար ինքնիշխան  
պէտութիւն :

Յայնմ ժամանակի արքայն Անդզիոյ շարժեալ  
'ի բարեալաշտութենէ՝ օրինագրեաց ժողովրդեան  
իւրում, զի իւրաքանչիւր տուն ամ ըստ ամէ  
տացէ դենար մի արծաթոյ, կոչելով զայն տուրք  
Պետրոսի, և առաքեսցեն առ քահանայապէտն  
'ի նշան ծայրագոյն հպատակութեան գլխոյ ե-  
կեղեցւոյ . որք և զայն սովորութիւն պահեցին  
մինչեւ ցբաժանումն իւրեանց (1541) : Այլ քաջ  
հովիւն յետ կառավարելոյ զեկեղեցին իմաստու-  
թեամբ և արութեամբ զամս տասն, ամիսս ութ,  
և աւուրս տասն, նովին սրբութեամբ հանգեաւ  
'ի տէր 'ի չորս կազանդացն գեկ . յամին 741 :

## Դ

### Ս. ԶԱՔԱՐԻԱ

Ա. Տ. 741, և կայսէրութեան կոսպանութեայ  
կողբոնիմուի 1 :

1415. Զաքարիա ազգաւ յոյն որդի Պողիք-  
րոնի այբ սուրբ և իմաստուն յաջորդեաց զսուրբն  
Գրիգոր Գ. աւուրբ յառաջ քան զկազանդս  
դեկ . յամին 741 . որ իսկ և իսկ գուն դործեաց  
ոչ միայն բարեկարգել զեկեղեցականս, այլ և  
հաստատուն և անարատ պահել զուխտ իւր ընդ  
ամենայն խտալիա : Հռչակելի են նորա մեծա-

1 Թէսիան . 'ի ժաման . եր . 273 : Բանա, Գիրք 2.  
յղ . պատ . Գլ . Ճա . 2: Առ Լաբբեսուի . հագ . 6 . Ճան-  
եր . 1475 : Բարդն . և Բակ . յան 731 :

մեծ արարք • զի կումարեաց զանազան ժողովս  
վասն բարեկարդութեան, ևս և ընդդէմ Աղել  
բերտոսի և Կղեմայ աղանդաւորաց (826): Ե-  
հան վճիռս և զօրաւոր կոնդակս 'ի հաստատու-  
թիւն ուղղափառութեան: Ընդդէմ զինեցաւ  
առաւել գերագոյն իշխանութեամբն քան զի-  
նուք՝ Լոնդոնարացւոց միսելոց յիտալիա, և  
նկուն արար զնոսա իսպառ: Այնպէս նուա-  
ճեաց զլուխտալրանդոս արքայ նոցա, որ պատ-  
րաստէր 'ի մարտ, մինչև զամենայն աւանս յափրշ-  
տակեալս յառաջնոց և զժառանդութիւնս ե-  
կեղեցւոյն յետս դարձուցանել առ պապն, և  
զամենայն քաղաքո 'ի նախկին կարգ ածել հպա-  
տակեալ արդարութեան և խաղաղութեան:

Այլ որ մեծն է ընկճեալ մեծի պապին զչուա-  
քիսիս յաջորդ արքային Լուխտալրանդոսի և 'ի  
զեղջ բերեալ ուղղեաց, այնպէս զի հրաժարեալ  
նորա 'ի թագեն միանձնացաւ 'ի կասինեան վանս  
ընդ կանոնք սրբոյն բենեգիկտոսի շինեալ յիւր-  
մէ առ երի կասինայ . զնոյն արար և թագու-  
հին թեսիա ընդ դստեր իւրում Հուտարուգայ  
մուեալ 'ի մենաստան կուսանաց: Զայն մենաս-  
տան կասինայ Զաքարիա պապ աղատ արարեալ  
շնորհեաց բազում առանձնաշնորհութիւնս:  
Նոյնօրինակ զանարի արքայն Փրանդաց զՔիլդե-  
րիկոս Գ զյետինն ցեղին Մերովինեան՝ արտա-  
լածեալ 'ի թագաւորութենէ առաքեաց 'ի վանս.  
և զՊիպին զհայր մեծին կարոլոսի ընդ նորա  
փոխանորդեալ, Երգմամբ հաւատարմութեան  
հպատակ կացոյց նմա զՓրանդս. որ և օծաւ  
յետոյ թագաւոր 'ի ձեռն Ստեփանոսի Բ հայ-  
րապէտին (1414): Սուրբն Վոնիփակիոս եպիս-  
կոպոս ինդիր Եհարց յայնժամ 'ի պապէն սակա  
մկրտութեան, և Ետ նմա զկարեւոր լուծմունս,  
և վան հարկաւորութեան զձեւ մկրտութեանն

շատացոյց բանիւս . «Մկրաեմ զքեղ յանուն չօր  
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։ Թարգմանեաց ՚ի  
լատինէ ՚ի յոյն զգիրս տրամախօսութեան սրբոյն  
Գրիգորի մեծի ։ Եւ յետ գեղեցիկ կարդաց և  
հանդիսից լաւութեան փոխեցաւ առ աէր տուրբին  
Զաքարիա միով աւուրբ յառաջ քան զիդոս  
մարտի յամին 752, կացեալ յամուն հայրապե-  
տութեան ամս տառն , ամիսս երիս և աւուրբ  
չորեքտասան , և ՚ի նոյն իդոսս թաղեցաւ մարմին  
նորա փառօք . և առ օրին անցուցին զանուն նորա  
՚ի վկայաբանութեան Հռովմայ ։

## ԴՐ

## ՍՏԵՓԱՆՈՍ Բ

Ա. Տ. 752, և կայսերական կոստ կոստ -  
նիմունի 12 :

1414. Ստեփանոս Բ կամըստ ումանց Գ. հռով-  
մայեցի որդի կոստանդեայ սարկաւագ եկեղե-  
ցւոյն Հռովմայ՝ ձեռնադրեցաւ յաջորդ սրբոյն  
Պետրոսի յեօֆժն կաղանդացն ասլրիլի յամին  
752, յետ մահուան Ստեփանոսի Բ պապին  
վախճանելց ՚ի միջոցի երից աւուրց ընտրու-  
թեան յախտէ կաթուածոց զկնի Զաքարիայ .  
որոյ վասն ոչ դասի նա ՚ի կարգս քահանայա-  
պետաց : Արդ հայրապետուայս մեծաւ արթնու-  
թեամբ եկաց անսասան յերեսաց ծանր խոռ-

1 Սուրբ Գրիգոր Ե , Գիրտ 8 . Առաղը 21 . առ-  
լար . հապ . 10 . ծոշ . Եր . 270 : Բելաբմնոս Գիրտ  
2 . յը . գահ . Հա . Գւ . Ճէ : Յովանն . ստրի . ՚ի Հարո-  
սբոյն Գրիգոր . Գիրտ 4 . Գւ . Կէ : Փռուիսու . ՚ի Հապե-  
նադ . 252 . Եր . 1399: Բարոն . և Բան . յան 741:

վաւթեանց ժամանակին . քանզի Աստոլիոս արքայ Լոնգոբարտացոց յարևմուտս կործանելը զլատալիա՝ յափշտակելով զժառանգութիւնս է . կեղեցւոյն հռավմայ, և Կոստանդիին Կոստանդիմոս յարեւելս վեր 'ի վայր առնելը զուզլափառս 'ի պատճառս պատկերամարտ ազանդոյն : Աշխատ եղել Ստեփանոս շահեւ քայցրութեամբ զերկուին . առաքեաց և առ կայսորն զգեստանս թողուլ զմոլորութիւնն զայն և հասանեւ յօդնութիւն յարեւմուտս ընդգեմ՝ թշնամեաց :

Այլ իբրև անյոյս եղել 'ի նոցանէ . չու արարդնալ 'ի Գաղղիա հանդիսաւոր թափօրիւ Սրբութեան ըստ հին սովորութեան, մինչև եհաս առարքայն Պիպին (1413), որ մեծ ապանձ փառօք ընկալաւ զնա և մեծարեալ կատարեաց զոր միանդամ խնդրեալ էր նորա : Ապա յետ հաստատելոյ զուխան Գաղղիոյ և բարեկարգելոյ զեկեղեցիս ընդ առաջնորդաց էօծ հանդիսապես զՊիպին արքայ և զորդիս արքայազունս՝ անուանեալ զնա և զյաջորդս նորա պաշտապան առաքելական դահին : Ուր նորոգեցան և դաշինք Գրիգորի Գընդ Կարոլոսի Մարտելոսի (1412) :

Խոյա խաղացին զօրօք յիտալիա, և Աստոլիոս նկուն եղեալ՝ զիջաւ կամաց պապին և Պիպինի, և դաշն եգ մնալ հաւատարիմ : Սակայն ընդհեռանալարքային անդրէն գլուխ ամբարձ ընդգեմ քահանայապեախն՝ դրժելով դաշանց : 'Եմին իրի անդրէն դրեալ նորա կոնդակս առ Պիպին հրաւիրեաց դալ 'ի վրէժիննդրութիւնն անօրինին : Եւ նորա հասեալ յիտալիա՝ վանեաց զթշնամին, և տիրեալ ամենայն տեղեաց՝ շնորհեաց առաքելական դահին դաշամբք հաստատութեան, ընդարձակեալ զիշխաննութիւնն պապին կուսակալութեամբ հռավեննաց և զքսութեամբ Փերարայ ընդ քաղաքացն Փափենցիայ, Փոլսնի, Կուռ-

նելեայ Ավստրիայի, Անգլիայ, Հումանայ, և Բ.Ռ.  
նոնիայ :

Խակ կայսրն կոպրոնիմոս ։ Ժողով գումարեաց  
յարեւելս յերեքհարիւր երեսունեռութ եպիսկո-  
պոսաց՝ կոչելով զայն եօթներորդ ընդհանուր  
ժողով. յորում Երդուան նոքա ՚ի սուրբ խոր-  
հուրդն՝ մերժել զալատկերս իբրև գործս կուա-  
մաշտութեան : Բայց արի հօտապեսն Սաեփա-  
նոս ընդդեմ զինեալ աղանդաւորացն այիսցիկ  
առաքելական վճռովք և զօրաւոր կոնդակօք՝  
ջրեաց զամենայն արարս նոցա , և ՚նզովեաց ըզ-  
ժողովի զայն և զկոպրոնիմոս և զամենայն սկատ-  
կերամորտս: Այսպէս գերազանցեալ մեծի քա-  
հանայապետին Սաեփանոսի ՚ի կրօնասիրութեան  
և յայլ առաքինութիւննո , և անձնատուր լեալ  
անխնայ ՚ի ծանր աշխատութիւննո ՚ի սէր եկեղե-

1 Կոստանդին Կոստանդինոս յաջորդեալ պատայը իւր  
Լէտոն (1411) լուր նոս գան զնա պատիւը ըստ գումա-  
ռով և մերժեցաւ յիշիստութեան ։ Արդաւահութայ  
կայսերէ : Այս անդէն զօրացեալ յաւարի ես զա-  
դագն զօրաց իւրոց , և եհան զազս Արդաւահութայ և  
երիսու որդուոց նորու : Իսկ զպագրիացին Անտառուս իսո-  
ստիից Արդաւահութայ զապացաւ շրջեառանելընդ գա-  
զագն հեծուացեալ յէլ երես ընդդեմ : Սա վասն այնը  
կուշցաւ Կոստանդինոս , զի՞ ՚ի մերդութեան անդ աղոթե-  
զեաց զաւահանն սուրբ . իբր զի՞ Կօպրօս աղբ լի՞ :  
Զայնունէ այսողէս գուէ Սամուէլ երեց . «Կոստանդին  
որդի Լէտոնի կուշցաւ Կաւալինոս , այսինքն Ռուս-  
ծուալու . զի՞ զօրէն Տաճկաց բնակիւալ էին առ ադն Ա-  
լիսու գետու . իսկ նա հրամայեաց նրիւ ծովովնել և ար-  
կանէլ ՚ի գետն . և նոցա գետնեալ ահաբէ է էղեն , իար-  
ծեալ անթիւ լեալ զօրացն , և դախուեան ՚ի նմանէ :  
Պատմի ՚ի միաւմ առաւր զինի միմեանց հինգ առաջած սպա-  
նէալ սորաց : Ժաման . յաժմն նիւն :

ցւոյ, վոխեցաւ առ տէրյութ կաղանդացն մայ-  
իսի յամին 757, կացեալ 'ի հայրապետութեան  
ամս հինգ և աւուրս քսանեինն : Սորա գտանին  
առ մեօք հինգ նամակը և սահմանիք ինչ<sup>1</sup> :

## ԴԵ

## Ս. ՊՕՂՈՍ Ա

Ա. Տ. 757, և իայսերութեան Կողբոնի մոսի 17:

1415. Պօղոս Եղբայր Ստեփանոսի Բ և սար-  
կաւագ Եկեղեցւոյն Հռովմայ՝ ընարեցաւ քահա-  
նայապետ 'ի հաւանութենէ ամենեցուն սակս  
գերակատար առաքինութեանց երեւլոց 'ինմա :  
Որոյ չեւ ևս ձեռնադրեալ գրեաց նամակ առ  
Պիմին արքայ և ծանոյց նմա զփոխումն հարա-  
զատին և զընտրութիւն իւր : յուշ արարեալ և  
զհաստատութիւն դաշանցն մնալոյ նմա մտերիմ  
և պաշտպան առաքելական գահին : Զեռնա-  
գրեալ ապա հայրապետ, իմաստութիւն վարեաց  
զիշխանութիւնն ամս տասն և աւուրս երեսուն :  
Ի շորորդ ամի քահանայապետութեան իւրոյ  
դրեաց նամակ յորդորանաց առ նոյն արքայ Պի-  
մին նուածել զարքայն Լոնդոնքարտացւոց զԴեսի-  
դեր : որպէս զի անթերի յետա դարձուոցէ զժա-

1 Բարձն . յամն 752 : Բաէ . յամն 886 . Լուդուկ .  
Թօնդմ . յու . վար . հին և նոր Եկեղ . հագ . 3 . գիւտ 1 .  
Գւ . իւ . 8 : Լեռոն Ռաֆիայ . Գիւտ 1 . ծամ . Գւ . Է :  
Անտափ . ի վարս սորա . հագ . 1 . Եր . 201 : Թէ . Ի :  
Ի ծամ . Եր . 285 :

ռանդութիւնս սըբոյն Պետրոսի, զիրաւունս +  
զտեղիս, զոահմանս և զկալուածս զանազան քա-  
զաքաց հասարակապետութեան չոռվմայ. որ-  
պէս և եղե իսկ : Աշխատ եղե կարի յոյժ շա-  
հել զամբարիշտն Կոպրոնիմոս. որ ոչ միայն առ  
սրբազան պատկերս, այլ և առ միանձունս գըժ-  
նեանայր. առաքեաց առ նա գեսպանս և կոն-  
դակս, այլ ՚ի զուր :

Եւ ինքն սուրբ հայրապետն տեսեալ զի դամ-  
բարանք և պահարանք մարմնոց սրբոց որ էին  
շուրջ զքազաքաւն չոռվմայ. քանդեալ էին՝ ի յար-  
ձակմանց անախ Լոնդոբարտացւոց՝ փոխադրեաց  
զմարմինս նոցա ՚ի քաղաքամիջի, կառուցեալ  
նոցա եկեղեցիս ՚ի պատշաճաւոր տեղիս : Յորս  
էր և մարմին սրբուհւոյն Պետրոնիլայ գտերերա-  
նելոյն Պետրոսի առաքելոյ : Զարմանալի էր  
նորա գութ առ աղքատս, մանաւանդ առ հի-  
ւանդս և առ բանտարկեալս. առ որս գիշերայն  
երթեալ դաղտ յայլոց՝ անձամբ դարմանէր. Մի-  
անդամայն և բնաւ զկասէր յուղելոյ զանուղ-  
զայ հերձուածողս : Այսպիսի առաքինու-  
թեամբ քաղաքավարեալ նորա փոխեցաւ առ  
տէր ՚ի չորս կաղանդացյն յուլիսի յամին 767 :  
Սորա քանեներկու նամակք յածին առ մեօք :

Ի նմին աւուր գուքսն Դոգոն զօրութեամբ  
արքային Լոնդոբարտացւոց յինքն յանկուցեալ  
զոմանս ՚ի կղերաց՝ եղ զաշխարհիկ եղբայր իւր  
զկոստանդին յաթու քահանայապետութեան  
առանց կանոնական սահմանադրութեան, զոր և  
ձեռնադրեաց եպիսկոպոսի Պրենեսատի : Այլ  
յետ սակաւուց պատուհասեալ եպիսկոպոսին՝  
գոսացան ձեռքին, որ յանդգնեցաւ առնել զձեռ-  
նադրութիւնն զայն հակառակ օրինաց, որ և զրա-  
ւեցաւ ՚ի կենաց չարաշար : Իսկ գերասպապին  
կոստանդին յետ կալոյ բռնի յաթուն զամլաւ

Երեքտասահն՝ արդելաւ 'ի բանտի և կուրացաւ  
'ի զօրականաց առ 'ի ողատիժ յանցանացն :

Դ

ՍՏԵՓԱՆՈՍ Գ

Ա. Տ. 768, և կայսերական կոպրոնիմոնի 28:

1416. Յետ մերժելոյ յառաքելական գահէ  
զկոստանդին դերապապ՝ ընտրեցաւ ըստ օրի-  
նաց Ստեփանոս սիկիլիացի որդի Ողիվի 'ի նո-  
նայս օգոս. յամին 768: Որ առ ժամայն հրեշ-  
տակս արձակեաց առ Պիտին արքայ նորոգել  
զգաշինս. բայց զի չերնա կենդանի, արքայորդիքն  
մեծն, կարուոս և կարլոմաննոս մեծարեալ զնո-  
սա՝ առ արքեցին երկոտասանն եպիսկոպոսունաներ-  
հունս գաղղիոյ 'ի ժողով պապին. յորումն զո-  
վեցաւ պատկերամարտութիւնն և ժողովակն կո-  
պրոնիմոսի (1414). գատեցաւ և կոստանդին  
դերապապ: Սահմանեցան յոլով վճիռք և կա-  
նոնք ընդդեմնոցա՝ որք զհետալինին պատուոյքա-  
հանայապետութեան և որոց յաշխարհիկ կար-  
դէ 'ի վեր ելանել ժապրհին, յայն աստիճանն նախ  
քան վլինել սարկաւադ կամ երեց և անցեալ  
'ի կարդինալական պատիւ: Խսկ յաղադս ձեռ-

1 Առ Լաբ. հապ. 6. ժող. էլ. 1675: Պետրոս  
Լամբեէիսոս. գիրք 2. հապէն. կեսար. գլ. է. էլ.  
322: Բարոն. յան 757, և 767:

2 Անոնս կարդինալ շառագին 'ի վարս այսր  
հայրապէտի 'ի էլլը ածին. որ 'ի նախնուունն հասարակ  
էլ ժահանայից և սորիասագաց մայր էլլէշետց էրն-  
ուէլի ժաղադաց. այլ 'ի մշտառաներու դարու սէժո-  
իոնն մայն ժահանայից և սորիասագաց էլլէշ-

նագրելոց՝ ի դերապատէն՝ օրէնք եղան . զի դարձցին յառաջին վիճակ , և ապա դիմեալ առ գահն գտցեն շնորհս և ընկացին անգրէն զօրհ . նութիւն հաստատութեան՝ ի ձեռաց օրինաւոր քահանայապետին Ստեփանոսի :

Նա ինքն հաստատեաց՝ զի եօթն եպիսկոպոսունք կարգեսցին կարգինաւը շաբաթականք պաշտել յեկեղեցւոջ Լատերանու կամր'ի խորանն սրբոյն Պետրոսի յիւրաքանչիւր կիւրակէի զհանգիսաւոր պատարագս , Երգելով ափառք՝ ի բարձունաց . որք էին Եպիսկոպոսունք Ռատիայ , Պորտուայ , Հռուտիինայ , Ալբանիայ , Սարիոյ , Տուկուլայ , Պրենեստեայ : Խոկ մեծ քահանայապետն Ստեփանոս յետ բարեկարգելոց զեկեղեցին ամս երիս , ամիսս հինգ և աւուրս քսանեաթն , վիխեցաւ խաղաղութեամբ՝ ի կաղանդս միետ . յամին 772<sup>1:</sup>

## ԴԵ

### ԱԴՐԻԱՆՈՍ Ա

Ա. Տ. 772, և իայսէրութեան Կապրոնիմունի 32 :

1417. Աղքաղիանոս հռովմայեցի որդի թէոդորոսի սարկաւագ կարգինաւը և գերահոչակ

ցւոյն Հռովմայ , ապա և էպիսկոպոսաց . ուրժ՝ ի հայրապէտութեան Աղլեւանուորի գ. և այսոր Ճոխացէալս իւնանութիւնն սանին շարդ և իրաւունն ընդունույ զատաց յինչեանց և լի :

1 Անաստատակ . ի վարս սուրա . եր . 227 : Աղլեւանուոր Նատա . ի պատմ . էկէլ . դար շ . գլ . յօդ . 8 : Բարոն . յամն . 772 : Բանա . գիր . 2 . յլ . պատա . գլ . դ . 5 : Առարտաբորիոն . վլճ . 61 :

իմաստութեամբ և հոգեւոր նախանձու և սրբութեամբ՝ օծաւ պատ՚ի հինգ իդոսացն վիետ • յամին 772, և վարեաց զիշխանութիւն եկեղեցւոյ մեծագոյն արդեամբք ամս քսանեերիս, ամիսսատան և աւուրս էօթնեւտասն : Սա կարի աղքատասէր լեւալ և ողորմած, 'ի սկզբան անդ ժողովեալ զհարիւրաւոր աղքատս կերակրէր 'ի պաշտան իւրում: Բարեկարգեաց զեկեղեցականս և զեպիսկոպոսունս մինչև ցսահմանս Վենետիոյ գրեաց կոնդակս առ մեծն կարոլոս արքայ Գաղղիոյ, զի ըստ նմանութեան հօր իւրոյ Պիպինի պաշտպան կացցէ եկեղեցւոյ ընդդէմ Լոնդոնարտացւոց յափշտակողաց զվիճակս և զժառանդութիւնս Հռովմայ ընդդէմ դաշնոցն (1414): Եւ կարոլոս հասեալ 'ի թիկունս քահանայապետին՝ պաշարեաց զԴեսիդեր արքայ նոցա 'ի Պատիտ . և ինքն անցեալ 'ի Հռովմ կատարել զոօն յարութեան՝ իբրև մերձեցաւ 'ի դուռն եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի, խոնարհեալ խորին ակնածութեամբ Երկիր եպադ յիւրաքանչիւր ատտիճանս մեծի գրան, մինչև եհաս առ պապն Ագրիանոս, որ կայր առ գրան, և համբուրեաց զաջնորա: Ի կաթողին գրկախառնութեան անդ գթած հօր և բարեպաշտ զաւակի սողաղակեաց ժողովուրդն բարձրաձայն, Ովսաննայ որ գայ յանուն տեառն: Ապա յայց ելեալ 'ի միասին նշխարաց սրբոց կատարեաց արքայն զուխտիւր 'ի սուլք պասեքին:

Եւ յետ ցուցանելոյ միմեանց սէր և սկատիւ փոխագարձ, հաստատեաց արքայն զգաշինս հօր իւրոյ, շնորհելով առաքելական գահին ոչ միայն զառաջին սահմանս ընդ կուսակալութեան և կալուածոց, այլ յաւել և զայլ ժառանդութիւնս ընդարձակեալ զիշխանութիւն պապին: Յետ այնորիկ մեկնեալ 'ի Հռովմայ չոքաւ 'ի Պատիտ,

և առեալ զքաղաքն՝ գերեաց զԴեսիգեր արքայ  
ընդ թագուհւոյն և ընդ աւագանւոյն Լոնգո-  
բարտացւոց յամի 774. զորս խաղացոյց ընդ իւր  
՚ի Գաղղիա, վերջ տուեալ միանգամայն թագա-  
ւորութեան նոցայ խաղիա՝ որ տեսեաց զամս 206:  
Մեծն կարողոս դարձեալ ուղևորեցաւ՝ ի Հռովմ  
առ անձուկ սիրոյն, առեալ ընդ իւր զթագու-  
հին իւր և զարքայօրդիս զՊիպին և զլուդովիլիկոս  
զորս մկրտեալ քահանայապետին՝ էօծ զառա-  
ջինն արքայ Լոնգոբարտացւոց և վերկրորդն Ա-  
գութանիոյ : Յայնժամ կարողոս շնորհեաց  
հայրապետին և յաջորդաց նորա զերկիրն Սաբի-  
նեան, և ինքն տարապեալ ըստ իւրում իմաս-  
տաւեր տենչանացն հաւաքեաց զկոնդակս և  
զվճիռս քահանայապետաց չռովմայ, և գիրս յօ-  
րինեալ՝ ընծայեաց մեծի հայրապետին : Իսկ  
պապն հրաման արար այնուհետեւ կապարաւ կըն-  
քել զկոնդակս իւր՝ ի հաստատութիւն, որ մինչեւ  
ցայն վայր մոմով կնքեին : Զայս ամենայն փառա-  
ւորութիւնս լուեալ յարմելս կոսաանդեայ Ե-  
կայսեր ընդ Եռինեայ մօր իւրոյ ուրախացաւ  
յոյժյոյժ, և միացեալ ընդ մեծի քահանայապե-  
տին և ընդ Տարասիսի պատրիարքին խաղաղա-  
ցոյց զարևելեան եկեղեցին յերեսաց պատկերա-  
մարտից և այլոց հերձուած ողաց :

1 Կողունիմոս յէտ բազւամամբարզութեանց հուսէ  
յէտոյ պապուհունեցու՝ ի գետոնէ անընը գունչանօտ .  
պէտրին նորա ապահոննեալ յածուի Շաբաշու, և իւլիա  
պատին : Իսկ ուրին նորա լէսոն Պա, ու յաբագակնեալ է՛  
յէին պէտոյ զուի պատին Յօնիսալ Ասպուծոց յարժայէն  
Մասրիպանիոյ և էդէալ յիւր գլուխն մանօրինակ պապ-  
ծուի լըտուեցաւ՝ ի էեւաց : Զոր յաջորդեաց պասնումէաց  
ուրին կոսապանդին Ե ընդ մօր իւրոյ Եռինեայ բա-  
րեպաշտ ուլուոյի :

Աղբիանոս կամեցաւ արմատախիլ առնել  
զհերձուածն զայն բազմօրեայ 'ի ձեռն ընդհա-  
նուր ժողովոյ, զոր ետ կայսրն գումարել 'ի Նիկիա,  
ուրանօր առաքեցան հրեշտակը պապին, ընդ-  
որս Երեքհարիւր և յիսուն հայրապետք միա-  
բան գատապարտեցին զբանկերամարտութիւն  
(916): Զայն ժողով հաստատեաց Աղբիանոս  
պապ ծայրադոյն իշխանութեամբն, և երիցս  
գումարեաց ժողով 'ի Հռովմ վասն ստուգելոյ  
զնշխարս Կանդիտոսի մարտիրոսին, վասն քեցե-  
լոյ զՓելիքս որդեղացի յասելոյ զԲրիտոսո որդե-  
գիր, և վասն հաստատութեան ժողովոյն Փրանիկ-  
փորտիոյ դատապարտողի զՓելիքս և զԷղիպան-  
դոս Եպիսկոպոս Տոլետայ (1182). զոր եա գու-  
մարել մեծն կարոլոս յերեքհարիւր Եպիսկոպո-  
սաց Գաղղիոյ, Գերմանիոյ, Խտալիոյ և Բրիտա-  
նիոյ ընդ կրկին հրեշտակաց պապին յամի 794:

Յետ այսր ամենայնի մեծքահանայապեան Ա-  
ղբիանոս հասեալ 'ի վախճան կենաց իւրոց՝ եթող  
զաշխարհ անցաւոր և փութացաւ առյաւելիու-  
նական երանութիւն յութ կաղանդացն յունվ.  
յամին 795. զոր իբրեւ լուաւ մեծն կարոլոս՝ ոչ  
դադարէր 'ի լալոյ, և պատուիրեաց ազօթս  
վասն նորայամենայն վայրս տէրութեան իւրոյ.  
և ինքն բարեպաշտութեամբ իւրով յաջողեցաւ  
յամենայնի, միշտ յաղթական լեալ 'ի վերայ  
թշնամեաց իւրոց, և մեռաւ նա Եօթանասուն և  
երկու ամաց :

1. Տըիդենիսս. յղ. եկ. յապէն. գլ. մծու: Նիկո-  
լայս Աղեմանսս. յղ. լապէր. գլ. ծթ: Պէպրսս  
Մարի. գիրտ 1. յղ. հոմ. գոհ. և իայս. գլ. ծթ.  
6: Միկոլոգսս գլ. ծե: Եգինարդսս 'ի վարս կո-  
բու. գլ. ծթ:

## ԴԱ

Ա. ԵԵՒՈՆ Գ.

Ա. Տ. 795. և Քայսերութեան կողմանորդեայ Զ. 6:

1418. Ի վաղիւ անդր յետ թաղման Ազրիանոսի՝ Լեւոն Երէց հռովմայեցի որդի Ազուբիոսի այր առաքինակրօն բարձրացաւ 'ի պատիւքահանայապետութեան 'ի վեց կաղանդացն յունվ յամին 795: Որ ընդ սրբութեան վարուցն և յառառուածային և յարտաքին հմտութիւնս լեալներհուն 'ի հաւանութենէ ուխտին և ժողովրդեան անյապաղ օծաւ պապ, և փութացաւ առաքել գեսպանս տռ. Կարոլոս արքայ Գաղղիոյ առ 'ի վերստին հաստատութիւնդաշանցն պաշտպանելոյ զեկեղեցին: Եւ նա փոխանակաւ 'ի ձեռն Անկիլըերտեայ արքայի առաքելոյ յիւրմէ 'ի Հռովմաղանեաց զլեւոն, զի հաստատեսցէ ըզպատրկութիւն իւր. որոյ իրաւամբք առեալ էր զէնս պաշտպանութեան եկեղեցւոյ ըստ նմանութեան հօրն և հաւուն (1412): Սապէս և Լեւոն դարձեալ առաքէր առ արքայն հրեշտակս ընծայատարս, նա և զոսկի բանալիս գերեզմանի սրբոյն Պետրոսի և զգրօշ քաղաքին Հռովմայ. այնու առեւեալ Կարոլոսի զիշխանութիւնն պաշտպանելոյ զեկեղեցին, և այսու անպակաս պահելոյ զահման Հռովմայ: Բայց նա ոչ 'ի մին և ոչ 'ի միւսն թերի գտաւ երբէք:

Յայնժամ յարեաւ 'ի տանէ Ազրիանոսի և յոմանց յաշաղկոտաց բուռն հալածումն ընդդէմ սրբոյն Լեւոնի. և վասկեալ զեա 'ի բանտի հատին զեղուն և զրկեցին զնա յաշացն, այլ տեր պահեաց զնա ողջ և զերծոյց 'ի Գաղղիա: Ուր

մեծն կարողոս մեծարեալ զնա և սիրովիեալ՝ անձամբ եկն՝ ի Հռովմե խաղաղացոյց զաղմուկն, և քահանայապետն մեծաւ վառօք և ընդունելութեամբ դարձաւ յաթոռ իւր:

Տեսեալ սրբոյ հայրապետին՝ թէ կայսերք Յունաց յապականութենէ աղանդաւորաց ոչ միայն պաշտամն եկեղեցւոյ չեին, այլ և ընդ ակամբ հայէին, որով օր ըստ օրէ նուազէին յերեքհարիւր ամաց հետէ: «Մին իրի յաւուր ծննդեան վրկչին իրու մեծն կարողոս յազօծո կայր՝ ի Աստիկանեան տաճարի սրբոյն Պետրոսի, շարժեցաւ ոգի քահանայապետին, և յարուցեալ անդէն թագ կապեաց նիս և էօծ և անուանեաց զնա հանդիսապէս կայսր Հռովմայ առանց գիտելոյ նորա ինչ: Յայնժամ հռչակեցաւ ընդ քաղաքն և ընդ աշխարհ ամենայն նորոգութիւն կայսերութեան Հռովմայ յարևմուտս. մինչեւ նոյն խակ արեւելեան կայսերաց լինել հաւանելի:

Ընդ այն ժամանակս յահագին դետնաշտրժութենէ որ եղեւ յիտալիա, կործ անեցաւ գրմբէթ սրբոյն Պօղոսի, և եղեն քանդուածք՝ ի բազում աեղիս: Խակ պատն հոգ տարեալ նորոգեաց զայնոսիկ. և պատուիրեաց պաղատանս տոնել յեկեղեցիս զաւուրս երիս յառաջ քան զհամբարձումն. որով գաղարեցաւ պատուհանն այն:

Ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ գտաւ սքանչելեօք՝ ի Մանդուա վիրկագործ արիւնն հոսեալ՝ ի կողից վրկչին, զոր բերեալ էր անդը Ղունկիանոս հարիւրապետ և թաղեալ առ ահի հալածանաց<sup>1</sup>: Ընդ որ ոչ միայն ցնծացաւ հո-

1 Ընդ այս սուրբ արեան գտաւ և այսոքիոի յիշապահութեան՝ ի Լուսին բարբառու. «Ես Ղունկիանոս նընդին հարիւրապետ է ու ընդ զի՞նուալու ու դարձուալու համար».

գւով և եռանդեամբ քահանայապեան ընդող ջոյն հօտին, այլ և գնացեալ յերկրպագութիւնն էդ յարգութեամբ յեկեղեցւոջ սրբոյն Անդրէի անդ 'ի Մանդուա, ուր պաշտի մինչեւ ցայսօր : Կոյնապէս կարուլս կայսրն բարեպաշտախորհրդով գնացեալ անդ յերկրպագութիւնն յայտ արար զեռանդն սրտին ընդ այն ճշմարտութեամբ :

Սուրբն Լեռն գումարեաց 'ի չոռվիմ ժողովս 'ի խնդրոյ մեծին կարուլսի ընդդէմ Փելիքսի և ընդդէմ զբարարազաց իւրոց : Որ և յետ ժողովյին Ագուխկրանեայ ետ փորագրել զհանգանակների նիկիոյ և կոստանդինուպօլսոյ յերկուս արծաթի տախտակս յունարէն և լատիներէն, և զնել 'ի տաճար սրբոյն Պետրոսի (1002) : Ապա յետ կառավարելոյ զեկեղեցին սրբութեամբ և արիութեամբ ամս քաան, ամիսս հինգ, և աւուրս վեշտասան, փոխեցաւ առ աէր յութ իդուացն յունիսի յամին 816<sup>1</sup> :

առաջնաւ 'ի Յիսոս, զայս արիան հոսնաւ 'ի իւշից նորին Յիսոսսի խալչունց յետամբ մերոց զինուարաց առի և յայս ուելի վասն նշնամեաց հաւապոյ և հայ հոյլաց Յիսոսսի նագուցի, մինչև Աստուած համեսցի յայպնել ճշմարիս պաշտօնելու իւրաքանչիւր իւրաքանչիւր :

1 Ավագանիպոս Սպրաբոն յղ. իւ. եկեղ. գլ. ին : Կիւռ. Աղեմ. պապ. իպալ. հապ. 8. 5. գ. 54: Կառանդիս յան 796: Ուրեմնիս Ալիք. պապ. եկ. եր. 454: Բարս. յան 804: Անին. գիր. 4:

## ԴԵՊՐ ՈՒԹԵՐՈՐԴԻ ԴԱՄԱՒՆ

Ա. Տ.

703. Եղիա կաթողիկոս յաջորդէ զԱմահակ :
713. Կորմոն կարգի առաջին թագաւոր Տանի մարքայ :
714. Սուրբ Գերմանոս նատի պատրիարք՝ ի Կոստանդինուպօլիս :
718. Յովհաննէս չորրորդ Խմաստասէր կաթողիկոս հաստատի :
722. Հրեայ ոմն՝ սուտ մշսիա յայտնի յԱսորիս :
723. Լեւոն կայսր ստիպէ զՀրեայս հաւատալ՝ ի Քրիստոս :
725. Գերմանիա գարձեալ՝ ի քրիստոնէութիւն՝ Վինիփրիդոս ձեռնադրի եպիսկոպոս նոցա :
729. Դաւիթ Անսակ կաթողիկոս :
735. Յուզմունք պատկերամարտութեան՝ ի Յոյնս :
737. Վահան գողթնացի նահատակի :
741. Տրդատ Այ յաջորդէ զկաթողիկոսութիւն :
744. Սկիզբն աւերտութեան Մաճառաց :
755. Աթոռ ամիրասպետաց վիտիի՝ ի Բաղտատ :
764. Տրդատ Բ կաթողիկոս :
767. Սիոն կաթողիկոս :
768. Կարոլոս մհծ՝ թագաւոր Փրանքաց, ապա կայսր արևմտեան հանդիսանայ :
775. Եսայի կաթողիկոս :
785. Սոքսոնիացիք գառնան՝ ի հաւատու :
786. Սահակ և Համազասպ վկայեցին :
788. Ստեփանոս Ա կաթողիկոս :
790. Յովալ յաջորդէ զիս :
791. Սողոմոն յաջորդէ զՅովալ :

792. Գեորգ Ա. յաջորդէ զլովոմոն :

796. Յովսէփ Բ. յաջորդէ զԳեորգ կաթողիկոս:  
 Զայնու ժամանակաւ պայազատէր 'ի Հայու  
 յետ Սմբատայ բիւրատեան Կաշմ ոստիկան. ա-  
 պա Վկլթ. ապա Մահմէտ. ապա Ապդլազիզ.  
 ապա Մըռուան Ա, որ յետոյ Եղե ամիրապէտ :  
 Յետ նորա Աշոտ պատրիկ . ապա Եղիա Ա. ա-  
 պա Սահակ պատրիկ . յետ նորա Սիւլէյման :  
 ապա Պէքիր, և ապա Հասան : Խոկ 'ի 781 իշ-  
 խանք Հայոց առանձինն պայազատեն զազդե  
 ամս հինգ . յետոյ Եղիա Բ. ապա Խոռոչիմա 'ի  
 798 :

## ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՅ

ՆԹ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ Դ

Ա. Տ. 816, և կայսերութեան Լուսովմիկոսի Պիտոսի  
3, և Լեռնի արծրուանոց 4:

1419. Այս Փառականութեան հոգալու համար կազմակերպութեան մասին շահութեաց զառարեն Լեռոն գ յախոռու քահանայապետութեան 'ի տասն կաղանդայն յուլ. յամին 816: Որ ընդ նստելն հրաման ե հան ժողովրդեան Հուսովմայ երգնուլ զերդումն հաւատարմութեան Լուգովմիկոսի Պիտոսի որդւոյ մեծին կարողութիւն (1417). որպէս զի այնու սան ձահարեսցէ զնոսա չմտաբերել յապստամբութի ընդգետ դլիսոյ եկեղեցւոյ . որպէս արարեալ էին առ Լեռոնիւ գ: Ապայետ սակաւուց իբրև էանց 'ի Գաղղիա, արքայն առ 'ի պատիւ եհան ընդ առաջ նորա զաւագանին, և յետ նոցա ինքն շքու մեծաւ հանդիսակալ նմա առ երի Հուեմն քաղաքին՝ երիցս երկիր եսկադ 'ի համբոյր դար շապարուց նորա, և վայելքական մեծարանօք ընկալաւ զնա և հանդոյց: Եւ սրբոյ հայրապետին օրհնեալ զարքայ՝ էօծ զնա թագաւոր Գաղղիոյ ընդ իրմինդանդիայ թագուհւոյ նորա: Ընդ որ ցնծացեալ արքային և ժողովրդեան՝ յարդութեամբ սրտի և ոգւոյ մեծարեցին զհայրապետն որպէս արքանն էր: Ապա 'ի յաջորդ կիւրակեի հանդէս կաղմեալ յեկեղեցւով հայրապետն հանդէրձ ուխտիւն և ժողովրդեամբ՝ քահանայապետական օրհնութեամբ: Էօծ զլուդովմիկոս կայոր

Հռովմայ. Եղեալ՝ ի գլուխ նորա ոսկի պատկ ա-  
կանակապ և զարմանագործ, զօր ընդ իւր տա-  
րեալ էր անգր. իսկ զթագուհին մեծարեալմակ-  
անուամբս Օգոստուհի, եղ և՝ ի գլուխ նորա  
զոսկի թագ: Արգարեւ ըստ մեծութեան գոր-  
ծոյ քահանայապետին մեծ եղեւ սէր և պատիւ  
նորա յամենաքրիստոնեայ կայսերէն, որ ըստ  
նմանութեան հօր իւրոյ մեծին Կարոլոսի պարտ  
ուպատշաճ պատուով մեծարեաց զնա և մե-  
ծարեցաւ. մինչև ասկա ՚ի սկիզբն նոյեմբերի  
դարձաւ սուրբ հայրապետն յաթոռ իւր. ուր  
փառաւորեաց զնա և Աստուած զանազան հրա-  
շագործութեամբք: Ապա յինն կազանդացն փետ-  
յամին 817 փոխեցաւ առ Քրիստոս, կացեալ յիշ-  
խանութեան իւրում ամիսս եօթն ։ :

## Ճ

## Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. Տ. 817, և իսուսքութեան Լուտվիկուսի 4.  
և Լէսնի 5:

1/20. Ի վաղիւ անգր յետ մահուան Ատե-  
քանոսի Դ ընտրեցաւ քահանայապետ այրն փա-  
ռաւոր գիտնական և առաքինի Պատքաղէս հոսվ  
մայեցի սրգի Բռնոսի: Որ զառաջինն փոյթ կա-  
լեալ վասն չինութեան եկեղեցւոյ, առաքեաց  
զթէոգորս անուանագիր հրեշտակ առ կոյսրն  
Լուգովիկոս Պիոս ասկո նօրագելոյ զդաշինս հօրն

1 Թէոդոր. Ապունիոս. Գիբտ 1. Լուտվ. 55:  
Բանա. Գիբտ 1. յլ. պատ. Գլ. Ճը. 5: Թէոդոնս.  
Գլ. Ճը. Ճէ. առ զարտիանոսի Բաժ. 65: Բանա.  
յան 816: Բաժ. 817:

և հաւուն՝ պաշտպան լինելոյ եկեղեցւոյն հռովմայ : Կայսրն ոչ միայն կատարեաց զամենայն առաջարկութիւնս նորա , այլ և օրինադրեաց հանդերձ տառըագրութեամբ իւրով և որդւոյն՝ զի մի այլ ևս պահանջեսցի հաւանութիւն կայսերաց վասն ընալութեան քահանայապետաց : այլ զի յետ օծութեան և եթ յղեսցեն դեսպանըս առ թագաւորս : Յետ հաստատելոյ զամենայն երկիրն՝ զօր նախորդք իւր պարգևեալ էին առաքելական գահին , յաւել և ինքն ՚ի վերայ զՍիկիլիա , զՍարդենիա և զԿալաբրիա : Զայս սիկ արարեալ եգ և օրէնս մնալ հաստատուն ՚ի փոխտգարձ բարեկամութեան :

Յետ այսորիկ կարգեալ կայսեր զորդի իւր ըդ կոթարիոս գահակից և արքայ խոալիոյ՝ տուաքեաց զնա յիտալիս , զի իբրև ժառանգ տէրութեան ընկալցի ՚ի քահանայապետէն զթագն Լոնդոնորտաացւոց և զմականուն Օգոստոսի կոյսեր : Յաւուր յարութեան փրկչին կատարեաց պապն զոյն հանդէս մեծաւ շքով ՚ի տաճարի սրբոյն Պետրոսի , և շնորհեաց նմա զամենայն իրաւունս իշխանութեան , զոր ունէին նախնի կայսերք ՚ի վերայ հռովմայեցւոց : Եւ այսպէս սուրբ հայրապետն յետ առաքինանալոյ ՚ի վարս սրբութեան և ովորմածութեան հանդերձ բարեկարգութեամբ , և յետ տանելոյ զբարարութեանց (1128) փոխեցաւ յաստեացս ՚ի չորս խոսացն մետր . յամի 824 , կացեալ յիշխանութեան ամս և օթն և աւուրս եօթնետասն :

1 Բարսն . յամն 817 : Աֆոբարդոս . ՚ի լզ . սղբ . ամ լոդ . գլ . վ . համ . 2 : Բակ . յամն 823 :

## ՃԱ

## ԵՒԳԻՆԵՈՍ Բ

Ա. Տ. 824, և կայսերական լուսավորին 11,  
և Միջակէլի 5:

1421. Յետ մահուան սրբոյն Պատքաղեսի Ա  
ժողովուրդն Հռովմայ անմիաբան լւալընարու-  
թիւն նորոյ հայրապետի, Լոթարիոս որդի կայ-  
սեր առաքեալ 'ի հօրէ իւրմէ 'ի Հռովմը եքարձ  
զտարաձայնութիւն նոցա. և ընտրեցին միաբան  
հաւանութեամբ զԵւգինեոս աւագերէց վիճա-  
կաւոր սրբոյն Սարինայ, և օծաւ նա պապ 'ի չո-  
րէքտասահն կաղանդացն մարտի յամին 824 :  
Եւ էր նա Հռովմայեցի զարդարեալ բարեկար-  
դութեամբ և ողորմածութեամբ, որդի Բոյե-  
մոնդոսի: Լոթարիոս ողջագուրեալ զնա ամե-  
նայն պատուով հաստատեաց առ Ժամայն զահ.  
մանագրութիւնն որյաղագս ընտրութեան նո-  
րա: Կոյնօրինակ Եւգինեոս պատուասիրեալ  
զնա մեծարեաց ըստ օրինի իբրև զորդի իւր և  
Ժառանդ կայսերութեան Հռովմայ: Ապա ուշ  
եդեալեկեզեցականբարեզարդութեանց՝ ժողով  
դումարեաց 'ի Հռովմը վաթսուն եպիսկոպոսաց,  
և կանոնաւորեաց զվարդապետութիւնս եկե-  
ղեցւոյ, զհրահանգո կղերիկոսաց և ծիսից և այ-  
լոց իրաց: Եւ զկնի երից ամաց հայրապետու-  
թեան իւրոյ փոխեցաւ առ տէր յօդոստոսի, յա-  
մին 827 :

1 Տարեգը. Բէրդինեանի, յամ 824: Կիտիոնիս,  
և Գրանլիսիս Բակ: յամ 824:

## ՃԲ

## ՎԱՂԵՆՏԻՆՈՍ

Ա. Տ. 827, և կայսերական լուդովիկոսի 14,  
և Միտայէլի 8 :

1422. Վաղենտինոս հռովմայեցի որդի Պետրոսի նախաստրկաւագ՝ առ օրին յաջորդեաց զԵւգինէոս առ մեծի համբաւոյն լաւութեան, թէպէտ և ընդդէմ կամաց իւրոց. որ և փառօք մեծաւ ձեռնադրեցաւ պատք : Սակայն կարճատելեալ՝ զկնի քառասուն առուրց փոխեցաւ յառաեցս, չժամանեալ առնել ինչ 'ի լաւագունից ըստ մեծութեան հոգւոյն :

## ՃԳ

## ԳՐԻԳՈՐ Դ

Ա. Տ. 827, և կայսերական լուդովիկոսի 14,  
և Միտայէլի 8 :

1423. Գրիգոր հռովմայեցի որդի Յովհաննու յաջորդեաց զՎաղենտինոս 'ի ստիպելց ուխտինեւ ժողովրդեան հակառակ կամաց իւրոց, որ և առ խոնարհութեան անքառական համարեալզանձն մեծի իշխանութեանն այնորիկ՝ թաքեաւ յեկեղեցւոյ, զի մի՛ ոք տեսցէ զեա. այլ կղերք յերեան բերեալ բարձրացուցին զնոնարհն յաթոռ քահանայապետութեան հռովմայ 'ի քսանեցորս սեպտ. յամին 827 : Յապաղեցաւ

1 Մաբիլլանիս . ԳԼ. ՃԸ : Բարչոն . յամին 827 :

օծութիւն նորա , մինչև Եկեղեց գեսական 'ի կայ-  
սերէ և քննեաց զբանաւութիւնն օրինաւոր : Յետ  
հանդիսաւոր ձեռնադրութեան ձեռն էարկ  
Գրիգորնորոգելզբաղաքն Աստիա՝ ամբացուցեալ  
սլարսպօք ընդդեմ Սարակինոսաց . որոց տի-  
րեալ Սիկիլիոյ յաւար հարկանելին զծովեզերեայ  
քաղաքս Խտալիոյ . զոր և անուանեաց յանուն  
իւր Գրիգորեան քաղաք : Կոյնապէս ջան եդ 'ի հո-  
գեորս նորոգելզամենես սին . մանաւանդ զարեկ-  
էան եկեղեցին , ուր անապակաս էին աղանդա-  
ւոր Պատրիքամարտք :

Առ ժամանակօք հայրապետութեան Գրիգորի  
յամին 828 Վենետիկեցիք անցեալ նաւու յՆ-  
ղեքսանդրիա , և մտեալ 'ի վանս սրբոյն Մարկո-  
սի , որ արտաքոյ քաղաքին , զանխուլ 'ի կրօնա-  
ւորաց բարձին զմարմին սրբոյն Մարկոսի և փո-  
խադրեցին 'ի Վենետիկ : Ուր յամին 829 դուքսն  
Յովհաննես Պալտեկիստակիսոս հիմնեաց զեկեղե-  
ցի յանուն սրբոյն Մարկոսի , յոր հանգուցին 'ի  
հետեւեալ ամի զառւրբ մարմին նորա <sup>1</sup> : Ի նմին  
ամի հաւանութեամբ քահանայապետին Գրի-

1 Այս էլենշետի շահազին շինեցաւ 'ի անշնչաղն սար-  
էւ առմար սրբոյն թագութեանի . առու 'ի 975 հրիել  
լեալ անդրէն շինեցաւ հայուսապ 'ի 977 . և կա-  
րանդշաւ 'ի 1071 . յոր հանդուցին ընդ աւագ խորա-  
նաւ զմարմին սրբոյն Մարկոսի առնպարան լին առա-  
զին պատրիարքին Աղետանդրէոյ և պատշաճանին այ-  
սըր ժաղանի : Տապան սրբոյն անյացագ 'ի բառվաց հետէ  
յայգին էցաւ յաւառարս մէր 'ի 6 մայ . 1810 ընդնաց խորա-  
նաւ հանդէրէ նշինարաւ սրբոյն , սրպէ և երբէժն ան-  
յայգ հնացեալ յայգին էտէ ստու լելլուս 'ի 25 յունիսի  
1684 . հերէմամբ վիճաց : Տես Աւանդարհագր . ծդ . յօդ .  
10 . Վենետ :

գորի հիմն արկաւ մեծի և պայծառ մենաստանին  
սրբուհւոյն Յուստիանեայ, որ 'ի Պատաւիոն:

Յետ այսորիկ հարկ եղե պատին անցանել 'ի  
Գաղղիա և հանդարտեցուցանել զավստամբու-  
թիւն որդւոց Լուգովիկոսի կայսեր՝ Լոթարիոսի  
Օգոստոսի, Պիոսինի արքայի Ագուիտանիոյ և  
Լուգովիկոսի արքայի Բաւարիոյ: Այլ իբրև  
նոքա նկուն եղեն առաւել սաստիւ քան յորդո-  
րանօք, գթած հայր իւրեանց ներեաց նոյա-  
նորին աղագաւ և կոչեցաւ այնուհետեւ Պիոս,  
այս է գթած:

Յամենայն տառապանսե կեղեցւոյ որ'ի թշնա-  
մեաց հասաներ, դիմեր նա եռանդադին ըղձիւ  
'ի բարեխօսութիւն ամենայն սրբոց: որոց տօ-  
նախմբութիւն 'ի ժամանակեանափ Վոնիփակի-  
ոսի Դ կատարեր յեկեղեցւով Հառվիոյ (1389):  
Որոյ վասն նա ինքն յորդոր մատուցեալ Լուգո-  
վիկոսի կայուեր՝ հաստատեաց կատարել զոյն  
տօն նա և 'ի Գաղղիա և 'ի Գերմանիա: ապա առ  
հասարակ յամենայն արևմուտս յառաջին աւ-  
ուր նոյեմբերի: Եւ ինքն հայրապեան Գրիգոր  
հասեալ 'ի վախճան կենաց իւրոց՝ փոխեցաւ  
աստի 'ի չորս կաղանդացն փետ: 844, կացեալ  
յիշխանութեանն ամս վեշտառան ։<sup>1</sup>:

1 Տարեդ. Բներգին. հապ. 2. Խարեն. իր. իգաւլ-  
եր. 518: Առ Մաբիլ. 'ի Գուրծու սրբոց. հա. 3. Տ.  
2. եր. 523: Պօղոս Եղիշես. յշ. Գու. Փրանք.  
Գիւր. 3. եր. 54: Են ուրժ Կընապըս-Ռիւն սորու դնեն  
'ի 24 սեպ. 827, ուղիւ երաժ. և ուղիւ լուսուն 'ի 25  
յունվ. 845:

## Ճ'Դ

## ՍԱՐԳԻՍ Բ

Ա. 8. 844, և կայսերութեան Լոթարիոսի 5,  
և Սիմոնէլի գ. 3:

1424. Ի հնդետասաներորդի աւուր ննջման  
Դրիգորի Դ ընարեցաւ քահանայապետ ոմն ՚ի  
կարդինալաց հառվմայեցի որդի Սարգոսի ՚ի չորս  
իդոսացն փետր. յամին 844. և ՚ի ձեռնադրու-  
թեան փոխեալ զառաջին անուն իւր կոչեցաւ  
Սերգիոս կամ Սարգիս. և այնուհետեւ սովո-  
րութիւն կալաւ փոխելոյ զանուանոքահանայա-  
պետաց ՚ի թագադրութեան անդ<sup>1</sup>: Յայնժամ  
Լոթարիոս կայսր առաքեաց զորդի իւր Լուդովի-  
կոս ՚ի Հռովմապահկիլ արքայ Լոնդոբարտացւոց  
կտոր թագաւոր խալիոյ. որոյ սիրտ թէպէտ  
չէր ուղիղ ընդ Հռովմոյ, սակայն յօծութեանն  
օրհնութեամբ մեծի քահանայապետին փոխե-  
ցաւ ՚ի լաւ անդր: Յետ այնորիկ խնդրեաց ՚ի պա-  
պէն, զի իշխանք Հռովմայեցւոց երդուիցեն նմա-  
զերդումն հաւատարմութեան որպէս պաշտպա-  
նի եկեղեցւոյ. այլ հայրապետն ոչ հաճեցաւ ընդ-

1 Զանուան սուրա առեն լինել os porci այսինքն է  
բերան իսուլին ուր անպատճաճ դապետ մշտական  
ու ագուայն գունդին ՚ի Սարգիս: Այլժ առեն նե Սարգսի  
՚ի էր յակուբուտ - ուր վասն զի յառաջադրոյն Պիտրու-  
նը անուանեալ, առ ՚ի պատճեա առաջն նշանի պին ՚ի-  
նեաց ՚ի Սարգիս (1465):

այն . և ոչիսկ թոյլետ առ կենդանութեամբ հօր նորա առնել զիրն զայն անխօրհրդաբար : Դարձեալ անմիաբանութեան արքայորդւոց արդասիք էին , յորմէ գլուղեցաւ ոչմիայն մեծազօր աթու Գաղղիոյ , այլ և ողջոյն Եւրոպա , ոտնակոխ եղեալ Սրաբացւոց , մինչև Ժապահիլ նոցահասանել 'ի հուովմ' և կողոպատել զեկեղեցիս սրբոյն Պետրոսի և Պօղոսի : Սակայն յարիակոն ոգւոյ և 'ի խոհական քաղաքավարութենէ մեծին Սարգսի անդրէն հալածական եղեալ նոցա 'ի նաւս իւրեանց՝ ծովակուր եղեն 'ի փախչելն արժանահաս պատուհասիւք :

Իսկ 'ի Սպանիա սքանչելեօք սրբոյն Յակովբայ յաղթող գաեալ Համբիրոսի արքային ընդդեմ Արաբացւոցն այնոցիկ նկուն արար զնոսա . որով և զերծ գտաւ Սպանիա 'ի հարկապահանջութենէ յիսուն օրիորդաց , զորս ամբ ըստ ամէ առաքէր առ նոսա : Կմին իրի այս արքայ զաերութիւն իւր և զաղցն ողջոյն նուիրեաց 'ի պաշտպանութիւն սրբոյն Յակովբայ :

Իսկ Սարգիս քահանացապետ կառոյց պատշաճաւոր շնուրած առ սրահին Լատերանու , և 'ի նմին զետեղեցոյց զսուրբ սանդուզն ասպարանից Պիղատոսի , ընդ որ անցեալ էր Քրիստոս : Ըստ աւանդութեան նախնի հարց թագուհին չեղենէ առ պաշտօնասմիրութեան բարձեալ էր զպատուականաւանդն զայն յԵրուսաղէմէ , և պահեցաւ զգուշութեամբ 'ի Լատերանեան եկեղեցւոջ հուովմայ : Իսկ մեծն կոստանդիանոս կանդնեաց զայն 'ի սրահի ապարանից առ երի աստիճանաց , որ ածէր 'ի պատրիարքարանն . այլ զի հասարակինչ 'ի ռամկաց համարեսցի 'եքարձ անտի Սարգիս պապն և եդ զայն 'ի պաշտօն հաւատացելոց , որ և այժմ կոչի Սուրբ սանդուղք : Եւ յետ կալոյ նորա 'ի քահանացապետութեան

ամս երիս, փոխեցաւ առ տէր՝ ՚ի վեց կաղանդացն գիետ. յամին 847 :

## ՃԵ

## Ա. ԼԵԽՈՒՆ Դ

Ա. Տ. 8. 847, և իսյաներութեան Լոթորիոսի 8,  
և Միտայէլի գ. 6 :

1/25. Այն ինչ փոխեալ Սարգսի Բ. յաստեացն՝ Եւսոն հռովմայեցի որդի Հռագուալցի՝ երեց գովելի իմաստութեամբ և սրբութեամբ անդէն յաջորդեաց զիս յաթոռ. որբոյն Պետրոսի, և զկնի երկուց ամսոց առ ՚ի շտապ վտանգի ՚ի Սարակինոսաց՝ առանց մնալոյ հրեշտակաց կայսեր օծաւ քահանայապետ յերիս իդոսացն ապրիլի յամին 847 : Եւ ըստ նախնի արարողութեան խոնարհեցան ամենեքեան՝ ՚ի համբոյր ոտից նորապատակ օծելոյն, որպէս ասէ և Անաստաս :

Հայրապետս այս ՚ի սկզբան անդ փայլեցաւ հրաշտակործութեամբ. իբրև զի հրգեհ մեծ երբ ՚ի բռնութենէ հողմոյ առչորէր զհռովմ և չէր ուստեք հնար շիջուցանելոյ, սուրբն կացեալ ՚ի հանդէս նշանաւ իւացին շիջոյց : Այնու զօրութեամբ սատակեաց և զարքայիկ օձն գժիգակ :

1 Բարոն. յամ 844: Անաս. Գըտակ. Եր. 351 :  
և 352 : Անգեղոս. Ճամ. Կառին. Գիր. 3 . Գւ. Իւ. 6 : Կուտանդիս. յամ 824 :

2 ՚ի վարս սորտ. Եր. 358 : Ասյն և ՚ի վարս Կառապանդեայ առէ ԱՅսուսպին իւնոսէ . « Ամենատրիւպանեայ Օդուգու Ռուդ ՚ի Գլուխ անկէալ յերկիր՝ հոմբութէր պարագանայացառէրին » . Եր. 160 :

որ ժամանակ հայեցուածովք և թունաբեր շնչմամբ  
մահացուցանեկը զանցաւորս զչոռվմաւ : Առ-  
պէս զԱրտբացիս հասեալս առ դուրս Ոստիոյ՝  
թեթև զօրութեամբ այնպէս ահաբեկ արար, զի-  
կէոք գերի մնացեալք նմա յաշխատանս շինու-  
թեան քաղաքին, և այլք փախուցեալք նաւու-  
ծովակուր եղեն նաւաբեկութեամբ : Եւ 'ի յի-  
շատակ այսր բարերարութեան կարգեաց զան  
վերափոխման Տիրամօրն ութօրեայ տօնախմբու-  
թեամբ :

Գումարեաց ժողով յուղութիւն վարուց  
և 'ի հաստատութիւն եկեղեցական հրահանգաց .  
յորում զԱնաստաս երեց ժառանգաւոր սրբոյն  
Մարկեղոսի բարձրացոյց 'ի պատիւ կարգինա-  
լութեան : Խոկ Անգարիսի հայրապետին համ-  
բուրգայ և յաջորդաց նորին շնորհեաց զՊա-  
նչում 'ի նշան եկեղեցական իրաւանց, և զմիթր,  
և խաչ տանել առաջին : Երեսներորդ չորրորդ կա-  
նոն ժողովոյն պատուիրէ դասատուաց դպրոցաց  
մեկնաբանելցուրբ գիշուև զաստուածային պաշ-  
տամունս :

Ի նմին ժամանակի Լուդովիկոս Բ գահա-  
կից լեալ հօրիւրոյ Լոթարիսի եկն 'ի Հռովմէ և  
օծաւ կայսր Հռովմայ 'ի քահանայապետէն :  
Այլ քանզի վերստին զօրացեալ Սարակինոսաց  
սպառնային ոտնակոխ առնելզհառվմ, նմին իրի  
սրբազնին նապաստաւորութեամբ կայսեր Գաղ-  
ղիոյ պարիսապ բոլորեաց շուրջ զբլաւ Վատիկա-  
նու, և զչին քաղաքին ամրացուցեալ նորոգու-  
թեամբ՝ զայն մասն յանուն իւր Լէոպոլիս ձայ-  
նեաց : Կոյնօրինակ նորոգեալ ամրացոյց զքա-  
ղաքին Զէնթօնէլլա, և զայլ բազում տեղիս որ  
արտաքոյ և որ 'ի ներքս Հռովմայ զաւերեալս յե-  
րեսաց բարբարոսաց, և այն՝ գոգցես յաս-  
տուած ային աղքմանէ առ անքոյթ մնալոյ սրբա-

զան ուղղեաց : Խնդութիւն մեծ եղեւ նմա , իբրև  
լուսու զգարձ Բուլղարաց 'ի սուրբ հաւատոսընդ  
թագաւորին իւրեանց Բորբորիկոսի : Այլ հա-  
սեալ նորա 'ի վախճան կենաց իւրոց՝ փոխե-  
ցաւ առ տէր 'ի վեշտասան կազանդացն օդոս .  
յամին 855 , կացեալ յիշխանութեան ժրաջան  
տքնութեամբ ամս ութ , ամիսս երիս և աւուրս  
վեց : Գոն սորա կրկին ազօթք 'ի կիր ածեալք  
յեկեղեցւոջ զմին ասացեալ 'ի վերայ զօրաց նեա-  
պօլսեցւոց 'ի պատերազմելն ընդ Սարակինոսաց,  
և զմիւսն 'ի կանգնել զդուռն Լէոպօլսոյ :

## ՃՇ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Գ

Ա. Տ. 855. և կայութը անեան Լուտակիսոյի Բ. 1 ,  
և Միւսոյէլ Գ. 14 :

1426. Ընդ ննջել երանելոյն Լեւոնի ուխտ  
եկեղեցւոյն և ժողովուրգն փութացան 'ի ժողով  
ընտրութեան նորոյ քահանայապետի . յորում  
ընտրեցաւ Բենեդիկտոս հռովմայեցի ժառան-  
դաւոր երեց սրբոյն կալիստոսի որդի Պետրոսի .  
այլակամայ և գժուարաւ յանձն էաս զայն ծայ-  
րագոյն պաշտօն առ կարի խոնտրհութեան ան-  
բաւական գատեալ զանձն : Եւ ըստ վաղեմի սո-  
վորութեան առաքեաց ծանոյց զընտրութիւնն  
Լոթարիոսի կայսեր և աթուակցի նորին Լու-

1 Բելաբյ. Գիրտ 3 . յղ . գահ . Հա . Գլ . Է՛ :  
Լուպոս աբբայ . Առաղի 84 : Անտոփ . Գրադ . 'ի  
վարս այսը պատրի . Եր . 358 : Բահ . յան 826 : Լայ .  
Բերտին . յղ . պապար . հափ . 1 . Բիւ 110 : Բարոն .  
յան 879 :

դովիկոսի 'ի ձեռն նոռւիրակաց իւրոց : Որոց  
դարձեալ անտի 'ի Հռովմ ընդ գեսպանաց կայ-  
սեր , և ահա Անաստաս Երեց Երբեմն կարդինալ՝  
արձանացաւ հակապապ 'ի սագրելոյ Արքենիոսի  
եպիսկոպոսին խոռւենացւոց , և այն՝ սատարու-  
թեամբ կոյսերական գեսպանաց : Զայն իբրև  
տեսին ուխտն և ժողովուրդն՝ վրէժինդիր լեալ  
մերժեցին զԱնաստաս , և հաստատեցին զօրինու-  
որ պապն Բենեդիկտոս և օծին զնա քահանայա-  
պետ յերիս կաղանդացն հոկտեմբ . յամին 855  
յաւուր կիւրակէի ըստ նախնի սովորութեան :  
Յայնժամ նոյն իսկ գեսպանք 'ի զեղջ եկեալ  
ներումն խնդրէին վրիսպանաց իւրեանց 'ի հե-  
զահամբոյր քահանայապետէն . և նա գթացեալ  
եթող նոցա :

Խոկ Միքայէլ կայսր Կոստանդինուպոլսոյ լը-  
ւեալ զձեռնադրութիւն պապին՝ առաքէ առ նոտ  
հրեշտակս հանդերձ ընծայիւք ըստ հին սովո-  
րութեան , որպէս յիշէ և Անաստաս պատմիչ :  
Այսպէս քաղցրութիւն և խոնարհութիւն հայ-  
րապետին ձգէր առ ինքն զհեռաւորս և զմեր-  
ձաւորս , և խնամեր զամենեսեան հայրաբար :  
Եւ ինքն յետ կարոյ 'ի հայրապետութեան ամս  
երկուս . ամիսս վեց և աւուրս տասն , փոխի առ-  
տէր 'ի վեց իգոսացն ապր . յամին 858 :

Եւ Լոթարիոս կոյսր Գաղղիոյ լուեալ զնո-  
նարհ ընթացս մեծի քահանայապետին՝ շարժե-  
ցաւ 'ի նախանձ հոգեոր վարուց , և թողեալ զկայ-  
ութական թագն որդւոյ իւրում Լուգովիկոսի՝ ա-  
ռանձնանայ 'ի վանս՝ ապաշխարելզոր միանդամ  
անիրաւեցաւ ընդդէմ հօր իւրոյ Լուգովիկոսի  
Պիտոսի 'ի միաս ազգին և պետութեանն (1425) :

1 Անաստաս Գրապ . 'ի վարս սուրա : Բարքն . և  
Բարի . յամ 855 : Սահմանադր . Բէնեդիկտի : առ Ու-  
իւլիոսի հապ . 1 . Եր . 753 :

## ՃԵ

Ա. ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա. ՄԵՇ

Ա. Տ. 8. 858. և կայսերական լուծարման Բ. 4.  
և Միտոյէմ Գ. 17:

1427. Կիկողայոս հռովմայեցի որդի Թէո-  
դորի սարկաւագ մեծահամբաւ խմաստութեամբ,  
խոհեմութեամբ և սրբութեամբ, ընտրեցաւ ար-  
ժանաւոր յաջորդ սրբոյն Պետրոսի, և շքեղ հանդի-  
սիւ ձեռնագրեցաւ յանդիման կայսեր Լուգո-  
վիկոսի Բ. յառաջ քան զութ կաղանդացն մայի-  
սի յամին 858: Ապա ածեալ հանդիսապէս յե-  
կեղեցին Լատերանու պսակեցաւ պապական  
թագիւըստ Անաստանյ . որովեղև առաջինն՝ ի  
թագաղարդ պապս, և 'ի մեծութենէ ոգւոյ իւ-  
րոյ և 'ի մեծամեծ գործոցն ՄԵծ անուանեցաւ-  
և առաքեաց առ նա ծանրագին ընծայս Միքայէլ  
կայսր կոստանդինուպօլսոյ:

Եօթն ժողովս գումարեաց Կիկողայոս 'ի  
հռովմվասն բարեկարգութեանց (1184): Գրեաց  
բազում կոնդակս և վճիռս . առաքեաց նը-  
ւիրակս 'ի թագաւորեալ քաղաքն վասն քննու-  
թեան գործոց Խոնատիոսի պատրիարդին որ-  
դւոյ Միքայէլի կայսեր առն սրբոյ . զոր 'ի սադ-  
րելոյ Փոտայ կամ Փոտիոսի Բարդաս մօրեղբայր  
Միքայէլի կայսեր մերժեալ էր յաթուոյ . որով  
և Փոտիոս այրն ամբարտաւան և լայնահանձար  
'ի միջոցի վեց աւուրց յիշխանական պաշտամո-  
նէն յեկեղեցականութիւն մերուսնեալ նստաւ-  
պատրիարդ կոստանդինուպօլսոյ: Խոկ պապն 'ի  
ժողովի իւրում գոտտապարակեաց զՓոտիոս , և

արդարացոյց զիգնատիոս . մերժեաց զաղանդ  
 Աստուածաշարչարից ոմանց յարելը . ցրեաց  
 զժողովակ կոստանդինուպոլիսոյ վասն անկման  
 Խգնատիոսի և փոխանորդութեան Փոտիոսի :  
 Դարձեալնզովեաց զօաքարիա նուիրակն կա-  
 մակից այնմ ժողովակի , ընդ նմին զՓոտիոս և  
 զԳրիգոր Սիրակուայ , և հաստատեաց զիգնա-  
 տիոս յաթոռ իւր : “Նոյնակէս դատապարտեաց  
 զժողովն Մեգեայ , յորում թոյլ տուեալ էր Լո-  
 թարիոսի արքային Լոթարինդիոյ զայլ կին առ-  
 նուլ կենդանեաւ կնոջն (1203) : Հուսկ յեաոյ  
 հաստատեաց զյարդութիւն պատկերաց : Եւ զի  
 Փոտիոս բռնացեալ յաթոռ պատրիարքութեան  
 չարչարեաց զիգնատիոս և Էտրկ չար բաժանու-  
 մըն ’ի մշջ եկեղեցւոյն Յունաց և Լատինաց՝ մո-  
 լորեալ ’ի գիրս և ’ի բանս , նմին իրի զօրաւոր բա-  
 նիւք ցրեաց զմոլորութիւնս նորա մեծն նիկո-  
 ղայոս , և ծանոյց զայն արևմտեան եպիսկոպո-  
 սաց : Հրահանգեաց և վնորադարձ Բուլլարս ’ի  
 ձեւն նուիրակաց իւրոց գեղեցիկ բացարելով  
 նոյա զահմանս հաւատոյ՝ լուծմամբ հարիւր և  
 վեց խնդրոց : Այնչափ էր խոհական արթնու-  
 թիւն նորա ’ի վերայ հօտին քրիստոսի և քաղ-  
 ցրութիւն . զի յաշխարհ ամենայն ձգեալ հա-  
 սանէր զօրութիւն իմաստութեան և բարեկար-  
 դութեանց նորա և գերազանց արարք նորա .  
 մինչեւ յեա մահուանն ութերորդ ընդհանուր  
 ժողովն (918) քննեալ զգուծս նորա ձայնեաց  
 վնա նոր Եղիա . նոր Փենեէս , նոր Դանիէլ և նոր  
 Մարտինոս : Զայտպիոի գեղեցիկ առաքինու-  
 թիւնս առաքինացեալ սուրբ հայրապետին եթող  
 ապա զմարմին խոնարհութեան և վերաթե-  
 եալ խառնեցաւ ’ի դասս երանելեաց յիգոսս  
 նոյ . յամին 867 . յորում աւուր անցուցին զա-  
 նուն նորա ’ի վկայաբանութեան չոռվմայ : Եւ

ամենային ամք. քահանայապետութեան նորա իննի,  
ամիսք վեց և աւուրք քսան<sup>1:</sup>

## ՃՌ

## ԱԴՐԻԱՆՈՍ Բ

Ա. Տ. 867, և կայսերական Լուդովիկոսի Բ. 15,  
և Ալեքսանդրա 1:

1428. Աղքիանոս Հռովմայեցի որդի Դալա-  
րսի ժառանգաւոր Երեց սրբոյն Մարկոսի՝ ընտ-  
րեցաւ յաթոռ քահանայապետութեան Հռովմ-  
այ յիննեւտասն կազանգացն յունիլ. յամին 867.  
յորմէ Երկիցս հրաժարեալ Երառ խորին խոնար-  
հութեան, և բազում գժուարութեամք յանձն  
առ. 'ի սախալեց ուխտին և ժողովրդեան. և Եր-  
ամաց եօթանասուն և վեցից : Սա խոհական  
խորհրդուլ հետեւեալշաւղացնախորդին իւրոյմե-  
ծին 'Նիկողայոսի, ժողով գումարեաց 'ի Հռովմ-  
ընդդէմ ֆոտիոսի, և նզովեաց զնա և զժողովակ  
նորա : Անդ զսահմանս ժողովակին և զմատեանն  
ֆոտայ զոր գրեալ Եր ընդդէմ 'Նիկողայոսի՝ կո-  
խոտեալ և այրեցին (1185) : Հաստատեաց դար-  
ձեալ Աղքիանոս զվճիռ բանադրանաց սրբոյն 'Նի-

1 Ֆրանչիսկոս Բաիիոս 'ի վարուորա 2: Առ Բա-  
րսն. յուն 858-862: Առ Լաբ. հափ. 8. Ճող. Եր.  
1000: Պէտառ. Հարդ. ասպուածաբ. հափ. 2.  
Գիր. 7. Գւ. թ: Անտառ. Գրադ. 'ի Ասողին առ  
Արտ. հափ. 8. Ճող: Լաբ. Եր. 568:

Յայսմ Հայրի հասեալ յան 867. Դադարի Անտա-  
ռաս Գրադեա 'ի Գրելոյ զվարս գոհանայապետաց  
և կայսերաց. զոր յառաջ գտնի Մուրտափուլիսս Պրո-  
ղեգ:

կողայսոի ընդդէմ Լոթարիոսի արքային վտանքանի կնոջն (1205). և Լոթարիոս զգաստացեալ եկե՛ ՚ի չոռվմ յոտս քահանայապետին և էաւ զներումն . որ և ՚ի դարձին մեռաւ ընդ իւրոցն : Աքքայն Անդղիոյ Ազգիրետոս Ա Եկեալ՝ ՚ի չոռվմ կատարել զուխտ իւր՝ պատկեցաւ ՚ի քահանայապետէն արքայական թագիւ : Մորավիացւոց թոյլ ետ ՚ի սրբազն պաշտաման վարիլ դաղմատական լեզուաւ , որ էր նոցա մայրական , ընթերցեալ զաւետարանն նախ լատիներէն և ապա դաղմատերէն : Հրաման արար և Կարոլոսի Կալվոսի ընդ պատուհասիւք բանադրանաց՝ դարձուցանել առ Եղբայր իւր Լուդովիկոս կայսր օրինաւոր ժառանգ զյափշտակեալն յիւրմէ զթագաւորութիւն Լոթարիոսի վախճանելոյ :

Բարդաս զոր յիշեցաք ՚ի վերոյ՝ պատուհաւալ կտրատեցաւ ՚ի մասունս մասունս հրամանաւ Միքայէլի կայսեր . և ինքն Միքայէլ զՎասիլ արշակունի զայրն զօրութեան կարգեաց ընդ պալատականս : Եւ Վասիլ իբրև նատաւ կայսր արեւելքան՝ նախանձայոյդ լեալ ուղղափառ հաւատոյ դարձոյց զիգնատիոս յաթու իւր , և տարագրեաց առ պատին Ազրիանոս հրեշտակս ծանր ընծայինք առ ՚ի պատիւ . զնոյն արար և իգնատիոս . և խնդրեցին երկաքանչիւր խորհուրդ ՚ի նմանէ ՚ի հաստատութիւն ուուրբհաւատոյ : Պասկի խորհուրդ ետ զումարել ՚ի կոստանդինուալովս զընդհանուր ժողով ութերորդ և առաքեաց անդզհրեշտակս իւր , յորում դատապարտեցաւ Փոտիոս և գրութիւնք նորա . և ապա հաստատեաց ՚ի չոռվմ զսահմանս ընդհանուր ժողովոյն այնորիկ (918) : Զկնի գեղեցիկ կարգադրութեանց ընդ ամս հինգ ըստ Գուլիելմոսի գրապետի՝ փոխեցաւ յաստեացս Ազրիանոս յամին 872 . և

թէ յորում աւուր՝ չէ յայտ : Գտանին նորա  
առ մեօք յոլով նամակը :

## ՃՇ.

## ՅՈՎՀԱՆՆԻՍ Բ.

Ա. Տ. 872, և իսուսիւնեան Լուտովիսի թ. 18,  
և Ապուլի 6 :

1429. Յովհաննէս նախասարկաւագ եկե-  
ղեցւոյն Հռովմայ որդի Գունդոսի՝ յաջորդեաց  
զԱդրիանոս յաթու քահանայապետութեան  
յիննետասն կաղանդացն յունվ. յամին 872, և  
կառավարեաց զեկեղեցին տառապանօք հան-  
դերձ զամս տասն : Սա հրաւիրեալ 'ի Հռովմ  
զկարուս կալվոս յետ մահուան Լուգովիկոսի՝  
պսակեաց կայսր Հռովմոյ . և առեալ 'ի նմանէ  
զօդնութիւն՝ Ելքնդդէմ Սարակինոսաց կոխե-  
լոց զիտալիա և զսահմանս Հռովմայ : Խակ զնէ-  
տակօլսեցիս և զբենելվենտացիս, որք հաշտութիւն  
արարեալ էին ընդ թշնամիաց, և զորս միանդամ  
'ի կողմն նոցա միտեալ՝ ընդ բանիւ արար 'ի ժո-  
ղովի իւրում, ևս և զոմանս յեպիսկոպոսաց :  
Այլ յետ սակաւուց գեղակուր լեալ կայսեր 'ի  
ձեռն հրեայ բժշկին, և պատն թափեալ 'ի  
յուսոյ արար խաղաղութիւն ընդ Սարակինոսաց,  
յագեցուցեալ զնոսա ոսկւով : Խակ զֆորմոզոս  
քաջ եպիսկոպոս Պորտոսի մերժեալ վարեաց 'ի  
Գաղղիա սակս ինքնակամ շարժելոյ յիրս ինչ

1 Առ Լաբ. հապ. 8. Ժող. Եր. 982: Բուլլանդ.  
Տարբ. 9: Բակ. յան 872: Պուլի-Դորոս Ալեքութիւ-  
գիւր 5. ողագոյն. Անգլ. Եր. 131: Սուրբագոր.  
Պիրող. 'ի վարս գահ. Հոռ. հապ. 5:

ընդդեմ՝ կամաց նորա 'ի բուլղարս. որպէս ամբաստանէին յաշավկոտք առ նախանձու (1435):

Տեսէալ Յովհաննու 'թէ չէ յապահովի 'ի չոռվմ, առ ահին տեղի ետ 'ի գաղղիա. և սպակեաց անդ 'ի կայսր զԼուգովիկոս Գ, անուանեալ Բալբոս: Խակ զԲողնոս կոմո որդէգրեալ ինքնան և կարգեալ իբր գործակալ և պաշտպան՝ նովաւ հանդերձ գարձաւ 'ի չոռվմ: Յայնժամ հասին առ նա գեսպանք կայսեր Վասլի որսացելոյ 'ի փոտիոսէ հաճոյական մատենագրութեամբ, որ և ստիպէր զնա հաստատել զՓոտիոս վերսաին յիշսանութեան իւրում, արձակեալ զնա 'ի նզովից: Խդառն պարագայից ժամանակին անզօր գտեալ Յովհաննու, առ ժամն եթող ժողովոյն խորհել զլաւն. այլ յետոյ զիջաւ և հաստատեաց զՓոտիոս յետ մահուան Խդնատիոսի յաթու պատրիարքութեան Կոստանդինուազօլսոյ: Այլ Փոտիոսի ապերախտ գտեալ ընդ մեծ շնորհմն զոր ընկուլաւ, ոչ միայն ընդ բամբասանօք էարկ զպապն, այլև ժողով գումարեալ 'ի սպառ որոշաց յարևմաեայց զՅոյնս անկարկասելի պատառամամբ, մինչև նոցին խակ Յունաց լինել անհաճմելի առ ժամն, մեղագիր եղեալ և քահանոցապետին՝ թէ զՓոտիոս ներքինին վերագարձոյց յաթոռն: Աակայն ոչ գանդաղեցաւ Յովհ-

1 Ա-անդի նէ Փոտիոս իամ Փոտ ներ+ինի էր. և իբրև նագաւառ պատրիարք, առ ապէլու-նունու առէին ' նէ ինամարդին ի-մ ինամարդն գոհանայացազիշու էշտ. զոր շնորհած թշու դահին չպառզմաց յարմարէցին 'ի վերայ Յովհաննու պապին, ինչը լու զնա Յովհաննու և նուռամարդի, և այլ նուռամարդին անուանու և առաջարկ ապէլու իարկապէլու պատրիարք: Այլ ին+եան+ 'ի շամբու բանից ի-բեանց ծառար և ինին, անմիաբան 'ի միմանց յառաջ ածէտ ու զառառս ունեւն պայնանի: Թոյն առ գ.

Հաննէս անդրէն մերժել զնա և զժողովակ նորա  
հանդերձ նզովիւք : Եօծ նա կայսր զկարոլոս  
Կրտսոս արքայ Գերմանիոյ և Խտալիոյ . և ջո-  
նահնար եղե հաստատել զմիաբանութիւն 'ի մէջ  
իշխանաց Գաղղիոյ : Ապա հասեալ նմա վախ-  
ճան կենաց՝ մեռաւ յութուատան կազանգացն  
յունվ . յամին 882 :

## ՃԺ

## ՄԱՐԻՍՈՍ Ա

Ա. Տ. 882, և կայսերութեան կարուլոսի Կրտ-  
սոսի 5, և Վահակի 16 :

1430. Մարինոս կամ Մարտինոս Բ հեր-  
բուրիացի որդի Պալումբոսի երեւելի նախասար-  
կուագեկեղեցւոյն Հռովմայ և նուիրակ երիցս  
առաքեալ 'ի կոստանդինուալօլիս'ի մեծէն 'Նիկո-  
ղայոսէ . յԱգրիանոսէ և 'ի Յովհաննէ սակս ի-  
րովութեանց Փոտիոսի՝ յաջորդեաց զնոյն Յով-  
հաննէս յաթու քահանայակետութեան Հռով-  
մայ յելս գեկաեմբերի : Որոյ կալեալ զընթացս  
նախորդաց իւրոց՝ հոգ տարաւ բարեկարգել զե-

Յովհաննոս ասել եղեաւ զիրսն , և միասոյն առ Դ-  
Լէսոնիւ , և այլոց պայլ ան Յովհաննա սպեզնեաւ  
որիւ յատաշիկայետ : Եւ որ քուր մէ միաս սաներ 'ի  
նորադանդիս իսկ , եխից զլսելիս , և զանհամութիւն  
առասոլիւսիոս իսայաբառականացն ջանաց Աագու-  
շանէլ :

1 Մէծն Բէլաբինոս . Գիր+ 3 . յղ . +ահ . չո .  
գլ . իդ : Բարոն . ևս և Տաբեգ . Բէրբին . յամ 872 :  
Պէտ . Մար . Գիր+ 3 . յղ . համ . +ահ . և կայս .  
գլ . իդ . 4 :

կեղեցին արևելքան՝ դատապարտելով զՓռախոս  
պատրիարք զայրն անհանդարա . խակ զՓռմոզոս  
մեծանուն Եպիսկոպոս մերժեալ երեւն 'ի Յով-  
հաննէ՝ դարձոյց անդրէն 'ի աեղի իւր , քննեալ և  
ստուգեալ զանմեզու թիւն նորա : Յետքեղեցիկ  
քաղաքավարու թեան և խոհական ընթացիցկա-  
լոյ յիշխանութեանն ամիսս եօթնուտասն՝ փո-  
խեցաւ յաստեացս յամին 884 յամսեանն մոյիսի,  
որպէս կարծի յոմանց :

## ՃՌԱ

## ԱԴՐԻԱՆՈՍ Գ

Ա. Տ. 884 , և կայսերութեան կարուլունի 5 ,  
և վառլի 18 :

1431. Ագրիանոս հռովմայեցի որդի Բենե-  
դիկտոսի յառաջադոյն Ագաբետոս կոչեցեալ  
ըստ սմանց՝ ընտրեցաւ յամոռ քահանայապե-  
տութեան Հռովմայ յելս մայիսի կամ 'ի սկիզբն  
յունիսի յամին 884 : Որոյ աեսեալ զամբարտա-  
ւան ընթացս ֆոտիոսի 'ի վնաս եկեղեցւոյ չարա.  
չար հերձուածովքն՝ դատապարտեաց զնա : Սա  
յորդորեալ յիտալացւոց եհան զերկու անուա-  
նի վճիռս . զմին վասն ազատութեամբ ընտրե-  
լոյ և օծելոյ ուխտին զքահանայապետս առանց  
մնալոյ արքունական գեսպանաց՝ ըստ որումսո-  
վորութիւն եր ժամանակին , և զմիւն սակս ար-  
ժանապատուութեան իտալացի իշխանաւորաց .  
իբր զի 'ի մեռանել կրասոսի կայսեր անզաւակ՝  
յանձնեոցէ նոցա զթագաւորութիւնն իտալիոյ ,

1 Բարոն . և Բարլ . 882 : Թառողլ Վառլի առա-  
ւելիտանան գ:

և զոմն՝ ի նոցանել օծցէ թագաւոր հանդերձ կոյս  
սերական տիտղոսիւ (1452): Սակայն՝ ի հետեւ  
եալ ամի իբրև գնայր՝ ի Գաղղիա՝ ի նադրոյ կոյս  
սեր, և հազիւ անցեալ էր ընդ Պագոս գետ՝ ցաւ  
մահաբեր հանդիպեալ նմա՝ փոխեցաւ՝ ի սեպտ  
յամին 885, յետ կալոյ՝ ի քահանայապետու  
թեան զամիս վեշտասան։ զորոյ զմարմինն թա  
ղեցին՝ ի մենաստանին ոնանառուլայ հինգ մզոնաւ  
հեռէ՝ ի Մաւաբնայ<sup>1</sup>:

## ՃԺԲ

### ԱՏԵՓԱՆՈՍ Ե

Ա. Տ. 885, և կայսերութեան կարուսէ 6,  
և Վասում 19:

1452. Ատեփանոս հռովմայեցի որդի Ադրիանոսի ակամայ կամօք հաւանեալ ընտրութեան ուխտին՝ օծաւ քահանայապետ խորհրդով կարոլոսի կայսեր՝ ի կատարած սեպտեմբերի : Յառաջին օրէ անտի անպակաս եղեն քարերազդութիւնք յիտալիա։ զի աղօթիւք նորա անզացին երկինք զառատանձրե յերաշտութեան անդ երկրին, և մորախոցն երամք ջնջեցան յերկրէ անտի։ Ընդ խոնարհութեանն և կտրի աղքատասէր էր։ մինչեւ բաժանել աղքատաց զամենայն ինչս զոր ունէր։ Գրեաց և զօրաւոր կոնդակս առ կայսրն Ալասիլ, որովք ցուցանէ զիրաւունս Մարինոսի պապին և այլոց նախորդաց իւրոց՝ ի դասապարաել զՓոտիոս։ որում երեսս դարձուցանել յորդոր լինի կայսեր։ Յետ մա-

1 Ականիսս. Գիր+ 5. յու. Ատա. իպալ. յամ 884:  
Պատումէսս Լուգ. Գիր+ 16. պատմ. Ելեզ. Գլ. իդ.  
Բառ. յամ 884: Բալլան. 8 յուլ:

հուան Վասլի կատարեաց զայն պատուեր որդի  
նորա Լեւոն Խմաստասէր կայսր՝ վակեալ զՓռ-  
տիսս ՚ի վանս : Յայնժամ յաջորդեաց զՓռտ  
եղբայր Լեւոնի կոյսեր Սաեփանոս, այր հեղա-  
համբոյր և խաղաղասէր, հրամանաւե հաւանու-  
թեամբ պատին . որովքարեկարգեալ խաղաղա-  
ցաւ արեւելեան եկեղեցի :

Իսկ վիրդոն դուքս Սպոլետայ իշխան Խտալիոյ  
և որդեգիր քահանայապեաին ժառանգեաց ըզ-  
թագաւորութիւն Լոնգոբարարացւոց ՚ի շնորհաց  
սրբազնին . որ և կոչեալ զնա ՚ի հոռվմ ՚ի  
խնդրոյ Խտալացւոց էօծ կայսր Հոռվմայ յինն  
կաղանգացն մարտի յամի 891 : Եւնա առ երախ-  
տագիտութեան հաստատեաց զամենայն զոր  
միանգամ նուիրեալ էին առաքելական գահին  
Պիոտրին և Կարոլոս և Պիոս կայսերք Գաղղիոյ  
(1414) : Եւ Սաեփանոս յետ զայս օրինակ կա-  
լս ՚ի հայրապետութեանն առաքինիքաղաքա-  
վարութեամբ ամս վեց, փոխեցաւ առ տէր  
յելս սեպտ . յամին 891 <sup>1:</sup>

## ՃՌԴ

### ՓՈՐՄՈՋՈՍ

Ա. Տ. 891, և իայսերութեան վիշտոնի 1, և Լեռնի  
իմաստավիրի 6 :

1433. Փորմոջոս մեծապատիւնուիրակ որդի  
Լեւոնի այր վառաւոր և ճշմարիտ աստուածա-  
պաշտ և հմուտ սուրբ գրոց և վարդապետու-  
թեանց՝ յառաջնորդութենէ Պոլառոսի հրաւի-

1 Բարձր . յամ 885 : Առ Պարագիտ . 2 . ինդ .  
41 . է : Ական . յամ 891 :

բեցաւ՝ի Հռովմը յաթոռ սրբոյն Պետրոսի յամին  
891. և եղեւ առաջին որ անց յեպիսկոպոսու-  
թենէ՝ի քահանայապետութիւն (1429). Վասն  
որոյ և առանց օծութեան օրհնեցաւ պապ՝ թա-  
դադրութեամբ ևեթ. և եկաց յիշխանութեանն  
ամս չորս և ամիսս վեց : Զառաջինն ընկա-  
լաւ զնամակ՝ի Ստիւղիանոսէ և յայլոց արևե-  
լեան եպիսկոպոսաց ուղղեալ առ նախորդ իւր  
Ստեփանոս . յորում ցուցանեն զպատճառն  
թէ զիարդ անհամաձայն նոցա գրեալէր կայսրն՝  
թէ Փոտիոս առանց բռնադատութեան կամո-  
վին հրաժարեալ իցէ յախոռոյ իւրմէ . և աղա-  
չեին զի գարձեալ ընկալեալ լիցին՝ի հաղորդու-  
թիւն եկեղեցւոյ որք՝ի Փոտիոսէ վերոտնեալէ-  
ին՝ի սուրբ աստիճան : Խոկ պասն պատասխա-  
նի արար նոցա, զի հնազանդեալ յանձն առցեն  
զվճիռս և զտպաշխարանս, և խոստովանեալ  
զվրիպանս՝խնդրեսցեն զներումն : Եւ առաքեաց  
նո նու իրակս՝ի Կոստանդինուպոլիս բարեկար-  
գել զեկեղեցին արևելեան հանգերձ կայսերաւ :

Ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ մեռանի  
Վեդոն կայսր, յորմէ և աղմուկ խոռվութեան  
յառնէ յիտալիա . վասն որոյ և քահանայապետն  
գաղտ կոչեաց՝ի ՀռովմզՄքնովիոս արքայ Գեր-  
մանիոյ առ ՚ի սահնձահարել զյանդդնութիւնն և  
զթշնամութիւնն Լամբերտոսի որդւոյ Վիգոնի :  
Արնովիոս հասեալ՝ի Հռովմզօրու ծանու վտա-  
րեաց անտի զխռուվարար թշնամիս, և խնդրանօք  
օծաւ՝ի պապէն կայսր Օգոստոս : Այլ պապին  
ոչ յետ բազմաց հասեալ՝ի վախճան կենոց իւ-  
րոց ուսակեցաւ՝ի տեառնէ ըստ մեծագոյն համ-  
բերութեանցն միով աւուրբ յառաջ քան զնո-  
նայս ապրիլի յամին 896 :

## ՃԺԴ

## ՎՈՒԻՓԱԿԻՈՍ Զ.

Ա. Տ. 896. և կայսերութեան Լամբէրտոսի 3,  
և Լէսոնի 11:

1434. Վոնիվակիոս հռովմայեցի երեց՝ որդի  
Ագրիանոսի՝ յաջօրդեաց զփորմնզոս յալթոռ քա-  
հանայապետութեան յաւէտընտրութեամբ ժո-  
ղովրդեան, քան ուխտին չռովմայ : Նմին իրի՝ ի  
քազմաց և ոչխոկ՝ ի կարգս հայրապետացն չռով-  
մայ դասի : Որևէ կարձատեւ եղեալ յախտէ ոտն-  
առութեան չեհաս նմա առնել գործ ինչ ար-  
ժանի յիշատակաց : Զաս համարին ոմանք կացեալ  
քահանայապետ աւուրս հնդետասաան, և այլք՝  
թէ յետ հնդետասաան աւուրցն այնոցիկ արտա-  
սահմանեցաւ յալթոռոյ :

Գիրք 1. Գլ. Շ : Բարսն . յամ 891 : Բակ . ՚ի վարս  
սորտ 12 : Մարիլլոն . եր . 31 : Բարսն . և Բակ .  
յամ 897 :

1 Ժաշ . Հու . Գլ. Շ . յամ 904 : Ուշուինս . ՚ի  
նոր յաւել . առ կիսկոն . հափ . 1 . եր . 680 : Փլ-  
դուարդ . յու . գոհ . Հու . հափ . 3 . յ . 2 . եր . 318 :

## ՃՌԵ

## ՍՏԵՓԱՆՈՍ Զ

Ա. Տ. 896, և Խայտերաննեան Լ. Մբէրգոսի 5,  
և Լէռնի 11:

1435. Ստեփանոս հռովմայեցի որդի Յովլ  
հաննու երիցու՝ յառաջ քան զքսան օգոս. յա-  
մին 896. ընտրեցաւ պատ յաւետ նպաստիւք  
Ագեղքերառասի իշխանաւորին՝ քան թէ ընտրու-  
թեամբ ուխտին հռովմայ, որ առ ժամն լուեաց,  
զի մի հերձուած ինչ ծագեսցի: Այս հայրա-  
պետ թէպէտ նախանձաւոր էր հաւատոյ և կա-  
նոնաց, բայց չարասէր թշնամիք ֆորմոզոսի պա-  
տին հաւանեցուցին զնա հանել զմարմին նորա  
'ի գերեզմանէն և մերկացուցեալ'ի սուրբ զդես-  
տուց՝ տալ հատանել զերիս մատուննն և արկա-  
նել զմարմին նորա 'ի Տիրերիս դետ: Քանզի  
Ստեփանոս վրիպմամբ եղեալ էր 'ի մտի թէ ֆոր-  
մոզոս չէր օրինաւոր քահանայապետ, զի յե-  
պիսկոսպոսւթենէ 'ի պապութիւն. ամբարձաւ,  
որ ցայնժամ անսովոր իրք էին 'ի միոյ աթոռոյ  
վոխադրիլ յայլ աթոռ. նմին իրի մերժեաց  
զձեռնագրեալս նորա. այլ կրկին օրհնել ոչ իշ-  
խեաց: Զայս գործ սարսափելի և ատելի ամե-  
նեցուն թէպէտ խաքեալ 'ի թշնամեաց արար  
Ստեփանոս, բայց դարձաւ 'ի վիաս անձին իւրոյ:  
Զի նախ 'ի պատիժ նորա և 'ի զդասատութիւն  
յապա եկելոց անկաւ յորկ եկեղեցւոյն Լատե-  
րանու, ուր էր գահ քահանայապետաց: Եւ ապա  
ինքն յետ երեքտասամն կամ չորեքտասամն ամսոց  
իշխանութեանն մերժեալ յառաքելական գա-  
հէն խեղդամահ եղել 'ի բանտի 'ի ձեռն թշնա-

մեաց իւրոց յամին 897 : Կոկ մարմին երանելոյն  
Փորմոզսի գտաւ սքանչելեցը 'ի ձկնորսաց . և  
իրու բերաւ յեկեղեցի սրբոյն Պէտրոսի՝ պատ-  
կերք սրբոցն ողջունեցին զնայալութաւ [թեամբ  
իրու զկենդանի :

### Ճ. Զ.

#### ՌՈՄԱՆՈՍ

Խ. Տ. 897 . և կայսերական լամբէրտոսի հ .  
և Լէառնի 12 :

1/36. Յետ մահուան Սաեփանոսի Զընտրե-  
ցաւ Ռոմանոս գաղեսացի որդի Կոստանդեայ  
յաթու . քահանայապետութեան Հռովմայ յա-  
ռաջ քան զհնեգետասան հոկ . յամին 897 : Կար-  
ճութիւն ժամանակին թէպէտ ոչ ներեաց նմա-  
տոնել ինչ 'ի պիտանեաց և 'ի լաւագունից 'ի  
խռովայոյզ վիճակի անդ , բայց և այնպէս ոչ  
գանդաղեցաւ նանրացուցանել իսպառ զամե-  
նայն պտղուկանոն գործ նախորդին իւրոյ Սաե-  
փանոսի , որ ընդդէմ Փորմոզոսի պապին . զորոյ  
զալատուական մարմինն զետեղեալ 'ի պատշաճա-  
ւոր տեղւոյ պատուեաց : Գրեաց և նամակ վասն  
բարեկարգութեան հօտին , որպէս տեսանի առ-  
մեգ : Այլ աճապարեալ 'ի նա վազահաս մա-  
հուն վախճանեաց զկեանս , կացեալ յիշեա-

1 Բարձու . յամին 897 : Լուիտրու . Գիւր + 1 . Գլ . ը :  
Լոււտրու . Տիւմենիլ . հագ . 3 . Հարդ . և հըահ . նի .  
Գիւր + 42 : Բակ . յամին 897 : Գառապար Յաւլն . յու .  
իսրէր . Վիճ . 8 . ինդ . 6 :

նութեան ամիսս Երիս և աւուրս քսաներկու  
'ի սկիզբն վետ . յամին 898 <sup>1 :</sup>

## ՃՇԵ

### ԹԵՌԴՈՐՈՍ Բ

Ա. Տ. 898, և կայսերական Լոմբեցասի 5,  
և լէռնի 13:

1437. ԺԵԿՈՂՈՐԾԱ ՀՈՌՈՎՄԱՅԵցի որդի Բռն-  
դոսի, սիրելի ուխտին Հռավմայ, բարեկամ խա-  
ղաղութեան, առաքինի, հայրենասէր և աղքա-  
տասէր՝ յաջորդեաց յաթոռ սրբոյն Պետրո-  
սի գեղեցիկուսով ամենեցուն՝ սակա մեծամեծ  
գործոց լաւագունից 'ի հասաստութիւն սրբոյ  
եկեղեցւոյ : Քանզի ձեռն էարկ զամենայն  
սկսեալ գործո Փորմոզոսի՝ զորս մերժեալ էր  
Ստեփանոս՝ գլխաւորել, և զձեռնադրեալս նո-  
րա վերստին կարգել 'ի պաշտամունս իւրեանց  
հանդերձ ժողովով : Իսկ զմարմին Փորմոզոսի վա-  
ռաւորապէս անեալ ամիսովիեաց յառաքելա-  
կան դամբարանի : Յայսպիսի օգտակար կար-  
գաղըութեան հասեալ նմա մահ յամիշտակեաց  
յաշխարհէ յետ քսան աւուրց ձեռնադրու-  
թեան նորա <sup>2 :</sup>

1 Բարոն . յամ 900 : Սիհոն . Գիրք 6 . յամ 897 :

2 Փլուտ . յդ . գահան . Հռա . հագ . 3 . 5 . 2 . եր .  
319 : Բարոն . յամ 901 : Սիհեբեցասի . յամ 903 :  
Աւիսիլ . Գիրք 2 . Գլ . 7 :

## ՃՇԼ

ՅՈՎՀԱՆՆԻԿԱ Թ

Ա. Տ. 898, և կայսերական լամբէքառի 5,  
և լէռոնի 13:

1438. Ընդ վախճանել թէոդորոսի պապին  
Սարգիս ոմն երեց ջանահնար եղեւ սպրդել յա-  
թու քահանայտապետութեան . որոյ 'ի մերժել  
յուխտէն և 'ի հռովմայ՝ ընտրեցաւ Յովհաննէս  
տիրուրացի որդի հռամապուալդի սարկաւագ  
և կրօնաւոր բենեդիկտէան . և յելս ամսեանն  
յուշիսի յամին 898 օծաւ հանդիսաւոր արա-  
րողութեամբ յաջորդ սրբոյն Պետրոսի : Ապա  
յերկրորդում ամի գումարեաց կրկին ժողովս 'ի  
հռովմ և 'ի հռավեննա վասն բարեկարգու-  
թեան եկեղեցւոյ և վասն հաստատութեան  
սուրբ հաւատոյ : Յառաջնումն նանրացոյց զա-  
մենայն վճիռս և գործս ժողովոյն Սաեփանոսի  
Զ ընդդէմ Փորմողոսի՝ որ սակս մեծամեծ ար-  
դեանց յեկեղեցւոյն Պորտոսի յառաքելական  
գահ հրաւիրեալ էր, որպէս հաստատէրնա ինքն .  
և հրամայեաց այրել զգրուածս ժողովոյն այնո-  
րիկ : Կարդեաց անդրէն յառաջին աստիճանո  
խւրեանց և զմերժեալս 'ի Սաեփանոսէ : Իսկ  
զորս անիրաւեցան 'ի գերեզման և 'ի մարմին  
Փորմողոսի՝ ընդ բանիւ տրար, մինչև զգաստաս-  
ցին : Եւ առ 'ի խափանել զերկապառակութիւն  
յինարութեան պասլին՝ պատուիրեաց զի օծու-  
թիւնն լիցի առաջի գեսպահաց կայսեր : Ար-  
դել ևս՝ զի մի 'ի մահուան պասլին սլատրիար-  
գութիւնը և եպիսկոպոսութիւնք տիրապետես-  
ցին յայլոց . և մի՛ ոք յանդդնեսցի զհեա լինել

իշխանութեան առաքելական դահին : Խակյեր-  
կրորդումն զոր արար առաջի կայսեր՝ ընկճեաց  
զբոնութիւն Սարգսի և կողմնակցաց նորին  
խոռվասիրաց : Ետես զդարձ Նորմանից որ ՚ի  
Գաղղիա՝ յուղղափառ հաւատա . որով և ցնծա-  
ցաւ յոյժ : Հուսկյետոյ զամենայն ջան՚ի վար ար-  
կեալ ուղղեաց զանուղղայմ՝ բարեկարգեալ  
զհռովմ և զիտալիա, և փոխեցաւ առ տէր ՚ի  
մուտա օգոստոսի յամին ջօօ, կացեալ՚ի հայրա-  
պետութեան ամս երկուս և աւուրս հնդետա-  
ամն <sup>1</sup> :

## ԴԵՊՐ ԽՆԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ա. Տ.

800. Մեծն կարոլոս արքայ Գրաղղիոյ պատկի  
՚ի պապէն կայսր արևմտեայց :
806. Դաւիթ Բ նստի կաթողիկոսյետ Յովել-  
փայ :
808. Սահակ և Յովելփի նահատակին՚ի կարին :
833. Յովհաննէս Ե յաջորդէ յաթոռ կաթո-  
ղիկոսութեան :
854. Զաքարիա Ա կաթողիկոս :
856. Սմբատ խոստվանող վախճանի :
861. Սկիզբն տէրութեան Մոսկովաց ՚ի ձեռն  
բիւրիք իշխանին :
862. Աքլաւոնիք դառնան՚ի հաւատա :
876. Գէորգ Բ յաջորդէ զաքարիա կաթողի-  
կոս :

1 Բարոն - յամն 901: Բակ: 898: Լուիդբրան: Գիւտ 2: պատ: Գւ: Ճի: Թուվան: յշ: Վարդ: Հին և նոր էկ: Տ: 2: Գիւտ 2: Գւ: Էն: 6: Լու: հադ: 9: Ճաւ: էւ: 502:

879. Փոտ պատրիարք բաժանել զՅոյնս 'ի գա-  
հէն Հռովմայ :
879. Ծիւրիք առաջին թագաւոր Մոսկովաց  
մեռանի, և աիրէ իշխանն Օլեկ ընդ Դ-  
կորայ արքայորդւոյն :
880. Ամոռ թագաւորութեան Մոսկովաց 'ի  
Նովվորոտէ փոխի 'ի քիել :
885. Սկիզբն թագաւորութեան Բագրատու-  
նեաց :
897. Մաշտոց , և ապա Յովհաննէս Զ կացին  
կաթողիկոս :
899. Առներսէհ կիւրապազատ պսակի 'ի  
Սմբատոյ արքայ Վրաց :

Զայնու ժամանակաւ յետ Խուզիմայ ոստի-  
կանին նոտի 'ի Հայս Հոլ ոստիկան Հագարա-  
ցւոցյամին 818. ապա Բագարատ Բագրատունի  
հայ . ապա Ապուսէթ և ապա Բուղայ , որ հարըս-  
տահարէ զՀայս : Յետոյ լինի ոստիկան Շեխի  
պարաիկ , տպա մեծն Աշոտ Ա բագրատունի իշ-  
խանաց իշխան տիրէ 'ի Հայաստան յամին 859  
ամս քսանեւվեց . յետ որոյ թագաւորէ նա ինքն  
ամս հինգ , փոխեալ զաթոռն 'ի Բագարան .  
զկնի նորոյ թագաւորէ Սմբատ Ա բագրատունի .  
փոխեալ զաթոռն յԵրաղդաւորսյամին 891 :

## ՏԱՄՆԵՐՈՐԴ ԴԱՅ

ՃԳԹ

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Դ

Ա. 8. 900. և իայսերութեան Լուսավուսի գ. 1,  
և Լէտոնի 15 :

1439. Պահանջման հռովմայեցի որդի Մամողոսի միով աւուրբ յառաջ քան զկազանդս  
սեպտ. յամին 900, ձեռնադրեցաւ քահանայա-  
պետ հռովմայ, և եկաց 'ի նմա ամս երիս և ա-  
ւուրս երկու : Սա 'ի նմին աւուր ձեռնադրու-  
թեան գրեաց կոնդակ, որպէս երկի առ մեօք, և  
ջանահար եղեւ հաստատել զբարեկարգու-  
թիւնս : Որ և առ աղքատսիրութեան յաւետ  
մեծանուն հանդիսացաւ և գովելի 'ի բերանս ա-  
մենեցուն : Իսկ առ 'ի պաշտպան կացուցանել  
եկեղեցւոյ էօծ զլուդովիկոս գ. կայսր հռով-  
մայ : Սակայն չեւ ձեռնարկեալ յերկելի գործ  
ինչ փոխեցաւ յաստեացս յամսեանն հոկ. յա-  
մին 903 :

1 Բարոն . և Բարի . յամն 900 . և 901 : Աղետո-  
ւագ . վիճ . 15 . 'ի պատ . էկ . Դար լ . և Ճ . հա-  
6 . էր . 364 :

## ՃՒ

## ԼԵԽՈՆ Ե

Ա. Տ. 905. և կայսերական Լուդվիգի Գ. 4.  
և Լէսոնի 18:

1440. Յետ միոյ աւուր մահուան Բենեդիկտ  
տոսի յաջորդեաց յաթոռ քահանայապետու-  
թեան Լեւոն Ե արդէատացի : Որ զկնի յիսուն-  
և լեց աւուրց հալածական եղե յաթոռոյ իւր-  
մէ բռնակալութեամբ աղդակցին իւրոյ Քրիս-  
տափորի երիցու, և փակեալ 'ի բանտի վճարեաց  
զկեանս :

## ՃՒԱ

## ՔՐԻՍՏՈՓՈՐ

Ա. Տ. 905. և կայսերական Լուդվիգի Գ. 4.  
և Լէսոնի 18:

1441. Քրիստափոր հռովմայեցի որդի Լեւո-  
նի գրաւեաց զիշխանութիւն քահանայապե-  
տութեան յելս նոյ . յամին 905 : Այլ ոչ յեր-  
կարեաց 'ի նմին աւելի քան զամիսսեօթն . քան-  
զի Սորգիս երեց՝ որ ամս վեց ծածկեալ կայը (1438), յաջողութիւն գտեալ արտասահմա-  
նեաց զնա . և ստիպեաց ևս հրաժարել և առանձ-  
նահալ 'ի վանս կրօնաւորական վարուք : Բայց

1 Բարսն . յամին 907 : Բանի . 903 : Բելաբ . յա-  
մանը . 'ի գիրք յղ . գահ . զու :

և ինքն արգելեալ յետոյ՝ ի բանաի վախճանեաց  
զկեանո իւր . որպէս պատմէ և Կիակոնիոս :

## ՃԻԲ

### ՍԱՐԳԻՍ Գ

Ա. Տ. 904. և հայութուննեան Լուդավիսի գ. 5,  
և Լէսոնի իմաստանելի 19:

1442. Սարգիս հռովմայեցի որդի Բենեդիկտ  
տոսի և երեց եկեղեցւոյն Հռովմայ երթեմն ընտ-  
րեալ յոմանց յաջորդել զթէոդորոս պատ , և  
յայլոց մերժեալ (1438) հաստատեցաւ այսրէն  
յաժոռու քահանայապետութեան օգնութեամբ  
Ագեղբերտոսի Մարքեզի զկնի Քրիստափորի  
պապին , և ձեռնադրեցաւ ի մուտս յունիսի  
յամին 904: Սա խնամ կալաւ նորոգել զեկեղե-  
ցին Լատերանու զաւերեալն յերկրաշարժու-  
թենէ (1455) . զոր և վայելուչ զարդարեաց  
ուկեղեն և արծաթեղեն զարդուք : Զահի հա-  
րաւ իբրև լուաւ եթէ հերձուածն Փոտիսիընդ-  
դէմ Հոգւոյն սրբոյ տարածեալէ յարեւելս : Կո-  
րին վասն անդէն և անդ սպառնալից բանա-  
դրանօք կարճեաց զայնեանգործ արար առժամն:  
Եւ կացեալ 'ի հայրապետութեան ամս եօթն  
և ամիսս երիս՝ վախճանեցաւ յամսեանն օգոս .  
յամին 911: Լուիդբրանդոս որ սիրէ միշտ կա-  
տակաբանել , անպատեհս իմ զբարանէ զհայ-  
լապետէս , որ չունի բնաւ կալ առաջի գիանոց :

1 Բակ . յամ . 904: Բարս . 908: Մաբիւ-  
'ի յառաջ . ի դար է :

ուր այլք 'ի մատենագրաց դովառթեամբ խօսին  
զեմանէ :

## ՃԻԳ

### ԱՆԱՍՏԱՄ Դ

Ա. 8. 911, և կայսերական լուդովիսի գ. 12,  
և Աղեժանուրի 1 :

1445. Անաստաս որդի Լուկիանոսի 'ի հե-  
տեւալ աւուր մահուան Սարդոսի հաստատիցա-  
ջորդ նորա յաթոռ քահանայապետութեան .  
որ լեալ այր անարատ, ժուժկալ և անստգիւտ  
'ի վարս ըստ պատմութեան Պղատինայ, կառա-  
վարէ զեկեզեցին խմաստութեամբ : Պատմէ և  
Սիկոնիսու, թէ սա 'ի խնդրոյ բերենդարիսոսի  
արքային խտալիոյ թոյլ տուեալ էր եպիսկոպո-  
սին Տիկիոյ ունել հովանոց, հեծանել 'ի սպի-  
տակ երիվար՝ առնելով առաջի զիաաչ, և 'ի ժո-  
ղովի նստելընդահեկէ քահանայապետին :

Ինմին ժամանակի մեռաւ խաղաղաւէր կայս-  
րըն արևելց Վեւոն խմաստաէր, և եթող ժա-  
ռանդ զկոստանդին Պերիփեռուժէն : Սա տղայ  
գոլով թագաւորէր հօրեղբայր նորա Աղեքսան-  
դրը այր ամբարիշտ և անկրօն . որ յաւուր միում-  
տեսեալ զկուռա՞ ասէ 'ի նախատինս քրիստոնէ-  
ից' թէ բարեբազդ էր հռովմէական կայսերու-  
թիւն երբ պաշտէր զսոստ : Ընդ այս բան պատ-  
ժեալ 'ի տեառնէ երկնառաք պատուհասիւք՝

1 Բարբն . յան 908 : Բակ . 904 : Բելաբ . յլ .  
տակ . չու . գիր 4 . գլ . ժբ : Սիկոն . յլ . նագ .  
իդալ . գիր 6 . յան 904 : Յովհան . սարի . 'ի գիր  
յլ . եկ . Լուդել . գլ . ժէ :

այլ յայլմէ եղեալ սկսաւ աղաղակել, [թէ սուրբն  
Պետրոս տանջէ զիս . և անկեալ յերկիր՝ հոսէր  
՚ի մարմնոյն յորդ արիւն մինչև փշեաց զոգին :  
Խոկ հայրապեան Անաստաս կացեալ յիշանու-  
թեան ամս երկուս և նոյնչափ ամիս՝ փոխեցաւ-  
առ տէր ՚ի հոկտ . յամին 913<sup>1</sup> :

## ՃԻԴ

## ԼԱՆՏՈՍ

Ա . 8 . 913 , և խայսէր սանեան Լուդուկիուսի Գ . 14 .  
և կոսպանդէայ Ը . 2 :

1444 . Լանտոս սաքինացի որդի Տրանոսի ընտ-  
րի քահանայապետիբը՝ ի վեշտասան հոկտ . յամին  
913 , կամ յառաջ քան զամիսն փետրվար հե-  
տեւեալ ամին ձեռնադրի պապ : Որ զՅովհաննես  
՚ի խնդրոյ թէոդորայ յերիցութենէ յեպիսկո-  
պոսութիւն բօնոնիայ բարձրացուցեալ՝ հաս-  
տառեաց առաջնորդել զեկեղեցին Հռավեննայ :  
Եւ ինքն ոչ յերկարեալ՝ ի կեանս՝ մեռաւ . ի վեց  
կտղանդաց մայիսի յամին 914 , կացեալ յիշա-  
նութեան ամիսս վեց և աւուրս տասն<sup>2</sup> :

1 Բարոն . և Բակ . 910 . և 912 . Սիկոն . յլ .  
թագ . իսուլ . գիրք 6 . յամին 911 :

2 Լուիդ . գիրք 2 . գլ . ՃԳ : Բարոն . յամին 912 :

## ՃԻԵ

## ՅՈՎՃԱՆՆԻՍ Փ

Ա. Տ. 914. և կայունը բարեկան լուսավեճի գ. 15,  
և կոստանդեայ, լ. 3 :

1445. Յովհաննէս հռովմայեցի որդի Յովհաննու յեպիսկոպոսութենէ չուավեննայ յաթու. քահանայապետութեան գերազանցեաց յաւէտ հնարինք նորին թէոդորայ (1444). և օծաւ պատլ յելս ապրիլի յամին 914: Առ արութեամբ քաջութեան զինեալ ընդդէմ Ասրակինոսաց, որք յաղարտ վարէին զիտալիս ամս քառասուն, հաւաքեաց զօրս յարեելեան և յարեմտեան կայսերութեանց, և նոքօք հանդերձ հալածական արար զթշնամիս, կէս մի սրոյ ճարակ տուեալ և կէս մի գերի վարեալ. պաշտպան ունելուլինքեան զառաքեալսն Պետրոս և Պօղոս: Առա զբերենդարիոս յաւուր պատեքի օծեալ հանդիսապէս կայսր չուովմայ՝ կարդեաց զնապաշտպան եկեղեցւոյ ընդդէմ թշնամեաց (1445):

Առաքեաց զնուիրակս 'ի կոմակոստեղա Սպանիոյ յուխտ սրբոյն Յակովբայ առաքելոյ 'ի գիմաց իւրոց հանդերձ նամակօք առ Սիսենանտոս եպիսկոպոս քաղաքին, զի աղօթս մատուսցէ սրբոյն վասն իւր: Յետ այսորիկ չոքաւ 'ի Մանդուա ընդ առաջ չուգոնի արքային խտալիոյ, և մի զնորդ կալեալ զնա հաստատեաց զիսազազութիւն 'ի մէջ արեելեան և արևմտեան եկեղեցեաց, բարձեալ նա և զվաղեմի վէճ'ն՝ որով Յոյնքոչ օրինաւոր համարէին զամուսնութիւն քառից հանդիսապէս միոյ անձին, որպէս պատա-

հետև էր լեռնի խմաստասիրին, զոր գտատապարտեալ էին Յոյնք, և ապա նուիրակը պատվին տհօրինեալ զայն իրրե օրինաւոր: Պատմի թէ զիջեալ իցէ սա խնդրոյ կոմսին Ագուխտանիոյ, որ պահանջէր զորդին իւր մանկահասակ հաստատել յարքեպիսկոպութիւն Հռեմսայ: Եւ ինքն Յովհաննես պատ 'ի նենգութենէ Ս'արցիայ տիկնոջ՝ որ ձեռներէց էր և աջող 'ի մեծամեծ չարիս, ցաւագին վճարեաց զկեանս իւր 'ի բանտի յամսեանն յունիսի յամին 928, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորեքտասան:

## ՃԻԶ

### ԼԵԽՈՆ Զ

Ա. Տ. 928, և կայսերական կոստանդնուպոլիս Ը. 17:

1446. Լեռն հռովմայեցի որդի Ք.քիստավորի Պախմիկուռի այր սրբասէր՝ հաւանութեամբ ուխտին համօրէն ընտրեցաւ յաթոռ քահանայապետութեան Հռովմայ և օծաւ յելս տմսեանն յունիսի յամին 928: Որ զառաջինն ջան եղ շիջուցանել զառանին յուզմունս և զանապատեհ բերմունս եկեղեցականաց, և գեղեցիկ կարգօք հանդարտեցոյց զեկեղեցին: Են որ ասեն՝ թէ չհանդուրժեալ յաշաղկուտաց ընդ ուաքինի արարս նորա՝ երագեցին նմա մահ: Եւ 'ի հետեւեալ ամի յերեքն վետ ։ փոխեցաւ նա

1 Բարձն ։ և Բահ ։ յամն 912 ։ 915: Լուիդ ։ Գիւ 3: պատ ։ ԳԼ ։ Ի: Փշուարտուա ։ Գիւ 4: պատմ ։ Հուեմ ։ ԳԼ ։ Ի: Առուբ Բէտոնար ։ Առողլ 42: Լեռն Ոսպ ։ Գիւ 1: Ճամ ։ ԳԼ ։ ՃԻ:

առ աէր , կացեալ յաթու հայրապետութեան  
ամիսս Եօթն և աւուրս հինգ<sup>1:</sup>

## ՃԻԵ

### ՍՏԵՓԱՆՈՍ Է

Ա. Տ. 929, և իայնէրութեան Կոստանդնէայ ը. 18:

1447. Ստեփանոս հուռվմայեցի որդի Թէու-  
դեմոնափի ընտրեցաւ զկնի Լեւոնի ՚ի քահանայ-  
ապետ և առաջնորդեաց Եկեղեցւոյ ամս եր-  
կուս և աւուրս քառասուներկու : Սա ըստ  
պատմաբանից լեալ հեղահամբոյր և կարի իմն  
կրօնասէր՝ փութայր բարեղարդել զհօտ իւր և  
զեկեղեցի . սակայն վազվազեալ առ նա կենաց  
վախճանին՝ փոխեցաւ յաստեացս ՚ի հնդետա-  
սան մարտի յամին 931<sup>2:</sup>

## ՃԻԸ

### ՅՈՎՀԱՆՆԻՍ ԺԱ

Ա. Տ. 931, և իայնէրութեան Կոստանդնէայ ը. 20:

1448. Յովհաննէս որդի Սարդոի և Սարո-  
յիայընտրեցաւ սկապօրութեամբ Վեդոնի մար-  
քեղի Դոսքանայ յիդոսս մարտի յամին 931, և  
Եկաց քահանայապետ ամս չորս և ամիսս տամն,  
միշտ յաղթող ընդդէմ Սարակինոսաց : Թէոփի-

1 Պաղմէսս լուգայի . Գիրք 17 . պատ . Եկ . Գլ-  
թ : Աւբերա . Գիրք 1 :

2 Լամիդ . Գիրք 2 . Գլ . Ճիգ : Բարսն . և Բարի .  
յան 929 . 931 :

լակառս որդի Ռոմանոսի կայսեր նստեալ պատրիարք՝ ի Կոստանդինուպոլիս՝ առաքեաց ընծայած անրադինս առ Յովհաննէս սլատ, որպէս զի շնորհեսցէ նմա և յաջորդացն ունել իրաւունս կրելց զՊալիում<sup>1</sup> առանց ընդունելց զայն՝ ի քահանայապետացն Հռովմայ. զոր այնուհետեւ կրել իրաւանային ոչ միայն պատրիարքունք, այլ և եպիսկոպոսունք անդամ՝ Յետ այսօրինէ մին յորդոց Մարոցիայ Աղքերիկոս անուն զօրացեալ՝ ի Հռովմարդ արքել զպապն՝ ի քահանի. ուր վշտագին վախճանեաց զկեանս՝ ի սկիզբն յունվարի յամին 936<sup>2</sup>:

## ՃԻԹ

## ԼԵԽՈՆ Է

Ա. Տ. 936, և կայսերութեան կոստանդիւայ ը. 25:

1449. Լեւոն հռովմայեցի այր քարեկրօն և զգօն ընտրեալ՝ ի քահանայապետութիւն՝ ակամայ կամօքյանձն էառ, և յառաջ քան զօրն իններորդ յունվարի յամին 936 օծաւ սլատ. և եկաց յառաջնորդութեան եկեղեցւոյ խմասութեամբ ամս երիս, ամսա վեց և աւուրս տասն։ Սա հոգ տարաւ ծաղկեցուցանել զմենաստանս միանձանց. սորին վասն կոչեաց՝ ի Հռովմ զԱ-

1 Պալիում է պարունակութան իր ժամանակակից կայսեր կայրացութան մասն իւրաքանչ է մի ժողովուն լատինացաց, պոր ընորհն պատուի իւրաքանչ մետրապոլիտից՝ ի նշան կապարէւաւ եւ իւրաքանչ իւրատանց, ևս ևս հայութակութեան առ գահն առաջ էլաւիան։

2 Լուիդ. Գիրք 3. առ քարոն. յամ 931: Բունա. Գիրք 1. պատք. Գլ. իւր.

դոն վանահայր առ ՚ի սահմանել զկանոնս ՚ի  
հրահանգս կրօնաւորաց, և միանգամայն խաղա-  
ղութիւն հաստատել ՚ի մէջ Հուգոնի արքային  
խալիոյ և Ազբէրիկոսի իշխանին Հռովմայ: Ուր  
՚ի գառնութենէ ժամանակին և առ կարձու-  
թեան կենացնոչ ժամանեաց առնելայլ ևս գործ  
ինչ երևելի: քանզի ՚ի քսաններկուս յուլիսի  
յամին ցնց հասեալ նմա վախճան կենաց՝ փո-  
խեցաւ<sup>1:</sup>:

## ՃԼ

## ՍՏԵՓԱՆՈՍ Ը

Ա. Տ. 939, և կայսերական կոստանդնեայ ը. 28:

1450. Ստեփանոս գերմանացի ազգակից Ողո-  
նի արքային Գերմանիոյ ընտրեցաւ քահանայա-  
պետ Հռովմայ բանիւ նորա և հաւանութեամբ  
ժողովրդեան, քան թէ ուխտին: Բայց և այն-  
պէս խաղաղութեամբ և զգօնութեամբ վարեաց  
զպաշտօն իւր ծայրագոյն: Եթէ պարականոն  
ընթացք Ազբէրիկոսի իշխանին չենի խոչընդոտն՝  
պանծալի գործք Ողոնի արքային ՚ի ձեռն սո-  
րա հանգ խանալ ունեին յաշխարհի (1449):  
Քահանոյապետս այս յետ ամսոց ինչ ձեռնա-  
դրեցաւ պապ: բայց յառաջնում նուագին յե-  
րեւել նորա ժողովրդեան՝ ոմանք յապստամբաց  
յանդգնեալ նախառեցին զնա, զի օստարազգի եր-  
և հարուածս իմն ՚ի վերայ եղեալ այնպէս ագե-  
ղացուցին զնա, զի ոչ իսկ համարձակեր երևել  
մարդկան ՚ի հրասլարակի:

1. Բարբն. յան. 936: ՓՂԱԴԱՆՈՐ. Հայ. 3. 5. 2:  
Բակ. յան. 939:

Առաքեաց սա զԴամասոս և պիսկոպոս'ի գրադ  
զիա յամի ջկշ առ իշխանս՝ սպառնալով նոցա  
նզովս բանադրանաց . Եթէ չկամիցին լսել ձայնի  
հորա , որ յորդորէր զնոսա միանալ ընդ արքայ  
ին իւրեանց Լուգովիկոսի Դ Դրանամարինոս  
ձայնելըյ , տուլով նոցա ժամանակ մինչև ցծը-  
նունդ տեառն : Այլ ինքն 'ի նմին ամի 'ի սկիզբն  
դեկաեմբերի փոխեցաւ յաստեացս , կացեալ  
յիշխանութեան ամս երիս , ամիսս չորս և աւ-  
ուրս հնդեասասան <sup>1</sup> :

## ՃԱՆ

## ՄԱՐԻԿԱՌԱ

Ա . 8 . 942 . և կայսերական կոստանդնուպոլիս ը . 31 :

1451 . Մարինոս : որ և Մարտինոս Գ . հռով-  
մայեցի յառաջ քան զօրն չորրորդ փետ . յա-  
ջորդեաց զԱտեփանոս Ը յաթոռ քահանայա-  
պետութեան օրինաւոր ընարութեամբ համօրէն  
ուխանին , և եկաց յիշխանութեան ամս երիս և  
ամիսս վեց : Սա 'ի մթին դարու անդ հանդիսա-  
ցաւ իբրև լուսափայլ ջահ և սիւն հաստատու-  
թեան եկեղեցւոյ , ամբիծ 'ի վարս , ողջա-  
միտ 'ի վարդապետութեան , գերապանծ յա-  
ռաքինութեան և անխոնջյուղել զանուղայս ,  
և ոչ իսկ դադարէր շինել և նորոգել զեկեղեցիս :  
Կազդուրիչ էր տնանկաց և կարօտելոց հայրա-

1 Մարտին . Պիոլոն . 'ի ժաման . Եր . 337 : Բա-  
բէուրուժ . պատրի ժաման . Եր . 363 : Բաբուն . և  
Բաբէ . յան 939 :

դութիւն խնամովք, ևս և հաշտարար՝ ի մէջ քրիստոնեայ իշխանաւորաց տարաձայնելոց՝ ի մի մեանց : Փութացաւ գրելնամակս առ Սիզոն եպիսկոպոս՝ յանդիմանելով զանհմառութիւննորա եկեղեցական կանոնաց և կոնդակաց, միանդամայն զգուշացույեալ զիա՝ ի կարի իմն ընաւնութենէ ընդ աշխարհականս : Սարակինոսք, որք՝ ի զօրութենէ Յովչաննու պապին տարագրեալ էին յիտալիոյ՝ գարձ արարին անգրեն զօրու ծանու : Յայնժամ՝ արթուն հօտապետն զարթոյց զվիրտս կայսեր և իշխանաւորաց + որոց զինեալ՝ ի մի միաբանութիւն՝ անկան՝ ի վերայ թշնամեաց, և՝ ի յաջողելոց տեառն զորս՝ ի ջուր և զորս՝ ի հուր նաւակօքն հանդերձ ծախեալ նկուն արարին :

Զայնու ժամանակաւ կայսրն Կոստանդին բունագասեաց զԱրաբացիս յԵդեսիա, և ընկածեալ զժողովուրդն՝ ետքերել՝ ի Կոստանդինուսլիս զգաստառակին սուրբ և զթուղթն, զոր սուաքեալ էր Յիսուս առ Աքբար ազգայ Հայոց (502): Յետ բազում գժուարութեանց թոյլետուն տանել . և այն ինչ բարձեալ զարկղն կըրկին եպիսկոպոսաց ելին՝ ի Ճանապարհ, անդէն առ տեղեաւն ոչ սակաւ սքանչելիք և նշանք յայտնեցան . մինչեւ հասեալ՝ ի կայսերանիստ քաղաքն մուծին ընդ գուռն Ուկիւն հանդուցին առ ժամն՝ ի սուրբն Սոփիա, և անտի ապա՝ ի տաճար Աստուածածնին . ուր մնաց յԵրկար ժամանակ . և անդագար յայտնէին անտի մէծամեծ հրաշագործութիւնք մինչեւ ցառումն քաղաքին (631) : Յայնժամ ապա վորխագրեցաւ՝ ի Հռովմայ յեկեղեցին սրբոյն Սեղբեստրոսի, ուր պաշտի մէծարտիօք՝ ի հաւատացելոց մինչեւ ցայսօր ժամանակին իսկ մէծ քահանայապետն Մարինոս թողեալ զմարմին խոնարհութեան վո-

խեցաւ առ տէր յամսեանն յունիսի յամին  
946 ։

## ՃԼԲ

### ԱԴԱԲԵՏՈՍ Բ

Ա. Տ. 946. և կայսերական կապանդեայ Ռ 35 ։

1452. Ագարետոս հռովմայեցի 'ի նմին ամ-  
սեան կատարածի Մարինոսի պատվին յաջոր-  
դեաց յաթոռ քահանայապետութեան չռով-  
մայ, և կառավարեաց զեկեղեցին իմաստութեամբ  
և սրբութեամբ ամս տասն և ամիս երկու : Սա  
խոհական խորհրդովիոյթ տարեալշինութեան  
հօտին՝ առաքեաց զՄարինոս եպիսկոպոս Պողի-  
մարտիոյ 'ի Գաղղիա հրեշտակութեամբ առ 'ի  
հաստատել զլուդովիկոս թագաւոր յաթոռ  
իւր, որ նենգութեամբ չուգոնի տագնապէր :  
Եւս և առ 'ի ծանօթանալընդ եպիսկոպոսացն  
Գաղղիոյ և հաւաստեաւ հասու լինել. թէ ար-  
դեօք ո՛ իցէ օրինաւոր եպիսկոպոս չռեմսայ՝  
Արտալդոն, եթէ չուգոն : Ասլա 'ի հետեւեալ  
ամի արար ժողով 'ի սուրբն Պետրոս, յորում  
մերժեցաւ չուգոն եպիսկոպոս, և հաստատե-  
ցաւ թագաւորութիւն Լուդովիկոսի արքային :  
Կոչեաց և զլուգոն արքայ Գերմանիոյ յիտալիա առ  
'ի վրէժիննդրութիւն բերենգարիոսի իշխանին,  
որ հարստահարեր զեկեղեցականս՝ յափշտակե-  
լով զինչո նոցա : Իսկ եղօր Ոգոնի սրբոյն բրու-  
նոնի ալքեպիսկոպոսին կողոնիոյ առաքեաց Պա-  
լիում իշխանութեան հանդերձ այլ ևս առանձ-

1 Լէւսն Ոսպիոյ. Գիր+1. Ճաման. կասինէան . Գւ-  
ծէ : Բարսն. յան 943. 944: Պապմ. Հայ . Գիր+  
հ . Գւ. Էէ :

նաշնորհութեամբք : Այլ մինչդեռ այսպիսիքազքավարութեամբ և սքանչելի սրբութեամբ առաքինանայր Աղաքետոս'ի պաշտամանիւրում, հասեալնմա վախճան կենաց՝ փոխի առ Քրիստոս'ի քսան օգոս . յամին 956<sup>1</sup> :

## ՃԼԴ

## ՅՈՎՀԱՆՆԻԿԱ ԺԲ

Ա. Տ. 956, և կայսերական կոսպանութեայ Ը. 45:

1453. Յովհաննէս յառաջադոյն Հոկտաւիանոս կոչեցեալ որդի Աղքելիկոսի սկարկին Հռովմայ լեալ կղերիկոս՝ բարձրանայ յաթուքահանայապետութեան 'ի հասակի իննեաասն ամաց, և այն յաւէտ 'ի ձեռն իշխանաւորաց . որ 'ի սէր հօրեղբօր իւրոյ Յովհաննու ԺԱ փոխէ զառաջին անուն իւր 'ի Յովհաննէս յաւուր օծութեան, որ եղել զինի յերեքասասն կաղանդացն սեպտ. յամին 956:

Սա ոչ սակաւ վիշտս կրեաց յարքայէն իտալս 'ի բերենգարիոսէ և յորդոյ նորա յԱգեղըերատոսէ: Կմին իրի գեսպան առաքեալ առ Ոգոն արքայ Գերմանիոյ կոչեաց զնայօդնութիւնընդդէմ բոնաւորաց: Աճապարեաց արքայն մեծաւ զօրութեամբ հասանել յիտալիա, և նուաճեալ զրոնակալը՝ աղատեաց զիտալիա և զեկեղեցին 'ի հարստահարութեանց: Այլ հաւատացեալնորաթէ յօդնականութենէ գլխաւոր առաքելոցն արաւ 'ի գլուխ զյաղթութիւնն զայն: շոգաւ-

1 Բարոն. յամ 948: ՓՂԱԴՊԱՐԴՈՒ 'ի Ճաման . 949: Հոռովդէն 'ի վարս նորին սրբոյ Բարոնոնի, ԳԼ. Էֆ:

'ի Հռովմ՝ յայցելութիւն սրբոցն . և Յովհաննէս պատ հայրաբար պատուամիրեաց զնա , և հանեալ 'ի դահ կայսերական՝ Էօծ զնա կայսր Հռովմայ . որով յայնժամ կայսերութիւնն 'ի Գաղղիացւոց Էտից առ Գերմանացիս : Խակ կայթըն 'ի պարգևի մասին գարձոյց առ դահն առաքելական զամենայն Երկիր և զժառանգութիւն սրբոյն Պետրոսի , և հաստատեաց զարդես Պիաֆինի և մեծին Կարոլոսի հանդերձ հրովարտակաւ (1417) : Ուր և օրինագրեաց զի առ 'ի լինելըստ կանոնի ընտրութեան քահանայապետաց՝ օծութիւնն լիցի առաջի դեսպանաց կրայսեր :

Յետ այսորիկ Ոդոն Էտից 'ի Պատիա . բայց 'ի յապաղել կատարման խոստմանցն՝ Յովհաննէս ստարացաւ 'ի նմանէ և յարեցաւ յԱգեղքերոսս թշնամի կայսեր : Զայն լուեալ Ոդոնի խազաց զօրութեամբ 'ի Հռովմ , և Յովհաննէս պատ փախստական Էղե : Յայնժամ կայսրն շարժեալ 'ի կրից՝ Ժողով գումարեաց 'ի սուրբն Պետրոս և անխորհուրդ մաօք ետ ընտրել գերապապ զԼեւոն Դոր զկնի Երկուց ամսոց մերժեալ ուխտին՝ անգրէն հաստատեցաւ յաթու իւր Յովհաննէս , որ 'ի Ժողովի իւրում նանքացոյց զամենայն զգործս Ոդոնի և դասապարտեաց զԼեւոն (1189) : Բայց այնուհետեւ ոչ յերկարեալ 'ի կեանս մեռաւ ըռնամահ յառոյդ հասակի միովաւուրբ յառաջ քան զնանայս մայիսի յամին ցնէ , կացեալ յիշսանութեան ամս Էօծն , և ամիսսինն՝<sup>1</sup> :

1 Բարոն . յան 955 : Առբիլ . յառաջ . 'ի մասն 20 դար էլ : Փալուառաբդ . Ճանան . յան 954 : Լամբերտ . 'ի Ճանան . 962 : Լամբիդ . Գիրք 6 . Գլ . էլ : 'նէ ինչ . Առենան . յլ . լամբերտ . Գլ . Շ : Բարին . 'ի նմէն

## ՃԼԴ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ե

Ա. Տ. 964, և իւյնի բարեկան թիւնի 3, և  
Նիւելուսի 2:

1454. ԲԵՆԵԳԻԿՈՍ մականուանեալ գրամա-  
տիկոս սարկաւագ եկեղեցւոյն Հռովմայ յա-  
ջորդեաց զՅովհաննէս ԺԲ ընտրութեամբ Հը-  
ռովմայեցւոց, և առանց հաւանութեան կայսեր  
օծաւ պատ ՚ի հնդետասան մայիսի յամին 964.  
ուր սակաւ մի յառաջդաշնադրեալ էին ընդ Ոդո-  
նի ըդնել պատ առանց դիտութեան կայսեր :  
Նմին իրի ընդ լսելն զայն՝ տարապարտ սրամուու-  
թեամբ խաղոց զօրու ՚ի Հռովմ առ ՚ի վլէժ-  
խնդրութիւն երդմնազանցութեան նոցա: Թէ-  
պէտ և զառաջինն զդէմ կալան նմա Հռով-  
մայեցիք փոքր ինչ ժամանակ, այլ ապա ընկ-  
ճեալ ՚ի սովէ ընկալան զիա ՚ի Հռովմ: ԲԵՆԵ-  
դիկոս անկաւ ՚ի ձեւո Ոդոնի. և Ոդոն զրկեալ  
զնա յաթուոյն՝ հաստատեաց անդրէն զդերա-  
պապն Լեւոն Ը. իսկ զԲենեգիկոս վարեալ  
՚ի Գերմանիա՝ յանձն արար պահպանութեան Ա-  
դալդակոսի արքեպիսկոպոսի Համբուրգայ . առ  
որ եկաց նա ՚ի մեծի պատուի մինչեւ ցվախճան  
կինաց իւրոց :

Լեւոնայն ինչ ախրապեալ աթուոյն՝ ժողով  
արար և շնորհեաց Ոդոնի զիշխանութիւն ընտ-  
րելոյ զպապս և տալոյ եպիսկոպոսաց զաէրու-  
թիւն: Իսկ ԲԵՆԵԳԻԿՈՍ որ համբերէր ՚ի Գեր-

մի: Պէտքան Ամբի. Գիւն 1. յղ. հայ. Գլ. Ճա: Աւելի: Նախաւ. Վլճ. 16. ՚ի պապմ. Էկ. Ը:

մանիս առաքինակլոն վարուք, եղեւ յայտնութիւն 'ի վերուստ, և գուշակեաց նա զմօտալուտ մահ անձինն և զաւեր քաղաքաց 'ի սրոյ հեթանոսաց, և թէ յետ փոխագրելու մարմնոյն 'ի հոռվմ՝ տիրեացէ իսաղաղութիւն։ Ուր քաջ հաստատեն ժամանակակից պատմիչք՝ թէ զիարդ կատարեցան այս գուշակութիւնք։ Այլ նա յետ սակաւուց 'ի տասն յունիսի յամին 965 փոխեցաւ առ տէր 'ի պանդխառութեան։ Ի նմին ամի և գերապապն Անտոն Ը, որ երկիցս տիրապետեալ էր զառաքելական աթուն, կարծեալ 'ի կենաց մեռաւ<sup>1</sup>։

## ՃԿԵ

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԺԴ

Ա. Տ. 965. Ն կայսերաբնեան ՈՂոնի 4, Ն  
Նիկոլայոսի 3։

1455. Յովհաննէս հոռվմայեցի եպիսկոպոս Նարնեայ՝ հաւանութեամբ Ողոնի ընարեցաւ յաթու քահանայապետութեան հոռվմայ 'ի կաղանդս հոկտ. յամին 965։ Զառաջինն յայտնեալ զանազառ նախանձ առաքելական հոգւոյ՝ կշտամբեաց զիշխանս հոռվմայ։ որոց գործք աննման էին հաւասարյ։ Յորմէ ցասուցեալ նոցա գարանակալ եղեն արգարոյն, և գաւաճանութեամբ հոռավրետոսի քաղաքապետին տարագնաց արարին զնա յառաքելական գահէն 'ի կապուա քաղաք Աէտապօլսոյ։ Անդ մեծարեցաւ նա 'ի Պանդողփոսէ իշխանէ։ և 'ի խնդրոյ

<sup>1</sup> Աւ Գրագիւնուն. Բաժ. 63. Գլ. ԷՇ : Բարբական. յուն 964 : Դ. Ի. Գրագիւնուն. Գիլ 4 :

նորա արար զքաղաքն զայն արքեպիսկոպոսանիստ, և առաջին արքեպիսկոպոս ձեռնադրեաց զեղբայր նորա զՅովհաննէս :

Լուեալ Ռդոնի կայսեր զանցս մեծի քահանայապետին՝ մեծամեծս սպառնացաւ հռովմայեցւոց, և յարեաւ ՚ի վրէժխնդրութիւնն . որոց զահի մեծի հարեալ դարձուցին զհայրապետն ՚ի հռովմը : Սակայն և այնպէս չեղեն ազատ ՚ի պատուհասէ . քանզի կայսրն հրովարտակաւիրով գլխապարտ կացոյց զնոսա, զի մի ևս այլ ոքյանդգնեսցի յայսպիտիս . իսկ զքաղաքապետն հեծուցեալ յէշ՝ խայտառակեաց և ծանր կապանօք խաղացոյց ՚ի գերմանիս : Յետ այսորիկ սրբազանն ընդ կայսեր անցեալ ՚ի հռավեննա գումարեաց ժողով վասն բարեկարդութեան . յորում դարձեալ դատեցաւ չերովդոս յանցաւոր արքեպիսկոպոս, որ ժպրհէն վարել զիշխանութիւնն յորմէ զրկեալ էին զնա : Իսկ կայսրն զժառանդութիւնս և զերկիրս առաքելական դահին, զորս բարձեալ էին ՚ի նմանէ, անզրեն շնորհեաց զամենայնն Յովհաննու պապին, և ապա անտի մեծապանծ միաւօք յուզարկեաց զնա ՚ի հռովմը : Յայնժամ քահանայապետն ՚ի պատիւ կայսեր հանդիսապէս էօծ զորդի նորա համանուն թագաւոր գերմանիոյ, և միանդամայն հանդիսացոյց զնա դահակից կայսերութեան :

Այլ նորա մեծ եղև ցնծութիւնն իրեւ լուաւ զդարձ Պողոնիացւոց ՚ի հաւատաս քրիստոսի . զորս առ ՚ի հաստատել ՚ի ճշմարտութեան առաքեաց ՚ի լեհաստան զԵգիտիս եպիսկոպոս Տուսկուզոյ : Զկնի ասլա հասեալ նմա վախճան կենաց վոխեցաւ առ տէր յութ իդոսացն սեպտ . յամին 972, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց, ամիսս մետասան և աւուրս հինգ :

Կարծի յոմանց ՚ի պատմագրաց՝ թէ ՚ի հայ-

բասկետէ աստի սկիզբն կալետը իցէ յեկեղեցւով օծանել հանգիսիւ զզանդակս :

## ՃԼԶ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Զ.

Ա. Տ. 972, և Հայության Արքունի 11, և Յաշ. Զմբկի 4:

1456. Բենեդիկտոս հռովմայեցի որդի Հիւդեպրանգոսի'ի սկիզբն գեկտ. յամին 972, ձեռնագրեցաւ պատյամու. Հռովմայ : Այլ ոչ եւ հաս նմա ձեռնարկել 'ի դործ ինչ պիտօնի 'ի պատճառս Փրանգոսի հռովմայեցւոյ կարգինալին, որ բռնացեալ 'ի վերայ նորա 'ի ձեռն կուսակցաց իւրոց ընկեց զնա յամուսոյ առ 'ի սեպհականել զիշխանութիւն նորա . զոր և խեղդամահ արարին 'ի բանտի 'ի 974: Իսկ Փրանգոս լեալ հակապապ՝ յափշտակեաց զիշխանութիւն քահանայապետին և կոչեցաւ Վոնիվակիոս է : Այլ զկնի միոյ ամսոյ յարեաւ ընդդէմ նորա Բենեդիկտոս ոմն վառեալ նախանձու առաքելական դահին, և զփոխադարձն հատոյց նմա . և նորա ձեռնթափ լեալ կողոպատեաց զինչս 'ի գանձարանէ սրբոյն Պետրոսի, և տեղի տուեալ առանձնացաւ 'ի Կոստանդինուպոլիս իբրև սոսկական ոք : Ի նմին ժամանակի մեռաւ Ոդոն անուանեալն Մեծ, և յաջորդեաց որդի նորա Ոդոն Բ :

1 Աշուն Ոսքիայ. Ճամ. Գիրք 2. ԳԼ. Ճ՛Ը: Բարձու, և Բակ. յան 965: Բանա. Գիրք 1. յղ. ուսպ. ԳԼ. Ի՛Շ. 7:

2 Բարձու. և Բակ. 972. և 974: Պանվինիոս 'ի Ճաման. Ելել. Եր. 82:

## ՃԼԵ

## ԴԱՆՈՍ Բ

Ա. Տ. 974. և կայսերութեան Ուռնի Բ. 2.  
և Յաշ. Չյալի 6:

1457. Պատոս հռովմայեցի յաւետ նստաս-  
տիւք կոմիին Պոպքանայ կարգեցաւ քահանայա-  
պետ յամին 974. որ չեղե ձեռնհաս առնել  
ինչ բարեկարգութիւն. քանիզի զկնի միոյ ամի  
հասեալ նմա վախճան կենաց՝ մեռաւ :

## ՃԼԵ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Է

Ա. Տ. 975. և կայսերութեան Ուռնի Բ. 3.  
և Յաշ. Չյալի 7 :

1458. Բենեդիկտոս հռովմայեցի եպիսկո-  
պոս Առւարեայ որդի Պաւթի՝ ըստ սահմո-  
նադրութեան եկեղեցւոյ ընտրեցաւ հաւանու-  
թեամբ ամենեցուն յաթոռ քահանայապետու-  
թեան հռովմայ 'ի քսան և հինդ մարտի, յամին  
975. և իմաստուն կառավարութեամբ խաղա-  
ղացոյց զեկեղեցին զամա ինն : Գումարեաց 'ի  
հռովմ երկիցս ժողով. 'ի միումն դատապօչ-  
տեաց զբոնաւոր պասկն Վանիվակիոս, զոր հա-  
լածական արարեալ էր արգեն (1456), և 'ի  
միւսում դատապարտեաց զամանականոս (1190):  
Այլ 'ի գեղեցիկ կարգադրութեան անդ հա-

1 Բարբան. և Բատի. յան 974:

սեալ նմա վախճան՝ փոխեցաւ առ տեր՝ ի վեց  
իդուացն յուղան յամին 984։ Առ որով մեռաւ  
Ռդոն Բ., և յաջորդեաց Ռդոն Գ. իսկ Յովհաննէս  
Զմշկիկ դեղակուք Եղե ՚ի պալատի իւրում՝ :

## ՃԼԹ

## ՅԱՎՀԱՆՆԻՍ ԺԴ

Ա. Տ. 984, և կայսերական ՈՐՈՇ Գ. 2,  
Վառլի և կապանդէայ 9:

1459. Յովհաննէս եպիսկոպոս Տիկիոյ ընտ-  
րութեամբ ամենեցուն հաստատեցաւ քահա-  
նայապետ յաթու Հռովմայ ՚ի 984. և առ ՚ի  
պատիւ սրբոյն Պետրոսի առաքելապետին փո-  
խեաց զառաջին անուն իւր Պետրոս ՚ի Յովհան-  
նէս : Արոյ գեղեցիկ ընթացից և կառավարու-  
թեան խոչընդուան եղն գերապատին Վոնիփա-  
կիս (1456)։ որ ՚ի հետեւալ ամի գարձ արա-  
բեալ՝ կոստանդինուպօլոսյ ՚ի Հռովմ զօրացաւ,  
և բռնացեալ ՚ի վերայ Յովհաննու պապին՝ ար-  
գել զնայաշտարակին Ագրիանու, ուր անսուազ  
կամ գեղակուք վախճանեցաւ արդարն, յետ  
կալոյ ՚ի քահանայապետութեան ամիս ութ :  
Իսկ Վոնիփակիս երկիցս սեպհականեալ ըդ-  
գահն առաքելական՝ հուսկ յետոյ երկնառաք  
պատուհամիւք յանկարծամահ կորեաւ ՚ի նմին  
ամի :

Ըստ հնախօսից յայնժամ ընտրեցաւ պապ  
Յովհաննէս ոմն այլ՝ որդի Հռովերտոսի։ այլ  
փութով եղերեալ զկեանս՝ չեհաս նմա ձեռնա-  
գրիլ քահանայապետ, և ոչ ՚ի կարգս գասիլ

1 Բարոն . և Բալ . յահն 975, 984:

հայրապետաց Հռովմայ, որպէս ասեն Բաբելոնդիուս և Բակիուս<sup>1:</sup>

## ՃԽ

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԺԵ

Ա. Տ. 985, և կայսերական Ուրուի գ. 3,  
Վասլի և Կասպ. 10 :

1460. Յովհաննէս Հռովմայեցի որդի ականաւոր Երիցու Լեւոնի կարդեցաւ քահանայապետ յամսեանն գեկտ. յամին 985, և կառավարեաց զեկեզեցին խմաստութեամբ ամս մետասն: Սա 'ի պղատճառս անստդիւտ վարուցն ոչ սակու վիշտս կրէր 'ի նախանձուաց, մանաւոնդ 'ի կրեսկենտիոնէ հիւսկատոսէ բոնացելս յաշտարակին Ադրիանու, մինչև խոյստուեալ անտի 'ի Դոսքանա կարօտացաւ օդնականութեան Ողոնի արքային Գերմանիոյ: Յորմէ Երկուցեալ Հռովմայեցւոց՝ 'ի զեզջ եկին և խոստացոն հտատատութեամբ հպատակել քահանայուապետին յամենայնի. զոր և դարձուցին մեծարանօք 'ի գահ իւր:

' Հանդարակել ապա եկեզեցւոյ յերեսաց խոտվշացն՝ ժողովդումարեաց պապն 'ի Հռովմ, և քննեալ զդործս և զպքանչելիս սրբոյն Ուղդարիկոսի եպիսկոպոսի Աւգոստեայ՝ դասակարգեաց զետ վճռաւ իւրազի կարգս սրբոց 'ի յերեք փետ. յամին 993. յորմէ եղև սկիզբն հանդիսաւոր դասակարգութեան սրբոց:

' ամին ժամանակի սուրբն Ստեփանոս առա-

1 Ի. ծաման. Էկել. առ Յաշն. Ճ՛. Եր. 274: Բաւ. 986: Բարոն. 984. 985:

ջին թագաւոր Հռովդարիոյ տռաքինի գործովք եղել զօրավիզոյն սրբոյ եկեղեցւոյ՝ ընծայաւը Երևանելով նմին . և առ ՚ի հասասաել զազդիւր ՚իսուրբ հաւատաս շինեաց հոյակաալ եկեղեցիս յաշխարհի իւրում յորս վիճակաւորեցան տասն եպիսկոպոսունք : Իսկ քահանայապետն Յովհաննէս ՚ի ձեռն սաստիկ ջերման փոխեցաւ առեկր յեօթն մայ . յամին 996 : Սա հմտւա գոլով զինուորականութեան , ևս և պէսպէս գիտութեանց՝ շարագրեաց զայլեայլ գիրս պիտանիս :

## ՃԽԱ

### ԳՐԻԳՈՐ Ե

Ա . Տ . 996 , և կայսերութեան Ուժուի գ . 1/4 ,  
Վասուի և կապ . 21:

1/61. Գրիգոր գերմանացի կղերիկոս հմուտ գոլութեանց՝ յառաջադոյն անուանեալ Բըրունոս յազգակցութենէ Ոգոնի արքային՝ ձեռնադրեցաւ քահանայապետ Հռովմայ ՚ի լրման մայ . յամին 996 . և կառավարեաց զեկեղեցին քաջութեամբ հանդերձ ամս երկուս , և ամիսս ութ : Սա յաւուր պեհտեկոստէի զԱղոն գ . որոյ նպաստիւք բարձրացեալ էր ՚ի գերագոյն պատիւ պատպութեան՝ էօծ ըստ արարողութեան կայսր Հռովմայ , կարգեալ զնա և պաշապան առաքելական գահին : Ընդ նմին արար և ժողով . յորում սահմանեցաւ , զի կայսրն յեօթն իշխանաց Գերմանիոյ ընտրեացի . որք կոչեցան կայսրընատիլք :

Յետ այսորիկ իրու ուղեորեցաւ Ոգոն ՚ի

1 Բարսն . և Բակ . յամ 995 : Առըստինոս Պողոս .  
՚ի ծաման . Էլ . 344 :

՚ի գերմանիա, դարձեալ դլուխ ամբարձ ընդ-  
դէմ պապին Կրեսկենտիոս հիւպտատոս (1460),  
և արտասահմանեալ զնա՝ կացոյց հակապտակ  
զօվհաննես պիսկոպոս Պղակենտիայ անուամբս  
Յովհաննես Ժ. ՚ Խակ Գրիգոր քահանայապետ  
խոյս տռւեալ ՚ի Տիկիա՝ գումարեաց ժողով, յու-  
րում դատապարտեցաւ Կրեսկենտիոս։ Լուեալ  
Ոդոնի զանցս Գրիգորի պատմին՝ աճապարեաց  
յիտալիա, և անցեալ ընդ Հռապալեննա՝ հաստա-  
տեաց զկերպերտոս արքեպիսկոպոս տեղւոյն ։  
Նշանահի հանդերձ քահանայապետաւ եմուտ  
՚ի Հռովմ։ Յայնժամ հակապապն Յովհանն-  
նես անկեալ ՚ի ձեռս ժողովը եան՝ զրկեցաւ յա-  
չոց, յականջաց և յլնչաց։ Սապէս և Կրես-  
կենտիոս ձերբակուլեղեալդլիստեցաւ չարաչար։

Խակ Գրիգոր պատ հաստատեալ յիշխանու-  
թեան իւրում, արտր դարձեալ ժողով վասն  
բարեկարգութեանց (1190)։ Լուեալ թէ Հռո-  
րերտոս արքայ Գրազդիոյ կամի ամուսնանալընդ-  
բերգեայ ազգակցին՝ զայրացաւ յոդի իւր և ըս-  
պտանացաւ նմա բանազրանս եթէ ոչ հրաժա-  
րեսցի ՚ի նմանէ։ Յայնժամ Կերպերտոսի եպիս-  
կոպոսի Հռապալեննայ շնորհեաց ոչ միայն զարքե-  
պիսկոպոսութիւնն և Պալիում իշխանութեան,  
այլ և զաէրութիւն քաղաքին հանդերձ բաղում-  
արտօնութեամբք ինքնիշխան կառավարելոյ և  
հատանելոյ զգրամա։ Զկենի ապա հասեալ մե-  
ծի քահանայապետին՝ իվախճան կենաց՝ փոխե-  
ցաւ յաստեացս յերկոտասան կաղանդացն մտր-  
աի յամին 999<sup>1</sup>։

1 Բարոն Բաակ յան 996։ Առ Մաբիւ Դար Ե-  
թէնեդ ։ Եր. 860։ Դիմամբը գիրք 4։ Դրապէնոս  
յանախ։ Վարդ։ Եկ. Վիճ. 7։ Գլ. Պ. 3։ Ազեւու։  
Նապաւ։ Վիճ. 17։ Եինչ. պապ։ Դար։ Ե և Ճ։

## ՃԽԲ

## ՍԵՂԲԵՍՏՐՈՍ Բ

Ա. Տ. 999. և կայսերութեան Ունի կայսեր 4,  
Վասնի և Կոստ. 24:

1462. Սեղբեստրոս Ագուխանացի բենեդիկտիկան կրօնաւոր գապաստութի Գաղղիա և արքավիսկոպոս նախ Հռեմսայ և ապա Հռապելն նայ՝ ընտրեցաւ յաթոռ քահանայապետութեան Հռովմայ, և ՚ի թագադրութեան փոխեաց զառաջին անունն Կերբերատոս ՚ի Սեղբեստրոս Բյամի 999 ՚ի չօրս նոնայց ապրիլի: Սա թէպէտ չէր մեծաղդի, բայց իմաստութիւն և գերազանցութիւն հոգւոյն գերասատիճան բարձրացուցին զնա, մինչեւ ոչ միայն ժողովուրդ, այլ և թագաւորք հաւանեցուցին զուխտն Հռովմայ ընտրել զնա. մանաւանդ Ուդոն կայսր, որպէս և Հռովերատոս որդի Ուդոնի արքային Գաղղիոյ, որոց լեալ էր վարժիչ: Քաջ էր նա և վաեմամիտ յուտնաւնս գիտութեան. զոր և մեծապէս գրուատենն մեծիմաստ գիտնականիք. մանաւանդ Սարգիս Դ. քահանայապետ (1465): Սա եմոյծ ՚ի Հռովմայեցիս զձեւ թուանշանացն արաբացւոց. և զդքառութիւնն Պողոնիոյ բարձրացոյց ՚ի թագաւորութիւն. որպէս և զառըն Ստեփանոս որ զՊաննոնիա կամ զՄաճառս գարձոյց ՚ի հաւատոս, արքայական թագիւ ճոխացուցեալ անուանեաց թագաւոր Հռւնգարիոյ, տալուն նմա զեշխանութիւն տանելոյ տռաջի իւր զառըն խաչն. որպէս և յաջորդք իւր: Այլ ոչ յետ բաղմաց հանգիպեալ մեծի քահանայապետին վախճան կենաց՝ հանգեաւ ՚ի տէր ՚ի

հինդ լիդ ոսացն մայիսի յամին 1003. կացեալ  
յիւսանութեան ամս չորս և աւուրս երեսուն  
ևինն : Որոյ գատնին զանազան գրուածք և նո-  
մակը թուով հարիւր քառասունեինն :

### ԴԵԳՐ ՏԱՄՆԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ա. Տ.

908. Գագիկ արծրունի ապօտամբի յարքայէն  
Հայոց :
909. Յովհաննէս կաթողիկոս կապի ՚ի Հագա-  
րացւոց :
913. Խոր Շորիկովիչ առանձին տիրէ Մոս-  
կովաց :
914. Նահատակի Սմբատ արքայ և յաջորդէ Ա-  
շոտ Բ Երկաթ անուանեալ :
921. Աշոտ գնայ առ կայսրն Յունաց և մշ-  
ծարի յոյժ :
924. Առումն կաթողիկոսարանին Դըւնայ, և  
աթոռն վոխի ՚ի Վասպուրական աշ-  
խարհ :
925. Ստեփանոս Բնատի կաթողիկոս զկնի Յով-  
հաննու :
926. Թէոդորոս Ա յաջորդէ զՍտեփանոս :
929. Աթոռ թագաւորութեան Հայոց վոխի  
՚ի կարս :
930. Հերոլդոս առաջին քրիստոնեայ թագա-  
ւոր ՚ի Տանիմարդա :
936. Եղիշէ Ա կաթողիկոս առաջնորդէ :
943. Օլկա թագուհի տիրէ Մոսկովաց :

1 Բարսն . և Բակ . յամ 999 . և 1000 . 1003 :  
Դիտարք . Գիրք 6. Ճամ . Ել . 399: Մաբիւ . Դար Ղ:

944. Փոխադրութիւն դաստառակին քրիստոսի  
յԵգեսիոյ՝ ի Կաստանդինուպօլիս:
951. Ծնունդ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ:
955. Մեծ դշխոյն Մոսկովաց Օլիա լինի քրիս-  
տոնեայ:
958. Սվեաթոսլաւ Խղորեվիչ տիրէ Մոսկովաց:
961. Ամոռ թագաւորութեան Հայոց դնի յԱ-  
նի քաղաք:
962. Սանահին և Հաղբատ վանորայք շինեն:
965. Վահան կաթողիկոս յաջորդէ յաթոռն:
965. Միջալասոս առաջին քրիստոնեայ դուքս  
Լեհաց:
970. Ստեփանոս Գ. նոտի կաթողիկոս:
972. Մեծն Խոսրով վախճանի:
972. Խոջիկ Ա կաթողիկոս կարգի:
973. Ետրոփոլք Սվեաթոսլավիչ տիրէ Մոսկո-  
վաց զոր յաջորդէ
988. Վլատիմիր մեծ Խշան Մոսկովաց որ և  
տիրեալ Քերառնեսի՝ լինի քրիստոնեայ  
ընդ աղքին Ռուսաց և միապետէ:
992. Ստրգիս Ա կաթողիկոս նստի, և ամռոն  
հաստատի յԱնի:
996. Դարձ Մահառաց՝ ի Հաւատս:
- Զայնու Ժամանակաւ տիրէր՝ ի Հայաստան  
Աշոտ Երկաթ բագրատունի թագաւոր: Ապա  
Աքաս, ապա Աշոտ Գ. անուանեալ Ուղրմած:  
Յետ նորա Սմբատ Բ տիեզերակալ, և ապա Գա-  
գիկ Ա Հահնշահ յամի 989:

# ՄԵՏԱՍՏԱՆԵՐՈՐԴ ԴԱՐ

## ՃԽԳ

### ՅՈՎՀԱՆՆԻՍ ԺԿ

Ա. Տ. 1003, և իայսէրութեան չէնըիսսի Բ. 2,  
Վասլի և կոսպ. 28:

1463. Յովհաննիս հռովմայեցի աղնուազարմ և բարեկիրթ մականուանեալ Սիկկոս՝ ընտքեցաւ յաթոռ քահանայապետութեան զկնի մահուան Սեղբեստրոսի Բ. յաւետ ձեռնառութեամբ կոմսին Դոսքանայ, և օծաւ պատհանդիսապէս յերեք իդոսացն յունիսի յամին 1003: Սակայն ոչ յերկարեալ 'ի կեանս և չեւ ևս արկեալ ձեռն ՚ի գործ ինչ պիտանի՝ վախճան է հանմայեօթն իդոսացն դեկ. զկնի հինգ ամսոց և քսանևհինգ աւուրց <sup>1:</sup>

## ՃԽԳ

### ՅՈՎՀԱՆՆԻՍ ԺԿ

Ա. Տ. 1003, և իայսէրութեան չէնըիսսի Բ. 2,  
Վասլի և կոսպ. 28:

1464. Յովհաննիս հռովմայեցի մականուանեալ Փաղանոս՝ յաջորդեաց յաթոռ սրբոյն Պետրոսի յեօթն կաղանդացն յունվ. յամին

<sup>1</sup> Բարոն. և Բարի. յամ 1002: Ի ծանօթ. 4: առ Դրիգոր Եպոն. 141:

1003, և բարեկարգեաց զեկեզեցին խոհական կառավարութեամբ ամս հինդ և ամլաս հինգ։ Սա վտւթայուա առաքել զնութիրակ իւր 'ի Գեղմանիա առ 'ի եռւիլել և հաստատել զնոր Արքեալիակոպս Մագդեբուրգայ։ որովհետեւ չը նմա հնար գնալ 'ի Հռովմ առ 'ի ձեռնագրիլ 'ի պապէն ըստ արաօնութեան եկեղեցւոյ իւրոյ։

Առ հայրապետաւո եղե միաբանական սէր 'ի Ալշ եկեղեցւոյն Հռովմայ և Կոստանդինուսոլուոյ, զի Սարդիս պատրիարք կարգեաց զանուն նորա 'ի յիշտատակարանի։ Ընդ այն ժամանակս եղեն այլեւայլ ժողովք յիտալիա և 'ի Գաղղիա ընդդէմ անկարգութեանց ինչ, և յուզզութիւն անզգաստից։ Այլ յելս մայիսի յամին 1009 հասեալ Յովհաննու պապին 'ի վախճան կենաց իւրոց՝ վոխեցաւ առ տէր<sup>1</sup>։

## ՃԱԵՑ

### ՍԱՐԴԻՍ Դ

Ա. Տ. 1009, և կայսերական ՀԵՆՐԻԿՈՒ Բ. 8,  
Վասնի և կոսպ. 34։

1465. Սարդիս Հռովմայեցի որդի Մարտինոսի եպիսկոպոս Ալբանիոյ՝ յառաջագոյն Պիտրոս անուանեալ՝ ձեռնագրեցաւ 'ի 1009 յաթու հայրապետութեան Հռովմայ, վոխելով լզանուն իւր 'ի Սարդիս առ 'ի պատիւ առաքելապետին։ Որոյ լեալ առաքինասէր և առաստանիրտ առազքասս՝ հայրաբար խնամէր զամենեսին անսուդիւտ վարուք և գեղեցիկ քաղաքավարու-

1 Բարսն. և Բառի. յամ 1003։ Ծառն. 5. առ իննուն. Ա։

թեամբ : Հմուտ էր սա և դպրութեանց , որով յօրինեաց վայելու տապահագիր՝ ի վերայ սլապին Սեղբեստրոսի Բ. (1462) : Սակայն սղութիւն և անյարմարութիւն ժամանակին ոչ ներեաց նման՝ ի մեծագոյնս ձեռնարկել բայց միայն զարթոյց զօիրոս իշխանաց Խտալիոյ , որք հաւածական արարին զՍտրակինոսա ի Սիկիլիոյ : Ապա յետ երկուց ամաց եզերեաց զցանկալի կեանսն ի 1012<sup>1</sup> :

### ՃԽԾ

#### ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ը.

Ա. Տ. 1012 , և իայսերութեան Հենրիիոսի Բ. 11 ,  
Վասլի և կոսով . 37:

1466. Բենեդիկտոս որդի Գրիգորի կոմսին Դոսքանայ յառաջագոյն անուանեալ Յովհաննէս եպիսկոպոս Պորտոսի , յաջորդեաց յաթոռ սրբոյն Պետրոսի յեօթն յունիսի յամին 1012 , ի թագագրութեան փոխեալ զառաջին անունն ի Բենեդիկտոս : Այլ վաղվաղակի յետ հանգիւսին զերապապ հանդիսացաւ Գրիգոր կարգիւնալ ընդդէմ քահանայապետին . մինչև աեղի առեւտլնորա ապաստանեցաւ ի Գերմանիա առ Հենրիկոս արքայ : Որ մեծապահծ վիտոքը ընկալաւ զնա , և նոյնհետայն բռնադատեալ զգերապապին՝ կամակար հրաժարեցոյց յաթոռոյն . որով Բենեդիկտոս դարձաւ շքով ընդարքային ի գահ իւր առաքելական :

Յայնժամ վճիռ եհանքահանայապետն ստկակայսերութեան Հաւովմայ . զի մի ոք իշխեսցէ

1 Բարոն . և Բակ , յան 1009: Մաբիլ . դար Ղ . Բենեդիկտ . 5 . 1 :

անուանիլ կայսր առանց հաւանութեան պապին : Եւ ապա կազմեալ մեծ հանդէս պսակեաց զէնքիկոս օծմանը և ուկի թագիւ կայսերութեան, կարգեալ զիա պաշտպան եկեղեցւոյն Հռովմայ : Իսկ Հենքիկոս կայսր զամենայն վեճակս և զիրաւունս եկեղեցւոյն Հռովմայ զոր պարգևեալ էին կայսերքն Պիտին, մեծն կարողոս, Լուդովիկոս, և Ոդոն և որդի նորահասաւանաց վերատին : Դարձեալ օրինագրեաց, զի ուխան Հռովմայ ազատ ընարեսցէ զքահանայալետա, միայն օծութիւնն լիցի առաջի գեսպանաց կայսեր ըստ վճռոյն Եւգինէոսի բ և Լեւոնի Դ : Հրաման արար Բենեդիկտոս պատ'ի խնդրոյ կայսեր երգել 'ի հանդիսաւոր պատարագի զհանդանակն՝ Սիկիոյ թերևսցայնվայր վերծանէին միայն իբրև դաւանութիւն հաւատոյ (910) :

Զինի դարձին կայսեր 'ի գերմանիա տեսեալ պապին զըմբոստութիւն Յունաց՝ նուածեաց զնոսա . որպէս և զԱրաբացիս զինեալս անիրաւութեամբ ընդդէմ եկեղեցականաց : Եւ ապա զիջեալ աղաչանաց կայսեր՝ չոքաւ օծանել զեկեղեցին Բամբերկայ ընծայեալ զայն անուան սրբոյն Ստեփանոսի, և 'ի նմանէ ընկալաւ զքաղաքն զայն յընծայ սրբոյն Պէտրոսի : Ապա արար և ժողով 'ի Պաւիա կամ 'ի Տիկիա վասն ժուժկալութեան կղերիկոսաց (1291) : Եւ հասեալ 'ի վախճան կենաց իւրոց՝ փոխեցաւ առաքիստոս 'ի քսանեութ փետ . յամին 1024, կացեալ յիշխանութեան ամս մետասան 1:

1 Բարոն . և Բակ . յամ 1012 : Պիտմար . Գիլտ 6 . Ճամ . էր . 399 : Լէռն Ոստիու . Գիլտ 2 . Ճամ . Գւ . Խոլ . և ՅՌ : Մաբիւ . յամ 986 :

## ՃԽԵ

ՅՈՎՀԱՆՆԻՍ ԺԹ

Ա. Տ. 1024, և իսակը մութեան կոնբարուի թ. 1.  
Վասլի և կոռտ. 49:

1467. Յովհաննէս մականուամբ Հռովմայ-  
եցի եղբայր Բենեգիկասոփ Ը այր առատասիրտ  
և զօրաւոր՝ յաջորդեաց զհարազատ իւր յաթու-  
քահանայապետութեան՝ ի վեց յունիսի յամին  
1024: Որ իւրով առատաձեռն բարոյիւք բարձ-  
րացեալ յաշխարհականութենէ մինչև ցգերաս-  
տիճան գահ առաքելական՝ զեկավարեաց զե-  
կեղեցին իմաստութեամբ ամս ինին :

Ի սկզբան անդ հայրապետութեան նորա ա-  
ռաքեցան՝ ի Հռովմ դեսպանք կայսեր Յունաց  
և պատրիարքի նոցա հանդերձ ծանրադին ըն-  
ծայիւք, խնդրելով զի քահանայապետն հաւա-  
նեսցի կոչել զպատրիարքն Կոստանդինուպոլ-  
սոյ ընդհանուր գլուխ արևելեան եկեղեցւոյ,  
որպէս ինքն է գլուխ ընդհանուր ամենայն ե-  
կեղեցեաց աշխարհի: Այլ նորա մերժեալ զոր  
խնդրեինն՝ ասաց. Անվիրեալ է Զմանարատութիւնն,  
և գրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն:

Եկաւորեալ՝ ի Հռովմ արքայն Գերմանիոյ  
կոնբարու՝ պատուամիրեցաւ՝ ի սլատէն. և նա  
հանդէս կազմեալ յաւուր կիւրակէի փառօք  
պսակեաց զնա կայսր Հռովմայ յառաջակայու-  
թեան ալքային Ընդդեոյ և Տանիմարդայի: Այս  
հայրապետ արար ժողով՝ ի Հռովմ (1191), և  
հաստատեաց զի ամոռուն Ագուիլայ իցէ մերա-  
պօլտական բովանդակ Վենետիկոյ. նա և ուհ-  
մանեաց զԳրատիտյն լինել մերապօլիտ Վենետ-

կոյ և խստրիոյ : Յետ այսորիկ հասեալ վախ-  
ճան կենաց քահանայապետին փոխեցաւ առ-  
տեր յութ մայիսի յամին 1053 <sup>1:</sup>:

## ՃԽԸ

### ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Թ.

Ա. Տ. 1053, և կայսերական կոնբարուսի Բ. 7.  
և Ռոմանոսի 6 :

1468 . Բենեդիկտոս որդի Ազբերիկոսի հիւ-  
պատոսին և Եղբօրորդի Բենեդիկտոսի Ը և Յով-  
հաննու ԺԹ յաջորդեաց յաթոռ քահանայա-  
պետութեան յամին 1053 : Որ նպաստիւք աղ-  
դակցաց իւրոց , քան թէ յարժանաւորութենէ  
անձին՝ բարձրացաւ յայն պատիւ . զի մանկահա-  
սակ էր և տղայամիտ : Սակայն և այնպէս յեկեղե-  
ցւոյդասեցաւ 'ի կարդու հայրապետացն չոռվմայ:  
Առ սովաւ Գաղղիմիր արքայ Լեհաստանու տե-  
սեալ զապատամբութիւն ժողովրդեան իւրոյ՝ ա-  
ռանձնացաւ 'ի վանս կրօնաւորական քաղաքա-  
վարութեամբ : Այլ իբրև վերստին խնդրեցաւ  
յազգէն , հրաման ետ նմա պապն երթալ հաս-  
տատել զթագաւորութիւն իւր և լինել պաշտ-  
պան հաւատոյ և եկեղեցւոյ :

Յետ այսորիկ տեսեալ հռովմայեցւոց զման-  
կաբարոյ դնացս հայրապետին՝ մերժեցին զնա ,  
և եդին 'ի տեղի նորա Սեղբեստրոս զոմն : Բայց  
Բենեդիկտոսի անդէն զօրացեալ նպաստիւք մա-  
նաւանդ կոնքադոսի կայսեր՝ վերստին հաստա-  
տեցաւ յաթոռ իւր : Յետ այսորիկ տեսեալ պա-

1 Բարբն . և Բակ . յամն 1024: Կղաբեր . Գիրտ  
4: Առաջ Պիետրոս Դամ . Առաջլ 9 . առ 1, ի ող . Բ.:

ային զարժանաւորութիւն և զբարութիւն Յովլ  
հաննու Գրատիանոսի աւագերիցու՝ կամակար  
հրաժարեցաւ յիշխանութենէ, և դովելի մաօք  
ձեռնադրեաց զնա քահանայապետ և յաջորդ  
իւր, կոչելով զնա Գրիգոր Զ. յետ վարելոյ զիշ  
խանութիւն պապութեան ամս երկոտասան :  
Այլ յետ մահուան կղեմայ Բ. (1470) ԲԵՆԵ  
դիկտոս գարձեալ հաստատեցաւ յաթոռ իւր  
զամիս ութ, որպէս պատմեն Լեւոն և այլք<sup>1</sup> :

### ՃԽԹ

#### ԳՐԻԳՈՐ Զ.

Ա. Տ. 1044, և կայսերութեան ՀԵՆՐԻԿՈՒ գ. 6,  
և կոստ. Մանումեասուի 3 :

1469. Գրիգոր աւագերեց սրբոյն Յովհան-  
նու յառաջնորդ ձայնեալ Յովհաննէս Գրատիա-  
նոս՝ ձեռնադրեցաւ 'ի ԲԵՆԵԳԻԿՈՍՈՒ թ և ա-  
նուանեցաւ Գրիգոր Զ. : Որոյ ընկալեալ 'ի նմա-  
նէ զիշխանութիւն քահանայապետութեան յա-  
մին 1044, ձեռն էարկ շահել և ուղղել զանուղ-  
ղայս. ստկայն և այնպէս 'ի համբաւոյ սրբու-  
թեան և առաքինութեան նորին նախանձընդ-  
դէմք յարեան նմա բազումք 'ի խոռվայոյզ ժա-  
մանակին: Մինչ զի 'ի գալ ՀԵՆՐԻԿՈՍԻ Գ.'ի ՀԱՌՎԵ-  
ՐԵՐԵԱԼ ընդ իւր զՍուիդգերոս սաքսոնիացի ե-  
սլիսկոպոս Բամբերկայ, կամեցաւ զնա հաստա-

1 Բարոն. և Բահ. 1033: Կղաբեր. Գիր+ 4:  
Մարգինոս Գրումեր. Գիր+ 4: Թագմասին. յլ. հին  
և նոր վարդ. ել. յ. 1. Գիր+ 2. Գլ. իք: Լեւոն  
Ասդիայ Գիր+ 2. Ճամ. Գլ. յա: Առ Բաբելոն. ել.  
295:

տեղ սպազ 'ի ժողովին Սուտրեայ: Ուր Գրիգոր  
սպազ թէ և օրինաւոր քահանայապետ, առ ժա-  
մայն հրաժարեցաւ կամակար մատք յիշխանու-  
թեանէ իւրմէ վասն խաղաղութեան եկեղեցւոյ,  
յետ վարելոյ խմասառութեամբ զծայրագոյն պաշ-  
տօն քահանայապետութեան ամս երկուս և ա-  
միսս ուլժ: Եւ ոչ իսկ եկաց 'ի Հռովմ', այլ ընդ  
կայսեր անցեալ 'ի Գերմանիա՝ անդ վախճանեաց  
նովին բարեպաշտութեամբ զնշխարեալ կեանս  
իւր<sup>1:</sup>:

## ՃՃ

## ԿՂԵՄԿՍ Բ

Ա. Տ. 1046, և կայսերական Հենրիոսի գ. 8,  
և կոստ. Մանումետոսի 5:

1470. Կղեմէս սաքսոնիացի յառաջագոյն  
Սուիգգերոս ձայնեալ՝ եպիսկոպոս Բամբերկայ  
ընտրութեամբ ամենայն ուխտին և ժողովրդեան  
և եպիսկոպոսաց մեծահանդէս օրհնեցաւ քա-  
հանայապետ 'ի առնի ծննդեան տեառն. յորում  
առուր պատկեցաւ կայսերական թագիւ և Հեն-  
րիկոս արքոյ Գերմանիոյ ընդ թագուհոյն իւ-  
րոյ Ագնեսի: Այս քահանայապետ յընտրու-  
թեան անդ 'ի ժողովին Սուտրեայ ոգուով չափ  
ընդդէմ եկաց առ 'ի զերծ լինելոյ 'ի ծայրա-  
գոյն պաշտամանէ անտի. այլ ժողովին չդտեալ  
զայլ ոք քան զնա արժանաւոր և հմուտ իրաց ա-  
մենայնի, կարգեաց զնա գլուխ եկեղեցւոյ: Որ  
'ի հետևեալ ամի ժողովը արարեալ 'ի Հռովմ'

1 Բարոն. և Բառ. յան 1044: Լառն Ոստ.  
Գիր 2. Գլ. Յա: Լաբիդ. Գիր 6. Գլ. Է: Թում.  
Չ. Հին և նոր վարդ. Ել. Տ. Յ. Գիր 1. Գլ. Յա:

վճռեաց՝ զաւուրս քառասուն ապաշխարելնոյա  
որք սիմոնականութեամբ ձեռնադրեալ իցեն, և  
ապա իշխեսցեն վարել զպաշտօն իւրեանց: Վասն  
օգտի հասարակաց չոքաւ 'ի գերմանիա ընդ կայ-  
սեր, և յետ սակաւուց դարձ արար անդրէն յա-  
թու իւր: Այլ յեօթն իգոսացն հոկտ: յամին  
1047, հասեալ նմա վախճան կենաց՝ փոխի 'ի  
Քրիստոս, կացեալ 'ի քահանայապետութեան  
ամիսս ինն և աւուրս հնդետասան: զորոյ զմար-  
մինն փոխադրեցին 'ի Բամբերկա<sup>1:</sup>:

## ՃԾԱ

## ԴԱՄԱՍՈՍ Բ

Ա. 8. 1048, և կայսերութեան հենբիոսի Գ. 10,  
և Կոստ. Մոնոմակիոսի Ղ:

1471. Դամասոս ազգաւ գերմանացի՝ Բոբ-  
րս անուանեալ, յառաջն եպիսկոպոս Բրեք-  
սենացւոց ընտրեցաւ պատ նպաստիւք կայսեր,  
և 'ի վեշտասան կաղանդացն օգոս: յամին  
1048, հանդիսացաւ քահանայապետ Հռովմայ  
ըստ եկեղեցական սահմանադրութեան: Բայց  
սակաւօրեայ եղեալ զի՞նի քսաներից աւուրց  
վախճանեցաւ:

Ի սմին ժամանակի մեռաւ սուրբ Ոդիլոն աբ-  
բայ. որ յառաջ քան զմահն հաստատեալ էր 'ի  
կարգի իւրում զմասնաւոր օր մեռելոց յերկ-  
րորդ աւուրս տօնի ամենայն սրբոց: զոր եկեղեցին  
հրամայեաց կատարել յամենայն լատին եկե-

1 Բաբոն. և Բահ. յան 1046: Բաբեա. 'ի Ճահ.  
պատ. առ Կըմ. բ. Եր. 293: Ակիմու Գ. Գիւ+  
Յ: Ասրբ Պետ. Դամ. Գլ. Ա:

զեցիս 'ինմին աւուր հանդիսիւ աղօթելով վասն  
ննչեցելոց <sup>1:</sup>:

## ՃԾ.Բ.

Ա. ԼԵՒՈՆ Թ.

Ա. Տ. 1049, և կայսերական Հենրիխոսի Գ. 11,  
և կապ. Սոնոմախոսի 8 :

1472. Լեւոն թագաւորացն որդի կոմին  
Դաղբուրկայ առաքելաշնորհ և մեծիմաստ ե-  
պիսկոպոս Տուղայ, որոյ տնուն էր Բրունոս, ընտ-  
րեցաւ յաթու քահանայակետութեան հռով-  
մայ նախ 'ի ժողովին Վորմաախոյ 'ի Հենրիկոսէ  
կայսերէ ազգակցէ իւրմէ : Զոր 'ի սկզբան անդ-  
առ մեծի խոնարհութեան չեառ բնաւ յանձն,  
այլ հուսկ յետոյ զիջաւ 'ի բազում թախանձա-  
նաց, և ընկերակցութեամբ Հիլդեբրանդոսի պաշ-  
տօնէին, որ եղե զինի պապ՝ անուանեալ Գրի-  
գոր Ե (1477), չոդաւ բոկոտն 'ի Հռովմ իբրև  
ուխտագնաց, և պատուասիրեալ յուխտէ. և 'ի  
ժողովրդենէն Հռովմայ մեծաւ փառօք և ցնծու-  
թեամբ ամենեցուն բարձրացաւ 'ի գահ առա-  
քելական միովառուրբ յառաջքան զիդոսս փետ-  
յամին 1049:

Գերահռչակ երեւցաւ սա յառաքինութեան  
և 'ի սրբութեան և յողջամիտ վարդապետու-  
թեան. և ջանտհնար եղե հաստատել զլարդա-  
պետութիւն և զիանոնս հարց սրբոց զնսեմա-  
ցեալսն 'ի գառնութենէ ժամանակին : Գումա-  
րեաց զայլեայլ ժողովս յիտալիս, 'ի Գերմանիա

1 Լէտոն Ոսպ. Գիրք 2. Գլ. Յա: Հերմանոս և  
Բարոն. յամն 1048 :

և 'ի Գաղղիա սակս բնաջինջ առնելոյ զանկարդութիւնս և զսմոնականութիւնն , և հաստատելոյ զբարեկարգութիւնն հանդերձ պարտուստամանք դարմանօք վասն յանցաւորաց : Վը ունեաց և վասն կղերիկոսաց լինել ժուժկալ և անարտատ'ի գնացու : Եւ ինքն հանդերձ առաքինակրօն վարուքին և ճգնասէր էր . զի երկիցս 'ի շաբաթու գնայր բոկոտն սազմոսելով 'ի Լատերանէ 'ի Ատիկան յայցելութիւնսրբոց՝ ընկերակցութեամբ երից կղերիկոսաց և եթ : Փափաքէր շրջել յուխտատեղիս սրբոց յիտալիա : Կտտարեալ զհանդէս ծննդեան փրկչին 'ի Վերոնա, անտի անց 'ի Վենետիկ 'ի յարդութիւնն սրբոյն Մարկոսիաւետարանչին . և մեծարեցաւ յոյժ'ի դքսէն և 'ի հաստրակապետութենէ անտի, և շրջեալ ապա յեկեղեցիս՝ Ճոխացոյց զսուրբ տեղիս՝ բաշխելով զներողութիւնն և պէսապէս առանձնաշնորհութիւնն : Անդէն դարձեալ 'ի Հռովմարար ժողով, յորում նզովեաց զբերենդարիոս սարկաւագ, որ ուրանայր զՃշմարիտ մարմինն և արիւնքիատոսի լինել 'ի հաղորդութեան (835) : Ուր արձակեաց և զլանփրանկոս այր կասկածել կարծեցեալ նովին հերետիկոսութեամբ : Յետ այսորիկ փափաքեաց գնաոլ 'ի Գաղղիա յայցելութիւնն եկեղեցւոյն Տուղայ վիճակի իւրոյ . զորոյ զկառավարութիւնն ցայն վայր ինքն ունէր : Ի Ճանապարհին արար ժողով 'ի Վերկեղեայ, յորում դատապարտեաց զմատեանն Յովհաննու Ակոթոսի (1279) : Ասկա դարձ արարեալ 'ի Հռովմարի ժողովի ժողովի դատապարտեաց զԳրիգոր Եպիսկոպոս Վերկեղեայ սակս անիրաւութեանցն :

Չոքաւ դարձեալ 'ի Գերմանիա առ 'ի բառնալ զվէճն 'ի մէջ կայսեր և արքային Հունգարիոյ : Առեալ զօրս 'ի կայսերէ՝ խաղաց յիտալիա նուաճել զՍորմանս , որք աւար հարկանէ, ին

յԱպուղիս և յայլ տեղիս վիճակին հռովմայ։  
Իբրև եհաս՝ ի Պատաւիոն, լուեալ՝ ի Բեռնար-  
դոսէ եպիսկոպոսէ զնոր յայտնութիւնս և զըս-  
քանչելիս սրբոց՝ հռչակեաց, և մատուցեալըզ-  
հանդիսաւոր պատարագ՝ ի հոյակապ եկեղե-  
ցւոջ սրբուհւոյն Յուստիանեայ՝ կարգեաց զաօնս  
և պիշատակս սրբոց։ Անտի յառաջ խաղացեալ  
՚ի վերայ Նորմանից, մարտյարդարեցաւ ընդ նո-  
սա և ընդ զօրս կայսեր, այլ յաղթական դտեալ  
թշնամիքն՝ գերիվարեցին զպապն՝ ի Բենեվենտո:  
Բայց պատկառեալ նոցա՝ ի գերապանծ շնոր-  
հացն որ փայլեր ՚ի դեմս նորա՝ յետս դարձու-  
ցին զնա:

Իբրև լուաւ՝ եթէ Միքայէլ պատրիարք Կոս-  
տանդինուազօլսոյ վերադասէ զենքն յեկեղեցւոջ  
դրելով նամակս առ եպիսկոպոսւնս ոգւով  
հպարտութեան, նանքացոյց զբանս նորա իմաս-  
տուն վարդապետութեամբ իւրով։ Եւ առա-  
քեաց զմեծարու նուիրակս իւր՝ ի թագաւորեալ  
քաղաքն սակս միաբանական սիրոյ և շահելց  
զակարս. այլ չեւ ևս դարձեալ նոցա՝ անկառ ՚ի հի-  
ւանդութիւն, և նախապատմեալ զօր վախճանին  
իւրոյ՝ յերեքտասասան կաղանդացն մայիսի յամին  
1054, հանգեաւ ՚ի Քրիստոս յետ կալց ՚ի հայ-  
րապետութեան սքանչելի վարուք ամս հինգ, ա-  
միսս երկու և աւուրս եօթն. և մարմին նորա  
ամիսովիցաւ յեկեղեցւոջ սրբոյն Պետրոսի։  
Գտանին առ մեօք սորա իմաստուն ճառք և  
կոնդակեք վճռոց<sup>1</sup>:

1 Բարոն. և Բակ. յաճ. 1049: Ա. Հ. Կոմիտաս Շ Գիշէ  
3: ՏՐԻՆԵՖԱՆ. յղ. ճապ. եկ. Գլ. յաշ: ՈՐԴԵՐԻՆԱ  
Վ. Կոմաչ. Գիշէ 1. պապ. եկ: Լ. Ե-րան Ուպ. Գիշէ 2:  
Ս. Ա. Բ. Հ. Գիշէ 2. յղ. Հ. Բ. Կ. Գլ. Գլ. Ի. Ե. Շ:

## ՃԾԳ

## ՎԻԿՏՈՐ Բ

Ա. Տ. 1055, և իսյուերութեան հենրիկոսի գ. 17.  
և թիւուրայ 2:

1473. Վիկտոր յառաջադոյն անուանեալ գերեարդոս՝ եպիսկոպոս Աստայ գերմանիոյ, խորհրդական՝ և ըստոմանց աղջակից հենրիկոսի գ. այլ մեծահամբաւ սրբութեամբ և իմաստութեամբ՝ ընտրի յաթու. քահանայապետութեան ինոյն կայսերէ. քանզի յետ մահուան սրբոյն Լեռնի ու խան հռովմայ խորհեալ ընդ ժողովրդեան առաքեաց գեսապանութեամբ առ կայսրն զնուիրակին հիլդեբրանդոս (1472), ցուցանել նոցազարժանաւոր ոք այնու մեծի պատուոյ: Եւ հերիկոսի ընտրեալ առաքեաց առ նոսա զգերեարդոս եպիսկոպոս. թէպէտ նա տկամայ կամօք զիջաւ յանձն առնուլ զայն ծայրադոյն պաշտօն: Եւ ուխան համօրէն մեծաւ ցնծութեամբ ընկալեալ զնա բարձրացոյց յառաքելական դահյիղոսս ապրիլի յամին 1055: Որ և հետեւեալ հետոց նախորդին իւրոյ նախանձաւոր եղեւ օրինաց տեառն:

Գումարեաց ՚ի Փլորենտիազազգային ժողով, ուր գտաւ և հենրիկոս. յորում դատապարտեաց զբերենգարիոս (835) և զորս օտարացուցանեն զինչս եկեղեցւոյ: Արար գարձեալ ժողով'ի Տուրովն (1301). ուր բերենգարիոս մերժեաց զաղանդ իւր ուղիղ դաւանութեամբ: Դարձեալ դումարեաց ժողով ՚ի Կոմնոսելա (1131) սակա բարեկարգութեան. յորում սահմանի յամենայն օր պատարագել եպիսկոպոսաց

և երիցանց . և որ չէ կարող՝ գեթ տեսանել ըզ-  
պատարագ . նա և կրել զկուլակ և զմօրուսս հա-  
տանել : Սասատիկ ընդգէմզինեալ սիմոնականու-  
թեան՝ ելոյծ զբազումս յեկեղեցականաց , մին-  
չե կատաղեալ կիսասարկաւագին՝ թոյն եղ 'ի  
բաժակն պատարագի առ 'ի գեղակուր առնել  
զնա : Այլ անդէն յայտնեցաւ անօրէնութիւն  
նորա . քանզի իրեւ կամեր սուրբ քահանայա-  
պետն ձեռն արկանել 'ի բաժակն և ճաշակել  
սկիհն անշարժ պնդեցաւ 'ի տեղւոյն . և անօրէնն  
դիւահարեալ յայտնապէս խոսառվան եղեւ ա-  
ռաջի պասպին և ամենայն ժողովրդեան զոր ա-  
րարն :

Յետ այսորիկ կայսրն Հենրիկոս մերձ լեալ 'ի  
գրունս մահու՝ խնդրեաց տեսանել զպասին . և  
նա գնացեալ առ նա՝ օրհնութեամբ , և յետ մահուանն  
մեծահանդէս յուղարկաւորեաց զմարմին նորա:  
Այլ յետ դարձին 'ի Հռովմ'ի հետեւեալ ամի հան-  
դիպեալ նմա մահարեր հիւանդութեան 'ի դնալ  
նորա յԵղբուրիա վախճանեցաւ սրբութեամբ  
'ի Փլորենտիա 'ի հինգ կաղանդացն օգոս . յամին  
1057 , կացեալ յաթու քահանայապետութեան  
ամս երկուս , ամբաս երիս և աւուրս հինգետա-  
սան <sup>1:</sup> :

1 Բարսն . և Բակ . յամն . 1056 : Լեռն Ռուբէ-  
ոյ . Գիշ + 2 . Ժամ . Գլ . Յլ : Սուրբ Պէտր . Պատմ .  
Գիշ + 4 . Բառդլ 12 :

## ՃԱԴ

## ՍՏԵՓԱՆՈՍ թ.

Ա. Տ. 1057, և կայսերութեան ՀԵՆՐԻՔԻ Դ. 2.  
և իստհակաց կոմինուի 1:

1474. Սահմանոս անուանեալ Փեղերիկոս  
որդի Կոծեղոնի զքսին կարդինալ երեց եկե-  
ղեցւոյն Հռովմայ և աբբայ վանաց Մոնկասինոյ՝  
փոքր մի յառաջ ե՞ս առ ի Հռովմ յԵտրու-  
րիոյ: Յայնժամ ուխան Հռովմայ ի խորհուրդ-  
մտեալ վասն սորահաւանութեամբ ամենեցուն  
ընարեցաւ նա յաջորդ սրբոյն Պետրոսի ի չորս  
նոնայց օգոս. յամին 1057. զոր ընդդէմ կա-  
մաց նորա ածեալ մայր եկեղեցի սրբոյն Պետ-  
րոսի՝ ըստ սահմանադրութեան եկեղեցւոյ կա-  
տարեցին հանդիսաւոր կոչումն. որոյ ըստ սովո-  
րութեան փոխեալ անունն առաջն՝ կոչեցաւ.  
Սահմանոս թ. քանզի ի նմին աւուր տօն եր  
սրբոյն Սահմանոսի պատվին (1344): Խոկ ի հե-  
տեւ եալ աւուր կազմեալ մեծ հանդէս ի նոյն ե-  
կեղեցւով ձեռնադրեցաւ քահանայապետ:

Փոյթ մեծ յանձին կալաւ սա մեծամեծն  
գործել ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ .  
նմին իրի յետ չորից ամմոց չոքաւ ի վանս իւր  
Մոնկասինոյ . ուր ընտրեաց յաջորդ աբբայու-  
թեան իւրոյ զԴեսիգերիոս առաջնորդել յետ  
մահուան իւրոյ . իբր զի՞ ցայնվայր ինքն ուներ  
զայն պաշտօն : Զնոյն ինքն Դեսիգերիոս աբբայ  
առաքեաց նուիրակութեամբ ի կոստանդինու-  
պօլիս առ ի հաստատել զսեր միաբանական ի  
մեջ արևելեան և արևմտեան եկեղեցեաց : Խոկ  
զաւրբն Պետրոս Դամիանոս զայր իմաստուն և

սուրբ Հանեալ՝ի միայնարանեն կարգեաց եղիս կոսպոս Ոստիոյ և կարդինալ ընդդէմ կամոց նորա, զի օիրէր նա զմիանձնական կեանս : Ուշ եղեալ խոհական հանճարով յուղըութիւն վերքերել զկզերս և զամենայն եկեղեցական՝ կանոնագիր եզե գեղեցիկ կարգաց . զգուշացոյց և զհաւատացեալս յարեանառու ամուսնութենէ : Ի նմին ժամանակի առաքեաց զչելդեբանդոս կիսասարկաւագիւր առ Ագնես կայարուհի մայր չենրիկոսի Դժագաւորին Գերմանիոյ, հաւանեցուցեալ զնա որպէս և զեպիսկոպոսուն ընդ ուխախին, զի յետ մահուան իւրոյ զնա ընտրեացէն քահանայալեատ . և եթէ յապազեսցէ, սպասեացէն մինչև ցգալուսա նորա (1477) :

Յետ այնորիկ զնացեալ՝ի Փլորենտիա առ Եղբայր իւր գուքս տեղւոյն՝ խորհել առ . 'ի սպակելց զնա կայսր չռովմայ, անդեհասնմա վախ ճան կենաց՝ ի չորս կաղ. ապր. 1058, կացեալ յիշխանութեան ամիսս Եօթն և աւուրս քսանենօթն : Ուրանիօր վիառօք ամփոփեցաւ մարմին նորա հանգերձ նշանիօք, զոր յայտնեաց տէր վասն մեծամեծ արդեանց նորա, որպէս պատմէ և Լեւոն Ոստիոյ :

Ընդ մեռանել Ստեփանոսի պապին Յուլիաննէս Մինդինոս եպիսկոպոս Վեղդերայ սեփականեալ զգահն առաքելական անուանեցաւ Բենեդիկտոս Ժ : Այլ չերկարեալ՝ի կեանս՝ զկնի ինն ամսոց և քսան աւուրց ել՝ի մարմնոյ . որ և 'ի կենդանութեան հրաժարեալ ապաշխարեաց<sup>1</sup> :

1 Լէառն Ոստիու Գէր + 2 + Գլ. Ճ : Բար . և Բակ . յան 1057 : Առաջ Պէտք . Պատմ . պիպառ . 20 + Գլ. Ճ : Պէտք . սար . Գլ. Ճ : Կար . 6 :

## ՃԾԵ

## ՆԻԿՈՂԱՅՈՍ Բ

Ա. Տ. 1058, և կայսերութեան ՀԵՆՐԻԿՈՒՄ Դ. 4,  
և կոստ. ՏԱ-ՀԵԾԻ 1:

1475. «Սիկողայոս յառաջնմէ անուանեալ  
գերարդոսբուրգոնացի եպիսկոպոսՓլորենտիոյ  
՚ի կենդանութեան բենեդիկտոսի գերարդա-  
պին ընտրեցաւ գլուխ ընդհանուր սրբոյ եկե-  
ղեցւոյ ՚ի հինգ կաղանդացն յունվարի յամին  
1058: Խրբե զի Հիլդեբրանդոս կիսասարկա-  
ւագ, որ ՚ի Ստեփանոսէ թա առաքեալ էր ՚ի  
գերմանիա, դարձ արար յիտալիա, և լուեալ  
զրոնութիւն գերարդապին՝ գուն գործեաց ըն-  
տրել պապ զեպիսկոպոսն Փլորենտիոյ, որպէս  
և եղե իսկ. որ ՚ի թագադրութեան անուանե-  
ցաւ Նիկողայոս Բ:

ՄԵԾ Եղեն ջանք մեծի քահանայապեախս  
՚ի բառնալ զանկարգութիւնս յեկեղեցւոյ . նմին  
իրի ՚ի հետեւեալ ամի գումարեաց ժողով հարիւր  
և երեքտասահն եպիսկոպոսաց . յորում միւսան-  
գամ պարտաւորեալ բերենդարիոս՝ դարձեալ  
նզովեաց զաղանդ իւր, թեպէտ անդրէն շրջե-  
ցաւ ՚ի նոյն: Յայս ժողով սահմանեցան երեք-  
տասահն կանոնք վասն բարեկարգութեան: յորս  
կանոնն մետասահներորդ արգելու զալսակն մին-  
չե ցեօթն աստիճան: Դատապարտաեցան Սիմո-  
նականք և նոր Նիկողայիաք պաշտպանք շնու-  
թեան (737):

Իսկ ՚ի ժողովին Էմալֆիայ ՚ի Նեապոլիս եղան  
կանոնք և վասն ընտրութեան պատին, տուեալ  
իրաւունս նախ կարդինալաց և եպիսկոպո-  
սաց, ապա և կայսեր հաւանել ընտրութեան

նոյնին : Անվաւեր լինել վճռեց զնոսա՝ որք մարդկային հնարաւորութեամբ վերստիեն ՚ի դահ առաքելական : Մերժեաց և զգործս դերապապին բենեղիկտոսի ձ . որ գալիլի խոնարհութեամբ ինքնակամ հրաժարեցաւ յալուոյ ՚ի ժողովին , խնդրելով ներումն վրիպանացն : Յայնժամ Նիկողայոս քահանայապետ եղ ՚ի վերայ նորա ապաշխարանս՝ կարգեալ զնա ՚ի ստորին դասս եղբարց աշխատաւորաց , և չմերձենալ ՚ի սեղան խորհրդոյ :

Զկենի այսօրիկ չոքաւ յԱպուղիա , և սակա հաւատարիմ ծառայութեան արձակեաց զնորմանս ՚ի բանադրանաց անտի , որով դատապարտեալ էր զնոսա Լեւոն թ . (1472) . և Հռիքարտոսի հաւատաց զիշխանութիւն Կապուղոյ , իսկ Հռոդոթերտոսի զդքսութիւն Եպուղիայ , Կաղաքրիոյ և Սիկիլիոյ , պարտաւորեալ զնոսա հաւատարիմ մնալ և հարկատու սրբոյ դահին : Յետ դարձին ՚ի Հռովմը չոքաւ անդրէն ՚ի Փլորենտիա և անդ վախճանեցաւ : Են որք սանն թէ ՚ի Հռովմը ՚ի պատրիարքարանին Լատերանու փոխեցաւ առ տէր , և ամփոփեցաւ մարմին նորա ՚ի սուրբն Պետրոս ՚ի մետասան կաղանդացն օգոս . յամին 1061 , կացեալ ՚ի քահանայապետութեան ամս երկուս , ամիսս վեց և աւուրս քսանեհինդ : Գտանին սորա ինն կոնդակը . յորոց յայտնի տեսանի խոնարհամիտ առաքինութիւն նորա և խմաստութիւն : Այնքան աղքատաեր էր ՚նա , զի յամենայն օր լոււանայր զսոս երկուտասան աղքատաց . և եթէ զբաղմոնք ոչներէին նմա ՚ի ցերեկի , ՚ի գիշերի առաքինայր :

1 Բարձն . և Բակ . յան 1058 . 1059 : Առաբ զիշք . Դամ . գիր + 3 . Բառլ 4 : Առաբ Անսելմու գիր + 2 : Բանվիս գիր + 2 . եւ . 66 :

## ՃԾՈՂ

ԱՆԵԲՍԱՆԴԻ Բ

Ա. Տ. 1061. և կայսերութեան ՀԵՆՐԻԿԱՆԻ Դ 6.  
և կոստ. Տ-ի ծէ 3:

1476. Աղեքսանդր մեդիոլանեցի Անսելմոս  
անուանեալ յառաջագոյն՝ եպիսկոպոս Լուդոյ՝  
ընտրեցաւ 'ի քահանայապետութիւն 'ի կա-  
զանդս հոկ. յամին 1061, ընդդէմ կամաց իւրոց  
բռնագատեալ յուխտէն յահճն էառ զծայրա-  
գոյն զայն պաշտօն. բայց կառավորեաց զեկե-  
զեցին իմաստութեամբ և սրբութեամբ ամս  
մետասան, ամիսս վեց և աւուրս քսանեմի: Ի  
սկզբան անդ տարաւ ծանր ծանր վշտաց. քանզի  
ՀԵՆՐԻԿՈՍ Դ արքայ Գերմանիոյ և մայր նորա  
Աղնէս' իրբեւ լուսն զգահակալութիւն պապին  
առանց հաւանութեան նոցա՝ ցասուցեալ հաս-  
տատեցին գերապապ զԳագոլոս եպիսկոպոս  
Բարմայի, որ անուանեցաւ Ոնորիոս Բ:

Յայնժամ Աղեքսանդր արար ժողով հարիւր  
եպիսկոպոսաց և աւելի, և հաստատեաց զմէնիոս  
Լեւոնի թ և Նիկողայոսի Բ ընդդէմ Սիմոնա-  
կոնաց և անուղղայ կղերիկոսաց: Պետրոս Դա-  
միանոս կարդինալ գէեաց առ կայսրուհին և առ  
թագաւորին'ի նպաստ Աղեքսանդրի պապին բանս  
զօրաւորա. յորմէ ժողով գումարեալ 'ի Ման-  
դուա՝ հաստատեցաւ քահանայապետութիւն  
Աղեքսանդրի, և մերժեցաւ Գագոլոս գերապապ.  
թէպէտ բազում հնարս հնարեցաւ նա, բայց  
հուսկյեառյ թօթափեալ 'ի կուսակցաց՝ անկաւ  
'ի թշուառութիւն և մեռաւ: Իսկ Ագնես կայս-  
րուհին հրաժարեալ յաշխարհէ առահճնացաւ

'ի Հռովմ', և անդ ապաշխարութեամբ անցոյ ղկեանս իւր, զի պատճառ եղեալ էր այնմ հեր. ձուածոյ:

Աղեքսանգը պատ դարձեալ 'ի Հռովմ' դու-  
մարեաց ժողով, յուում մերժեաց զմոլորական  
հաշիւ այնոցիկ, որք զաստիճանս արենակցու-  
թեան մինչ 'ի թուռունս հաշուէին վեցերորդ,  
և դատապարտեաց զաղանդ ազգապլծութեան  
զհնարեալն յոմանց օրէնսդիտաց (1193): Առա-  
քեաց դրօշակ առ Գուլիէլմոս գուքս 'Նորման-  
տիոյ, զի հալածեալզհերոլդոս բոնաւոր 'ի թա-  
գաւորութենէ Անգլիոյ յետ մահուան սրբոյն  
Եդուարդայ արքային՝ ինքնին ժառանգեացէ ըղ-  
թագաւորութիւնն զայն: Ընորհեաց իրաւունս  
արքայի սրբոյն Օգոստինսիկանտուարիոյ և ար-  
քայի Գավենայ կրել միթը . որպէս և դքսին Բոյե-  
միոյ: 'Նորոդեաց զվարս կանոնիկոսաց Լատերա-  
նու . հրաման արար և երիցանց, զի մի անդամ  
յաւուրն պատարագեացէն: Առ գութ սիրոյն չո-  
քաւ 'ի Լուգա յեպիսկոպոսարան իւր, և կան-  
դնեաց անդ հոյակապ եկեղեցի . և 'ի յամել անդ  
սակո օծման եկեղեցւոյն՝ դիսկաւնմա ջերմախտ:  
Բայց լուեալ թէ գտանի անդ սրբակաց կրօնա-  
ւոր, որոյ ջուր ձեռաց 'ի պատարագին բժշկէ  
զհիւանդս, խնդրեաց զջուրն զայն և բժշկեցաւ  
'ի ցաւոց: Այլ 'ի դարձին 'ի Հռովմ' հանգիպեալ  
նմա վախճան կենաց հանգեաւ սրբութեամբ 'ի  
Քրիստոս'ի մետասան կտղանդացն մայիսի յամին  
1073: Բազում կոնդակք և նամակք երևին սո-  
րա առ մեօք<sup>1</sup>:

1 Բար. և Բակ. յան 1061: Լէռն Ռոպ. Գէր+  
Յ. Ճամ. գլ. ին: Թաւշաս. յղ. Վար. ոին և նոր  
եկ. մ. Յ. Գիր+ 1. գլ. ին:

## ՃԾԵ

Ս. ԳՐԻԳՈՐ Ե

Ա. Տ. 1073. և իսաւերութեան հենբիկոսի Դ. 18,  
և Միւտայէլմ 3 :

1477. Գրիգոր հռովմայեցի կամ ըստ ոմանց  
ետքուրիացի, որ է նոյն խակ մեծանունն հիւ-  
դեբրանդունախասարկաւագ եկեղեցւոյն հռով-  
մոյ, որ յառաջ էր կիսասարկաւագ, այր ակա-  
նաւոր իմաստութեամբ և սրբութեամբ, հմուտ  
ամենայն եկեղեցական կանոնաց և սահմանա-  
դրութեանց՝ ընարեցաւ հաւանութեամբ և  
ստիպմամբ ամենեցուն ընդգեմ կամաց իւրոց  
օրինաւոր յաջորդ սրբոյն Պետրոսի ՚ի տասն  
կաղանդացն մոյ. յամին 1073. զոր արդեն նշա-  
նակեալ էր Սահմանոս թ. (1474): Որ առ ժա-  
մայն առաքեաց նուիրակս առ չենրիկոս Դ. ար-  
քայ Գերմանիոյ հաւանել ընդ ընտրութիւնն :  
Խակ նորա հանեալ ընդ այն՝ առաքեաց գեսպա-  
նութեամբ ՚ի հռովմ զԳրիգոր եպիսկոպոս  
վ իրգեղայ. զի մերձ գտցի ՚ի հանդիսի ձեռնա-  
դրութեան նորա. որ և ՚ի սուրբ օծման անդ և ՚ի  
թագագրութեան անուանեցաւ Գրիգոր է :

Արդ փոյթ կալաւ սա նախ բառնալ զսիմսնա-  
կանութիւն յաճախեալ ՚ի ժամանակին յայն-  
միկ, և զաղանդ Նիկողայիաց զեղծանողաց ըզ-  
զվարս երիտասարդաց : Անտի ատելութիւն մեծ  
կալաւ չենրիկոս. զի սիմոնականութեամբ վա-  
րեալ էր նա ընդ աստիճանաւորաց . սոյնօրի-  
նակ ՚ի խոր խոցեցան և յանցաւողըն այնոքիկ ՚ի  
կղերիկոսաց: Այլ մեծի պատին անդրդու ելի կա-  
ցեալ ՚ի հշմարատութեան՝ հաստատեաց զվճիու

նախորդաց իւրոց, զի մի կղելքն որ սիմոնական նութեամբ են առեալ աստիճան՝ ողաշուսցեն յեկեղեցւոջ, այլ կացցեն արատքոյ դասին ընդ ժողովրդեան։ Եւ այլ օրէնք գարձեալ, զի մինչ չե իցէ ուխտեալ կղերիկոսաց զուխտ մշտնջենա կան ողջախոհութեան՝ մի ելցեն 'ի սուրբ առահինան։

Սակայն Հենրիկոս օր քան զօր կատաղեալ ատելութեամբ չարիս գործէր հանապաղ ընդ գէմ եկեղեցական իրաւանց։ Եւ սուրբ քահանայապեան զամս հինգ աշխատ եղե ուղղել զնա ամենայն հնարինք։ Էր զի քաղցր բանիւք 'ի ձեռն իմաստուն կոնդակաց իւրոց, և էր զի ողօքանօք և արդահատելով 'ի ձեռն դեսպանաց և իշխանաւորաց, և կամ խրատելով 'ի ձեռն մօք նորա կայսրուհւոյն Ագնեսի։ Որպէս բժիշկ Ճարտար զամենայն ջանս հոգւոյն 'ի վար Էարկ 'ի գորման անբոյժ ախտացելցն։ Այլ իրեւ անբժշկելի մնաց թշուառականն, ձեռն Էարկ զգաստացուցանել զնաց զկծեցուցիչ գեղովք բանադրանաց։ այլնա և ոչ այնու շահեցաւ։ Յայնժամ ժողով գումարեալ հայրապետին սրբոյ 'ի Հռովման՝ որոշեաց զՀենրիկոս 'ի հալորդակցութենէ եկեղեցւոյ։ զրկեաց և 'ի տիտղոսէ թագաւորութեան, և երգմինեցուցեալ զիշխանս Գերմանիոյ մնալ ինքեան հաւատարիմ, հրաման արար նոցա ընտրել ինքեանց թագաւոր զՀռովման փոս գուքս Սուրավիոյ։ որում առաքեաց թագ արքունական այսպիսի վերաս ութեամբ։ Ավեմն շնորհեաց Պետրոսի, Պիտրոս զթագն Հռովման փոսի ։

Հենրիկոս լուեալ զայս ամենայն և ևս գաղանցաւ, և ժողովդումարեալ երեսուն հերձուածող եպիսկոպոսաց 'ի Բրիբոսիս ընդգէմ Գրիգորի պապին՝ և գ գերապապ զԴուիրերասու ա-

ուաջնորդ Հռատվեննայ զմերժեալն 'ի նոյն Գրի գորէ երեք ամօք յառաջ . որ և անուանեցաւ կղեմէս Գ : Սա իրը եկն 'ի Հռատվմ ընդ Հենրիկոսի . Գրիգոր պապ ամրացաւ յամրոցն անուանեալ Սուրբ Հրեշտակ , մինչև հասեալ Նորմանից հալածական արարին զԴերմանացիս : Սա կայն որդի քաղաքապետին միացեալընդ թշնամաց պապին 'ի գիշերի ծննդեան փրկչին երբ պատարագէր պապն՝ յանդգնեալ անօրինին եւ մուտյե կեղեցին , և բռնութեամբ քարշեալ զնա արտաքս փակեաց յաշտարակի միում : Ընդ այս դործ զահի մեծի հարեալ ժողովսդեան գիմեցին յաշտարակին , և զերծուցեալ զսուրբ հայրապետին ածին փառօք յեկեղեցին , և զաշտարակին և ըզտուն որդւոյ քաղաքապետին հիմնայատակ արարին . և զորս 'ի տանէ անտի ձերբակալ արարին՝ հասին զունչս նոցա : Խակ անօրէնն թէպետ առ ժամն ապրեցաւ 'ի ձեռաց նոցա , այլ անդէն երկնառաք պատուհասիւ քատակամահ կորե աւ յանկարծակի :

Զայսու ժամանակաւ սուրբ Ատանիսլաւոս եպիսկոպոս Գրիգորիոյ զնամանօրինակ հակառակութիւնս կրէր 'ի Պօղոսլաւէ արքայէն Պազմնիայ սակս անկարգ գնացից նորա . զի արքայ զրաբարտէր զսուրբն , թէ զօտարին ժառանգութիւն յափշտակեալ իցէ : Յայնժամ յարոյց Աստուած զլաճառողէրկրին , որ ելեալ 'ի գերեզմանէն եկաց յատենի ասելում թէ իմէ վաճառեալ և ընկալեալ 'ի նմանէ զղբամս . և դարձաւ անդրէն 'ի գերեզման : Յորմէ խայտառակեալ անօրէն արքային՝ ոչ միայն չկասեցաւ 'ի չարութենէ , այլ և մարդախոշոշ ձեռօք իւրովք սպան զսուրբ եպիսկոպոսն : Զայն լուեալ մեծի պապին՝ ցաւադին նզովիւք ընդ բանիւ արար զնոս . որ իբրև զկային երերէտլ տատանեալ գաղանանայր , մինչ յօշտաեցաւ 'ի շանց :

իսկ սուրբն Գրիգոր պատ արար երիցս ժողովը՝ ի չոռվմ ընդգէմ ամուսնացեալ աստիճանաւորաց, զի կամ զկանայս թուցեն և կամ զպաշտօնն։ «Սա և վասն բարեկարգութեան եկեղեցւոյ բազում դլուխք բանից աւանդեցան։ Նզովեցաւ Կիկեվորոս կայսր Կոստանդինուլուսոյ վասն բոնութեամբ տիրելոյն։ Ուրեմն Բերենդարիոս՝ միշտ շրջան առնոյր յաղանդ իւր, միւսանգամ ետ զդաւանութիւն։ Դարձեալ հաստատեաց պատն զծոմապահս ամ ըստ ամեանիսափան առնել՝ ի մէջ եօմնեկի պենտէկոստէին։

Եւ զկնի բազմապատիկ բարեկարգութեանց և առաքինական նահատակութեանց՝ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ հալածանօք հանգերձ, մինչեւ ստիպիլ նմա ապահովանալ՝ ի Սալերնոն յերեսաց թշնամեաց, հանդեաւ՝ ի ծանր ծանր աշխատանաց արի հսկողն և մեծիմաստն՝ ի վարդապետու, թողեալ յեկեղեցւոյ զպատուական գրուածս, և զօրաւոր և խմաստալից կոնդակս։ Որոյ սուրբ մարմինն ամփոփեցաւ՝ ի Սալերնոն յութ կաղանդացն յունիսի յամին 1085, կացեալ՝ ի քահանայապետութեան ամս երկոտասան և աւուրս երեսունեւրիս։ Յայտնեաց Աստած բազում սքանչելիս՝ ձեռն սրբոյն Գրիգորի պատվին։ Նմին իրի անդէն էանց յիշատակ նորա ՝ ի վկայաբանութեան չոռվմայ այսպիսի գովասանական վերտառութեամբ, աքաջամարտիկ և զօրաւոր պաշտպան եկեղեցական աղատութեան»<sup>1</sup>։

1 Միկուլսկ. յղ. եկ. Շիպուշ. գլ. ժդ. և ին. Բարձր. և Բարձր. յան 1073. և և 1085. Բելաբ. մին. յղ. ին. քահան. գլ. և Պօղոս Բենը իւթայ. ի վարս սորտ գլ. ժդ. հադ 3. և էասն Ուս. Գիր 3. ժամ. գլ. ին.։

## ՃԾԼ.

ՎԻԿՏՈՐ Դ

Ա. Տ. 1086, և իայսերութեան ՀԵՆՐԻՔՈՒ Դ 31,  
և Աւետի իոնինու 6 :

1478. Վիկտոր բենեվենտցի աղնուազարմ  
կարդինալ և արքայ մենաստանին Մոնկասինոյ  
եղե նշանակեալ 'ի Գրիգորէ կ երեք աւուրբք  
յառաջ քան զփոխիլն : Քանզի իբրև աղաշեցին  
զուրբն եպիսկոպոսունք և կարդինալք որոշել  
զարժանաւոր ոք 'ի յաջորդիւր, նա եցոյց նոցա  
զերիս՝ զԴեսիդերիոս կարդինալ և արքայ մե-  
նաստանին Մոնկասինոյ, զՈՂոն եպիսկոպոս  
Ռամիոյ և զՀուգոն Լուգդոնայ . Լեւոն մա-  
տենագիրյաւելու և զԱնսելմոս լուգացի<sup>1</sup> : Զկինի  
փոխման Գրիգորի պապին կարդինալք և եպիս-  
կոպոսունք ընդ համօրէնուխախին և ժողովրդեան  
ընդդէմ կամաց նորա . և բոնազբօսեալ զնա ա-  
ծին յեկեզեցի սրբուհւոյն Լուչիայ, և անդ ըստ  
սահմանադրութեան եկեղեցւոյ աղօթս արտ-  
րեալ անուանեցին զնա Վիկտոր Դ յութ կա-  
զանդացն յունիսի յամին 1086 : Ապա 'ի չոր-  
րորդօւմ աւուր եկին 'ի Հռովմ . բայց նորա  
աւսեալ զանհնարին ալէկոծութիւն Հռովմոյ  
յերեսաց գերապապին և ՀԵՆՐԻԿՈՍԻ Դ, դար-  
ձեալ առանձնացաւ 'ի մենաստան իւր : Սակայն  
'ի հետեւեալ ամի մեծաւ մասոք և ցնծութեամբ

1 Գ.Ի. 3. Ժաման. Գլ. իւ :

ամենեցուն դարձ արար՝ ի Հռովմ՝ յերկոտասա-  
սան կազմանդացն ապրիլի. իսկ յեօթն իդոսացն  
մայիսի ձեռնադրեցաւ քահանայապետ :

Արդ իբրև հաստատեցաւ նա յամոռ իւր՝  
ոգւով չափ աշխատ եղե բարեկարգել զեկեզեց-  
ցին՝ բառնալով զանկարգութիւնս : Արար ժո-  
ղով՝ ի կապուտ յուղլութիւն կղերաց, և հաս-  
տառեաց կրել պաշտօնելից իւրոց խաչ և ծիրանիս  
(1117): Լուեալ՝ եթէ Սարակինոսք զօրացեալք  
յԱմիրիկէ տնհնարին չարիս անցուցանեն ընդ-  
քրիստոնեայս, զօրս ժողովեաց յԻտալիոյ, և  
բանակ կազմեալ անցոյց յԱմիրիկէ. որք և զօրու-  
թեամք սրբոյ խաչին յաղթեցին թշնամեաց և  
կորուսին՝ ի նոցանէ ոգիս հարիւր հազար : Յետ  
այսորիկ գումարեաց ժողով՝ ի բենեվենտ ընդ-  
դէմ զերապապին Կղեմայ Գև ժողովոյ նորին.  
յորում զըկեալ զնա՝ ի քահանայական պաշտա-  
մանէ արկ ընդ բանադրանօք : Վճռեաց ևս, զի  
մի իշխեսցեն աշխարհական իշխանք տալ կղերի-  
կոսաց զհոգեոր իշխանութիւն, և մի կղերիկոսք  
ընկալցին՝ ի նոցանէ, սպառնացեալ երկաքան-  
չի բոց պատու հասս բանադրանաց : Արդել դար-  
ձեալ, զի մի ընկալցի ոք զխորհուրդ ապաշխա-  
րութեան և հաղորդութեան՝ ի հերետիկուաց և  
ի Սիմոնականաց :

Յետ արձակելց զժողովին ասի թէ նենդու-  
թեամք չենրիկոսօք թոյն արկաւ՝ ի բաժակին.  
յորմէ վտանդեալ մեծի քահանայապետին դար-  
ձաւ՝ ի վանս իւր, զի սկսեալ էր թանչն, և իբրև  
ծանեաւ թէ մերձ է՝ ի մեռանել, յորդոր մատոյց  
կարգինալաց և եպիսկոպոսաց ընարել յաջորդ  
իւր զթուն եպիսկոպոս Ռոտիոյ, զօրնչանակեալ  
էր և Գրիգոր է : Ապա զկնի երից աւտրց վո-  
խեցաւ յերկինս՝ ի վեշտասան կազմանդացն հոկ-  
յամին 1087, կացեալ յիշխանութեան ամ մի,

ամիսս երիս և աւուրա քսաններիս : Գոյն սորտ  
զանազան նամակք և համախօսութիւնք<sup>1</sup> :

## ՃԾ.Թ.

### ՈՒՐԲԱՆՈՍ Բ

Ա. Տ. 1088, և կայսերական ՀԵՆՐԻԿՈՍԻ Դ. 33,  
և ԱՆԵՒՆԻ կանոնականի 8 :

1479. Ուրբանոս գաղղիացի, որ է նոյն ինքն  
մեծահամբաւ Ոգոն Եպիսկոպոս Ոստիոյ յա-  
ռաջն կրօնաւոր սրբակաց, ընարեցաւ զառաջինն  
'ի նախորդէ իւրմէ Վիկաորէ Գ., և ապա յամե-  
նոյն ուխտէն . մինչև հաւանութեամբ ամենե-  
ցուն հաստատեցաւ քահանայապետ յաթու  
սրբոյն Պետրոսի 'ի չորս խոսացն մարտի յամին  
1088. և գոլութեամբ եկաց յիշեանութեան  
եկեղեցւոյ զամա մեասասն, ամիսս չորս և ա-  
ւուրս երկուասան : Առաջին արութիւնն նորա  
յայտնի եղեւ 'ի հաստատել զվաճիւս նախորդաց  
իւրոց և զնզովս ընդդէմ Հենրիկոսի Դ., որ ըգ-  
թագուհին իւր զբարասութեամբ փակեալ եր  
'ի բանափի : Եւ առ 'ի բնաջինջ առնելոյ զհեր-  
ձուածս՝ գումարեաց զերկուասան ժողովս 'ի  
զանազան վայրս արևմտից ընդդէմ Սիմոնակա-  
նաց, Նիկոլայիստաց և գերապապին Կղեմայ :  
Բայց անուանի եղեն երեքն . նախ ժողովն Բե-  
նելինասոյ . յորում վճռեցաւ, զի մի ոք ընտ-  
րեցի Եպիսկոպոս, եթէ չիցէ 'ի սորկաւագու-

1 Բարոն . և Բակ . յան 1086 : Լէտոն Ուգ-  
իսմ Սարսիկ . Գիր + 3. Ճամ . Գլ . ԽԵ : Պաղամ . լու-  
դացի 'ի ուսպ . Եկ . Գիր + 19 . Գլ . ԺԴ : Լամբեր-  
տին . յղ . Երան . Գիր + 1 . Գլ . Խոտ :

թեան և 'ի քահանայութեան բարիոք քաղաքավարեալ։ Երկրորդ Մելքիքեայ։ յորում վճռեցաւ, զի որդիք Երիցանց մի ելցեն յաստիճան քահանայութեան, բաց 'ի նոցանեւ, որք 'ի կրօնս ընկալեալ լինին։ Երրորդ Կլարտմօնախոյ 'ի գաղղիա, ուր գտաւ և ինքն յորում վասն բարեկարգութեան եղան բաղում կանոնք յորու և այնուրոյն ճաշակելզմարմին և զարիւնն բայց եթէ այլազգ հարկ լիցի վասն հարկի և զգուշութեան։ Ծնորհի և լիակատար ներողութիւն որոց առ աստուածպաշտութեան գնան յազատութիւն սուրբ երկրին (1129)։ Որոյ վասն հաւաքեաց զօրս և զիշխանս և զօրապեաս, յանձնեալ զնոսա 'ի պաշտպանութիւն Առուածամօրն ։ պատուիրեաց ամենեցուն ասել զպաշտօն նորա հանգերձ պահովք բարեպաշտութեան ։ և կոչեցան նոքտ խտջակիր զօրք ։ զի խաչկարմիր կրէին 'ի վերայ հանգերձից 'ի նշան մարտիրոսութեան ։ Յազագս այսորիկ կո-

1 Ի նմին ժամանակին Պէտքոս մանցն գաղղիացի գնայ յունաս յԵրուանաղէ ։ և լունալ 'ի պատը իտրգէ պեղայն զանհնարին լարիս Սարտինուաց, դասունայ 'ի Հոռովհ, պատմէ Ուրբանոսի պատմին ։ և նու առաջէ զնա հանդերձ իոնդակաւ յարևմասու պատմէ իւնանաց՝ հրաւիրելով զամենենին զնն առանուլ ընդունէ անհաւագից՝ իրելով զիստը քըշիսպուի ։ մանգայացն բաշխնեալ նոցա 'ի ծողովի զօրհնասթիւն իւր և զլիակապար ներողութիւն։ Ուրով 'ի սուզ ժամանակի հաւաքեցաւ բանակ վեց հարիւր հակար զօրքաց, որ և անշեալ յԱսիա խորպահինին զզօրս նշնամեց, և առա խաղացնեալ յառաջ պաշտըն զըշուարին և զըշուառին, որոց գիրեալ մաշնցին զՍարափինոս 'ի սուզ սոսաների ։ և զիստի իրեպաս բանզուն զմ 'ի գլխաւոր զօրքապէպաց բանակին նորին թագուար Ե-

չեաց՝ ի խորհուրդ զսուրբն Բրունոն հիմնագիր  
կրօնին Կարդուսեանց : Հաստատեաց և զկարգո  
սիստերականաց : Խակ զՓիլիպպոս արքայ Գաղ-  
ղիոյ արկ ընդ բանադրանք սակս թողլոյ զթա-  
գուհին և ամուսնանալոյ ընդ այլում : Ի ժողո-  
վին Հռովմայ արար քննութիւն և վասն բա-  
ժանման Յունաց : Յետ այսորիկ Երբ Խաչակիր  
զօրք հասեալք՝ ի Պաղեստին պաշարեալ ունեին  
զԵրուսաղէմ . փոխեցաւ՝ ի Վրիստոս Երանելի  
հայրապետն Ուրբանոս՝ ի շորս կաղանդացն օ-  
գոս . յամին 1099 <sup>1:</sup>:

## ՃԿ

## ՊԱՍՔԱՂԵՍ Բ

Ա. Տ. 1099, և խայսերածնեան ՀԵՆՐԻՔԱՆԻ Դ 44  
և Աւետիսի խանէնոսի 19 :

1480. Պապաղէս գոսքանացի կարդինալ ե-  
րեց՝ անուամբ Հռայներիոս, ձեռնադրեցաւ քա-  
հանայապետ Հռովմայ յիննետամն կաղանդացն  
սեպ . յամին 1099 . որ ընտրեալ էր արդէն՝ ի  
նախորդէ իւրմէ Ուրբանոսէ Բ . թէպէտ ինքն  
ակամայ կամօք յանձն էառ զծայրագոյն պաշ-  
տօնն սակս գառնութեան ժամանակին : Զի թէ-

բառապաշտ : Եւ այսպէս պիրեցին ու մշայն Պաղէս-  
տինոյ , այլ և երիբին Ասուրաց , Սիհանուկի և կը-  
պէտ :

1 Բարոն . և Բակ . 1088 : Պէտ . սարէ . ժամ .  
գլ . ք : Գրագիտն . բաժ . 60 : Մաբիլ . գիր + 2 : Ու-  
դէրիսս Ալիքաղ . պատ . էլ . գիր + 6 : Բանա . գիր + 2 :  
Գառիբէրգոսս աբբայ . գիր + 2 : Լամբէրգին . գիր + 1 :  
գլ . խո :

պետ և գերապատին Կղեմէս անարդեալ յամենենեցունց առ վշտին զբաւեցաւ 'ի կենաց 'ի հումըննաւ, զորոյ զմարմինն արկին 'ի դետ, սակայն Հենրիկոս Դ կանգնեաց զերիս գերապատի զլազբերտոս, զթէոգորիկոս և զՄայնինոլլիոս՝ որ կոչեցաւ Սեպրեսարտոս Դ։ Որոց ընդդէմ մըրցեալ քաջն Պատրաղէս նկուն արար, մինչև կորեան ամենեքեան ընդ Հենրիկոսի Դ։ որ հալածեալ յերեսաց որդւոյն իւրոյ Հենրիկոսի Ե, առյօւսահատութեան յանկարծամահ եղեւ իսկ որդի նորա նշմարանս իմն բարեպաշտութեան ցուցեալ զառաջննն՝ խնդրեաց 'ի պապէն ալսակել կայսր Հռովմայ։ Եւ նա յանձն առ պատկել զնա, եթէ հրաժարեացի 'ի դրաւելոյ զիրաւասութիւնս եկեղեցւոյ և 'ի արւճութենել իշխանութեան, որպէս հայրն իւր առներ։ Թէպէտ Հենրիկոս երդմամբ խոստացաւ կատարել զկամն քահանայապետին, այլ իբրև եմուտ 'ի Հռովմզօրու ծանու՝ ստեաց, և կալեալ զպատին հանդերձ կարդինալօք և մեծամեծօք արկ 'ի բանտ զամիսս երկուս։ Եւ այնչափ 'ի նեղէարկ, մինչև հաւանեալ պատին կամաց արքային պատկեաց զնա կայսր Հռովմայ։ Այս դործ առժամն թուեցաւ պապին՝ թէ փոքր չար իցէ և այնու ազատեսցի 'ի մեծապունէն, սակայն այնշափ մեծ եղեւ ապա զեղջ նորա և ցաւ սրտի, մինչև առանձնանալ նմա 'ի վանս և ապաշխարել գառն արտասուօք։

Ժողով գումարեալ նորա 'ի Լատերան՝ նզովեցաւ Հենրիկոս կայսր, և այնոքիկ որք ասէին՝ թէ նզովք և կապանք եկեղեցւոյ ոչինչ են։ Նորոգեցան բանագրանքն՝ զոր դատակնքեաց Գրիգոր Ե վանն տալոյ իշխանութիւն կղերիկոսաց, արկեալ ընդ գատապարտութեամբ եթէ զտուող և եթէ զընդունողն։ Մերժեաց

և ինքն Պասքաղես զգործն՝ զոր արար կամակատար լինելով արքային։ Զայն լուեալ հենրիկոսի դարձաւ 'ի չոռվլմ' 'ի վրէժխնդրութիւն։ Բայց պատճն տեղի ետ 'ի բենեվենտ, և չոքաւ յայլեայլ կողմանս խտալիոյ և գաղղիոյ ուղղել և բարեկարգել զեկեղեցիս և զժողովուրդս, առնելով զանազան ժողովս վասն բարեկարգութեանց։

Ի սմին ժամանակի կոմսուհին Մաթիզդայ հզօր պաշտպան սրբոյն Գրիգորի Ե., որ առ 'ի սէր աստուածապաշտութեանընծայեալեր յայն ժամ զվեճակ ժառանգութեան իւրոյ առաքելական գահին, կտակաւ հտատատեաց զայն։ որ և յետոյ կոչեցաւ Ժառանգութիւնսրբոյն Պետրոսի մինչեւ ցայսօր։ Բայց Պասքաղեսի պապին զկնի մեկնելոյ հենրիկոսի Ե դարձեալ 'ի չոռվլմ' և արթնութեամբ զեկավարեալ զեկեղեցին ընդամենայն ամս ութուտասն, ամիսս հինգ և աւուրս եօթն, փոխեցաւ յաստեացս ապաշխարող կենօք յերկոտասան կավանդացն վետ։ յամին 1118<sup>1</sup>։

1 Բարսն. և Բակ. յամն 1100 = 1118։ Լայ. բերդ. յղ. ծառ. Ասպա-ծոյ. գիր + 1. գլ. իմ. Պապմ. գահ. և իմ. գլ. լլ. : Աբբայ Ո-սբերիայ. 'ի ծամ. յամն 1116։ Փերերիկ. եղիս. 'ի լուսըն. առելլ. Սատլինայ. Պապմ. չայ. հապ. 3. եր. 18 :

## ԴԵՊԻ ՄԵՏԱՍՏԱՆԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ա. Տ.

1003. Գրիգոր Նարեկացի վախճանի :
1015. Եարոսլաւ որդի Վլատիմիրի տիրել Մոսկովաց :
1019. Սարգիս կաթողիկոս գնէ յաթռու իւր զՊետրոս Գետադարձ :
1024. Անի քաղաք Խոստացեալ լինի Յունաց, բայց չայք վանեն զՅոյնս :
1046. Յոյնք տիրեն Անւոյ :
1058. Խաչիկ կաթողիկոս յաջորդէ զՊետրոս Գետադարձ :
1058. Գրիգոր Մագիստրոս վախճանի :
1065. Գրիգոր Վկայատէր Նստի կաթողիկոս, և ապա գնայ ՚ի Կոստանդինուպօլիս, ՚ի Հռովմաց, յԵրուսաղէմ և յԵղիպտոս :
1077. Վահվոլոտ պայազատէ ՚ի Մոսկով :
1077. Վլատիսլաւոս առաջին պսակաւոր թագաւոր Բոյեմիոյ :
1079. Բարձումն թագաւորութեան Բագրատունեաց :
1080. Սկիզբն իշխանութեան Ռուբինեանց :
1082. Վկայատէրն գնայ առ կայսրն վասն միաբանութեան. և Բարսեղ Նստի կաթողիկոս :
1083. Աթոռ կաթողիկոսութեան գնի յԱնի :
1085. Օչին Սեաստոս կարգի իշխան Տարսոնի :
1089. Սկիզբն տէրութեան Փորդուգեղից :
1090. Բարսեղ կաթողիկոս գնայ ՚ի Պարսս :
1092. Ավեաթոփոլք տիրել Մոսկովաց :
1095. Միաբանութիւն Խաչակիր զօրաց :

1098. Ծնունդ՝ Ներսէսի Շնորհալոյն :

1099. Առումն Երտսաղէմի 'ի Լատինացւոց :

Զայնուռ Ժամանակաւ յետ Գագկայ Աթադաւորէ յԱնի Յովշաննէս Սմբատ, որ խոստանայ տալ Յունաց զթագաւորութիւն իւր : Յետնորա Գագիկ Բ. որ յետ Երից ամաց զբկեալ 'ի Թագաւորութենէ վտարանդի 'ի Յոյնս : Իսկ յամի 1079 սպանեալ 'ի Յունաց՝ բառնի թագաւորութիւն Բագրատուննաց : Այլ 'ի 1080 զօրացեալ Ոտուբէն իշխան՝ ափրէ 'ի Կիլիկիա . որով սկզբնաւորի պայազատութիւն Ոտուբիննաց . զոր և յաջորդէ որդի նորա Կոստանդին Ա իշխան 'ի 1095 . որ ձեռնառւ Եղե Խաչակրելով մինչ առին զԱնտիոք :

# ԵՐԿՈՉԱՋԱՆԵՐՈՐԴ ԴԱՅ

## ՃԿԱ

### ԳԵԼԱՍԻՈՍ Բ

Ա. Տ. 1118. և կայսերութեան Հենրիխոսի Ե 8.  
և Յովաննոս իոհաննոսի 1:

1481. ՅԱՄԲ 1118. յութ կաղանդացն  
միետրվարի Յովհաննես կայետանցի ըստ Եկեղեց  
ցական սահմանադրութեան ընտրեցաւ գլուխ  
եկեղեցւոյ յուխտէն Հռովմայ ընդգէմ կամաց  
իւրոց, և ձեռնադրեցաւ փառօք քահանայապետ  
անուանեալ Գելասիոս։ Զսա Ռւբրանոս Բ հա-  
նեալ 'ի վանաց Մոնկասինոյ կարգեալ Եր գի-  
ւանադպիր և վարդապետ կամ խորհրդական,  
և ապա առաքելական նուխրակ . որ հմաւտլեալ  
զամն քառասուն ամենայն գոլրութեանց և ե-  
կեղեցական կանոնաց՝ փայլէր առաքինութեամբ  
և խմաստութեամբ։

Սակայն 'ի քահանայապետութեան ոչ Եդիս  
երբէք հանդիսաւ. կրեաց զանհարին վիշտս հա-  
լածանաց, այլ յամենայնի ընտիր գաւաւ համբե-  
րութեամբ։ Քանիզի Գենգիոս Փրանկիբան զօ-  
րաւոր իշխան Հռովմայ, որ ըղձայր զայլ ոք  
յիւրայոցն կարգել քահանայապետ, մկան  
ընդ ակամը հայել 'ի պատպն։ Մինչեւ յաւուը  
միում յանդգնեալ նորա առնու ընդ իւր զօրի-  
կայս, և քարշեալ ձգէ արտաքս յէ կեղեցւոյ ըզ-  
մեծ քահանայապետն՝ բռնցի և արացի հարեալ  
զեա անարդանօք հանդերձ, մինչեւ արկեամբ ներ-  
կանել զալիս նորա . և արկեալ 'ի շղթայս փա-

կէ 'ի բանտի : Ընդ որ չհանդուրժեալ չոռվ-  
մայեցւոց դիմեցին 'ի տեղին և զերծուցին զնա-  
հատակին 'ի ձեռաց անօրինին : Սակայն և այն-  
պէս չեղեւ յապահովի՛ վասն զի չենթիկոս Ե-  
կայսր հասեալ 'ի չոռվմ հարկ եղեւ պապին  
աեղի տալ 'ի հայրենիս իւր 'ի Կայետան : Անդ  
լուեալ նորա եթէ կայսրն եդ զոմն գերապապ  
Մաւրիախոս Բուրդինոս եպիսկոպոս Բրագա-  
րիայ , մերժեաց զնա . որում ետուն անուն Գրի-  
գոր Ը : Դերապապս այս 'ի տօնի պենաէկոս-  
տէին զչենթիկոս գարձեալ պսակեաց կայսր :  
Յայնժամ Գելասիոս պապ արքար ժողով 'ի Կա-  
պուա , և նզովեաց զգերապապն և զկայսրն :

Յեա մեկնելոյ կայսեր 'ի չոռվմայ մեծ հայ-  
րապեան եկն 'ի գահ իւր . այլ ոչ լեալ աներ-  
կեան դիմեաց 'ի Գաղղիա 'ի նաւահանգիստ Ե-  
կեղեցւոյն չոռվմայ խնդրել զօգնութիւն յար-  
քայէն Լուդովիկոսէ Զ ընդդէմ հերձասեր  
թշնամեացն : Անդ պատուեցաւ պապն մեծա-  
պահծ միառօք ոչ միայն յալքայէն , այլ և 'ի հա-  
մօրէն ժողովրդենէ : Սակայն հասուն հասակին  
խոնջեալ 'ի հալածանս և 'ի վիշտա ճանապարհի՝  
ախտայաւ զախտ կողաց , և իմացեալ զմօտալուտ  
վասնդն տեղափոխեցաւ 'ի վանս կղտնիակայ :  
Անդ առաքինաբար կնքեաց զկեանս իւր խոս-  
տովանողն , և ամփոփնցաւ 'ի չորս կաղանդացն  
վիեար . յամին 1119 , կացեալ 'ի հայրապետու-  
թեան զամ մի և աւուրս չորս : Որ արդարեւ 'ի  
սուզ ժամանակի մեծամեծս կրեաց վիշտա . ո-  
րով և մեծահռչակ քարոզեցաւ համբերութիւն  
նորա :

1 Բարոն . և Բակ . յամ 1118 : Բանդուլիս Բի-  
շան . 'ի վարս սորտ հապ . 3 : Պէտք . սուր . Գիշ + 4 :  
Եամի . գլ . ՖԻԴ :

## ՃԿԲ

## ԿԱԼԻՍՈՍ Բ

Ա. Տ. 1119, և կայսերութեան ՀԵՆՐԻՔԻ Ե 9,  
և ՅԱՀՆ. կամենուի 2:

1482. Կալիստոս աղքաւ գաղղիացի Եղբայր  
դքսին Բուրգոնախայ, արքեպիսկոպոս ՎԵՆ-  
ՆԱՅ, յառաջն Կուիտոս Ճայնեալ, այր սրբակաց  
և ներհուն յաստուածային և յարտաքին գի-  
տութիւնն՝ ընտրեցաւ քահանայապետ յաթոռ  
սրբոյն Պետրոսի ՚ի կաղանդս փետ. յամին 1119,  
զայսօրինակ եղեալ ընտրութեանն: Վանդի ԳԵ-  
ՂԱՍԻՈ պատ ծանրացեալ ՚ի հիւանդութեան  
անդ իրեւ գիտաց զվերահաս մահ իւր՝ յորդոր  
մատոյց կարդինալաց ընտրել իւր յաջորդ զկո-  
նոն եպիսկոպոս Բրենեսաինոյ: Բայց Կոնոն ան-  
նահանջելի կամօք ընդդեմ կացեալ համոզեաց  
զնոսա ընտրել զկուիտոս աղքեպիսկոպոս, որ ՚ի  
թաղման ԳԵՂԱՍԻՈՍԻ անդ գտաւ. և ապա գար-  
ձեալ անտի անցեալ էր ՚ի ՎԵՆՆԱ: Եւ այսպէս  
հաստատեցաւ յիշաննութեան պապն ՚ի հինդ  
իդոսացն փետր. անուաննեալ Կալիստոս Բ. և  
ապա չոքաւ ՚ի Տոլովատ:

Վառեալ այնուհեաւ առաքելական նախան-  
ձու գուն գործեր բառնալ զամենայն հնացեալ  
զանկարդութիւնն: Արար ժողով ՚ի ՀԱԷՄԱ ՚ի  
չորեքհարիւր քսանեւլեց առաջնորդաց. անդ էր  
և Լուգովիկոս արքայ Գաղղիոյ: Եւ զի ՀԵՆ-  
ՐԻԿՈՍ Ե կայսր ընդդեմ խոսամանն ոչ կամեցաւ  
գալ ՚ի ժողով անդք՝ գատապարտեցաւ զօրու-  
թեամբ վճռոյն, որ ընդդեմ Սիմոնականաց:  
Դատապարտեաց պապն զարւչութիւն իշխա-

նութեան . ընդ նմին և զգերապապն մերժեաց .  
արդել և կղերիկոսաց զամուսնութիւն : Յետ  
այնորիկ ժամեղենմատուղել 'ի չոռվմընդ  
ճանապարհ Փարիզոյ, այլ 'ի Նորմանտիա հանդել-  
պեալ արքային Խնդղիոյ եբարձ զհակառակու-  
թիւնն որ կայր'ի մշջնորա և արքային Գաղղիոյ :  
Հասեալ անտի յիտալիա՝ յամենայնտեղիս հրա-  
չակեցաւ անուն նորա . մինչև զգողանի հարեալ  
դերապապին Մաւրիտիոսի՝ ինքնահալած տեղի  
ետ 'ի Սուտրի : Այլ իբրև եմուտ մեծ քահա-  
նայապետն կալիստոս'ի չոռվմ՝ յամենայն կող-  
մանց ձայն ցնծութեան լուղի լինէր 'ի չոռվմայ-  
եցւոց : Լուեալ զնենգութիւն Մաւրիտիոսի չո-  
քաւ 'ի Բենեվելենտ . և յարուցեալ զնորմանս  
'ի վերայ քաղաքին Սուտրի՝ կալաւ զգերապապն  
և էարկ'ի բանտ, ուրանոր զրաւեցաւնա'ի կենաց :

Այլ մեծահաջակ գործ կալիստոսի պապին  
այն եղեւ, զի խոհական հանճարով հաւաքեալ  
'ի մի երեքհարիւր և աւելի եպիսկոպոսունս և  
չորեքհարիւր վանականս գումարեաց տիեզե-  
րական ժողով 'ի Լատերան . որ եղեւ առաջին  
ընդհանուր ժողով արևմտեան ընդդեմ անկար-  
գութեան, որով եկեղեցական աստիճանք բաշ-  
խէին ընդ ձեռն թագաւորաց (919) : Որով  
բարձեալ զյիմնամեայ հակառակութիւնն վասն  
ալւշութեան իշխանութեանց յուղեալ 'ի մշջ  
քահանայապետաց և կայսերաց, զերծ կացոյց  
զեկեղեցականս յանկարգութեանց անտի : Եւ  
կարգեաց զկոնրագոս եպիսկոպոս 'ի սուրբս,  
քննեալ զգործս և զսքանչելիս նորա : Եւ  
սուրբն Նորբերտոս այր փառաւոր և իմաստուն  
հրամանաւ կալիստոսի հաստատեաց զկարգն  
Պրեմոնստրատեան, որ տալա տարածեալ 'ի բա-  
զում տեղիս՝ ծաղկեցաւ սրբութեամբ ընդդեմ  
հերձուածոց ժամանակին : Իսկ մեծի հայրա-

սկետին հասեալ՝ ի վախճան կենաց՝ վախեցաւ  
առ Քրիստոս յիդոսս գեկ. յամին 1124, կա-  
ցեալ յիշխանութեան ամս հինգ, ամիսս տասն  
և աւուրս երկոտասասան :

Զայնու ժամանակաւ հաստատեցաւ յԵրու-  
սաղէմ միաբանութիւն ասպետաց Մալդոյի-  
որոց առաջնորդ կոչեցաւ Մեծ մագիստրոս :

1 Բարոն. և Բարիյան 1119: Պետ. Մարի. Գիշ+8:

2 Սուսա զատուաշինն մարդունեցան օգնել աղքապաց  
յԵրուսաղէմ, և իւշեան Եղբար+ հիւրընիալ իւմ Եղ-  
բար+ ուրբոյն Յուլիանոս+ և նշան մարդունութեան նո-  
յա եր իւալ սովիպասի 'ի վերաց սկա- հանդերձից : Ո-  
րոց նիւս բազմացեալ կարի յոյժ՝ յերիս կարգո ուրոշ-  
ցան. առաջին կարգն եր սովորութեալ պատփերազուղաց  
ընդունել անհաստափից : Երիւրդն կարգեալ եր 'ի ինա-  
մել զարգացու : Իսկ Երրորդն 'ի պաշտել պարհանարդն՝  
որ և յիշանադրէին 'ի սուրբ սուրբիման : Եւ հաւա-  
ծեալ նոյս զԱւրաիինոսս' պիրեցին իշխոյն չու-  
գանի : Եւ անգի անցեալ 'ի Մալդու ամբարտն անդ-  
րին ըստ շայոսը :

Ի նին ժամանակի անոնի յամախեցին ունիպատուր+  
'ի սուրբ Երիշը, աջայն Երուսաղէմի իստորիա նոյս  
օլեւանս մօք 'ի պամար Սույնոնի . յորմէ անուանե-  
ցան նոյս Տաճարահան : Սուսա կարգեցան 'ի պաշտ-  
պանել պարիսպունեաթիւն իբրև պինուարակիւն կրօ-  
նաւոր+ : Բայց այնուան զօրացան ընդունել անհաս-  
տից և քարթամացան, մինչև նուալուշեալ 'ի պաշտ-  
պանէն յոր կարգեալ էին, իսուգարեցան 'ի վարս . նին  
իրի ծովան Ալենայ եբարձ զայն իրօն առ Կույսու Ե  
(1515):

## ՃԿԳ

## ՈՒՍՏՐԻՈՍ Բ

Ե. Տ. 1124, և կայսերութեան ՀԵՆՐԻԿՈՒՄ Ե 14,  
և Յաջ. կահենուի 7:

1485. Ո՞սրիոս բոնոնիացի՝ Լամբերտոս  
կարդինալ վերաձայնեալ յառաջն, ծնեալ յան-  
շուք քաղաքի, բայց իմաստութեամբն և առա-  
քինութեամբն բարձրացեալ յեպիսկոպոսու-  
թիւն Ոստիայ, ընտրեցաւ 'ի մասնէ ուխտին  
պապ. զի միւս մասն հաւանեալ էր ընտրել զարք-  
եպիսկոպոսն Հռավելենայ: Նորին աղատաւ Ո՞ս-  
րիոս, կամ որ նոյն է Լամբերտոս կարդինալ ժո-  
ղովեալ 'ի մի զամենայն ուխտն զկնի եօթն աւ-  
ուրց՝ յօժարակամ' հրաժարեցաւ, ոչ լաւ հա-  
մարելով զինքն քան զընկերն: Եւ կարդինալաց  
և եպիսկոպոսաց հիացեալ ընդ խոհական խո-  
նարհութիւն հայրապետին՝ միաձայն հաստա-  
տեցին զնա քահանայապետ յաթոռ Հռավելայ  
յերկոտասան կաղանգացն յունվ. յամին 1124:

Սա կամելով ուզու զիրաւունս եկեղեցւոյ  
և զանուզզայս ածել յուզզութիւն, 'ի հետեւ տլ  
ամի հաստատեաց զիրաւսակալութիւն Հռավեն-  
այ 'ի վերայ կուալզերիոսի ազքեպիսկոպոսի  
տեղոյն, ըստ որում իրաւունք էին եկեղեցւոյն  
Հռավելայ: Իսկ զպատրիարքունո Ագուիլայ և  
Գրատիոյ և զոմանս յեպիսկոպոսաց և յաբբայ-  
ից ելոյծ 'ի զդաստութիւննոցա: Յայնժամ ՀԵՆ-  
ՐԻԿՈՍ Ե մեռեալ անորդի՝ Լոթարիոս գուքս  
Սաքսոնիոյ ժառանգեաց զժագաւորութիւն  
գերմանիոյ, որում ապա ընդդէմ կացեալ ազ-  
գականքն Հենրիկոսի՝ Փեդերիկոս և Կոնրադոս

ջանային հալածական առնել զնա : Սմին իրի  
նախագահն Մեղիոլանու ձեռներէց լեալ՝ այն  
ինչ տայր զթադ թագաւորութեան խավիոյ  
Կոնքադասի, պատն մերժեաց զնա և ընկեց յեւ  
պիսկոպոսութենէ սակս յանգդնութեանն : Խոկ  
զիոնձեր կոմսն Սիկիլիոյ, որ մահուամբ Գու  
լիելմոսի Բ դքսին Ապուղիայ յափշտակեալ էր  
զայն գաւառս, ընդ բանիւ արար վերստին : Եւ  
նա բազում աշխատ եղեւ տալ յետս գարձուցա  
նել զվայն զայն . այլ իբրև չեղեւ հնար, խօնար  
հեցաւ առաջի պապին, և ապաշխարութեամբ  
հանդերձ խոսանացաւ հաւատարմութիւն և զեր  
ծաւ 'ի կապանաց անտի : Յայնժամ ապա պապին  
հաստատեաց զդուքսն Ապուղիայ, և գնացեալ 'ի  
բենեվլնոքալաք երդմնեցոյց զնա մնալ հաւա  
տարիմ և պաշտպան սրբոյ եկեղեցւոյ : Եւ անտի  
գարձ արարեալ 'ի հռովմոչ յետ բազմաց հան  
գեաւ 'ի տէր 'ի վեշտասան կապանդացն մարտի  
յամին 1130, կացեալ յիշխանութեան գովելի  
վարուք ամս հինգ և աւուրս յիսունեհինգ :

## ՃԿԴ

## ԻՆՌՎԿԵՆՏԻՌՍ

Ա. Տ. 1130, և կայսերութեան Լուարիոսի 6,  
և Յովհ. իսհենոսի 13 :

1484. Ի հետեւալ աւուր մահուն Ոնորիոսի  
իննովլկենտիոս հռովմացեցի կարգի փոխանորդ  
Քրիստոսի արտաքոյ կամաց իւրոց. որ յառաջնմէ  
անուանեալ էր Գրիգոր կարդինալ. և վարք նո-

<sup>1</sup> Բար. և Բակ. յահն 1124 : Աբբայ Ուսբեր  
իայ 'ի ժամ. յահն 1124 :

րա առաքինի , համբաւ սրբութեան և ալիք իմաստութեան բարձրացուցին զնայ յային ծայրագոյն պատիւ : Սակայն այնու ամենայնիւ չեղեւ նա ազատ 'ի հակառակորդաց . որոց միաբանեալ ընդդէմ 'նորա՝ կարգեցին գերապապ զՊետրոս Լեւոնեան՝ ձայնելով Անակղետոս Բ : Տեսեալ իննովկենտիոսի զգօրութիւն թշնամեացն՝ տեղի ետ 'ի գաղղիա . և Լուգովիկոս Զ Կրասոս արքայ Գաղղիոյ այնչափ մեծարեաց զնա , որչափ վայել էր արդարեւ մեծի քահանայապետին 'ի մեծէ արքայեն :

Ժողով գումարեաց իննովկենտիոս 'ի Հուկմն վասն բարեկարգութեան եկեղեցւոյ . յորում վճռեաց պատուել 'ի սուրբս զերանելին Կոթարդոս եպիսկոպոս Հիլդեսէյմայ 'ի Սաքսոնիա . իսկ զորդի արքային զԼուգովիկոս է պսակեաց թագաւոր : Անցեալ անտի 'ի Գերմանիա արարժողով 'ի Լէովիդիա հանդերձ Լոթարիոսիւ . յորում բանագրեաց զդերապապն Անակղետոս : Խոստացաւ և Լոթարիոսի թագ կայսերութեան եթէ կացցէ պաշտպան սրբոյ եկեղեցւոյ : Ապա ընդ նմին հանդերձ զօրօք գարձաւ 'ի Հռովմէ և ընկանեալ զթշնամիս խաղաղութիւն հաստատեաց . և ապա պսակեաց զԼոթարիոս կայսր Հուովմայ վառօք մեծաւ : Ի վերայ այսոցիկ յանձն արար 'ի նա զԱլովիոն , որ էր կոմսութիւն Մաթիղդայ գաշամբ հատուցանելոյ նմա և յաջորդաց նորա ամբատ ամէ հարիւր լիսլրայս արծաթոյ . և յետ վախճանին անդրէն գարձուցանելոյ անթերի զամենայն ժամանգութիւնն և զիրաւունս առ գահն առաքելական (1480) : Բայց սակայն զկնի մեկնելոյ անտի կայսեր՝ անդէն գլուխ ամբարձին հակառակորդք . սմին իրի պապն տեղի ետ 'ի Պիղա , և եկաց մնաց անդ մինչեւ ցմահ Անակղետոսի : Յայնժամ թշնամիք ձեռնտուու-

թեամբ Ռոճերի գքսին Սիկիլիոյ եզին զայլ ոք դերապապ Գրիգոր անուն, անուանեալ զեավեկ տոր Դ։ Այլ սայետ երից ամսոց գովելի զղջմամբ հրաժարեալ՝ հնազտնդեցաւ իննովկենտիոսի, որով վերջ եղեալ երկարուակութեան՝ խաղաղացաւ եկեղեցին։ Եւ այն յաւէտ ձեռնտուութեամբ սրբոյն բեռնարդոսի, որ պաշտպան է կաց իննովկենտիոսի պապին ամենայն ոգւով ընդդեմ զինեցաւ և գքսին Ակուիտանիոյ՝ որ կուսակից էր գերապապին։ զի առեալ՝ ի ձեռս ըդսրբութիւնն սրբոց սբան քրիստուարհեցոյց զնաի հնազանդութիւնն սրբոց գահին։

Յետ այսորիկ գումարեաց քահանայապետն զընդհանուր ժողով ի Լատերանու հազար եպիսկոպոսաց ընդդեմ հերձուածոյ գերապապին և այլոց աղանդաւորաց (920)։ Ապա զինեալ ընդդեմ Ռոճերի գքսին Սիկիլիոյ նկուն արար զնաայնպէս զի աճապարեալ եկին անկաւ յոտս սրբազանին հանդերձ որդւով իւրով, և զղջացեալ սրտիւ խոտացաւ հաստատուն հաւատարմութիւն երգմամբ հանդերձ։ Յայնժամ մեծ հայրապետն ընկալեալ զնա՝ չնորհեաց նմա զդքսութիւն գաւառացն Կապուայ, Ապուղիայ, Կաղաքրիոյ և Սիկիլիոյ։ յաւել՝ ի վերայ և զտիտղոս թագաւորի, և այնուհետեւ կոչեցաւ նա թագաւոր կրկին Սիկիլիոյ, այս է՝ Կէապօլսոյ և Սիկիլիոյ, որպէս ցարդ՝ ի հրովարտակո գնի։

Ընդ այն ժամանակս Արնալդոս ոմն միացեալ ընդ բազմաց յարոցց զաղմուկ մեծ ի Հռովմ, թէ ժամանակաւոր ակրութիւնն չառվայ կախի յաշխարհականաց, և ամենայն ինչ առնուա վերաբերի։ Ուստի ըստ հին սովորութեան հաստատեցին ծերակոյտ ընդ իշխանութեամբ պապկի, որ կառավարիէր զՀռովմ՝ հաւաբերվ և անտեսելով զամենայն եկամուտս այլովքն հանդերձ։

Որոց ընդդեմ օպառնացեալ քաջ հօտապեան  
ծանր բանադրանս՝ կարի իմն տշխատ եղե նաև  
բացուցանել զանօրէն ժողով նոյա . բայց կան  
խեալ 'ի նա վախճան կենաց՝ փոխեցաւ առ տէր  
յութ կաղանդացն հոկ . յամին 1143, կացեալ  
յիշխանութեան հալածանօք հանդերձամն ե-  
րեքտասան , ամիսս եօթն և աւուրս ինն :

## ՃԿԵ

### ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Բ

Ա. 8. 1143. և կայսերական կոնբարութիւն գ. 6,  
և ինանուելի իսմ . 1 :

1485. Կեղեստիանոս ետրութիացի 'ի կաս-  
տելոյ կամ Տիփերնոյ , յերրորդում աւուրյեա-  
մահուան իննովկենտիոսի հաստատեցաւ քահա-  
նայտետ 'ի վեց կաղանդացն հոկ . հաւանու-  
թեամբ համօրէն ուխտին : Ընտրութեան սորա-  
ոչ ոք յաշխարհականաց եղե խոշընդուն . որ-  
պէս յաճախ եղեալ էին 'ի սկզբանէ ժամանա-  
կաց անտի , սեփականեալ ինքեանց իրաւունս  
ինչ կուսակցութեան . զոր երարձ մեծաւ քա-  
ջութեամբ իննովկենտիոս Բ , կեղեստիանոս  
թէպէտ մեծանուն հանդիսացեալ էր իմաստու-  
թեամբ և սրբութեամբ , որպէս յոյտ է 'ի  
նամակաց պրոյն բեռնարգոսի և Պեարոսի աբ-  
բային , ուզ էին յայնժամ լուսավայլ ջահք  
եկեղեցւոյ , սակայն ժամանակն կարճօրեայ ոչ

1 Բարոն . և Բահ . յան 1130—1143 : Աբա-  
րու աբբայ 'ի վարս սբբոյն բեռնարգոսի գիր + 2 .  
Գլ . ա : Բալլանդ . 4 . մայ . 'ի ողում . կանոնադ . գլ  
ան . 11 :

թոյլ ետ նմա առնելինչ 'ի մեծագունից . քանզ  
զի յեօթն իդոսս մարտի յամին 1144 վախճան  
տուալալաստի կենացմ՝ վերնոյն փափաքեաց, կա-  
ցեալ քահանայապետ ամիսս հինգ և աւուրս ե-  
թեքտասան ։ :

1 Բարսն . և Բակ . 1143 : Սիկոն . յղ . Եագ .  
իդ . գիր + 10 . յամ 1143 : Արնութոս վիստաշի .  
գիր + 2 :

Սուբբն Մաղագիա եպիսկոպոս Արմակոյ շիքերնիա  
մշարոյ երաւան ինսուլըն գիտուի թու, և բարեկամ սրբայն  
բւժուարդուի : Այս գուշակութիւն + որ յանուան և ըստ  
յածին պահանանայապէպաց'ի կեղեսագիտուուէ թու անդը՝  
ընդ անհարապատ գրութիւնն համարեալ իսուպին յի-  
մասպնոց . և յիշաւի . պի սուրբն բւժուարդուն, "ը  
գրեաց պատրիարքան, "և ինչ յիշապահէ պատշաճու-  
թեանց . պոր ու արքեօն լուկը նա և կամ 'ի ձայնա-  
նակաց նորա ու , և նեւ սպոց իային, և նորա եին :  
Դարձեալ պի Արնութոս վիստաշի, "ը չըրե+հարիւ-  
և յիսուան ամօք եկաց պիսի սրբայն Մաղագիայ, առա-  
ջին յիշապահիլ և մարգարեսթեանց, և այն առանց  
ինչ նշանակիլու և նեւ ինքն սոսպի առեւու իցե : Ալան  
որոց ըստ սպագագոյն իարձեաց ու վաղ ինչ յօտեւու  
ին գուշակութիւնն ուն զամն 1590 . պի նոր զայտ  
պագամասս, սայն վայր իարի 'ի ուն պատահին անցի  
և անհանց գոհանայապէպաց, իսկ անպի և այսը ունիւ  
այնպիս, այլ յամախ բունազբուռութեամբ ին, և եր-  
բե + պի ըստ դիպոց ինչ հետաւոր յարմարութեամբ ,  
և յամախ ևս ամենամաս անյառ մար և անդեռ : Օքինակ  
ին 'ի գլուխ մարգարեսթեանց դնի զկելշուսիտուու-  
թ, և Յամբոցին Տիքերեաց . պի եր իսկ բնի 'ի մոյ  
յամբոցաց անպի որ կանառ Տիքերեա գետուզ : Զագրե-  
գուէ Ժ.Դ., "ի հնասնենք + աղաքի ։ ի . ի բը ու +  
ուած ծննդեան նորա Մերիւլան հին եր, և հիմնեալ  
400 ամօք նախ քան զբրիսպոս : Զագրերանուն ը,

## ՃԿԶ

## ԴՐԱԿԱՌՈՍ Բ

Ա. Տ. 1144. և իոյներութեան կոնբարուի գ. 7.  
և իմ. իմանոսի 2:

1486. Պուկիոս յառաջագոյն ձայնեալ գ. ե-  
րարդոս կանոնական կրօնաւոր գրապետ և ատե-  
նագալիր եկեղեցւոյն Հռովմայ, որ յ՛Ռւրբանոսէ  
Բ.'ի պատիւ կարգինալութեան վերամբարձեալ  
էր, ընարեցաւ քահանայապետ յերրորդում  
աւուրմահուան կեղեստիանոսի, և ձեռնագրե-  
ցաւ 'ի չորս իդոսսացն մարտի յամին 1144: Սա  
ջանահնար եղել զօրացուցանելզեկեղեցին Վրիս-  
տոսի և սանձահարել զապստամբս մնացորդս յա-  
ռաջնոց անտի . նմին իրի և հալածանս բազումն  
կրեաց: Առ սովու Ալփոնսոս դուքս Լուսիտա-  
նիոյ հարկատու եղել եկեղեցւոյն Հռովմայ, որ-

“ Ըստան և ջարդ ” . ժանհի իւրենպացի էր, և  
անուն Փլոր Էնդիայ Ծաղկեալ Աւրգիմանի : ԶՊիոսէ  
Զ, “Պանդուխուու առաջելական ” : ԶՊիոսէ է .  
“ Աւրծիւ յադշնակին ” : Այսնուին իմա և պայլոց : Ըստ  
այսմ մարգարէութեան զինի այժմու գահանայառէպիս,  
որ է Գրիգոր Ժ. Զնան այլ ևս երկուպատան անուան +  
գահանայառպէպաց, “ Ի՞նչ վերջընթերն ո՞նչ ” և Փառու-  
թիլենաց : և պլերջնոյն Գրի այսպէս . “ Պետրու-  
հոռովմայնի ՚ի վերջին հաւածնման անդ սըբոյ եկեղե-  
ցաւ Հռովմայ հասպատպէտաւ գահանայառէպ արածեսէ  
զնօպ իւր ՚ի բաղաւմ վերջու . մինչև իործանեսցի գա-  
ղաքն Էօլնաբըլուր յանցից անցելոց, և դադասուն ա-  
հեղ դագիւսի զժողովուրդ իւր : Ալար + ահ . յանի  
1145 :

պէս այլ թագաւորք և իշխանիք . տալով ամ ըստ  
ամէ չորս ունկիս ուկւոյ : Գրեաց զանազան կոն-  
դակս և նամակս 'ի բարեկարգել զհօտ իւր . յո-  
րոց տասն յածին առ մեօք : Սակայն իշխանիք  
ումանիք 'ի չոռվմայեցոց համախոռք Արնալդոսի  
չարակամութեամբ յանդգնեցան ոչ միայն հաս-  
տատել զծերակոյտն ընդ պատրկին իւրեանց  
(1484) , այլ և սեպհականնեցին զժառանդու-  
թիւնս եկեղեցւոյն՝ զտասանորդս ևեթ շատ հա-  
մարելով քահանայապէտին : Յորմէ կարի սըրու-  
ցաւութեամբ ընդդէմ զինեալ անօրինաց՝ ճգներ  
սրբազանն խորտակել զեղիւրս նոցա : Բայց այն  
ինչ ելաներ ՚ի վեր հանդերձ զօրօք առ ՚ի զիո-  
ստ արտահալած առնել ՚ի Կապիտոլիոնէ բըր-  
նութեամբ զինու , անդէն ընկալու ՚ի նոցանէ  
հտրուածս քարանց + որով և վտանգեալ չարա-  
չար՝ մահացաւ ՚ի հինգ կազանդաց մարտի յամին  
1145 , վարեալ զիշխանութիւն քահանայապէ-  
տութեան ամիսս մետասան և աւուրս չորեքտա-  
սան <sup>1</sup> :

### ՃԿԵ

#### ԵՒԳԻՆԵՌՍ Գ

Ա . 8 . 1145 , և կայսերութեան կանրադուի գ . 8 ,  
և կմմ . կոհնենոսի 3 :

1487 . Ի վազիւ անդր զկնի մահուան Ղու-  
կիսսի հաւանութեամբ հասարակաց՝ ուխտին և  
ժողովրդեան յաջորդեաց յաթոռ . քահանայա-  
պէտութեան Եւգինէսս պիզացի յերիս կա-  
զանդացն մարտի , որ յառաջն կոչէր բեռնար-

<sup>1</sup> Բարոն . և Բակ . 1144 : Անկոն . գիւր + 11 :  
Յակ . սարի . գլ . ը . առ Մաբիլ . հապ . 2 : Անկ-  
որիւլսս առ կիսկոն . ՚ի վարս Արեկ . Դ . հապ . 1 :

գոս աբբայ Հռովմայ 'ի վանս սրբոյն Անաստատայ կարդին Կիստերատկանաց և աշակերտ սըր բոյն թեռնարդոսի . որոյ ընդ կանոնադրութեամբ կացեալ ժամանակս բազումս 'ի Հռովմբ փայլէր 'ի սրբութեան : Այլ յետ երից աւուրց ընտրութեան խիթացեալ 'ի նենգութենեւ Արնալդոսեանց (1484) գեշերայն ամրացաւ ընդեպիսկոպոսաց և կարդինալաց 'ի մենաստանի Փարփեսայ քսանեւ հինգ մզոնաւ հեռի 'ի Հռովմայ : Անդ 'ի չորս նոնայց մարտի օծաւ պատ և վոխանորդ Քրիստոսի : Անտի անցեալ 'ի Վետերին, ընկալաւ զգեսպանս ամենայն քրիստոնեից, ևս և Գրիգորի կաթողիկոսին Հայոց-որում և դրեայ նամակ սիրոյ : Ապա զկնի ութամնոց 'ի հանդարանել շփոթութեան դարձաւ 'ի Հռովմ : ուրանօր վերատին նորոգեցաւ աղմուկն . յորմէ և ինքն տեղի ետ 'ի Գաղղիա 'ի սովորական ապաստանարան քահանայապետաց . զոր Լուգովիկոս կ մեծաւ պատուասիրութեն ժողովնաց :

Յայնժամ Եւգինեոս դումարեաց զանազան ժողովս 'ի Փարիզ և 'ի Հռովմա . դատասկարտեաց զկնիւն հերետիկոս տիմար, որ զբազում բանս

1 Ծնդ այն ժամանակս Գրիգոր իւանուշիկոս Եղբայր Ընդհաւույն Ելեաւել յԵրուսաղէմ . և յեպ Դարձին Լադին վասն նորա գրեցին առ պատն իննուզինադիս Բնանս գովութեան : Եւ նա ցուեաց առ նա գառական և ուղղ հայրապետական և նամակս : Յեպ Իննուզինադիսի նոյն ինքն իւանուշիկոսն գրեւաց սակա իւընդրաց ինը առ Եսագինեսս Գր. և արձակեաց հրեւափակս առ նա հանդեւէ նույնալ : Եւ պատն բազում մեծարանօտ ընկալեաւ պհըւափակս նորա ցուեաց առ նա նամակ յարդութեանց գալ 'ի մաբանութիւն սիրոյ ընդ Լադինացաց : Զայս թուղթ ըիշե ժողովն Սամայ . պէս և 'ի Պատմ . Հայ . հադ 3 . եր . 54, 55 :

աւետարանին անձին յարմարէր (841) : « Եղին՝  
պէս նզովեաց զԳիլըերտոս (840) : Իսկ ՚ի ժու-  
ղովն Տրեվերոյ քննեալ զգրութիւնս սրբուհւոյն  
Հիլդեգարթեայ՝ հաւանեցաւ . այլ գրեաց առ-  
նա թուղթ յորդորանաց զգուշանալ ՚ի բանս :  
Ասրա զկնիի երկուց ամաց իբրև դարձ արար ՚ի  
Հռովմ, վերստին ծագեցան շփոթութիւնք ՚ի  
խոռվաց, մինչեւ դարձեալ հեռանալնմա անտի:  
Յետոյ ուրեմն ՚ի խաղաղութեան հաստատեալ  
զհօտն դարձ արար ՚ի գահ իւր ՚ի 1152. և փոքր  
մի խաղաղացաւ ՚ի վերջին աւուրս քահանայա-  
պետութեան իւրոյ . որպէս նախագուշակեալ  
էր Հիլդեգարթէ : Իբրև զի ՚ի հետեւալ ամի  
սակս եկեղեցական դործոց չոքաւ ՚ի Տիբուր :  
Անդ հասեալ նմա վախճան կենաց՝ վերասլա-  
ցաւ յերկինս յութ իդոսացն յուլ. յամին 1155,  
կացեալ ՚ի քահանայապետութեան ամս ութ,  
ամիսս չորս և աւուրս տասն : Որոյ պատուական  
մարմինն բերեալ ՚ի Հռովմիառօք մեծաւ ամ-  
փոփեցաւ ՚ի տաճար սրբոյն Պետրոսի : Եւ Աս-  
տուած փառաւորեաց զերանելին՝ ցուցեալ բա-  
զում սրանչելիս ՚ի գերեզմանէ նորա <sup>1</sup> : Սորա  
գտանին առ մեօք զանազան դործք և խմաստա-  
լից նամակք <sup>2</sup> : Սուրբն Բեռնարդոս սմա ըն-  
ծայեալ էր զիւր գիրս մտածութեան . և նա  
յանձն արար ՚ի նա զհոգս Պաղեստինացւոց <sup>3</sup>:

1 Բարոն . և Բակ . յամ 1145 = 1155 : Հոռիէր  
պոտ Տէմոնթէ յամ 1152 : Որոն Էպիփ . Է . 31 :

2 «Եթէ Շիւրին և Յեռնապարբաս ինդրէ» ըս-  
տվառութիւնն «ըբաց հարցն , գացէն ՚ի Առաղըն Ես-  
գինէսսի պապին Հռովմայ . զոր գրեալ և առ պէտ  
գրիտրին իանողիկոս եղբայր Ածին՝ Անդրէսի իւր-  
եցայ » : Զ . Ժող . Ասա :

3 Ընդ այս ժամանեկու Քիւպոնէայ + յԵրուսաղէմ

## ՃԿԲ.

## ԱՆԱՍՏԱՄ Դ

Ա. Տ. 1153. և կայ-նըրութեան գէտերինսի Ա. 2.  
և իմ. ինհէնսով 11:

1488. Ի հետեւեալ աւուր փոխման յաս-  
տեաց մեծի պապին Եւ զինեռոի Գ յաջորդեաց  
զնայալքու քահանայալետութեան Անաստաս  
հռովմայեցի. այր մեծահռչակ իմաստութեամբ  
և առաքինութեամբ, նա և պատկառելի ամե-  
նեցուն հասուն հասակաւ իւրով. որ և յառաջն  
կոչեր կոնքագոս կարդինալ եպիսկոպոս Ապօբի-  
նայ: Սա ինքն լայնախորհուրդ դատաւ յեկեղե-  
ցական իրագործութեան և առաստանիրա ՚ի  
խնամել զաղքատո, մանաւանդ ՚ի ժամանակի  
պակասութեան հացի: Մեծապանծ հռչակի և  
առատաձեռնութիւննորա ՚ի լատերանեան ե-  
կեղեցի: Եթէ չեր կանխեալ մահն վաղաժաման  
ցուցեալ եր արդեօք աշխարհի գործու մեծա-  
մեծու ըստ գերազանց մատացն: Այլ յետ կալոյ  
նորա յիշխանութեան առաքելական դահին  
զամ մի, ամիսս չորս և աւուրս քսանեերիս,

Հաշուպահարեալ ՚ի Սարավինասաց ՚ի մեցին առա պապն  
Եսագինեսս օգնել նոցա. իսի նորա գուեալ ինուակու  
յարդորանաց առ նագաւորու յանձնեաց կդուրծն արբոյն  
Բնեանարդուի յարդոր մապասցանել իշխանաց: Յայն-  
ժամ արժայն գառզլիոյ լաւդալնիս ի. և իայսըն  
կոնըադու բանակ իազմեալ ՚ի նոր խուլակրաց՝ անյամբ  
՛ի մեցին ՚ի Պաղեսպին: Բայց ՚ի նենգութենե Յա-  
նաց ու հանդիպեցան յաջող ելից, և դարձոն յա-  
րն յառագու:

Հքեալ զաշխարհ վերացաւ յերկինս ՚ի չորս նո-  
նայց դեկ յամին 1154 :<sup>1:</sup>

## ՃԿ Թ.

## ԱԴՐԻԱՆՈՍ Դ.

Ա. 8. 1154, և կայսերական գետերին ԱՅ,  
և իմմ. կոհենոսի 12 :

1489. Ադրիանոս աղքաւ անգղիացի յա-  
ռաջնմէ Նիկողայոս ձայնեալ՝ եթող զհայրենիս  
էանց ՚ի գաղղիա և գլխաւորեաց զուսումն իւր  
յԱրկէս : Ուր և կրօնաւորեալ ՚ի վանս օգոս-  
տինեան միանձանց այնչափ ՚ի կատարելութիւն  
վերոանեաց . մինչև կարգեցաւ աբբայ մէնաս-  
տանին : Այլ վան կարեւոր գործոյ վանաց իր-  
րե չոքաւ ՚ի հռովմ , գիտացեալ զգերազանցու-  
թիւն հոգւոյ նորտ Եւգինէոսի պապին՝ կար-  
գեաց զնա կարգինալ և եպիսկոպոս Սաքինայ:  
Ապա առաքեաց զնա նու իրակութեամբ ՚ի Դա-  
նիս և ՚ի Նորվեկիա + ուր գոււթանցն եզկ նա-  
ռու միայն վայելքապէս կատարել զպաշտն իւր,  
այլև զբազումն յանհաւատից խօնարհեցուցա-  
նել ՚ի հաւատաս Քրիստոսի : Սմին իրի յետ մա-  
հուան Անաստասայ պապին խօկ և խօկ ընտրեցաւ  
ընդդէմ յօժարութեան իւրոյ ՚ի քահանայապէ-  
տութիւն Հռովմոյ : Որ իբրև առիւ ծ հզօր հան-  
գիտացաւ ընդդէմ երից մէծազօր թշնամէաց  
Հռովմայեցոց , Գոււլիէլմոսի և Փեղերիկոսի,  
առ ՚ի պաշտպաննել զեկեղեցին Քրիստոսի : Իբ-

1. Բարսն . և Բակ . յամ 1153 . 1154 : Առա-  
ղ ՚ի լուսական առ Անդրադ , աբբայ առ Սաքինա  
Հապ . 2 :

րի զի Հռովմայեցիք այն ինչ հաստատելին զծե-  
յակոյտ իւրեանց ընդ պատրիկին ըստ աղանգոյն  
Եպիսկոպոսի (1484) և անլատղ գահալ պատին վե-  
րաւորեցին զկարդինալն Գերարդոս, և նայայն-  
ժամ սպառնացաւ նոցա ահագին պատիժութա-  
նագրանաց + և արդել ևս Եկեղեցականաց կա-  
տարել զպաշտօնու և զուրբ խորհուրդս՝ ի քա-  
զարին Հռովմայ : Յորմէ ընդուստուցեալ ժողո-  
վրդեան յուն կացին ընդ ուխտին, ցրուեցին  
քարձին զժողով ծերակուաին, և կամակար երդ-  
մամբ ուխտեցին կալ մնալ ընդ հպատակու-  
թեամբ Ազրիանոսի : Եւ այսպէս հազիւ աղա-  
տեցաւ Հռովմէ՝ ի հոգեւոր կապանաց անտի:

Խակ Փեդերիկոս արքայ Գերմանիոյ եկեալ՝ ի  
Հռովմը զառաջինն սկսու ընդ ակամք հայել  
յուխտն ընդ քահանայապետին՝ կամելով ընդ-  
ունել՝ ի նմանէ զպաշտօն սարատելատութեան .  
և պապին շնորհեաց նմա զայն առ ՚ի շահել ըդ-  
բանդադուշեալն . այլ նա ոչ շատ համարեցաւ,  
մինչեւ պատկեցաւ ՚ի նմանէ կայսր Հռովմայ :

Դարձեալ զայլ հակառակութիւն կրեալ Ա-  
զրիանոս պապ ՚ի Գուլիէլմոսէ արքայէն Սիկի-  
լիոյ որդւոյ Ռոմեոի, սախովեցաւ պատերազմաւ-  
նուածել զիս . սակայն անյաջող ելից գիպեալ  
պաշարեցաւ ՚ի Բենեվենտ, և բռնագատեցաւ  
տռնել ընդ նմա հաշտութիւն այսու գտշամբ :  
զի ամենայն իրաւունք Սիկիլիոյ լիցի ՚ի ձեռո  
արքային, և աւանց խնդրոյ նորա մի զնացէ  
անզր նուիրակ պապին : Սորին վասն վերաձայ-  
նեաց զիս պապն՝ թագաւոր կրկին Սիկիլիոյ :

Ծնդ ոյս հաշտութիւն պապին ընդ Գուլիէլ-  
մոսի այնպէս զայրացաւ կայսրն Գերմանիոյ, մին-  
չեւ պատճառահա խնդրել առ ՚ի մարտնչել ընդ-  
գէմ գահին . յորմէ և ծագեցաւ խռովութիւն  
՚ի Գերմանացիս և տեսաց ամս քսանեերկու :

Սակայն մեծ քահանայապեան ոչ ետես զայն , քանզի մերձ 'ի քաղաքն Անագնիա կամսպանիոյ հասեալ նմա հիւ անդութիւն փողացաւի՝ փոխեցաւ յաստեացս 'ի կաղանդս սեպ . յամին 1159 : Զօրոյ զմարմինն բերեալ 'ի չոռվմ ամփոփեցին 'ի առաջար սրբոյն Պետրոսի : Եւ եկացնա յիշխանութեան խրում հալածանօք հանդերձ զամս չորս , ամիսս ութ և աւուրս քսանենինն : Ամենայն ջանք նորս և վաստակք միայն վասն եկեղեցւոյ էին . զի և զազդակիցսիւր եթող անինում և ոչ յաստիճան ինչ պատուոյ բարձրացոյց զնոսա : Խոկ զմայրն թողեալ էր կերակրիւ ծախիւք եկեղեցւոյն կանդուարիոյ <sup>1:</sup>

## ՃՀ

## ԱՆԵՔՍԱՆԴՐԻ Գ

Ա. Տ. 1159 . և կայսերութեան Փետերիսսի Ա 8 ,  
և իմ . կահնենոսի 17 :

1490 . Ազեքսանդր սենացի յառաջագոյն ձայնեալ չոռլանդոս Բաբերոնոս՝ կարդինալ ատենադպիր եկեղեցւոյն չոռվմոյ՝ այր մեծիմաստ և խոհական ընտրեցաւ ակամայ կամօք յաթոռ քահանայապետութեան յեօթն իդոսացն սեպ . և յառաջ քան զօրն երկուաստն կաղ . հոկ . օծմամբ սրբութեան պսակեցաւ պապական թագիւ : Այս մեծապանծ հայրապետ որչափ առաւել վշտակիր եղե յերեսաց հերձա-

1 Բաբերոն . և Բակ . յամն 1154 . թառչմաս . շլ . հին և նոր եկ . վար . հագ . 2 . գիր + 3 : Մասպենագիրն վարսայ սորտ առ Լաբ . հագ . 1 . : Գրաւելելմաս Տիւբիսս . գիր + 18 . գլ . իզ :

սիրաց , այնչափ առաւելք քաջանուն հանդիսացաւ : Նստան հետզհետէ հակառակ նմին չորս գերապապք . Հոկտաւիանոս՝ վոխեալ զանունն 'ի Վիկտոր Ե . Վիգոն՝ 'ի Պապքաղէս Գ . Յովհաննէս՝ 'ի Կեղեսափանոս Գ . , և Լանգոն յիննով կենտիոս Գ . : Երկոքին բանադրեալք 'ի նմանէ շարաչար պատուհասեցան . Երրորդն 'ի զեղը եկեալ կարգեցաւ առաջնորդ Բենեվենտոյ . իսկ չորրորդն ոքսորեցաւ :

Ի նմին ժամանակի Հենրիկոս տրքայ Անդրիոյ և Գեգերիկոս կայսր կատաղեալ այնչափ ընդդէմ զինեցան սրբազան հայրապետին Ազեքսաննդրի՝ յափշտակել կամելով զիրտւունս եկեղեցւոյ , մինչև տեղի ետ նա 'ի Գաղղիա : Ուրանօր մեծարեցաւ յոյժ 'ի ժողովրդականաց և մանաւանդ յարքայէն Լուգովիկոսէ ի : Ընդդէմ Հենրիկոսի ախոյեան ելեալ էր թովմաս արքեպիսկոպոս Կանտուարիոյ , որովեւ տանջեալ 'ի նմանէ նահատակեցաւ առաջի սրբոյ սեղանոյն : Նմին իւի պատճեն սպառնացաւ նմա նզովս բանադրանաց , և զնահատակին կարգեցաց 'ի գասս սրբոց : Յայնժամ արքայն հարեալ 'ի խզձէմատաց՝ ալատուեաց զառորդն , և խոնարհեալ յապաշխարանս դիմեաց առ սրբազանն բեկեալ սրախ . և ընկալաւ զներումն յանցանաց :

Ապա մեծ հայրապետն ժողով արար 'ի Գաղղիա 'ի Տուրոքապտի վասն բարեկարգութեան . յորում ընդ բանիւ արար զգերապապն Վիկտոր : Եւ անախ իբրև գարձ առնէր 'ի Հռովմ . 'ի Տանապարհին այնչափ մեծարեցաւ 'ի ժողովրդէնէն , մինչև նախանձարեկ լեալ Փեգերիկոսի կայսեր՝ զօրու ծանու դիմեաց յիտալիա և յաղարա վարեաց զերեելի քաղաքս և զՄեգիունն : Յայնժամ միացեալ իտալացւոց մանաւանդ Վենեակեցւոց ընդ զօրավարութեամբ

զքսին խւրեանց Ծիանի՝ այնպէս խորտակեցին զլօրս կայսեր, մինչև հազիւ ճողոսվրել նուո՞ի նոցանեւ . այլ որդի խւր Ռդոն անկաւ գերի : Յայնժամ ՚ի միտուեկեալ Փեղերիկոս՝ խոնարհեցաւ առաջի մեծի քահանայաբետին Ազեքսանդրի, և կատարեալ զղջմամբ գիմեաց առնա ՚ի Վենետիկ, ուր յայնժամ ապաստանեալ եր սպասն : Այնինչ մերձեալ Փեղերիկոս՝ ՚ի գուռն մոյր Եկեղեցւոյ սրբոյն Մարկոսի՝ ձգեաց՝ ի բաց զկայսերական քղամիդն յանձնեւ, և տարածեալ զանձն ՚ի վերայ գետնի՝ խորին խոնարհութեամբ համբուրեաց զոտս պապին : Եւ նորս շարժեալ ՚ի գութ հայրական՝ յարոյց զնա արտասուօք և համբուրեաց և օրհնեաց զնա : Եւ մաեալ ՚ի տոճար անգր առաջի սրբոյ մեղանոյն մատոյց հայրապետն զսուրբ պատարագն, և տղաժողով արարեալ հաստատեաց զիսաղապութիւն ՚ի մեջ կայսեր և Վենետիկեցւոց :

Եւ քանից յաւուր համբարձման տեառն եղե հաշտութիւն և կատարած վրդովմանց Եկեղեցւոյ, հաստատեաց սպապին ՚ի նմին աւուր հանգէս գեղեցիկ ՚ի պատիւ վենետիկեան հասարակապետութեան՝ շնորհելով լիակատարօրհնութիւն և ներումն ճշմարիտ զղջմամբ խոստովանողաց : Այնուհետեւ հանգէս արարեալ ՚ի վերայ ծովու ամըստ ամէ ելանեին զարգարուն նաւակօք ՚ի ծովին մեծ . ուր դուքսն ընդ սինկղիտոսաց ՚ի մեծապահն արարովութեան արկանէր մատանի մի՚ի ծով անգր ցուցեալ զինքն ախրող ծռվու իբրև փեսայ : Յիշատակարան այսր մեծապահն գործոյ Ազեքսանդրի պապին արձանագրեցաւ յայնժամ ՚ի Վենետիկ . զոր Պիոս Գրիգոր գրեալ ՚ի Հռովմ կանգնեաց ՚ի Առանկանի : Յայնժամ Ազեքսանդր պապ զրեաց նամակ առարգայն հնդկաց յԱսիա կամ ըստ տմանց յԱփ-

րիկէ . ուր թագաւորէր Յովհաննես քահանայ .  
և յառաջ քան զմեկնիլ 'ի Վենետիոյ հաստա-  
տէաց զամենայն իրաւունս և բարեկարգութիս :  
Դուշակեաց և վասն Յուստինեան ցեղին պան-  
ծալի լինել երեւելի իշխանօք , որպէս եղին . մա-  
նաւ անդ յաւուրս սրբոյն Լաւրենախոսի պատ-  
րիարդին Յուստինեան (1550) :

Յետ այսորիկ չոքաւ քահանայապետն 'ի հը-  
ռովմ . և տեսեալ եթէ զօրանան ազանդք Վալ-  
դուսեանց և Աղբիգեանց 'ի Գաղղիա (842) , գու-  
մարեաց 'ի Լատերանափեղերական ժողով (921) :  
Վճռեաց ևս զի մի' ոք 'ի մետրապօլից կարգես-  
ցէ զոք 'ի կարգս սրբոց բաց 'ի քահանայապե-  
տէն հառվմայ : Հասատատէաց և զկարգս Կար-  
մելիգեան կրօնաւորաց առանձնացելոց 'ի պա-  
զեստինեան լւտոն Կարմելոս : Իսկ Աւլիոնսոսի  
առաջնոյ գքսին Լուսիտանիոյ շահատակելոյ  
ընդգէմ Սարակինոսաց չնորհեաց զանուն թո-  
գաւորի : Այլ իրրե զայսօրինակ առաքինատնայր  
մեծ հայրապետն Աղեքսանդր , եհաս նմա վախ-  
ճան կենաց 'ի քաղաքն Կաստիլանա . և փոխե-  
ցու նոտ անձկալին իւր յերեք կաղանգացն  
սեպ . 1181 , կացեալ յիշխանութեան ամս քսան-  
եմի , ամիսս մետասան և աւուրս քսանե երեք :

1 Բարբն . և Բաէ . յահ . 1159=1181: Անոնի-  
սոս Գաստին . 'ի ժամ . 1178 : Բանդուլիս պիշտի 'ի  
վարս սուրա հագ . 3 . եր . 446 : Բաշիտուս Վի-  
գիլիոս պատմ . Անգլ . գիր + 13 : Անդրեաս Դանեն-  
լոս 'ի ժամ . հագ . 12 :

## ՃՀԱ

ՂԱԽԿԱՌՈՍ Գ

Ա. Տ. 1181, և իսակը բեռն Փետքի մատ Ա 33,  
և Անէտուի իսմ. 2:

1491. Վուկիոս լուգացի յառաջնմէ ձայ-  
նեալ Հումբալդոս՝ ընտրեցաւ քահանայապետ  
յետ Աղեքսանդրի յնստիա ՚ի կազանգս սեպ.  
յամին 1181. և յութ իգոսաց նորին ամսոյ օ-  
ծաւ սպապ: Սա աեսեալ զանմիաբանութիւն  
Հռովմայեցւոց՝ ջանահնար և վե յանկուցանել  
զսիրոս նոցա առ ինքն և անդորր սկահել զհօտ  
իւր. այլ ոչ յաջողեցաւ. վասն որոյ աեղի և տ  
ուր էրն յառաջ: Եւ վերստին գարձեալ նորա  
՚ի Հռովմ՝ զի շահեսցէ զնոսա. հալածեալ ՚ի նո-  
յանէ նստաւ ՚ի Անրոնա քաղաք: Ուր հանգի-  
պեալ նորա կայսեր Փեդերիկոսի միտիթարեցաւ  
յոյժ, և յորդոր մատոյց նմտ ձեռնառւ լինել ա-  
րևելեան քրիստոնէից: Ենդ հասեալ նմա վոխ-  
ճան կենաց՝ փոխեցաւ յասեացս և թաղեցաւ  
՚ի մայր եկեղեցին յութ կազանդացն գեկ. յա-  
մին 1185, յետ կալց ՚ի քահանայապետութեան  
ամս չորս, ամիսս երկուս և աւուրս ութուտասն<sup>1</sup>:  
Երեխին առ մեօք սորա երբեակ կոնդակք: Ի  
վերայ շիրմին գրեցին երկտող տապանագիր,  
որ ցուցանէր զծագումն, զընթացս և զվախճան  
իւր միանդամոյն: Առ սա գրեաց Գրիգոր կա-  
թողիկոս Հայոց թուղթ հպատակութեան, և ըն-

1 Բարձր. և Բարձ. յամ 1181. 1185: Պաղաճ. լուգ.  
ուսու. էկ. գիլ+ 20. գլ. լ՛:

կալաւ՝ ի նմանեւ զպատասխանին հանգերձ ըն-  
ծոյիւք ։

## ՃՀԲ

### ՈՒՐԲԱՆՈՍ Գ

Ա. Տ. 1185. և խայսէրութեան Փերեբիկոսի Ա 37 =  
և խահական Անիելոսի 1.

1492. Ի նմին աւուր, յորում ամփոփեցաւ  
մարմին Պուկիոսի պատվին՝ կտրդինալք միաձայն  
հաւանութեամբ ընտրեցին քահանայապետ ըզ-  
մեծահամբաւ աղքեալիսկոպոսն Սեգիոլանու-  
թամբերասոս Գրեպելոս կարդինալ յեօթն կա-  
զանդացն գեկ. անուանեալ՝ ի թագագլուութեան  
Ռւրբանոս Գ: Ազմուկ Հռովմայ չեւ ևս խաղո-  
զեալ՝ պատճառս ետ պատվին հեռանալ անտի և  
նստել՝ ի Աերոնա: Ռւրանօր հանգիպեալ Փեր-  
գերիկոսի կայսեր հաւանեցոյց զնաբանիւ յետս  
գարձուցանելոց զժառանկութիւն իշխանուհ-  
ւոյն Մաթիզդայ զընծայեալ և կեզեցւոյն Հռով-  
մայ (1484): Սոյնպէս գարձուցանել առ հա-  
սարակութիւնն զիննչս եպիսկոպոսաց վախճանե-  
լոց: Սապէս հատուցանել և զկալուածս վա-  
նաց կուսանաց զյափշտակեալս Երբեմն՝ ի նմա-  
նէ: Կայսրն հնազանդեալ կատարեաց զամենայն  
կամս քահանայապետին. և ժամեաց բառնալ

1 Գրէն սոսորին Կէրուն լամբըրունացին ահանապէս +  
“Ընիալեալ կանոնիսուն սրբոյ զպապուական Պա-  
շաւիսանն և զիսոյըն՝ ի լըսուն պապուոյ իւրոյ՝ գոհա-  
ցաւ զլաւուծոյ. և եպ զնամակ հայրապետին և ըն-  
դիւս կարգոց Եկեղեցոյ յիմ նուապութիւն՝ Աւրգ-  
յանել, զոր աեղաւըջեցի՝ ի հայ բարբառոց: Աւրդուն:  
Պապմ. Հայ. հա. 3. եր. 145:

շիւրմէ զթագ կայսերական և դնել 'ի գլուխ որդւոյն իւրոյ հենրիկոսի : Այլ նա հրաժարեցաւ առնել զայն մինչև իցե նովին հրաժարեալ յայնանեւ : Իսկ Հենրիկոս Բ ալքայ Անդզիոյ իրեւ խնդրեաց 'ի նմանեւ պատկել զմին յորդւոց իւրաց թագաւոր իբերիոյ, առաքեաց առ նա պատկե զայն կատաւ իանոս կարգինալ՝ կատարել զոր խնդրելն : Եւ ինքն յամենայնի վութաջան դրաւ ոչ միայն զեկեղեցականս՝ այլ և զիշխանս և զթագաւորս պահել միաբան 'ի ուր և 'ի խաղաղութեան և զինու որելը նոդդեմ անհաւատից Յետայնորիկ չոքաւ 'ի Վենետիկ տեսանել զիաւախումբն, զոր առաքեր յօդնութիւն արեւ լեան քրիստոնելից 'ի Պաղեստին : Եւ անտի գարձ արարեալ 'ի Փերարտ իրեւ լուաւ զլուր առ ման Երուսաղեմի 'ի սուլդանեն Եղիպատոսի 'ի Սալահադին Յուտիայ 'ի խոր խոցեալ առ յուրաց սրախն հիւանդացաւ և մեռաւ 'ի չորեքտասան կազանդացն նոյ . յամին 1187, կացեալ յիշխանութեան ամ մի, ամիսս տասն և աւուրաքսանեւ հինգ<sup>1</sup> :

1 Բարոն . և Բակ . յամ 1185=1187: Ա-Է-Հ-Հափ . Է :

Զայնու ծամանակաւ լավառ ընէ Երուսաղեմի մայութան . իբրև զի յեպ կոտի իր էպոսի նոպան հեպահետե Բարդին Աւ Բարդին Բ . Փառագոն . Բարդին Գ . Աւելի . Բարդին Բ . և առաջ էտուար նորա Գուահան . որ վասն անմիտքանութեան իշխանաց գիտը աշույժ . մինչև Յուսուս- Ասլահադին արքայ Եգիպտոսութեան հագնութեան հունին Տրագուսոյ էառ պատղեսպին, ԱՅբուսաղեմ և ուշը այս գուահան . գերի կարեալ և պարտայն գուահան : Իսկ պահն ուրբայն Յակոբայ շնորհեաց հայոց ըստ ինդրոց նոյս : Այս գոյց հասեալ յարեանապատ շարժեաց պահութիւն հայ-

## ՃՀԳ

ԳՐԻԳՈՐ Ը

Ա. Տ. 1187. և կայսերութեան Փետէբիսսի Ա. 59.  
և իսահակա Անկ. 3 :

1495. Գրիգոր բենելենացի յառաջնմէ ձայ  
նեալ Ալբերտոս որդի Սարսորիսի Մորեան,  
'ի վազիւ անդրյաջօրդեաց զ՛Ուրբանոս 'ի քա-  
հանայապետութեան 'ի Փերարա : Որ վասնազա-  
տութեան երկրին Պաղեսափնց 'ի ձեռաց բար-  
բարոսաց գրեաց զօրաւոր կոնդակս առ ամենայն  
քրիստոնեայ իշխանս , յորդոր մատուցանելով  
նոցա միաբանել 'ի սէր ազատութեան սուրբ  
Երկրին , և առասաբաշխեր նոցա զօրհնութիւն  
ներողութեան , և պատուեր տայրամենայն քրիս-  
տոնելից պահել զշաբաթական սպահս , միայն  
զշաբաթն լուծանելով : Յետ այսորիկ 'ի Փերա-  
րայէ չոքաւ 'ի Պիզա առ 'ի հասաստել զիսազա-  
ղութիւն 'ի մէջ նոցա և գենուացոց , որք կա-  
րի փարթամայեալ էին ծովային երթեւեկու-  
թեամբ : Զօրայորդորեաց յոյժ , զի միաբան խա-  
ղացեն 'ի վերայ Սալահադինայ արքայի : Անդ  
դիակեալ նմա ցաւ մահաբեր՝ փոխեցաւ յաս-  
տեացո 'ի վեշտասան կաղանդայի յունվ . կա-  
ցեալ 'ի քահանայապետութեան միայն զաւուրս  
յիսունեեօմն ։

Հառնեաւ և պատփառուրս գումարել նոր պօքս իսալ-  
իբաց ընդունէ անհասապից :

1 Պատմ . Հայ . Գիր 5 . գլ . ի : Բարս . և Բակ .  
յամն 1187 :

## ՃՀԴ

## ԿԱԵՄԻՍ Գ

Ա. Տ. 1187. և իսյունքնեան Փետքինսի Ա 39.  
և իստահակայ Անէ. 3:

1494. Կղեմէս հռովմայեցի յառաջագոյն ա-  
նուանեալ Պաւլինոս կարդինալ եպիսկոպոս  
Պրենեստայ՝ յաջորդեաց զԳրիգոր յաթու քա-  
հանայասպետութեան ՚ի չորեքտասան կաղան-  
դացն յունվ. յամին 1187. և տեսեալ նորազադ-  
մուկ շփոթի չռովմայեցւոց՝ տեղի ետ ՚ի Պիզա:  
Անդ զարմանալի հնարագիտութեամբ սանձա-  
հարեաց զավատամբս . և նուաճեալ զամենե-  
սեան ՚ի հնազանդութիւն եկեղեցւոյ՝ վախճան  
ետ հերձուածոյն Ըրնալգոսեանց որ վասն հաս-  
տատելոյ զծերակոյան (1484). ոյր աղագաւ բա-  
զումք ՚ի քահանայատետաց տարագիր եղեն  
՚ի չռովմայ սկսեալ յիննովկենախոսէ Բ. Յետ  
հաստատելոյ զլսալաղութիւնն ասկա հանդերձ  
կարդինալօք եմուտ ՚ի չռովմ ՚ի ցնծութիւն  
ուխտին և համօրէն ժողովրդեան:

Կա ինքն շահեալ զսիրտա Փիլինկոսի ար-  
քային գաղցիոյ, ևս և չակըքարառսի ալքոյին  
Անդլիոյ՝ ետ հաւաքել զօրս նոր խաչակրաց :  
Հասեալ ասկա ՚ի վերայ և բարեպաշա կայսրն  
Փեդերիկոս հարիւր յիսուն հազարօք խաղաց  
յարեւելս նոքօք հանդերձ: Որոց թեմէտ Յոյնք  
ընդ կայսերիւրեանց գարան գործեցին բազաւմ  
անդամ խափանել զընթացս նոցա՝ միանալով  
ընդ այլազգեաց, բայց բանակ Լատինացւոց օրհ-  
նութեամբ մեծի քահանայատեախն զօրտցեալ  
խորտակեաց զզօրութիւնս հակառակուգաց, և

կորուսեալ 'ի նոցանե ոգիս չորս հաղար՝ եհաս  
'ի սահմանս կիլիկիոյ տէրութեան մեծի իշխա-  
նին հայոց Լեւոնի ։ Գրեացանախ կայսրն թուղթ  
առ Լեւոն իշխան հայոց և առ կաթողիկոսն  
դալ ընդ առաջ նորա ։ Գրեաց և պատն թուղթ  
յորդորանաց առ նոսա ։ Սակայն կայսրն մօտ 'ի  
Սելեւկիա իբրև կամեցաւ լուանալ յանցս գե-  
տոյն, առ ծերութեան ոչ կարացեալ ընդ-  
դէմ կալ յորձանացն՝ հեղձաւ ։ և զմարմին նո-  
րա տարեալ թաղեցին յԱնախոք :

Յաջորդեաց զկայսրն անդ յայիժամ կոնրա-  
դոս երկրուդ որդի նորա, և զնա յետ սակա-  
ւուց Լէոբոլտ դուքս Աւատրիոյ Յայնժամ հիմ-  
նեցաւ 'ի Պաղեստին կարգն թեւտոննեան, զոր  
հաստատեաց կղեմէս պատ ։ Խոկ Հենրիկոս  
անդրանիկ որդի կայսեր դոլով 'ի Գերմանիա  
յամու. հօրիւրոյ ըստ կարդադրութեան նորին,  
իբրև լուաւ զաղետալի անցո կայսեր՝ առ աքեաց  
հրեշտակս առ պատին և խնդրեաց 'ի նմանե ըզ-  
թագ կայսերական ։ Եւ նա թէպէտ խոստացաւ,  
այլ զկատարումն եթող յաջորդին. քանզի հա-  
սեալ նմա վախճան կենաց 'ի չորս կաղանդացն

1 Ե 1191 Բաբանեցան թէպանեան ասովէտ ։ 'ի  
գէրմանացի Խաչակիր զօրաց՝ Խունեալ Եղբար գանն  
թէպանեան Աւատրածամօրն Եւստաղն մի ։ Ուսո՞  
ուաշոն եւ ուաշոն լինել + բիստոն իշ և սուրբ եր-  
իշին ։ և հոգագոր աղքատոց և հիւնադաց ։ Աշան  
այսը իւրգի էր սեաւ խուռ 'ի վէրաց արծակի սպիրու-  
էնթակայի ուարգիւտնալնոց ։ 'ի Աշուափիանուէ պապէն ։  
Աւաշու ժամանակաց 'ի զօրանալ Աարակինասաց՝ կար-  
գուշէտ նոցա կունցեալ Մէծ մագիստրոս՝ Եւաւա Եւ-  
բասաղն մէ հանդէր իւրգակացուն ունեաց 'ի Աւա-  
գին, անդի 'ի Բըռուիս և 'ի Գերմանիոն . ուր իսն  
միւնց շայասը :

ասպր. յամին 1191 վախճանեցաւ, կացեալ յիշ-  
խանութեանն ամս երիս, ամիսս երիս և աւուրս  
տասնն ։ ։

1 Բարսն. և Բաբ. յամ 1188=1191: Պատմ.  
Հայ. հագ. 3. Եր. 155. յիշապակի լուսողնն ապ-  
ալին թարգմանեալ 'ի Ասմբը ըստացոյն. «Կղեմէ» ե-  
ալիսիոպս ծառաց ծառացից Աստուծոյ, ապատու-  
իան եղբօր մէր Գրիդորի կամողիսուն ամենայն հայոց՝  
ողջոյն և առասիւլական օրհնութիւն: Խրտուն զոր  
յԱստուծոյ արդար դադասագանն աղիսորհու արևե-  
լից 'ի Ճամանակ մէր ընկալաւ, հաստապամ+ զի ա-  
ռաս-էլ շատ և 'ի սրբի ժոհմ. մէր Յանուր գուշը Երի-  
քին և առնիդիր Հայոցին և չարչարանացն զոր իւրեն:  
Քանիզի ողջորման ամբու Աստուծոյ 'ի հասապ կա-  
մուղին հասպապէալ և, վասն այսորի ու կարես  
հանդուրժէլ, այլ արգասասուծ սփառ զանարդութունիւն  
+ընսպանեից ... Աստուծոյ զորեղ ողջորման ամբու իս-  
րով լուսաւորէալ է, զի անձամբ + և Ճաղալը արդիւ-  
սրդ յաշիսը հու արեւէլից 'ի ծեւ հանդին, 'ի սուրբ  
գեղեցին աղապանին յօժարեսցիս գնալ. և որպէս  
կոպարի կամք + և Աստուծով այս խորհանրդու յա-  
ջունի. Քութացից գուշը + մէկ յացունէլ: Եւ այս  
յացունի լիցի + էղ, զի թէուէպ և 'ի մէր մարտնուկան  
ալաց պէսութեան բացակայ և, հոգոյ ալօ+ հանա-  
պակ զորեղ պէսունէմի, և ողջուգուրշէմի սրբով և սի-  
րով. և ալիսիդրուածու + զոր իւրիս, հէլպութէ ամբ  
իսպարէմի: Գրեցաւ 'ի Հունիշ 'ի Լադրանն նախուան  
զանը իսպանդացն յանիս ամսոց և ուշիցը ամս և  
արիսիոպանաթեան մէրոց ։ ։ այս և յամի պէտուն 1189.  
Հայ. 29:

## ՃՀԵ

## ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Գ

Ա. Տ. 1191, և կայսերութեան հետիւսի օ 1,  
և խահակայ Անէ 7:

1495. Կեղեստիանոս հռովմայեցի ամաց ու թ-  
առնեհնգից ընտրեցաւ յաթոռ քահանայապե-  
տութեան հռովմայերիս կաղանդացն ապրիլի ,  
որ յաւաղագոյն Յակինթոս ձայներ . և յութ-  
ուատան կաղանդաց մայիսի յամին 1191 ձեռ-  
նագրեցաւ պատգ հանդիսապես յաւուր զատկի:  
Խոկ'ի հետեւեալ աւուր զարբայն գերմանիոյ  
հենրիկոս օ օծ կայսր հռովմայ : Այնչափ էր  
սորա խնամք և ջանք վասն ազատութեան Երու-  
սաղէմի , մինչեւ ընդ բանիւ արար զարբայն Անգ-  
ղեոյ զՀռիքարտոս , որ թաղեալ զայն գործ դի-  
մեալ էր'ի կիպրոս , և գնոց տուեալ զայն գուե-  
տոնի արքային Երուսաղէմի : Այլ'ի գարձին  
պատուհասեալ անկաւ ալէկոծութեամք'ի ծով-  
եղերս Վենետիկոյ . և 'ի փախչելն յանձանօմա՝  
կալաւ զնա Լոռիոլտ գուքս և առոքեաց առ-  
կայսրն հենրիկոս . և նա արգել զնա 'ի բանտի  
ամիսս ութուատան . և առեալ'ի նմանէ Երկե-  
րիւր հաղար գահեկան արծաթի՝ արձակեաց :

Իբրիւ լուաւ կեղեստիանոս՝ թէ Սալահադին  
պակասեալ'ի կենաց , որդիք նորա զաղմուկ  
շփոթի 'ի մէջ իւրեանց յարաւցեալ են , ժամ'  
բարեպատէհ համարեցաւ թափել'ի ձեռաց  
նոցա զՊաղեատին : Յորմէ շարժեալ կայսեր զօ-  
րու ծանօւ էջ յԽոտալիս , և թուէր թէ 'ի նոյն  
վախճան ուղղեացէ զընթացս : Բայց իբրիւ լուաւ  
զմահ ալքային Սիկիլիոյ Տանգրէտի և ՌոՃելի

Ժառանդի նորս . Էտեց ՚ի Նէապօլիս և ՚ի Սիկիւլիա . ըստ որում կա, որուհին Կոստանդիա դոլով քոյր արքային՝ ժառանդ էր Սիկիլիոյ : Սակայն Կորմանից ընարեալ զայլ թագաւոր . և Սալերնացւոց մասնեալ զկայօրուհին՝ որոց հաւատացեալ էր զնա կայսրն , այնչափ ծանրացատումն արարին զշենրիկոս , մինչև առ գտանութեան սրտին իւրոյ զբաղումն ՚ի նոցանէ դառն առն ջանօք զբաւեաց ՚ի կենաց : Այլ իբրև խրառեալ ՚ի պատէն անլսող եղեւ նմա , անկաւ ընդ նզովիւք և ոպատուհասեալ մեռաւ , թովեալ զորդի մի եօմն ամաց՝ որ յաջորդեաց զնա զկնի Ոդոնի Դ . անուամբ Փեդերիկոս Բ : Սմա ետ պապն զՍիկիլիա ՚ի ժառանդութիւն ընդ պայմանաւ հատուցանելոյ տուրս եկեղեցւոյն Հռովմայ :

Կեղեստիանոս յառաջ քան զմոհ կայսեր ընկալաւ թուղթ ՚ի Լեւոնէ Հայոց իշխանէ ընդ գեսպանաց , զորս առաքեաց առ կայսրն . և առեալ ՚ի նմանէ Հաւանութիւն վասն օծութեան Լեւոնի ՚ի թագաւոր՝ ետ կազմել փառաւոր թագ ազգաւուական . և օրհնեալ զայն յանձնեաց ՚ի ձեռս կոնքագայ ազգեալիսկոսի Մոգունակոյ երեելի կարգինալին . որում ետ և կայսրն ըլդրոշակ տոիւծանշան վասն Լեւոնի : Հասեալ ազգեալիսկոսամին ՚ի Կիլիկիա պատուասիրեցաւ յոյժ ՚ի Լեւոնէ և ՚ի կաթողիկոսէն Գրիգորէ : Եւ ժողովեալ եսկսկոպոսաց և իշխանաց ՚ի քաղաքն Տարսոն յեկեղեցւոջ օրբոյն Սովիայ , մեծաշուք փառօք էօծ կաթողիկոսն զԼեւոն թագաւոր ՚ի վերայ ամենայն Հայոց ՚ի 1198 :

Խոկ Կեղեստիանոս պապ յետ հաստատելոյ զբաղում կանոնս վասն բարեկարգութեան եկեղեցւոյ , և վասն մանկանց նուիրելոց ՚ի ծնողաց ՚ի մենաստանս՝ զի յարբունս հասակի ազատ լիցին մեկնել անտի կամ մնալ անդ ըստ յօժա-

բութեան իւրեանց, իրբու ետես եթէ մելձենայ  
առ վախճան կենաց՝ կամեցաւ հրաժարել ՚ի  
քահանայապետութենէ, եթէ ընարեսցեն ՚ի  
տեղի իւր քահանայապետ զՅովհաննէս կար-  
դինալ: Բայց կարդինալք ոչ հաւանեցան ընդ  
հրաժարելնորա յիշխանութենէ: Եւ ինքնյետ  
սակաւուց փոխեցաւ առ տէր ՚ի վեց իգոսացն  
յունվ. յամին 1198, կառավարեալ զեկեզեցին  
առաքելականնախանձու ամս վեց, ամլաս և աւ-  
ուրս ինն: Կան սորա եօթնեւտասն կոնդակք<sup>1</sup>:

## ՃՀԶ

## ԻՆՇՈՎԿԵՆՏԻՌՍ Դ:

Ա. Տ. 1198 ... և կայսերութեան Առեւոյ Անիել. 4:

1496. Իննովկենտիոս անագնիացի որդի Տրան-  
սիմոնափի կոմսին Սինիայ յառաջագոյն ձայնեալ  
Լոթարիոս սարկաւագ՝ այր մեծիմաստ և քաջ-  
ուս յաստուածաբանութեան և յիրաւագիտու-  
թեան, ՚ի նմին աւուր փոխման կեղեստիանոսի  
՚ի հաւանութենէ ամենեցուն ընտրի յաջորդ նո-  
րա ամաց երեսունեւեօթանց. թէպէտե հրաժա-  
րերնա և լայր՝ այլ վայրապար: Խակ յութ կազ.  
մարտի յամին 1198 օծեալ՝ ՚ի քահանայապետ,  
անդէն ձեռնամուխ լինի յիրս մեծամեծս և հիա-  
նալիս ՚ի շնութիւն եկեզեցւոյ, տարածեալ  
զիսնամբիւր հովուտապետական առ հեռաւորս և  
առ մերձաւորս:

Ի յաջորդ ամի ՚ի գառնալ եպիսկոպոսին Առ-

1. Բարոն. և Բակ. յամին 1191=1198: Առ-  
Աշետ. Նապ. պապ. Եկ. Պար Ճա. ՃԷ. ԳՀ. Բ: Պապ. Հայ. Հոգ. Գ. Գիր. 5. ԳՀ. ԻԲ:

գունախոյ՝ ի չոռվմ (1495) Լեւոն թագաւոր և  
Գրիգոր կաթողիկոս Հայոց գրեցին առ նա  
թուղթ հպատակութեան. և նա գրեաց զպա-  
տասխանի՝ օւհենը լով և հաստատելով զթագաւո-  
րութիւն Լեւոնի. Դարձեալ առաքեաց կաթողի-  
կոսն թուղթ առ պապի խնդրելով՝ ի նմանէ առ-  
աքել ինքեան զմատանի և զվերարկու օրհ-  
նութեան, և զներովութիւն խաչակիր զինուու-  
րոց: Ըստ նմին օրինակի խնդրեաց՝ ի նմանէ և Լե-  
ւոն արքայ ունել զիշան սրբոյն Պետրոսի. և Ին-  
նովկենտիոս վազվազակի առաքեաց զինդրեալուն  
առ նոսա՝ ի ձեռն կարգինալոց իւրոց Սովորես-  
տեայ և Պետրոսի:

Այնչափ էր սորա առաքելական նախանձ՝ ի  
պաշտպանել զեկեղեցական իրաւունս, մինչե-  
հաստատութեամբ ընդդեմ կացեալ կայսերաց  
և թագաւորաց արեման այց՝ ազատ կացոյց զե-  
կեղեցիս: Մերժեալ զմիաբանութիւն ծերակու-  
տին և քաղաքապեաին Հռովմայ՝ արկ զժողո-  
վուրգն բոլորովին ընդ իշխանութեամբ եկեղե-  
ցւոյ: Ադոն կայսր եկեալ զօրույ խաչիս՝ կամեր  
անիրաւութեամբ յափշտակել զաւղիս ան-  
կեալս ընդ իշխանութեամբ նախորդին, մեր-  
ժեաց և էարկ ընդ բանադրանօք. և անարդեալ  
նորա յիշխանաց՝ չոքաւ՝ ի Սաքտնիա և անդ-  
վճարեաց յաւագին զկեանս իւր: Խակ զՎոստան-  
գիս կայսրուհի և զորդին իւր զՓեդերիկոս հա-  
տասեաց ժառանգ Սիկիլիոյ: Խափանեաց նա և  
զգքառութիւն Ապուղիայ և զիշխանութիւն Կա-  
պուայ, զոր Գուլիելմոս Բ. յափշտակեալ էր  
յԱզրիանոսէ Դ: Խակ զկզզին Սալոդենիս ոնդ-  
րէն գարձոյց ընդ իշխանութեամբ Հռովմայ: Զհակառակութիւն Փիլիպպոսի և Ադոնի գլք-  
սին Սաքտնիոյ՝ որ յաղադո կայսերութեան,  
գադարեցոյց, հասաւակեալ զՓիլիպպոսս յաջորդ-

չենրիկոսի, և զԱղոնց յաջորդ Փիլիպոսի : Ած  
ի վերայ պատիմ պատուհանի որոց կորզեալէին  
զգաւառս Հռովմայ : Իսկ զԳալօիլան Գ. կա-  
յոյց թագաւոր ՚ի վերայ Բուլղարաց և Վալա-  
քաց, առաքեալ առ նա թագ և գաւազան և իշ-  
խանութիւն հաստանելոյ զրամս : Դքսին Բոյեմիոյ  
յաւել տալ և զախազս թագաւորի : Թագ կա-  
պեաց ՚ի Հռովմ՝ ի գլուխ Պետրոսի արքային Արտ-  
դոնիայ, որ ՚ի շնորհակալութիւն զտէրութիւն  
իւր կացոյց հարկատու Եկեղեցւոյն Հռովմայ :  
Մերժեաց զՅովհաննէս արքայ Անդղեոյ սակո կո-  
ղսպաելոյ զեկեղեցին անդղիական : Հաստատեաց  
զկաննս և զկարդս կրօնի սրբոյն Ֆրանչիսկոսի  
աստիզացւոյ . զօրացոյց և զսուրբն Դոմինիկոս :  
Կարդեացքնիչս ուղղափառ հաւասոյ ընդդեմ  
Ազրիդեանց (844) : Ետ հաւասարիմ նօտարաց  
իւրոց և գպրապեաց քաղել՝ ի տոմսակի զամե-  
նայն վՃիւռ և կոնդակս հրասարակեալս մինչեւ  
ցերկստասան տմ իշխանութեան իւրոյ ՚ի պետս  
ասդա Ժամանակի : Յորդորիչ եղեւ իշխանաց հաս-  
տառել խաչակիր նոր զինուորս ընդդեմ անհա-  
ւասից : Ընդ այն ժամանակս Ալեքսորդի Խաչա-  
կայ կայսեր արեւելից փախուցեալ ՚ի ձեռաց հօր-  
եղբօր իւրոյ անկառ առ քահանայտպեան Հռով-  
մայ . և նա յանձն արար զնա ՚ի ձեռս խաչակիր  
զօրաց Գաղղիացւոց, Վենետիկեցւոց և այլոց :  
Որոց հասեալ ՚ի կոստանդինուպոլիս եղին զԱ-  
լեքս կայսր ընդ հօր իւրոյ կուրացելոյ յեղբօրէ  
իւրմէ : Յետ մեկնելոյ նոցա անտի իբրև Յոյնք  
ապստամբեցան՝ Լատինք գարձ արարեալ անդր՝  
եղին կայսր յազգէ Լատինացւոց զԲաղդավինոս  
կամ Փլանտարիոյ, և պատրիարք զԹովքաս Մա-  
րտանոս վենետիկեցի <sup>1</sup> :

1 Ի կոստանդինոպոլիս հետպհնտն նստան հինգ

Յետ այնորիկ խնամ կալեալ իննովկենախոս  
բարեկարգել զընդհանուր եկեղեցին . գումա-  
րեաց 'ի Լատերան տիեզերական ժողով յամին  
1215, ուր կային և արեւելքան եպիսկոպոսունք,  
վասն ազատութեան սուրբ երկրին, և ընդգեմ  
մոլորութեանց Յովակիմայ աբբայի և Աղմարի-  
կոսի (922) : Արդել զբժիշկս չգարմանել զհիւ-  
անդս, եթէ ոչ յետ երից աւուրց ախատաժեաք  
մաքրեցեն զիսիզձ մաաց իւրեանց խորհրդական  
խոստվանութեամբ : Գլխահար եղեւ Աղբի-  
կեանց 'ի Գաղղիա, և արդել զընթացս Սարակի-  
նոսաց 'ի Սպանիա : Առ 'ի հաշուցուցանել զՊի-  
ղացիս ընդ Գենուացւոց և ատկս առաքելս վնո-  
սա 'ի Պաղեստին, ել 'ի Ճանապարհ գնալ անդ-  
այլ 'ի Բերուղիա հասեալ նմա ախտ մահաբեր՝  
փոխեցաւ առ աէր յեօթնեատան կաղանդայն օ-  
գոստ . յամին 1216, կացեալ յառաջնորդու-  
թեան եկեղեցւոյ ամս ու թուատան, ամիսս վեց  
և աւուրս ինն : Բազում են սորա իմաստալց  
կոնդակքեզօրաւոր վճիռք, և զանազան դրուածք  
բարեպտշտականիք . ևս և երեք գիրք յաղադս  
արհամարհութեան աշխարհի : Սովորաբար սմա  
ընծային երգքն՝ Եկ սուրբ հոգի . Կայր առ խա-  
չին . նա և ազօթք ինչ :

կայսեր 'ի Լատինացւոց ամս ցիստենիուլ մինչև 'ի  
վէրսունին նսպել անդ յոյն կայսերաց : Յասուրս ժամա-  
նակաց սոցա հասպատիշտաւ 'ի Տրապիզոն կայսերա-  
նիւն Յանաց, և գուշեաց մինչև ցասուրս Առաւտան Ա-  
հե հմետի Բ:

1 Բարսն . և Բահի . յամ 1198 : Հասայնաւու-  
1198=1216 : Լամբելապոս յշ . ուսպ . նիւ . 110 :  
Պատ . Հայ . հատ . 3 . Եր . 170 :

ԴԵՊՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ ԴԱՄՈՒՆ

Ե. Տ.

1100. Կոնդոսպրէ կամ կոտիվրետոս Ա թա-  
գաւորէ յԵրուսաղէմ:
1105. Մահ Գրիգորի Վկայասիրին:
1111. Մահ Ազիրատայ հօր Ընորհալւոյն:
1113. Գրիգոր Գ պահլաւունի նստի կաթողի-  
կոս յետ Բարսղի:
1115. Դաւիթ Ա կաթողիկոս նստի յԱզթա-  
մար: Եւ Վլատիմիր Բ տիրէ Մոսկո-  
վաց:
1137. Ալփիոնսոս առաջին պատկաւոր թագաւոր  
Փորդուգեղից:
1140. Ռոմեո կանգնէ զթագաւորութիւննէ-  
ապօլայ և Սիկիլիոյ:
1141. Գրիգոր կաթողիկոս գնայ 'ի ժողով Ան-  
տիոքայ և Երուսաղէմի:
1147. Աթոս կաթողիկոսութեան փոխի 'ի  
Հռոմելայ:
1153. Ծննունդ Լամբրոնացւոյն:
1166. Կերսէս Ընորհալի կաթողիկոս կարդի-  
յետ վախճանի եղբօրին:
1168. Դարձ Արևորդեաց:
1175. Գրիգոր Դ Տղայ յաջորդէ զԸնորհալին:
1174. Գեմեար պայտապատէ 'ի Մոսկովս:
1176. Կերսէս լամբրոնացի ձեռնադրի եպիս-  
կոպոս:
1180. Բարսեղ անեցի լինի ինքնագլուխ իրը  
կաթողիկոս:
1186. Լեւոն շինէ զՍիտ քաղաք:
1187. Առումն Երուսաղէմի 'ի Սալտհագինայ:
1189. Լատինք վերստին դիմեն յարեւելս:

1191. Գուիտոնն Ա թագաւոր կիալբոսի :  
 1193. Գրիգոր Ե գահավեժ նոտի կաթողիկոս:  
 1195. Գրիգոր Զ Ապիրատ յաջորդէ զԳահա-  
       վեժն :
1198. Սկիզբն թագաւորութեան Ռուբինեանց:
1199. Վախճան Լամբրոնտցւոյն :
- Զայնու Ժամանակաւ յետ զօրանալց Ռու-  
 բինեանց թորոս Ա իշխան պայտազատէ ՚ի Կիլի-  
 կիա զինի կոստանդեայ . զոր յաջորդէ Լեռն  
 Ա , որ յետ հնգետոսանն ամաց ըմբոնի ՚ի Կոյ-  
 սերէն Յունաց : Յետ նորա պայտազատէ թորոս  
 Բ , որ յաղթէ Յունաց : Ապա տիրէ Թուլմաս .  
 ապա Մլեհ . ապա Ռուբէն Բ . յետ նորա Լե-  
 ռոն Բ . որոյ փառաւորեալ քաջութեամբ և ի-  
 մաստութեամբ պատկի թագաւոր յամին 1198:

## ԵՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐ

## ՃՀԵ

## ՈՆՈՐԻՌՍ Գ

Ա. Տ. 1216. և կայսերաբնեան ԱԴՅԱՆԻ Դ. 8,  
և ՀԵՆՐԻԿՈՆԻ 11:

1497. Ուսուռոս հռովմայեցի յառաջի կո-  
չեցեալ գենդիոս Սավէլլեան՝ այլ որբակաց և  
իմաստուն՝ ընտրեցաւ քահանայապետ՝ ի Բե-  
րուղիա՝ ի հնդեասասան կազանդացն օդոս. յամին  
1216. և յինն կազանդացն ձեռնադրեցաւ պատ-  
իսկ աւուրբ յառաջ քան զկազանդս սեպաեմ-  
բերի եկաւորեալ՝ ի Հռովմ՝ Ելլոց ցնծութեամբ  
զքազաքն ողջոյն, և զքազաքացիո համանդա-  
մայն: Զառաջինն ձեռնաման խեղե հաստատել  
զկարդս կրօնաւորաց, մանաւանդ զարբոյն Դոմի-  
նիկոսի, որոյ խորհրդով կարգեաց զպաշտո-  
նեայս սրբազան վարդապետութեան, նշանակեալ  
զպերճախօս գիտնականս քարոզել՝ ի հրապա-  
րակի ըստ պիտոյից ժամանակին, կարգեալ և  
զեոյն սուրբ մեկնել զթուզթուզ Պօղոսի՝ ի մեջբազ-  
մութեան հաւատացելոց: Առաստապես բաշխեր  
զօրհնութիւն ներոզութեան՝ ի հանդիսաւոր  
աւուրս, և անպակաս խնամեր զհօտ իւր: Արկ  
ընդ ծանր պատժով նզովից զորս յանդգնին  
հարստահարել զկարդինալս :

Յէտ մահուան Հենրիկոսի լատին կայսեր  
կոստանդինուսպօլսոյ փեսայ Բաղդովինոսի Պետ-  
րոս կոմս եկն ընդ ամուսնոյն իւրոյ՝ ի Հռովմ  
աւնուլ՝ ի ձեռաց Ոնորիոսի պապին զթագ ա-

րեելեան կայսերութեան : Եւ պապն օծեալ զնտ կայսր 'ի տաճարի սրբոյն Լաւրենտիոսի՝ արքակեաց 'ի Կոստանդինուալոլիս հանդերձ կոնդակու :

Բարենախամանձ գտաւ հաւաքել զօրս խաչակրաց և ընդ գեսականաց իւրոց առաքել 'ի Պտղեստին , գրեալ նամակ և առ կաթոլիկօսն Հայոց Յովհաննէս՝ զօրացուցանել զլատինս 'ի ձեռն արքային Լեւոնի : Խակ ինքն բոկոտն յաճախեալ 'ի տաճարս սրբոյն Պետրոսի և Պօղոսի անդուլ պաղատէր վասն ազտառութեան սուրբ Երկրին , և վասն պայծառութեան ուղղափառ հաւատոյ 'ի խաղաղութեան :

Օրինագրեաց , զի եթէ ծնունդ փրկչէնտ գիպեսցի յաւուր ուրբաթու և յայլաւուրս պահոց , լուծցի մսով 'ի պատիւ մեծի տօնախմբութեանն : Այլ եթէ ոք առ կրօնասիրութեան պահեսցէ . մի ոք նմա մեղադիր գտցի :

Լուեալ մեծի քահանայապետին եթէ ոմանք յԱզբիկեանց 'ի վերջին ստհմանս բուլղարաց և Դաղմատիոյ հաստատեալ իցեն զոմն հակապապ Բարդողոմէոս անուն՝ մերժեաց նզովիւք : Բզմանն իղղւոյն Կորսիկայ շնորհեաց Գենուայւոց գաշամբ հաստուցանելոյ նոցա ամը ըստ ամէ եկեղեցւոյն չռովմայ ունկի մի ոսկւոյ : Խակ զորդի չենրիկոսի զՓեդերիկոս Բ (1495) պերճացոյց կայսերական զարդուք 'ի խոստանալ նորա յետս գարձուցանել զկալուտծո Մաթիղդայ ընծայեալ եկեղեցւոյն չռովմայ (1480) :

Պատուէր ետ քաղել և 'ի մի հաւաքել զիսնդակս և զվճիռս . կարգեաց վասն այսր զԻանդուետոս նախասարկաւագ առ . 'ի զգուշաւոր ընտրութեամբ ժողովել զնամակս 'ի դիւանաց և յատենից : Գրեաց նա ինքն զանազան գիրս պիտանիս և կանանականս : Եւ սյապէս յետզե-

կավարելոյ զեկեղեցին խմաստութեամբ և սրբութեամբ ամս տասն և ամիսս ութե , ինոխեցաւ առակը ՚ի հնդեատասնե կաղանդացն առկր . յամին  
1227<sup>1:</sup>

## ՃՀԸ

ԳՐԻԳՈՐ Թ.

Ա . Տ . 1227 , և կայսերական Փետքի իսուի Բ . 8 ,  
և Հռոմէրպոսի 7 :

1498 . Յառաջին աւորյետ մահուան Ո՞նորիոսի Գ . Ուզովնոս կարդինալ եպիսկոպոս Ուտիոյ որդի կոմին Սինիայ յազգակեցութենէ իննովկենտիոսի Գ . ընտրեցաւ պատ , և ՚ի թագագրութեան անուանեցաւ Գրիգոր Թ : Յառաջքան զամենայն հոգատար եղեւ վասն ազատութեան Երուսաղէմի . որոյ աղագաւ յերկոստասան կաղանդաց ապօնիլի պսակեաց կայսր ղփեղերիկոս Բ , առեալ ՚ի նմանէ զուխտ և զերդումն զնալոյ ՚ի պատերազմ ընդդեմ անհաւատից : Բայց նորա անցեալ ընդ Ասիտ՝ անարի գտեալ դաշնակցեցաւ ընդ սուլդանին , շատ համարեալ ունելմիայն ՚ի նմանէ զախտզոս թագաւորի Երուսաղէմի : Ծնդ այս գործ կարի իմն վշտացեալ մեծի հայրապետին Գրիգորի՝ անէծ զկայսրին . և զթագն կայսերական կամեցաւ տալ Հռոբերտոսի եղբօր սրբոյն Լուգովիկոսի արքայի : Այլ նորա հրաժարեալ չէառ յանձն ասելով , թէ շատ է ինձ լինել եղբայր թագաւորի :

1 Հռոբերտ . յան 1216 : Աբոնդանէսս յան 1216 : Բարիսինս . ՚ի պատմութեան Անդր . առաջայնալ . 1223 : Առ Բալուսիսի Գիւ + 4 : Պատմայ . Գիւ + 5 . Գլ . Իւ :

Յետ այսորիկ արար և ժողովս՝ ի Հռովմակս  
ազատութեան Պազեստինոյ . ուր դասապար-  
աեաց զամենայն հերեաիկոս թշնամիս եկեղե-  
ցական ազատութեան : Ընդ այն ժամանակս աի-  
րեալ էին յիստավա անմիաբանութիւնն և ընտառ-  
բեր հակառակութիւննք՝ ի մեջ ամենայն իշխա-  
նաց , մինչև շարժեալ վերին բարկութեան՝ պա-  
տուհասակոծ առներ զնոսա ժանասախտիւ :  
Պապն էջ առ նոսա , և ելի հնարս գտեալ հաշ-  
տեցց զամենեսեան իմաստութեամբ : Ոչ սա-  
կաւ փութաջան եղե և յայլ կարեռիս . քանիզ  
՚ի ձեռն սրբոյն Հռայմունդոսի Պէնափուտի ՚ի  
մի հաւաքեալ զամենայն վճիռս և զկանոնս նա-  
խորդաց իւրոց յամին 1254 հբատարակեաց  
հնդկամատեան կանոնագիրս , ՚ի վար արկանել  
յընդհանուր եկեղեցւոջ իբրև անմոլար ուղե-  
ցոյցս . և արդել զի մի ոք ինքնահնար զայնօրի-  
նակ գործ յանդգնեսցի ՚ի գործ դնել արտաքոյ  
իշխանութեան եկեղեցւոյ :

Գրեաց կօնդակ օրհնութեան առ Հայս . և  
ըստ խնդրոյ Հեթմոյ թագաւորին և Զապէլ  
թագուհւոյն հաստատեաց զհինաւանդութիւնս  
Հայոց ըստ որում ընկալեալ ՚ի սուրբ Լուսաւոր-  
չէ . ետ և ներովութեան օրհութիւն վասն ան-  
կելոց ՚ի պատերազմին ընդդէմ անհաւափց :  
Գրեաց առ պապն և կոստանդին կաթողիկոս  
ցուցեալ նմա զհնազանդութիւնն զհպատակու-  
թիւն : Խակ նա յլեաց առ նա թագ և մատանի  
վերարկու և պատմուժան հայրապետական հան-  
գերձ թզմով օրհնութեան :

Սահմանեաց և երդո ինչ յեկեղեցական  
պաշտամունս լատինացւոց , և ազօթս : Ծնոր.  
հեաց Գոմինիկեան վարդապետաց վիրաւունս  
խոստվանահայրութեան և որբաքննութեան :  
Կարգեաց ՚ի դասս սրբոց զառւրբն Ֆրանչւկոս

ասսիվացի, զառւրբն Դոմինիկոս և զառւրբն Անտոն պատաւիսնացի զմառաւորեալն հրաշագործութեամբ :

Մեծ եղեն ջանք նորա և վասն աղաստ պահելոյ զեկեզեցական յիշխանաւորաց : Եւ իրուշուտւ զգերութիւն և զկոտորած նաւախմբին գենուացւոց՝ կարելէր խոցեալի ցաւոց սրտին՝ լի աւուրբք փոխեցաւ առ տէր յերկոտասասն կաղանդացն սեպ . յամին 1241, կացեալ յիշխանութեան ամս չորեքասասն, ամիսս հինգ և առուրս երկու <sup>1:</sup>

## ՃՆԹ

### ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Դ

Ա. Տ. 1241, և կայսերութեան Փետերի իսունի Բ. 22,  
և բաղդավինոսի Բ. 15 :

1499. Կեղեատիանոս մեդիոլանեցի յառաջ ձայնեալ կավիրխոսոս որդի Յովհաննու կաստիլիոնի և կասանդրեայ քեռ Ռւրբանոսի պապին այր ականաւոր՝ ընարեցաւ քահանայտպետ յառաքելական գահի տասն կաղանդացն հոկ . յամին 1241 : Այլ չե ևս ձեռնադրեալ՝ յետեօթնեւտասն աւուրց յութ իդոսաց նորին ամսոց փոխեցաւ յաստեացս . և չեհաս նմտ ձեռնարկելի մեծամեծս ըստ լայնախորհուրդ հանձնարոյն, որպես երկերին . վասն որոյ և սդացին

1 Համայնալ . յամն 1227 = 1241 : Յովհանն անտապաք . ի վարս սրբոյն թեռն . գիր + 2 : Դրս-ըանդուս . գիր + 4 . բան իբ : Արեւադաս Վեհոն գիր + 5 . շաբ + վարս-ց գլւ . մէ : Մատեն . վարս-ց սորտ հապ . 3 : Առ Լոբ . հապ . 11 . եր . 335 : Պատմ . Հայ . գիր + 5 . գլւ . 1 :

զեա մեծապես : Առ որով Փեդերիկոս Բ. բերեալ  
՚ի կատաղութիւն՝ արգել. ՚ի կալանս զմեծ մասն  
կարգինալաց . նմին իրի յապաղեաց ընտրութիւն  
նոր պատվին . մինչեւ ապա սուրբն Առգովիկոս  
արքայ Գաղղիոյ միջնորդ լեալ ազատ զնոսա կա.  
բոյց :

## ՃԶ

## ԽՍՌՎԿԵՆՏՈՍ Դ

Ա. Տ. 1243, և կայսերութեան Փետերինուի Բ. 24:  
և բազուկինուի Բ. 15 :

1500. Զկնի փոխման կեզեստիանոսի մնաց  
դահն առաքելական առանց գլխոյ ամիսս քսան  
՚ի պատճառս կալանաւորութեան կարգինալաց  
՚ի կայսերէ : Եւ իրքեւ զերծան , միտքանու.  
թեամբ ընարեցին քահանայապետ զԱլինիքաղ.  
դոս ֆղիսկոս կարգինալ գենուացի յԱնագնիա  
յութ կուզանգացն յուլ. յամին 1243. որ անուա.  
նեցաւ իննովկենախոս Դ : Արում լեալ ծանօթ  
Փեդերիկոս կայսր խնդակից եղե. ՚ի ձեռն պատ.  
գամաւորաց իւրոց՝ ցուցեալ զինքն բարեխնամ  
եկեզցւոյն Հռովմայ : Իննովկենախոս որ ցան.  
կայր յինքն յանկուցանել զկայսրն , առաքեաց  
առ նո հրեշտակո խաղաղութեան՝ հաստա.  
տել զմիսս նորա ՚ի լաւութիւն : Եւ ոչ այս  
չափսմիայն , այլև պասկն ինքնին չոքաւ ՚ի կաստիլ  
լանա , զի յանցանել անտի կայսեր խօսակից լի.  
ցի նմա , և շահեացի զեա : Սակայն լուեալ թէ  
նորա դարան գործեալ է նմա ՚ի ձեռս արկանել  
զեա . պատրաստեցաւ ուզդել զընթացս ընդ  
ծով ՚ի Գաղղիա :

1 Հռովմայ . յամ. 1241 : Աբով. 15. 18:

կոստանդին կաթողիկոս Հայոց գլեաց առ  
իննովկենախոս թուղթ շնորհակալութեան առկո  
ընկալեալ ընծայիցն ՚ի Գրիգորէ թ. (1498).  
ինգրէր ևս ներուղամիտ լինել առ կայսրն Ռում  
գրեաց և նա նամակ պատասխանւոյ՝ յորդորէ.  
լով կատարել զինորհուրդ օծման հիւանդաց ։  
Իրբե եհաս պապն ՚ի Գաղղիա, գումարեաց  
զընդհանուր ժողով՝ ՚ի Լուգդոն վասն բարեկար  
գութեան եկեղեցականաց, վասն խաղաղու  
թեան առաքելական գահին և վասն իրաց իրաց  
ինչ (925)։ Արդել, զի մի Հրեայք ծառայե  
ցուցեն զքրիստոնեայս ՚ի գործսիւրեանց Հաս  
տառեաց զիրաւուն շնորհեալս յԱղբանուէ Բ  
և ՚ի Յովհաննեէ Ը վարելոյ յաստուածային պաշ  
տամունս ՚ի լեզու Դաղմատացւոց (1428)։ Պա  
տուէր եհան զի մի քահանայք աւելի քան զա  
ւուրա հնդեասասան պահեսցեն զսուրբ հաղոր  
գութիւնն, և մի յառաջ քան զկատարել զա  
ռաւոտեան ժամերգութիւնն պաշտեսցեն զինոր  
հուրդ պատարագի։ Ուրանօր հանդիսական ծի  
սիւ օրհնեաց զոսկի վարդն. զի վաղնջական սու

1 Յամն 1243 կամողիսոն և նախառարն Հայոց  
յաղթային ծողովի անդ ՚ի Սիս հասպապէցին իանոնս  
փառն և հինգ վասն բարեկարգութեան ։ Վերջինն այս  
ոյն իանոնադրը ։ և Խորհրդարդն վերջին օծման հիւան  
դաց անխափան իապարեսցի իսողով օրհնեցելով ՚ի աւ  
հանային ։ որովհա իանոնեալ և յառաջ ժամանական և  
մեծ հայրապէտն Հայոց Յովհաննես իմաստանը ։  
իսի ՚ի 1251 անդանօր այլ ծողով գումարէցաւ ։ յորում  
գնեաւը իալան պալատն Հագուստն որբոց և Արքաց  
Զաք Հասպապէտը վեայութեամբ վարդապէտն պաց իանոն  
զինուն և նախառարն, գրեցին ողաքառիանին առա նայն  
ինքն իննու վլենդիս պատ, որովհա պատմեն Ապրետն  
և կիբակոս Պատմ. Հայ. հապ. 3. էր. 228:

վորութիւն է զարդարել զվարդն ոսկեռով, եղեալ  
'ի նմին մուշկ և բալասան, և 'ի չորրորդ կիրակեի  
քառասնորդական պահոց օրհնել հանդիսիւ .  
զոր առ 'ի պատիւ ընծայելին բազմարդիւն պե-  
տութեանց (1570):

Այլ զկնի եօթն ամաց իբրև բարձաւ 'ի կե-  
նաց գեղերիկոս կայսրն, մեծ քահանայապետն  
դարձեալ 'ի գահ իւր՝ ընծայեաց կարդի-  
նոլսոց կարմիր գլխարկ 'ի նշան հաստատու-  
թեան հաւատոյ մինչև ցհեղումն արեան: Ճա-  
նահնար եղեւ ծաղկեցուցանել 'ի Հռովմ զու-  
սումն աստուածային և քաղաքական իրաւանց:  
Յօրինեաց զանազան գիրս . յորս անուա-  
նի է վարդապետութիւն իրաւադիտութեան:  
Յետ գեղերիկոսի որդի նորա Կոնրադոս փո-  
խանակեաց զտեղին . այլ անդէն զնէապօլիս  
սարտոյց 'ի հպատակութենէ գահին Հռով-  
մայ . որով և գատապարանեալ 'ի պապէն՝ պա-  
տուհասակոծ եղեւ . և ապա գեղակուր կո-  
րեաւ 'ի ձեռն անհարազատ եղբօր իւրոյ: Խոկ  
պապն խնամարկեալ զնէապօլիս և զկապուա՝  
անձամբ չոքաւ անդը և դարձոյց զախտա ամենէ-  
ցուն առ ինքն ոչ սակաւ աշխատանոք, մինչև  
հիւանդացեալ 'ի նմին քաղաքի փոխեցաւ առ-  
տեր յեօթն իդոսացն դեկ . յամին 1254. և ամ-  
փոփեցաւ մարմին նորա 'ի մեծի տաճարին . և  
եկաց նա 'ի քահանայապետութեան ամս մե-  
տասան, ամիսս հինգ և աւուրս չորեքտասան<sup>1:</sup>

1 Հուայնալ. 1242=1254: Պետրոս Մարտի. Գիր+  
կ. յղ. միաբ. գլ. ծէ. 5: Մագիստրոս. Հարուցսուրամա-  
լաբ. հապ. 2: Հունալ. Ուշեր. հապ. 1. և 2: Պատ.  
հայ. Գիր+ 5. գլ. և:

## ՃԶԱ

## ԱՂԵՔՍԱՆԴՐԻ Դ

Վ. Տ. 1254... և կայսերութեան բաղդադինոսի թ. 26:

1501. Ազեքսանդր անապնիացի ազդակից  
իննովկենախոսի գ. և Գրիգորի թ. յառաջապայծն  
անուանեալ հռայնալգոս կարգինալ և պիսկո-  
սոս Ոստիոյ և Վեղիդերայ՝ ընարեցաւ 'ի ժող-  
վին 'Սէատօլաոյ յաջորդ սրբոյն Պետրոսի միով  
աւուրբ յառաջ քան զիգոսս դեկ. յամին 1254.  
որ հանդերձ խոնարհ և ողորմած բարուքն բա-  
րենախանձ գտաւ և աստուածային օրինաց: 'Նմին  
իրի դաստալարտեաց զգիրս Գուլիելմոսի մակա-  
դրեալ և Յաղագս վատնդաց յետին ժամանա-  
կաց և յաւիտենական աւետարանից: որ եր  
դրեալ ընդգեմ կրօնաւորական կարգաց:

Յաճախէր Ազեքսանդր 'ի միջակ իւր յ՛ն-  
տիա, եր զի անձամբ քարոզէր ժողովրդեան ըզ-  
բանն կենաց, և եր զի պատուէր տայր քարոզ-  
չաց վարդապետել 'ի ներկայութեան իւրում:  
Կարգ եղ վասն խոստովանահարց ընարութեամբ  
և պիսկոպոսաց ունել զպաշտօնն զայն սպատկա-  
ռելի: Սպառնացաւ նզովս կայսրընախիր իշխա-  
նոց՝ եթէ ընտրեացեն կայսր զթիւ ըեալն կոնքրա-  
դինոս զթուռն Փեդերիկոսի թ: Խակ զանագորոյն  
Նկելինոս զուքս Լոնդոնարախոյ երբեմն կար-  
դեալ 'ի Փեդերիկոսէ՝ նկուն արար բանագրա-  
նօք, և 'ի ձեռն խաչակիր զօրաց: Մեծապես  
փոյթ կալաւ միաբանել զեկեղեցին Յունաց  
ընդ Լատինացւոցն. սորին վասն նուիրակս ա-  
ռաքեաց 'ի Կոստանդինուպոլիս խոնարհ. լ. լ. ըզ-  
միաս նոցա: Յզեաց և զերելլ: Վարդապետա-

յարենլստառ ազգութարաց . և բազումք դարձան 'ի սուրբ հաւասար . յորոց իշխան մի քրիստոսագաւան դիմեաց յԵղուսաղէմ առնուլ զայն 'ի ձեռաց սուլդանին . բայց հակառակութիւն գենուացւոց ընդ Վենետիկեցիս խոշընդունել եղե . յօրմէ կարի իմն վշտացաւ քահանայապեան : Մանաւանդ իբրեւ լուաւ եթէ Միքայէլ Բազեոլոց զօրացեալ 'ի կողմանս Նիկիոյ դիմէ 'ի թագաւորեալ քաղաքն առնուլ զայն 'ի ձեռաց լատին կայսեր Բազգովինոսի Բ (1496):

Յետ այնորիկ աեսեալ մեծի պապին զաղմուկ շփոթի 'ի Հառվմ' աեղի ետ 'ի Վիտերբիոն , և անտի յԱնագնիա . ուր եկաց ամս երկուս : Իսկ իբրեւ դարձաւ անդրէն 'ի Վիտերբիոն առ 'ի ժողով առնել վասն հաշտեցուցանելոյ զՎենետիկեցիս ընդ Գենուացւոց , լուաւ զառումն կոստանդինուալոցոյ 'ի Յունաց . որովհ Լատինացիք հալածական եղեն անտի յետ ափիելոյ զամս յիսունեռութ . 'ի խոր խոցեցաւ , և առ վշտին մահացաւ յութ կազանդացն յունիոն յամին 1261 , կացեալ յիշխանութեանն ամս վեց , ամիսս հինգ և աւուրս երեքտասաան : Գո՞ն սորաբազում կոնդակք և յոլովագոյն վՃիռք <sup>1</sup>:

1 Հառայնալ . և Աբոնդ . յահն 125<sup>4</sup> : Պարմ .  
Հոռֆ . գիլք 22 : Պապմ . Հայ . հապ . 3 . եր . 253 :

## ՃԶԲ

## ՈՒՐԲԱՆՈՍ Դ

Ա. Տ. 1261 . . . և կայսերապետան Միացական  
Բազեւլութիւն ։

1502. Բաղզումք 'ի խմբէ անտի որ գումարէալ էին 'ի թաղումն Վաղեքանդրի պապին՝ ու շագիր եղեն ընարել զոմն յաջորդնմին 'ի կարգինալոց ժողովելոց 'ի Վիտերբիոն . սակայն չյաջողեցաւ : ՅակովոսՊահեդալէոն վարդապետոնն ծնեալ 'ի Տրոյա յանշուք զարմէ , բայց գերազանցեալ խմասուռն մտօք և առաքինի վարուք , որով բարձրացեալ էր արգէն յեպիսկոպոսութիւն Վերդունայ , և անցեալ ընդ սպաշտոն նուիրակութեան և կարգեալ պատրիարք Երուսաղէմի , այն ինչ եկաւորեալ 'ի Հռովմսակս գործառնութեանց ինչ Պաղեստինոյ , անդէն և անդ կարգինալք միահամուռ գարձուցին զաշս 'ի վերոյ նորա , և յօժարակամ հաստակեցին զեա յաթու քահանայտապետութեան Հռովմայ 'ի չօրս կազմանդայն սեպ . յամին 1261 . թէպէտ և չէր կարգինալ : Ապա 'ի նոնայս սեպ . 'ի թագագրութեան անուանեցաւ . Ուրբանոս , զի էր որ սրբոյն Ուրբանոսի պապին մարտիրոսի (1338) : Յաւուր միում լուեալ նորա խօսելումանց զածազգի զարմէ իւրմէ 'ետ պատասխանի . Լաւ է ազնուութիւն հոգւոյ քան զարմի . որովհետեւ աշխարհ ամենայն առ պատուականսունի զայր խմասուռն և տռաքինի թէ և ցածազգի . քան զայն որ իցէ մէծազգի՝ այլ վատթար և ախմար :

Խ սկիզբն քահանայտապետութեան սորա վախ .

Ճան եղեւ արևելքան կայսերութեան Լատինացւոց, որ սկսեալ 'ի Բաղդովինոսէ Ավերջացաւ 'ի Բաղդովինոս թ. (1496): 'Նմին իրի խորհեր քահանայապեան Ուրբանոսնուաճել զԲաղեռլոգ կայսր Յունաց 'ի ձեռն խաչակրաց առ 'ի նորոգել զայն իշխանութիւն Լատինաց: ԱՅԼ նորա խոստացեալ նմա խոստումն կարեսր միաբանելոյ զեկեղեցին Յունաց ընդ Եկեղեցւոյն Հռովմայ՝ դադարեցոյց որոյ գործադրութիւնն եղեւ առ Գրիգորիւ Ժ (1504):

Ուրբանոս ուշագիր լեալ մեծամեծ սքանչելեաց Եղելոց զօրութեամբ սրբոյ հաղորդութե:

I թ 1208 յայգինեցաւ Յանլիանեաց իւասին՝ «ը 'ի կուտանելըան ըլունէ 'ի Փլուրենադիս՝ յորդութել զառաջնորդու եկեղեցւոյ առ 'ի սահմանիւ պատմու և արեան պէտու: Յորմէ յորդութել Ուրբանոսի պատուին՝ իւրեւ ժամաց յայգինութեան գուշը ինչին յՈւրդիւթօ գաղտնի, ահա գաղտնաց ո՞ն յԵրիխոյն ւշաւ 'ի վերայ սուրբ իորդութոյ՝ 'ի պապացագեց յեկեղեցւոյ Պլուստեաց՝ նշանաւուաց գաղտնացն ըստ արիւնաւուաց ծեալ էրեւ եցաւ աւաշ նորա իսկորիան միս արիւնաւուացն՝ բաց 'ի մասնե անդի շօլաժնւոյ՝ 'ի մապանց իւրեց ։ իսկ կադարիւ սիհոյն կպատի նորդեալ արեամբ, յորմէ շին առ շին հոսէր արիւնն 'ի վերայ մարմարիալին, և իւրագան շինը իսկորիւ պապաւուրել զպիիզ նմանութեան մարդոյ: Յայնժամ գաղտնացն յարգաւոսուս լուծեալ բեկեալ սըրադիւ ուստի ուստի ապագին, և իւսուպանեալ զըւը մամբ զմբեղս իւր պապաւը զսփանըլիսին։ և նա անդին հրամացէ, զին հրաւալի մարմարիալն բերեցի յՈւրվիւթօ գաղտնի։ և ինքն հանդերէ ուիսպիւ նորդու կադարիւ ընդառաջ եւսանէ նմին, և երկրագագեալ մեծարանու պանի զըստու զայն պամացնէն ։ ուր պահին մինչև յայսոր մեծառ յարգաւութեամբ։ Այս այնուհետեւ 'ի 1264 հաստագէ պատմու մարմար և արեան պէտուն:

Հաստատեաց տօն վառաւոր մարմնոյ և արեան  
տեառն զկնի ու թօրէից հոգեգալստեան . զորոյ  
արարողութեան ժամերգութեան յօրինեաց ե-  
րանելին թուլմաս ապուինացի՝ որ 'ի նմին ժա-  
մանակի փայլէր 'ի կարդին սրբոյն Դոմինիկոսի ,  
որպէս և երանելին բոնավենտուրա 'ի կարդին  
սրբոյն Ֆրանչիսկոսի : Իսկ սրբազանն յայն-  
ժամ եհան խաչակիր զօրս ընդգէմ Մանվիրէ-  
դոսի , որ յանիրաւեի սեպհականեալ էր զՍիկի-  
լիս : Զգուշացոյց զի մի առանց թոյլտուու-  
թեան իւրոյ թաղեսցին զոք 'ի Վատիկան մայր  
եկեղեցւոջ : Եւ ինքն Ուրբանոս յետ բարեկար-  
գելց զեկեզեցին ամս երիս և աւուրս երեսուն-  
հորս , եթող զանցաւոք կեանս , վախճանեալ  
'ի բերուզիա 'ի վեց նոնայց հոկ . յամին 1264 :

## ՃՇԴ

### ԿՂԵՄԷԿՍ Դ

Եւ Տ. 1265 ... և կայսերութեան Սիտայէլի Բաղ. 5:

1503. Զկնի փոխման Ուրբանոսի անցին ա-  
միսք հինգ , և հազիւ գումարեցան կարդինալք ,  
որք միաբանութեամք ընտրեցին յաթոռ քա-  
հանայապետութեան զերեւլին 'ի կարդինալս  
զարքեպիսկոպոս Նարբոնայ զկուխտոս Կրասոս  
գաղղիսցի որդի Փուղգոախոսի 'ի հինգ վետ .  
յամին 1265 : Սա ինքն այր քաղցրաբարոյ , աղ-  
նուագութ և բարեխնդիր ոչ գտեալ անդ , իբրև

1 Համայ . և Սբոն . յամին 1261 : Կարդին . Լամբ .  
յու ծառա . Ասպուծոյ գիր + 4 . մ . 2 . գլ . լա : Քրիս-  
տիանոս Լամբ . հապ . 11 . գլ . բ : Քրիստոն դ . 'ի  
ստի . հապ . 3 :

լուաւ զընտրութիւնն՝ չեառյանձն դաստիճանն  
զայն գերակատար՝ մինչև արտասուօք խնդրեցին  
կարդինալք և հաղիւ հաւանեցուցին. որ և պատ-  
կեալ պատ անուանեցաւ կղեմէս Դ։ Մեծա-  
համբաւ եր այրն յոյժ յուսումն իրաւագիտու-  
թեան. այնպէս զի յաշխարհականութեան անդ  
լուեալ զհամբաւ նորին սուրբն Լուգովիկոս  
արքայ Գրազվիոյ՝ կարգեաց զնա իւր ատենա-  
գլիր և խորհրդական։ Խբրե մեռաւ կինն իւր,  
անց վաղվաղակի յեկեղեցական վիճակ. կարգե-  
ցաւ նուիրակ յանդզիան կարգինալ յՈւրբանո-  
սէ քաղաքակցէ իւրմէ. ուր ապա գրե ալ զանտզան  
գիրս պիտանիս, մեծապանծ հանդիսացաւ և  
փառաւորեաց զեկեղեցին Քրիստոսի, մինչև ար-  
ժանի եղե աթոռոյ քահանսցապետութեան։ Որ-  
շափ առաւել գերաստիճանն բարձրացաւ, այն-  
շափ առաւել գերազանց և ընտիր գտաւ յա-  
ռաքինութեան։ Զեառ յանձն բնաւ սատարել  
ազգակցաց իւրոց և պատուասիրել զնոսա պա-  
տուով իւկը։ Եւ ոչ խկ զդուներացն փոյթ եղե  
նմա հարսնացուցանել, այլ ետ զնոսա ՚ի կրթու-  
թիւն առաքինի վարուց. որպէ և լքեալ զաշխարհ  
նուիկուցան հարսունք Քրիստոսի։ Սա ՚ի կիր ար-  
կանէր յառանձնական նամակս զկնիքն ձայնեալ  
ձկնորսի (1574)։

Զեղբայր սրբոյն Լուգովիկոսի Կարոլոս կոմո,  
որ գայր զօրօք ՚ի Հռովմ առնուլ զթագաւո-  
րութիւն կրկին Սիկիլիոյ զխոսացեալն նմա  
յՈւրբանոսէ, արար սինկղիտիկոս Հռովմոց. և  
ապա հանդիսաւոր երգմանք հաւատարմութեան  
՚ի Լատերան պսակեաց թագաւոր Երկաքանչիւր  
Սիկիլիոյ պայմանաւ հատուցանելոյ ամ ըստ  
ամէ յաւուր տօնի սրբոյն Պետրոսի ութ հաջոր  
ունկիս ոսկւոյ և սպիտակնժոյդ ահիպարանոց  
միհչե ցպակասել ցեղին. և այնուհետեւ դար-

ձուսցէ զայնտերութիւնառ գտհնառ աքելական։  
Խնդակից եղե նորոյ արքային հանդերձ օրհնու-  
թեամբ, որ յաղթեալ Մանկիրեդոսի բանակալին  
՚ի Սիկիլիա եքարձ ՚ի կենաց։ Խակ զկոնրադինսա՝  
որ գայր ընդ դքսին Աւարիոյ ոանակոխ առ-  
նելզիտալիս, ձերքակալ արարեալ գլխառեաց։  
յորմէ բարձեալ էր սկապն զախազոսարքայի հան-  
դերձ բանադրանօք։ Լուեալ եթէ չեթում  
թագաւոր չայոց ամօք յառաջ զերծուցեալ էր  
զլատինացիս յԱնտիոք, գրեաց առ նա թուղթ  
այսպիսի բանիւք. և Այս՝ գիտեմք և գիտեն ե-  
կեղեցիք համօրէն թէ զիտրոդ բազում անդամ  
քոյին օգնականութեամբդ փրկեցեր զլատինա-  
ցւոց ժողովուրդ. ՚ի զանազան ազգաց և ՚ի թշնա-  
մեաց նոցա, և եղեր օգնական Անտիոքացւոցն ՚ի  
կարօտութեան իւրեանց ։ և այլն։

Իբրև զայսօրինակ առաքինանայր մեծ հայրա-  
պետն կղեմէս չոքաւ. ՚ի Վիտերբիոն քաղաք վի-  
ճակի որբոյն Պետրոսի. անդ եհաս նմա վախճան  
կենաց ՚ի կատարած նոյեմբերի յամին 1268.  
կացեալ յիշխանութեանն ամս երիս և ամիսս  
ինն։ Ուրանօր թաղեցաւ փառօք յեկեղեցւոջ  
եղբարց քարոզաց, ըստ որում որոշեալ էր ինքն։

Ի սմին ժամանակի սուրբն Լուդովիկոս արքայ  
բարենախանձ լեալ օակս ազատութեան քրիս-  
տոնէից բանակ կազմեաց, անց յԱփրիկէ. և մարտ  
եդեալ ընդդէմ կարթադինեցւոց՝ ջանահնար  
եղե դարձուցանել զնոսա ՚ի սուրբ հաւատու-  
Այլ յերկարել գործոյն ետես զլքումն բանակի

1 Հայոցնալ. 2 Աբոն. յամն 1265—1268:  
Լանինսս պատ. Պողոս. Գիշտ 7. յամն 1265: Պատլում.  
ըստ. Գիշտ 22. պատ. ել. Գլ. իլ: Ասուբ Անգո-  
նինսս ՚ի ժաման. մ. 3. վերգառապետն 20. Գլ. մ.  
11: Պատլ. Հայ. հատ. 3. ել. 251:

իւրոյ, և տռ վշտին փոխեցաւ յաստեացա, թու-  
ղեալ յաշխարհի զօրինակ բարի 'ի նախանձ աս-  
տուածազաշտութեան: Որդի նորա Փիլիպպոս  
գ. յաջորդեալ զնա՝ արար խաղաղութիւն ընդ  
բարբարոսաց և գարձաւ 'ի Գաղղիտ:

## ՃԶԴ

ԵՐԱՆԵԼԻ ԳՐԻԳՈՐԻ Ժ

Ա. Տ. 1271 ... և իայսերութեան ՄԻ+ԱՅԷԼԻ  
ԲԱՌԵԿԱՆ. 11:

1504. Յետ մահուան Կղեմայ Դ թէպէտ  
գումարեցան կտրդինալք ընտրել զոք յինքեանց  
յաջորդ նորա ըստ եկեղեցական սահմանադրու-  
թեան, բայց 'ի տարածայնութենէ յերկարա-  
ձգեցաւ գործն զամն երիս: Հուսկ յետոյ յա-  
րուցեալ սուրբն բոնավենտուրա մեծահռչակ  
կարդինալ հաւանեցոյց զժողովն ընտրել զՏի-  
բալդոս նախասարկաւագ. Աեկեայ բիաչենցացի  
այր փառաւոր իմաստութեամբ և սրբութեամբ.  
որ յայնժամ գնացեալ էր 'ի Պաղեստին ընդ Ե-  
դուարդայ որդւոյ արքային: Անդպիոյ ընդգէմ  
անհաւատից: Ընդ այս հաւանեալ ամենեցուն  
հաստատեցին զնա յաթոռ. քահանայապեառ-  
թեան 'ի կտղանդս սեպ. յամին 1271 'ի քա-  
ղաքն Վիտերբիոն: յորմէ յառակս ընկալու-  
ավնհամածայնութիւնն ելլարց կացուցին զնա  
հայր հարանց: իսկ առաքինին այն իբրև լուսու-  
զընարութիւն իւր աննահանջելի կտմօք ուխտին  
չռովլոյ՝ հնաղանդեալ վերին նախակարգու-  
թեան դիմեաց յեկեղեցին յանձն եղեալ 'ի կամն  
սրբարչին: անդ ուրեմն հաշակեաց զընտրու-  
թիւնն իմաստալից ատենաբանութեամբ իւրով.

յորում յաճախ կը կներ զայն բան սաղմասաց .  
և լցեսցի լեզու իմ 'ի քիմն իմ , թէ ոչ յիշեցից  
զքեղ , թէ ոչ նուագեցից զքեղ , Երուսա-  
ղէմ . սկիզբն ուրախութեան իմոյ :

Ի հետեւալ ամի իրեւգարձ առներ յիտալիա ,  
արքայն Սիկիլիոյ մեծաշուք փառք պատուա-  
սիրեաց զնա : Որոյ հասեալ 'ի Վիտերբիոն և  
անտի 'ի Հռովմ ձեռնադրեցաւ հանդիսապես  
քահանայտապետ 'ի վեց կաղանդացն ասլր . և ա-  
նուանեցաւ Գրիգոր Ժ : Զեռն էարկ անգեն  
վաղվաղակի խաղաղել զիտալիա յուղեալ յե-  
րեսաց Կուելեանց և Կիբելեանց . զորս միաբա-  
նեաց 'ի խաղաղութիւն :

Խնամու եղե կարի իմն 'ի վերայ Երուսաղեմի  
թափել 'ի ձեռաց անհաւատից , և սակս միտ-  
բանութեան Յունաց : 'Նորին աղագաւ ընտ-  
րեաց 'ի Լուգդոն գումարել զընդհանուր ժողով  
'ի 1274 (924) : Յոյր սակս գրեաց կօնդակս առ-  
հանուրս և թուղթ առ արքայն հայոց Վեւոն  
և առ կաթողիկոսն գալ 'ի ժողով անգր և տանել  
առ ինքն զսահմանս ժողովոյն 'Նիկիոյ և այլոց  
գրեալս հայերէն : Անդ պատուասիրեցին զնա  
Փիլիպպոս ալքոյ Գաաղիոյ և արքայն Արագո-  
նայ : Ի նմին ժողովի Յոյնք միաբանեցան 'ի հա-  
ւատոյս ընդ Լատինացւոց հանդերձ կայսերաւ  
և պատրիարքօք . թէպէտ յետոյ դարձան յա-  
ռաջին անմիաբանութիւն :

Յետ այնորիկ տեսեալ բարեխնդիր քահանայ-  
ապետին եթէ՝ զկնի գեղերիկոսի Բ աթու  
կայսերութեան արևմտից պարապ մնայ ամս  
քսաներիս , պատուեր ետ կայսրընտրաց ընտրել  
զշուռտուքոս կոմս Ասբուրկայ 'ի Զվիցերիտ  
զայր բարեսկաշտօն , որ եղե թագաւոր Գերմա-  
նիոյ . և եկեալ յիտալիա երդուաւ մնալ հաւա-  
տարիմ և պաշտպան սրբոյ եկեղեցւոյ օրհնու-

թեամբ մեծի պապին : Սապէս նա ինքն բարեկարգեաց և զառտնորդս եկեղեցւոյ և զեկեղեցիս . վճռեաց նա և զի յետ մահուան քահանայապետաց կարգինալք հաւաքեալք 'ի փակարանի ընտրեսցեն զնոր պապ ըստ կանոնաց . և մի ելցեն անտի յառաջ քան զընարութիւնն . այս սովորութիւն մինչեւ ցայսօր պահի : Յօրդոր մատոյց ալքային գերմանիոյ և ալքային Գաղղիոյ ընդ բազմաց հաւաքել զնոր խաչակիր զօրս և անձամբ գիմել 'ի Պաղեսափին : Այն ինչ և ինքն պատրաստեալ էր գնալքնդ նոստ ազատել զԵրուսաղեմ , և հասյԱրեախոն : Անդ վազվաղեալ առնա հրաւէր 'ի վերինն Երուսաղեմ հանգեաւ 'ի տէր սրբութեամբ 'ի չորս խոսացն յունվշամին 1276 . ուր և թաղեցաւ փառօք , կացեալ յիշխանութեան ամս չորս , ամիսս չորս և աւուրս տասն . իսկ յօծմանէ՝ ամս երիս , ամիսս ինն , և աւուրս հնգետասան : Եւ Աստուած փառաւորեաց զնա 'ի ձեռն պահնչելեաց , որք եղեն 'ի գերեզմանէ նորա : Գտանին նորա իմաստալից նամակք :

## ՃԶԵ

## ԽՆԱՎԿԵՆՏԻՈՆ Ե

Ա. Տ. 1276 . և հայութութեան Հոռոմութուն 4 .  
և Միւսոյն Բառ . 16 :

1505 . Յետ մահուան երանելոյն Գրիգորի կարգինալք եկեղեցւոյն Հռովմայ գումարեալք

1 Հոռոմ . և Աբան . յան 1271 = 1276 : Պատուի .  
լուգ . գիր + 23 . գլ . թ : Ասոբի Անդանին . 5 . 3 .  
Ժաման . վէր . 20 . գլ . թ : Լամբել . գիր + 2 . գլ .  
իթ : Պատուի . Հոռոմ . հագ . 3 . ել . 271 :

յԱրետիոն ըստ օրինագրութեան նորին մասն  
 'ի փակարանն յերեքտասան կաղանդացն փետ .  
 և 'ի վազեւ անդր հաստատեցաւ քահանայապետ  
 Պետրոս տարանտամբացի կարդինալ արքեպիս .  
 կոպոս 1 իոնի , երևելի վարդապետ աստուա .  
 ծաբանութեան , մեծ ասպաշխարողահայր Հռով .  
 մայ և գտւառապետ կարդին գոմինիկեան քա .  
 րոզաց ծնետլ 'ի 1245 : Ապա յութ կաղան .  
 դացն մարտի եկաւորեալ 'ի Հռովմ ընդ ուխ .  
 տին՝ պսակեցաւ փառօք պապ և յաջորդ սրբոյն  
 Պետրոսի 'ի մեծի տաճարի նորա , և անուանե .  
 ցաւ իննովկենախոս Ե : Խակ 'ի յետագայ առուր .  
 դրեայ կոնդակս առ ամենայն թագաւորս և իշ .  
 խանս յազագո ընտրութեան իւրոյ . և փոյթ  
 յանձին կալաւ առաքել զհրեշտակս առ Պի .  
 զացիս և Լուգացիս , և հաստատեաց զնոսա 'ի  
 խաղաղութիւն : Բատ մեծապէս խնամոտ ջա .  
 նից իւրոց խաղաղութեան և պայծառութեան  
 սրբոյ եկեղեցւոյ՝ ձեռնամուխ եղե 'ի մեծամեծ  
 գործո փառաւորս . սակայն չե 'ի գործ եղեալ  
 վաղվաղեաց առ նա տարաժամ մահ և խափան  
 եղեւ գեղեցիկ գործոցն 'ի մետասան կաղանդացն  
 յուլիսի յամին 1276 , կացեալ յիշխանութեան  
 ամիսս հինգ եեթ : Յածին առ մեօք սորին պատ .  
 մական բանք 'ի վերայ չորից գրոց վճռոց , և այլ  
 պիտանի գրութիւնք :

1 Հռովյանալ . և Սբոնդ . յամն 1276 : Սուրբ Ա .  
 բանին . մ . 3 . վէր . 20 . գլ . գ :

## ՃԶՋ

## ԱԴՐԻԱՆՈՍ Ե

Ա. Տ. 1276, և կայսերութեան Հռոմութեանի 4  
և Միտայելի Բաշ. 16:

1506. Ադրիանոս գենուացի եղբօրորդի ին-  
նովկենտիոսի Դ պատին, յորմէ բարձրացեալ  
էր յաստիճան կարդինալութեան, յառաջո-  
դոյն ձայնեալ Ռատօքնոս Փղիսկոս, կարգեցաւ  
յաթու քահանայապետութեան Հռովմայ յե-  
րեք իգոսացն յուղաի յամին 1276: Այլ սո-  
կաւօրեայ եղեալ և չե ձեռնարկեալ ՚ի գործ  
ինչ փոխի յաստեացս զկնի երեսունեւոթն ա-  
ւուրցիշխանութեան իւրոյ: Պատմի զամանէ թէ  
յետ մահուան կղեմայ Դ պատին առաքեցաւ  
առ սուրբն Փիլիսպոս Բնինիոս աբբայ հրատի-  
րել զնա ՚ի պաշտօն քահանայապետութեան,  
այլ նա չեառ յանձն զայն ծայրագոյն իշխա-  
նութիւն ասելով «Արդարեւ գերածայրեալաս-  
տիճան», այլ սուզ վայելըութիւն»: Ապա զկնի  
հինգ ամաց վիճակեցաւ ինքեան ոյն գերազանց  
իշխանութիւն: Արդ սոյն հայրապետ Ադրիա-  
նոս այն ինչ գիմեալ ՚ի Վիտերբիոն գոլովար-  
կաւագ չե ևս ձեռնադրեալ երեց, և ոչ իսկ քա-  
հանայապետ, անկառ ՚ի վտանգ մահու: Իրրե-  
մեծամեծք երթային առնա յովզոյն շնորհաւո-  
րութեան ասէր. «Լաւ էր տեսանել զիս կար-  
գինալ առողջ, քան պատ ոգեսպառ»: Եւ վախ-  
ճանեցաւ նա ՚ի հնդետասան կազանգացն սեպ<sup>1:</sup>

1 Հռայնաւ. և Սբոն. 1276: Յորդանէս Գրէւ  
՚ի նոյն: Պէտք. Ամորիտ Կամալ. Գիրտ 9. պատ. Բւշ-  
յան 1276:

## ՃԶԵ

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ի ԿԱՄ Ի Ա

Ա. Տ. 1276, և Խայսէրութեան Համալիքութեան 4,  
և Միտայէլի Բաղ. 16:

1507. Յովհաննէս յառաջագոյն ձայնեալ  
Պետրոս սրդի՞ Յուլիանոսի լուսիանացւոյ՝ յա-  
ջորդեաց զԱգրիանոս յիշխանութեան առաքե-  
լապետին յեօթեանատան կաղանդացին հոկ. յա-  
մին 1276: Որ ՚ի Գրիգորէ մ. պապէ կարդեալ  
էր կարդինալ և եպիսկոպոս Տրուսկուլցյի, այր  
բաղմադէտ և հմաւտ յիմաստասիրական մակա-  
ցութիւնս և ՚ի բժշկականութեան: Զառաջինն  
փոյթ յանձին կալաւ միաբան պահէլ զեկեզգե-  
ցին Յունաց ընդ Լատինացւոց. և սորին աղա-  
դաւ առաքեաց զհրեշտակս առ Միքայէլ կայսր  
Բաղէոլոդ, յուշ արարեալ նմա զուխտն դա-  
շանց հանդերձ երդմամբ զոր արարին նոքա ՚ի  
ձեռն դեսպանաց ՚ի ժողովը Լուգգոնի Բ:

Ընդ ամենայն ժամանակս քահանայապետու-  
թեան՝ որ տեեաց զամիսս ութ ևեթ, յայտն  
պարապեցաւ, հոգատար լեալ ամրացուցանել  
զքրիստոնեայս ՚ի Պաղեստին և սկահէլ զոր միան-  
դամ՝ գրաւեալ ունեին: Ուստի ընդ այն ժա-  
մանակս որչափ ինչ տեղիս սեպհականեալ ու-  
նեին յԵրուսաղէմ և ՚ի Պաղեստին քրիստո-  
նեայք՝ սորա էին արգիւնք: Գրեաց օդտակար  
գիրս իմաստասիրականս, և անուանի է մատեանն  
մակագրեալ ՚ի նմանէ և դանձ աղքատաց: Կան  
նորա և իմաստալից կոնդակք: Սակայն աղէ-  
տալի եղի մահ մեծի հայրապետիս. քանզի ՚ի  
վհաերթիոն յիւրում պալատան վլուզեալ սե-

նեկին՝ յորում նստէր, վասնդեցաւ, և յետ  
վեց աւուրց փոխեցաւ առ տէր յիդոսս մայիսի  
յամին 1217, և ամփոփեցաւ անդ՝ ի տաճարի  
սըբոյն Լաւրենտիոսի : Ոմանք զստ անուանեն  
Յովհաննէս ԻՍ կամ ԻԲ գնելով՝ ի կարդոս պա-  
պից զանուանս այնց, որք չեին օրինաւոր քա-  
հանայապետք չուովմայ. որպիսի էր եղայրն  
չուոքերառոսի և այլք<sup>1:</sup>

## ՃԶԸ

## ՆԻԿՈՂԱՅՈՍ Գ

Ա. 8. 1277, Խ կայսերութեան Հուստութեան 5.  
և Սիմոնէլի Բառ. 17.

1508. Զկնի մահուան Յովհաննու պապին  
վէճ իմն ծագեցաւ՝ ի մէջ եօմն կամ ութ կար-  
դինալոց սակս ընտրութեան յաջորդին. այն զի  
կարուս ազքայ Սիկիլիոյ առաջարկեր նոցա ընտ-  
րել զոմն դադղիացի յաջորդ Յովհաննու պա-  
պին : Այսպիսի անհամաձայնութեան յերկա-  
րագետալ ամիսս վեց՝ ի Վիտերբիոն, հուսկ յե-  
տոյ ժողովուրդ տեղւոյն ընդ ուխանին ստիպե-  
ցին զկարդինալս գլխաւորել զայն գործ կարևոր  
Մինչ զի փակեալ նոցա՝ ի ոլրետորական ատեան  
քաղաքին՝ վաղվաղեցին արագ արագ ընարել զոմն  
յինքեանց : Առա օր մի յառաջ քան զեօթն  
կաղանդացին դեկ. յամին 1277, հաստատեցաւ  
պապ Յովհաննէս կայետանոս յազնուական  
զարմէ Ուրսինի՝ կարդինալ սարկաւագ որբոյն

1 Հուստ. և Սբոն. յան. 1276. 1277: Պառայ.  
լու-դ. գիր. 23. պատ. էկ. գլ. ին. հադ. 11:  
բանալին. ի ծան. առ Բւտինայ Եր. 181:

Նիկողայոսի : Յորոյ անուն և ինքն՝ ի ձեռնաշըստէան որ եղի ՚ի Հռովմը յեօթն կաղանդս յունիլարի՝ անուանեցաւ Նիկողայոս գ :

Աս մեծաջան դառւ ոչ միայն ՚ի բարեկարգել զեկեզեղեցին , այլ և հաստատել զամենայն իրաւունս . նմին իրի բռնադատեացնախ զՀռովմութիւն աղքայ Գերմանացւոց կատարել զիսոսամունս արարեալս առ . Գրիգոր Ռ ՚ի ժողովն Լու գոնի Բ , և Հռովմութիւն հնազանդեցաւ կամաց մեծի քահանայապետին Նիկողայոսի : Որով և հաստատեաց ՚ի Հրովարտակին զամենայն զիրաւունս , զտէրութիւնս և զժառանդութիւնս շընորհեալս եկեղեցւոյն Հռովմայ ՚ի նախորդաց իւրոցյարքայից և ՚ի կայսերաց հռովմէտկանաց : Առաքեաց և գեսպանս յԻտալիա հանդերձ նոր հրովարտակաւ դարձուցանել ընդ իշխանութեամբ առաքելական դահին զամենայն իրաւունս և զկալուածս հանդերձ յայտարարութը ամենեցուն : Յորմէ Նիկողայոս պապ զօրացեալ առաւել քան զառաւել խնամոտ եղե բառնալ զամենայն հակառակութիւնս յապա ժամանակի . ուստի առաջարկեացնմին Հռովմութիւն նորոգել զտը չութիւն լուգովիկոսի Պիոսի , մեծին Ողոնի և Հենրիկոսի Բ : Իսկ արքայն յօժարակամբ գտաւ կատարել զամենայն կամս սըրբազանին . յաւել և զառանձին հրովարտակ , որով տայր եկեղեցւոյն Հռովմայ բաց յայլոց՝ զքաղաքս Փերարա և Կոմակղոն : Եւ որպէս զիայս ամենայն անյեղլի մնացէ , ետ ստորագրել և կայսրընտրաց :

Այնուհետեւ մեծի հայրապետին դարձուցեալ զհոգեոր զօրութիւնիւր առ Կարոլոս արքայ Անկիլիոյնուածեաց զնա , եբռնադատեաց ջրելզծերակուտական իշխանութիւն քաղաքին : Կմանօրինակ խնամով գուն դործեաց հաստատել

վիսավաղութիւն՝ 'ի մէջ քրիստոնեայ իշխանաւորաց. ապա զկնի հաշտութեան սիրոյ օրինադրեաց, զի 'ի հանգիտաւոր պատարագի իւրեանց երգեսցեն զավմոն և Աւրախ եղեւ ես։ Դարձեալ աշխատեղեւ յոյժնորոգել զուարտնութիւն սիրոյ 'ի մէջ յոյն և լատին եկեղեցից, զոր հաստատեցին յայնժամ՝ 'ի ժողովն Առողջանի կամ գոնի. յոյր սակա գրեաց կոնդակս առ Միքայէլ կայսր Բաղէոլոգ և առ որդինորա Անգրոնիկոս, առ պատրիարքն և առ այլ յոյն առաջնորդս։

Ըստ պատմելոյ ականատես վիսավորաց մեծ էր արդարեւ Կիկողայոսի պատին ողորմածութիւն և եռանդն աստուածակաշտութեան, և այն չոփէ էր ակնածութիւն առ սուրբ խորհուրդն հազորգութեան, զի 'ի տատարագելն լայր անդադար։ Կմին իրի վճռեաց ընտրել 'ի կարգ քահանայութեան զարս կրօնասէրս և բարեպաշտ, քան զայնս որբ կիրթ իցեն յուսման և զուրկ յառաքինի վարուց։ Եւ ինքն առ կարի ժուժ կալութեանն 'ի կերակուրս՝ թուէր եթէ էրկայնակեաց լինիցի. սակայն մինչդեռ էր 'ի Սորիան առ երի Վիաերբիոնի հարեալ 'ի մահաբեր կաթուածէ վախճանեցաւ 'ի մետասան կազմդացն սեալ։ 1280. կացեալ յիշխանութեան ամս երկուս, ամիսս ութ և աւուրս քսանելիննեց զորոյ զմարմինն ըերեալ 'ի Հռովմամիովիեցին 'ի տաճար սրբոյն Պետրոսի։ Սմա ընծայի ճառն և Յաղագս ընտրութեան արժանապատուութեանց<sup>1</sup>։

1 Հոռայ. և Սբոն. յան. 1277=1279: Առ Սասորագ. հապ. 9: Գոռակին. Կարիկ. Ճաման. 1278: Պիտղոմ. լուգ. գիշ. 23: պապ. եկ. գլ. լ: Բանա. գիշ. 2: յղ. պապ. գլ. ծղ. 4:

## ՃՇԹ

## ՄԱՐՏԻՆՈՍ Դ

Ա. Տ. 1281, և կայսերական հոգալուսի 9.  
և Միտոյել Բաշ. 21:

1509. Այն ինչ կազմեցան պատրիարքացան  
կարդինալը ընտրել յաջորդ Սիկողայոսի պա-  
պին՝ կրկին կարդինալը՝ ի վեդ եկեալ յերկա-  
րեին զգործն մինչև մտեալ նոցտ՝ ի փակարան՝ ի  
քաղաքն Վիտեբսկոն. հաստատեցաւ՝ թէե յակա-  
մայս, Սիմոն կարդինալ Բրիայ գաղղիացի յութ  
կաղանդացն մարտի յամին 1281. որ ի Վիտեբ-  
րիոնէ աեղափոխեալ՝ ի չոռվմ ձեռնադրի քա-  
հանայապետ՝ ի տասն կաղանդացն ապրիլի, ա-  
նուանեալ Մարտինոս Դ: Զայն լուեալ կա-  
րողութ արքային Սիկիլիոյ՝ գնացեալ առ նա պա-  
տուասիրեաց ակնած ութեամբ. և ապա պատ-  
րաստեցաւ՝ ի պատերազմ ընդդեմ Յունաց:  
Խակ քահանայապետն ընկալեալ զմեծարանս  
արքային հայրախնամ սիրով օրհնեաց զնա մնալ  
միշտ հաւատարիմ առ գահն առաքելական։  
Ասպա ընդ բանիւ արար վկայարն Միքայել Բա-  
ղէոլոգ, որ չեկաց յերդմանն միաբան մնալոց  
ընդ եկեղեցւոյն չոռվմայ՝ ի ժողովն Լուգդոնի Բ  
և առաջի հրեշտակաց պապին։ Ի 1284 արար  
ժողով՝ ի Մելքիորէ Սիկիլիոյ վասն բարեկար-  
դութեան. յորում խստիւ հրամայի Յունաց  
ընակելոց՝ ի Սիկիլիա յաւելուլ՝ ի հանգանակն  
զբանն և յնորդւոյ։ Դարձեալ հրամայի զի գը-  
ղելք ամուսնացեալք՝ առանց հրաժարելոյ՝ ի  
կանանց մի առ սուրբ աստիճանս մատիցեն։  
բայց եթէ իցեն ծնեալք՝ ի Յունաց։ Նա և ար-  
դելանի մի խառնիլ յայլեայլ ծեսս. այլ զի ա-

ուաշնորդք առ իւրաքանչիւր ծէս կարգեցեն  
անձինս հմուտու (1211) :

Ընդ այս ժամանակս Գաղղիացիք յաճախեալք  
՚ի Սիկիլիա վասն լինելոյ արքային գաղղիացի՝  
կարի անկարգութեամբ և արհամարհանք վա-  
րէին ընդ Սիկիլիացիս . մինչև ժամ եղեալ միա-  
բանել նոցա ամենեցուն ընդ դէմ Գաղղիացւոց  
համաձայնութեամբ Պետրոսի արքային Արա-  
գոնիոյ : Ապա յեղակարծում ժամու յերեք  
կաղանդացն ապրիլի ՚ի ճրագալուցի զատկին  
տուեալ նշան՝ ընդ հարկանել զանգակաց այր  
իւրաքանչիւր սուր ՚ի ձեռին դիմեցին ՚ի վերայ  
Գաղղիացւոց , և ՚ի միջոցի երկուց ժամուց ութ  
հազար անձինս դիտապասու արկին . մինչև պա-  
տառել զօրովայնս յղի կանանց և զքարի հար-  
կանել զմանկունս , զի մի մնասցէ յերկրի նոցա  
սերունդ Գաղղիացւոց : Զայս անագորոյն գործ  
լուեալ մեծի պապին՝ կարեվէր խոցեցաւ , և ան-  
դէն արկ ընդ բանագրանօք զգլիսաւորս անօրէն  
գործոյն ընդ արքային Պետրոսի . իսկ որոց Կա-  
րոլոսի արքային Սիկիլիոյ զօրավիգն լինէին՝ ը-  
նորհեր զօրհնութիւն ներողութեան : Եւ ինքն  
առ ցաւոց սրափին նոււաղեալ ել ՚ի կենաց և փո-  
խեցաւ առ տէր ՚ի չորս կաղանդացն ապրիլի յա-  
մին 1285 ՚ի քաղաքն Բներուղիա , կառավարեալ  
վեկեղեցին սուրբ և առաքինի վարուք ամս չըրս .  
ամիսս և աւուրս եօթն : ԱՅԼ Առառած փա-  
ռաւորեաց զաւոքինասէր հովուապետն Մար-  
տինոս ՚ի ձեռն սքանչելեաց՝ որպ եղեն ՚ի գերեզ-  
մանէ նորա ։<sup>1</sup>

1 Հառայ . և Աբոն . յամ 1281 = 1285 : Բայիս  
՚ի Հարս սորտ 2 : Գու-լիել . Կար . ՚ի Ժամ . Արբոյն  
Անդունին . Տ . 3 . Վէր . 10 . Գլ . Շ : Առ Բայ-Ար-  
մի յամ 1281 : Աղետս . Կառ . պատ . Եկ . Դար . ԺՔ .  
Ե ԺՔ . Գլ . ա . յօդ . 11 . հատ . 7 . Ել . 31 :

## ՃՂ

## ՈՆՈՐԻՌՈՍ Դ

Ա. Տ. 1285. և Խայութը Արքա Համբաւի 15,  
և Անդրանիկոսի 2:

1510. Ոնորիստ հռովմայեցի յառաջագոյն  
անուանեալ Յակովը Սարելլոս՝ յաջորդեաց 'ի  
Բերուղիա զՄարտինոս պատ յաթոռ քահա-  
նայապետութեան 'ի չորս նոնայց ապրիլի յա-  
մին 1285. և անտի Եկատորիեալ 'ի հռովմ ձեռ-  
նադրեցաւ գլուխ եկեղեցւոյ՝ անուանակոչեալ  
Ոնորիստ Դ: Որ և փոյթ յանձին կալաւ կարի  
իմն խնամով զօրացուցանել զհօտ իւր: Մաք-  
րեաց զմիջակս եկեղեցւոյ յաւազակաց պինդ  
կալաւ զազատութիւնս եկեղեցւոյ ընդգէմ իշ-  
խանաւորաց զորս հաստակեաց օրինաց: Կա-  
րի նախանձաւոր գտաւ գտրծուցանել զանհա-  
ւատու սորին վաճն սահմանեաց հիմնել 'ի ֆա-  
րիզ դպրոց սակս ուսանելց զարևելեան լեզուս  
ընդ արաբականին: Որպէս զի յաջող լիցի խո-  
նարհել զՄարտինոս և զայլ հերձուածողս 'ի  
Տշմարտութիւն: Զկրօնս կարմեղեան անդրէն  
հաստատեաց որոց և առաքեաց բարեձև սքեմ  
'ի սակս աւելի իմն պարկեշտութեան զոր զգե-  
նուն նոքա ցարդ զի յառաջ ունէին զսպիտակ  
աղաբազմոն ըստ նմանութեան Եղիսայի մարդա-  
րէին: Սմին հանդոյն հաստատեաց զկարգ ա-  
նապատաւորաց սրբոյն Օգոստինոսի: Խստիւ  
գատապարտեաց զեորահնար աղանդ մուրացիկ  
հերձուածողաց ձայնողաց զինքեանս 'ի կարգե-  
Առաքելոց (777): Հուսկ յետոյ զկնի երկուց

ամաց իշխանութեան իւրոյ վոխեցաւ առ տէր  
յերեք ապլիլի յամին 1287<sup>1:</sup>

## ՃԱԱ

### ՆԻԿՈՂԱՅՈՍ Դ

Ա. Տ. 1288, և խայերսութեան Հոռոմութեան 16,  
և Անդրբնիսսի 5 :

1511. Յեա մահուան Ռոռիսսի յերկարեցաւ ընտրութիւն յաջորդի նորա աւելի քան զամփսս տասն : Եւ յետ այնորիկ ընտրեցաւ յութե կաղանդացն մարտի յամին 1288 Հերոնիմոս Դի նեսս տսկուլացի 'ի գաւառէն Անդոնայ, ականուոր վարդապետ աստուածաբանութեան և փիլիսոփայ, կարդինալ եպիսկոպոս Պալեստրինու . որ եղեւ առաջին պատ 'ի կարգէ սրբոյն Ջրանձիսկոսի : Երկիցո հրաժարեցաւ 'ի ծայրագոյն պատուոյ անտի . այլ ապա զիշաւ խրնդուածոց ոլատկառելի աւագանոյն : Եւ յետ երկուց աւուրց մեծաւ փառօք պատկեցաւ քահանայապետ 'ի տաճարի սրբոյն Պետրոսի զանուն առեալ 'Նիկողայոսի Գր պապին, յորմէ ընկալեալ եր զպատիւ կարդինալութեան : Ընդհաստատելն ձեռն էարկ բարեկարգել զեկեղեցին և խաղաղել զիտալիա միանդամայն, կապեալ զիշխանս 'ի սէր և 'ի միաբանութիւն : Յորդուեաց զծերակոյտն Վենետիկեցոց հաւանել վճռել, զի քննիչք հաւատոյ լիցին 'ի հասարակապետութեան նոցա և հայթայթեոցեն զպէտա

1 Հոռոմ . և Աբոն . յամ 1285—1287: Պառակ.  
լուգ . գիշ + 24 . պատ . էկ . գլ . ծթ : Սուրբ Անդրեան . 'ի ծայրան . 5 . 5 . կ . 20 . գլ . Է :

'ի հասարակաց գանձարանեւ : Ըստ մեծաջան  
փութոյ իւրոյ հասաւառելոյ զհաււասացեալս 'ի  
ճշմարտութեան , առաքեաց յայլեայլ ազգս և  
'ի լեզուս զերեւելի երեւելի քարոզս աւետարա-  
նին : Սոյնապէս իննամուտ եղեւ ազատել զՊաղես-  
տին 'ի ձեռաց անհաւատից՝ օդնելով արեւելեան  
քրիստոնէից :

Իբրև ընկալաւ թուղթ սիրոյ 'ի թագաւորէն  
Հայոց Հեթմոյ Բ , գրեաց առ նա պատասխա-  
նի և առ այլ աւագ իշխանս Հայոց յորդորելով  
զնոսա հաստատուն կալ յուղղութեան և 'ի  
միութեան ընդ եկեղեցւոյն Հռովմայ : Այլ  
իբրև ամիրայն Եգիպտոսի արձակեաց զորդի իւր  
Մէլլք Աշրաֆ 'ի վերայ ծովեղերեայ քաղաքոց  
երկրին Ասորւոց և Կիլիկիոյ , յորս տիրէին Լա-  
տինք և Հայք՝ Հեթում առաքեաց հրեշտակու-  
առ Կիկողայոս պապ հասուցանել նմա օդնու-  
թիւն : Պապն գրեաց վաղվաղակի թուղթ առ  
Փիլիպոս արքայ Գաղղիոյ և առ ամենայն քրիս-  
տոնեայս՝ շնորհելով նոցա զօրհնութիւն իւր , զի-  
հասցեն յօդնութիւն արքային Հեթմոյ : Որոց  
գիւղեալ Եդիպտոսսպաշարեցին զԱղեքսանդրիս :

Իսկ զկարուս Բ զանուանեալն Կղաւդոս՝  
պատկեաց արքայ Սիկելիոյ և Ասուղիայ այնու-  
ալայմանաւ , որով հայր նորա պարտական լեալ  
էր Կղեմայ պապին : Զեկամուտս Հռովմայ կե-  
սով չափ բաշխէր կարգինալաց , և կիսով չափ  
'ի պէտս իւր ծախէր : Յաստիճան գերակայու-  
թեան զարժանաւորս ևեթ բարձրացուցանէր :  
Ծնդ այն ժամանակս տեսեալ Սարմատացւոց  
զանմիաբանութիւն արեւելեան քրիստոնէից՝  
միահամուռ գիւղեցին 'ի Պաղեստին , առին զա-  
մուր քաղաքն Ակրի և զայլ տեղիս 'ի ձեռաց Լա-  
տինացւոց . ընդ որ մահուցափ վկտացաւ պապն  
Կիկողայոս :

Յայնմ ժամանակի յեօթն իդոստյն մայիսի  
յամին 1291, աներեւոյթ ձեռամբ հրեշտակաց  
փոխագրեցաւ տուն Աստուածամօրն՝ ի Նազա-  
րեթէ ՚ի Դաղմատիս ՚ի վերայ լեռնակին Դեր-  
սատայ մերձ ՚ի ծովի Աղրիական<sup>1</sup>։ Եւ մեծ հայ-  
րապեան միսիթարեալ ՚ի սքանչելեաց աստի՝ յետ  
տարւոյ միոյ փոխեցաւ առ աեր միով աւուրբ  
յառաջ քան զնոնայս ասղրիլի, կառավարեալ  
զեկեղեցին իմաստութեամբ և սրբութեամբ ամս  
ըորս և աւուրս քառասունելորս։ Սմա ընծայ-

1 Ասորի պառն Տիրամօրն։ յաճամ ընկաւու կող-  
ջոյն առնաման հրշապահի՝ նոյնողէս ՚ի հրեշտակաց ՚ո-  
խարբեցաւ ՚ի Դաղմատիս յիստալիս ՚ի պատու Շեհ-  
1294. Նախ յանպատոին Ունկանագովնաց։ առա զինի  
ամսոց մերձեցեալ ՚ի ուղագ անդր հաղար փայլիս  
հասակ յետոյ եկաց ՚ի Լորետո կամ ՚ի Լաւրեդուն աս-  
ղագ Անգոնաց։ Յորոց վերայ յետոյ կառաւուցաւ հայա-  
կապ նիւղեցին։ Ն սուրբ պառնն կայ ՚ի ներփաց մեծի  
գիրելին աղիստակեց շինեալ։ Բայց արգատուուց  
պատուալ ընտիր մարմարին գարցամբ և մարգարա-  
գուց արյանօց մարգարեից և սիբիլացից։ Եւ-  
իսյունաթիւն պառնն և գառաւունելիքն և լոկացքն։ Սոյ-  
նութիւնն առնապատուն, իսկ բարձրութիւնն գառն և վեց-  
սուի նըիս դրուտուն։ ՚ի ներփաց կողմն և վառաւունն,  
և յերիսու մասունն բաժանի պառնն անջրալիք ՚ի մեջ  
առնելով սեղան, յորոց վերայ մարզին սուրբ պատու-  
ցագիւ առնի երկաս լուսամուպս։ յառաւուողն և ՚ի  
մակագուն։ ի ներփաց կողմն և արյան Աստուածամօրն  
առնելով ՚ի գրին պՅիսուն։ Անթիւ էին ՚ի նմա յա-  
ռաջ գան զմուու գառզուիացաց՝ առգին զարբու և ա-  
նօլիւ սուի զընուն և արծան եղելու ցեռուալ գոհարօց  
և մարգարաց։ Ուրանօց գոյ ասսուեղին հանդէց մի  
Աստուածամօրնին և սիսութեղ իսեղեցն պահեալու ՚ի  
համբայը յարգութեալ առ հաստափացը լու։

ին ողեսպէս մատեանք, յորս եւեելի է Պատմութիւն՝ ի վերայ սուրբ գրոց և վարդապէտին վը Ճ. ո. ո. :

## ՃՌԲ

## Ա. ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍ Ե

Ա. Տ. 1294. և կայսերական Ապութոսի 3,  
և Առաքակիոսի 11,

1512. Զկնի մահուան Կիկողայոսի գումարեցան կարդինալք 'ի Բերուզիա յընարութիւննորոյ պապին . և յետ երկուց ամաց և երից ամսոց՝ զի չմիաբանելին ի կարծիս՝ ընտրեցին զՊետրոս Մորոնեան մողիսացի բնենեդիկատեան կրօնաւոր՝ զհանդիսացեալն սրբութեամբ 'ի Ճգնաւորական վարս 'ի հինգ յուլիսի յամին 1294. և զվճիռ ընտրութեանն ետուն 'ի Ճեսս միոյ 'ի կարդինալաց, և երկու եպիսկոպոսք ընդ. նմա և այլք 'ի նոտարաց, տանել անյատաղ 'ի վանս նորա և իմացուցանել նմա : Խբրե չոքան դեսպանիքն, հիացան՝ տեսեալ զկերպարանս առնն Աստուծոյ հիւծեալ 'ի Ճգնողական վարուց . անկան առաջի նորա 'ի համբոյք ստից, ցուցին զվճիռ ժողովոյն և աղաչեցին զնա մի հրաժարելոր ինչ 'ի վերուստ սահմանեցաւ : Կորա այլ յայլ մէ եղեալ՝ եկաց յաղսթս ընդ նոսա իբր և թէ խօրհուրդ հարցանել 'ի տետունէ . և ապա ասէ ցնոսա . Զեմ' հակառակ կամացն Աստուծոյ, և

2 Հայ . և Աբոն . յահն 1288 = 1294 : Առ Վարդին գոստ յահն 1589 : Ծառն . 'ի վարս Աշէ + . Դի : Պատմ . սրբակ . պահմ . գլ . ա . ծառ . 5 : Պէտրոս Աշշէ + . Ամարդոր . Հափ . 1 . Դրսափ . 5 : Պափմ . Հայ . Գիշ + 5 . Գլ . Ա՛ :

հպատակեմէ կեզեցւոյ, այլ Երկնչիմ՝ գուցէ թերի գտանիցիմ՝ ի կարեոր պաշտաման նորա : Յետ այնորիկ առեալ տանէին զնայլ գուցւիւս + զի անդ կամեցաւ ձեռնադրիւ . և 'ի համբաւոյ որբութեան նորա լցան խռնեցան ժողովուրդ անթիւ ընդ ամենայն փողոցս ճանապարհաց տեսանել զքահանայապեան սուրբ հեծեալ՝ ի յաւանակորպէս ինքն կամեցաւ առ խռնարհութեան , հանդելմ աղքատին զգեստուքն . աչք արտասուալից և դէմք՝ ի խռնարհ . և յառաջընթաց երթային ուղեգնացութեան նորա երկութագաւորքն Սիկիլիոյ և Հունգարիոյ : Այսուօրինակաւ եհաս նա անդր , և ձեռնադրեցաւ և անուանեցաւ Կեզեստիանոս Ե :

Երիս հրովարտակս եհան առ անփոփոխ պահելոյ զօրինադրութիւն Գրիգորի Ճպապին՝ որ վասն՝ ի փակարանի ընտրելոյ կարդինալաց զնորքահանայապետ (1504) : Եւ հաստատեաց ըշկարգն զոր իւր եր սահմանեալ՝ ի լեառն Մասելու . որ և յետոյ յանուն նորա կոչեցաւ Կեզեստինեան կարգ : Կարգեաց երկուտասան գործակալս՝ ի կարգինալաց՝ գերակատարս խմասութեամբ և լաւութեամբ :

Արդ երանելիս այս՝ ի կրօնուորական կենաց անցեալ՝ ի քահանայապետութիւն ամաց եօթասուն և երկուց , սովորեալընդ կանոնօք և հոգեւոր մատծութեանց պահապետեալ հանապաղ , անփորձ ամեննեին աշխարհի խարդախութեանց և անծանօթ՝ ի ճշգրիտ ընարութիւնընդ անարժան և ընդ արժանաւոր այր առ՝ ի պատմիւ աւագութեան , և յառաջին օրէ անտի ընարութեանն երկիւզիւ պաշարեալ՝ թէ մի՛ վըիպակ ինչ՝ ի մեծի պաշտամանն գործիցէ , յուշ ածէր թէ յոր քաղցը կենաց զբկեալ՝ ի յոյզս և 'ի շփոթս ծանր պաշտաման պնդեցաւ , վասն որոյ քան՝ ի

Հոռվմ զնէ էապօլիսը նադեաց բնականալ, սկարա-  
պեալ միւտ ընդ երկուց կրօնակցաց իւրոց յաղօթս  
և 'ի հոգեսոր տեսութիւնս, և զարաաքին կարեսոր  
արարոց յանձն արարեալ 'ի ձեռս կարգինալաց,  
մանաւանդ կարգինալին բենեդիկտոսի կայետա-  
նոսի, որ ապա յաջորդեաց զնա:

Յետ իբր հինգ ամսոց քահանայապետու-  
թեան իւրոց իբրեւ կարի իմն տագնապէր յեր-  
կիւղէ խղճի մաացն, և յիշէր զքաղցր զառանձ-  
նական կեանսն, լայր և ողբայր հառաջմամբ և  
ասէր. Վայ ինձ, առ 'ի խորս գահավէժ առնե-  
լս զիս բարձրացոյց զանձն իմ Աստուած. զի-  
արդ հեռի եմ 'ի կատարելութեանց, որոց եր-  
թեմն մերձաւոր զանձնս կարծէի. եթէ զօրու-  
թիւն մեծ կայ 'ի ձեռին խմում 'ի վերայ ան-  
ձանց այլոց, որպէս ասնն, ընդէլ չփութամ  
զիւժ զիիրկութիւնն և զանձն յապահովի կացուցա-  
նել: Եւ խորհեալ 'ի միտս իւր՝ եթէ իցէ հնար  
քահանայապետի հրաժարել յաթոռոյն, և լի-  
ցի արդեօք ընդունելի կարգինալաց, կոչեաց զնո-  
սս 'ի ժողով, և անկեղծ մտօք մի առ մի եգ ա-  
ռաջի նոցա զոր խորհերն, ոչ միայն զառաջին  
կեանս կրօնաւորութեանն որում յանկայր, այլ  
և զի 'ի պատճառս ծերութեանն և առ պակա-  
սութեան կարեսոր ձրից, ամենեին անընդունակ  
տաէր զանձն այնպիսում իշխանութեան: Ար-  
ձակեցաւ ժողովն, և երկուստեք յաղօթս ա-  
պաւինեցան. և յետ աւուրց ինչ դարձեալ կո-  
չեաց զնոսա 'ի ժողով. և ինքն քահանայապետա-  
կան զգեատուք ելև բազմեցաւ 'ի գահոյս, պա-  
տուիրեաց զի լուեսցեն. և ընթերցաւ 'ի թղթի  
'ի լուր ամենեցուն' թէ ինքն վասն խոնարհու-  
թեան և առանձնասիրութեան, վասն անարատ  
պահելոյց զիսիղճ մտաց իւրոց, և վասն տկարու-  
թեան մարմնոյն և անհմտութեանն դժպատե՛

գործոց ժողովը եան, և տու 'ի վերստին դարձ առնելոյ 'ի ցանկալի կեանս կրօնաւորական ճգնութեանց, հրաժարի ինքնակամ, անբռնա դատ մտօք և անհրաժեշտ հաստատութեամբ յիշմանութենէ քահանայապետութեան, թողեալ պատկառելի ժողովոյն զիշմանութիւնըն արելոյ զայլոք գլուխ ընդհանուր եկեղեցւոյ: Զայս ասացեալ էջ'ի գահոյիցն և առանձնացաւ յայլսենեակ: Իսկ կարդինալըն յաղթեալ յան դրդուելի հաստատութենէ մտացն՝ ընկալան 'ի խորհրդի զհրաժեշտ նորա. և իրբե կոչեցին զնա 'ի ներքս, տեսեալ զնա գծուծ և աղքատին զգեստուք կրօնին իւրոյ, յարտասուս հարեալ լացին ամենեքեան: Տեսարան՝ արդարեւ գերազանց, ընդ որ հիացաւ աշխարհ ամենայն: Ասյս պէս յետ կալոյ յիշմանութեանն ամիսս հինգ և աւուրս ութ՝ հրաժարեցաւ այրն, եթող զայքայ ակերպ փոտուաւորութիւնն և առանձնացաւ յիւրում մենարանի, ժուժեկալեալ 'ի խոշոր զգեստը և 'ի կերպակուրս:

Իսկ որ յաջորդեացն զնա Աղնիփակիոս Ռ. երկուցեալ թէ մի' գուցէ արք խոռովարք երթեալ փոխսեսցեն զմիտսնորա և հաւանեցուցեալ վերստին գիցեն յաթու հայրապետութեան, և այնու հերձուած մեծ յեկեղեցւոջ ծագիցի, և արատեսցի համբաւ սրբութեան առնեն, եհան զնա 'ի միայնարանէն և առաքեաց եդյամբոցի Փումոնի 'ի Կամագանիա, ոչ իբրե 'ի բանտի, այլ 'ի մեծի պատուի կալեալզնա: Անդ այլն Աստուծոյ կեզեստիանոս սքանչելի համբերութեամբ և անտրատում անապազատու ածայնովք պարարեալ՝ 'ի չորեքտասաան կտղանդացն յունիսի յամին 1296 անթերի կատարեալ զամենայն հոդեոր պատրաստութիւնն նախածանօթ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս, և թաղեցաւ

'ի գիրենատիա' ի մենաստան կարգին իւրոյ Եւ' ի  
յաճախել պահչել եաց 'ի տաղանենորա, Կղե-  
մէս Ե (1515) կարգեաց զնա 'ի գասա սրբոց <sup>1:</sup>

## ՃՆԳ

ՎԱՐՆԻՓԱԿԻՌՈՍ Է ԿԱՄ Ը

Ա. Տ. 1294, և կայսերական Ապուժակի 3,  
և Անդրբնիկոսի 11 :

1515. Ի տասներորդում աւուր յետ հրա-  
ժեշտ տալց կեղեստիանոսի Ե կարգինալք հա-  
մախմբեալք 'ի Նեապօլս մտին 'ի փակարանն ըստ  
կանոնադրութեան Գ. քիդորի Ժ., և 'ի վերջին  
աւուր յինն կաղանդացն յունիվ. ընտրեցին զբե-  
նեղիկտոս կայետանոս գերահռչակ կարգի-  
նալն անագնիացի : Որոյ եկեալանաի 'ի Հռովմ,  
ձեռնադրեցաւ քահանայապետ 'ի չորս նոնայց  
յունիվ. յամին 1295. առեալ դանունս վոնի-  
փակիոս և այլ ճշախւ Է պարտի լինել, զի զվո-  
նիփակիոս Է գերապատ 'ի բաց եգալք 'ի կար-  
գեն :

Արդ հայրապետս այս արիասիրտ 'ի սրբոյն  
Անտոնինոսէ կոչեցեալ այր խոհական, գիտուն  
և մեծանձն և նախանձայոյզ և պահպանիչ Ե-

1 Համայ. և Աբոն. յամ 1294: Յակով Արեգ. Գիր+  
2. Գլ. + Փ. առ Բանլ. + հա. 4. Տայ. Եր. 453: Պէտ+  
Ամեագ. Գիր+ 2. Գլ. + Ճա: Քրիստիան. Լուբ. յլ-  
ոին. Գլ. Ք. Եր. 48. Տ. 4: Ա. Անդր. Ճամ. 5.  
3. Վլր. 20. Գլ. 8: Բնել. առ Առարապոր. հա.  
1: Պաղոյ. Լուգ. պապյ. Եկ. Գիր+ 24. Գլ. ԱՌ: Պէտ+  
Գերդի. հա. 15. յամ 1294: Պէտապուդել. Գիր+  
41. համար 239=243:

կեղեցական իրաւանց, ընդ հաստատիլու գուն  
գործեաց բարեկարգել զդործա եկեղեցւոյ, ար-  
կեալ ընդ ծանր գատակնքով զորս յանդգնին  
մասել կարդինալաց որոց և շնորհեաց հան-  
գերձս ծիրանիս և բազում ազատութիւնս հան-  
գերձ վճռով: Պատառելու ետ տօնել յեկեղեցւով  
զտօնս առաքելոց, աւետարանչոց, և Գրիգորի  
պատին, Օդ ոստինոսի, Ամբրոսիոսի և Հերոնի-  
մոսի (886): Գեղեցիկ խորհրդով սահմանա-  
գրեաց յամի 1300 զյորելեան հանդէսն հարիւր-  
ամեան ըստ նմանութեան յիսնամեայ յորելի-  
նի 'ի հին օրէնս որ է ամ թողութեան և նորո-  
գութեան շնորհաց 'ի նոր օրէնս ընդ լիակատար  
ներողութեան արգետամբ Գրիգորոսի և սրբոց  
'ի ձեռն ճշմարիտ ապաշխարութեան հանգերձ  
այցելութեամբ սրբազնն տեղեաց և գերեզմա-  
նաց սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի <sup>1</sup>:  
Քննեալ ապա զգործու և զօքանչելի վարս Լու-  
դովիկոսի թարքային Գաղղիոյ՝ դասեաց 'ի կար-  
դրա սրբոց: Խոկ Յակովայ արքային Սրադոնիոյ  
շնորհեաց վկազմու Սարգենիայ և Կորակիայ 'ի  
մշանջենաւոր ժառանգութիւն: Սրար կանոնս  
և սահմանո 'ի հրահանգս եկեղեցականաց. և զա-

1 Զառագինն ասս 'ի վարս սուրբն լու այս հանդես  
յաբելինի . սակայն նույն նէ գոյց և յառաջ յէ իէն-  
ցուց սովորութիւն բաշխելոյ ուշով նէրուս-  
թիւն . նէպէս Անդիտաինու սահմանն ալ ժամանակա-  
կանառարեաց . որով և յամենացն աւելացրեաց անդը  
և առաջան սակագաւորք, մինչև ծովանալ Հոռվայ  
'ի գրիպոնեիո: Զինի նորա յաջորդ + սահմանապէտ  
պէս ալ ունեցելու շահս, հուշակելին ուշով նէրուն շի-  
շտանութիւր յիսներբդ ամի, ապա յէրևառանելիս,  
ապա 'ի գուանեհինք ամս, սրբէս յարդ առանեն . պէ-  
րի շնչացու և 'ի իարդիս :

մենայն վճիռոս և կանոնս 'ի մի հաւաքետը՝ յօ-  
դեաց ընդ հնդամատեան կանոնագիրս Գրիգորի  
թ պապին . անուանեալ զայն վեցերորդ կանո-  
նագիրը (1498) : Եւ զի բարձրացոյց 'ի պատիւ-  
կարդինալութեան ոչ միայն զհօրեղբայր իւր ,  
այլ և զերկոսին եղբօրորդիս իւր , և յաղգայնոցն  
զոմանս յեպիսկոպոսութիւնն և զոմանս 'ի կոմ-  
սութիւնն վերակարգեաց , նմին իրի ոչ գովեցաւ 'ի  
յաշաղկոտաց : Յետ այնորիկ ծագեցաւ հակա-  
ռակութիւնն մեծ ընդ Կիբելեանց և ընդ կողմնակ-  
ցաց նոցին Կողոնացւոց և արքեպիսկոպոսին  
գենուայ . որոյ եկեալ յաւուր մօխրոցի տուա-  
ջի նորա առնուլ զմնիսիր , նա փոխանակ ցանելոյ  
'ի գլուխն՝ արկ յաջս նորա ասելով . Յիշեա զի  
Կիբելինոս , և ընդ Կիբելեանց 'ի մօխրոց դառնա-  
լոց ես : Խակ զբամբասոցս իւր զՅակովոս և զեղ-  
բօրորդի նորա զՊետրոս Կողոնացի կարդինալս  
մերժեաց յիշսանութենէ աւագութեան հան-  
գերձ հրովարատկաւ :

Ընկալաւ պատին թուղթս յարքայէն Հայոց  
Ամբատայ և 'ի Գրիգորէ կաթողիկոսէ , որք խո-  
նարհ հպատակութեամբ խնդրեին 'ի նմանէ զօդ-  
նութիւնն ընդդէմ այլազգեաց : Եւ պատին գրեալ  
առ նոսա պատասխանի խոստանայ կատարել  
զիսնդիր նոցին : Եւ ինքն ձեռն 'ի գործ արար հա-  
նել նոր խաչակիր զօրս և թափել զԵրուսաղէմ  
'ի ձեռաց անհաւատից : Վասն որոյ առաքեաց  
զեպիսկոպոսն Պամինեսի տու արքայն Գաղղիա-  
ցւոց ՓիլիպպոսԳեղեցիկ . բայց եպիսկոպոսն այն  
ինչ առանց ակնածութեան թախանձանօք սահ-  
պէր զնա յայն գործ կարեւոր , ցասուցեալ ար-  
քայի արկ զնա 'ի բանտ : Ընդ որ կարի զայրա-  
ցեալ պապին մշղապարտ ցուցանէօ զարքայն  
անվաւեալ 'ի նուիրակ իւր . և ընդ բանիւ արա-  
րէալ զնա զսկեաց և յիրաւանց թագաւորութե :

Յայնժամ՝ Երիտասարդ ոմն յանդուգն անուն  
գուլիելմոս Կոկարետոս՝ կուսակից արքայի մի-  
տցեալընդ Սդիարայ Կողմնայ և ընդ ոմանց Կո-  
ղոնացոց հակառակորդաց պապին, և մաեալ  
յԱնագնիա՝ ուր էր պապն, յանակնկալ ժամու-  
կալան վեա և եղին 'ի պահեստի՝ կշտամբեալե-  
եթ վասն բանագրելցն զարքայ: Այլզինի երից  
աւուրց թողին զնա ազատ, և փութացեալը-  
դաւնա 'ի Հռովմ: Սակայն կարեվէր խոցեալ  
ընդ անարդութիւնն անձինն՝ յետ երեսուննեհինդ  
աւուրց մահացաւ սաստիկ ջերմամբ 'ի հինգ ի-  
դոսացն հոկ. յամին 1303, կացեալ յիշանու-  
թեան ամս ութ, ամիսս ինն և աւուրց ութու-  
տասն. որոյ մարմին յետ երեքհարիւր ամաց  
դատաւ ամբողջ<sup>1:</sup>

1 Հայոյ. և Աբան. յամին 1294=1303: Սուրբ  
Անդրեանին. Ճամ. 5. 3. Վեց. 20. Գլ. Շ: Կիւին.  
'ի Հարուսուրա. հա. 2. Եր 297: Սուրբ Իսիդոր.  
Գիւր+5. Գլ. Լե: Յառա. Ամուսն. Գիւր+15. Գլ.  
Շ: Թաղամա. յշ. Հարուս. Հիւ և նոր Եկեղ. 5. 3.  
Գիւր+1. Գլ. Խիֆ: Պօղոս Եկեղ. Գիւր+8. Եր 171:  
Բաբեկո. յայ. 19. Եր 477: Լամբեր. Գիւր+4.  
5. 1. Գլ. Լ. 7: Պատպահ. Հայ. հապ. 3. Եր 296:

ԴԵՊՐԵՏԱՑԱՎՈՐԻ ԴԱՄԱԲԻՆ

Ա. Տ.

1202. Յովհաննէս ի նստի կաթողիկոս . և  
Ճինկիզ խան թաթարաց տիրապետէ :
1203. Դաւիթ կաթողիկոս յաջորդէ զՅով-  
հաննէս :
1204. Առօւմն կոստանդինուպոլսոյ 'ի Լատի-  
նաց :
1208. Սկիզբն կարգին Ֆրանչիսկէանց :
1216. Սուրբ Դոմինիկոս հիմնադիր կարգին  
քարոզչաց ծաղկի :
1218. Սուրբ Անտոն Պատաւիոնացի հանդի-  
սանայ յեկեղեցւոջ :
1220. Կոստանդին Ա կաթողիկոս առաջնորդէ :
1224. Զապէլթագուհի պատկի ընդ չեթմոյ:
1237. Եարոսլաւ Բ աթրէ 'ի Ռուսաստան :
1240. Մեծն Ալպերտ, Մեծն Վարդան և Կի-  
րակոս ծաղկին :
1252. Սուրբ Թուլմաս և Բոնավենտուրա ծաղ-  
կին :
1268. Յակովը Ա կլայեցի կաթողիկոս կարգի :
1270. Վասիլ պայազատէ 'ի Մոսկովս :
1272. Նշխարը մեծին Կերսէսի յայտնին :
1278. Յովհան Երզնկացի կամ ծործորեցի  
ծաղկի :
1281. Մահ մեծին Ալպերախի :
1287. Կոստանդին Բ կաթողիկոս յաջորդէ :
1290. Ստեփանոս Գ կաթողիկոս հաստատի :
1293. Գրիգոր Է անաւարդեցի նասի կաթողի-  
կոս և փոխէ զաթոռն 'ի Սիս :
- Ընդ այն ժամանակս զկնի թագաւորութեան  
Լեռնի ամսքանեմի Խուլեշի փոքր կարգի վոխ-

արքոյ յանախոք : Զկնի Լեւոնի Զատկել բա-  
րեսկաշտ թագուհի յաջորդէ . ապա Փիլիպպոս,  
և ապա Հեթում պատկեալ ընդ Զատկելսց :  
Զկնի նորա թագաւորէ Լեւոն Գ . ապա Հե-  
թում Բ . յետոյ թորոս Գ . ապա Սմբատ . ապա  
Կոստանդին, և ապա Հեթում Բ . կրկին անդամ՝  
թագաւորէ յամի 1500 :

# ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ ԴԱՐ

## ՃՌԴԻ

ԵՐԱՆԵԼԻ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ժ կամ ԺԱ  
Ա. Տ. 1503, և կոյսերունեան Ալոեցի Ա 5,  
և Անդրոնիկոսի 20:

1514. **Ա**ԵՆԵԴԻԿՏՈՍ լոմբարդացի 'ի Դրի-  
վիզէ, որդի Բողասոսի դպրի կամ ըստ ոմանց  
հովուի միոյ, յառաջնմէ անուանակոչեալ 'նի-  
կողայոս՝ վարժիչ մաննկանց 'ի Վենետիկ 'ի կարգե-  
քարողաց, ընդհանուր առաջնորդ նոցա և ապա  
կարգինալ, յաջորդէ զՎոնիվակիոս Ը անմիջա-  
պէս զկնի մահուան նորա 'ի մետասան կաղան-  
դացն նոյ. յամին 1503: Քահանայապետա այս  
ներհուն 'ի բարձր գիտութիւնո, և ընարու-  
թեանն կարի շատ հակառակ եկաց, և մեծաւ  
գժուարութեամբ յանձն էառ զհայրապետու-  
թիւնն: Այնչափ էր նորա խոնարհ համեստու-  
թիւնն և քաղցրութիւնն, զի մայր նորա եկեալ 'ի  
ներուղիա տեսանելզնա, նա իբրև ետես զմայրն  
պլանեալ 'ի ծանրադին հանգերձո, ոչ կամցաւ  
յերեսս անդամ հայել և ճանաչել զնտ, ասելով  
թէ զմայր իմ յաղքատին զգեստս և ոչ 'ի ծան-  
րագինս ճանաչեմ: Եւ իբրև սովորական զգես-  
տուք ներկայացաւ մայրն որդւոյն, պատուասի-  
րեցաւ 'ի նմանէ մեծարանօք առաջի աւագացն:

Խնամակալ եղե հայրապետն հաստատել 'ի  
սիրտս ամենեցուն զսէր և զիսաղաղութիւնն: Ամին  
իրի զսարտուցեալս յառուրց անտի նախորդին  
իւրոյ միացոյց 'ի փարախ եկեղեցւոյ զՅակով

բոս և զՊեարոս կողոնացիս ած յառաջին պատիւ եկեղեց ցական աւագութեան։ Անհետ ալար իմաստութեամբ զհակառակութիւնս, որ ՚ի մէջ արքային Գաղղըոյ Փիլիպպոսի և Վոնիփակիոսի ՚ի զղջումն ածեալ զորքայն՝ շնորհեաց ՚նման զնախկին զաղատութիւնս, յօրմէ զրկեալ էր զետնախորդ իւր : Սակայն ոչ եթող անպատճառ զՄդիարտ Կողոնա և զԳութիւնութեամսութիւն դլաւորացն անիրաւելոց ՚ի Վոնիփակիոս ը (1515)։ զորսդատեալ յառաքելական ատենի գատառարաեաց : Եբարձ զվեճն ՚ի մէջ գզերց և միանձանց յաղագս խորհրդական խոստվանութեան, վճռելով թէ չէ հարկ միւսանդամ կրկնել զիստառովանութիւնն առաջի ժողովրդապետին զմիանդամ արարեալն առ միանձուն (1419)։ Հաստատեաց և զկարգն պաշտօնեից Աստուածածնի : Բարձրացոյց ՚ի սպատիւ կարգինալու թեան զվեց երևելի առաջնորդս արդիւնաւորս յեկեղեցւոջ : Ոչ զոք ամբարձ ՚ի սպատիւ ինչ առանց արդեանց, թէ և միշնորդ էւալ էին վասն այնպիսէաց արքոյազունք :

Այնուհետև խնամ կալաւ աղատել զՊաղետն միտրանեաց նախ զիշխանս և զթագաւորս . և զի յօլով գանձուց պէտս ունէր դօրծն այն, հարկահանս առաքեաց յամենայն տէրութիւնն հաւաքել զառւրս և զտասանորդս ՚ի կալուածոց, ևս և ՚ի սեղանաւորաց եկեղեցւոյն հռովմայ : Ի գումարէ աստի ետ հոգալ ըղպիտոյս զօրաց, և միանդամայն նախաստամատոյց լինէր խաչակիր պատերազմողաց յարեւելս ընդ Սարակինոսաց : Այլ մինչդեռ զայտօրինակ առաքինանայր ամենայն շանիւք երջանիկն ՚ի հայրապետս հրանելին բենեդիկտոս՝ արքուցին ՚նմադել մահու, որպէս ասեն, և վոխեցաւ ՚առ առէր միով աւուրբ յառաջ քան զնոնայս յուժ-

սի յամին 1504 ամաց վաթսունեցրից, զեկավաւեալ զեկեղեցին սրբութեամբ ամիսս ութ և առուրս եօթնետաան . իսկ մարմին նորա ամիտովինցաւ 'ի Բերուզիա յեկեղեցւոչ քարոզչաց : Եւ Աստուած փառաւորեաց զնա մեծամեծ սրան չելեօք՝ որք եղեն զկնի մահուան նորա . որ և պատուեցաւ 'ի կարդս երանելեաց : Եթող նա 'ի գտննան եկեղեցւոյ օգտակար դրուածս :

## ՃԿԵ

## ԿԴԵՄԵՍ Ե

Ա . Տ . 1505 , և կայսերական Աւուելով Ա7 ,  
և Անդրոնիկոսի 22 :

1515 . Այս ինչ կարդինալք միաբանեցան 'ի Բերուզիա ընտրել զնոր քահանայապետ , 'ի պատճառս Փիլիպոսի ալքային Գաղղիոյ տարածայնեցան յինքեանս : Քանզի մի մասն կամել ընտրել զիտալացի ոմն՝ զի մի ընդդէմ զինեսցի գործոց Վոնիփակիոսի Ը . իսկ միւս մասն թեւագրեալ յառքայէ անտի՝ ընտրեր դնել զոմն գաղղիացի պապ կուսակից նմին : Այլ հազեւուրեմն յետ մետասան ամսոց վերջ եղեւ տարածայնութեան 'ի ձեռն Կիկողայոսի կարդինալին այսպիսի իմն հնարագիտութեամբ : Իբրև զի խտալացի կարդինալք որոշեցին զերիս գաղղիացիս , և թողին զընարութիւնն 'ի կամո գաղղիացի կարդինալաց՝ ընտրել զմին յերից անտի : Եւ ա-

1 Հառայ . և Սբոն . յան 1503 : Բետոնար . Կառլաքոն . 'ի Հարս սուրա . հապ . 3 : Եգիտիոս Այդել . առ Այդիպորել . հապ . 2 : Սուրբ Անդոն . 5 . 3 . վեր . 20 . գլ . թ :

հա ընտրեցաւ քահանայապետ Բեռնարդոս  
կամ Բերտրանդոս Կութեան արքեպիսկոպոս  
Բուրգիկալայ ՚ի նոնայս յունիսի յամին 1505:  
Որոյ ընկալեալ ՚ի կարդինալաց զվաճիռ ընտրու-  
թեան իւրոյ ՚ի տասն կազմանդացն յուլիսի յա-  
պուշ կրթեցաւ թէ զիարդ եհամ նմա բարձրա-  
նալ յայն աստիճան: Ապա ՚ի հետեւալ աւուր  
հաստարակեցաղ դայն անուամբ Կղեմայ Ե. անտի  
եկաւ որեալ ՚ի Լուգդոն շնորհս կալաւ դարքայէ:  
Անդ ժողովեցան կարդինալք, արքայազունք և  
իշխանաւորք, և յեկեղեցւոջ սրբոյն Յուստո-  
սի պսակեցաւ պատ մեծաւ շքովյառաջիկայու-  
թեան արքայիցն Գաղղիոյ, Անդղիոյ և Արա-  
գոնիոյ յութուտասն կաղ. դեկ: Խոկ հանդէս  
թափորին որչափ շքեղ էր և փառաւոր, այն-  
չափ ախրագին եղել յանակնեալին դիպուածոյ:  
Քանզի մի որմն տեղւոյն յորոյ վերայ խռնեալ  
էր անթիւ բազմութիւն, առ հնութեանն յան-  
կարծ անկաւ և զբազումս՝ ի հանդիսականաց հա-  
րուածեաց. յորս գուքսն նրիտանիոյ մեռաւ,  
և երկու եղբարք արքային՝ ուրք երթային հետի-  
ոսս յերկուց կողմանց պապին կալեալ զերա-  
սանակ երիվարի նորա՝ վերաւորեցան. անդ ՚ի  
խռան անկեալ ՚ի գլխոյ հայրապետին թագին  
քահանայապետական՝ անհետ եղել կորկեհան  
մի անդին:

Յետ այնորիկ տեսնալ սրբազանին զխուվու-  
թիւնս խռալիոյ՝ որոշեաց մնալ ՚ի Գաղղիա. և  
թէլադրութեամբ արքային Փիլիպպոսի փոխ-  
դրեաց զառաքելականն աթոռն յԱւենիոն. անդ  
միաց գահն իբրև ամս եօթանասուն: Խոկ ինքն՝  
էր զի ՚ի Լուգդոն, և էր զի ՚ի Բուրգիկալա, այլ  
մեծաւ մասսամբ յԱւենիոն դեգերէր: Զարքայն  
Փիլիպպոս՝ որ երբեմն գատապարտեալ էր ՚ի վո-  
նիփակիոսէ, ընկալաւ ՚ի հաղորդութիւն եկեղե-

ցւոյ Ամենապրիստառնեայ անուամբ : Նոյնպէս և զկարդինալան Յակովոս և Պետրոս կողմացին զմերժեալը՝ ի նոյն պապէ՝ անդրէն հաստատեաց՝ ի կարդինալական պատիւ : Իսկ արքային Արագոնացւոց Յակովոս Բ շնորհեաց զթագաւորութիւն Սարդէնիոյ : Սակայն չեղե հնար գտանել բաւական փաստա մերժելոյ զյիշասակ և զգործս Վանիփակիոսի Ը, որպէս պահանջեր արքայն՝ այն զի՝ ի նմանէ բարձրացեալ էր յարքեպիսկոպոսութիւն :

Նզովեաց զԱնդրոնիկոս կայսր արեւելից սակս յամառելոցն՝ ի հերձուածս : Հաստատեաց զընտրութիւն Հենրիկոսի արքային Գերմանացւոց, և խոստացաւ գնել նմա թագ կայսերական՝ ի միջոցի երկուց ամաց : Կարգեաց զերիս կարդինալս՝ ի չռովմ, որը իբրև զծերակցյամ կառավարենին զժողովուրդն . և ՚ի 1512 հրամանաւ նորա օծին զարքայն Հենրիկոս կայսր չռովմայ՝ ի տօնի առաքելոցն Պետրոսի և Պօղոսի յեկեղեցին Լատերանու, նախ առեալ՝ ի նմանէ զերգումն հաւատարմութեան՝ հնազանդ և պաշապան լինելոյ միշտ առաքելական գահին :

Ի նմին Ժամանակի 1510ն արքայ Հայոց և կաթողիկոսն Գրիգոր Հրեշտակոս առաքեցին առ Կղեմէս պապի խնդրելով զօդնութիւն՝ ի նմանէ: Եւ պապն գրեաց առ նոստ պատասխանի և խոստացաւ զօրավիրու լինել՝ ի ձեռն քրիստոնեայ իշխանաց : Քննեաց զգործս և զպանչելիս Կեղեստիանոսի Ե պապին, և կարգեաց՝ ի դասս սրբոց (1512) :

Եւ յամին 1511 գումարեաց զընդհանուր ժողով՝ ի Վենետիկ Պաղպիոյ ընդդեմ Տաճարականաց, և ումանց ազանդաւորաց, ևս և վասն սուրբ Լրիրին (925): Ուր և հաստատեցան ստհմանաւդրութիւնք պապից՝ զոր ինքն՝ ի մի հաւաքեաց և

յանուն իւր կոչեցան Կղեմեան սահմանք : Եւ այնինչսակո օդափոխութեան գնայը 'ի Բուրդի կալա՝ մեռաւ 'ի Հռոբվէ-Մաւրէ յերկոտասան կաղանգացն մայիսի յամին 1514, կացեալ Եիշանութեան ամս ութ, ամիսս տասն և աւուրս հնդետասան . զորոյ զմարմինն տեղափոխեալ յ՛նդետասա տւան ամփոփեցին յեկեղեցին Առառածածածնի <sup>1:</sup>

## ՃՆՉ

### ՅՈՎՆԱՆԻՍ ԻՐ

Ա. 8. 1516 . . . . և կայսերական նահանջման  
Անդրանիկոսի 32 :

1516. Զենի մահուան Կղեմայ դարձեալ անկաւ տարածայնութիւն 'ի մէջ կարդինալաց 'ի պատճառս թագաւորացն Գաղղիոյ և 'Նէապոլսոյ, տեեալ աւելի քան զամս Երկուս : Յետ այնորիկ միաբան հաւանութեամբ ընտրեցին յաթու քահանայապետութեան զՅակովոսս Եւսեան եպիսկոպոս կարդինալ Պորտոսի յեօթնիդոսացն օգոս . յամին 1516: ՄԵծահամբաւ պապս այս ծնեալ 'ի Գահորս և ուսեալ 'ի Գաղղիա և յիտալիա Եկաց անուանի իրաւագետ և աստուածաբան : Թէպէտ փոքրահասակ Երև և 'ի նուաստ զարմէ, այլ 'ի գերազանց տալանդոյ մոացն և առաքինի վարուցն բարձրացաւ հետ զհետէ 'ի պատիւ աւագութեան : Զինախ եղի

1 Հուայ . և Աբոն . յամին 1505 = 1514: Բէտաւր կուիտ . 'ի Հարսսուրա հափ . 3 : Բարբուզ . Գիր + Էրաւ . էի . Գւ . Գ . Ղ : Պապմ . Հուայ . Գիր + 5 . Գւ . Լէ:

առենադպիր արքային՝ Նէտապօլսոյ և կոմս . ապա  
մաեալ յէ կեղեցական վիճակ՝ եղեւ եպիսկոպոս  
Փրեյուսայ , ապա արքեպիսկոպոս կազդինալ և  
պապ . որ և պատկեցաւ ՚ի Գաղղիա յեօթնի ի-  
դոսացն ուեպ : Ի սկզբան անդ բազմացոյց զկար-  
դինալս և զեպիսկոպոսունս ՚ի հաստատութիւն  
հաւատոյ : Զաթոռ Տոլոսայ ամբարձ յարքե-  
պիսկոպոսութիւն , կարգեալնմաս օդնական քա-  
ռեակ նոր եպիսկոպոսարանս : Այժիպէս յայլ և  
այլ քաղաքս Գաղղիոյ հաստատեաց եպիսկո-  
պոսարանս :

Ընդ այն ժամանակս վէճ՝ իմն անպիտան ծա-  
գեցու ՚ի մէջ եղբարց Փրանչիսկէան Մինորից ,  
թէ արդեօք զոր միանդամ ունէին նոքա յողոր-  
մութեանց՝ ինքեանց եթէ եկեղեցւոյնչ ռովմայ  
պատկանէր . զի՞նիկողայոս Գապապ միայն զգործ-  
ածութիւնն շնորհեալ էր և ոչ զաէրութիւն :  
Յովհաննէս պապ սաստեաց նոցա մի ՚ի չնչենոց  
խնդիրս սնտվաստակ լինել : Այլ նոցա լրբա-  
ցեալ միաբանեցան ընդ աշխարհականաց , սկսան  
քարոզել մոլորութիւնս ընդդէմ եկեղեցւոյն  
Հռովմայ և ուխտին՝ լժէ ինքեանք միայն իցեն  
եկեղեցի՝ կառավարեալ՝ ՚ի Քրիստոսէ . և կոչեցան  
նոքա Թրատիլէլլի , այսինքն փոքր եղբարք(847):  
Եւ Յովհաննէս պապ գասապարտեաց զիսսա :  
Սոցա զօրավիգն եղեւ Լուդովիկոս Բավարոս .  
զի յինքն յանեկուցեալ զբազումն ՚ի կայսրըն-  
արաց շանտահնար լիներ զբամբ ածել զկայսե-  
րութիւնն յետ չենքիկոսի կայսեր : Իսկ այլք  
զՓեդերիկոս կամէին ուստրիացի զորդի Վալպեր-  
արի Ա կայսեր : Յովհաննէս պապ միտձայնու-  
թեամբ բազմաց ընտրեաց զՓեդերիկոս իրրե օ-  
րինաւոր ժառանգ : Յայնժամ Լուդովիկոս ընդ-  
դէմարդարութեան զէն առեալ Հակառակի դե-  
րիկոսի՝ ձերբակալ արար զնա . և նա առ վշտին

Ել՝ի կենաց : Բնդ այս գժուարեալ Յովհաննու պատվին՝ընդ բանիւ արար զլուդովիկոս և զրկեաց վեա յիրաւանց կայսերութեան : Յայնժամ Լուդովիկոսի միաբանեալ ընդ ումանց որ ընդ ակամք հայեն՝ի պատվն՝չըքաւ յիտալիա . անդ զՊետրոս Կորբարիոս ոմն՝ի Մինորից անախ հաստատեալ գերապապ՝ անու ամբ Նիկողայոս ։ , օծաւ՝ի նմանէ կայսր Հռովմայ . որ իբրև վերսաթին նզովեցաւ՝ի Յովհաննէ պատեն . իշխաննք իտալիոյ և գերմանիոյ երեսս գարձուցին՝ի նմանէ , և նա փութով հեռացաւ յիտալիոյ : Իսկ գերապապն աճտապարեալ գիմեաց՝ի Գաղղիա , և չուան արկետլընդ պարանոց իւր՝ անկաւ յտոս Յովհաննու պատին և խնդրել ներել ծանր յանցանացն : Եւ նա ներեաց մեծ անձնութեամբ , եղեալ՝ի վերայ զապաշխարանո՝ի բանտի կատարել զամենայն աւուրս կենաց իւրոց :

Նա ինքն գատապարանաց զկարծիս Յովհաննու հու խողիագեան աստուած աբանի փարիզացւոյ , որ պնդեր թէ խորհրդական խոստովանութիւնն արարեալ միտնձանց՝կրկնելի իցէ և առաջի ժողովրդապետին . և ոչ իսկ քահանայապեան կարէ արձակել ասէր (1589) : Օրինագրեաց , զի զոն ամենասուրբ Երրորդութեան մեծահանդէս կատարեսցեն՝ի կիւրակէի զինի տօնի պենտեկոստէից . թէպէտ եկեղեցին Հռովմայ յառաջ ևս կատարեր զայն տօն , բայց այլով եղանակաւ : Եղ ներողութիւնս ազօթից վասն երեկոյեան զանդակահարութեան՝ի պատիւ աւետման կուսին : Նորոգ հաստատեաց զգերագոյն տաեան երկոտատան վարդապետաց զահին Հռովմայ : Եւ քանզի ուսումնասէր էր յոյժ և մեծարեր զուսումնականս , կառոյցե համալսարան՝ի հայրենիս իւր՝ի Գահորս : Արար հաւաքումն սահմանաց և կանոնաց անուամբ Եփսիուալչիոն :

այսինքն անսովոր, զոր և յաւել'ի կղեմեան կանոնագիրս :

Սա ինքն Յովհաննէս հայրապետ առաքեաց 'ի Հայս զգիրս սրբոյն թուվմայի 'ի վերայ եօթն խորհրդոց, զոր թարգմաննեաց Յովհաննէս երգընկացի : Գրեաց առ կաթողիկոսն և առ արքայն Հայոց թուղթս քաջալերութեան արիանալընդդէմ անհաւատից : Առաքեաց յարեւելս զբարդողոմէսս եպիսկոպոս քարոզել : Զիջեալ ապա ազաւանաց Յովհաննու քռնեցւոյն՝ ետ հրաման հաստատել զկարդ Դոմինիկեանց 'ի Հայաստանի:

Գրեալ էր Յովհաննէս պապ յառաջադոյն զերկուս ճառս սակս աստուածատեսութեան երանելաց, բայց մթին բանիւ ըստոճոյ հին հարց: Յոյր սակս առաքեաց զԳերարդոս նուիրակ իւր ընդ այլոց վարդապետաց քննել աստուածաբանից զկարծիս իւր 'ի համալսարանին Փարիզ: այլ խոչընդոտն եղեւ տրքայն Փիլիպպոս: Եւ իրու գիտաց եթէ մերձեալ է ժամանակ փոխման իւրոյ, կոչեաց առաջի իւր յերեկոյին զկարդինալս ընդ ոմանց վարդապետաց, և բայց արեալ զմթին բանս իւր ասաց . . . Հոգիք որոշեալք 'ի մարմնոյ և մաքրեալք 'ի մեղաց՝ լինին 'ի գըրախտի ընդ Յիառասի Քրիստոսի, և 'իդասս հրեշտակաց տեսողաց զԱստուած դէմ յանդիմաննոյ: Ապա զգրութիւնն իւր եդ ընդ դատաստանաւ եկեղեցւոյ: Խակ 'ի հետեւեալ աւուր ամենայն հոգեոր պատրաստութեամբ ել 'ի մարմնոյն 'ի վերին քահանայապետութիւնն աւուրբյառաջ քան զեռնայս դեկ: յամին 1554, լեալ իննսնամեայ և աւելի, և թաղեցաւ յԱւենիոն 'ի մեծի տաճարին, կայեալ 'ի հայրապետութեան ամսութուտամն, ամիսս չորս և աւուրս երկուս <sup>1:</sup>

1 Հունիս և Սբռն յամ 1516 = 1554: Մէկըլ

Եթող քսանեհինդ միլիոնս գահեկանաց , զոր գումարեալ էր սակս աղատութեան Երուսաղեմի . յորմէ առաքեալ էր Երեսուն հազար ոսկի առ արքայի հայոց Լեւոն յօդնութիւն , և կոնդակ առ կարողոս արքայ Գաղղիոյ օգնել նմա :

Ըստ վաղեմի պատմութեան՝ սոյն Յովհանեսի հաստատեաց յԵնիդալէ Դաւրիոյ զեպիս կոստոս , օրովէս և խնդրեալ էր Երիդանի արքայ՝ Հունդարաց առաքել անդ քարոզիչ , սմին իրի եպիսկոպոսն Կաֆայի կրէր և զտիստոս եպիսկոպոսութեան Գլծաց :

### ՃՂԵ

#### ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԲ

Ա. 8. 1554 . . . և խյուելութեան Անդրոն . դ 5:

1517. Բնենեդիկտոս տոլնվասացի յառաջնմէ անուանեալ Յակովըս Փուրիներիոս կամ Կովելոս արքայ կարդին Կիստերսականաց ընդ կանոնք սրբոյն Բնենեդիկտոսի՝ ընարեցաւ քահանայապետ առաքելական գահին յերեքատասան կաղանդացն յունվ . յամին 1554 . և 'ի հետևեալ ամի 'ի վեց խոսաց նոյն ամսոյ պստկեցաւ պապ յԱւենիոն , անուանեակոչեալ Բնենեդիկտոս վ. թ: Որդի էր սա առն սոսկականի կամ ազօրեսկանի՝ այլ բարեհանձար և առաքինի . զառաջնին եղե կրօնաւոր Սորբոնեան և վարդապետ աստուա-

գւ . կ . հա . 18 : Մահիլ . յառաջ . 'ի Գործ . Դար ն . ԲՆՆ . 122 : Կիակ . 'ի Վարդ սուրբ , հա . 2 . 'ի . 592 : Պատրիք . Հայ . հա . 3 . եր . 274 . 315 . 320 . 325 :

ծարանութեամն : Ապա արբայ , և սկիսկուղոս և  
կարդինալ 'ի 1327 . ձայնեալ Ապիտակ վասն  
միանձնական զգեստուցն : Այլ յետ մահուան  
Յովհաննու պապին մտեալ կարդինալաց 'ի փա-  
կարանն կամեին ընտրել պապ զեմպիսկոպոսն Պոր-  
տոսի , զի մի փոխեսցեն զգահն 'ի Հռովմ : Այլ  
նա կովելի աղնուամսութեամբ չէառ յանձն :  
Ապա իրքե բանք եղեն զկարդինալէն Յակովո-  
սէ , նոյնժամայն միաձայնեալ ամենեցուն հաս-  
տատեցին զիա : Թէակէտ և նա զանքաւականու-  
թիւն անձինն ցուցեալ աղաղակէր թէ չեմ  
ընդունակ այդմ պաշտաման , այլ չեղե լսելի :  
Այսմ այսպէս եղելոյ Բենեդիկտոս պապ 'ի վար-  
արկեալ զտաղանդ իւր ընտրոյս ձեռնամուխ եղե  
խաղաղել զհօտ իւր և հաստատել զեկեղեցին  
բարեկարգութեամբ : Կախ փորձեաց շահելզյա-  
մառեալն Լուդովիկոս Բավարոս . այլ իբրև չե-  
ղե կամագիւտ առ անսաստութեաննորա , կըրկ-  
նեաց զնզովսն զոր արարեալ էր ընդդէմ նորա  
Յովհաննէս ԻԲ վասն յափշտակելոյ զկայսերու-  
թիւնն : Ընդ նմին անէծ զնդամոս ոմն 'ի Մինո-  
րից՝ որ միացեալընդ նմա մնլար գրուածով զօ-  
րացուցանէր : Ապա խիթացեալ պապին՝ մի՛ գու-  
ցէ անառաջնորդ մնացեալ Խտալիոյ ունակոխ  
լիցի յարտաքին թշնամեաց , զլուկիառս փոխա-  
նակ բգեշխին և զեզբայր նորա զարքեպիսկոպոս  
Մեդիոլանու և շրջակայից՝ յորս տիրապետեին  
նոքա , կարգեաց պայյազատս և փոխանորդս՝  
պայմանաւ հատուցանելոյ ամ ըստ ամէ տասն  
հազար ոսկի գրամոց : Խոկ զիշմանութիւն վե-  
րոնայի և Վիշենցայի շնորհեաց Մաստինոսի և  
Ալվերտի Սկալեգերայ դաշամբ հատուցանելոյ  
ամ յամէ հինգհազար ոսկի : Կոյնակէս և 'ի վե-  
րայ Մանդուայի , Փերարայ և այլոց գաւառաց  
կարգեաց զայլեայլ իշխանս զօրաւորս առ 'ի

պահպանել 'ի թշնամեաց և հասուցանել 'ի դանձանակն չոռվմայ զտուրս պատշաճականս ցորչափ պարապ էր 'ի կայսերական իշխանութենէ, և ցոր վայր հաճոյ էր ինքեան, ըսաորում օրինաւոր տէր աշխարհին և յաջորդ առաքելապետին :

Վերստին դատապարտեաց նզովիւք զֆրադիչելեանս, զորս յառաջ քան զքահանայապետութիւն իւր հերքեալ էր գրովք : Զգուշացոյց ինամով չկոչել զոք 'ի քահանայութիւն որ չիցէ կիրթ յուսմունս և արժանաւոր . և ասէր՝ մի զարդարել զանձն տղմալից : Եւ ինքն հանդերձ հեղահամբոյր բարուքն էր և ուսումնասէր յոյժ, և 'ի գանձէ նախորդին իւրոյ բազում ինչ ծախեաց 'ի շինութիւն եկեղեցեաց, դպրոցաց և 'ի պէտս աղքատաց : Զազգակիցս իւր և զծանօթս չկամէր ճանաչել, ասելով թէ քահանայապետն չոռվմայ չունի ազդական . այլ ըստ կարդին Մելքիսեդէկիանհայր անմայր չհամարեալ յազգս : Իսկ որոց ինդրէին 'ի նմանէ զաստիճան սկատուոյ, առաջի առնէրզբան Դաւթի . ԱՅս թէ ոչտիրեսցեն, յայնժամ ամբիծ եղեց և սուրբ եղեց 'ի մեղաց մեծաց : Հազիւուրեմն զիջեալ աղաչանաց կարդինալացն՝ հաւատաց եղբօրորդւոյ իւրում զառաջնորդութիւնն եկեղեցւոյն Արելատոյ . այլ ոչ ետ նմապատիւ կարդինալութեան : Դադարեցոյ 'ի սպառ զհակտուակութիւնն ծագեալ առ նախորդաւ իւրով Յովհաննու իբ սակա աստուածատեսութեան երանելեաց . և վճռեաց՝ թէ հոգիք արդարոց բաժանեալք 'ի մարմնոյ և սըրբեալք՝ վայելեն յերանական աեսութեան Աստուծոյ : Գրեաց թուղթս առ արևմտեան իշխանս, և մանաւանդ առ Փիլիպպոս Զ արքայ գաղղիոյ, հաւաքել նոր խաչակիրս և զիմել 'ի

Պաղեստին։ Խոստացաւ ծախել զգանձն՝ ի պէտա  
նոցա, զոր թողեալ էր Յովհաննէս պապ (1516):

Ընդ այն ժամանակս արքայն հայոց Լեռոն  
վասակրեալ յերեսաց այլազգեաց՝ հրեշտակս  
առաքեաց և թուղթ առ պատն Բենեդիկտոս  
օգնել ինքեան։ Իսկ նորա գրեալ առ նա թուղթ  
քաջալերութեան՝ յորդորեաց զՍիկիլիացիս, ըզ-  
կիալրացիս, զհռոգացիս, զկրետացիս, զեպե-  
նացիս և զայլս ձեռն տալ հայոց, ցուցեալ նո-  
ցա՝ զի եթէ հայք ընկճեսցին՝ ի թշնամեաց, այ-  
նուհետեւ անհնար լինի երբէք առնուլ զերու-  
սալէմ։ Ապա յղեաց առ Լեռոն արքայ տանն  
հազար սուկին, և ետ տանել նմա ցորեան և զայլ  
կարեւորս յաշխարհէն գաղղիոյ։ Իբրև ստիպե-  
ցաւ Լեռոն երգնուլ առաջի գեսապանի սուլ-  
դանին՝ այլ ոչ ևս գրել թուղթ և առաքել գես-  
պան առ պատն, արձակեաց զնա յերդմանէ  
անտի։ Յետ այնորիկ իբրև յաճախեցին խոռ-  
վարարք զամբատանութիւնս առ նա վասն ազ-  
գին հայոց, գրեաց նամակ առ Լեռոն արքայ և  
առ Մխիթար կաթողիկոս ժողով գումարել և  
հերքել զամբատանութիւնս, և Դանիէլ վոր-  
դապետ գրեաց պատասխանի առ պատն, և շա-  
րագրեալ գրքոյկ մի՛ սուտ եցոյց զամենայն ամ-  
բաստանութիւնս։ զոր ապա Մխիթար կաթո-  
ղիկոս հաստատեաց՝ ի ժողովն Սույ (989):

Ի նմին ժամանակի արքայն Մարովկայ հինգ-  
հարիւր հազար զօրօք դիմեաց՝ ի Սպանիա։ Իսկ  
արքայն կաստիլիայ Ալփոնսոս Ելեալ ընդ գէմ  
յիսուն հազարաւ խորակեաց զզօրութիւն նո-  
րա։ ուր երեսուն անձինք միայն անկան՝ ի քրիս-  
տոնէից։ Իմացեալ արքային եթէ մատն Աս-  
տուծոյ արար զայն՝ առ կրօնասիրութեան ա-  
ռաքեաց առ պատն զերիվար և զդրօշակ սկատե-  
րազմին, և այլ ևս յիսուն ընտիր երիւլարս բնու-

նաբարձու ազնուագոյն տւարօք<sup>2</sup> իսկ հայրապետին հասեալ վախճան կենաց յԱւենիսն յիւրում պալատան զոր շինեալ էր, փոխեցաւ առ տեր յաւուր տօնի սրբոյն Մարկոսի յամին 1542, կացեալ 'ի հայրապետութեան ամս եօմն, ամսոս չորս և աւուրս վեց լի արգեամբք և փայլալ սքանչելագործութեամբ զկնի մահուան<sup>3</sup>:

## ՃՂԸ

## ԿԴԵՄԻՍ Զ.

Ա. Տ. 1542... և կայսերական Յան.

Բարեկալոդի 2:

1518. Կղեմէս լիմոսինացի յառաջագոյն անուանեալ Պետրոս Հռոգերիսս արբայ բենեգիկան միանձանց, ապա եւլիսկոպոս և արքեպիսկոպոս Հռովենի, հուսկ յետոյ կարգինալ և խնամնակալ Սորբոնայ՝ կարգեցաւ քահանայապետ 'ի նոնայս մայիսի յամին 1542: Գերազանց էին 'ի նմա ձիբք յիշողութեան: զի ոչ երբեք մոռանայր զոր միանգամ առնոյր 'ի միտ. նմին իրի և կարի ներհուն դատաւ 'ի դետութեան: Զայն գիտացեալ Յովհաննու պապին՝ և հան զնա 'ի կրօնաւորութենէ յաստիճան պատուոյ. և բազումք գուշակէին զնմանէ թէ անցցէ և յաթու հայրապետութեան: որպէս երբեմն կողոպտեալ յաւազակաց հանդիսակեցաւ նմա քահանայ ոմն աղքատ, և բարերարեաց

1 Համայ. և Սբոն. յամ 1534=1542: Եիկակիս 'ի վարս սորտ. 17: Պաղաճ. առ Բաւուակ. հագ. ա. էր. 236: Համայ. հագ. 6: Պատմ. Հայ. հա 5. էր. 334=337. 340:

նմա . և իբրև եհարց ցքահանայն թէ զի՞նչ հա-  
տուցից քեզ , և նա ասէ . Յօրժամ լինիս քա-  
հանայապետ : Յետ ժամանակաց իբրև նատաւ  
պատ՝ յիշեաց զքահանայն , և կոչեալ առ ինքն  
կարգեաց պաշտօնեայ պալատան , և ապա արք-  
և սպակուղոս Տոլովայ : Հայր էր արդարեւ ա-  
ռաքինեաց , պաշտպան խմասանոց և սփոփիչ  
աղքատաց և տիանկաց , և ոչ բնաւ զանց արար  
զբարեգործութեամբ իւիր : Ի սկզբան քահա-  
նայապետութեան իւրոյ առաքեցան առ նա  
հրեշտակը 'ի Հռովմայ , յորս էր Պետրարքա-  
բանաստեղծ անուանի , աղաչել զնա տեղափո-  
խել զգահ իւր 'ի Հռովմ : Այլ նա յայնժամ  
զբաղեալ 'ի գաւառան յայնկոյս Ալպեայ վասն  
հաշտեցուցանելոյ զիշխանս , թերի մնաց խնդիր  
նոցա : Աշխատեղել յոյժ հաշտեցուցանել զգաղ-  
զկացիս ընդ Անդզիացւոց , յորս յուղէր մարտ  
աննուէր . որով և խափան լինէր աղատաւթեան  
Պալեստինոյ 'ի ձեռաց անհաւատից ըստ մա-  
փաքանաց նորա : Տեսեալ թէ Լուգովիկոս Բա-  
վարոս տակաւին կաշկանդեալ կայ 'ի նոյն ան-  
սաստութեան , կրկնեաց զնզով նախորդաց իւ-  
րոց ընդդէմ'նորա . և նա չարաչար կորեաւ ըստ  
նմանութեան Աբեսոզոմայ : Յայնժամ պա-  
տուէր հրամանի յղեաց առ կայսրընտիրս դնել  
'ի տեղի նորա զկարուսո Դ կոմս Մորավիոյ՝ որ-  
դի Յովհաննու արքային Բոյեմիոյ . զոր և նոյն-  
հետայն հաստատեաց կոնդակաւ իւրով : Խեկ  
զեկեղեցին Բորակիոյ բարձրացոյց յարքեպիսկո-  
պոսութիւն , և հիմնեաց անդ համալսարան մա-  
ստուոր :

Զհանդեսն յոբելեան կարգեալ 'ի Առնիփա-  
կիսուէ հորիւրամեայ՝ վճռեաց այնուհետեւ լի-  
նել յիսնամեայ (1515) : Յովհաննու դքսին  
Կորմանիոյ և դքսուհւոյն շնորհեաց զսուրբ հա-

զորդութիւն յերկաքանչիւր տեսակէ . զնոյն ա-  
րար և ոմանց պայազատաց . քանզի սովորաբար  
քահանայապետք յաւուր պատակման իւրեանց  
մատակարարեն ձեռամբ իւրեանց սարկաւագ-  
կարդինալաց 'ի սուրբ մարմնոյ և յարենէն Քրիս-  
տոսի : Խսկ զՅովիշաննէս քահանայ գաղղիա-  
ցի կոչեցեալ աղքատ՝ կարդեաց 'ի գասս երա-  
նելեաց սակս սրբափայլ վարուց իւրոց : Ըն-  
կալեալ 'ի Յովիշաննայ թագուհոյ Ապուղիայ  
և 'ի տիրուհոյն Բրովենտիայ ութսուն հազար  
ոսկի ֆլորենից ծախսեաց 'ի շնորհիւն քահա-  
նայապետական տաճարի նոյն քաղաքին : Կարդս  
վայելուչո եղ վակարանին կարդինալաց , զոր  
սահմաննեալ եր Գրիգոր Ճ :

Դատապարտեաց զաղանդ Ֆլաճելեանց որ  
ասէին՝ թէ ոչ ոք փրկի , բայց որ ձաղկելով հա-  
նէ զարիւն յանձնէ և այնու մկրտի (852) : Եւ  
ըուեալ եթէ ոմանք 'ի նոցաննէ գնացեալ են 'ի  
Հայաստան սերմաննել զաղանդ իւրեանց , գրեաց  
թուղթ 'ի մէջ Հայս առ եպիսկոպոսունս և վար-  
դապետս՝ 'ի բաց խորչել յաղանդաւորաց ան-  
տի . զնոյն գրեաց և առ իշխանաւորս պատու-  
հասակոծ առնել զնոսա : Իբրև ընկալու 'ի  
Սիմիթարայ կաթողիկոսէ զգիր պատասխանուոյ  
վեցերորդ ժողովյն Սայ , ուրախ եղև յոյժ  
ընդ ողջամիտ վարդապետութիւն նոցա և ընդ  
խոնարհ հպատակութիւն առ գահն առաքե-  
լական , որպէս ցուցաննէ 'ի թղթի իւրում յա-  
սելի . «Պատուական եղբարք մեր՝ Սիմիթար  
կաթողիկոս Հայոց և արքեպիսկոպոսունք և ե-  
պիսկոպոսունք և սիրելի որդիք մեր առաջնորդք  
վանաց և այլ գղերք եկեղեցւոյն Հայաստա-  
նեայց վոյթ կալան ծանուցաննել մեզ և այլն :  
Այն ինչ Գութիտոն արքայ Հայոց նեղեալ յայլ-  
աղդեաց խնդրեաց զձեռնատուութիւն կղեմայ :

գրեաց պատասխանի և Կղեմէս և զօրացոյց զեա .  
առաքելով ամ յամէ հաղար ոսկի և հաղար  
հեծեալ : Զինի մահուան գուխտոնի յղեաց յօդ -  
նութիւն կոստանդեայ թագաւորին հայոց ինչս  
բաղումն և գունդս հեծելոց հոսդացւոց, և  
վեցհաղար ոսկի դահեկանս : Որովք զօրացեալ  
նոցա՝ յաղթեցին թշնամեաց, և խաղաղացաւ  
երիիրն առ ժամանակ մի : Առաքեաց մէծ հայ-  
րապեան'ի հայս զերկու եպիսկոպոսունս և գիրս  
ինչ հաւատոյ և վճռոց սակս հաստատ մնալոց  
հայոց յուղղափառութեան : Իբրև զայսօրի-  
նակ առաքինանայր երջանիկն տարածելով զիսը-  
նամ իւր հայրական'ի վերայ հեռաւորաց և մեր-  
ձաւորաց՝ հասեալ նմա վախճան կենաց փոխե-  
ցաւ առ աէր յութ իդոսացն դեկ . յամին 1352:  
կառավարեալ զեկեղեցին իմաստութեամբ և  
սրբութեամբ ամս տասն և ամիսս եօթն ։

1 Հայ . և Սբոն . յամն 1342=1352: Բռու-  
գեպ . հապ . 2 . սահմ . ուղղափ . հապուած 1 . գլ .  
Է . 19: Փեբեռո յդ . յբել . յ . 1 . գլ . Ռ: Մաբիլ .  
գլ . Ռ: Առ Լաբ . հապ . 12 . ծան . 2 . առ գրիգ .  
ծ: Առ Հռենալու . հապ . 6 . յամն 1346 . յօդ .  
67=69: Պապմ . Հայ . գիր+5 . գլ . իբ . հապ . 3 .  
էր . 345 . 349=352:

## ՃՆԹ

## ԲՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Զ.

Ա. Տ. 1352, և իսյոնը բարեկամութեան կարութանի Դ. 7 :  
և Յաշ. Բաղդասարի 12 :

1519. Իննովկենտիոս լիմոսինացի յառաջ ա-  
նուանեալ Ստեփաննոս Ալպերտեան, եպիսկո-  
պոս կարդինալ Ռոտիայ, մեծ օրէնսգետ և ա-  
պաշխարողահայր՝ ընտրեցաւ 'ի քահանայա-  
մէւա 'ի հնդետասաան կազանդացն յունիվ. յամին  
1552, և պատկեցաւ յերիս կազանդաց նոյն  
ամսոյ: Որ և վոյլթ յանձին կալաւ զօրացուցանել  
զհոգեորական իշխանութիւն և զիրաւունս եկե-  
զեցւոյ. մեծ արեաց զիմաստունս և զառաքինիս:  
Աշխատ եղե 'ի ձեռն նուիրակաց իւրոց չիջուցա-  
նել զհրդեհ պատերտղմին որ 'ի մեջ Գաղղիոյ և  
Վնդղիոյ: Առհմաննեաց զի մի առաջնորդք և վիճա-  
կաւորք արտաքոյ վիճակաց իւրեանց գեգերես-  
ցին. այլ իւրաքանչիւր հաստատեալ զբնակութի  
յիւրում վիճակի՝ անձամբ հովուեցէ զհօտ իւր-  
ապա թէ ոչ լուծցի: Քանզի տսէր՝ լաւ ևս ա-  
րածի հօտն 'իսեփական հովուեն, քան 'ի վարձկա-  
նէ: Իսկ զպատիւ քահանայութեան վճռեաց  
միայն նոցա տալ, որք հանգիսացեալ իցեն ուս-  
մամբք և կրթութեամբ: Վասն զի եկեղեցական  
իշխանութիւնն ասէր ոչ զարմից, այլ առաքի-  
նութեանց է տրիտուր: Թոշակաւորեաց երկո-  
տասան վարդապետս առաքելական դահին  
(1516). Իսկ համալսարանին աստուածաբա-  
նութեան՝ որ 'ի բոնոնիա՝ ևտ հրաման զի քաջ-  
ուաք 'ի նմին պահանջեսցեն զշահ և զպատիւ:

Առաքեաց յիտալիա զնուիրակ իւր Եղիտիսս  
Վլարոս արքեպիսկոպոս Տոլետոյ զայր բազ-  
մահանձար և քաջասիրտ, լիակատար իշխանու-  
թեամբ։ որ զկալուածս և զժառանդութիւն ե-  
կեղեցւոյն չոռվմայ է զի զինուք, է զի ահիւ  
և հնարագիտութեամբ առեալ 'ի ձեռաց յա-  
փրշտակիչ իշխանաւորաց՝ նուաճեաց զնոսաընդ-  
տէրութեամբ գահին։ և զկնի հնգից ամաց բեռ-  
նաւորեալ զսայլ մի բանալեօք քաղաքաց և շի-  
նից առելոց 'ի նմանէ երեր առ պապն։ Որոյ  
ընդ առաջ ելեալ նմա հանգերձ կորդինալօք։  
ողջագուրեաց զիա՝ կոչելով հոյր և ազատարար  
եկեղեցական վիճակաց։

Պատուեր ստոքեաց սպապն առ Պետրոս ե-  
սլիսկոպոս Ռոտիայ, զի երթեալ 'ի չոռվմ օն-  
ցէ զթագաւորին Գերմանիոյ զկարոլոս Դ ընդ-  
թագուհւոյն Աննայի կայսր չոռվմայ։ Ազա-  
շանօք նորին կարոլոսի կայսեր սահմանագրեաց  
առն գեղարդեան, բեւեռաց և այլոց գործեաց  
չարչարանաց փրկչին, և 'ի վեցերորդ օր զկնի յա-  
րութեան պաշտել հանգիստիկէս 'ի Գերմանիա  
և 'ի Բոյկեմիա։

Ապա յղեաց 'ի Լիգուրիա զԱնդրէաս եպիս-  
կոպոս Արիմինեայ, զի զարեաոր Գենուայ և  
զծերակայս Կորակիայ բոնադատեալ սպահան-  
ջեսցէ զհաշիւ եկամսից եկեղեցւոյն չոռվմայ  
անուամբ և բանիւ պապին։ Ըրջապատեաց սպա-  
րիսպ և խրամ զԱւենիոնիւ։ և առընթեր քա-  
զաքին այնորիկ կառոյց մենաստան Կարթու-  
սեան կրօնաւորաց յամի 1356։ ուրանօր որո-  
շեաց և զգերեղման իւր։

Մխիթար կաթողիկոս և կոստանդին արքայ  
չայոց գրեցին թուղթ առ Խննովլէնտիս՝ խոս-  
տանալով նմա հնազանդութիւն և հոլատակու-  
թիւն։ Զոքաւ առ նա և տէր Յակովէ՝ երբեմն

կաթողիկոս, և բերան՝ ի բերան խօսեալ ընդնմա հաճելի եղեւ մեծի քահանայապետին և պատուեցաւ՝ ի նմանէ : Սապէս Մեսրոպ կաթողիկոս առաքեաց առ նա հրեշտակս՝ ծանուցեալ նմա զսեր և զհպատակութիւն իւր . ընդորուրախ եղեւ պապն : Այլ յետ այնորիկ ոչ յերկարեալ ՚ի կեանս իննովլիւնտիոս՝ փոխեցաւ յաստեացս միով աւուրբս յառաջ քան զիգոսս սեպ . յամին 1562, կացեալ յիշխանութեան ամս ինն, ամիսս ուժ և աւուրս քսաննեվեց <sup>1</sup> :

## Մ

## Ս. ՈՒՐԲԱՆՈՍ Ե

Ա.Տ. 1562, և կայսերական կառալունի Դ 17,  
և Յան. Բաղդադի 22:

1520. Յաւուրն իններորդի զկնի հանդիսաւոր յուղարկաւորութեան իննովլիւնտիոսի պապին կարդինալք սկիզբն արարին գումարելոյ ՚ի փակարանի վասն ընտարութեան նորոյ քահանայապետի : Խըրեւ չմիաբանեցան ՚ի կարծիս ընտրել զորք յինքեանց, հտւանեցան որոշել զոմն արտաքոյ կարդինալական սկատուոյ . և որոշեցին զԴուլիելմոս Կրինալդոս գաղղիացի աբբայ սրբոյն Ալեկաորի ՚ի Մարտիլիա ՚ի հինգ կաղանդացն նոյեմ . յամին 1562: Եւ էր նա կրօնաւոր բենեդիկտեան առաքեալ ՚ի նախորդէ իւրմէ առ թագուհին Սիկիլիոյ վասն կարեոր գործոյ : Եւ առաքեցաւ ՚ի փակարանէն վՃիռն

1 Հոռայ . և Աբոն . յամ 1552=1562: Յան.  
Տրինիտառ ՚ի ծամ . 1552: Պապայ . լուգ . հապ . 1.  
Եր . 357: Պապայ . Հոյ . հապ . 3 . Եր . 553:

ընտրութեան իւրոյ և զարմացոյց զնա անպայման . մինչև ասել հիացմամբ՝ թէ « Ի աեառնէ եղեւ այս և է սքանչելի յաչս մերոյ: Եւ եկաւորեալ նորա յիտալիոյ յԱւենիսն՝ օծաւ քահանայապետ յութ իդոսայն նոյն ամսոյ, և առանունս Ուրբանոս . իրրեւ զի այնու անուամբ եղեն ոմանք սուրբ քահանայապետք, աենչայր և զնմանութիւն վարուց նոցին յանձին բերել, և ըստ շաւղաց նոցա զեկավորել զեկեղեցին:

Արդ զամենայն փոյթ 'ի մէջ առեալ միաբանել զՅոյնս ընդ Լատինացւոց որ նամակաւ և որ պատուիրակօք, յանկոյց զսիրտ Յովհաննու կայսեր Բաղէոլոգի: Եւ նա զի փափագէր միաբանութեանն այնորիկ՝ գրեաց զձեւ դաւանութեան հաւատոյ և մերժեաց զհերձուածս: Եւ առաքեաց առ նա Ուրբանոս զմոմեղեն պատկեր գառինն Աստուծոյ, զոր ըստ հին արարողութեան եկեղեցւոյն Հռովմայ տակաւորէին 'ի վերայ զատկական մոմոյ սրբելոյ օրհնեալ ջրով և բալտանաւ հանդերձ օծմամբ և քահանայապետական օրհնութեամբ 'ի հանդիսի: Յաւել 'ի վերայ զոտանաւոր բան բացատրիչ խորհրդոյն նիւթոյ և զօրութեանն . որով պահպանէին յախտից և 'ի պատահարաց: Ապա յամին 1369 կայսրն Բաղէոլոգ ընդ պատրիարքին կոստանդինուպօլսոյ և ընդ յոլով վանականաց եւ հաս 'ի Հռովմ, ուր գնացեալ էր ամօք յաւաջ և Ուրբանոս պատ: Անդ հերքեալ Յունաց ըղվիպանն՝ դաւանեցին զուղղափառ հաւատս և միացան ընդ լատին եկեղեցւոյն, խոստանալով անպակաս հնաղանդ լինել առաքելական գահին և պահել զսուրբ աւանդո: Ցնծացան հայրապետքն և թագաւորք, և այնպէս դրկախառն սիրով ուղևորեցան նոքա յարեւելու:

Այնուհետեւ պատին հաստատեաց զայլեայլ

կարդս կրօնաւորաց 'ի վայելքութիւն սուրբ հաւատոյ . և 'ի Պողոնիա հիմնեաց զհամալսարան Գրադովիայ . յաճախեաց և զառանձնաշնորհութիւնս ուսումնարանին բոնոնիոյ : Պատուադիր էր ուսումնասիրաց և մեծարեր զնոսաթոշակօք . մանկունս հազար սնուցանէր ծախիւք իւրովէ 'ի զանազան դպրոցս՝ մատակարարեալնոցա զամենայն կարևորա . առատապէս օգնէր կարօտելոց և անանիաց , այլազգականաց իւրոց ոչ այնպէս : Յորոց երկու ևեթ եկեղեցականք յառաջ քանաջան զքահանայապետութիւնն իւր ամբարձան յաւսութութիւն : Բայց ոչ ումեք յաշխարհականաց ձեռն ետ վերոտնել յաստիճանն իշխանութեան : Խորհրդովլ յաւել 'ի պապական թագ իւր զերրորդ պատակ երրեակ ոսկի շրջանակօք . զի 'ի սկզբան անդ մի ևեթ պատակ յօրինեալ կայր 'ի նմին . ապա Վանիկակիոս ը յաւել միւս ևս :

Ենդ այն ժամանակս Յովհաննէս արքայ Գաղղիոյ այն ինչ զերծեալ 'ի չորեքամեայ բանարդգելութենէ չոքաւ առսրբազանն յայցելութիւնն անդ դտան և երկու թագաւորքն Կիպրոսի և Դանեաց ընդ մեծամեծ իշխանաւորաց . որք սուեալ 'ի ձեռանիէ պապին զիսաշն՝ պատրաստեցան գնալ յազատութիւնն Երուսաղեմի : Սակայն 'իսաւաիկ մարտէն որ 'իմեջ Գաղղիոյ և Անդ զիոյ՝ արդեան :

Լուեալ մեծի հայրապետին զհարստահարութիւն հայոց և զմահ թագաւորին , յաւադնեալ ոգուվլ գրեաց նամակ առ առաջնորդս հայոց ասելով . աՅսդի հարեալ դառն սգով 'ի թաղծութիւնն պաշարիմք և 'ի խորոց սրակ անձուկ տուրմամբ տիսրադին հեծեմք . քանզի տեսանեմք թէ զիարդ թագաւորութիւնն այսպիսի մատնեալ կայ 'ի ստրկութիւնն և 'ի հարկատու-

ութիւն այլաղդեացոյ և այլն : Ասկա յորդոր մատուցանել նոցա կարդել ինքեանց թաղաւոր ըդկեւոն, և խոստանայ ձեռն տալ նոցա :

Յետ մնալոյ պատին զամս երիս 'ի չոռվմ' և նկուն առնելոյ զբոնաւոր իշխանս՝ խորհեցագառնալ 'ի Գաղղիա առ 'ի հնարս գտանել հաշտութեան պատերազմողացն այնոցիկ: Յայնժամ սրբուհին Բրիդիտա արքայազարմ 'ի Շուետաց չոքաւ 'ի չոռվմ յայցելութիւն սրբոց, և տեսմեալ զպատրաստութիւնն պատին՝ ջանահնաց եղե խափանել զըու նորա 'ի Գաղղիա, զի գուշակէր նմազմահն մօտալուտ: Այլ նա քանզի եւ ուայր հոգւով տեսանել զիսաղազութիւն որդւոց իւրոց, չոդաւ յԱւենիոն և անկաւ 'ի մահիճո: և իմացեալ զլախճան իւր կատարեաց զամենայն հոգեսոր պատրաստութիւն: Ասկա պատուիրեաց տանել զինքն մահճօք յեկեզեցին առաջի խորանի սրբոյն Պետրոսի, անդ առաջի ամենեցուն արար զիսոստովանութիւնն հաւատոյ կրօնաւորական սքեման զոր չէր հանեալ յանձնէ, և խաչ 'ի ձեռին սրտառուչ եռանդեամբք ննջեաց զքուն արդարոց ամաց վաթսուն և միոյ 'ի չորեքտասան կաղանդացն յունվ. 1370, կառավարեալ զեկեզեցին սրբափայլ վարուք և իւմաստութեամբ ամս ութ և աւուրս յիսունեերկու զոր և ներբողեացընտիր ասայուածուլքքաջ իմաստ բանահիւսն Պետրարքա: Յետ մահուան նորա յայտնեցան մեծամեծ օքանչելիք և դասեցաւ նա 'ի կարդս սրբոց յորոյ 'ի պատիւ երեսաց թաղաւորք Գաղղիոյ աղատ կացուցին 'ի հարկաց զմուքըիկ քաղաքն՝ յորում ծնեալն էր<sup>1:</sup>

1 Հոդայ. և Սբոն. յան 1362=1370: Սիրանութ. 'ի ծովն. առա Ենեստիոսի. հապ. 1. Եր.

## ՄԱ

ԳՐԻԳՈՐ Ժ.Ա.

Ա. Տ. 1370. և կայսերութեան Կաբուլուի Դ. 25,  
և Յան. Բաղդասակի 30:

1521. Գրիգոր լիմոսինացի յառաջադոյն առուանակոչեալ Պետրոս Հռոկերեան՝ ընտրեցաւ քահանայապետ յԱւենիոն յերեք կազանդացի յունվ, յամին 1370, ի միաձայն հաւանութենէ ամենայն կարդինալաց, և այն յերկրորդում աւուր գումարման . ինքն միայն անհաւան գաեւալընտրութեան տեսձինն՝ հրաժարէր թախանձանօք ՚ի ծայրագոյն իշխանութենէ անտի, այլ հուսկ ուրեմն զիջեալ յանձն էաւ հնազանդեալ վերին տնտեսութեանն: Ազա՛ի հետեւեալ ամի աւուրբ միուլ յառաջ քան զնոնայս յունվարինութիւցաւ ՚ի սրբազան կարդ քահանայապետութեան: Եղբօրորդի էր սա կղեմայ Զ պատլին, և մեծահամբաւ հանդիսացաւ ոչ միայն արդեամբք նորա, այլ մանաւանդ քաջակիրթ ուսմամբ յօրենըս գիտութեսն և յաստուածաբանութեան քան զյուլովս ՚ի գիտնոց ժամանակին: Ի հասակի եօթնեւտան ամաց եղեւ գահերէց կարդինալ մայր եկեղեցւոյն Բայուսի, կանոնիկոս Փարիզու և խնամածու Սորբոնայ: Ընդ բնաառուր ձբիցն և բարեկիրթ էր և համեստ, որով յինքն դրաւէր զսիրաս ամենեցուն:

1043: Լամբեր. կաբուլն. յ՛լ. ծառա. այ. Գիր+ 4.  
Տ. 1. Գլ. Է. 11: Բասդվեպ. ՚ի վարս սուրա հապ.  
3. Տ. 2: Պէտրաբատ, Գիր+ 7: Պատմ. հայ. Գիր+  
5. Գլ. Խթ:

Այս ինչ ամբարձեալ յառաքելական գառհ՝  
մեծապէս փոյթ կալու բարեկարգելզեկեղեցին  
և զեկեղեցականս : Դատապարտեաց զՅովհ ան-  
նես Ախկեփ անդղիացի քահանայ, որ իբրև չե-  
հաս յառաջնորդութիւն՝ որում ցանկայր :  
Հնարեաց զաղանդ ընդդէմ եկեղեցւոյ (853) :  
Մերժեաց զորա ուսուցանեին՝ թէ սուրբ հա-  
ղորդութիւն դտեալ յանպատկան վայրս և յըն-  
դերս մարդոյ դադարի յաստուածահրաշ զօրու-  
թիւնէ : Հաստատեաց կոնդակաւ յանկուցեալ  
զմիտս ամենեցուն՝ թէ եկեղեցին Լատերանու է  
իսկական նախագահ աթոռ քահանայտպետին  
հառվմայ և մեծապատիւ 'ի մէջ ամենայն եկեղե-  
ցեաց : Սա ինքն զառաջինն հրատարակեաց ընդ-  
պրեելս և ընդ արևմուտս հանդիսապէս կատա-  
րել զոօն Տեառնընդառաջին զաւանդեալն  
յառաքելոց անտի . ուր 'ի մեղ բազմօք յառաջ  
հանդիսացեալ էր : Սահմանեաց ծումապահս  
'ի նախընթաց աւուր ծննդեան Աստուա-  
ծածնի : Հաստատեաց զահմանադրութիւն  
կարգի Հերոնիմուան միանձանց միաբանելոց 'ի  
վանս սրբոյն Բարդողոմէոսի Լուսիանու մերձ 'ի  
Տոլետա : Նկուն արար բանադրանօք զապատամբ  
Փլորենտացիս, որը հազիւ արձակեցան միջ-  
նորդութեամբ սրբուհւոյն կատարինեայ սենա-  
ցւոյ, զոր առաքեցին առնայ Աւենիոն :

Առաքեցաւ 'ի Մեսրոպայ կաթողիկոսէ և 'ի  
թագուհւոյն Լեւոնի արքային Հայոց Յովհան-  
նես արքեպիսկոպոս Սասյը Աւենիոն առ պապն՝  
խնդրել 'ի նմանէ ձեռնտութեալն վտանգեալ  
աղդին յերեսաց այլազդեաց : Եւ քահանայա-  
պետն դրեաց թուղթ քաջալերութեան առ թա-  
գուհին, զի արքայն Լեւոն չէր 'ի միջի . գրեաց  
և առ Փիլիսպոս կոմս տարենտացի և յորդո-  
րեաց զնամ ձեռնտութեալ Հայոց :

Լուեալ Գրիգորի սղապլին՝ ի սրբոյ կուսէն կատարինեայ զկամս Աստուծոյ յաղագո գառնալոց յաթոռ իւր՝ ի հուվմ, Երարձ զամենայն արգելս. մոխեաց զաթոռ հայրապետութեան՝ ի քնիկ կայանն ի հուվմ յամին 1377 զկնի եօթանասուն ամաց տեղափոխութեան յԱւենիոն ի կղեմայ Ե: Սակայն՝ ի սղատձառս ջերմին եղանակի հաճեցաւ ուղեորել զաւրբ հազորդութիւնն յԱնագնիա. զոր ըստ հին սովորութեան քահանայապետք՝ ի մեծի թափորի անդ յուղեգնացութեան իւրեանց՝ ի միասին կրէին. ուր եկացնա մինչեւ ցնոնայս նոյեմբերի: Եւ իրեւ եմուտ նա ի հուվմ, ցնծացաւ քաղաքն ամենայն. զի Խոալիա յերերի կայր ցորչափ աթոռն՝ ի Գաղղիա էր: Գաղղիացի կարդինալք գուն գործէին հաւանեցուցեալ զպապին վերըստին վոխել զաթոռն յԱւենիոն. բայց նա յանըուժելի ախտի իմլիք կնքեաց զկեանս իւր՝ ի վեց կաղանդացն ապրիլի յամին 1378՝ ի հասակի իրը քառասունեւեց ամաց, կացեալ յիշնանութեան ամս եօթն, ամիսս երկուս և աւուրս քսանենեօթն: :

1 Հուայ. և Սբոն. յան 1370=1378: Կանդակագիր, հապ. 1. եր. 283: Լամբետ. յ՛լ. առ. Ածած. 5. 2. համ. 181: Առ Բաղդաս.՝ ի վարպապից հապ. 1. եր. 464: Հուեն. հապ. 7. յան 1372: Պապմ. Հույ. հապ. 3. եր. 358:

## Մ Բ

## ՈՒՐԲԱՆԻՍ Զ

Ա. Տ. 1378, և կայսերութեան կարգեալի Դ. 35,  
և Յովհ. Բարդելուգի 38:

1522. Խրբե խմբեցան կարդինալք 'ի ժողով  
վասն ընարութեաննորոյքահանայապետի, կաս-  
կածեալ ուխտին չոռվմայ ընդ ժողովրդեան  
թէ մի գուցէ դաղլիացի ոք հաստատեալ պատ՝  
անդրէն վոխեսցէ զառաքելական դահն յԱւե-  
նիոն, դիմեցին 'ի ժողովարան կարդինալաց, և  
բոլոք բարձին աղաջանօք և սպասնալեօք ընտ-  
րել զոմն խտալացի: Կարդինալք ըլուելոյն արա-  
րեալ, զի մի թուենսցեն բոնութիւն կրեալ 'ի նո-  
ցանէ, վճռեցին ընտրել զիտալացի: Եւ 'ի վեց  
իդուացն ապրիլի յամին 1378 հրատարակեցաւ  
քահանայապետի արդողոմիոս Բրինիանոս նշա-  
պօլսեցի արքեպիսկոպոս Բորիոյ յԱպուզիա,  
որ անուանեցաւ Ուրբանոս Զ:

Սա յառաջքան զընարութիւնն բարեբարոյ  
էր և խոհական. այլ յետ ամբարձման յաստի-  
ճան քահանայապետութեան կարի խստիւ և  
ցատմամբ վարեալ, զինի հնդետասան աւուրց  
սարտոյց յինքենէ զկարդինալս և զարթոյց  
զնոսա 'ի թշնամութիւն անձին իւրոյ: Յորոց  
երկոտասանքյազգէ Գաղղիացւոց պատճառա-  
նօք տեղի տառլս 'ի ջերմին եղանակի 'ի չոռվմայ՝  
անցին յԱնագնիա յելս յունիսի. ուրանօք ընդ  
Գրիգորի ԺԱ պապին անցուցեալ էին զնախըն-  
թաց ամառն (1521): Մինչդեռ Ուրբանոս պատ  
ընդ չորից խտալացի կարդինալաց դեգերէր 'ի  
Դիբուր սակս օդափոխութեան, նոքա սկսան

Համբաւել՝ թէ Ուրբանոս ոչ օրինօք, այլ բռնի  
ընտրեցաւ 'ի ստիպելոյ ժողովութեան: Եւ այսու-  
ջանային ջրել զքահանայապետութիւն նորա :  
Ապա անցեալ նոցա 'ի ֆոնդի քաղաք Կէապօլ-  
սոյ հրամանաւ թագուհւոյն Յովհաննայ նոյնօ-  
րինակ վշտագնելոյ 'ի սպապէն, որսացան 'ի կողմին  
իւրեանց և զերիս յիտալացի կարդինալաց, և  
նոքօք հանդերձ 'ի վնաս եկեղեցւոյ ընտրեցին նոր  
քահանայապետ զչոռորերառու կարդինալ գերե-  
նացի արքեպիսկոպոս գենուայ 'ի մետասան  
կաղանդացն հոկ . 'ի հասակի երեսունեմեց ա-  
մաց . և կոչեցաւ նա Կղեմէս ի , և առա հեռա-  
ցեալ յիտալիոյ նատաւ յԱւենիոն: Ընդ այս-  
պիսի բաժանումն և թագաւորք և իշխանք և  
արք իմաստունք 'ի խումբս բաժանեալ թեկն ա-  
ծէին երկաքանչիւր կողմանց . և երկոքին նոքա-  
թեղետ անկախ 'ի միմեանց վարելին զիշխանու-  
թիւնն՝ Ուրբանոս յիտալիա և 'ի Գերմանիա և  
ոյլուր, և Կղեմէս 'ի Գաղղղիա և 'ի Սպանիա և  
'ի Սիկիլիա, սակայն օրինաւոր պատ Ուրբանոս  
ծանուցաւ միշտ: Եւ բաժանումնս այս տևեաց  
զամս յիտուն :

Ընդ այն ժամանակս Շահան իշխան փեսայ  
Լեւոնի արքային հայոց զերծեալ 'ի գերութե-  
նէ Եգիպտացւոց չոքաւ 'ի Գաղղղիա, և պատմեալ  
նմին Կղեմայ ի զաւեր Կիլիկիոյ և զգերութիւն  
հայոց և թագաւորին, խնդրեաց ձեռն տալ  
նոցա: Եւ Կղեմայ գրեալ նամակս յորդորակա-  
նըս առ որս ընդ ձեռամբ իւրուլ կային՝ պա-  
տուիրէր նպաստամատոյց լինել Լեւոնի: Ապա  
Շահան տարեալ զթուղթ Լեւոնի առ Յովհան-  
նէս արքայ Կաստիլիոյ 'ի Սպանիա՝ պատմեաց  
նմա զաղէտս հայոց: Խակ նորա միջնորդ լեալ  
առ սուլդանն՝ ազատեաց զԼեւոն արքայ կալա-  
նաւոր յԵգիպտոս: որ անցեալ ընդ Կիսկրոս 'ի

Հռովմ՝ պատուեցաւ յՈւրբանոսէ Զ տղապէ ՚ի  
1383: Եւ անտի նախ գնացեալ ՚ի Ստանիա ՚ի  
շնորհակալութիւն Յովհաննու արքային, անց  
ապա յԱնդղիա և ՚ի Գաղղիա միջնորդ լինել  
խաղաղութեան ՚ի մէջ Գաղղիացւոց և Անդղիա-  
ցւոց ըստ յանձնարարութեան Ուրբանոսի: Սա-  
կայն հանդիպեալ նմա ՚ի Գաղղիա վախճան կե-  
նաց՝ մեռաւ յամին 1393 ՚ի հասակի վաթուն  
ամաց վերջինն ՚ի թագաւորութայոց և թաղեցաւ  
՚ի վոնս կեղեսամինեանց ՚ի հոյակաստ գերեզ-  
մանի:

Խակ Ուրբանոս պատ պարասր տռեալ յաշ-  
խատանաց՝ երիս վճիռս եհան ՚ի 1389. նախ՝  
թէ հանդէս յիսնամեսոյ ներողութեան յոբելի-  
նի լիցի յիւրաքանչիւր երեսունեւրիս ամս ըստ  
թուոյ ամացն Քրիստոսի. Երկրորդ՝ տօն այցե-  
լութեան Յատուածածնին յերկրորդ աւուրյու-  
լիսի. Երրորդ տօն մարմնոյ և արեան տեառն ան-  
խափան պաշտեացի ըստ սահմանելոյն Վոնիփա-  
կիոսի Ը իբրև զանս ծննդեան, զատկի, հոգե-  
դաբանեան և վերափոխման: Եւ ինքն յետ կալոյ  
յիշխանութեանն ամս մետասան, ամիսս վեց և  
աւուրս վեց կամ ութ. յամին 1389 յիդոսս հոկ.  
վախճանեցաւ մահացու գեղով ՚ի թշնամեաց, որ  
պէս կարծի. յորմէ զգուշանալ ազդ արարեալ եր-  
նմա որբուհին կատարինէ սենացի: Զկնի նո-  
րա ոչ շատ եկեաց և կղեմէս պատ ՚ի Գաղղիա ։

1. Հառայ. և Սբն. յամն 1378=1389: Սուրբ  
Անդրոնին. Տ. 3. Ժամ. Վեր. 22. Գլ. Բ: Ակենե-  
րու յամն 1378. հապ. 2: Բէրիեպիս յամն 1378:  
Հան. հապ. Է. յամն 1381. Պատմ. Հայ. հապ.  
3. Գլ. իսֆ:

2. Կղեմէս ի ընդունեաւ ՚ի 19 սեպ. 1378. և մէ-  
ռաւ կաթուածով ՚ի 16 սեպ. 1394: Զստ յանը-

## ՄԳ

ՎՐԱՆԻՓԱԿԻՌԱ Թ

Ա. Տ. 1589, և իսպանական վեհականական 11,  
և Մանուկը Բ. 6:

1523. Յետ վախճանի Ռւրբանոսի Զ պապին կուսակիցք նորին կարդինալքն թուուլ չորեքտասան մտեալ 'ի փակարան՝ ընտրեցին ըստ կանոնաց յաջորդ նորա զՊէտրոս թումագելու կարդինալ նէամօլակեցի քառասունեհինդ ամաց, զայր քաղցրաբարոյ և համետ 'ի չորս նոնայց նոյ. 1589. որ 'ի ձեռնադրութեան կոչեցաւ Վանիփակիոս թ: Սա զառաջինն հասաւաեաց զերիս վՃիռս նախորդին, զորոց ասացաւ (1522). և հրատարակեաց զյորելեան հանգէս յամէ ևս կատարել 'ի 1590 կամ ըստ ոմանց 'ի 1400: Ապա յետ բարեկարդելոյ զեկեղեցին ձեռնամուխ եղեւ տնտեսել և զարտաքինս: Կասկածեալ նորա, թէ մի դուցէ Լուգովիկոս անտեկաւեցի տիրապետեալ թափաւորութեան վէտապօյ՝ անտի թեակոխեացէ զիշխանութեամբ հռովմայ դրաւել զժառանդութիւնս եկեղեցւոյ, զյուլով քաղաքս հաւատաց հզօրի իշխանաւորաց ընդ պարտեօք ամ ըստ ամէ հա-

դէսց Ալանինինեան անոնս Պէտրոս իարդինալ արտգուացի՝ իւլիուսաւ բնենդիկուոս Ժ.Բ. իամ Ժ.Գ. Շնորին 'ի 28. սեպ. 1594: Յետ նորա եղեւ պառ Ալանինին բնենդիկուոս Ժ.Գ. ու Շնորին 'ի մէրժեցան 'ի ծոված Պէտրոս 'ի 5 յուն. 1409. և Շնորին Պէտրոս Փիլաքէտոս 'ի 26 յուն. ու իւլիոս Ալեքսանդր Ե (1526):

տուցանելոյ զօրինաւոր հարկս : Խակ զՓերարա  
աւանդեաց մարքեղին Ալաբերտի պայմանաւ հա-  
տուցանելոյ ամի ամի տասն հազար ոսկի և հա-  
րիւր երիվար ընդ այլ կարեւորաց 'ի ոլետս և 'ի  
վայելս իշխանութեան պապին :

Եետ այսորիկ յապստամբել ընդդէմ նորա  
չոռվմայեցւոց՝ տեղի եւտ անտի առ ժամանակ  
մի : Ապա վերադարձեալ զօրութեամբ նուա-  
ճեաց զապատամբս, և կարգեալ զամենայն ընդ  
հպատակութեամբ՝ եղե առաջին, որ զատենա-  
կալն արկ ընդ իշխանութեամբ իւրով . և ամ-  
րացոյց զդուկակն անուանեալ Ապնե անձեւու : Եդ-  
օրէնս տարեկան եկամտից յիւրաքանչիւր արքե-  
պիսկոպոսաց, յեպիսկոպոսաց և յաբբայից յօդ-  
նութիւն առաքելական գահին : Տեսեալ զան-  
իմոտութիւն վիճնկեսլաւոսի արքային Գեր-  
մանիոյ յաջորդելոյ զհայր իւր զկարուսո Դ.  
պատուեր արար կայսրընարաց մերժել զնա 'ի  
թագաւորութենէ և գնել 'ի տեղի նորա զհոռ-  
բերասոս գուքս Բավարիոյ զմականուանեալն փոք-  
րիկ . զոր և հաստատեաց նա ինքն : Արդել ևս  
զի մի՛ ինչք եկեղեցեաց, մենաստանաց և հիւ-  
րանոցաց տացին 'ի վարձու, և մի՛ 'ի կալուածս,  
բայց եթէ ցամս երիտ . և այն ըստ ժամանակին  
տուեալ ամ յամէ զհաշիւն : Իբրև զայսօրինակ  
հաստատէր զիւրան 'ի բաժնի իւրում, զի յԱւե-  
նիսն նստեալ Բենեդիկտոսի Ժ.Գ. իշխեր 'ի Գաղ-  
ղիս և 'ի Սպանիա, համեալ նմա վախճան կե-  
նաց վախեցաւ յաստեացս 'ի կազանդս հոկ . յա-  
մին 1404. յետ կալոյ յիշխանութեան չորեք-  
տասան ամս և ամիսս մետասան <sup>1</sup>:

1 Հուայ. և Աբոն. յամն 1389=1404: Աբրա-  
համ Բակով. յամն 1394: Առ Կիակոն. հագ. 2. Եր-  
նց 698: Վանեսպէն. յ. 2. իրամ. ել. վեր. 24. գլ.

Դ. Ե. Պ. ԶՈՐԵՔՏԱՍԱՎԱԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ա. Տ.

1300. Յոբելեան հանգեսն հարիւրամեան կար-  
դի :
1306. Պապն փոխէ զաթոռն ՚ի գաղղիա յԱ-  
ւենիան :
1307. Կոստանդին Բ. կաթողիկոս վերստին  
նստի :
1308. Հեթում թագաւոր և Լեւոն խողիս-  
ղին :
1311. Սարգիս առաջին պատրիարք չայոց նըս-  
տի յԵրուսաղեմ:
1319. Անի քաղաք կործանի :
1323. Կոստանդին Գ. կաթողիկոս հաստատի :
1326. Մահ Յովհաննու երզեկացւոյ :
1327. Յակովը Բ. նստի կաթողիկոս :
1341. Միսիթար կաթողիկոս յաջորդէ զՅա-  
կովք :
1343. Ֆրագիչէլի աղանդաւորք ուղեորին յա-  
րեելս :
1350. Յոբելեանն յիսնամեան սահմանի :
1352. Յովհաննէս Բ. Խլանովիչ տիրէ Մոսկ-  
վաց :
1355. Յակովը Բ. վերստին կարդի կաթողիկոս:
1359. Մեսրոպ յաջորդէ զՅակովք :
1371. Լեւոն արքայ վտանգեալ թաքչի յան-  
ձանօթս և ասլա յայտնի :
1372. Կոստանդին Գ. նստի կաթողիկոս :

Դ. 18: Աղետ . Կապ . Վիճ . 9 . ՚ի ոլափ . Ել . Դա-  
թէ . և Ճշ . Եր . 564 . Հափ . 8 : Թագմաս . յՇ- Հու .  
Հին և Նոր Ել . Տ . 3 . Գիր + 2 . Գլ . Ճ՛շ : Սահէ  
Անդան . ՚ի ժամ . Տ . 3 . Վեր . 22 . Գլ . Պ :

1574. Պօղոս Ա յաջորդէ զկոստանդին, և աշ-  
խարհ Կիլիկիոյ քանդի:
1577. Պատի վորսէ զաթոռուն անդրէն'ի Հռովմ:
1578. Թէոդորոս Բ կաթողիկոս:
1580. ԵԼՔ Լանկթամուրայ:
1589. Յոբելեանն սահմանի ըստ Երեսունեւ-  
րից ամաց:
1595. Թէոդորոս Բ կաթողիկոս սպանանի:
1596. Զաքարիա կաթողիկոսԱզթամարայ նա-  
հատակի, և կարապետ Ա նստի կա-  
թողիկոս զկնի Թէոդորոսի Բ:
1598. Դաւիթ Դ յաջորդէ զկարապետ կա-  
թողիկոս:
- Զայնու Ժամանակաւ յամի 1500 Հեթում  
Բ կրկին տիրէ, որպէս ասացաւ. իսկ զկնի Հեթ-  
ումոյ թագաւորէ՝ Կիլիկիա Լեռոն Դ. զոր յա-  
ջորդեաց Օչին, ապա Լեռոն Ե, ապա Կոստան-  
դին Գ. յետ նորա Գուրիան, ապա Կոստան-  
դին Դ, հուսկ յետոյ Լեռոն Զ. որ 'ի 1575  
կալանաւորեալ յայլազդեաց Եղիպտոս՝ բառ-  
նի թագաւորութիւն Հայոց իսպառ: Ա. Ա. 'ի  
1582 Լեռոն թագաւոր ազատեալ 'ի բանտէ  
գնայ 'ի Հռովմ և 'ի Սպանիա. իսկ 'ի 1586  
շրջի յԱնդղիա և 'ի Գաղղիա. ապա 'ի 1593  
վախճանի 'ի Փարիզ:

Իսկ յարեւելս թագաւորէ Օսման առաջին ար-  
քայ Օսմանեանց յամի 1500. զոր յաջորդէ Օր-  
իան. յետ նորա թագաւորէ Մուրատ Ա, և ապա  
Պայազիտ Ա 'ի 1589:

# ՀԱԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՅ

## ՄԴ

### ԽՆԱՎԿԵՆՏԻՌԱ Է

Ա. Տ. 1404, և կայսերութեան համբէքառի 4,  
և Մանուկը Բ. 21:

1524. Խնավկենտիրս սուլմանացի յառաջոյին ձայնեալ կողմաս Մելիօրատաս, եպիսկոպոս Հռավիլեննայ և կարդինալ բազմօրեայ և քաջակիրթ և հմուտ կարեորաց քան զյուլով՝ կարգեցաւ քահանայապետ զկնի Առնիվակիսով թ. ՚ի վեշտասան կազմնդացն նոյ. յամին 1404, ընտրեալ յինն կարդինալաց. և ՚ի չորս նոնաց նոյն ամսոյ պատկեցաւ սպագական թագիւ հանդիսապէս ՚ի ցնծութիւն հասարակաց. իրր զի ՚ի սկզբան անդ երեւեր ՚ի նմանախանձ մեծագոյն, բառնալց զհերձուած բաժանման աթուոյն պատրաստ դոլով հանդերձ խոստմամբ հրաժարել ինքնին յիշխանութիւնէ և հեռացուցանել յայնմանէ զբենեղիկոսս որ յԱւենիսն: Այլ իրրե ամբարձաւ յիշխանութիւն՝ մուացաւ ըլխոստումն իւր. և ժողովրդեան ապաստամբեալ ընդդէմ նորա՝ կոչեցին ՚ի թիկունս զարքայն սէապօլսոյ զլատիսլաւ, որ բռնադառեաց ըլպատկն հեռանալ ՚ի վիտերբիսն: Այլ իրր վերատին դարձուցին զնա ՚ի Հռովմ, ուրախացան ամենեքեան: Յայնժամ ձեռնամուխ լեալ նորա ՚ի գործս պիտանիս զարս ընտիրս ամբարձ յաւագութիւն. և զերիս ՚ի նոցանէ ընարեաց խորհրդականս և դործակիցս, որք ապա միւր խորհրդականս և դործակիցս,

ըստ միոնէ բարձրացան՝ ի քահանայապետութիւն։ Զհամալսարանն չոռվմայ բարւոք կարգաւորեաց՝ ի ձեռն մեծիմաստ դասախարակաց և ճարտար դասասուաց։

Իբրև խելամուտ եղեւ թէ ոյք եղեն գլուխ ապստամբութեան չոռվմայեցւոց՝ պատուհասակոծ արար վեռաս բանագրանօք։ Իսկ զարքայն Լատիսլաւ նզովիւք զրկեաց՝ ի թագաւորութենէն. և նորա ահաբեկ լեալ խոնարհ կերպարանօք ընկալաւ՝ ի նմանէ զներումն յանցանաց իւրոց, յանձն առեալ կատարել զամենայն պատուեթ նորա։ Եւ պատին հանեալ զնա յառաջին պատիւ, յաւել՝ ի վերայ և զպատուանունո Դրօշակիր և Պաշտպան եկեղեցւոյն չոռվմայ։ Եւ ինքն յութ իդոսացն նոյեմբ։ 1406 վախճանեցաւ, կացեալ՝ ի հայրապետութեան ամս երկուս և աւուրս քառնեմի։<sup>1</sup>

## ՄԵ

### ԳՐԻԳՈՐ ԺԲ

Ա. Տ. 1406, և կայսերական Հայոց 6,  
և Մանուկի թ. 23։

1525. Գրիգոր յառաջադոյն անուանակոչալ Անկելոս գորարիոս վենեակեցի պատրիկ՝ ի մանկութենէ սնեալ յիմաստութեան և ի վարս սրբութեան՝ գահերէց կարդինալ մականուամբ սրբոյն Մարկոսի, ընարեցտւ յաթոռքահանայապետութեան չոռվմայ՝ ի չորս նո-

1 Հայ. և Մբռ. յան. 1404. 1405. Լէնարտ. Արեգին. ի ահապահարանի իւաց հաս. 9: Գրիլ իւ. իս. եւ. 921։

նոյց գեկ . յամին 1406 : Որ 'ի ժողովարանի անդ ընտրութեան հաստատուն երդմամբ խոստացեալ էր կարդինալաց բառնալ զպատճառ բաժանման աթոռոյն և Հրաժարել ևս 'ի քահանայապետութենէ , եթէ հրաժարեսցի և բենեդիկտոս 'ի պապութենէ յԱւենիոն : Եւ ամենեքեան քաջայոյս լեալ տեսանել զիսաղաղութիւն եկեղեցւոյ համաձայնութեամբ երկաքանչիւր կողմանց՝ որոշեցին ժողով գումարել 'ի Սալօնա : Սակայն ոչ ոք 'ի նոցանէ երեւեցաւանդ 'ի ժողովին , երկաքանչիւր պատճառանս պատճառելով :

Կարդինալացն յայնժամ յուսակտուր լեալ անցին 'ի Գիղա , գումարեցին միահամուռ ժողով մեծ 'ի նոնայս յունիսի յամին 1409 . ուր էին և պատրիարդունք և երեքհարիւր եսլիսկոպոսք և երկերիւր ութունուն աբբայք և այլես հըմուռք 'ի վարդապետաց : Եւ զի ոչ Գրիգոր պապ և ոչ Բենեդիկտոս հրաժարեցան , երկոքին ևս ընկեցան յիշսանութենէ . և 'ի քսան և չորից կարդինալաց ընտրեցաւնոր քահանայապետարքեակուպան Սեղիոլանու : որ կոչեցաւ Ազեքսանդր Ե : Զայն լուեալ Գրիգորի պապին տեղի ետ յԱրիմին . նոյնպէս և Բենեդիկտոսի Բանիսագոլա ծովահայեաց աւան վաղենաեան թագաւորութեան :

Սակայն Գրիգոր պատլ քանզի այր որբակաց էր և միշտ փափաքէր միութեան և հաստատութեան եկեղեցւոյ , 'ի ձեռն գործակալի իւրոց կարուսի պայազատին Արիմինոյ հանդիսի հրաժարեցաւ յամենայն իրաւանց քահանայապետութեան զկնի վեց ամաց 'ի ժողովին կոտանդեան (926) : Յայնժամ հարք ժողովցն մեծաձայն գովեցին զնա . որ և հրաժարեալ 'ի Գրիգոր անուանէն և յառաջին անուն իւր Ան-

կելոս խոնարհեալ՝ քաջ ևս բարձրացաւ յաշ  
խարհի։ Ամին իրի ժողովն կարդեաց զնա նա-  
խագահ կարդինալաց, նուիրակ միշտ դաւառին  
Անքոնայ և եպիսկոպոս Պօրտոսի։ Ապա՝ ի հա-  
սակի իրը իննառւն ամաց հասեալ նմա վախճան  
կենաց՝ փոխեցաւ առ տեր և թաղեցաւ՝ ի չոե-  
քենատ ՚ի մեծի տաճարին յամի 1417. որ և ե-  
կաց յիշանութեան յընտրութենէ մինչե ցան-  
կումն ՚ի ժողովը Պիզայի ամս երկուս, ամիսս  
վեց և առուրս երիս։ Այլ ՚ի հետեւեալ ամի,  
որպէս և ՚ի 1623, բացեալ զգերեզման նորա դը-  
տին զմարմինն անապական հանդերձ քահանայ-  
ապէտական զբեստուքն ։<sup>1</sup>

## Մ. 2.

## ԱՆՔԱԾԱՆԴԻ Ե

Ա. Տ. 1409. և կայսերական չոռքերասի 9.  
և Մանուկելի Բ. 26:

1526. Ազեքսանդր յառաջնմէ անուանեալ  
Պետրոս Փիլարկոս կրետացի, երբեմն եպիսկո-  
պոս Վիշենցիայ և ապա արքեպիսկոպոս Մե-  
դիոլանու, ընարեցաւ պապ ՚ի քսան և չորից  
կարդինալաց միաբանելոց ըստ օրինի ՚ի փակա-  
րանին յիննետասներորդ նուագի գումարելոց  
ժողովոյն Պիզայի ՚ի վեց կաղանդացն յունիսի  
յամին 1409. և ապա ՚ի նոնայս յուլիսի պաս-

1 Հուայ. և Սբոն. յահն 1406=1415: Սուբբ  
Անդրեանին. Տ. 3. Վէր. 22. Գլ. Է. և Շ. Լէնիար-  
հագ. 19: Աշէտ. Կապ. Դար ծէ և ծէ. Վիճ. 2:  
Բէլար. Գիր. 1. Գլ. Շ: Վիկուրել. առ Կիտի.  
հագ. 2. Եր. 754: Ջաղ. Կապ. Գումար 1/4:

կեցաւ քահանայապետ Հռովմայ : Ծննդք սուրա առ յեաին քքաւորութեան իւրեանց թողեալ զնա 'ի խնամո Աստուծոյ՝ եղին 'ի աղայութեան յաղքատանոցի . և առ քքաւորութեան շրջեր տառապեալ մանուկն դրանէ 'ի գուռն մուրողութեամբ հայթայիթել զոգեպտհիկն : Յաւուր միում տեսեալ զնա խտալացի ուն կրօնաւոր ֆրանչիսկեան՝ ծանեաւ 'ի գիմաց նորա զմեծութիւն հոգւոյն , և գութ արկեալ զնովաւ ած ընդ իւր 'ի վանս սպաս տանել եղբարց : Անդ ընդ աճել հասակի մանկան աճեցին 'ի նմա ընդաբոյս մերմանք լաւութեան , և հրահանգեալ 'ի կրօնաւորէ անտի ուսաւ վերծանել և գրել . և ապա մարզեալ 'ի պէսպէս ուսամունս զարդացաւ քաջ ընդ դաստիարակութեամբ նորա : Եւ ընկալեալ զոքեմ կրօնին եղեւ միանձն ընտիր , քաջ վիլխասփայ և աստուածաբան և քարողիչ և վարդապետ սորբոնեան : Եւ պատկառելի լեալ յաջատմենեցուն՝ ամբարձաւ յարքեպիսկոպոսութիւն և 'ի կարդինալութիւն և ապա 'ի պապութիւն :

Սակայն յամենայնի միշտ երեւեր 'ի նմա ոգի աղքատասիրութեան , զիոչ ընտաւ մոռացաւ զառաջին վիճակ իւր . սիրելի եր նմին անտես և անծանօթ լինել 'ի ծնողաց և յազդակցաց , և կոչեր զննձն աղքատին կարդինալ և մուրացիկ պապ : Սակայն խնամ կալաւ մեծապէս հոգեսոր ծնողաց իւրոց կրօնաւորացն այնոցիկ և ետնոցաիշանութիւն հոգաբարձութեան և խոստովանահայրութեան : Եւ ապա ձեռն արկ բարեկարգել զհօտ իւր և զուխտն Հռովմայ՝ տալով իւրաքանչիւր զպարտուպատշաճ տիսդոս : Ահաւոր եղեւ ընդդէմ իշխանաւորաց . զԼատիսլաւ գտեալ անսաստ՝ զրկեաց 'ի թագաւորութենէ Կէապօլսոյ . իսկ զԼուգովիկոս անտեկա-

ւեցի կարդեաց՝ ի տեղի նորա։ Զիշխանութիւն  
Հռովմայ բռնաբարեալ՝ ի նոյն Լատիսլաւէ՝ ան-  
գրէն իւրացոյց։ Այս ինչ յաղթանակեալ՝ ի  
վերայ ասկստամբաց մտաբերէք եկաւորել՝ ի  
հռովմ՝ ի ցնծութիւն հասարակաց՝ յորդորա-  
նօք իմն բաղտասարայ կտրդինալին կոսոյ՝ ի  
բիստորիոյ ուր էրն, չոքաւ՝ ի բօնոնիա։ Անդ-  
ախտացեալ հիւանդութեամբ, կամ ըստ ումանց  
թունաւորեալ՝ փոխեցաւ յաստեացս՝ ի չորս նո-  
նայց մայիսի յամին 1410, կտցեալ յիշխանու-  
թեան ամիսս տասն և աւուրս ութ։ և թաղե-  
ցաւ յեկեղեցւոջ Գրանչիսկեան կրօնաւո-  
րացն այնոցիկ, և ականաւորք՝ ի մատենադրաց մե-  
ծառէս ներբողեցին զնա։ Առ որով կային  
սլավքն Գրիգոր ՓԲ, և բենեդիկտոս ՓԳ,  
այլ անկեալք յիշխանութենէ ըստ վճռոյ ժո-  
ղովոյն Պիղայի։

## ՄԵ

## ՅՈՎՀԱՆՆԻՍ ԻԳ

Ա. Տ. 1410, և իսյուերութեան Սիմեոնադասի 1,  
և Մանուկէլի 27։

1527. Յետ մահուան Աղեքսանդրի Ե ոպա-  
սին կարդինալք թուով Եօմնեւտասն, որք էին  
ի բօնոնիա, ժողովեցան՝ ի փակարանի ըստ սահ-  
մանադրութեան և ընտրեցին զԲաղտասար կոսա-  
նէապօլսէցի կարդինալ յաթոռ քահանայա-  
պետութեան հռովմայ՝ ի վեշտասան կազան-

1. Հուն. և Սբոն. յան 1409 = 1410 : Բան-  
վին. յղ. մայր Եիել. Հուն. Գլ. Գ: Առ Պիղով.  
լուգ. հագ. 3: Գլ. էլ. իպ. և. 2. էլ. 842:

դացն յունիսի յամին 1410. որ ձեռնադրեցաւ  
պատ յութ կազանդաց նոյն ամսոյ ՚ի տաճա-  
րի սրբոյն Պետրոնիսի, և կոչեցաւ Յովհաննէս  
ԻԳ : Այս այր աղնուազարմ և ճարտար և քաջ  
կանոնագէտ յամենայինի մեծանձն երևեցաւ,  
մանուանդ յարտաքին գործողութիւնս : Խըրեւ  
լուաւ զմոհ Հռոբերտոսի արքային Գերմանիոյ՝  
նոյնհետայն առաքեաց գեսպանս առ կայսրըն-  
տիրան թագաւորեցուցանել ՚ի աեզի նորա զՍի-  
կիսմունառոս արքայ Հռունդարիոյ : Ասլա եկաւո-  
րեալ յաթոռ իւր ՚ի Հռովմ՝ գատապարտեաց  
՚ի մասնաւոր ժողովի զգիրս Յովհաննու Վիկե-  
փայ, և վճռեաց ընթեռնուլ և չպահել զնոյն,  
այլ կիզանել (1196) : Ասլա փոյթ կալաւ զըս-  
պել զապստամբս . և զի ինքն հմուտ էր պատե-  
րազմական արուեստի, կարգեաց զԼուգովիկոս  
անտեկաւեցի ընդդէմ Լատիսլաւ բռնակալին,  
տուեալ նմա նիզակակից զՊօղոս Ռւրսինոս զօ-  
րավար զօրաց իւրոց և զՓրանչիսկոս Սփորտիա:  
Սոքա արք զօրութեան Ճակատեալ ընդդէմ  
թշնամոյն եկեղեցւոյ՝ թէպէտ կոտորած մեծ  
հասուցին ՚ի բանակ նորա հանդերձ բազում  
աւարառութեամբք, այլ չել յաղթութիւնն  
՚իդուիս: Նմին իրի առ ՚ի նկուն առնելզնա՝ բա-  
նագրանս հրատարակեաց ընդդէմ նորա : Յոր-  
մէ զահի մեծի հարեալ անօրինին խոնարհեցաւ  
և ուխտ եղ կատարել զամենայն կամս պապին:  
Բայց յետ սակաւուց ուխտադրուժ գտեալ  
ել ՚ի հնազանդութենէ պապին և խաղաց զօրք  
՚ի վերայ Հռովմայ: Յայնժամ Յովհաննէս ա-  
ճապարեալ ՚ի փախուստ գէտ ՚ի Սուտրի, ան-  
տի ՚ի Վիտերբիոն և ՚ի Փլորենտիա ամիսս ինչ,  
հուսկ յետոյ չոքաւ ՚ի Բոնոնիա :

Խըրեւ պատուհասեալ Լատիսլաւ զլաւեցաւ  
՚ի կենաց, չոքաւ քահանայապետն ՚ի Կոստան-

դիա : Ուրանօր խմաստուն խորհրդով՝ ի գործ եղ զընդհանուր ժողովն, զոր և հրատարակեալ էր վասն բառնալց զբաժանումն աթուոյն : Ի դումարման անդ նախ ինքն խոստացաւ հրաժարել յիշխանութենէ քահանայապետութեան սկայմանաւ հրաժարելց և Գրիգորի ԺԲ և ԲԵ նեղիկտոսի ԺԳ (1522) : Սակայն կասկած իմն առեալ տեղի ետ ՚ի ժողովց անախ . որով զըրկեալ յիրաւանց՝ սկահեցաւ առ ժամանակ մի ընդ պահպանութեամբ Լուդովիկոսի Բավարիոյ կոմսին Բաղատինոյ Հունայ : Այլ իբրև եղ զինքն ընդ դատաստանաւ ժողովոյն՝ անդէն ընկալեալ եղեւ . և յայնժամ կամակար մտօք հրաժարեցաւ յիշխանութենէ յերկոտասաներորդ դումարման ՚ի չորս կազանդացն յունիսի յամին 1415, յետ կալոյ քահանայապետ ամս հինդ և աւուրս երեքտասան : Խակ ՚ի չորեքտասաներորդ դումարման հրաժարեցաւ յիշխանութենէ Գրիգոր ԺԲ պատ, որպէս ասացաւ (1525), և յերեսներորդ եօթներորդ դումարի Բենեդիկտոս ԺԳ անհնաղանդ դաեալ ժողովոյն՝ ոչ կամելով հրաժարել՝ մերժեցաւ ՚ի պապութենէ . որ և մոռաւ ՚ի Սպանիա յամին 1427 : Անդ Երկու կարդինալք եղին զոմն Եկիտիոս սպանիացի կանոնիկոս ՚ի տեղի նորա անուամբ կղեմէս Ը. այլ նորա փութով հպատակեալ Մարտինոսի Ե պապին՝ վերջացաւ նովաւ Երկպառակութիւնն : Խակ ՚ի քառասներորդ առաջներորդ դումարի ընտրեցաւ օրինաւոր պատ Մարտինոս Ե (1528) . որ ՚ի հանդիսաւոր թափորի անդ իբրև ետես, զի Յովհաննէս ԻԳ ժամ դտեալ ել յաւանձնութենէ և եկն անկաւ յոտս նորա ճանաչելով զնա գլուխ սրբոյ եկեղեցւոյ, մեծապէս պատուամիրեալ կարգեաց զնա եալիսկոպոս կարգինալ Դուքանայ, նախագահ սրբազն ժողովաւ .

բանին և գահագլուխ կարդինալոց: Եւ ինքն Յով  
հանենէս պատ հասեալ, ի վախճան կենաց մեռաւ  
՚ի Փլորենտիա, ի մետասան կազմնդայն յունվարի  
յամին 1419: և թաղեցաւ մեծահանդէս յու-  
ղարկաւորութեամբ բազում եկեղեցականաց ՚ի  
մատրան Յովհաննու Մկրտչի ՚ի հոյակալ տա-  
պանի յօրինելոյ ՚ի մարմարիոնէ և ՚ի պղնձոյ :

## ՄԷ

## ՄԱՐՏԻՆՈՍ Ե

Ա. Տ. 1417, և կայսերական Աբինայանականի 7:  
և Մարտինէւի 34:

1528. Մարտինոս յառաջագոյն անուաննեալ  
Ոդոն կողօնայ, աղնուազարի կողօնացի մեծա-  
համբաւ կարդինալ իմաստութեամբ և առաքի-  
նութեամբ, ընտրեցաւ քահանայապետ և յա-  
ջորդ սրբոյն Պետրոսի հաճութեամբ ամենե-  
ցուն յերիս իդոսացն նոյ. յամին 1417 ՚ի քա-  
ռասներորդ առաջներորդ գումարի անդ ժողո-  
վոյն կոստանդեայ (926): Զե կարդինալ ք ըստ  
վճռոյն եղելոյ ՚ի քառասներորդ գումարի մտին  
՚ի փակարանն և բան եդին ընտրել զայնալիսի  
ոք՝ որ դիտասցէ բառնալ յեկեղեցւոյ զտագ-  
նապյիսնամեայ երկարառակութեան աթուոյն:  
Ընդլսել Սիկիսմունաոսի կայսեր զընտրութիւնն  
նորա՝ աճապարեաց եմուտ ՚ի փակարան անդր:

1 Հայայ. և Աբոն. յամին 1410=1415: Ժ. 2.  
Կ. ս. 4: Քբիսադիսն. 1. ս. 5: ՚ի Տերբութ. Գլ. Խ. 9.  
Ե. 373. հագ. 9: Ա. Աբոնին. Տ. 3. Վ. 22.  
Գլ. Է. 2:

և շնորհս մատոյց կարդինալաց . և ապա անկետը յերկիր զոտս նորընախիր հայրապետին համբուրեաց խորին խոնարհութեամբ, և յաւուր թագադրութեան 'ի թափորի անգ եղեւ զինակիր պապին ընդ կայսրընատքին Բրանդեբուրգայ : Եւզի հանդէսն այն եղեւ 'ի տօնի որբոյն Մարտինոսի, զիօրին անուն և ինքն ընկալաւ :

Արդ Մարտինոս խոհական առաջնորդութեամբն իւրով եբարձ գլխովին զերկպառակութիւնն եկեղեցւոյ ըստ սահմանեալ կանոնաց եղելոյ ժողովըն . և յետ այնորիկ ջան եղ անհետ առնել զաղանդս հերեսիովաց ժամանակին : Սահմանեաց ու թօրեայ տօնել զոօն մարմնոյ և արեան աեառն : Կարդս և օրէնս եղ 'ի մէջ իշխանաց . որով անդորրացաւ և խտալիա : ընկածեաց զբարուգիոս դուքս Բերուզիայ և սահպեաց զնա յետս դարձուցանել զքաղաքս եկեղեցւոյ զոր յափշտակեալն էր : Խակ զբոնոնիացիս, որք թելագրութեամբ Անտոնիոսի Բենտիվոլոսի Ծըլնկեց լեալ էին՝ արկ վերսաին ընդլծով : Դարձ արարեալ ապա 'ի Հռովմ հրատարակեաց զհանդէս Յորելինին յամի 1423, ըստ սահմանադրութեան Ուրբանոսի Զ . այլ չեղեւ այնչափ բազմաժողով 'ի պատճառս պատերազմաց յուղելոց յԵւրոպա : Արդեւ, զի մի կարդինալք պաշտպան կացցեն թագաւորաց և իշխանաց : Խակ ըստ վճռոյ նոյն ժողովըն 'ի քառասներորդ չորրորդ գումարի սկիզբն արարժողովըն 'ի Բասիլիա յամին 1431. ուրանօր առաքեաց զկարդինալն Յուլիոս նուիրակ նախադահական դատաւորաց : Սակայն չեհաս նմաս դլխաւորել զժողովն . զի յանկարծական կաթուածոյ իմեքէ փոխեցաւ նա առ տէր ամաց

վաթուներից՝ ի տասն կաղանդացն մարտի  
յամին 1431, կացեալ՝ ի հայրապետութեան  
ամսներէքտասան, ամիսս երիս և աւուրս տասն<sup>1:</sup>

## ՄԹ

## ԵԿԳԻՆԵՐԱԾ

Ա. Տ. 1431, և կայսերական Սիմոնական 21,  
և Յովհաննակի 8:

1529. Եւգինեռայառաջնորդայնեալ Գաբրիել  
գոնդուլմերիսս որդի Անկելսի պատրիկ Վե-  
նետիկոյ, քեռորդի Գրիգորի ԺԲ, կանոնիկոս  
կրօնաւոր՝ ի կարգէ սրբոյն Օգոստինոսի, կար-  
դինալ եպիսկոպոս Սենայ, կարգեցաւ քահա-  
նայապետ՝ ի հինգ նոնայց մարտի յամին 1431:  
Սա այր բարձրահասակ եր և փառացի, մեծա-  
հոգի և առատաձեռն առ աղքատս և մեծա-  
գործ՝ ի շնուրածս եկեղեցեաց, պայծառացու-  
ցիչ կրօնաւորաց և երկիւղածաց Աստուծոյ և  
նախանձաւոր ծաւալիչ աստուածային պաշտա-  
մանց քրիստոսական կրօնիս. նմին իրի և մեծա-  
պէս հռչակեցաւ անուն նորա:

Ի սկիզբն քահանայապետութեան իւրոյ դուն  
գործեաց միաբանել զամենայն քրիստոնեայս  
՚ի մի հաւատ կաթողիկէ եկեղեցւոյ և բառնալ  
զաղանդ Հուսեանց զտարածեայն՝ ի Բոյեմիա  
(855): Եւ նորին աղապաւ զՅուլիանոս կարգի-

1 Հուայ. և Սբն. յամ 1431=1447: Սաւբ  
Ականին. 5. 3. Ճամ. Վէր. 22. ԳԼ. Ճ: Աղետ.  
Նափ. ՚ի պափ. Եկ. Դար ՃԵ և ՃՇ. ԳԼ. ՌԵ. յօդ. 3:  
Առ Լաբ. հափ. 12. 13. և Հաբրուինոս, հափ. 9:  
Եր. 1183:

նալ զառաքեալն 'ի նախորդէ իւրմէ Մարտինոսէ Ե 'ի բասիլեան ժողովը հաստատեաց 'ի նուիրակութեան, և պատուիրեաց 'ի գործ դնել զոր միանգամ յանձնեցաւ նմա : Ոչ հաճեալ այս պապին ընդ կարգաւորութիւն այնո ժողովը՝ պատգամ առաքեաց փոխադրել զայն 'ի Բոնոնիա : Ընդ այս տհաճեալ բազմաց՝ վէճ յարուցին, մինչեւ Սիկիսմունասոս միջնորդ լեալ ընկալաւ զթոյլոտութիւն վասն յառաջադիմութեան ժողովոյն, և ինքն անցեալ 'ի չոռովմ կայսերական թագիւր պատկեցաւ 'ի պապէն : Եւ այսպէս ժողովն բասիլեան անդրէն սկիզբն արար յեօթնետասներորդ գումարմանէ մինչեւ ցքսաներորդ հինդերորդ : Իբրև հակոռակութիւն մի մեծ ծագեցաւ 'ի մեջ ժողովականաց, ոմանք ընդ որս և հրեշտակը պատպին սկնդեին տեղափոխել զժողովովն անտի 'ի Փլորենախա կամ յՈւտինէ ըստ հաճութեան սրբազնին և անդ յառաջ տանել : Խսկ կէսք ջանային անդ 'ի Բասիլիա 'ի գլուխ տանել կամ յԱւենիոն և կամ 'ի Սաբաւդիա : Բայց Եւգինէսս ընտրեալ զիսորհուրդ աւագացն՝ հաճեցաւ տեղափոխել զժողովն 'ի Փերարա : Յայսմանէ ոմանք 'ի խռովարաց նշկահեալ անսաստ գտան և սկսան զօրավիդն ինքեանց առնուլ զվճիռ ժողովոյն կոստանդեայ, մեծ ասելով և յարգոյ զընդհանուր ժողովն քան զքահանայապետին . և չկացեալ 'ի նմին՝ յանդդնեցան եղին զԱմեդէոս ուն երբեմն գուրքս Սաբաւդիոյ՝ հակապապ անուանեալ Փելքս Ե : Խսկ Եւգինէսս աներիիւղդատապարտեալ զապստամբս՝ վճռեաց փոխարերել զժողովն 'ի Փերարա, և անտի պատճառաւ ժանտախանին փոխադրեաց 'ի Փլորենախա (927) :

Արդ բարեսէր հօտապետն նամակս դրեաց,

Հրեշտակս արձակեաց յաշխարհ ամենայն յարեմուսս և յարեելս մինչև յԵթէով պիտ, գումարել զամենեսեան 'ի նոյն մեծ ժողով։ Հրաւիրեաց զկայօրն Յունաց զՅովհանենէս Բաղեռովդ, զՅովսէփ պատրիարդ Կոստանդինուպոլիսով այլոց աթոռակալաց։ Գրեաց թուղթ և առ Կոստանդին կաթողիկոս Հայոց և յղեաց առ պատրիարդն Հայոց յԵրուսաղեմ հասուցանել զայն առ Կոստանդին։ Որոյ առեալ զթուղթ պապին որոշեաց զՄարդիս վարդապետ պատաշնորդ Կաֆայի, զՄարկոս վարդապետ, զթովմա վարդապետ և զՅովհակիմ Եպիսկոպոս՝ գնալ յԽալիս և հաստատել զառաջին սէր միաբանական 'ի ժողովն Փլորենախոյ։ Կային անդ հարիւր և յիսուն հայրապետք Լատինացւոց և Երեսուն Յունաց, և Յովհանենէս կայօր և Յուլիսիփ պատրիարդ։ Եւ միաբանեցան անդ Յոյնք ընդ Լատինացւոց հանդերձ աստրագլուխ թեամբ կայսեր և պատրիարդին։ Օրինակ մի այնք ստորագրեալ կոնդակի միաբանութեան պահի ցարդ 'ի գիւտանին Բռնոնիայ։

Եետ այնորիկ հասին անդր և չորեքին հրեշտակք կաթողիկոսին Հայոց, և քառ տեղեկացեալ ճշմարտութեան հաստատեցին զմիաբանութիւնն առաջնորդ տուաւնոցա և մասնաւոր վճիռ վասն Քաղկեդոնի սուրբք ժողովոյն, ևս և հրահանդք 'ի վերայ Եօթնիորհրդոց և ծիսից ինչ։ Իբրև ընկալան հրեշտակք Հայոց զամենայն սահմանադրութիւնս ժողովոյն, Եւդինէոս հայրապետք եաց կոնդակ վասն Հայոց, որ սկսանի։ Աջընծացէք առ Աստուած օգնական է մեր։ Զոր առեալ բերին առ կաթողիկոսն։ Խակ Սարդիս վարդապետ գնացեալ 'ի վիճակ իւր 'ի Կաֆա պատուեցաւ 'ի Լատինացւոց ըստ որում պատուիրեալ էր Եւդինէոս պապ։ Եկին 'ի ժողով

անդր և պատգամաւորք Յակոբիկեանց և Եթէ-  
ովսպացւոց .որոց կայսրն Կոստանդին մականուա-  
նեալԾերապ Եագօք, որ հրաւիրեալին էր 'ի ժո-  
ղովն՝ընկալաւ զվճիռ միաբանութեան 'ի ձեռն  
գեսպանաց իւրոց :

Յետ այնորիկ հիմնեաց Եւգինէոս 'ի Փլորեն-  
տիա գալրոց սակս կղերիկոսաց սպաս տանողաց  
'ի հանդիսաւոր պատարագի՝ մարդիլ 'ի տաղա-  
սացութեան երգոց և 'ի կրթութիւնս ընթեր-  
ցուածոց և քերթողութեան և բարոյականին :  
Որոշեաց տեղի առընթեր եկեղեցւոյ, ուրանօր  
ժողովեալ զմանկունս հարազատս 'ի տասնա-  
մենից մինչև ցհնդետասան՝ տայր մարդել 'ի  
հրահանգս և ուսուցանել մինչև ցքահանայու-  
թիւնն Եւ 'ի 1439նորոգեալ զամենայն ազատու-  
թիւնս զոր Երբեմն նախորդք իւր շնորհեալ էին  
նաև ուսումնարանին Պատաւիոնի, ևս և կայ-  
սերք և արքայազունք՝ ողջոյն հաստատեաց :

Ախտացեալնորածանը հիւանդութեամբ 'նա-  
խատես եղե զի մի զկնի վախճանին պատճառ  
ինչ 'ի ներքս անկցի բաժանման և դերապակու-  
թեան, կամ զօրասցին բանք Բասիլեան ժողո-  
վոյն, վճռեաց ընտրել ոչաջորդ իւր ըստ կանո-  
նադրութեան Գրիգորի Ժ. պատպին 'ի ժողովն  
Լուգդոնի, և Կղմայ Ե 'ի ժողովն Վենեայ :  
Եւ ինքն ամաց վաթսուն և չորից կամ վեցից  
կիքեալ զկեանս իւր երջանիկ մահուամբ վոխե-  
ցաւ առ տէր յեօթն կաղանդաց մարտի յամին  
1447, անկորուստ պահեալ զառուգութիւն դի-  
մացն և զգայութեան : Եւ եկաց նա հայրապետ  
ամս վեշտասան :

1 Հուայ . և Սբան . յամ 1451=1447 : Ս. Ան-  
դրանին . Տ. 3. Վէր . 22. Գլ. Ճ . Ճառ . 18 : Առ Լաբ-  
հա . 12 : Օգոստ . պատրիք . առ Լաբ . հապ . 15 :

## ՄԺ

## ՆԻԿՈՂԱՅՈՍ Ե

Ա. Տ. 1447. և իսաւերաբեռն Փետերինսի գ. 8.  
և Յով. Բաղելագի 24:

1530. Նիկողայոս սարձանացի յառաջնմէ առուանեալ թովմաս կարդինալ և պիսկոպոս Բօնոնիայ որդի քժշկի յաղքատ տումէ, այլ փարթամբ և փառաւոր խմաստութեամբ, առաքինութեամբ և վարդապետութեամբ, կարգեցաւ քահանայապետ Հռովմայ ամաց յիսունեւրկուց յեօթնետասն կարդինալաց հաւանութեամբ և այլոց ամենեցուն միով աւուրբ յառաջ քանի զիոնայս մարտի յամին 1447: Սա այր քաղցրաբարոյ և համեստ խորին խոնարհութեամբ ընդգետ, մ կացեալ հրաժարեր 'ի ծայրագոյն իշխանութենեց անտի. և բաղում թախանձանօք հազիւ ուրեմն յանձն առեալ անուանեցաւ Նիկողայոս Ե 'ի յիշտակ բարերարին իւրոյ Նիկողայոսի կարդինալին Աւրերգատի, որ բաղմօք յառաջ նախագուշակեալ էր նմալինել գլուխ սրբոյ եկեղեցւոյ :

Սա նախաքան զամենայն փոյթ կալաւ արմատախիլառնել զհերձուածու և յուղութիւն ածել զանուղղայս բատիլեան ժողովոյն + մինչեւ բերապապն Փելիքս Ե (1529) ընդ կողմնակցաց իւրոց հպատակեալ դաւանեաց զնա օրինաւոր գլուխ և ճշմարիտ քահանայապետ: Եւ Նիկողայոս գթասիրեալ մեծարեաց զՓելիքս և կար-

բեւար . Գիշ+ 3 . յշ . պինասը . եիշը . գւ . ծը :  
Պօղս Եմլ . Գիշ+ 10 : Ճաշ . ընտհ . ծը : Պարմ :  
Հայ . Գիշ+ 6 . Գւ . Ռ :

դեաց զնա կարգինալ Սաբինեան և յուշերժա-  
կան նուլիակ առաքելական գահին 'ի Սաբաւ-  
դիա, թոյլ տուեալ նմա կրել զամենայն նշանս  
քահանայապետութեան, տանել առաջի իւր  
զԱրբութիւն հանդիսիւ, կրել մատանի ձկնոր-  
սական, և հողաթափ խաչանիշ'ի համբոյր ժո-  
ղովրդեան, և հովանոց: Եւ հաստատեաց զամե-  
նայն պիտանի արտօրս նորին. և 'ի ձեռն երից  
սահմանաց հրատարակեաց ամենայն քրիստո-  
նէից՝ թէ իւրուլ հաճութեամբ արար զայս ամե-  
նայն:

Այսպիսի խոհական հանճարուլ խարսխեալ  
զեկեղեցին 'ի խաղաղութեան՝ ձեռնամուխ եղե  
հրատարակել և զհանդէս յորելինի 'ի 1450 ըստ  
կանոնադրութեան Կղեմոյ Զ. և այնպէս մե-  
ծահռչակ եղե և բաղմաժողով հանդէսն այն,  
որպիսի չեր եղեալ բնաւ յառաջ քան զայն:

Ըետ այնորիկ զուուրբն Լաւրենտիոս Յուստի-  
նեան բարձրացոյց 'ի պատրիարքական պատրի-  
ստ գուշակութեան Վղեքունդրի (1490): Զե  
որպէս երբեմն Եպինեոս պատ արտաքոյ կամաց  
նորա կոչեալ եր զնա յեպիսկոպոսութիւն,   
սոյնպէս և 'Եիկողայոս զնա առաջին պատրիարք-  
կացոյց մայրաքաղաքին Վենետիկոյ, անդ տեղա-  
փոխեալ զպատրիարքական աթոռն 'ի Գրատիոյ  
առանց հարցանելոյ և դիտելոյ զյօժարութիւն  
ծերակուաին. իբր զի՞ կամ եր նորա ոչ զքա-  
ղաքն եեթ, այլ մանաւանդ զանձն նորա վերա-  
պատուել:

ԶՓեղերիկոս Գ աբբայ Գերմանիոյ մեծա-  
րեալ 'ի Հռովմապահական կայսերական թագիւ:  
Եկաց պաշտպան գիտնականաց, բարեկարգեաց  
զեկեղեցականս, և զուխան Հռովմայ Ճոխա-  
ցոյց փառօք: Այնչափ սիրելի Եիննմա ուսում-  
նասերբ զի ժողովեալտու ինքն զիմաստաներս յայլ

և այլ աշխարհաց պատուասիրէր ընտանութեամբ : Ի լեառն բեսուղանու կանդնեաց համալսարան , յաճախեալ 'ի նմա վարժիչս քաջահմուտս և կիրթս : Հիմնեաց գրաստանը շքեղ , զարդարեալ հին և նոր մատենիւք երեւլի մատենագրաց՝ թուով երեքհաղար զոր ծանր գնով ժողովեաց 'ի Յունտատանէ և 'ի կողմանց կողմանց աշխարհի : Այնչափ շինուածս մեծագործը և զարմանալիս հիմնեաց 'ի շուովմ , որպէ եթէ 'ի լրումն գային՝ ոչինչընդհատ լլնեին 'ի մեծագործութեանց նախնի ինքնակալուց :

Սակայն լքաւ յարիասիրտ մեծանձնութենէն իբրև լուաւ զաղէտալի անկումն արեւելքան կայսերութեան , և զգերութիւն Յունաց և զառումն կոստանդինուազուց 'ի Տաճկաց . թէպէտ և ջանահնար եղեալ էր միաբանել զՅոյն և ազատ կայուցանել զնոսա 'ի կոտորածէ անտի 'ի ձեռն քրիստոնեայ թագաւորաց . այնպէս , զի մինչե ցվերջին աւուրս անդ գեգերէին նուիրակք նորա ելի հնարա գտանել : Ետքերել 'ի Յունաստանէ զպատմութիւն ցաւալի կոտորածին այնորիկ և յեղուլ 'ի յունէ 'ի լսաբին , զի որպէ ընթեռնուցունն կարեկից լիցին չարեացն <sup>1</sup> : Իսկ

1 Զինի անիման մեծի իայսերութեան Յանաց իարգիւթան Առանաց իարգիւթան 'ի սուլդուն Արէհեմմեպէ Բ 'ի կոստոնդինուապօլիս Գրչնասագիսո ապաբրդարդ Յանաց . "ը ողբալուն գրէ ' Ան նման գրատ անողպառը լուղենաց . "ը ա իւնամ իւնամ իւնամ պիտուն զամ երիս մաս պարզուն . իւնամ երիս իւնամ պարզուն զամ երիս 'ի ֆեռու ապելուաց մերոց : Զի 1453 ընդ ծովել ընդ ուամատ ապաւարեալ զկոստոնդինուապօլիս առաջն հղօք մարդի 'ի 29 մայիսի , և իւնամ պարզուն զամ բարեկամ բազմութեան 'ի Յանաց : Խաչ իայս ընդ կոստոնդին բարեկամ առաջ 'ի իւնամ անիմա , և

ինքն փոխստելիցն խնամ տարեալ՝ վշտանայր հանապազ. յորմէ օրքան զօր տկարացեալ'ի ցաւոց սրախին փոխեցաւ առ տէրյառաջ քան զի՞նն կազանդաց ասրիլի յամին 1455. կացեալ յառաջնորդութեան եկեղեցւոյ ամս ութ և աւուրընիննետամն: Ճամանակակից գտաւ նմասուրբն Անտանինոս արքէ պիտկոս Փլորենախոյ 'ի կարգէ սրբոյն Դումինիկոսի, որ և դրեաց բազումինչ:

Բաժառահի նորա Հեղինե ընդ դադերացն անդամ անդամ յօշապէցաւ 'ի Տաճկաց: Յեպ այնուի սուլուան Արէհե միջդ մատեալ'ի ասմասը սրբոյն Աստիայ՝ մագուց պազօնն և եպ որոնել զդի կայսեր. պաշոյ հագետաւ ընդ գլուխի հրամացէաց բետեռել 'ի սիւն մի բարձր, և առա հանեալ զմարդն ապահեաց 'ի նշան յաղթութեան:

Արդ 'ի մէծեն կոսովանդիանուն և Հեղինեայ, յորոց սիիլին կալաս արևելյան կայսերութիւնն մինչև շվերզին կոսովանդին և Հեղինե, առ որովդ դադարէաց՝ անցին ամս 1123: Եթէ Բաղդեալու կայսր մէտքուն մնացը ընդ Հառավայ՝ Լատինի ապահովանելին զնա, որպէս անդադար յարդուրէր ապահու. Բայց յըմբուգութիւնն նորա իրանեցաւ և ինքն և ապահութիւնն ։ նմին իրի և ողբացը պնուսա անմիջիւաը 'Նիւշայոս ապահ:

Իսկ սուլուան Արէհե մինւրէո 'ի Պըստա եր՝ խոսքացէաւ եր Յաշակիյաց եպիսկոպոսին Հայոց դնել զնա գլուխի աղքին՝ եթէ յաջողեսցի առառութ ուկուսպանութիւնութիւնութիւն: Իբրև ետք զնա, եպ բերել զնա անդ և այլ ևս զնա պահեաց Հայոց, և արքանի նամական կացոց պատպարիաց, որոց յաջողութութիւնն պատել շաբաթ:

1 Հայոց. և Աբոն. յամն 1447=1455. Բէտանար. Յասոս. Գլ. Շ: Առ Թամաւ. Ալ. Կապ. 1. Գիշէ 6: Ենեաս Ախլ. յշ. Վեճ. Երակ. Գլ. Ծ՛: Պատմ. Հայ. Գիշէ 6. Գլ. Շ:

## ՄԺԱ

## ԿԱԼԵԽՍՈՍ Դ

Ա. Տ. 1455. և կայսերութեան քերերինու 16:

1531. Կալեխսոս յառաջադոյն ձայնեալ Աւ-  
գոստոս բորձեան աղնուազարմ կարգինալ  
սպանիացի 'ի վալենցիոյ, կարգեցաւ քահանայ-  
տագետ 'ի վեց իդոսացն ապրիլի յամին 1455,  
որպէս և նախադուշակեալ էր վիճենցիս Քե-  
րիւլեան ազդակից էւր: Այնչափ եղեն սորա-  
գութ և խնամք 'ի վերայ քրիստոնեից, զի ոչ  
միայն 'ի սկզբան անդ ջան եդ յամենայն վայրս  
բարեկարգել զնոսա, այլև ուխտեաց գումարել  
խաչակիր զօրս և խորտակել զզօրութիւն հագա-  
րացւոց յազարտ վարողաց զԵւրոպա: Նմին իրի  
եհան կոնդակս յորդորանաց առ ամենայն իշ-  
խանս և առաքեաց նուիրակս առ ազդս քրիս-  
տոնեից և քարոզիչս բանիքունս և զօրաւորս առ  
'ի յորդորելց զհաւատացեալս 'ի նոյն հոգեոր  
մարտ կամ' 'ի սրբոզան պատերազմ: Մինչ զի՝  
միայն քարոզութեամբ Յովեաննու կապիսարա-  
նու գումարեցան քառասուն հազար զօրք: Եւ  
առ 'ի զօրաւոլոցն ունելինքեանց զվերին տեսչու-  
թիւն՝ պատուիրեաց զմիջաւուրբը 'ի ձայն զան-  
գակի եկեղեցեաց երիցս ասել զաղօթս տերու-  
նական և զողջոյն հրեշտակական: Նորին աղա-  
գաւ սուլդան Մէհէմմէտ, որ պաշարեալն էր  
զՊէլլըատ, յաղթեցաւ 'ի քրիստոնեից առաջ-  
նորդութեամբ մեծի զօրավարին Ունիագի,  
խորհրդակցութեամբ Գարվայեան կարգինալին  
նուիրակի պապին և յորդորանօք Յովհաննու

քարոզչին : Եւ զի այս յաղթութիւն եղե՛ի վեց օդոս . յաւուր այլակերպութեան փրկչին , վասն այն քահանայապետն սահմանեաց 'ի յիշատակ այսր յաղթութեան մեծահանդէս կատարել զայն աօն աէրունական , բաշխեալ և զօրհնութիւն ներողութեան : Իբրև մեռաւ Ունիադ , ողբաց զնա պտապն և ամենայն Եւրոպա . և սուլդանն իսկ լուեալ զմահ նորա ցաւակցեալ ասէր . Զերյաշխարհի այնպիսի դիւցազն : Զորոյ զաեղին փոխաբերեաց առ ժամն վերոյտացեալ Յովհաննէս քարոզիչ : Իսկ սրբազանն 'ի ձեռն ծանրագին ընծայից յորդոր մատոյց մեծի խանին թարաց և Ուղուն Հասանայ արքային Պարսից վանել զայլաղդիս :

Զգուշացոյց զեկեղեցականս յամենայն վայրս , 'ի անտեսութեան խոհական և համեստ լինել , որպիսի ինքն էր . որ և յեպիսկոպոսութեան իւրում և 'ի կարգինալութեանն չեառ թոշակս մասնաւոր 'ի դիւրութիւն անձինն . այլ շատանայրեկամոօք վիճակին իւրոյեկեղեցւոյն Աղենցիոյ . և թէ մի ոք ինքնաշարժ քարոզեսցէ 'ի մատրան . քահանայապետին առանց գիտակցութեան վարդապետի պալատան : Իսկ զԱմսնառս եսպիսկոպոս Սարեսբերիոյ և զՎինչենցիոս Ֆերիերէան կարգեալ 'ի սուրբք՝ սահմանեաց վասն նոցապաշտօն փառաբանութեան Աստուծոյ : Իբրև մեռաւ արքայն Արագոնիոյ և Կէապօլսոյ , կամլը միացուցանել ընդ աէրութեան եկեղեցւոյն Հռովմայ զթագաւորութիւն Կէապօլսոյ որպէս ժառանգութիւն և կալուած գահին : Որում թէպէտ ընդդէմ եկաց Փերտինանառս անհարազատ որդի արքային , սակայն անշուշտանէր 'ի գլուխ զայն գործ , եթէ չէր կանխեալ նմանաս մահու . զի փոխեցաւ 'ի կենաց աստի լի աւուրբք . յութ իդոսացն օդոս . յամին 1458 , կա-

ցեալ՝ ի հայրապետութեան ամսերիս, ամիսս երիս և աւուրս քսանեինն ։

## ՄԺԲ

## ՊԻՌԱ Բ

Ա. Տ. 1458; և կայսերական Փետրվարի 19:

1552. Պիսո սենացի բիգոլոմինոս՝ ընկալաւ զալատիւ քահանայապետութեան չոռովմայ ՚ի չորեքտասան կալանդացն սեպ ։ յամին 1458: Սա ծնեալ՝ ի 19 հոկ ։ յամին 1405, սնաւ ինաւմով ՚ի կարեոր ուսմունս՝ անուանեալ յառաջ Ենէառ Սիլվիոս, և աջողեցաւ յամենայնի յոր ինչ և ձեռնարկեաց ՚ի մեծագունից ։ Կարգեցաւ խորհրդական Փեդերիկոսի կայսեր և դեսպան, և ատենադպիր ՚ի ժողովին բասիլեան ։ Ուրանօր հռչակեցաւ մեծիմաստ հմտութիւն նորին ՚ի գրութեան և ՚ի պերճախօսութեան ։ մինչև թողեալ զալաշտալանութիւն իւր սակս այնիր ժողովոյ՝ կարգեցաւ եպիսկոպոս Դրիեստայ հանդերձ կարգինալական սպատուով ։

Կարի սիրելի եր նմա անպարապ լինել՝ ի շարագրածոյ բանից, յորում և յաջող իսկ եր ։ թէ պէտ և յախտէ յօդացաւութեան տանջեր միշտ, և գործք կարեորք և մեծամեծք ՚ի վերայ կային ։ Բազում եղեն նորա սիրալի գործք, յորս մե-

1 Հուայ ։ և Սբն ։ յամ 1455=1458: Կիան ՚ի կար սորա ։ Ս ։ Անպոնին ։ ՚ի ծայ ։ յ ։ 3. Վէ ։ 22. Գւ ։ ծ ։ բարոնին ՚ի ծան ։ Վայաբան Հու ։ Շ ի տ ։ օգ ։ Լուդովիկ ։ թ ։ վ ։ Գիբ ։ 2. Լամբերտ ։ յ ։ պօնտին ։ Ք ։ 585 ։ Պլատին ՚ի վար սորա ։ Ե ։ 245:

ծութիւն հոգեոյ նորա փայլեալ երեւը . արի  
 'ի վիշտս , և զգուշաւոր 'ի յաջողուածս : Չա-  
 րար ինչ բնաւ ընդդէմ արդարութեան առյեր-  
 կիւղէ և կամ առ 'ի շահ : Զանահնար եղե ոչ  
 միոյն բարեկարգել զեկեղեցին և զհօտ իւր .  
 այլ և փառաւորել զհաւաստ քրիստոսի ընդդէմ  
 անհաւատից : Ի սկզբան անդ արգել խստիւ  
 մի ումեք բողոքել զսահմանագրութեանց պա-  
 պին առ ապագայ ժողովն ընդհանուր , ար-  
 կեալ ընդ պատժով բանագրանց զանսաստս :  
 Զոր միանգամբ գրեալ եր յանզգոյշ յատենա-  
 դպրութեան անդ 'ի ժողովն բասիլեան , մեր-  
 ժեաց զամենայն : Զվեճն ծագեալ 'ի մէջ Ֆրան-  
 չիսկեանց և Դոմինիկեանց կարճեաց , զայն թէ  
 արիւնն հեղեալ 'ի մարմնոյն քրիստոսի 'ի շար-  
 չարանս արդեօք անձնաւորեալ եր 'ի Բանեն  
 թէ ոչ : Եւ պատուեր ետ առաջի իւր վլաճել  
 և որոշել զինդիրն . և սաստեաց նոցա սպա-  
 նալեօք մի այլ ևս բանակռիւ լինել :

Ի ժամանական յայնոսիկ գլուխ սրբոյն Ան-  
 դրեի առաքելոյն որ պահեր յԱքայիա , և պաշտ-  
 պան եր քաղաքին այնորիկ , փոխագրեցաւ 'ի  
 չոռվմ ճարտարութեամբ թուվմայի Բաղեռոլո-  
 դի իշխանին Մոռայի . զոր Պիոս զետեղեաց 'ի

1 թէպէտ 'ի հնուան նշնէն դիմախօս և վիճող  
 պայմ խնդրոյ , սակայն որովհեալ և ասպուածաբանից  
 բանիւ Դոմանիացայն՝ թէ զոր ինչ մեռնդամ և առ-  
 բանն 'ու երբէտ ելուզ : Ուսպի ամեաց գունակ մար-  
 նոյն պրիստոսի , այլ ու նուազեցաւ ինչ 'ի նմա-  
 նէ : Եհեղ զբանադակ արիւն իւր . բայց և արիւն  
 այն հեղեալ անձնաւորել եր , այսինքն ասպուածա-  
 ծաբանիւն . որպիսի և այն 'որ 'ի սուրբ իսրահուրդ  
 բաժակին : Եւ ահա այս եր զորմէ վիճեին իշօնաւորին  
 այսուիկ :

մատրան մեծի տաճարին սրբոյն Պետրոսին ուշ  
բանօր հանգուցեալ էր մարմին առաքելավե-  
տին : Ազաքանօք քաղաքակցաց իւրոց զերանու-  
հին Կատարինէ սենացի պատռեաց 'ի դասս  
սրբոց : Խոնարհեցոյց զմիսս Լուգովիկոսի ԺԱ  
ալքոյին Գաղղիոյ թոյլ տալ 'ի տեղութեան իւ-  
րում՝ զի հրաման առաքելական գահին զօրասցի  
որպես յառաջն , և արտահալած առնել զսահ-  
մանագրութիւն հօրիւրոյ Կարոլոսի կ զանուա-  
նեալն Բըամանիւիտ 'ի ծանրութիւն գուերաց և 'ի  
խափանումն տարեկան բաժին զոր տային պատին:

Կամեցեալ Պիոսի պատերազմ՝ յարուցանել  
ընդգեմ այլազգեաց ըստ որոշման Կալիստոսի  
պատին , չոքաւ 'ի Մանդուա , և գումարեալ ժո-  
ղով եսլիսկոսոսաց և իշխանաց՝ ծանոյց նոցա  
զվախճան ժողովոյն , և հաստատեաց զմարտն :  
Եւ գումարեաց իբր չորսհարիւր հազար զօրս  
քաջակիրթս և ուղղեաց զնոսա յԱնքոնա դի-  
մել յարեելս : Անդ եհաս 'ի ձեռն յորդորական  
նամուկաց իւրոց Քրիստոփոր Մաւրոս իշխան  
Վենետիկոյ տասն երեքկարգեան ցոկանաւոք զի-  
նելովք հանդերձ ամենայն պատրաստութեամբ  
և քաջ պատերազմականօք : Եւ Պիոս իբրեւ զը-  
նայր անդրքաջալերել զզօրս , ի ճանապարհին տիւ-  
տացաւ ջերմամբ մեծաւ . և հասեալ 'ի Լաւրե-  
տոնի ընդ աեսանել զտուն Տիրամօրն առողջա-  
ցաւ 'ի ցաւոց , և ասկո չոքաւ անդ յուխտ և 'ի  
շնորհակալութիւն (1511) : Յետ այնորիկ յան-  
քուժելի ախտէ որ հեացեալ էր 'ի նմա , տկարա-  
ցաւ և փոխեցաւ առ տէր յիննեւտասն կազան-  
գացն սեալ . յամին 1464 'ի հասակի յիսունեինն  
ամաց , անկատար թողեալ զգերահռչակ գործն  
զայն . վասն որոյ և ցրուեցան ամենեքեան : Իսկ  
մարմին նորա բերեալ 'ի Հռովմ եդաւ փասօք  
'ի մատրան տաճարին Ալատիկանու . ուր երկու

տմօք յառաջ զետեղեալ էր նա ինքն զբլուխ  
սրբայն Անդրեի : Եկաց նա յիշխանութեան իւ-  
րաւմ ամս վեց պակաս հինգ աւուրբք :

## ՄՃԳ

### ՊՕՂՈՍ Բ

Ա. Տ. 1464, և կայսերական Փետերի կամ գ. 25:

1533. Պօղոս վենետիկեցի ազնուազարմ յառա-  
ջագոյն անուանեալ Պետրոս որդի 'Նիկողայոսի  
Պարագոյի և Բողլիքանայ Գոնդուլմերեայ քեւն  
Եւգինէոսի Դպապին՝ 'ի հասակի յիսուներկու  
ամացընարեցաւ քահանայապեա յերիս կաղան-  
դացն սեալ . յամին 1464 յառաջնում նուագի  
գումարելց կարդինալաց : Սիրող էր սա մեծա-  
դործութեանց և փառաւորութեանց . և այնչափ  
ողորմած և քաղցրասիրա , զի չէր ոք կարօտ որ  
չէր Երախտաւորեալ 'ի նմանէ . և ինքն իրքն չը-  
կարէր զոք բանիւ համոզել 'ի լաւ անդր զոր կա-  
մեր , արտասուօք շարժէր , զի գիւրաշարժ էր 'ի  
լաց : Յայտնեցաւ նմա , տսեն , սքանչելեօք փոքր  
մի յառաջ 'ի սրբոյ կուսէն Մարիտմայ բարձ-  
րանալ յայն պատիւ 'երբ չոքաւ 'ի տուն նորա 'ի  
Լաւրետոն (1511) սակա առողջութեան անձին  
'ի Ժանախտէ : 'Նմին իրի մօրե զբայր նորա Եւ-  
դինէոս ետ նմա պատիւ կարդինալութեան :

Արդ 'ի բարձրանալ նորա յաթու հայրապե-  
տութեան ըստ վայելուչ հանդիսասէր բարուցն  
աճեցոյց և զսպատիւ կարդինալաց . զի ետ նոցա

1 Հայու . և Աբու . յան 1458=1464: Յուլ .  
Դրինէմու յան 1456: Յուլ . Գոբէլ . Գիւ + 5 . Եր .  
246: Պէտ . Յունուին . Գիւ + 8 . Եր . 285 :

իշխանութիւն կրել զմիթը մետաքսեայ՝ որ պատկից էր սեփական յառաջ ժամանակաւ. և ինքն վերստին եմոյծ զառվորութիւնն վասն պապից կրել զեռապսակ թագ. որ 'ի բազմաց հետեւ խափանեալ էր: Ծնորհեաց նոցա կրել և փոքր գլխարկ ծիրանի 'ի պապական խորհրդարանի, և նստարան բարձր յորոշումն յայլոց աստիճանաւորաց, և այլ ևս առաւելութիւնս 'ի հանդէս հեծելութեանիւրեանց: Եւ դարձեալ եթէ չունիցին յեկեղեցական հասից յամին չորս հազար ոսկի, ընկալցին ամիս յամսոյ 'ի հասարակաց դանձարանէ հարիւր ոսկի: Զհանդէս յորելինին սահմանեաց յիւրաքանչիւր քսանեհինդամս հրատարակել, որպէս ցարդ պահի:

Յետ այնորիկ խորհեցաւ պատերազմ յարուցանելընդդէմ Տաճկաց: Գուն գործեաց զհերձուածս չուսեանց անհետ առնել: Յաղագս որոյ զԳրիգոր արքայ Բոյեմիոյ զշաղախեալն յաղանդս նոցին՝ դատապարտեալ նզովիւք մերժեաց 'ի թագաւորութենէ: Խոկ զարքեպիսկոպոսունս ԲԵՆԵՎԵՆՏՈՎԱցւոց, որք համարձակէին կրել զմիթը պապական եռապսակ և Սըրբութիւն տանել առաջինկուն արար: Խրբեւ եկին 'ի Հռովմ Փեղերիկոս կայսր և մարքեզն Բորտիոսի և գուքսն Մուտինեայ, մեծարեցան 'ի պապէն հիւրասիրութեամբ և ընկալան զպաստանունս և տիտղոսս ըստ նախնի սովորութեան: Զգուշացոյց զի մի առաքելական նուիրակք և առաջնորդք դաւառաց ընծայո մեծադիմնո ընկալցին, բայց եթէ սովորական ինչ իցեն 'ի կարեւոր պէտս սակաւօրեայ: Արդել ևս մի զինչս եկեղեցւոյ օտարացուցանել և մի 'ի վարձու առ առ առ քան զամս երիս: Եբարձ զդպրոց ուսումնականաց անուաննելոց Առուրէ Վանեսուի: յորս Բղատինա անզոյշ 'ի բանս և ազատախօս

՚ի նուրբ խնդիրս հաւատոյ՝ արդելաւ ՚ի բանափի:  
 Զաթոռանիստ եկեղեցի օրբոյն Մարկոսի վայե-  
 լուչ զարդարեաց գեղեցիկ շինուած ովք: Կա-  
 ռոյց առ Վատիկանաւ և մեծագործ օժարանս  
 առ ՚ի զրօսանս աւագաց և տպապին յամարայնի:  
 Կանգնեաց և ամրոց հզօր ՚ի բերուղիա: Զբա-  
 նիբունս և զիմաստունս միօրինակ պատուասի-  
 րեաց, մանաւանդ որք ունեին զանուն բարի: Ի  
 չորրորդ ամի քահանայապետութեան նորա  
 սկսաւ ՚ի Հռովմ արուեստ տպագրութեան  
 յամին 1467, որ ամօք յառաջ հնարեալ էր ՚ի  
 գերմանիա: Յետ այնորիկ կանիսեալ առնայն-  
 կարծական մահ կաթուածոյ՝ փոխեցաւ յութ  
 կաղանդացն օգոս: յամին 1471, կացեալ յիշ-  
 խանութեան ամս վեց, ամիսս տամն և աւուրս  
 քսանևլեց<sup>1:</sup>:

## ՄԺԴ

## ՔՍԵՍՏՈՍ Դ

Ա. Տ. 1471, և կայսերութեան Փետերի իունի գ. 32:

1534. Քսեստոս սավոնացի յառաջագոյն  
 ձայնեալ Ֆրանչիսկոս Հռոբորեոս՝ ընտրեցաւ  
 քահանայապետ ՚ի հինգ իդոսացն օգոս: յամին  
 1471: Որդի էր սա աղքատ ձկնորսի ուրումն, և  
 մտեալ ՚ի վանս Ֆրանչիսկեանց այնչափ գերա-  
 պանծ հանդիսացաւ ՚ի բարձրագոյն ուսմունս և  
 յառաքինի վարս, մինչև կացուցաւ ընդհանուր  
 առաջնորդ կրօնի իւրում: Ապա համբաւ մեծի

1 Հուայ. և Աբոն. յահ. 1464=1471: Յակով  
 բիգու. գիբ+2. էր. 350: Միտ. Գանենեզ. ՚ի վահ-  
 ուրս: Բրիերիս յահ. 1464:

իմաստութեան և գերազանց հոգւոյ նորա շարժեաց զՊօղոս պապ ամբաւնալ զնա 'ի պատիւ կարդինալութեան ըստ յանձնարարութեան մեծահամբաւ յոյն կարդինալին Բեսարիոնի տրամիլոնցւոյ առն իմաստոնոյ և բարեպաշտի : Բայց 'ի ժողովի ընտրութեան պապին սիրա ամենեցուն յարեալ էր 'ի նոյն ինքն 'ի Բեսարիոն կարդինալ . այլ 'ի հրաժարելնորա՝ հաստատեցաւ Քսեստոս :

Սա նախ քան զամենայն փոյթ կալաւ հալածական առնել զսուլդան Մէհէմմէտ 'ի սահմանաց քրիստոնէից՝ յորս ասպատակէր : Եւնորին աղադաւ 'ի ձեռն հրեշտակաց իւրոց յորդոր մատոյց արքայից և իշխանաց միաբանել 'ի մարտընդդէմ նորա : Այլ 'ի գանդաղելնոցա՝ ինքն դումարեաց զօրս և ընդ Վենետիկեցւոց դիմադրաւ լեալ խորտակեաց զնա :

Յետ այնորիկ գուն գործեաց 'ի խաղաղութեան պահել զեկեղեցին և անարատ զհօտ իւր յաղանդոյ Հուսեանց • զթագաւորութիւն Բոյեմիոյ զասկականեալն 'ի Հուսեանց՝ վճռաւ ետ Մատթէի արքային Հուսեագարիոյ : Խոկ զԲոյեմացիս արձակեաց հանդերձ երդմամբ կրօնի , որ հնազանդեալ էին Վլտախուլաւոսի որդւոյ արքային Պողոսիայ : Այլ և Փեդերիկոսի արքային Նէսպոլսոյ թողացոյց զսովորական տուրս ցորչտի կենդանի էր , միայն թէ ամի ամի տացէ սպիտակ երիվարս . և 'ի լինել հարկի ակնարկութեամբ պապին զծովեղերս պաշտպանեսցէ 'ի հրոսակաց զօրօք և ծախիւք իւրովք : Զժառանգութիւն աւանդապահ իշխանութեան Փերարացւոց առեալ շնորհեաց Հելքիւլեայ Ատեստենի պայմանաւ ամ յամէ հատուցանելոց հինդհազար ոսկիս : Յորմէ ծագեցան վէճք և ատելութիւնք և սարապարտ կորուստ 'ի մէջ իւրեանց : Ալճ-

ուեաց զի պաշտօնեայք աղերսագրոց տյիուհետեւ  
լիցին երկոտասան որբ յառաջն չորեքտասան էին :

Հաստատեաց զկարգն Մինորից սահմանեալ  
՚ի Ֆրանչիսկոսէ Պաւլէան . և նորոգեաց զկրօնս  
բոկոտն Օդոսավինեանց սահմանեալ ՚ի Մկրտչէ  
Բոկիոսէ գենուտցւոյ : Յամին 1475 հրատարա-  
կեաց զհանգէս յոբելինի ըստ օրինագրութեան  
Պօղոսի Բ ( 1533 ) : Զատօն ամենայն սրբոց վըճ-  
ռեաց ութօրեայ կատարել : Յաւելև զայլ աօնս  
յոլով և հանդէս , որպես զըզութեան և զըն-  
ծայման Տիրամօրն և զըովակիմայ և զԱնեայի , ըղ-  
Յովսէփայ և զՖրանչիսկոսի . թէալէտ և զոմանս  
՚ի տօնից աստի յայլ և այլ ժամանակս ևս հաս-  
տատեալ են : Զերանելին Բոնավենտուրանու-  
իոպս կարդինալ՝ գրեաց ՚ի կարգս սրբոց և ՚ի  
վորդապետս եկեղեցւոյ : Սահմանեաց սպաշ-  
տօն ՚ի սլատիւ սրբոյն Յուլիանու Բոնայի ման-  
դուացւոյ ՚ի կարգէ Անտապտականաց : Պատմէ-  
վագինկոս՝ թէնա ինքն այց արար մարմնոյ սըր-  
բոյն Ֆրանչիսկոսի , որ եկաց յոտին , և աջօք տեսա-  
ներ և ձեռօք շօշափէր : Կարճեաց զվէճն Ֆրան-  
չիսկեանց և Դոմինիկեանց յաղագս հրաշալի վե-  
րաց երանուհետոյն կատարինեայսենացւոյ , և սաս-  
տեաց նոցա չվիճել յաղագս անարատ յղու-  
թեան տիրամօրն . և շնորհեաց զօրհնութիւն-  
ներովութեան տօնաստիրաց ՚ի նոյն աւուրս :

Ոչ նուազ ոք երեւցաւ և ՚ի մեծագործու-  
թեան : Զկամարակալ մեծ կամուրջն ՚ի վերայ  
Տիրերիս գետոյ ՚ի Հռովմ հաստահիմն կառոյց ,  
և յարդ յանուն իւր յորջորջի : Զմաաենա-  
դարան Վատիկանու նորոգետլ շքեղացոյց զա-  
նազան դրուտկօք և յոլով մատենիւք : Զարս  
ուսումնականս և զհմուտա լատին , յոյն և երբայ-  
եցի լեզուաց ճոխացոյց առասա թօշակօք : Իսկ  
զբաղդինա կարգեաց գրապետ մատենադարա-

նին . որ և գրեաց զվարս քահանայտպետաց : Բազմացոյց զկարդինալս և կարգեաց զնոսա 'ի կարևոր պաշտօնս . 'ի նոյն պատիւ բարձրացոյց և զերկու եղբօրորդիս իւր . որոց մին ընարեցաւ յետոյ պապ Յուլիոս Բ անուն (1538) : Գրեաց զանազան ճառսուել իմաստալից գիրս աստուածաբանականս : Եւ յամին 1484 փոխեցաւ առանձիւ յիգոսս օդոս . կացեալ յիշխանութեան ամս երեքտասան և աւուրս հինգ<sup>1</sup> :

## ՄԺԵ

### ԻՆՍՈՎԿԵՆՏԻՈՆ Ը.

Ա . Տ . 1484 , Խ Հ Ա Յ Ա Շ Հ Ա Յ Ա Ֆ Ե Շ Ե Շ Ի Ի Ա Յ Ի Գ 45 .

1535 . Զկնի փոխման յաստեացս մեծի սկապին . Քսեստոսի ընարեցաւ յաջորդ յաթուա . քահանայտպետութեան Յովչաննէս Մկրտիչ ազնուազարմ գենուացի 'ի չորս կաղանդացն սեպ . յամին 1484 . որ 'ի թագագրութեան անդ անուանեցաւ իննովկենտիոս Ը : Սա ազգաւ յոյն և 'ի գիրեան յերեւելի զարմէ ծնեալ 'ի 1432 , խնամովվարժեալ յուսմունսկարևորս յաջողակե աշխոյժ գտաւ . 'ի գործառնութիւնս , և խոհական և քաղցր 'ի կենակցութեան յաշխարհական կարգի անդ իւրում : Յետ ունելց զաւակս թողեալ զաշխարհ առանձնացաւ յեկեղեցական վեհակ : Սակայն 'ի փութոյ և ջանից նորին յօդուա

1 Համայ . Խ Սբոն . յամ 1471 = 1484 : Բւշտ . 'ի վարս սոբա : Ոնսիր . Բանվին . սոս Բւշտ . եւ . 268 : Լամբեր . Գիւր + 4 . 5 . 2 . Գլ . Է . 19 . Սահման . 6 . 7 . 19 : Կոնդակիտիր + հապ . 1 . 2 . եւ . 404 :

ընկերին և 'ի պայծառութիւն սուրբ հաւատոյ շարժեալ քահանայապետացն յանձնեցին 'ի նա դործս մեծամեծս . որ և յամենայինի անստգիւտ դտեալ՝ արժանացաւ աստիճանի եպիսկոպոսութեան Սելլիեայև կարդինալական աւագութեան 'ի քսեստոսէ . զոր և յաջորդեաց հաճութեամբ բաղմաց :

Փոյթ կալաւ նախ քան զամենայն հաստատել զսէր և զիսաղաղութիւն 'ի մէջ քրիստոնեայ իշխանաւորաց , որով և խոալիս 'ի խաղաղութեան եկաց զամենայն աւուրս կենաց նորա : Իսկ զարքայն Արտագոնիոյ և Կասաելայ զֆեդերիկոս Եմեծարեաց Կաթողիկեան տիտղոսիւ . որոյ տիրեալ քաղաքին Գրանատայ արտահալած արար 'ի Սպանիոյ զվաղեմի իշխանութիւն Մաւրիտանացոց : Ընդ նմին և արտասահմանեաց անտիութեան հազար չըեայս : Ընորհեաց իննունկենտիոսի կարդապետին Մաւրայի զիշխանութիւն կրելոյ զդլսարկ կարդինալական սակամեծագոյն գործոց յանձնելոց 'ի նա 'ի նմանէ :

Ընդ այն ժամանակս ետ մեծ հայրապետն նորոգել 'ի չռովլմ զմայր եկեղեցին սուրբ խաչի . և ահա դտաւ յանյայտ թանդարանի տախտակ վերնադրի խաչին Քրիստոսի :

Սուլդան Պայազիս 'ի համբաւոյ իննովկենտիոսի յահի մեծի եղեալ առաքեաց առ նա 'ի կոստանդինուսկօլոսոյ 'ի ձեռն դեսպանաց յընծայ ոչ միայն գումարու ոսկւոյ , այլ որ մեծն է , զվաւերական տէպն զմսեալն 'ի կողս փրկչին և զսպունդն ընդ եղեգանն :

Առ իննովկենտիոսիւ եգիտ զնոր աշխարհն Ամերիկա Գոլոմակոս քաղաքակից նորա . ընդ որ մեծապէս ցնծացեալ սլավին յղեաց անդ քարոզիս հզօրս առ 'ի ծաւալել զըսս աւետարանին 'ի մէջ նոր ժողովրդեան այնորիկ . զնոյն արար և

ի կողմանս կողմանս Ավրիկոյ : Եւ ինքն ի վաթ-  
աներորդ ամաց հասակի վախճանեալ փոխեցաւ  
յաստեացս առ տէր յութ կտղանդացն օդոս-  
յամին 1492, կառավարեալ զեկե զեցին առաքինի  
քաղաքավարութեամբ և խմաստութեամբ ամս  
եօթն, ամիսո տասն և աւուրս քսանեւոթն <sup>1</sup> :

## ՄԺԶ

## ԱՂԵՔՍԵՆԴՐ Զ

Ա. Տ. 1492, և կայակառանեան Փետերի 1-ուն Գ. 55:

1536. Աղեքսանդր սպանիացի ծնեալ'ի Վա-  
լենցա որդի Կովիրեառոսի ուրբումն և քեռորդի  
Կալիստոսի գ պապին, յառաջադոյն կոչեցեալ  
Հռոտերիկոս Լենցոլեան կամ Բորձեան կար-  
դինալ ընտրեցաւ քահանայապետ յերեք իդո-  
սացն օդոս . յամին 1492 : Սա քանզի յերիստա-  
սարդական հաստկին ամաց իբր քոանեհնդից  
ամբարձեալ'ի կարդինալութիւն անց 'ի շարս  
աւագանւոյն, առ որս չպակասեին 'ի ժամանա-  
կին արք օտարախորհուրդք և շողոմարարք,  
չմարթացաւ կարեռորառաքինութեամբ պերճա-  
նալքստ արժանի պատուոյն, որպես ասէ Պեք-  
քեդդի . և 'ի հարկէ որ զսկզբունս առաքինու-  
թեանց հաստահիմն ոք չառնիցէ յայնմ հասա-  
կի, նաև յասկադայ վտանդացն դժուարաւ թէ  
զերծանիցի : Սակայն ոչ ըստ ոմանց 'ի մատե-  
նագրաց շաղակրատանս անլսելիս առեալ եմք 'ի

1 Հունյ, և Սբու : յամ 1484=1492 : Ռումայ-  
էւ. Առաջ. աշխարհ. գիր+ 2 . և 7 : Յակ. Առ-  
բիան գիր+ 26 : Աղեք+ . Կապ. յառագուտծաբ-  
գիր+ 2 . և 'ի պապ. եւ . դար ՃԵ և ՃԵ . Գւ. և :

պատմել զամանէ, և կամ զմարդկօրէն վթիպակ սրներկնիւք չափ բարձրացուցեալ յայլ կերպարան մուծանել. որք անգստին՝ 'ի բանից խրեանց յուցանեն զինքեանս՝ [թէ քան ստուգապատում մատենագիրերեւէլ առաւել զբամբասէլն և զնախտել ախորժեն զառաջնորդս մեծի եկեղեցւոյն:

Արդ ըստ հաւատարիմ միաբան վիպագրաց երկելի ձիրք էին՝ 'ի նմատ արագամութիւն, պեր ճախօսութիւն, եռանդն և աջողակութիւն՝ 'ի մեծամեծ գործս, և 'ի գրոց հմտութիւնս ոչ հետեւակ ոք: Հեղութիւն և բարեխառնութիւն և արդարութիւն ոչ օտար ինչ էին՝ 'ի նմանէ, որք և յայտնի երկեին՝ 'ի կոնդական զոր հրատարակեաց վլուն հասարակաց խաղաղութեան և սահմանական: Սակայն չեկաց 'ի չափոյն խառնելոյ յայլ և այլիրովութիւնս աւագութեանց այլոց պետութեանց: Քանզի որդիք էին նորա յաշիարհական կարգի անդ խրում, իրրե անց՝ 'ի քահանայապետութիւն՝ ամբարձ զնոսա 'ի մեծամեծ աւագութիւնս. և անտի սկիզբն կալաւ խոռվութեանց խոալիոյ զորեւբորբոքեցին օրքան զօր որք խեռային ընդ նա և ընդ արարս նորա: և ինքն զըսրախօսս իւր թէպէտ և սահմահարեր բանափիք և պատուհանիւք: Սակայն մի 'ի գրդուղաց խռովութեանցս այսոցիկ եղեւ Լուգովիկոս ոմն Սփորցա անուանեալ, թէպէտ և ինքն զկողմն Ազեքսանդրի զօրացուցանել համարեր:

Յաճախեաց Ազեքսանդր զկարդինալս թուով քառասունեւրիս, յորս քսաննեւրկուքն սպանիացիք էին: Խակ Փերամինանատոսի Ե աղքային Սպանիոյ շնորհեաց վճռաւ ժառանդել զնորագիւտ քաղաքս և գաւառս յԱմերիկա, որ լո-

կըսեալ՝ ի միջօրէտկան շրջանակէ միջոցաւ հարիւր փարսախաց ձգէր յԱզորեան և ՚ի հեսպերեան կղզեաց յարեմուտս և ՚ի հարաւ : Յորմէ ծագեցաւ հակառակութիւն մեծ ընդ ՚նոյն Փերտինանտս և ընդ Յովհաննէս ալբայ Լուսիսանիոյ, որ և ունէր իրաւունս տիրելոյ այնց վայրաց : Եւ Աղեքոսնդը իրաւախոհ կացեալ՝ ՚ի ՚նոսա, արդարութեամբ բաժանեաց՝ ՚ի մեջնոցա զերկիրն զայն:

Յամին 1500 հռչակեաց զհանգէս յորելինին. եհան վճիռ բահագրանաց ընդդէմ ՚նոցա, որք գիրս ՚ի լոյս ընծայեն տպագրութեամբ առանց ցուցանելոյ եպիսկոպոսաց և առանց ունելոյ զհաւանութիւն ՚նոցա . որոց և պատուիրեաց չտալ հրաման տպելոյ մինչև իցեն մանրախուղիւ քննեալ զայնոսիկ և սրբեալ՝ ՚ի գայլծակզականից, մինչև չմնալ՝ ՚ի ՚նոսա ՚նշանախեցի միոյ որ իցէլնդգէմուղղափառ հաւատոյ : Եւ ՚ի զացեալ յիշանութեանն ամս մետասան և աւուրս ութ՝ ՚ի հնգետասան կաղանդացն սեալ . յամին 1503 տագնապեալ սաստիկ չերմամբ մեռաւ ամենոյն հոգեոր պատրաստութեամբ՝ ՚ի հասակի եօթանասուներկու ամաց : Յետ մահու ՚նորա քանզի մարմին ՚նորա ուռուցեալ սեացաւ, բազումք ՚ի ժամանակակից հաւատարիմ մասենագրաց հաւաստեն եթէ զմահաղեղն զոր կեսար Բորձեան վասն այլոյ ուրումն պատրաստեալ էր, ՚նա յանդէտս արք, և մեռաւ յետ սակաւ ժամուց : Բայց որպիսի և եղեալ իցեն առանձին կեանք սորա, զորոյ զմարդկօրէն վիւպակն չէ մարթ բացաւ դիմօք անմեղադիր առնել հակառակ միաձայն վկայութեանց վիւպագրաց յայլեայլ խմբէ և ազգէ, որպէս ասեն Պեքքէդգի և Պեռքասդէլ, սակայն վարդապէտութիւնք սրբոյ աւետարանին այնպէս անարատ փայլեն յամենայն կոնդակս ՚նորա, որպէս եթէ

միոյ յաստուածարեալ հայրապետացն էին պատ-  
դամբ , որք սրբութեամբ վարուց իւրեանց  
փառս յաճախեցին առաքելական աթոռոյն :

### ԴԵՊՐ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ ԴԱՄՈՒՆ

Ա. Տ.

- 1402 . Կարապետ Բ կաթողիկոս յաջորդէ ըզ-  
դաւիթ :
- 1409 . Յակովը նստի կաթողիկոս :
- 1411 . Գրիգոր Ը կաթողիկոս յաջորդէ զՅա-  
կովը :
- 1418 . Պօղոս Բ յաջորդէ զԳրիգոր կաթո-  
ղիկոս :
- 1424 . Վասիլ Գ տիրէ Սոսկովաց :
- 1430 . Կոստանդին Ե նստի յաթոռ կաթողի-  
կոսութեան :
- 1439 . Յովակի Գ յաջորդէ զԿոստանդին կա-  
թողիկոս :
- 1440 . Գրիգոր Թ նստի կաթողիկոս, և աթոռն  
փոխադրի յէջմիածին :
- 1440 . Գիւտ տպագրութեան ՚ի Սոգունախա-  
՚ի ձեռն Յովհաննու Փոստոսի :
- 1442 . Կիրակոս նստի կաթողիկոս, և ասլա Գրի-  
գոր Ժ :
- 1453 . Առումն Կոստանդինուալոռոյ յՕսմա-  
նեանց :

1 Հ-այ . Ն Սբոն . յահն 1492=1503 : Յ-Հ-  
Սբոն . Գիրդ 26 . Գլ . Է : Սահմանադ . 2 = 6 . Եր .  
467 . Հապ . 1 . Կոնդակագիր : Բէլաբին . յդ . Գահ .  
Հ- . Գիրդ 6 . Գլ . Է : Աշե + . Նապաւ . Գիրդ 2 .  
Շյաբ . Գլ . Ա . յօդ . 3 : Պէտքէդդի . Հապ . 6 . յահն  
1492 . Ղ . 1503 . ՃԳ : Պէտքէդդի . Գիրդ 56 . Հա-  
յաբ 13 . 86 :

1455. Արիստակէս ձեռնադրի Էպիսկոպոս և  
կոչե Աթոռակալ:
1461. Զաքարիա Բ. Կարգի կաթողիկոս :
1461. Յովակիմ առաջին պատրիարք նստի ՚ի  
կոստանդինուպոլիս : Եւ Յովհաննէս  
գ. Վասիլեվիլը պայտազատէ ՚ի Ռուսաս-  
տան :
1462. Արիստակէս Բ. յաջորդէ զ Զաքարիա, և  
աջ Լուսաւորչին ածի յԱզթամար :
1466. Սարգիս Բ. կաթողիկոս յաջորդէ :
1475. Օմանցիք և Թաթարը առին զԿաֆա ՚ի  
զԵնուացւոց :
1476. Տօն անարատ յլութեան Տիրամօրն սահ-  
մանադրի :
1477. Աջ Լուսաւորչին անդրէն ածի յԵղմի-  
ածին :
1478. Նիկողայոս պատրիարք յաջորդէ զՅո-  
վակիմ :
1488. Վենետիկեցիք տիրեցին Կիսլոսի՝ շնոր-  
հեալ նոցին Կատարինեայ հայկազուն  
դշխոյի :
1489. Կարապետ յաջորդէ զՆիկողայոս պատ-  
րիարք :
1490. Արիստակէս գ. նստի կաթողիկոս :
2492. Քրիստափոր Գոլոմակոս եղիս զԱմերի-  
կա . որ ապա հռչակի յԱմերիկոսէ  
վլորենուացւոյ հանդերձ պատմու-  
թեամբ :
1498. Թագէսս Ա կաթողիկոս հաստատի :  
Զայնու ժամանակաւ թագաւորէր յարեւելո-  
վենի սուլդան Պայտղիտին Ա, Մէհմէմմէտ Ա, յամի
1402. ապա սուլդան Մուրաս Բ. յեաոյ Մէհմէմ-  
մէտ Բ. որ և տիրեաց կայսերութեան Յունաց-  
ընդ ամենայն ամս 30: Յետնորա Պայտղիտ Բ ամս  
32 յամի 1481 :

# ՎԵՇՏԱՍԸՆԵՐՈՐԴԻ ԴԱՐ

## ՄԺԵ

ՊԻՌԱ Գ

Ա. Տ. 1503, և կայսերական Առաքելութեան  
նուի 10:

1537. Օ ԿԱՅԻ մահուան Աղեքսանդրի Զ  
ուխտն Հռովմայ փոյթ յանձին կալաւ ընտրել  
զայնալիսի ոք՝ որ կատարեալ իցէ առաքինու-  
թեամբ և իմաստութեամբ։ Եւ ահա հաւա-  
նութեամբ ամենայն աւագացընարեցաւ՝ի տասն  
կաղանդացն հոկտ. յամին 1503 Ֆրանչիսկոս  
Տութեալինոս Բիգոլոմինոս սենացի՝ քեռորդի  
Պիոսի Բ. պապին. յորմէ կարդեալ էր ազգե-  
տիսկոպոս և կարդինալ Սենայ. նմին իրի ոչ  
միայն յանուն նորա յորջորջիլ կամեցաւ, այլ  
և գերապանծ առաքինութեանց նորին լինել  
ժառանգորդ։ Յորմէ ակնկալութիւն մեծ էր  
ամենեցուն առասնել նորոգեալ զկարգս եկեղե-  
ցւոյ և զօրինադրութիւն նախորդաց նորա. զի  
էր նա այր խոհական և իմաստուն. և այն ինչ՝ի  
պատրաստի լիներ ժողովութումարելոյ վասն բա-  
րեկարդութեան, և ըստ նմանութեան քեռւոյ  
իւրոյ զօրաժողով լինելոյ ընդդեմ այլազգեաց,  
վերին անտեսութիւնն այլազգ կարդադրեալ խո-  
փան արար ամենայնի։ Իբրև զի զկնի քսանեվեց  
աւուրց իշխանութեան կալեալ զեա ցաւ սաս-

տիկ՝ վախեցաւ առ տէր 'ի հնդեաստան կաղանդ։  
նոյ. ամաց վաթառւնեչորից <sup>1:</sup>

## ՄԺԲ.

## ՅՈՒԼԻՌՍ Բ

Ա. 8. 1503 և կայսերութեան Առաջնամասական 10:

1538. Այս ինչ գումարեալ աւագաց յընտ-  
րութիւննորոյ սպապի՝ հռչակեցաւ քահանոյա-  
պետ Յուլիանոս Հռոբորէոս սավոնացի եպիս-  
կոսոս կարդինալ 'ի կաղանդս նոյ. յամին 1503:  
Այս այր երեելի 'ի մէջ աւագաց և հանձարով  
և յիշատակաւ հօրեղբօր իւրոյ Քսեսառոսի Դ  
պապին, յորմէ և կարդեալ էր կարդինալ և  
գլուխ 'ի վերայ եկեղեցական զօրաց, հնարագի-  
տութեամբ անձին սիրելի եղեալ ամենեցուն ել  
'ի գահհայրապետութեան, և 'ի թագադրութեան  
անուաննեցաւ Յուլիոս Բ: Որ ընդ արտաքին  
հմառութեանց ուներ և նախանձ եկեղեցւոյ, նմին  
իրի ելոյծ ըստ օրինաց զչենրիկոս Ը. արքայ Բրի-  
տանիոյ, որ ամուսնացեալ էր ընդ սյրի կնոջ եղ-  
բօր իւրոյ դստեր արքային Սպանիոյ: Եւ վճիռ  
դատապարտութեան եհան ընդդեմ նոցա, որը  
'ի ձեռն սիմոնականութեան ընտրեն զաւագս 'ի  
հայրապետութիւն: Եւ առ օրինօք ընելց  
այսպիսի ընտրութեանց՝ խնդրեցին իշխանաւորք  
գումարել զընդհանուր ժողով: Հաստատեաց  
նա զկարգ Մինորից սրբոյն Ֆրանչիսկոսի Պաւ-  
լեան զհաւաննեալն կանխաւ 'ի Քսեստոսէ Դ:

1 Հուայ. և Աբոն. յահն 1503: Ուստայել Ա.  
լադ. Գիրք 22:

յիննովկենտիոսէ ը և յԱղեքսանդրէ Զ. և ետ  
նոցա զանազան աղատութիւնն :

Ցետ այսորիկ խորհեցաւ Յուլիոս նորոգել  
զվատիկանեան մայր Եկեղեցի սրբոյն Պէտրոսի  
զհիմնեալն Երբեմն 'ի մեծէն Կոստանդիանոսէ  
և խանդարեալ հնութեամբ ժամանակի : Բայց  
ցանկայր այնպէս հոյակապ կառուցանել զայն՝  
որպիսի չիցէ Եղեալ յաշխարհի , արժանի մեծի  
աթոռոյ առաքելապետին և Եկեղեցական ինք-  
նակալութեան և մեծափառութեան տեղւոյն :  
Արդ 'ի չորեքտասաններորդ կաղանդացն մայիսի  
յամին 1506 եղեւ հիմնարկութիւնն մեծի տա-  
ճարին սրբոյն Պէտրոսի 'ի Հռովմ' 'ի Ղաղարէ  
Բրամանտեայ քաջարուեստ Ճարտարապետէն :  
Այլ քանիզի մեծադումար դանձուց պէտք էին  
վասն ահեղ չինուածոյն , Յուլիոս քահանայա-  
պետ , որպէս և յաջորդք նորա ուշադիր Եղեն  
ոչ միայն զհաւատացեալս նսկաստաւոր կացու-  
ցանել այնմ , այլև զօրհնութիւններողութեան  
բաշխեալ ամենեցուն յորդորել յառատաձեռն  
ողորմութիւնն սակս այնիր չինուածոյ , որով և թո-  
ղութիւնն մեղաց դտանել 'ի ձեռն ապաշխարու-  
թեան :

Այս քահանայապետ քանիզի ահընկեցէր և պա-  
տերազմասէր՝ առ 'ի սանձահարելոյ զանուղղայս  
արկ 'ի բանտ զկեսար Բորձեան և դողացոյց  
զուագտս : Ել այնուհետեւ 'ի Հռովմայ ահեղ  
պատրաստութեամբ և յառաջընթացութեամբ  
սրբոյ հաղորդութեան դիմեաց 'ի Բերուզիա , և  
ահիւ քան թէ զինու արտահալուծ արար զբալ-  
լիոնեան զապստամբու զբենախիլուլեանս 'ի Բո-  
նոնիոյ : Իսկ զբոլինա սեպհականեալ միացոյց  
ընդ դաւառացն Հռովմայ : Ապա վրառաւոր  
յաղթանակաւ դարձ արարեալ անակի 'ի Հռովմ'  
'ի հինգ կաղանդացն ապրիլի հետեւեալ ամինն մե-

ծահանդես կատարեաց զնաւակատիս այնը յաղթութեան յաւուր ծավկազարդի : Սա սիրեր զերկայն մօրուս և գարմաներ զայն վայելուն յահարկութիւն ժողովրդեան սկատշաճ մեծաբարոյ անձին . որում հետեւեին և այլք :

Այն ինչ յապատամբութիւն մտաբերեալ Ակնետկեցւոց ընդդեմ նորա , աճապարեալ միացոյց ընդ իւր զՄաքսիմիլիանոս կայսր , զԼուդուլիկոս արքայ Գաղղիոյ և զՓերտինանտոս Սպանիոյ , սպառնացաւ զինու զօրութեամբ բառնալ զտէրութիւն միանդամայն և զանուն Ակնետկեցւոց եթե ոչ զզջասցին : Որոց ընդդեմ կարգաց նա և նզովս ցաւագինս . մինչեւ այլ յայլմէ եղեալ նոցա՝ կատարեցին զամենայն կամս սպապին զոր միանդամ սպահանջէր 'ի վենետկեան հասարակապեառութենէ :

Յետ այնորիկ շարժեաց Յուլիոս զզօրութիւն իւր ընդդեմ Գաղղիացւոց սպաշտպանողաց զԱւիոնիսոս , որ զտուրս և զիրաւունս եկեղեցւոյն հառվմայ բանի գրաւեալ էր 'ի Փերարա ընդբազմաբեր աղէհանին Գոմագլեան : Ընդ որ զայրացեալ Լուգովիկոսի կարքային՝ ետ գումարել ժողով'ի Պիզա առ 'ի զսպելզՅուլիոս սպապ յամի 1511 . որ ապա փոխագլեցաւ 'ի Մեդիուլան և անտի 'ի Լուգովոն : Խակ մեծ քահանայապեան գումարեաց վաղվազակի ժողով մեծ , որ ասի ընդհանուր ժողով Լատերանու Ե . յորում էին հարիւր և չորեքտասան եպիսկոպոսունք , հնդետասան կարդինալք հանդերձ սպատրիարքօք , և բազում վարդապետք և արքայք ընդդեսպանաց արքայից : Ուր նախագահ նստեալ ինքն Յուլիոս ջրեաց զժողովակն Պիզայի մինչեւ ցըրըրդ գումար . այլ զկատարումն եթողյան շորդին Լեռնի Ճ , որ 'ի 1517 յաւարտ հասոյն . ուր վճռեցան կանոնք ընդդեմ հերձելոց

և Սիմոնականաց այլովքն հանդերձ (1539) : Իսկ յառաջ քանի զայն հասեալ հայրապետին Յուլիոսի վախճան կենաց 'ի հասակի եօթանասուն ամաց փոխեցաւ յաստեացս յինն կաղանդացն մարտի յամին 1513, կացեալ յիշխանութեան ամս ինն , ամիսս երիս և աւուրս քանի և մի ։ :

## ՄԺԸ

### ԼԵՒՈՆ Ժ

Ա. Տ. 1513, Խ էայսէբութեան Մարտի միւնխի 20:

1539. Լեւոնի վլորենտացի յականաւոր տանէ Մէտիչի անուաննելոյ , որդի Լաւրենտիոսի , յառաջագոյն ձայնեալ Յովհաննէս՝ ընտրեցաւ 'ի նորահաս կարդինալաց քահանայապետ 'ի ծաղկեալ հասակի երեսուննեօթն ամաց 'ի հինգ իդուացն մարտի յամին 1513: Որ 'ի մանկութեան կրթեալ առ ոտո մեծիմաստ գիտնոց՝ եղեքաջուս և աշխարհավար . մինչ զի 'ի հասակի չորեքտասան ամաց բարձրացաւ յաւագութիւնն . եղեւ կարդինալ յիննովկենտիոսէ . ապա նուիրակ կարգեցաւ Յուլիոսի պապին . հուսկյետոյ մեծապանծ փառօք պսակեալ պապ՝ անուանեցաւ Լեւոն Ժ: Սորա առաջին փոյթ եղեւ գըլխաւորել զժողովն Լատերանու Եղմովեալն 'ի նախորդէ իւրմէ . յորում ներողամիտ գտեալ երկուց աւագաց եղելոց 'ի ժողովակին Պիղայի՝

1 Հուայ . Խ Սբոն . յամ 1503=1513: Սահմանադր . 3. Խ 10. հապ . 1. Կոնդ . Եր . 478 . 486: Անդրէաս Մարտի գիրք 1 . ոպապի . Աննէպ : Պիկո: Բէմբու գիրք 10 : Յակով Ալբոն . 'ի Հարս Լեւոնի Ժ . գիրք 2 :

Հայրախնամք քաղցրութեամբ կացոյց զնոսա 'ի նախկին իշխանութեան : Ուրանօր հրաւիրեաց զբոյեմացիս . որք քրթմնչէին յանիրաւի՝ թէ տռաքելական դահն չեկաց 'ի դաշին ընդ չուսեանց 'ի Բասիլեան ժողովի ( 1529 ) : Ցանձնեաց զգործն կարգինալին ստրիկոնացւոյ , զի եթէ թողեննոքա զհերձուածո չուսեանց՝ միացուցէ ընդ եկեղեցւոյն չուովմայ :

Կովին եռանդեամբ առաքեաց հրեշտակս առ իրուսս և առ Մարոնիս առ 'ի միացուցանել զնոսա ընդ առաքելական դահին : Կոյնօրինակ ջանահնար եղե մաքրել զհապէշո 'ի մոլորութեանց և 'ի գաւիթ սրբոյ եկեղեցւոյ ածելը նոսա : Իսկ յԱմերիկա 'ի նոր աշխարհո կարգեաց զեպիսկոպոսունս բանիբունս : Մատանհ եղե գումարել զիսաճակիր զօրս ընդգեմ սուլդան Սէլիմի : Պատուեր եհան գիտեական դասատուաց 'ի բարձրագոյն ուսմունս , և իմաստափրաց 'ի համալսարանս քաջ հաստատել զանմահութիւն բանական հոգւոյ , և 'ի բնական սկզբանց ապացուցիւ վարդապետել : Զերանելին Ֆրանչիսկոս Պաւլեան դասակարգեաց ընդ սուրբս : Իսկ Կարոլոսի Ե արքային կաթողիկեան ձայնելոյ շնորհեաց զյաջորդութիւն կայսերութեան , զոր կայսրընտիրք ընարեցին կայսր հառվմայ , և միանդամայն եղե թագաւոր Կէապօլսոյ :

Այնչափ էր սէր մեծի պապին Լեւոնի առ ուսումնասէրս և առ բանասէրս , զի միայն ծաղկեցուցիչ եղել յիտալիա դպրութեան և բանաստեղծութեան . պարծանս անձին համարէր լինելքարեկամիմաստնոց ժամանակին : Սմինիրի ձեռն էարկ նորոգեաց զհամալսարանն չուովմայ , չքեղացոյց զուսումնարանս ականաւոր իմաստնովք , պիտանի ուսմամբք և արուեստիք :

Փոյթ կալաւ 'ի կատարելութիւն ածելոյ զա-

հեղ շինութիւն Վատիկանեան տաճարի . որոյ  
վասն եհան զօրհնութիւն ներողութեան որոց  
նպաստամատոյց լինին մեծի շինուածոյն : Որում  
ընդգէմ կացեալ Մարտինոս Լուտեր աղանդա-  
պետ ժայթքեաց զթոյն դառնութեան հեր-  
ձուածոյն իւրոյ զորքալցրութեամբ կամեցեալ  
Լեւոն շահել 'ի ձեռն կոնդակին 'ի 1518 , և  
դաեալ զնա անդարձ , եհան վՃիռ դատապար-  
տութեան ընդգէմնորայամին 1520 . որ սկսա-  
նի բանիւ սազմոսին . «Արի Աստուած և դատեա  
զդատաստանս քոյ : Յայնժամ չենրիկոս ար-  
քայ Անդվիոյ ընդգէմ զինեցաւ Լուտերի զօ-  
րաւոր բանիւք . որով և մասուաւորեցաւ 'ի պա-  
պէն տիտղոսիւս Պաշտապան հաւատոյ :

Ապա սրբազանն չքեղ զարդարեալ զհրապա-  
րակական շինուածս նորոգեաց և զբազում տե-  
ղիս . զաւազանն կոստանդիանոսի անդրէն հաս-  
տատեաց 'ի Լատերան : Այն ինչ զուարձանոյր  
մեծ հայրապետն Լեւոն 'ի շինութիւնո և 'ի յաղ-  
թութիւնս , սեպհականեալ և զբարմա և զբիա-  
շենցա , յանկարծ յափշտակեցաւ 'ի մահուանէ ,  
գեզակուր եղեալ՝ որպէս կարծի , 'ի կազ . դեկ .  
1521 , առաջնորդեալ ամս և ամիսս ութ և առուրա  
քսան <sup>1</sup> : Բայց յառաջ քան զմահ իւր հրաման  
արար այլեւ զդիրս Լուտերի <sup>2</sup> :

1 Հունի . և Սբոն . յան 1513 = 1521 : Պետ .  
Բէմբ . գիր + 12 : Լամբէր . գիր + 1 . գլ . խլ . և 3 .  
գլ . ժլ . 10 : Ստել . 25 . 38 . և 45 . հադ . 1 .  
կանդ . եր . 597 :

2 Յան 1483 ծնաւ Մարտինոս 'ի Յակովանել Լու-  
տերէ 'ի վեցին Աստուածանիս 'ի ժաշտն Սկերէն : Ի  
1503 աշուա գալէալ 'ի ժիշտութայսանն էան՝ իսրաքեցա-  
սասացիւ 'ի հաստին ժամանակ : Յասուց մուսմ 'ի  
գնալն 'ի զբօռանս՝ ընկեր նոր և իարծանահար եղեալ

## ՄԻ

## ԵԴՐԻԱՆՈՍ Զ.

Ա. Տ. 1522, և իայսէրութեան կարութան Ե 4:

1540. Աղքահանոս հոլանտացի մեծահամբաւ-  
առաքինութեամբև վարդապետութեամբ, ընտ-  
րեցաւ քահանացապետ միաձայն հաւանու-

ինքն գոյնուաց ովտափու և նշուափ' ի իրօն ՕԳԿԱՊԻՆ և ան-  
ազագուած ըրաց . և 'ի հասակի փառանուլու ամոց է զն-  
փահանաց, և առաջնուցաւ' ի Վեհապետութեամբ, ընտ-  
րեցաւ վահանացապետ միաձայն հաւանու-  
թեամբ մասնաւութեամբ և զն վահանաց և առաջ-  
նու գոյնուաց ովտափու և ան, այլ և առաջին: Այս  
յամակ ընթերցանութեամբ գրոց Յավաննու համար  
ապահովանեցան մշտի նորա (854). Իսկ 'ի 1517. 1 էա-  
պատ իբրև հրապարակի ըրաց պնդուղաներն առա 'ի գո-  
մարէ կողմբ մասնիկուն ի քնուն Պատմինի ի անոց, Շծուա-  
րացաւ Յավաննես Սպասբից առաջնորդ ՕԳԿԱՊԻ-  
Ն և ան և լոյանքնելոյ ինչ անոց զայն գործ . և լոյա-  
կա լոյափերի առաջնութեամբ ընտառէ ճհասաւողաց զայն ողոր-  
ժաւնին: Յայն ժամ առին առաջնութեամբ լոյափերի ժայն-  
ի այլ ողորժան դաստիանութեան, պոր ամբարեալ աներ .  
և ական առաջնութեան առընդունել և սահսրանունել կմու-  
րանին: Ժն ըն ընանուարժեալ սողզադաստիան  
ազագուած ըրաց ովտափուաց պնդ: Այս նորա սուսացեալ  
ազագուած Յավանից, Կավանին և կայսերին՝ կօրացաւ,  
և ապա դաստիանուաց պնդացաւ 'ի լոյանէ ընտ արբանէից  
ի արաց: Եւ առաջնութեալ ժամբանաւ նորա է լոյա զայն գործին  
և ամուսնացաւ ընտ հասաւուար իսաւի և ծնաւ 'ի  
նշանէ պնդին որդին: Բայց 'ի 1546. ինչ . 18 ս-  
պահին վահանաց և երից ամոց 'ի Սմբէն, Առաջա-  
զայն պնդաց գործած մալուական: պոր պատգէցին  
հնագուաց նորա յայլ և այլ պետին (858):

թեամբ աւագաց 'ի հինդ իդոսացն յունվ. յամին 1522: Այս անձն տենչալի ծնեալ յերկուու մարտի յամին 1/459 յաղքատ արուեստաւորէ ումեմնէ՝ յտնշուք քաղաքին Ռւարեքտ՝ անուանեցաւ Ագրիանոս Փլորենտ : Մտեալ ապա 'ի համալսարան Լավանիոյ քաջահմուտ գտաւ յուսումնականութեան , յիմաստասիրութեան և յաստուածաբանութեան, մինչեւ լինել դաստուաստուածաբանութեան , ապա գահերէց եկեղեցւոյ քաղաքին , յետոյ եալիսկոպոս Դորդոսայ 'ի Սալանիա: Ուր ինքն մինչդեռ կայր յիւրում պաշտաման , ահա Յուլիոս կարդինալ Մէտիչի և Կարոլոս Ե կայսր , որոյ էր դաստիարակ , միջնորդ լեալ շահեցան զմիտս կարդինալաց . որոց թէպէտ անծանօթ էր նա երեսօք , այլընարեցին զնա դլուխ սրբոյ եկեղեցւոյ : Որ ընդ ծով եկաւորեալ 'ի Հռովմ յերեք կաղանդայն սեալ . պատկեցաւ պատլ յաւուր կիւրակէի , և ոչ փոխեաց զանուն իւր ըստ առաջնոցն սովորութեան : Չեզե նա և հանդէսն բազմաժողով 'ի պատճառս ժանտախտին ճարակելոյ 'ի Հռովմ : Խտալացւոց տեսեալ զպարզ կենակցութիւննորազի չեր այնքան նրբահայեաց , և կասկածոտ իսկ էր յորոշունա իրաց կարեորաց՝ ոչ հաճէին ընդնա : Բայց նա ոչինչ պակաս գտաւ 'ի ծայրադոյն պաշտաման իւրում բարեկարգել զհօտ իւր և հաստահիմն առնել զօրէնս տեառն : Եւ զկարուս Ե կայսր և զֆրանչիսկոս Ա արքայ Գաղղիոյ գունդործեաց միաբանելընդ միմիանաւ իսկ զլուգովիկոս արքայ Հունգարիոյ յարոյց ընդդէմ այլազդեաց՝ երբ լուաւ եթէ Հռովմոս կղզի առաւ 'ի սուլդան Սիւլէյմանէ :

Ի վեր քան զամենայն փոյթ մեծ յանձին կալու շիջուցանել զհրդեհ չարահնար աղանդոյն Լուաւը . և սորին աղտկաւ յլեաց զֆրանչիս-

կոս եպիսկոպոս՝ի ժողովն Կորիմբերկայ իրաւամբք ուղղելոց զանուղղայն : Գրեաց և նամակ առ Փետերիկոս դուքս Սաքսոնիոյ յօրդութելով զիա շահել զբանդագուշեալն Լուաեր, և յուշ արարեալ նմա զհայրենի բարեպաշտութիւնն և զուղղափրառութիւնն դալ՝ի մոլորութեանց անտի՝ի ճշմարտութիւնն սուրբ հաւատոյ : Կանքն Աղրիանոսպատապ տուաքեաց՝ի նոր աշխարհս Ամերիկոյ քարոզիչս՝ի կարգէ սրբոյն Ֆրանչիսկոսի առ ՚ի զվայրենի և զիսուժադուժ ազգս կըթելև հաստատել՝ի սուրբ հաւատոս : Զառաջնորդն Փլուենտիոյ զլանտոնինոս և զբեննոն սըրբափայլեպիսկոպոս Միսնայդաստկարգեաց ընդուրքը : Խոկ զստահակս յեկեղեցականաց փակեաց՝ի բանտի առ ՚ի յապաշխարել, և զորս եղիազգուշաւորս և կրօնասէրս պատուեաց . որով և ճշգրտեաց զսովորական բան իւր . « Եկեղեցիք քահանայիւք և ոչ քահանայք եկեղեցեօք պարտին պաճառւճիլ » : Ազգականաց նորա եկեալ՝ի չուովմ՝մինչդեռ ակն ունելին հանգիպել մեծադոյն փառաց՝ի ձեռն մեծի հայրապետին, նազնոսա սակաւաճեռն պիտոյիւք յետս ՚ի հայրենիս գարձոյց . նազի՝ չարաչար պատուհաւաց զեղեցրոդի իւր գտեալ պարտաւոր՝ի քահանայութեան : Զիրաւունս ընտրելոյ կամ անուանելոյ զեպիսկոպունս տուեալս՝ի Լեւոնէ Ժարքայից Գաղղիոյ՝ շնորհեաց և արքայից Սպանիոյ : Եւ ինքն յետ կալոյ՝ի հայրապետութեանն ամ մի, ամիսս ութ և աւուրս վեց՝ փոխեցաւ յաստեացս յութուտամն կաղանդացն հոկ . յամին 1523 : Եւ կառուցաւ դամբարանն վասննորտ՝ի տաճարի որբոյն Պետրոսի առ Պիտոսի Բ (1552) և անդ՝ի կարգս քահանայապետաց ամփոփեցաւ փառօք մարմին նորա, գրեալ՝ի վերայշիչա տակարան այսպիսի մակագրութեամբ « Աստ

եղեալ կայ Աղբիանոս Զ, որ յամենային 'ի կեանս  
իւր 'ի հրամայելն և եթ դժբաղդ գտաւո՞ :

## ՄԻԱ

## ԿՂԵՄԻՍ Է

Ա. Տ. 1523, և կայութը է առ Կաբուրով Ե 5:

1541. Աղեմէս Մէտիչի յառաջնմէ ձայինեալ  
Յուլիոս կարդինալ աշքեպիսկոպոս Փլորենտիոյ  
և հօրեղբօրորդի Լեւոնի Ժ պապին, ընարեցաւ  
յաթոռ քահանայապետութեան ամաց քա-  
ռասուն և հնգից 'ի ձեռն նորահասակ կարդի-  
նալաց յերեքտասան կաղանդացն դեկ. յամին  
1523, որ 'ի թագադրութեան անօւանեցաւ  
կղեմէս ի : Սա լեալ երկիւղած և կրօնասէր՝  
զառաջնն հաստատեաց զկարդս Բառնաբեանց  
և թէատինաց զսահմանեալն Կայետանոսի թէ-  
անայ քահանային, նա և զսահմանադրութիւն  
Քաբուլինաց 'ի Մատթէոսէ քահանայէ Մինո-  
րից : Ի 1525 հոչակեաց զհանդէս յոբելինի.  
'ի նմին ամի նորոգեաց զկարդադրութիւնս նա-  
խորդաց .իսկ վէնետիկեան կղերիկոսաց եղ կարդ.  
ընտրութեան յառաջնորդութիւն կամ 'ի ժո-  
ղովրդապետութիւն անկաւոր տիտղոսիւ, զոր

1 Հայոյ . և Աբոն . յամին 1522 : Լու-Դուկ . Ա. Ին.  
Գ. սպահի հապ . 1. Գլ . Ճան : Սահմ . Գ . 5 . հապ . 1 .  
Կանդ . Եր . 629 . 632 : Յակ . Մար . Գիշ + 26 .  
Գլ . Ե : Յակ . ի Հարուստ . Եր . 149 : Բաւակի .  
Գիշ + 2 . Գլ . Ե :

յարդ պահեն : Ես վորել 'ի ժայռի յՈրվիեգո քաղաքին երկուհարիւր յիսուն կանգուն խորին ջրհոր ասախմանաւոր կռանահատեալ . զոր կատարեաց Պօղոս Դպապ . առ մուտադրանն դրեալ կայ . և Զոր բնութիւնն զլացաւ , արուեստն ճարտարեաց :

Այնուհետեւ յաճախեալ խռովութեանց յԵւրոպա զոյդ ընդ լուտերականութեան՝ ցաւալի եղեն կեանիք մեծի հայրապետին Կղեմայ : Քանզի Կարոլոսի Բորբոնի ապատամբեալ յարքայէն Գաղղիոյ յարեցաւ 'ի Սպանիացիս . և Հռովմայեցիք չեին հաշտ մոօք ընդ պապին : Ես յնտես էր և Կարոլոս Ե կայար : Սորին աղագաւ հայրապետն միացաւ ընդ արքայից Գաղղիոյ և Անդղիոյ , և ընդ ծերակուտին Վենետիկոյ և ընդ Ֆրանչիսկոսի դքսին Մեդիոլանու , երեսս դարձուցեալ 'ի Կարոլոսէ կայսերէ , որ հրովարտական ծերտով հրաման էր արարեալ արքունական ծերակուտին 'ի Սպանիա քննել զկոնդակաս և զհրամանագիրս պապին : Յաղագս այսորիկ սրտմահալ կայսեր ընդ միաբանութիւնն նոցա՝ առաքեաց զօրս 'ի վերայ Հռովմայ . և Կողոնացիք Ծնամիք զարմիք քահանայապետին յառաջեալ յարեան 'ի վերայ Կղեմայ , որ հազիւ ճողովրեաց զանձն 'ի գղեակն Սանէ Անձէց : Ապա հասեալ զօրտց կայսերիսառն ընդ լուտերականաց առաջնորդութեամբ Կարոլոսի Բորբոնի յաւար հարին ըդ Հռովմը , կողովագուեցին և զեկեղեցիս , կոտորեցին զբաղումն . իսկ զեսպիսկոպոսունս և զկարդինալ եդեալ 'ի վերայ անարդ դրաստուց հանգերձ եկեղեցական զգեստուք կատակեին , և զլուտեր անուանեին պատ : Ընդ այն բարեկացեալ վերին տեսչութեան առաքեաց 'ի զօրս անդր ժանապատ , որ ծախեաց զերիր մասն նոցա : Իսկ քահանայապետին յետ եօթն ամսոց բանար-

գելութեան'ի դղեկի անդ երկայնեալ մօրուացն՝  
ծպտեալ զգեստուք վաճառականի ելլուել: Ապա հնարա-  
գէտ լեալ հաշտեցաւ ընդ կայսեր կարողոսի Ե-  
որ եկաւորեալ 'ի Բոնոնիա պսակեցաւ 'ի պա-  
պէն կայսերական թագիւ յեկեղեցւոջ սրբոյն  
Պետրոնի, յուցեալ նմա զպարտուապատշաճ մե-  
ծարանս և հպատակութիւն: Յայնժամ ձեռն-  
տուեղեւ կայսր, զի պապն փոխեալ զժողովրդա-  
պետական կառավարութիւն Փլորենտիոյ եդ-  
դուքս զԱղեքսանդր ազգակից իւր:

Այլ մեծ ևս տառապանք մեծի քահանայա-  
պետին այն եղեւ, զի Հենրիկոս Ը արքայ Անդզիոյ,  
որ հրապուրեալ զԱննա Բոլենա մոլեալ Եր 'ի  
սէր նորա, բռնադատէր լրբութեամբ զպապն  
ընդդէմ ամենայն իրաւանց բաժաննել 'ի նմանէ  
զօրինաւոր ամուսինն յերկոտասան ամաց հետէ  
զթագուհին կատարինէ դուստր արքային Փեր-  
տինանտոսի կաթողիկեան ձայնելոյ: Իսկ խո-  
հական հայրապեան կղեմէս լուեց առ ժամա-  
նակ մի և յերկարեաց զվճիւն ամս երիս, զի դուցէ  
զգաստասցի բանդագուշեալն և սթափեսցի յա-  
մօթալի արքեցութենէ անտի սիրոյ: Իբրև եանս  
եթէ նա անկղիտանայ տակաւին 'ի չարիսն,  
սպառնացաւ նմա նզովս եթէ ոչ հանցէ յիւրմէ  
զբոլենա և ընկալցի զօրինաւոր թագուհին իւր  
զկատարինէ: Սակայն և այնպէս անդուլ ջանա-  
հնար եղեւ կղեմէս յուղութիւն դարձուցաննել  
զարքայն մոլորեալ և հպատակ կացուցաննել  
քաղցրութեամբ պապական վճռոյն:

Այլ նորա դիւական իմն կատաղութեամբ  
մերժեալ զքաղցրութիւն նորա եհան դառն  
վճիռ՝ յոչինչ դրեալ զամենայն հրամանս պա-  
պին յանդղիական թագաւորութեան: Խափա-  
նեաց զտարեկան տուրս 'ի վաղ ժամանակաց

կարգեալս առ պահն առաքելական . և վճռեաց  
ընդ պատժով գլխասպարտութեան զօրս միան-  
գտմ վերադրեն պատին զգերադոյն իշխանու-  
թիւն : Եւ ապա արտահալած արար անտի զտ-  
մենայն եկեղեցականս յիռլանտիս . և ստիպեաց  
զնոսա երդմամբ պաշտել զինքն գլուխ եկեղե-  
ցւոյ : Թոյլետ Լուտերականաց և Կալվինականաց  
մուտ ունել 'ի տէրութիւն իւր , որք ապականե-  
ցին զազգն գլխովին՝ բաց յիռլանտացւոց որք  
կացին յուղղափառութիւնն մինչև ցայսօր :

Իսկ մեծ հայրապետն ցաւագին սրտիւ դի-  
մեաց առ կոյսն Մարիամ , որ յաճախ վերծու-  
ցեալ էր զնա 'ի զանազան փորձանաց . զարդա-  
րեաց և զառւն նորա 'ի Լաւրետոն շուրջանակի  
գեղեցիկ մարմարիոն քարամբք : Ընդ այն ժա-  
մանակս Դաւիթ ինքնակալ Յթովլացւոց առա-  
քեաց հրեշտակս առ պապն և խոստացաւ հնա-  
զանդութիւնն , ճանաչելով զնա գլուխ սրբոյ ե-  
կեղեցւոյ : « ոյնալէս Վասիլ մեծ դուքս Մոսկ-  
վաց խնդրեաց 'ի նմանե կրել զանուն թագաւորին »

Յետ այսորիկ ուղեւորեցաւ պապն ընդ ծով 'ի  
Մարտիլիա , և խորհրդակցեալ ընդ Ֆռանչիսկոսի  
և արքային գաղղիոյ՝ զթուն իւր Կատարինէ  
Մէտիչի պատակեաց ընդ արքայորդւոյն Հենրիկո-  
սի : Ուր 'ի նանիր վաստակեցաւ կարի իմն խնա-  
մով գարձուցանել 'ի մոլորութենէ զալքայն  
Անդզիոյ : Իբրև գիտաց թէ մերձեալ է վախ-  
ճան իւր 'ոչ կամեցաւ յապազել 'ի գաղղիա և  
մեռանել արտօքոյ Հոռվմայ : Ուստի դարձ ա-  
րար 'ի գահ իւր . և առաջարկեաց նորազանդից  
զպայմանս դումարելոյ ժողով , թերեւս այնու շա-  
հեսցի զմոլորեալսն : Յետ նախապարաստելց  
զայն 'ի Տըիդենտոն (928) կանխեաց առ նա վախ-  
ճան կենաց 'ի հետեւեալ ամի 1554 . 'ի վեց կա-  
զանդացն հոկ . ամաց յիսուն և վեցից , կառավա-

րեալ զեկեղեցին տառապանօք հանգերձ զամո  
տան, նոյնչափ ամիսս և աւուրս Էօֆ�ն<sup>1:</sup>

## ՄԻԲ

## ՊՕՂՈՍ Գ

Ա. Տ. 1534, և կայսերական կարուսի Ե 16:

1542. Յառաջնում աւուրս գումարելոյ ա-  
ւագաց յերեքտասան հոկ . ընտրի քահանայա-  
պետ Ազլիքսանդր Փարնեսիոս հոռվմայեցի, գահ-  
երեց կարդինալ սրբազն ժողովոյն և եպիսկո-  
պոս Ռոտիայ 'ի հասակի վաթսունեւոթն ամոց-  
որոյ բազմաժամանակեայ առաքինութիւնքն և  
մեծինաստգիտականութիւն գերազանձ հան-  
դիսացուցին զնա 'ի գլուխեկեղեցւոյ : Զե Կղե-  
մէս պատ հաստատեալ էր զնա կտակաւ յաջոր-  
դել զինքն, եթէ սահմանագրութիւնն ընարու-  
թեան քահանայապետից հաւանեացի : Որ և 'ի  
հանգիսի թագաղբութեան՝ որ եղել յերիս նո-  
նայց նոյ . յամին 1534, անուանեցաւ Պօղոս Գ.  
իբր զի առ քահանայապետութեամբ Պօղոսի  
Տ. պապին ծնեալ էր : Կարի մեծ եղել ցնծու-  
թիւն չոռվմայեցւոց ընդ ընարութիւն նորա,  
մինչեւ կամ եղել նորապասակ քահանայապետին  
պատուասիրել զքաղաքացիսիւր նորանոր աղա-  
տութեամբք : Այնուհետեւ ինամոտ եղել նա  
յոյժ խաղաղել զհօտ իւր և զեկեղեցին Քիրա-

1 Հառայ . և Աբոն . յամին 1523=1534: Սահ-  
ման . 11 . 21 . 26 . հափ . 1 . կոնդակ . ել . 672 .  
679 : Առեւ . նափ . 'ի պափ . եկ . դար ՃԵ և ՃԵ :  
Թառանոս պափ . Գիր + 1 : Բառլաշ . Գիր + 2 : պափ .  
ՃԵ . Տըիդ . ԳԵ . ՃԵ :

տոսի յուղեալ յերեսաց հերձուածոց և պատերազմաց :

Հենրիկոս Ը աղքայ Անդվիոյ դիւաշունչը բերմամբ կատաղեալ ընդգեմ՝ հուովմայ՝ տանջեր զուղափառս՝ ի տէրութեան իւրում, մանաւանդ զեկեղեցականս . Եր զոր զբաւեր ՚ի կենաց սպանմամբ սրոյ, և եր զոր անխնայ մատնեալ բանակից և կապանաց՝ յափշտակեր զինչն։ Զկարդինալն Յովհաննես եպիսկոպոս Հռովիենայ և զթուվմաս Մոռուս ատենադպիր իւր ճգեալ ՚ի հրապարակ հրամայեաց կարատել տակս պաշտպան լինելոյ նոցա ճշմարտութեան։ Ընդ որ չհանդուրժեալ մեծի քահանայապետին Պօղոսի կրկին սպաննացաւ նման նզովս ցաւագինս, զրկելովնա և ՚ի թագաւորութենե եթէ ոչ ապաշխարեսցէ, և ՚ի միջոցի իննառուն աւուրց գեթ յայտնեսցէ զդատ իւր կամ պապին և կամ պատգամաւորին Հռովմայ։ Յեպէտ անօրէնի ոչ գարձաւ յանօրէնութենէ առ ժամն, սակայն ՚ի մերձենալվախճանին անագան ուրեմն յիշեաց և խնդրեր միջոց հաշտելոյ ընդ Եկեղեցւոյն Քրիստոսի, բայց խոչընդուան եղեն իշխանիք իւր, զի մի՛ յետո դարձուացեն զյափշտակեալ ինչս եկեղեցնաց և եկեղեցականաց։

Յետ այնորիկ ուշադիր եղի Պօղոս պատ սկըզբնաւորել զընդհանուր ժօղովին նախապատրիստեալ ՚ի նախորդէ իւրմէ, առ ՚ի բառնալ զինամարեր աղանդօ ժամանակին և միանդամայն հաշտ և միաբան կացուցանել զկայսրն և զթաւորն Գաղղիոյ։ Ուստի առ ՚ի ըստ պատշաճի կանոնաւորել չոքաւ ՚ի քաղաքն Կիկիւս Բեդեմանտիոյ, ուր խորհրդակցեալ ընդ կայսեր և ընդ արքային՝ արար զինադադարութիւն տասնամեայ զի մի արգել ինչ ընիցի։

Ընդ այն ժամանակս Կալվին աղանդուակետ

(861) զօրացաւ 'ի Ճինեվթա . և անտի նկրտելը ապրածէ լընդգրաղղիա զաղանդիւր գրով , և զմուլորութիւնն ընդդէմ սրբոյ հաղորդութեան և եկեղեցական պաշտամանց . մինչև յանդգնեցաւ անօրէնն ընծայել թագաւորին զբիրս Սահմանադրութեան : Ընդոր զայրացեալ արքային հրաման արտր 'ի նախատիւս նորա թափօր կազմել Արքութեան մեծահանդէս . զոր բարձեալ բերէր եպիսկոպոսն Փարիզոյ , և ինքն ընդ բազում իշխանաց թագաղարմից գնայր զկնի հետիւսն ջտէ 'ի ձեռին : Եւ 'ի հանդիսի անդդաւանեցաւ նախ արքայն զնշմարտութիւնն և հաստատեաց առաջի որբոյ հազորդութեան զայսպիսի իմն վճիռ . Որ ոքյաղանդ Կալվնոյ մտաբերիցէ , հատցին ձեռքին , թէ և օրգի նորա իցէ : Ապա հրամայեաց այրել կենդանւոյն վեց անձինս 'ի Կալվնեան աղանդաւորաց : Խակ Լուաեր՝ որյայնժամ որջացեալ էր 'ի Գերմանիա , կորեաւ ստատակամահ :

Չեսա այնօրիկ մեծ հայրապետն Պողոս ձեռնարկեաց հաստատել զատեան սրբաքննութեան 'ի Հունվմ յամի 1542 , յամրութիւնն կրօնի , եւ գեալըորս գիտնական կարգինալս և հինգ աստուածաբանս առ 'ի համառօտիւ ժողովելն 'ի քըննութիւնն մատուցանել զայն ամենայն խնդիրս , զորս արժանի դատիցին ուղղելոյ և օրբաղըելոյ : Դարձեալ հաստատեաց անդրէն զկարգ Վարույնաց . նոյնպէս և զկարգ Յիսուսն անց զահմանադրեալն 'ի սրբոյն Իգնատիոսէ Լոյուեան հիմնագրէ նոցին , և յարգեաց զգիրս նորա հոգեսր կրթութեանց : Ապա աճապարէր յառաջ տանել զժողովն Տրիդենտեան 'ի 1545 . որ զկնի տասներորդ գումարմանն միջահատեցաւ : Յայնմ միջացի կայսրն եհան 'ի Գերմանիա 'ի 1548 զօրինակ ինչ վարդապետութեան հաւա-

առյ և արարողութեանց պահել զայն տմենեցուն  
մինչեւ որոշեսցէ ժողովն զամենայն ինչ . որպէս  
զի այնու դադարեցուսցէ զտարաձայնութիւնն  
ժողովրդեան . սակայն արթուն հօտապետն մէր  
Ժեաց զայն , և հաստատեաց զոր միանդամ վըն-  
ռեալն էր ինքն և նախորդք իւր :

Այնչափ էր նորա մէր առ ուստւմնականո ,  
մինչեւ սեղանակից առնէր ինքեան զաստաւա-  
ծաբանս . ուր սովորաբար խնդիր՝ ի մէջ արկեալ  
ոլոճէր 'ի քննութիւն ճշմարտութեան : Այլ  
մինչդեռ զայս օրինակ առաքինանայր , եհաս 'ի  
վերայ նորա տենդ սաստիկ , որով 'ի միջոցի երից  
աւուրց կնքեաց զցանկալի կեանս իւր 'ի չորս  
իգուացն նոյեմ . յամին 1549 'ի հասակի ութ-  
առնեւ երկուց ամաց , կացեալ յիշանութեան  
ամս հնգետասան և աւուրս քսանեռութ<sup>1</sup> :

## ՄԻԳ

### ՅՈՒԼԻՈՍ Գ

Ա. Տ. 1550 , և կայսերական կարուսի Ե 32 :

1543. Զինի վախճանին Պօղոսի Գ պատին  
անցին աւելի քան զերկու ամիս , յորս կարդի-  
նալք ժամավաճառ լինէին 'ի վէճո այլեայլ կար-  
ծեաց : Ապա այն ինչ միտք ամենեցուն հաստա-  
տեալ էր ընտրել պատղ զկարդինալն չուկենալ  
գոս զայր արքայազուն անդզիացի գերահուշակ  
իմաստութեամբ և աստուածակաշառութեամբ :

1 Հայ . և Սբոն . յամ 1534 = 1549 : Յակու-  
գիր + 32 : Թուանոս պատ . գիր + 1 : Սահմ . 7 . 25 .  
հատ 1 . Կոնդ . էր . 704 . 738 : Բաւակ . գիր + 5 .  
պատ . ծուլ . Տբիր . գլ . ծդ :

նա առ կարի խոնարհութեան ընդդեմ Եկաց ընարսւթեան ժողովականաց : Այլ ՚ի ջանալ նոցա վերջ տալ ընարսւթեան և հոչակել, ՚ի վերայ և հաս գիշեր : Այլ նորա դարձեալ դիմադիր լեալ նոցին տաէ . Աստուած է Աստուած լուսոյ և ոչ խաւարի . և բռնադատեաց թողուլ զայն տու վաղեն . որով յետ վաղուին վախեաց զմիսա նոցա ընարել զայլ ոք : Եւ ահա արտաքոյ կարծեաց ամենեցուն ընարեցաւ քահանայապետ Յովհաննէս արքեպիսկոպոս կարդինալ Տէմոնթէ դոսքանացի որդի Արքեպիսկոպի իրաւագիտի ՚ի վեց իդոսացն փետ . յամին 1550 . որ ՚ի թագագրութեան անդ անուանեցաւ Յուլիոս Գ :

Այս քահանայապետ ընդխոհականութեան ունէր և զնախանաձ կրօնի . ՚իմին իրի յաւագութեան անդ անդադար զհետ լինէր հասասաւել զուրբ հաւատու . որով և ՚ի Պօղոսէ գ սկապէ կարդեցաւ ՚նախագահ ՚ի ժողովը Տրիդենտեան : Խակ՚ի քահանայապետութեան ջանահնարեղե շահել զհերձեալս և անարատ սկահել զհօս իւր : Սորին վասն խնամ՝ կալաւ դլսաւորել զնոյն ժողովը . որոշեաց զականաւոր վարդապետս և զերելի երիելի աստուածաբանս որոշիս խնդրոց ՚ի կարդէ Յիսուսէանց . զորս և ճոխացոյց իշխանութեամբ և զօրութեամբ, և ՚ի խնդրոյ սրբոյն Խդնատիսի հիմնագրի ՚նոցուն գեղեցիկ զարդարեաց զիարդ ՚նոցա զօրաւոր վճռովք : Աստամիկ զբուշացոյց չունել և ոչ վերծանել զդիրս սովորակաւորաց, ևս և զթալմուա Հըմելից, յորս պարունակին բանք ընդդեմ ճշմարտութեան և ուղղափառ հաւատոյ : Արդէլ ՚նաև զի մի երկու եղբարք միանդամայն ՚ի պատիւ կարդինալութեան բարձրասացին ՚ի միււմ ժամանակի :

Բայց յաւաջ քան զամենայն մեծ հայրապետն հոչակեաց զհանդես յոբելինի ՚ի 1550 .

որում իրավեկ լեռալ յառաջագոյն Ստեփանոս  
կաթողիկոս Հայոց յուղի անկեալ ըոքաւ 'ի  
չոռվմ 'ի 1548. և նախ մեծարեցաւ 'ի սրբազն  
պապէն Պողոսէ Գ., և ասպա 'ի Յուլիոսէ Գ.  
որում եցոյց հապատակութիւնընդ կրկին եւպիս  
կոպոսաց իւրոց և պաշտօնեցից, որով և վառա-  
ւորեցաւ յոյժ. և առեալ զօրհնութիւն քահա-  
նայապետին դարձաւ 'ի Հայաստան:

Ընդ այն ժամանակու ժողովն Տրիդենտեանընդ-  
հատեցաւ 'ի պատճառս պատերազմին ծագելց  
'ի մէջ Կարոլոսի Եկայսեր և ամենաքրիստոնեայ  
արքային Հենրիկոսի բ:

Զեռնամուխ եղե Յուլիոս հաստատել դպրո-  
ցըս և համալսարանս 'ի Հոռվմ 'ի հրահանգս  
կղերիկոսաց, և մասնաւորապէս որոշեաց հրա-  
հանգել զկղերա գերմանացիս, որպէս զի գերա-  
զանցեալք 'ի պէսպէս ուամունս և 'ի բարեպաշ-  
տութեան՝ կարդեսյին վերակացու և վորդապետ  
յեկեզեցիս 'ի Գերմանիա առ 'ի դարձուցանել  
զայթաքեալս 'ի Ճշմարտութիւն և հաստատել  
զուղղափառու:

Իբրև լուաւ եթէ թագաւորեաց յԱնդղիա  
Մարիամ թագուհի դուստր Կատարինեայ թա-  
գուհւոյն Հենրիկոսի Ը, դուն դործեաց դարձու-  
ցանել զսարտուցեալ ազգն Անդղիացւոց 'ի հնա-  
զանգութիւն սուրբ եկեղեցւոյ 'ի ձեռն վերոյա-  
սացեալ Հոեկենալդոսի կարդինալին . որոյ  
բարձեալ զամենայն արդելս՝ հաւանեցոյց զնոսա  
հանդիսապէս դուանել զՃշմարտութիւն և ազ  
դովին գալ յոզամիտ վարդապետութիւն հնա-  
զանդութեամբ առաքելական դահին: Սակայն  
մահուամբ թագուհւոյն և յաջորդելով Եղիսա-  
բիթի ոչ միայն խափան եղե մեծի դործոյն, այլ  
և նորանոր աղանդք բուսան յԱնդղիա: Եւ մեծի  
հայրապետին Յուլիոսի հասեալ 'ի վախճան կե-

նոց փոխեցաւ առ տէր վաթսունեւօթն ամսոց  
՚ի տասն կաղանգացն ապրիլի յամին 1555,  
կառավարեալ զեկեղեցին ամս հինգ և աւուրս  
քառասուն և վեց :

## ՄԻՒ

### ՄԱՐԿԵՂՈՍ Բ

Ա. Տ. 1555, և կայսերական կաբուսի Ե 32 :

1544. Մարկեղոս Գերվինոս պողիտիոնացի  
այր գերահոչակ ամենայն կատարելութեամբ՝  
կարգեցաւ քահանայապետ Հռովմայ ՚ի հինգ  
իդոսացն ապրիլի յամին 1555, հաւանութեամբ  
հասարակաց . բայց ոչ փոխեաց զանուն իւր առ  
կարի եռանդեան զորունէրառ անուանակիցիւր  
սուրբն Մարկեղոս պատ մարտիրոս (1551): Աս՚ի  
մանկութեան ներակրթեալ յուտիրունս ՚ի հա-  
մալսարաւնին Սենայ Եանց ապա ՚ի Հռովմ . ու-  
րանօր Պողոս Գ. պատ արար զնա իւր ատենա-  
դպիր : Յետ այնորիկ ընդ եղբօրորդւոյ նոյն հայ-  
րասպետին չոքաւ ՚ի Գաղղիա, և ՚ի գարձին բարձ-  
րացաւ յաւագութիւն . ապա ընարեցաւ լինել  
մի ՚ի նախադահից ՚ի Տրիդենտեան ժողովի, ու-  
րանօր փայլեցաւ խոհական հանձար նորա: Ընդ  
լինելն քահանայապետ, անդէն ձեռնարկեաց  
բարեկարգել զեկեղեցին և հաշտեցուցանել զիշ-  
խանս և զժագաւորս առ ՚ի շիջուցանել դիւրաւ  
զիրգեհ աղանդաւորաց ժամանակին : Խոստա-  
նայր բարի առնել ամենեցուն . զի խոստամն ա-

1 Հռովմ . և Սբոն . յամն 1550=1555: Յ-Ն .  
Պէտ . ՚ի Հարս իդ . գիր+ 2 . ԳԼ . ԻԼ: Սահմ . 22 .  
2/3 . 32 . համ . 1 . Կռնդ . Եր . 803: Ժ-Ն . ՏէՒՏ .  
գիր+ 13 : Պատմ . Հայ . Գիր+ Ղ . ԳԼ . Ճ-Թ:

ուր մղել զմիտս կատարել զնոստացեալն։ Ամրացոյց զպաշտօնեայս հոդ ունել 'ի վերայ արտաքին գործոց, և մանաւանդ փութաջան լինել 'ի վերայ հոդեւոր իրողութեանց։ Ոչ երբէք խնամ կալաւ 'ի վերայ ազգակցաց իւրոց. և ոչ խակ թոյլտայր նոցա յաճախել 'ի չոռվմ, թող թէ 'ի սպաշտօն ինչ ձեռնամուխ լինել։ Միայն զերկուք ուրդիս արկ ընդ սկսապէս ուսմամբք առանց աալոց նոցա զաւագութիւն ինչ։ Ճորոց մին էր գերահոչակ կարգինալն չոռըրդոս բեշարմինոս։ Արդ իբրև սոյնօրինակ առաքինանայր Մարկեղոս 'ի սկզբան անդ, որով և յոյս մեծ տայր գործելոց զմեծամեծս, ահա յոյս ամենեցուն նանրացաւ յեղակարծումն։ քանզի յետքսանեւրկու աւուրց ընտրութեանն է հաս նմակաթուած ցաւոյ, և անդէն վախճանեաց զիեանը ի կաղանդս մոյ. 'ի հասակի յիսուն և չորից ամաց. ընդ որ տնիմսիթար մորմոքեցաւ չոռվմ և ամենայն խտալիւա։

## ՄԻԵ

## ՊՕՂԱՍ Դ

Ա. Տ. 1555, և կայսերական կարուսի Ե 37:

1545. Պօղոս ազնուազարմ նէապօլեցի յառաջնմէ ձայնեալ Յովհաննէս Պետրոս կարգինալ կարափա և արքեալիսկոպոս Տէատեսյ այր լեզուագէտ և աստուածարան ընտրեցաւ փոխանորդ Քրիստոսի յաթոռ. քահանայապետութեան չոռվմայ 'ի տօնի համբարձման տեառն

1 չուայ. և Աբոն. յահն 1555 : Աղեժու. Կապ. ողափ. էի. դար ծէ և ծղ:

՚ի տասն կազմանդացն յունիսի յամին 1555, առաջ ութսուն և միոյ, այլ զգայութիւնն առողջ, կորուլամիտ և ՚նրբահայեաց: Վնաշառ խստութեամբն իւրով ահ արկեալ զամենեքումքը, եմաստութեամբն կարգս և կանոնս եղ կվերաց և աւագաց, և մեծապէս բարերարգաւառ ժողովը գեանն չուովմայ. նորին ազագաւ արձան մարմարիսնեայ կանգնեցին ՚նմա ՚ի Կապիտոլիոնի: Մեծապէս փոյթ կալու հաստատել յայլեայլ այխարհս զուզպափառ հաւատս, կարգեալ ՚ի ՚նոսա զանազան եպիսկոպոսունս. մանաւանդ յԱնդղիա առ թագաւորութեամբ Փիլիպպոսի և Մարիամու, զորոց զպօսագամաւորմն սիրավընկալեալ ՚ներովամիտ դատաւ վիպանաց ՚նոցա, և ՚նորհեաց ՚նոցա տիտղոսս թագաւորի:

՚նմին ամի Կարոլոս Ե գլխաւորեալ զհոդ թագաւորութեանն և կայսերութեան, յանձնեաց զթագաւորութիւնն որդւոյ իւրում Փիլիպպոսի Բ, և զկայսերութիւնն եղբօր իւրում Փերտինանասոսի Ա. և յաւուրտօնի սրբոյն Մատթեի եհան յիւրմէ զթագն կայսերական, յորում աւուր պատկեալ եր ՚ի Կղեմայ Ե պապէն: Ընդայս գործ ոչ հաճեցաւ Պօղոս պապ, և մերձեաց ևս զգեստանս ՚նոցա. քանզի առանց հաւանութեան ՚նորա ոչ Կարոլոս կարեր իրաւամբք հրաժարել ՚ի կայսերութենէ, և ոչ կայսրնախըք օրինօք մարթելին ընարել զՓերտինասոս ՚ի անզի ՚նորա:

Սա յառաջտգոյն միաբանեալընդ սրբոյն Կայեանսոսի՝ կանոնս աւանդեաց և հաստատեաց զկրօն թեամինաց. զօրացոյց և զատեան սրբաքընութեան: Դատապարան այց զգիրս մոլորելոց: և զհերձուածողս և զհայշոյիչս: Հալածական արար ՚ի Հռովմայզարս վատահամբւուս, խափանեաց և զանուանարկ տեղիս: Խակ զեպիսկոպո-

սունս ստիպեաց կալի վիճակի խւրեանց, և զիրօնաւորսն ՚ի վանս : Եւ առ անարատ պահելոյ զմիտս ուղղափառաց յապականչաց՝ եհան ցուցակ մոլորական դրոց աղանդաւորաց : Եղ և պատիժութեան : Օրինադրեաց զատեանն Փալտգինեան . և կարդեաց տօն ՚ի պատիւ դաշին սլըոյն Պետրոսի ՚ի հնգետասան կազանդացն միետք . որ խափանեալն եր : Կանոնաւորեաց զժամագիրս՝ Հոբացուցեալ ըստ նախնի սովորութեան, զոր յայնժամ ՚ի կարձնյ վճարելին :

Խոկ սակս Հրեից խնամակալեղի ժողովել զնուատ ՚ի վենետիկեան տէրութենէ ՚ի Հռովմ տռ . ՚ի հրահանդել տակաւ . ՚ի հաւատաս Քրիստոսի պատուիրեաց արանց նոցա կրել գլխարկ դեզին . և կանանց շուք գնել եւ կնագոյն յուոշումն յայլոց ազդաց : Արգել զի մի՛ ունիցին նոքա ՚ի քրիստոնեանէից ոչ զազախնայս, ոչ գայեակա և ոչ ծառայս . նա և յաւուրս կիւրակեից և տօնից չպարագել հրապարակաւ . ՚ի ծառայական գործս, և մի խրախսանալ խառն ընդ քրիստոնեից : Կոյնալես և հրեայ թժշկի չգարմանել զհիւանդս քրիստոնեից, թէ և խնդրեսցեն : Միացեալ ընդ հենրիկոսի թ արքային Գաղղիոյ և ընդ Սվիցերից նուաճեաց զԱպանիացիս՝ որք արշաւելին յիտալիա : Գրեաց զանազան գիրս ոյիտանիս, կանոնանամակս և ազօթս : Եւ ՚ի հնգետասան կազանդացն սեպ . յամին 1559 վոխեցաւ յաստեացս, կացեալ առաջնորդ եկեղեցւոյ առաքելական նախանձու ամս չորս, ամիսս երկու և աւուրս քսանեեօթն<sup>1</sup> :

1 Հուայ . և Սբռ . յամ 1555 = 1559 : Օւդյան յաւեւ . ՚ի Կիակոն . հաք . 5 . Եր . 827 : Բաւլավեհ գիր + 14 . պատ . ծող . Տըիւ . Գւ . զ : Ասհմ . 5 . 77 : Բառաւ . Գւ . ծը :

## ՄԻՋ

## ՊԻՌՍ Դ

Ա. Տ. 1559, և հայութութեան Փելքինանքուի Ա. 2:

1546. Ի գեշերի հետեւալ աւուր ծննդեանն  
Քրիստոսի բարձրացաւ 'ի գահ սրբոյն Պետրոսի  
Յովհաննէս Անկելոս կարգինալ Մէտիչի, որ 'ի  
1499 ծնեալ էր 'ի Մէգիոլան 'ի Բեռնարդինոսէ.  
որոյ հասեալ յարբունա՝ եղե բարեկիրթ առա-  
քինի և խմաստուն, և արգեամբ անձին բարձ-  
րացաւ յաւագութիւն : Այն ինչ կարգի-  
նալք զբաղեալ էին 'ի վէճուընտրութեան 'ի խոր-  
հրդարանի, անդ երեւեցաւ աղաւնի մի հրակերս  
որ թռուցեալ շուրջ զնոքօք հանդեաւ 'ի վէրայ  
սենեկի, սորա . և անդէն հոշակեցաւ ընտրու-  
թիւնն, որ 'ի վեցերորդում աւուր 'ի յայա-  
նութեան տեառն պսակետլ պատ' անուանեցաւ  
Պիոս Դ :

Խ սկզբան անդ ներսողամիտ եղեալ հաստա-  
տեաց զֆերտինանասո 'ի կայսերութեանը ընկա-  
լեալ զդեսպանոնորինըստօրինի : Այլ ոչ ներեաց  
յանցաւոր աղդակցաց նախորդին, զորս և չա-  
րաչար պատու հասեաց : Պատժեաց և զաւագս  
ըստ չափու յանցանացն 'ի զգուշութիւն այլոց :  
Ճանահնար եղե յառաջ վարել զժուզովն Տրի-  
գենասնի զիսափանեալն 'ի տասն ամաց հետէ .  
և ինն գումարօք գլխաւորեաց յաջողութեամբ  
'ի 1563 հոդատարութեամբ սրբոյն կարողափ  
Բորոմէոսի քեռորդւոյ իւրոյ : Կարգեաց և սւթ  
կարգինալս, զի միաբան ջանասցին հրատարա-  
կել և 'ի գործ զնել զվճիւս այնոր ժողովոյ : Ար-  
դել ևս ընդ բանադրանօք զի մի՛ ոք յանդգնեցի

մտացածին բանիւք մէկնելև թիւրել զսահմանս ժողովայն : 'Ի խնդրոյ Փերաբնանառուի կայսեր թոյլ ետ գերմանացւոց ընդ կրկին տեսակօք հազորդել :

Ընդ այն ժամանակս Միքայել կաթողիկոս յղեաց 'ի Հռովմ պատգամաւոր զոմն Արքար գիտեական , և դրեաց նամակ առ սրբազան սամլըն Պիոս . յղեաց և զօրինակ թղթոյ դաշանց սրբոյ Լուսաւորչին : Զոր ընկալեալ քահանայ ապետին հաճեցաւ յոյժ , և տեսեալ զուշիմութիւն Արքարու և զիմաստուն պատասխանատուութեանն սիրեաց զիտ , և հրամայեաց նմազը հարեցաւ ի վերայ հաւատոյ և աւանդութեանց Հայոց : Եւ նորա կատարեալ զնոյն պարզ բանիւք՝ ընծայեաց պապին Պիոսի և մեծարեցաւ 'ի նմանել ինքն և ազդ Հայոց , որպես յայտ է 'ի թղթոյ պապին Գրիգորի (1548) :

Իսկ քահանայապեան յետ հոգալոց զամենայն կարեորս հրահանդեաց ղկարդինալս ընտրելինքեան յաջորդ 'ի ժողովի 'ի Հռովմ : Եռոգեաց զօրինադրութիւնն Վոնիվակիսոի բազոյն թէ պապն մի ընտրեսցէ զյաջորդ իւր և մի նշանակեացէ 'ի տեղի իւր զաջակիցն (1577) :

Ի նմին ժամանակի վենետիկեան տէրութիւնն յօժարակամընկալաւ զսահմանս ժողովոյն Տրիդենտնանի , և գովեցաւ յոյժ 'ի պապէն : Որևէ յորդոր մատոյց այլոց տէրութեանց նմանել նոյնին նովին բարեպաշտութեամբ : Առ 'ի շքեղ զարդարել զտաճար սրբոյն Մարկոսի առաքեաց սրբբազանն ընծայս բազումն , որպէս երբեմն հոյակապ ընդարձակեալ էր զոյն տաճար և Պօղոս Բ պապ (1553) : Յորդորիչ եղել քրիստոնեայ թագաւորաց և իշխանաց ելանել ընդդեմ այլազգեաց պաշարովաց զՄալդա . որոց խորաակեալ 'ի քրիստոնեից՝ կորագլուխ յետ գարձան , և ինքն

նորոգեաց զտեղիս ինչ 'ի հռովմ՝ Այսի ինչ ծանը-  
րացեալ 'ի վտանդաւոր ցաւոց՝ կոչեաց առ ինքն  
զուրբն Փիլիպպոս Ներեան և զկարուս սուրբ  
կարդինալ քեռորդի իւր . յորոց ընկալեալ ըզ-  
սուրբ խորհուրդու եկեղեցւոյ՝ կեքեաց զկեանս  
իւր սրբութեամբ 'ի հինգ իդոսացն գեկ . յամին  
1565 'ի հասակի վաթսուն և վեց ամաց , կա-  
ռավարեալ զեկեղեցին իմաստութեամբ ամս  
հինգ , ամիսս մետասան և աւուրս հնդետասան :

## ՄԻԵ

### Ա. ՊԻՌՍ Ե

Ա. Տ. 1566 , և կայսերական  
Ստորագիւմանսոնի Բ. 2 :

1547 . Պիտոս յառաջադոյն ձայնեալ Միքայէլ  
Կիոլերիոս ծնաւ 'ի Բառքի 'ի 17 . յունի . յամին  
1504 յանշուք զարմէ . այլ գերազանց տաղանդ  
մտաց նորա և առաջինական վարք գեր 'ի  
վերոյ ամբարձին զեա : Քանզի մաեալ 'ի կարգ  
սրբոյն Դամինիկոսի Եղե բարեկիրթ կրօնաւոր  
և սքանչելի ոլերձարան 'ի քարոզել զբանն կե-  
նաց : Մինչ զի Պօղսո Դ պապ բարձրացոյց զեա  
'ի կարգինալութիւն և յեպիսկոպոսութիւն  
Սուարեայ և ապա Մոնտավիոյ : Հուսկ յետոյ  
յեօթն իդոսայն յունի . յամին 1566 , ընարե-  
ցաւ քահանայապետ յաթու սրբոյն Պետրոսի :  
Այդ 'ի հանգիստ իբրեւ այլք ինդակցէին նմին .

1 Հառայ . և Աբոն . յամին 1559=1565 : Սահմ .  
73 . 78 . 81 . հապ . 2 . Կռն՛ : Անդրեաս Մատու .  
պապ . Ան . Գիլ + 8 . յամին 1564 : Պափմ . Հայ .  
Գիլ + 6 . Գլ . Ճար :

ինքն լուռ և եթե կայր : Եւ 'ի հարցանել զպատ-  
ճառն , ետ պատասխանի . Մինչդեռ 'ի մենաս-  
տանի էի , քաջայօյս էի յԽատուած վասն յա-  
ւիտենական փրկութեան անձինս . իբրև յեպիս  
կոպոսութիւն կոչեցայ և 'ի կարգին ալութիւն ,  
երիւը պատեաց զինեւ . իսկ յընտրութեանս  
յայսմիկ իսպառ լքաւ սիրտ իս , յուշ ածեալ  
զպատիժո : Եւ նորին աղադաւ կարի գժուարաւ  
յանձն էառ զայն ծայրագոյն պաշտօն . ոյլ ոչ  
բնաւ հրաժարեցաւ երբէք 'ի փառաւոր դործոց  
և ոչ 'ի ծանրութենէ ինչ ընկճեալ գտաւ : Սո-  
րին վասն ջանահնար եղեւ քարձրացուցանել  
զուղղափառ հաւատուեւ կըսահար լինել հեր-  
ձուածողաց ժամանակին : Եւ մասնաւոր ինաւ-  
մով զհետ կրթեցաւ տարածել ամենայն ուրեք  
զվաճիռս Տրիգենտեան սուրբ ժողովոյն , և գոր-  
ծադրել յամենայն աղդս քրիստոնէից : «Նորո-  
գեաց զօրէնս իննովկենատիոսի Գ , որով արդել  
զբժիշկս այց առնել հիւանդաց զկնի երից ա-  
ւուրց հիւանդութեաննոցա , եթէ ոչ մոքրեացէն  
զիսիզ մտաց իւրեանց խորհրդական խոսանվո-  
նութեամբ՝ որպէս թէ մեւանելոց էին (1496) :  
Այսու գործով 'ի յայտ գային աղանդաւորք ,  
որք 'ի ծածուկ աղմկէին զեկեզեցին :

Բարեկարդեաց զվանորայս և զկուսաստանս  
գեղեցիկ կարդօք : Օրինագրեաց զի մի՛ Լատինք  
յունական ծիսիւք վարեսցին յաստուածային  
պաշտամունս , և մի՛ դարձեալ Յոյնք վարեսցին  
լատինականօք : «Սոյնալէս արդելքնաւ չօարա-  
ցուցանել զինչս և զժառանգութիւնս առաքե-  
լական գահին և մի՛ երբէք տալ յաւանդ : Զքա-  
ղաքն չառվմ յերեքտասան վիճակս կամ թաղս  
որոշեաց , իւրաքանչիւրում առանձին դէտ կա-  
ցուցեալ : Այսատաձեան եղի օդինելքրիստոնեայ  
իշխանաց ձգնողաց վասն սուրբ հաւատոյ ընդ-

դէմ անհաւատից, զօրս և օրհնեաց օրհնութեամբ ներողութեանց:

Հայրախնամ՝ դիմով մեծարեաց զՄարիամ՝ թագուհի Սկովախոյ, երթեմն և թագուհի Դավիդիոյ, որոյ թողեալ զաղանդաւոր Սկովացիս չոքաւ յԱնգղիա: Աւրանօր Եղիսաբեթ թագուհի ասպականեալ յաղանդաւորաց՝ արդել զնա ՚ի բանափառ և դընաւուաց: Նմին իրի սրբազնն արկ ընդ բանադրանօք զԵղիսաբեթ, որ անգագոր էր ՚ի հալածել զուղղուակոս: իսկ զաղգն Անգղիայ ազատ կացոյց ՚ի հապատակութենենորա:

Գրեաց օրէնս և կանոնս քննութեան, և զմիաբանութիւնն Սամարիսքի ձայնեալ եկեղեցականաց գամեաց ՚ի կարգս միանձանց: Փառաւորեաց զկոզմաս գուքս Փլորենտիոյ տիտղոսիւս ևՄեծ դուքս Հեդրուրիայն վասն առաքելոյ զօդնութիւն ՚ի Գաղղիա: Անգրէն հաստատեաց զվճիռ սուրբ ժողովոյն Տրիդենտեան յաղագս անարատ յղութեան Աստուածածին: Դատապարանաց զմոլորական բանն Միքայէլի բայոսի ( 872 ): Իսկ զսուրբն թուվմաս ագութինացի դրեաց ընդ վարդապետու եկեղեցւոյ: Կան զնեաց վայելուց զաղբիւրն Գրեվիայ: զոր ապա յաջորդք իւր կղեմէս յին և իննեդիկտոս ժանուարութեալ շքե զացուցին:

Զանահնար եղե միաբանել զքրիստոնեայ իշխանս ընդդէմ այլազդեաց յամիշատակողաց ըզկիսքոս ՚ի ձեռաց Վենետիկեցւոց: Եւ հաւատացեալք չարաշար խորտակեալ զնոսա՝ կալան հարիւր իննառւն երեքիսրդեան նաւս և տանն հազար դերիս, թող զկոտորիալոյ թուսվքառաւուն հազար: Այս յազթութիւնն մեծ այնպիսի սարսափի էարկ զայլազգեօք, մինչև յայտնի լինել ամենեցուն և մանաւանդ մեծին Պիտոսի թէ-

միջնորդութեամբ Տիրամօրն էզլե այն : «Եսորին  
աղադաւ 'ի նոնայս հոկ . կարգեաց տօն վարդա-  
րանի 'ի պատիւ սրբոյ կուսին 'ի յիշատոկ այնը  
մեծի յաղթութեան . յաւել և 'ի գովասանս  
Տիրամօրն , աքրիստոնեից օգնական ըարեխոսեա  
վասն մերց : Առնուվաւ թերեզիա կոյս նորոդեաց  
զկարգն կարմեզականաց :

Այնչափ էր սրբոյ հայրապետին Պիոսի փոյթ  
'ի հոգեորս , զե ոչ գերազանցութիւն պաշտա-  
մանն և ոչ անթուելի գործք կառավարութեան  
երբէք զօրեցին վտիել զաւածին կրթութիւն իւր  
և զվարա բարեպաշտութեան : Փայլէր 'ի վերայ  
նորա աղքատութիւնն չափաւորեալ սակաւուք  
որպէս էր յառաջն : Զարմանալի էր և յիշո-  
ղութիւննորա , մինչև չմոռանալ ինչ 'ի կարես-  
րաց յայնչափգործառնութեանց միջի : Այլ մինչ  
դեռ զայսօրինակ առաքինանայր՝ եհամ 'ի վերայ  
նորա գժնդակ ցաւ միզարգելութեան . որով և  
տաննջեցաւ զաւուրա քառասուն սքանչելի համ-  
բերութեամբ . և յաճախ առեալ 'ի բերան եր-  
կրորդէր զայսբան . և Տէր յաւելզցաւս , յաւել  
և զհամբերութիւնն : Եւ այսպէս կատարեալ  
զտուաքինի աւուրս իւր միացաւ ընդ Աստուծոյ  
վաթուննեռութ ամաց 'ի կազմնդս մայիսի յամին  
1572 . կառավարեալ զեկեզեցին Քրիստոսի սրբ-  
ըռութեամբ և խմաստութեամբ ամս վեց , ամիս  
երիս և աւուրս քսաննեչորս : Մարմիննորա այն-  
չափ յաճախեաց սքանչելիս , մինչև 'ի կղեմայ  
Ժ կարգեցաւ 'ի դասս երանելեաց , և 'ի կղեմայ  
Ժ Ա դասեցաւ 'ի կարգս սրբոց <sup>1</sup> :

1 Լաբերտիս յան 1566 : Սբոն . յան 1566 =  
1572 : կոստնել . Աւաբերէ . Եկեղեցաւ . Գլ . լբ .  
2 : Լամբեր . յլ . ծառա . Աւաբուծոյ . Գիր + Յ . Գլ . Իբ :

## ՄԻԾ

ԳՐԻԳՈՐ ԺԴ

Ա. Տ. 1572 և իսյուերութեան  
Մատուկմէլիանոսի Բ. 8 :

1548. Հուշդոն բոնոնիացի՝ ի վառաւոր զարմէ Բոնիքոմբանեան յաջորդեաց զՊիտո Ե 'ի քահանայապետութեան յերեք իդոսացի մայ. 1572, որ անուանեցաւ Գրիգոր ԺԴ 'ի հանգիստուոր թաղադրութեան անդ յութ կաղանգացի յունիսի: Սա լեալ քաջ իրաւադէտ և ուսումնական՝ վաղվաղակի ձեռն 'ի գործ արար բարեկարդէլ զամենայն կարեորս: Եւ նախ միտքանեաց զգաշնագիրս աւուրց նախորդին իւրոյ ընդդէմ այլ աղքեաց, յորդորեալ զիշմանաւորս 'ի ձեռն գեսպանաց իւրոց տրիանալ յայն գործ վառաւոր և թողուլ յաշխարհի անուն քաջութեան: Եւ տպա խնամմ կալաւ կանգնել յամենայն աեզիս դպրոցս յօդուած հասարակաց՝ թուով քսանեւերիս, կարդէալ և տարեկան մուտս 'ի գանձէ առաքելական գտհին. որպէս զի մարզէալ 'ի նոսին ուղղագիտ մանկանց 'ի բարի վարս և 'ի սկզբէսուամունս՝ լիցին պիտանի և բարեսպաշտ: Այնչափ եր նորա ուստւմնասիրութիւն, զի առվոր էր յաճախս ասել. «Ոչ ումեք այնովէս անկ է լինել բազմիմասու, որպէս քահանայապետին չուովացյա: Կորպէաց 'ի չուովմէ զգարտց գերմանացի մանկանց զհիմնեալն երբեմն 'ի Յուլիոս:

Ապհմ. 3. 5, 8. 12. համ. 2. Կոնդակ: Գաբրուսիս 'ի Հարս սուրա. Գիրք 6. Գլ. Է: Թառանոսս. Գիրք 2/4: Օդոսա. Բարբուզ. հաստի. 166. Այս 5:

գ(1545): Սապէս հաստատեաց զուսումնարանս  
Յունաց, Անդզիացւոց, Մարտնիտաց և Հռովլ  
մայեցւոց, մանաւանդ թէ ամենայն ազանց :

Տեսեալ ապա զդառն վիճակ հայոց՝ կամեցաւ  
և վասն նոցա կանգնել՝ ի Հռովլմ համալսարան,  
որպէս զի ժողովեալ անդ մանկանց հայոց վար-  
ժեսցին յայլեայլ գիտութիւնս և լիցին զօրա-  
վիդի տառապեալ ազգին : Գրեաց և կոնդակ  
հաստատութեան օրինակ զայս, «Գրիդոր ծա-  
ռայ ծառապայից Աստուծոյ առ ՚ի յիշատակ յա-  
ւերժական : Հռովլմէական եկեղեցի դթած և  
խնամածու . . . ջամբէ զկենարար վարդապետու-  
թեանն կերակուր քաղցելոց զաւակաց . . . Ա-  
պաքէն ազգ հայոց բազմաթիւ . . . և երևելի յոյժ  
հնութեամբ և անուամբ, առաւել քան զամե-  
նայն ժողովուրդս արևելեայց ամենայնիւ գովելի  
՚ի փոյթ քրիստոնէական կրօնից . . . յօժարու-  
թեամբ ցանկացեալ մեր ըստ ձեռնհաս գոլց  
նպաստամատոյց լինել այսպիսի յօքնաթիւ և  
բարեհամբոյր ազին . . . սահմանեցաք կանգնել  
առանձին գպրատուն վասն այդր ազգի յայսմ  
մեծի քաղաքիս մերում . յոր մնուսցին ընտիր  
պատանիք ուշիմք և կորովամիտք ծտիիւք առա-  
քելական աթոռոյ, և մարզեալ կրթեսցին ՚ի  
բարի վարս և յողջամիտ վարդապետութեան .  
որուէսզի զկնի այնորիկ գարձ աշարեալ նոցա առ-  
իւրեանցսն՝ մարթասցին լիով ձեռնառ և միսի-  
թար լինել նոցա ՚ի հոգեւորս ո՞ւ ն՞ն : Ապա դնէ  
օրէնսս սակս այնը գպրատան, և շնորհէ բազում  
ազատութիւնս : Բայց և այնպէս չեհաս նմա ՚ի  
գործ դնել զայն առ օպութեան ժամանակին :

Խորհեցաւ մեծ քահանայտալեան օկնել և  
անձանօթ ազգաց հեռաւորաց, կարգեաց չորս  
հազար սոկիս ամը ըստ ամէ առաքել՝ ի Շեաբոն ՚ի  
նպաստքարտովաց սերմանողաց անդ զբանն կե-

նոց։ Օգնական եղեւ քրիստոնեայ պատերազմիկ իշխանոց՝ ոլոք՝ ՚ի սակա օգտի հաստարակաց շահատակէին։ Հաստատեաց զկանոնս սրբոյն Փիլիպպոսի Ներեան, ՚նա և զկարդ մռւրացիկ միան ձանց։ Կրկնեաց զդատապարառութիւն մոլար բանիցն Միքայէլի Բայյոսի մերժելոց՝ ՚ի Պիոսէ Ե (1547)։ Եհան զՃե դաւանութեան վասն Յունաց հաղորդելոց ընդ Եկեղեցւոյն Հառվմայ։ Կարգեաց տօն յեօթն կաղանդացն օգոս։ ՚ի սլատիւծնողաց սուրբը Աստուածածնին։ Ազատ կացոյց զընկերութիւնն Յիսուսեանց՝ ՚ի Թափօրից և յայլարատարին զբաղանաց, որպէս զի քաջ ուշադիր լիցին ընթերցուածոց, քարոզից, խոստովոնութեանց և այլոց բարեպաշտական դործոց։ Արգել զի մի հրեայք և այլ անհաւատք կոչեսցին ՚ի գարման քրիստոնեայ հիւանդաց։ Զեկեղեցին Բօնոնիայ բարձրացոյց յարքեալիսկոսութիւն ըստ նմանութեան նախորդին իւրոյ՝ որ զհայրենիս իւր բարձրացոյց՝ ՚ի նոյն պատիւ։ Ուղղագրեաց զտոմարն, որ ցանկալին էր բազմաց<sup>1</sup>։

1 Յու-Լիոն կի հասր ՚նոր գետեալ հպոման Հոռովնաց հասաց՝ զւարեալ արեգակնային պարուոց սահման և ուղին էլ 365 օր և 6 ժամ։ որ ուշնոյանէ գոն զամացիկ լոդին 11 ըսունիւս։ որ ՚ի միամ դարսա տանին 18 ժամ։ և 20 ըսունիւս։ Քը բիստրուն էայդ ընդ ամենայն աշխատեհ ընընլուան ամեն զարեցին մինչև շան 1582, յորում գրիգոր գտնանայառնէ զ սողուագէն հպոման, որ իսոպորէ՛ ՚ի միջնդի լուսի դարսու էրիս առարս, մի ժամ և գուան ըսունիւս։ Արդ սրագնեալ ՚ի ծողովնաց Նիկիոյ մինչև շատուրս սորա ամեալ էր պարբերանիան շատուրս 10, և ՚նոյն լուսի հետաշեալ ՚ի գիշերահաւառարէն ընդունէմ իտունաց այնը ծոռշնչոց, ՚նմին իրի հոգ յայն գոհանացառակէսք՝ ՚ի ծողովն կոսպանդէաց և յայլ սողուացին վրիուակի, որ յաջողեցաւ էրանէ

Ընդարձակեաց զկոնդակին ընթրեաց . և ուղղա-  
գրեալ զամենային կանոնս և զսահմանս իրաւանց  
՚ի սխալ գրութեանց՝ ՚ի լցո ընծայեաց տպա-  
գրեալ ՚ի չոռվմ : Ըքեղ զարդարեաց զհռովմ  
սլիաանի սլիաանի շնուածովք . ուր և կառոյց  
ալբատանոցս և վանատունս :

Յղեաց զվանան Յիսուսնեան ՚ի Մասկով առ-  
մեծ գուքսն Յովհաննէս Վասիլիվիչ, որ խնդրեր  
միանալ ընդ արքային Լէհաց ընդդեմ այլուր-  
գեաց և Գամթարաց : Յամենայն վայրս գուն գոր-  
ծէր մեծ հայրապետն ընդարձակել զաերու-  
թիւն Քրիստոսի՝ առաքելով զքարովիչ յաղց-  
և ՚ի քըզուս : Մեծ եղե միսիթարութիւն նորա-  
յորժամ ընկալաւ գեսպանս արքայից Ճեալո-  
նայ , որը յօժարակամ խոստայան մնալ ընդ  
հնազանդութեամբ առաքելական գահին : Ա-  
ռաքեաց զլեզուագէտս ՚ի Յիսուսնեանց ՚ի Զին և  
զոմանս յԱմերիկա հրահանգել զաղցո ՚ի հա-  
ւաստ Հշմարիս : Յայնժամ և արքայն Սուանիոյ  
հիմնեաց ՚ի Մեքոնիկոն և ՚ի Բերու գոլուցո առ  
՚ի մարզել զվայրենիս : Խոկ մեծի հայրապետին  
կարգեալ իննեւասան կարգինալա բանիբունս  
յորոցոմանք յաջորդեցին նմա զկնի , և լցեալ զա-  
ւուրսիւր լի արգեամբք փոխեցաւ յերկինս ութ-

շոյն գրիգորի . ուրոյ թոշեաւ զայնըաֆ առաւրս դա-  
շոյն շետս ընկրիեցաւ և կոնկունց ՚ի գարեգիւնին  
յիշագանընընը 130 ամս նահանջ առանելով մի . ուրոյ  
մերժեցաւ ուշակի ՚ի գիւնը բահանականարն : Ուսպի յա-  
մին 1700 այն յասելուած ամեցաւ իբ սասուրս 11,  
և ՚ի 1800 յասուրս 12, և այլն . վասն ուրոյ և զար-  
դիս 12 ասուրք գարեգիւնի կամ յասուազն գարեի և ամիս  
նարապացանց գան զարեւելուաց : Սակայն և ՚ի գրե-  
գորէան պահարի մասն կոպուաի + ինչ ծամանահի , ուր  
՚ի միջոցի լորից դարուաց առանեն մի ժամ և 20 ըսողէն:  
Տես ՚ի Տաճարագ . հել :

սունեերից ամաց և աւելի՝ 'ի չորս իդոսացն առ թիվի յամին 1585, կացեալ 'ի հայրապետութեան ամս երկոտասան, ամխատան և աւուրսքանեռութ<sup>1</sup>:

## ՄԻԹ

### ՔՍԵՍՏՈՍ Ե

Ա. Տ. 1585, և կայսերաբեն չուպալէսսի Բ. Յ.:

1549. Յերրորդում աւուր հաւաքելոյ կարդինալաց 'ի փակարանի ընտրեցաւ քահանայապեա չուովմայ Փելիքս Բերետոս կարդինալ եալիսկոսոս 'ի կարգե սրբոյն Ֆրանչիսկոսի յութ կազմանդացն մայիսի յամին 1585. որ 'ի յիշատակ Քսեստոսի Դկարգակցի իւրոյ անուանեցաւ Քսեստոս Ե: Այս գերահաջակ պապ լեալ օրդի Ֆրանչիսկոսի Բերետի այգեգործի ծնաւ 'ի գիւղն Կրոտասա մերձ 'ի բերդն Մոնտալտո 'ի 15 գեկ. 1522: Խքրի եղե ինն ամաց, հայրնորա առ աղքատութեան ետ զնա 'ի ծառայութիւն արածելոյ խոզս: Յաւուր միում Ետես՝ զի ոմն 'ի ֆրանչիսկեան կրօնաւորաց խոնչեալ 'ի ճանապարհի հազիւ քայլափոխեր՝ և կարեկից լեալ ընկերացաւ նմին, և տարեալ հանգոյց զնա 'ի վանս նորա, և ինքն չկամեցաւ ոյլ ևս ելանել անտի. այլ մնաց անդ և մարզե-

1 Մբանդ. յամն 1572=1585: Բար. յամն 1525: Սահմ. 1/1, 42, 53, 72, 91, 101: Առ Կիակոն. 'ի Հարս սուրա: Լամբեր. յու. ծառ. Ասդուծոյ. Գիրք 4. 5. 2. գլ. ին. 1/1: Կանդախագիրք հափ. 4. 5. 4. եր. 78: Պապմ. Հայ. հափ. 3. գիրք 6. գլ. ծառ. եր. 525:

ցաւյումնուն : Եւ 'ի հաստելի երկուամսան աշմաց ընկալաւ զաքեմկրօնին , և 'ի սակաւ միջոցի եղե քաջ քերթող և վիլխոտվոս : Եւ 'ի պատճառս աշխուժութութեանն և տաղանդոյ մտացն սիրելի եղե յոյժ մեծաւորին , և նախանձելի ընեկերաց իւրոց : Վերակացուն իւր իբրև չոքաւ 'ի Լուգա 'ի աեսութիւն սրբազան պատին Պօղոսի զ , էած և զպատանին ընդ իւր : Ուրանօր միայն նկատերնա զել և զմուտ պալատականաց և պաշտօնելից պապին :

Յաւուր միում նստեալ 'ի սեղան այն ինչ վեճէր զշանդամանաց պապին՝ ընկեր նորա ծաղը արարեալ զնովաւ ասէ . թուփ թէ գոյ 'ի քեզ տենչ լինելոյ պապ : Եւ նա ծիծաղելով ասէ . Չունիմ բաւական ծերութիւն լինելոյ պապ : Առա 'ի 1545 քահանայ ձեռնադրեալ եղե յետ այնորիկ պերճաբան վարդապետ , մինչեւ քաջ անուն հանդիսանալ 'ի հռովմ , 'ի գենուա և 'ի Բերուղիա : Յետ որոյ եղե քննիչ 'ի Վենետիկ . տպա ընդհանուր գործակալ կրօնի իւրոյ : Յետոյ չոքաւ 'ի Սպանիա ընդ կարդինալին Բոն քոմբանի . և յամենայն վայրս սիրելի և փարելի ամենեցուն լիներ 'ի ձեռն գերազանց մտաց և քաղցր բանից : Մինչեւ Պիոս Ե պապ կարդեաց զնա եպիսկոպոս 'ի 1568 . և տպա կարդինալ : Առ գրիգորիւ ԺԳ թուեր իմն թէ յաջորդեացէ զնա . նմին իրի առանձնացեալ ձեռնայր կարի իմն ծեր , որպէս թէ այնուհետեւ անկ էր նմա միայն զփրկութենէ հոգւոյն խորհել : Կորաքամակ ընթանայր յեցեալ 'ի գաւազան . նուազ ձայնիւ խօսէր և ցուցանէր զանձն անքաւական 'ի պաշտօն , թող թէ 'ի գերագոյն աստիճան քահանայտպետութեան : ԱՅԼիբրեւ ընտրութիւնն հոչակեցաւ , անդէն զօրացաւ անձն մեծանուն , ուղղեցան բարձք նորա և դլուխ , և ինքնին

սկսեալ զերդն աջքեզԱստուած գոհաբանեմբ թնդացոյց զմատուռն : Այնուհետեւ ձեռն 'ի դործ արկեալ գործեաց զարմանալիս և հիացոյց զաշխարհ : Իբրև հարցաւ եթէ ընդէր որ յառաջագոյն կորաքամակ դնայիր և արդուղիցար, ետ պատասխանի . Զի յայնժամ զբանալիս որբոյն Պետրոսի որոնէի և գտի : Պանծայր ընդ աղքատութիւն ծնողացն . և սովոր էր զուարձաբանելով ասել զանձնէ՝ թէ իցէ 'ի մեծապայծառ տանէ . որովհետեւ ծնողք նորա գոլովաղքատ՝ յանյարկ տան բնակէին :

Ուսումնասէր էր Քսեսառս և պաշտպան գիտնոց . ատէր զմոլութիւնս և զմոլիս, սիրէր զառաքինութիւն և մեծարէր զառաքինիս : Զգեստ պանս Ճեաբօնայ պատուասիրեաց 'ի հոռվի պահելով առ իւր մինչև ցթագագրութիւն իւր և ապա ծանրագին ընծայիւք արձակեաց յիւրմէ վճարեալ զծափա ճանապարհին : Զարքայն նավարրայ զհննրիկոս Բորբոնեան և զմիւս հենրիկոս եղբօրորդի նորա , որիք սայթաքեալ էին 'ի հերձուածս' դատապարտեաց զրկեալ յիրաւանց յաջորդութեան : Խոկ զհպատակս նոցա ազատ կացոյց յերդմանց հաւատարմութեան : Նոյն պէս արար ընդ հենրիկոս Գ արքայ Գաղղիոյ վասն տարապարա սպանութեան գքսին Կուիզիոյ և եղբօրն կարդինալի : Կարդեաց 'ի սուրբ վարդապետս զերանելին Բոնավենտուրա կարդինալ : Սահմանեաց և զթիւ կարդինալաց լինել եօթանասուն և եթ , եպիսկոպոսունք վեց . երեցունք յիսուն , սարկաւագունք չորեքտասան , և ս և աստուածաբան վարդապետք չորս : Հաստատեաց և զատեան սրբաքննութեան յաւելմամբ չորեքտասան անձանց 'ի դիւրութիւն և յուղութիւն տէրութեանց և վիճակաց եկեղեցւոյ : Բնկալաւ ախորժ հաճութեամբ զթուղիթ

դաւանութեան Ազգարիայ կաթաղիկոսին Սասյ ։  
յորում ստորագրեալ էին չորս և սլակոպասւնք  
չայց :

Այնչափ մեծամեծ շինուածս կառոյց ՚ի  
չոռվմ, մինչեւ բրկորդ հիմնադիր անուանիլ քա-  
ղաքին : Քանզի ՚ի կատարումն ածեալզհոյտկապ  
եկեղեցին սրբոյն Պետրոսի, կանգնեաց ՚ի հրա-  
պարակի անդ Վատիկանու կոթող բարձր եօ-  
թանառունեւրկու սանաչափ՝ ի միջոցի մոյ ամի-  
ուր աշխատ եղեն ութհարիւր գործաւորք հան-  
դերձ վախտուն երիվարօք : Անդ կառոյց և մե-  
ծագործ գրատուն վայելքատես հանգերձ դը-  
րուագօք և արձանօք բովանդակեալ յութարահս-  
ուր հաւաքեցան քսանեւհինդ հազար գրչադիլք  
և քսան հազար սպագրեալ մատեանք : Յաւել  
ևս բաղում շինութիւնս ՚ի Վատիկանեան ա-  
պարանս, ուր էին քսանեւրկու քառանկիւնի  
շինուածք և հազարաւոր սենեակը : Ծինեաց և  
զասլարանս Լատերանու ՚ի բնակութիւն կար-  
դինալաց, որք ապայաց պէտս կարդեցան : Անդ  
՚ի տաճարին Լատերանու կանգնեաց հոյակապ  
շիրիմ սրբոյն Պիոսի Ե ՚ի յիշատակ բարելարու-  
թեանցնորին, զորոյ զմարմինն հանգիսապէս հա-  
նեալ ՚ի տաճարէ անտի սրբոյն Պետրոսի հան-  
գոյց ՚ի շիրմի անդ մարմարիսնեայ : Ծինեաց և  
մատուռն կճեայ գեղեցիկ ՚ի տաճարին կոչե-  
ցեալ Մարտին Մաճուռէ : Ետ բերել ջուր ծանր  
ծախիւք և աշխատանօք ՚ի լեռնեն Կուիրինալէ  
նորոգելով զջրմուղն : Կանգնեաց և պալատ կամ  
ամարանոց վայելքադիր ։ Լայնութիւն գեղեցիկ  
ճակատուն էր երեքհարիւր քառասուն ոտնա-  
չափ ։ ընդ նմին և հիւրանոցս և աղքատանոցս  
հաստատեաց : Թող զմարմարիսնեայ զերկու ե-  
րիվարո՛ զորս վայելքացոյց անդ ուրեմն, գործ Փի-  
դիայ և Պրաքտիտելեայ : Խակ ՚ի վերայ բարձր

սեան Անառինուի Պիտոի կանգնեաց զպղնձի ար-  
ձան սրբոյն Պօղոսի : Խորհեցաւ 'ի գլուխ տանել-  
զհրաման նախորդին իւրոյ Գրիգորի պատին  
սակս կանգնելց զդպլրատուն Հայոց . այլ առ-  
ժամն շնեաց հիւրանոց մի ազգիս յանուն սըր-  
բուհւոյն Մարիամու եգիպտացւոյ, որ ցարդ կայ  
'ի ձեռս Հայոց :

Զկնի այսչափ մեծադործութեանց եթող  
տակաւին 'ի պահեստ հինգ միլիոն սկութից 'ի  
գաստակերտի կամ յաշտարակին Ագրիանոսի 'ի  
նպաստքրիստուեան կրօնի, 'ի պէտս պատերազ-  
մի ընդդէմ անհաւատից, կամ ազատութեան  
Երուսաղէմի : Սա այնչափ սաստիւ ընդդէմ զի-  
նեցաւ աւազակաց, մինչև չմնալ ոչ արտաքոյ և  
ոչ 'ի քաղաքի հրոսակաց և ասպատակաց : Անիսր-  
նայ պատուհանէր զյանցաւորս, զոճրագործս և  
զանառակս . և չեր ոք որ համարձակէր գոր-  
ծել զչարութիւն ինչ : Յուշ լիցի, ասէին,  
Քսեստոս կենդանի է : Արդարութիւն մեծի  
հայրապետին շարժեաց զժողովուրդն, որք ե-  
րախտագէտ մտօք կանգնեցին 'ի կապիտոլիոնին  
զանազան արձանս պղնձիս հանդերձ մտկագրու-  
թեամբ 'ի յիշատակ մեծագործութեանց նորա  
և անհաջառ խստութեան : Որոյ յետ կառավարե-  
լու զեկեղեցին Քրիստոսի պանծալի արութեամբ  
ամո հինգ, ամիսս չորս և աւուրա երիս, փոխե-  
ցաւ առ տէր 'ի վեց կաղանգացն սեպ . յամին  
1590, 'ի հասակի վաթուունեինն ամաց : Եթող  
և սկիտանի գրուածս <sup>1</sup> :

1 Սբոն . յամ 1585=1590 : Լամբէր . յդ . ծառա .  
Ասդուծոյ . գիր + 3 . գլ . ծդ . 10 : Սահնան . 18 ,  
20, 50, 74, 76 . հապ . 2 . կոնդ : Պատմ . Հայ .  
հապ . 3 . գիր + 6 . գլ . ծմ . 527 :

## Մ1.

## ՈՒՐԲԱՆՈՍ Ե

Ա. Տ. 1590, և խայտերս-նեան Համարվութուն Բ. 14:

1550. Ուրբանոս հռովմայեցի յառաջնմէ ձայ.  
նեալ Յովհաննէս Մկրտիչ կարգինալ Կտառա-  
նէոս՝ ընտրեցաւ յաջորդ որբոյն Պետրոսի յամու-  
քահանայապետութեան Հռովմայ յեօթնե-  
տասն կաղանդացն հոկ. յամին 1590: Որոյ իմաս-  
տութիւն և բարեսիրութիւն քաջայոյա տռնէր  
զամենեսին տեսանել զերեւելի երկելի գործո ի  
սկարծանս որբոյ եկեղեցւոյ և յօդուտ հասա-  
րակաց: Ատկային յետ երեքտասասն աւուրց ի  
հինդ կաղանդացնոյն ամսոյ փոխեցաւ յաստեացս  
ի հասակի եօթանասուն ամաց: Սորա մեծասպանծ  
գործ եղե, զի այն ինչ ազդակիցք և բարեկամք  
լուեալ զընտրութիւն նորա յայն ծայրագոյն  
տափիճան՝ գիմեցին առ նա փառաւ որիլ ի նմա-  
նէ, նա անդէն ընդ կըունին գարձոյց զնոսա-  
տաանց աալց ու մեք մեծութիւն ինչ: Որ և ի  
կեանս իւր զհետ կրթեալ եր առաքինութեանց  
մեռեալ եր աշխարհի՝ այնպէս զի ծանր հի-  
ւանդութեան անդ իւրե գուշակեաց զման իւր,  
ոկսաւ զուարթութեամբ կոչել զօրն զայն յետին  
օր փրկութեան, շնորհ ունելով ամենատեառն օր  
զաղվաղեաց կոչել զնա յայնպիսում ժամանա-  
կի, յորում չուներ ինչ տալ պատասխանի սակա-  
գործոց քահանայապետութեան: Եւ առա զա-  
մենայն զոր ուներ ի նախնեաց իւրոց բաշխեաց  
աղքատաց, և չոքաւ խնդութեամբ առ անձկա-  
լին իւր փըկիչ<sup>1</sup>:

## ՄԱՅ

ԳՐԻԳՈՐ ԺԴ

Ա. Տ. 1590, և կայսերական  
Հայոց թիւնի Բ. 14:

1551. Զենի մահուան Ուրբանոսի Ե՛ի նախընթաց աւուր սրբոյն Նիկողայոսի ընտրեցաւքահանայապետ Նիկողայոս կարդինալ Գրեմոնա մեղիոլանեցի յազնուական զարմէ Սփոնդրատեանց . որ Ե՛ի թագադրութեան անդ անուանեցաւ Գրիգոր ԺԴ: Առ քանզի ազօթաւէր ոք էր և պաշտօնաւէր , յամենայն աւուրս քաղէր զեօթն օազմոսս և զժամադիրս . իսկ յուրբաթուբաշխէր զառատ սղորմութիւն կարօտելոց : Որ և Ե՛ի սակաւ միջոցի արար մեծամեծ գործս յիշատակաց արժանիս : Կայս առաջին նորոգեաց զսահմանագրութիւն Պիտոսի Ե՛ յազագս ոչ օտարացուցանելոյ կամ տալոյ յաւանդապահողիալուածս եկեղեցւոյն Հռովմայ : Թոյլոչ եա Աւագոնսոսի դքսին ֆերարայ եղելոյ յետին Ե՛ ցեղի իւրում՝ փոխարերել յայլս զպայազատութիւնն Ե՛ աանէ Աւեստենայ : Աստեաց Քափուցինաց որք դիւրամէտ էին ներաձնանալ առաւել Ե՛ խոկմունս հոգեորս՝ քան թէ Ե՛ի մատակարարել զիսորհուրդ առաջնարութեան: Դատապարտեաց զամենայն խոստմունս և զժամադրութիւնս , որ յազագս կենաց և մահուան և ընտրութեան պապին , նա և սակս հաստատութեան կարդինալաց : Աստեկացոյց պատիժս և նզովս որոց ջանան վիժել զսազմն հոգեորեալ կամ անհոգի , ըստ որում օրինագրեալ էր կապանօք Քսեստոս Ե՛ և Ե՛ի կտպանաց անախի կամ Ե՛ի բանագրանաց զար-

ձակումն պապին միայն պահեաց : Յայնքամբ  
 կարդինալ կրօնաւորը կրեին միայն զգլսարկ սե-  
 ւագոյն ըստ կանոնաց իւրեանց . պատուիրեաց  
 կրել կարմրագոյն գլխարկ և զգեստ որպէս զայ-  
 լոցի : Ճանացան առնել բազում ինչ՝ ի նպաստ  
 կրօնի և հաճել զհալատակս , թեթևացուցեալ  
 զնոսա միանգամացին 'ի ծանր ծանր հարկաց :  
 Գուշ գործեաց տարագիր առնել զաղանդ Կալ-  
 լինոյ 'ի սահմանացն Գաղղիոյ և Կավարրայ , է  
 զի սպառնալոք և է զի յորդորմամբ իշխանաւո-  
 րաց . զի մի փոխան հայրախնամ օրհնութեան  
 ընկալցին զանեծու և զեղովս իւր : Կմին իրի զնեն-  
 րիկոս ալքայ Կավարրաց զըմբոստ ազանդա-  
 ւոր ընդ բանիւ արարեալ մերժեաց 'ի թագա-  
 ւորութենէ և 'ի հաղորդակցութենէ քրիստոնե-  
 լից : Յայնքամբ ապա հտաեալ 'ի վերայ մեծի քա-  
 հանայապեալին Գրիգորի վտանգաւոր ախտ մի-  
 զարդելութեան կամ խճից՝ փոխեցաւ յաս-  
 տեացս ամաց յիսունենինունց յիգոսս հոկ . յա-  
 մին 1591 . կացեալ 'ի հայրապեատութեան ամիսս  
 տասն և նոյնչափ աւուրս <sup>1</sup> : Առ սովաւ սով  
 սաստիկ եղի յիտալիա և ժանտախտ , մինչև  
 սպասեցաւ երրորդ մասն ժողովրդեան :

1 Սբոն . յանի 1590 : Առհմ . 1 . 4 . 6 . 8 . 9 .  
 հագ . 2 . կոնդ . եր . 699 = 710 : Լայքեր . գիւ + 3 .  
 յլ . ծառ . Ասդո-ծոյ . գլ . լի . 10 :

## ՄԼԲ

## ԻՆՇՈՎԿԵՆՏԻՌՍ Թ

Ա Տ. 1591, և Քայսերութեան Հռոմականի Բ. 15 :

1552. Այն ինչ մտեալ աւագաց՝ ի ժողովարան ընտրել զնոր պատ, յերկրորդում աւուր ՚ի չորս կաղանդացն նոյ. յամին 1591, միաձայնութեամբ ամենեցուն ընտրեցաւ քահանայապետ Յավշաննէս Անտոնիոս Փաքինետոս բոնոնիացի ամաց եօթանասուներից, այր մեծիմաստ և քաջահմուտյամենայն մարդու: Մինչդեռ զքահանայապետական զգեստոս զանձամբ արկանէր՝ անդէն հաստատեաց զկոնդակ չօտարացուցանելս զինչս եկեղեցւոյ, և միանդամայն խոստացաւ միակ խնամակալլինել կարօտելոց, առատացուցեալ՝ ի քաղաքին պարէնս ՚ի նպաստ և յանդորրութիւն աղքատաց: Սա ինքն ըստ վաղեմի սովորութեան վաղվաղակի գրեացնամակօառ պատրիարքունս, առ արքեպիսկոպոսունս, առ առաջնորդս և առ իշխանաւորս՝ ծանուցանելովամենեցուն զընարութիւն իւր: Այս սրբակաց քահանայապետ առաքինազարդ քաղաքավարութեամբ վստահ արար զհօտ իւր գործել մեծամեծս յօդուտ սուրբ հաւատոյ և ժողովրդեան: Սակայն առ կարի իմն ճդանց և կրթութեանց յամբիծ վարս և յուսմունս հիւծեալ էր մարմնով, մինչ զի հավիւ զամիս երկու եկաց՝ ի հայրապետութեան. քանզի ՚ի չորս կաղանդացն յունվարի վախճաննցաւ<sup>1:</sup>

1 Աբոն. յամ. 1591: Թռառանոս. Գիշ. 102. հապ. 5: իննուվին: ստհմ. 1. հապ. 2. կոնդ. եր. 727:

## ՄԱԳ

## ԿԱՅՄԻՍ Հ.

Ա. Տ. 1592. և իսյունը առնելու չորրորդ թիւն թ. 16:

1553. Կղեմէս յառաջագոյն ձայնեալ հիալ սկզբանու յԱլլոքրանդեան զարմէ վիլորենտացի՝ հաճութեամբ յոլովագունից ընկալաւ զծայրագոյն իշխանութիւն քահանայապետութեան յերիս կաղանդացն վեա . յամին 1592: Ընդ որ ցնծացաւ համօրէն աշխարհ՝ գիտելով չափ զառաքելական նախանձն և զինմաստութիւն նորառ զառաջինն ջանահնար եղե ուղղել զհենրիկոս ՚ի արքայ Գալլիոյ սպառնալով նմա մերժել՝ ի թագաւորութենէն: Սմին իրի գրեաց և նամակ առ նուիրակ իւր ֆիլիպպոս Սակա կարդինալ բլաչենցացի՝ յուշ ածել նմին զարդիւնս և զահը նախնի արքայից Գալլիոյ զօրավիգն եղելոց քահանայապետաց հռովմայ, և այն՝ ՚ի դժնդակ հալածանս: Որում և սկասուիրեաց գուն գործել յընարութիւն նորոյ արքայի խաղաղասիրի և խնամակալի ՚ի վերայ կաթողիկէ հաւատոյ և ՚ի կորուստ տղանդաւորաց: Յայսպիսի սպառնալեաց զահի մէծի հարեալ արքային՝ այլ յայլ մէ եղեւ մինչեւ յետ երից ամաց մերժեաց զաղանդն յոր անկեալ կայր՝ առաջի նուիրակի պապին՝ ՚ի սուրբն Դիոնիսոս, և դաւանեաց զուղղափառ հաւատոս, և խնդրեաց հաղորդակցիլ ընդ կաթողիկէ եկեղեցւոյ: Զօր մէծ քահանայապետն կղեմէս արձակեաց ՚ի նզովից անտի հանդիսաւոր արարողութեամբ . և վերստին դարձուցեալառ նա զթագաւուրութիւնն ընկալաւ ՚ի հաղորդակցութիւն քրիստոնեից: Յետ

այնորիկ Եկեղեցը յուսանորա դեսպանիք Ազեքսանի-  
դրիոյ և Եգիպտասի խոսանացան լինելընդ հապա-  
տակութեամբ առաքելական գահին :

Այնուհետեւ մեծ հայրապետն քաջ խորհրդ-  
դով փութացաւ ընդարձակել զեկեղեցական  
իշխանութիւնն : Գնեաց 'ի Գաղղիա զքաղաքն  
Աւենիտն հանդերձ շրջակայ վիճակօք նաև սեպ-  
հականեաց զդքառութիւն և զվիճակ Փերարայ,  
զոր Ալփոնսոս Բ գոլով անժառանդ 'ի մեռա-  
նել անդ իւրում գարձոյց 'ի գահն առաքելա-  
կան, որում պատկանէր 'ի սկզբանէ անտի : Եւ  
զայն դքսութիւն միաւորեաց ընդ ժառանգու-  
թեան Եկեղեցւոյն Հռովմայ Եթէ զօրութեամբ  
սահմանագրութեան Պիոսի Ե, և Եթէ ըստ ցու-  
ցակին քննչաց : Եւ կամեցեալ նորա անձամբ  
գնալ և ժառանգել զայն, կազմեաց թափոր  
մեծ և հանդէս փառաւոր ուղեկցութեամբ  
քսանեեօթն կարդինալաց՝ յառաջընթաց ունե-  
լով զՍրբութիւնն ընդ խորանաձեւ վրանաւ'ի վե-  
րայ պալարակապ Երիվարի պարաւութեամբ  
եպիսկոպոսաց և Երիցանց : Իբրև Եհաս անդք  
մեծապանծ փառօք յութ իդոսացն մայիսի,  
գիմեալ յամենայն կողմանց գեսպանք արքայից  
և իշխանաց յարգեցին զնա իբրև հայր հասա-  
րակաց և տէր աշխարհին : Եւ Ելեալ անտի 'ի  
վեց կաղանդացն դեկ . նովին փառաւորու-  
թեամբ Եհաս 'ի Հռովմ յերեքտասան կաղան-  
դացն յունով :

Յետ այնորիկ Եհաս կարեոր վՃիռուե բազում  
ինչ գործեաց յօդուատ հասարակաց : Զսուրբ  
գիրս 'ի լոյս ընծայեալ 'ի Քանատոսէ Ե անդրէն  
հրաման արար տալագրել յստակ քննութեամբ  
և անվլէալ օրբագրութեամբ ըստ վՃռոյ Տրի-  
դենտեան ժողովոյ : Խստիւ օրէնս Եդ մի սւամեք  
միսիլ ընաւ 'ի հոգեսոր գործս 'ի ձեռն կաշառաց.  
կամ առաքել ումեք զընծայս լուսն Եկեղեցական

ինչդործոյ : Հաստատեց և զցուցակ արդելելեալ գրոց զհրատարակեալն երբեմնի Պիտուշ Դ (1546) : Զգուշացոյց զիտաւացիս չքնակելարտաքոյ խտավիոյ, ուր չփուցեալ աղատ պաշտօն ուղղափառ հաւատացոյ :

Ի 1594 'ի ծագել մեծի հակառակութեան 'ի Սպանիա սակա գրոց Լուգովիկոսի Մոլինայի ՀՅաղագս միաբանութեան աղատ կամաց ընդաստուածային շնորհացոյ, յորմէ անհնարին վիճաբանութիւնիք յուղեցան 'ի մէջ Դոմինիկեանց մերժողաց զայն իբրև վատանգաւոր, և Յիսուսանց հաստատողաց զայն իբրև անմօլար վարդապետութիւն, մեծն կղեմէս կարձեաց զվեճն միաբանութեամբ կազմինալաց և քաջ աստաւածաբանից :

Խակ 'ի 1600 հրատարակեաց զհանդէս յոբելինի այնչափ գերահուչակ, մինչև երից մլլիսնից հաւատացելոց գումարել 'ի Հռովմբ յամենայն ազգաց . և մեծ հայրապետն ել յայցելութիւն եկեղեցեաց վաթուուննուագս . զի անխոռնչ էր և անդուլ 'ի բարեպաշտական գործս, բաշխել զողորմութիւն կարօաելոց, դիակ 'ի տեսութիւն հիւանդաց և յերկրպագութիւննշխարաց սրբոց: Յորմէ առեալ զօրինակ բարի ականաւոր անձանց կարգինալաց և եպիսկոպոսաց՝ նոյնօրինակ առաքինանային և նոքա : Այնակէս զի Ստեփանոս կաղլին ազգակից աղանդապետին ընդ իշխանին գենուայ և ընդ յոլովագունից թողեալզազանդ կաղէմեան : Խնամոտ եղեւ առաքել յաշխարհն

Յետ այնորիկ կանդնեաց կղեմէս 'ի Հռովմբ գործոց Ակովուացւոց հանդերձ կարեւոր կանոնոք և սահմանոք: Կոյնակէս և վասն մանկանց Լիւրիկեցւոց հաստատեաց ուստումնարան, որ յարդ կոչի կղեմեան : Խնամոտ եղեւ առաքել յաշխարհն

Ճեաբոնայ . Չինաց , չ'նդկաց և այլոց արևելեան  
աղդաց բաց 'ի Ցիսուսեանց և զայլ քահանայս  
յայլ և այլ կրօնից ընախիս վարուք և քաջակիր .  
թըս : Ակդել և վճռեաց մի բնաւ 'ի ձեռն թղթոց  
կամ թարդմանաց խոստովանել զմեզս և 'ի հեռաս-  
տանէ ընդունել զարձակումն ընդդեմ կանոնաց :  
Մերժեաց և զկարծիսնոցառլքամէին թէ չէ հարկ  
քրիստոնէից տեսանել զսուրբ սկասարագ արտա-  
քոյ ժողովրդապետական էկեղեցւոյ , և թէ զմեզս  
ժողովրդապետին միայն խոստովանել սկարտ իցէ  
և ոչ այլում քահանայի : Սակայն օրինագրեաց՝  
զի ամենայն ոք 'ի զատկի ընկալցի զհազորդու-  
թիւն 'ի ժողովրդապետէ և 'ի ժողովրդապետա-  
կան էկեղեցւոջ : Մեծարեաց զուսումնականս , և  
բարձրացոյց յէկեղեցական իշխանութիւնս զարս  
առաքինիս և քաջահմուտա . որպիսի էր Բարո-  
նիոս և Բելարմինոս և այլք , զորս աւագութեամէ  
վերապատռեաց : Զայս օրինակ վարեալ զիշխա-  
նութիւնն հայրապետութեան իւրոյ ամս երեք  
տասան և աւուրս երեսունեերիս , փոխեցաւ առ  
աէր վաթսունեիննամաց 'ի հինգ նոնայց մարտի  
յամին 1605<sup>1</sup> :

1 Սբն . 1592=1605 : Առ թւան . գիւտ 113 .  
հապ . 5 . Էբ . 511 . 520 : Սահմ . 28 , 34 , 36 ,  
42 , 52 , 58 , 73 . 74 , 82 , 87 . հապ . 3 . Կոնդ :

ԴԵՊՐԱ ՎԵՇԱՍԱՍԱՆԵՐՈՐԴԻ ԴԱՄԱԽՆ

Ա. Տ.

1505. Եղիշէ Բ կաթողիկոս յաջորդէ զթա-  
գեսս Ա:
1509. Մարտիրոս Ա յաջորդէ զկարապետ Ա  
պատրիարք Կոստանդինուպօլսոյ:
1515. Զաքարիա Գ կաթողիկոս յաջորդէ զԵ-  
ղիշէ Բ:
1517. Լուտեր Մարտինոս աղանդապետ սաք-  
սոնիացի Երևի:
1520. Սարգիս Գ նստի կաթողիկոս:
1524. Կարգ Թէափինաց հաստատի:
1525. Կարգ Քափուչինաց սահմանադրի:
1526. Գրիգոր Ա նստի պատրիարք 'ի Կոստան-  
դինուպօլիս:
1532. Հալածումն քրիստոնէից 'ի Հնդիկոս:
1533. Սուրբ Իգնատիոս Հիմնադիր Յիսու-  
սեանց ծաղկի: Եւ Յովաննէսանստի թա-  
գաւոր Ծոռսաց:
1536. Գրիգոր Ժ. Ա կաթողիկոս:
1537. Աստուածատուրնստի պատրիարք 'ի Կոս-  
տանդինուպօլիս:
1538. Կալվին գաղղիացի աղանդապետ Երևի:
1539. Սուրբ Ֆրանչչիսկոս Քսաւելիեան ծաղ-  
կի:
1541. Ստեփանոս Ե կաթողիկոս Ճանաչի:
1543. Մաղաքիա վարդապետ խափանէ զման-  
կաթողինուպօլիս:
1545. Սկիզբն Տրիդենտեան ժողովը:
1546. Լուտեր աղանդապետ մեռանի:
1547. Միքայէլ նստի կաթողիկոս, և Սահփա-  
նոս ուղեորի 'ի Հռովու:

1550. Սաեւիանոս Ա կարդի պատրիարք՝ ի Կոստանդինուպոլիս :
1551. Շահթահմազ աւերէ զՀայաստան :
1556. Բարսեղ Բ Հաստատի կաթողիկոս : Եւսուլըն Խղճատիոս վախճանի :
1561. Տիրատուր Նստի պատրիարք՝ ի Կոստանդինուպոլիս :
1562. Աբգար Գեսպան ուղևորի 'ի Հռովմ' :
1563. Յակով Ա Նստի պատրիարք՝ ի Կոստանդինուպոլիս : Եւ Ժողովն Տիրենատեան աւարտի :
1564. Սոկինոս Փոստոս սենացի աղանդապետ Երևի :
1566. Ծաղկին աղանդաւորք Լուսաւորեալ կոչեցեալք :
1567. Սկիզբն տպագրութեան Հայերէն դրոց :
1568. Պարոն Լոյս Նահատակի ՚ի Կաֆա:
1569. Գրիգոր ԺԲ կաթողիկոս առաջնորդէ :
1571. Օսմանցիք տիրեն Կիպրոսի :
1572. Մեծ պատերազմ՝ ծովային Օսմանեանց ընդ արևմտեայց :
1573. Ստեփանոս Զ Նստի կաթողիկոս, և Յովհաննէս Ա պատրիարք :
1574. Ուլահ անկանի ընդ աւերութեամբ Օսմանեանց :
1575. Թագէսս Բ Նստի կաթողիկոս :
1577. Ի Հայոց վաթուն Հազար Վարին յՕսմանեանց 'ի Պարսկաստանէ, 'ի Յունաստան :
1581. Թովմաս Ա Նստի պատրիարք՝ ի Կոստանդինուպոլիս :
1582. Կորուգութիւն առմասէն 'ի Գրիգորէ պապէ Հայակի :
1584. Առաքել Նստի կաթողիկոս: Եւ Գրիգոր պատու դրէ կոնդակ կամ Հայոց :

1585. Քսեստոսալասլինէ հիւրանոց՝ ի չոռով  
սակս չայոց:
1586. Դաւիթ Ենստի կաթողիկոս:
1587. Սարգիս Ահաստատի պատրիարք՝ ի Կոռ.  
տանդինուալօլիս:
1590. Յովհաննէս Բնստի պատրիարք:
1591. Ազարիա պատրիարք յաջորդէ զՅովհաննէս:
1592. Սարդիս Բյաջորդէ զԱզարիա պատրի-  
արք:
1593. Մելքիսէթ ձեռնադրի կաթողիկոս՝ ի  
Դաւթէ Ե:
1595. Փիլիպպոս Ներեան հիմնադիր կարդին  
ալօթողաց վախճանի:
1596. Տիրասուր Վերատիննստի պատրիարք՝ ի  
Կոստանդինուալօլիս:
1596. Բարոնիոս Կեսար կարդինալ պատմիչ  
ծաղկի:
1597. Պարիս Ղօտուննեան տիրէ Ռուսաց:
1599. Մելքիսէթ կաթողիկոս գնայ՝ ի Կոստան-  
դինուալօլիս և նստի պատրիարք:
- Զայնու Ժամանակաւ՝ ի 1512. Ծագաւորէր  
՝ ի Կոստանդինուալօլիս զկնի սուլդան Պայտղիտին  
Բ սուլդան Սէլիմ Ա. ապա՝ ի 1520. սուլդան  
Սիւլէյման Բ. Յետնորա՝ ի 1566 սուլդան Սէ-  
լիմ Բ. ապա՝ ի 1575 սուլդան Մուրատ Գ., և ՚ի  
1595. տիրէ սուլդան Մէհմէմետ Գ.:

## ԵՕԹՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ Դ ԴԱՅ

## ՄԼԴ

## ԼԵԽՈՆ ԺԱ

Ա. Տ. 1605. և կայսերութեան չորսամյակի Բ. 29:

1554. Օ ԿԱՆԻ ՄԱՀՈւան մեծի քահանայապետին կղեմայ կարդինալք հաւաքեցան 'ի փակարանի թուով վաթունեմի' ընտրել զոմն յաջորդ նմին: Զառաջինն միտք ամենեցուն էր հաստատեալ 'ի վերայ գերահուչակ կարդինալին բարոնիոսի: զոր և ընտրելին անշուշտ եթէ չէր խոչընդուան եղեալ տէրութիւնն Սպանիոյ: Իբր զի բարոնիոս 'ի պատմութեան անդ իւրում զթագաւորան Սպանիոյ կարի իմն պնդովս ցուցեալ էր զկարծեցեալ իրաւունս 'ի վերայ Սիկիլիոյ: Սմին իրի փոխեալ զմիտօ' բուռն հարին կարդինալք ընտրել յաթոռ քահանայապետութեան զԱղեքսանդր Հոկտաւիոս կարդինալ արքեսլիւկոպոս Փլորենտիոյ 'ի Մէտիչեան զարմէ 'ի կաղանդս ասլլիլի յամին 1605. որ 'ի թագադրութեան անուանեցաւ Լեւոն ԺԱ: Հմառութիւնք և առաքինի ընթացք մեծի սլապին 'ի հասակի եօթանասուն ամաց՝ բաղումն խոստանային գործել 'ի մեծամեծաց յօդուտ աշխարհի և եկեղեցւոյ: Սակայն զկնի ոչ բաղմաց անկաւ յախտ վտանգաւոր: մինչև յետ քսանելեց աւուրց ընտրութեան իւրոյ փոխեցաւ յաստեացս 'ի հինգ կաղանդացն մայիսի ։ :

1 Աբան + յան 1605: Բաբրան + յան 1188:

## ՄԱՅ

## ՊՈՂԱՍ Ե

Ա. Տ. 1605, և ի այս երանեւթեան Հունվակտեսէ Բ. 29:

1555. Յետ մահուան Լեւոնի ԺԱ Ժողովեալւագաց' ի փակարանի այնինչ զբաղեալկային 'ի վէճո յընտրութիւն նորոյ քահանայապետի, հաւանեալ բազմաց ընտրել զգերահոչոչակ կարդինալին զբարոնիոս, և ահա ելվիճակին կարդինալին կամիլլոսի բուրկեզեան հռովմայեցւոյ յառաջ քան զեօթնետասն կտղանուաց յունիսի յամին 1605. որ 'ի թագադրութեան անուանեցաւ Պողոս Ե: Սա լեալ առաքինի և բարենախանձ, առատաձեռն առ աղքատոս, խոհական և քաղցր առամենեսին, քաջայոյս արար զամենեսեան տեսանել զաւուրս 'ի բարութեան: 'Նմինի իրի գեսալանք թագաւորաց յամենայն կողմանց առնա դիմելին 'ի խնդակցութիւն. մինչ զի արքայնկոնկոյի յՆվիրիկոյ և իշխաննք ոմանք 'ի Ճետքոնայ խոստացան նմա հնազանդութիւն: Խակ նարստ օրինակի մեծին քսեստոսի ոչ միայն խնամակալ լիներ 'ի վերայ հեռաւորաց և մերձաւորաց, այլ և հանեալ զօրս ընդդեմ աւազակաց մաքրեաց և անդորր արար զվիճակս եկեղեցւոյ: Մեծասաստ սպառնալեօք կարճեաց զաղմուկ հակառակութեան 'ի մէջ Յիսուսեանց և Կոմինիկեանց վասն Մոլինայի վարդապետութեանցն: Բայց խնդիրն մնաց անորոշ 'ի լոռութեան:

Ընդայն ժամանակս ծագեցաւ մեծ ընդդիմութիւն 'ի մէջ քահանայապետին Պողոսի և վլնետիկեան հասարակապետութեան, որ զերկու կղելը իկոսաստակս յանցանացինչ արկեալ էր 'ի բան,

հանելով զերկու վճիռս . միովարդելոյր զեկեղեցականս 'ի ստանալոյ զանշարժ ինչս 'ի տէրութեան վենետիկոյ . և միւսով ոչ թոյլայր առանց հաւանութեան ծերակուտին կառուցանել զեկեղեցիս զվանորայս և զաղքատանոցս և ոչ նոր սահմանագրութիւն կրօնի հաստատել առանց իշխանութեան նոցին : Ընդ այս բան այնչափ զայրացաւ պապն . մինչեւ եհան զեկեղեցական արդելումն յամենայն սահմանս վենետիկեան տէրութեան : Յայնժամ միջնորդ եղեալ արքային Գաղղիոյ Հենրիկոսի Դ հազիւ հաշտեցոյց զհայրապետն :

Դարձեալ Պօղոս պապ դատապարտեաց զձեւրդմանն , զոր արքայն Յակովը Ա պահանջեր 'ի Բրիտանացւոց + միտք բանին էր՝ զնա ինքն միայն ճանաչել թագաւոր . և թէ պապն Հռովմայ մի՛ կարասցէ զնամերժել 'ի թագաւորութենէ : Սապէս խոհական վճռովլք խափանեաց զհակառակութիւնս ծագեալս 'ի կողմանս Լուսիտանիոյ 'ի մէջ քրիստոնէից : Օրինագրեաց ևս միանձանց և եկեղեցականաց սրտի մտօք ջանալ 'ի ծաւալել զուղափառ հաւատս 'ի մէջ անհաւատից , ուսեալ միանգամայն զլեզուս եքրայեցերէն , լատիներէն և մանաւանդ արաբերէն , լինելովքաջ վարդապետ և ուսուցիչ : Հաստատեաց զբազում կրօնս 'Օրսովեան , զԱյցելութեան սրբոյն Ֆրանշիսկոսի Սալեզեան , Հարց աղօթողաց և Հարց քրիստոնէական վարդապետութեան սահմանալ 'ի Կեսարէ Բիւսէ : Կարդեաց 'ի սուրբս ըզկարովոս Բորբոմէոս կարդինալ և զֆրանշիսկա հռովմայեցի : Ընկալաւ հաճութեամբ զթուղթ դաւանութեան և հպատակութեան Դաւթի կաթողիկոսի Հայոց և գովեաց զնա , որ 'ի տառապանս անդ յերեսաց Պարախց գիմեաց առ գահն առ աքելական : Զտաճար Վտուիկանեան սրբոյն

Պետրոսի և կու գեղազարդեաց զանազան շինուածով կամորաց, սրբահից և խորանաց: Խոկ զդրատունն պերճացոյց զարդուք և ընտիր ընտիր մատենիւք: Յօրինեաց և 'ի մայր եկեղեցին Լատերանու զքնաղ մատուան Աստուածածնի: որ ասլա կոչեցաւ յանուն իւր Բուրկեղեան: Կառոյց կամուրջս մեծագործս 'ի վերայ գետոց: Երաց՝ հարթ արար զՃանապարհս. և ազգերացոյց զականակիտ ջուրս 'ի Բրադեան անդս. անցուցեալ և ընդ Ալսիեթեան վաղեմի ջրանցս հասոյց ցԵանիգուլ և ցքաղաքն Լեւոնեան: «Սորոգեաց միանգամայն և զջրմուղի Պօղոսեան ջրոյ: Եւ յետ այլ ևս առաքինի գործոց կանխեաց առնա վախճան կենաց 'ի հասակի վաթառունեինն ամաց 'ի հինգ կաղանդացն փետ. յամին 1621, կառավարեալ զեկեղեցին ամս հնգետասան, ամիսութ և աւուրս երկոտասան<sup>1:</sup>:

## ՄԼԶ

### ԳՐԻԳՐՈՒՄ ՃԵ

Ա. Տ. 1621, և ի այս էր ու ն է ան գիշը պինակի բ 5:

1556. Գրիգոր բոնոնիացի յառաջնմէ ձայնեալ Աղեքսանդր Լուգովիստոս 'ի հասակի վաթուուն և եօթն ամաց կարդեցաւ յառաջնորդութիւն ընդհանուր եկեղեցւոյ 'ի հինգ խոսացն փետ. յամին 1621: Սա լետը բարեբարոյ մեծանձն և իմաստուն, 'ի սակաւ միջոցի գործեաց

1 Աբոն. յամ. 1605—1621: Անդրէաս Ամառ. պատմ. Անն. գլ. Ճէ: Լամբէր. Տ. 2. հ. 1. եր. 62: Սահման. 45, 63, 65, 82, 91: Վարժ Լեռնի Դ: Պատմ. Հայ. հա. 3. եր. 600:

զյոլովս և զմեծամեծս : Զառաջինն վոյթ կալու միաբանել զթագաւորս ընդդէմ անհաւատից և հերեսիովտաց : Սմին իրի Փերտինանտոս կայսր հաստատեցաւ լինել գլխահար աղանդաւորաց, և Սիկիամունտոս արքայ Պողոնիոյ արձանացաւ խորտակիչ զօրութեան այլազգեաց : Իսկ մեծ քահանայապետն զօրօք և ընչելք ձեռնտու լեալ երկաքանչիւրոց՝ յորդոր մատուցաներ նոցա : Եւ հաստատեաց ՚ի հուովմ ժողով կարդինալաց Փբանիանութ ձայնեալ՝ իտարածել զսուրբ հաւատոս յերկիր անհաւատից : Եւ միանդամայն նորոգեաց զսահմանադրութիւնն կզեմայ Ը, [թէ խաչացիք տարադնաց եղեալ՝ ի հայրենեաց մի յապաշեսցեն ուրեք, ուր ոչ ազատ պաշաին կաթողիկէ հաւատք . յորոց և օտարազգիք առցեն զօրինակ բարի ճշմարիտ ուղղափառութեան և ամբծութեան . ըստ որում յիտալիա ամրացեալ կայ աթոռ քրիստոնէական կրօնի : Այնդունակ եհան դայլ վճիռ ընդդէմ հերձուածովաց յիտալիա և այլուր : Որով և կոչեալ զբազումն ՚ի կը զեաց ՚ի հեռաւոր վայրաց ընկալաւ ՚ի ծոց որբոյ եկեղեցւոյ : Ի 1623 Հռոտոլիոս Մաքսիմիլիանոս դուքս Սաքսոնիայ հերքեալ զհերձուածս՝ գրեաց առ նա յաղագս դարձի իւրոյ յուղղափառութիւնն :

Սա ինքն Գրիգոր պապ զօրէնս ընտրութեան պապին սահմանեաց առնել ծածուկ քուեիւք . որսկէս զի առանց իրիք ակնածութեան աղատ լիցին ընտրողքն : Դարձեալ պատուիրեաց անխափան կատարել ամենայն հաւատացելոց զտօն որբոյն Յովակիմայ և Աննայի : Կարգեաց ընդսուրբս զթերեզիա, զֆրանչիսկոս Քսաւերեան, զֆիլիպպոս Ներեան, զիգնատիոս հիմնադիր Յիսուսեանց և զիսիգորոս : Իսկ զՊետրոս Ագանասաքեան կրօնաւոր Ֆրանչիսկեան և զԼուինի

Կոնծակու 'ի Յիսուսեանց դասեաց յերանելիս :  
Հաստատեաց զվաճիռս յաղագս անարատ յղու-  
թեան Տիրամօրն . և զսահմանագրութիւն Պիո-  
սի Դ ընդարձակեալ , եղ զօրէնս խոստովանա-  
հարց շրջահայեաց լինել , զգաստ և արթուն 'ի  
լսել և արձակել զապաշխարոզս 'ի սովորական  
զազիր մեզաց , յատակ և անաղտ ունելով զաե-  
լիս և զսիրտս յայնպիսի առիթս : Եւ հասեալ 'ի  
վախճան կենաց իւրոց փոխեցաւ առ տէր յութ  
իդոսացն յուլիսի յամին 1623 , յետ կալոյ յիշ-  
խանութեան ամս երկուս և ամիսս հինգ :

## ՄԼԵ

## ՈՒՐԲԱՆՈՍ Ը

Ա . Տ . 1623 , և կայսերական  
Փերաբնակութիւնի Բ . 5 :

1557 . ՄԵծահռչակ կարդինալն Մամիկոս  
փլորենտացի յականաւոր զարմէ Բարքարինեան  
'ի հասակի յիսուսնելից ամաց յաջորդեաց ըզ-  
գրիգոր յաթոռ քահանայապետութեան յաւթ  
իդոսացն օգոս . յամին 1623 , և 'ի թագադրու-  
թեան անուանեցաւ Ռուբանոս Ը : Սա 'ի ման-  
կութեան ուսեալ տռ ոտս Յիսուսեանց եղե  
քաջազարժ բանագէտ և ընտիր բանաստեղծ և  
մեծանուն հելլենաբան : Մինչ զե 'ի սկզբան անդ  
Պարթենիոս պատրիարք Յունաց իրու առա-  
քեաց զպատգամաւորս խոստանալնմազհնազան-

1 Աբոն . յամին 1621 = 1623 : Առհայտան . 26 . 28 .  
34 . 39 . հայր . 3 . Կոնդ : Առ Մամիկոնիոսի Գիրք 1:

դութիւն իբրև գլխոյ ընդհանուր եկեղեցւոյ և  
խօսել սակա միաբանութեան արևելեան եկեղե-  
ցւոյ ընդ առաքելական գահին, ինքնին սրբա-  
զանն առանց թարգմանի խօսակից եղեւ և որո-  
շեաց զինդիրն : Ապա յերրորդում ամի քահա-  
նայապէտութեան իւրոյ հռչակեաց զհանդէս  
մեծի յորելինին : Պինդ կալաւ միշտ զաւան-  
դութիւնս և զսահմանադրութիւնս նախնի քա-  
հանայապէտաց : Արդել և զօրաւոր վճռովք, զի  
մի յապա ժամանակի քահանայապէտը սկատ-  
ձառաւ իւիք շնորհեսցեն այլոց կամ օտարաւ-  
ցուսցեն զժառանգութիւնս գահին Հռովմայ :  
Որում սեփականեաց զդքսութիւն Ուրբինեայ  
մահուամբ դքսին Ֆրանչիսկոսի . որոյ լեալ ան-  
ժառանգ՝ յանձն արար զայն 'ի ձեռս պապին  
որպէս սեփական կալուած աթոռոյն :

Ի սահմանս Բօնոնիայ կանգնեաց զամբոց 'ի  
պաշտպանութիւն, որ ըստ անուան նորուն ա-  
նուանեցաւ Ուրբանեան : Եւ ևս շքեղացոյց  
զլատիկանեան տաճարն հրաշալի՝ վայելուչ շի-  
նութեամբք : Խսկ զգերեզման սրբոյն Պետրոսի  
պլնձագործ գրուագօք գեղազարդեաց : Ընդար-  
ձակեալ պճնեաց զմեծ ուսումնարանն Հռովմայ  
զկոչեցեալն Սաֆինցիա, այսինքն իմաստութիւնն  
և զմատենադարանն Վատիկանու յունական մա-  
տենիւք ճոխացոյց : Սապէս հիմնեաց զդպրոց Փրո-  
փականասայի, որ կոչեցաւ այնուհեաւ Ուրբա-  
նեան : Խսկ զաշտարակն կամ զդաստակերտն  
Նորիանեան նորանոր հաստատութեամբք ամ-  
րացոյց, և զքազաքն Լեւոնեան պարսպօք և  
բրդամբքշրջապատեաց : Զերդս պաշտամանց եկե-  
ղեցւոյն իւրեանց յոտանաւոր վերածեաց . և  
զվկայաբանութիւնս սրբոց քննեալ յստակեաց :

Հասեալ համբաւ մէծութեան սրբազանին  
յարելս, գրեաց առ նա թուղթ հպատակու-

թեան Մելքիսէթ կաթողիկոս մինչ 'ի տաւա-  
պանս էր, յայտ արարեալ նմա զնեղութիւնն՝  
զորս կրէր յանհաւատից, որում կարեկից եղեւ մի-  
լովաբար պատկն, առ որ դրեաց յետոյ և Մովսէս  
կաթողիկոս թուղթ հպատակութեան ստորա-  
գրութեամբ երկոտասաննեալիսկոպոսաց Հայոց-  
ասլա և Կիրտակոս պատարիարդ Կոստանդինու-  
պօլսոյ:

Սա եղեւ առաջին, որ ընկալաւ հանդիսապէս  
զերդումն քրիստոնէական հպատակութեան 'ի  
թագաւորաց կոնկոյի 'ի ձեռոն գեսպանին Յով  
հաննու Մկրտչի : Խոհականութեամբ խափա-  
նեաց զու սակաւ պարապորդութիւնս տօնից,  
այնու զի շատք յաղքատաց զօրըատօրէ հոգէ-  
պահիկն հազիւ դատանէին առ յաճախութեան  
տօնից, մանաւանդ զի յոլովք ևս զայնպիսի ա-  
ւուրս 'ի ցոփութեան քան թէ 'ի պաշտաման  
Աստուծոյ ծախէին (1286):

Կարճեաց և զընգվայր ընդդիմաբանութիւն  
ումանց, թէ արդեօք 'ի ստիպէլ հարկի մարթ  
ինչ իցէ առնել խորհրդական խստավանութիւն  
ոչ միայն քահանայից, այլ և աշխարհականաց:  
Օրինագրեաց խոստովանահարց, զի ունիցին առ  
իւրեանս զսահմանադրութէ Ընթրեաց տեառն  
և ուշի ուշով ընթերցցին և 'ի գործ գիցեն: Ծնոր-  
հեաց կարդինալաց, եկեղեցական կայսրընտրաց  
և կարգապետին Մալդայի զտիտղոսն Վոեմա-  
փառ: Ապա դասակարգեաց ընդ սուրբս զԵղի-  
սաբեթ թագուհի Փորդուգեղից, և զԱնդրէաս  
Քորսինոս կարմեզական: Խոկ զկայետանոս  
Դիենեան, զՓելքս քափուչին և զայլս ումանս  
դատեաց 'ի կարդս երանելեաց: Եւ ինքն թողեալ  
'ի գանձ եկեղեցւոյ գրուածս չափով և արձակ  
փոխեցաւ 'ի կեանս անմահ 'ի չորս կաղանդացն  
օգոստ յամին 1614, յետ կալոյ 'ի հայրապե-

տութեան ամս քսանեմի՝ պակաս ինն աւուրբք,  
փառաւորեալ յԱստուծոյ և 'ի մարդկանէ ։

## ՄԼԲ.

## ԻՆՇՈՎԿԵՇՏԻՌԱ Ժ

Ա. Տ. 1644. և կայսերութեան  
Փերաբինուառուի զ. 8 :

1558. Զկնի փոխման յաստեացս մեծին Ռւբ-  
րանոսի բարձրացաւ յաստիճան քահանայապե-  
տութեան Յովհաննէս Մկրտիչ կարդինալ հռով-  
մայեցի՛ի Պամիիլեան քաջափայլ զարմէ յեօթն  
և տասն կաղանդացն հոկտ. յամին 1644, և  
անուանեցաւ իննովկենտիոս ժ. Սա առ մեծի  
խոհականութեան զաւածինն կարդեցաւ 'ի նա-  
խորդէ իւրմէ թուականագիր 'ի վերայ աղեր-  
սադրոց պապին, և աղա նուիրակ 'ի Սպանիա և  
'ի Գերմանիա . և յամենայնի ընտիր գտաւ :

Ի սկիզբն քահանայապետութեան իւրոյ գըր-  
դուեցաւ պատերազմն կրետեան, զոր մլեցին Վե-  
նետիկեցիք ընդ այլազգեաց ամս քսանեհինդ . և  
առաքեաց նա յօդնութիւն Վենետիկեցւոց զե-  
րեք կարդեան ցոկանաւս իւր . որոց վասն հայ-  
թայթեաց և յայլուստ կարեւոր նապաստս : Հոչա-  
կեաց զհանդէս յոբելինի՝ հայցելով 'ի տեառնէ  
զիսաղաղութիւն և զերջանիկ կատարած :

1 Սբոն . յամ 1625 = 1644 Սահմ. 62, 65,  
153, 164, հապ. հ. Կոնդ. էր. 116, 120, 216,  
230: Առ Լամբերտ. յշ. ծառու. Ասպանծոյ. Գիր+4.  
5. 2. Գլ. ծէ. 14: Պապի Հայ. Գիր+6. Գլ. Էդ.  
և իւ:

բեկարգեաց վճռաւ զարարողութիւն սրբազան ժողովոյն։ Պատուէր հրամանի արար և կարգինալաց շատանալ տիտղոսիւ Վահամակառ և Ամենասպատիւ, և մի՛ բնաւ 'ի վար արկանել զաշխարհական պատուանուն, թէ և իցեն ծննդեամբքաջատոհմիկ։ Յաւել 'ի ժառանգութիւն հռովմայ զամբոց դքսութեան բարմայի։ Կանոնաւորեաց զվանորայս, և զոմանս եբարձ՝ յորս սակաւք 'ի միանձանց կային, յանձն արարեալ 'ի խնամա եպիսկոպոսաց հոգալ և 'ի կարգի դնել զայնս։ Դատապարտեաց զհինդ մոլորական բանս կուռնելիուսի Յանսենիոսի եպիսկոպոսին իբրիոյ 'ի գիրսն Օգոստինոս մականուանեալ (877)։ Մերժեաց և զդիրսն որ Յաղագո գլխաւորութեան հռովմէական եկեղեցւոյ և սրբոց առաքելոց Պետրոսի և Պօղոսի զի մատենագիրն հաւասար գնէր զՊէտրոս և զՊօղոս 'ի կառավարութեան եկեղեցւոյ։ Եւ ոչ միայն դատապարտեաց զդիրս մոլորելոց, այլ և պատուիրեաց գիտնականաց ջրել զանուղիղ բանս նոցա։ Փիլիպպոս կաթողիկոս գրեաց առ նա թուղթ սիրոյ և հպատակութեան հանդերձ սպատանիւնիւ դաւանութեան հայոց։ յորում ստորագրեալ էին քըսանեհինդ եպիսկոպոսունք և ութ վարդապետք Խոկ Խննովլիենտիոս յետ կալս յիշխանութեան ամս տասն, ամիսս երիս և աւուրս քսանեերիս, վոխեցաւ առ տէր ութսունեմիոյ ամաց յեօթնիդոսացն յունվ։ յամին 1655<sup>1</sup>։

1 Սբոն. յամ 1644=1655։ Առհմ. 2, 19, 27, 31. հագ. 4. Կռնդակ։ Պատմ. Հայ. Գիրք 6. գևիդ։

## ՄԼԹ

ԱՂԵՔՍԱՅՆԴԻ Է

Ա. Տ. 1655, և կայսերական  
Փետրիանութեան Գ. 19:

1559. Փապիոս կարդինալ սենացի ՚ի մէծապանծ զարմէ քիկեան յեօթն իդոսացն ասպրիլի յամին 1655 յաջորդեաց զյննովկենտիոս + և ՚ի հանդիսի թագագրութեան կոչեցաւ Աղեքսանդր ի: Սա ՚ի սկզբան անդ առ մէծի իմաստութեանն և խոհականութեան կարգեցաւ յՈւրբանոսէ Ը նու իրակ ՚ի կողոնիա և ՚ի Մուշտեր + ուր արարեալ զընդհանուր հաշտութիւն՝ գովեցաւ յամենեցուն, և ՚ի դարձին ընկալաւ զպատիւ կարդինալութեան և զիւ ատենադպիր տէրութեան: Եւ իրքեւ հաստատեցաւ գլուխ ընդհանուր և կեղեցւոյ՝ կարի խնամակալ եղեւ ՚ի վերայ քրիստոսեան կրօնիս, և շնուրութեան քաղաքին Հռոմայ: Զառաջինն հաստատեաց զվաճիոս նախորդին իւրոյ յաղագս դատապարտութեան մոլար բանիցն Յանսենիոսի, և դատապարտեաց զայլ ևս քառասունեհինգ մոլորութիւնս այլոց, և օրինագրեաց զհրահանդս բարի վարուց: Խսահակ Բերերիոս, որ դատապարտեալն էր յաղագս տպագրելոյն զաղանգնկալինոյ և զեւախադամեանց, ՚ի զեղջ եկն և ընկալաւ պաղատանօք հանդերձ զներումն:

Նա ինքն Աղեքսանդր զօրացոյց զսահմանս նախնի քահանայապետաց յաղագս անարատ յղութեան Աստուածածնին, և յաւել ՚ի վերայ զպատուհաս որոց զընդդէմն խօսին: Մեծարեաց պատուով ոչ միայն զուսումնասէրս և զարդիւ-

նագործս, այլ և զթագուհին Շուեհաաց Քրիստինա, որ ՚ի ծաղկեալ հասակի հրաժարեալ ՚ի թագեն մերժեաց զաղանդ բրուբսելեան և եկառորեալ ՚ի Հռովմ եկաց յաւերժաբարյուղափառ հաւատու հաւատու : Քահանայապետս այս ձեռնուու եղել վենետիկեան տէրութեան ընչիւք և զօրօք՝ զի շահատակէին ՚ի Կրետէ ընդդէմ տյլազդեաց : Նոյնպէս ձեռնուու եղել կայսեր Լէոբոլտի դիմակալի արշաւանաց նոցուն ՚ի Հռովմարիս և ՚ի Դրանսիլվանիս : Զօրավիգն դտաւ և Կարոլոսի կամակալի արշաւանաց նոցուն : Նոյնպէս նպաստամատոյց եղել արքային Պողոնիս : Խրբե ճարակեցաւ ժոնատիստ ՚ի Հռովմ, և անտի տիրեաց կարօտութիւն հայի, նա հայրաբար խնամատարեալ աղքատաց՝ բաշխեաց զամենայն դանձնն ՚ի կարօտեալս :

Զանահնար եղել ծաւալել զլոյս սուրբ հաւատոյ ՚ի հեռաւոր աշխարհս արենելից և Ափիրիկոյ : ուր մեծապանծ թագուհի ոմն ընդ ոմանց հպատակաց իւրոց կռապաշտից դարձաւ ՚ի ճշմարտութիւն ՚ի ձեռն քարոզութեան քափուչին քահանայի միոյ : Դուքսն Մեկեմնուրիայ և իշխանուհին Լուիձիս Բալտահնախոնարհեցան ՚ի ծոց սրբոյ եկեղեցւոյ ողջամիտ վարդապետութեամբ : Սապէս և խաչատուր կաթողիկոս Սայդրեաց առ նա ՚ի 1665 թուղթ ուղիղ դաւանութեան միաբան ընդերեքտասաան եպիսկոպոսաց և լինն վարդապետաց : Նուաճեաց զխոսվարարս ՚ի ձեռն եղօրորդւոյ իւրոյ կարդինալի քեկեան, և ապա ալատուիրեաց կանգնել ՚ի Հռովմ վէմ և վորագրել ՚ի վերայ զվճիռ դտապարտութեան պատժապարտիցն այնոցիկ : Դասակարդեաց ընդ սուրբս զթովմտս արքեպիսկոպոս Վալենցիոյ և զսուրբն Գրանչիսկոս

Ապէղեան, և պիսկոպոս Շինեվրայ: Պատուհա-  
սեաց զկիսասարկաւագս հեղդս ՚ի պաշտաման  
առաքելական գահին, և կարդեաց ՚ի տեղի նո-  
ցա զպաշտօնեայս յիշեցուցիս ազերասդրոց, շը-  
նորհելով նոցին զգդեստ մանուշակագոյն: Հաս-  
տատեաց երեսուն կարդինալս արժանաւորս ա-  
ւագութեան, որոց և արգել զգոյն մթին: Փոյթ  
և զօրութիւն մեծի հայրապետին յամենայն  
վայրս հասաներ, և բնաւ ոչ պակասեր՝ ՚ի քահա-  
նայապետական պաշտամաներ, անպակասդտեալ  
և ՚ի գրաւոր աշխատասիրութիւնն: որոց և բա-  
նաստեղծութիւնք տպագրեցան ՚ի Լուվերօ ՚ի  
1656: Առ սա գրեալ Նիկոլ եպիսկոպոս Խլվովայ  
խնդրեաց հիմնել ՚ի քաղաքի անդ գպրոց: և  
հաճեցաւ ընդ այն սրբազնն, և ետ կանգնել  
դպրատուն ծախիւք առաքելական գահին, կար-  
դեալ և հասս վասն երկուսասան ուսանողաց ՚ի  
1662:

Այլ յայսոմիկ արարս իւր մեծաւ համ-  
բերութեամբ տաներ ցաւոց խճից: և իբրև ծա-  
նեաւ եթէ մերձեալ է վախճան կենաց իւրոց՝  
զարմանալի եռանդեամբք պատրաստեցաւ՝ իմահ  
կատարեալ զամենայն խորհուրդս եկեղեցւոյ:  
Եւ հաւաքեալ առ իւր զկարդինալ՝ սկսաւ ճա-  
ռել քաղցրութեամբ լատիներէն ՚ի վերայ տկա-  
րութեան մարդկային կենաց և մեծութեան  
աստուածային ողորմութեան: և ապա յայտ-  
նեաց ամենեցուն՝ թէ չեր բնաւ ցանկացեալ այնիր  
ծայրագոյն իշխանութեան զոր ուներ, և զոր  
միանդամ ծախեալէր՝ ՚ի գանձարանէ՝ ամենային  
վասն տարածելոյ սուրբ հաւատոց էին և կամ  
յօդուտ հասարակաց: Ապա խնդրեաց ընտրել  
քահանայապետ զայնալիսի ոք, որ կարող իցէ  
ղթերին իւր լցուցանել: Հուսկ յետոյ կատա-  
րեալ հրապարակաւ զդաւանութիւն սուրբ հա-

ւատոյ օրհնելոց զնոսա հայրական օրհնութեամբ  
և աւանդեաց զհոգին՝ ի ձեռս Աստուծոյ ամաց  
վաթուննեինունց՝ ի մետասան կազանդացն յու-  
նիսի յամին 1667, վարեալ զիշխանութիւնիւր  
ամս երկոտասան և աւուրս քառասունեհինդ:  
Եւ կամեցաւ զիյետ մահուանն 'ի նոյն սենեկի  
յորում բնակեր՝ արասցեն ինքեան գերեզման:  
Անդրի պղնձի կանդնեցին 'ի պատիւ նորա 'ի  
հրասլարակին Հռավեննայ<sup>1</sup>:

## ՄԽ

## ԿՂԵՄԻՍ Թ

Ա. Տ. 1667, Ն ՀԱՅՈՒՐԻ-ԵԵԹԻ ԼՔ-Բ-ԱՎԻ Ա. 11:

1560. Յետ մահուան Աղեքուանդրի բարձրա-  
ցաւ յաթու քահանայապետութեան Յուլիս  
Հռոսքիլիոսկարդինալ պիտոյացի վաթուննե-  
ինն ամաց յերկոտասան կազ յուլիսի յամին 1667.  
և 'ի հանդիսի պսակման անուանեցաւ Կղեմէս  
թ: Զարմանալի էր սորա ուշիմութիւն և քա-  
ջավարժ հմտութիւն 'ի պէտքէսմակացութիւնն:  
Ուրբանոսի ը տեսեալ զսա զի աջողէր 'ի մեծա-  
մեծ գործու, առաքեաց զնա գեսպանութեամբ  
'ի Սպանիա . ուրանօր իմաստութեամբ գլխա-  
ւորեալ նորա զպաշտօն իւր յօդուտ սրբոյ եկե-  
զեցւոյ գովելի դատաւ, և մեծարեալ յարքայէն  
եկաց անդ ամս մետասան: Իսկ առ իննովկէն-  
տիոսիւ կոչեցաւ 'ի Հռովմ և կարգեցաւ կանո

1 Սահման . 28 . Ն 167 . 117 . 58 , Ն 170 . հապ .  
5 : Աղեմս . Կապաղ . 'ի պապ . Եկ , հապ . 1 . Վլաճ .  
5 : Լամբէր . յղ . ծառ . Աստուծոյ . Գլ . ԷՌ . 5 :  
Պապմ . Հայ . Գիրք 6 . Գլ . ԷՌ , Ն ԱՌ :

նիկոս : Յետ այնորիկ եղեւ ատենադպիր Ազեք-  
ռանդրի է , յորմէ և պատուեցաւ աւագու-  
թեամբ : Եւ իբրև եկաց քահանայապէտ , խնամ  
կալաւ բարերարել ժողովրդեան և միաբանել  
զթագաւորս ընդդէմ այլազգեաց , որով և մե-  
ծապէս պատուեցաւ յամենեցունց : Սակայն  
դատն և որք ոչ ուղիղ ակամբք հայէին 'ի նա որոց  
ոչ միայն տարաւ առաքինաբար , այլ և ներողա-  
միտ եղեւ ոքանչելի հեզութեամբ , և 'ի Վատիկա-  
նեան տաճարի մատակարարեաց նոցա զնոր-  
հուրդապաշտութիւնն է 'ի հնազանդութիւնն օրի-  
նաց , այնու առաւել յաղթական հանդիսացաւ  
'ի վերայ նոցա՝ քան թէ պատուհասեալ էր զնո-  
սա : Առատաձեռն դատաւ առ աղքատաս և ճիշդ-  
առ իւրօն , զորս թէպէտ և սիրէր , այլ ոչ զոք  
բարձրացոյց յիշխանութիւնն : Եւ յաղադս այսքան  
առաքինութեանցն ամենայն ոք պատկառէր 'ի  
նմանէ և սիրէր զնա : Ընդ սուրբս դասեաց ըզ-  
Պետրոս Ազկանտարայ 'ի զարմէ սրբոյն Ֆրան-  
չիսկոսի և զՄարիամ՝ մագդաղենացի Բացեան  
փլորենտացի 'ի կարգէ Կարմեղականաց : Մեծ ե-  
ղեն ջանք մեծի հայրապետին 'ի զօրացուցանել  
զվենետկեցիս 'ի Կրետէ ընդդէմ այլազգեաց և  
ազատել զկզին զայն 'ի պաշարմանէ նոցա .  
սակս որոյ պատրաստեաց զնաւս և զայլ կարեւոր  
նպաստս : Սակայն իբրև լուաւ եթէ յետ սաս-  
տիկ պատերազմաց՝ որ տեւեաց զամս քամանեհինդ-  
անձնատուր եղեն Վենետկեցիք , 'ի խոր խոցե-  
ցաւ , և 'ի ցաւոց սրտին փոխեցաւ յաստեացս  
'ի հինդ իդոսացն դեկտ . յամին 1669 , կացեալ  
յիշխանութեան ամս երկուս , ամիսս հինդ և  
աւուրս իննետասն <sup>1</sup> :

1 Առհիման . 1 , 3 . 'ի կոնդակ . հապ . 7 :

## ՄԽԱ

ԿԴԵՄԿՍ Ժ

Ա. Տ. 1670, և էայսեբութեան 15-րդը Ա. 14:

1561. Կղեմէս Թ. մինչդեռ յոգիս ապաստանեալ էր, նախագուշակեաց ոռք հանդերձեալ էր յաջորդել զինքն: Եւ յետ յերկարաձգելոյ ընտրութեանն ամիսս երկուս, ապա ըստ նորին գուշակութեան կարգեցաւ քահանայապետ Հուովմայ Եմիլիոս Ալտերիոս հուովմայեցի յերեք կաղանդացն մայիսի յամին 1670 ՚ի հասակի ուժուն ամաց ՚ի բազում թախանձանաց կարդինալացն: Քանզի այր ծեր էր և հրաժարել կամէր ՚ի ծանր պաշտամանէ անտի: Եւ զի հինգ ամսովք յառաջ բարձրացեալ էր ՚ի կարդինալութիւն ՚ի կղեմայ Թ. սորին աղագաւ ՚ի յիշատակ բարերարութեանց նորա անուանեցաւ կղեմէս Ժ: Քաղցրաբարոյ և խաղաղասէր հայրապետս եբարձ զարարաձայնութիւնս ՚ի մեջքը իստոնեայ իշխանաւորաց, խրախուսեալ զամենեսին ՚ի մի միաբանութիւն ընդդէմ այլազգեաց, ձեռնտու լեալ և արքային Պողոնիայ շահատակելոյ արութեամբ ընդդէմ թշնամեաց: Ձեռն արկ ՚ի նորոգութիւն մեծի տաճարին 1 իրերիանայ, կամ սրբոյն Մարիամու, Մաճուէ անուանելոյ: Ի 1675 հրատարակեաց զհանդէս յոբելինի: Սահմանեաց պաշտօն յաղագս ինն և տասն նահատակաց Գորգոմեան կոչեցելոց: առեալ զանուն ՚ի տեղւոջէն՝ ուր դառն տան ջանօք կատարեցան նոքա առ դաւահելոյ զիսկա կան մարմին Փրիատոսի լինել ՚ի սուրբ հաղորդաւթեան, և ս և զնախագահութիւն սրբոյ եւ

կեղեցւոյն հռովմայ: Նոյնալէս զբազումնդասեւաց ընդ սուրբա, որպէս զԱրդուհի կոյսն լիմացի, զԼուդովիկոս Բերտրանդոս, զԼայետանոս թէ-նէեան, զՓիլիպպոս Բենիամիոս, զՖրանչիսկոս Բորձեան և զայլո, յորոց 'ի ձեռն յաճախեալ էին նշանիք սքանչելեաց: Եւ կարգեաց յերանելիս զՊիոս Ե սլատ և զմեծն Ալպերտ: Առաստ-ձեռն դաւաւ առ աղքատու և առ օտարս բացյիւ-րոց անտի, զորս եթող 'ի խնամն Աստուծոյ: Եւ կատարեալ զընթացս կենաց անարատութեամբ, փոխեցաւ առ տէր 'ի մետասան կաղանդացն օ-գոս. յամին 1676, կացեալ 'ի քահանայապե-տութեան ամս վեց, ամիսս երկուս և աւուրս քսանիներիս<sup>1:</sup>

## ՄԽԲ

### ԽՆԱՌՎԿԵՆՏԻՌՍ ԺԱ

Ա. Տ. 1676, և իայսերութեան Լէոբուլի Ա. 20:

1562. Յետ երկուց ամսոց վախճանին կղեմայ հուչակեցաւ ընտրութիւն կարդինալին և ե-պիսկոպոսի Նովարայ Բենեդիկտոսի Օդէսքալ-քեան կոմինացւոյ յառաջ քանի զօրն մետասա-ներորդ կաղանդացն հոկ. յամին 1676. որ թէ-պէտ և ընդդէմ կացեալ հրաժարեր, այլ բըռ-նադատեալ յաւագացն զիջաւ 'ի կամն նոցա: Եւ քանիզի իննովվկենտիոս ժ բարձրացուցեալ էր զնա 'ի պատիւ կարդինալութեան երեսուն և մի ամօք յառաջ, սորին աղագաւ 'ի պատիւնո-

1 Աժոնդբառապահ. Հիմ. 1: Լամբէբ. սահ. 79: Ա-ղէտ. իշ. սահ. 169: Սահմ. 54. 191. հագ. 8. Կռնդ. եր. 80, և 441:

բա անուանեցաւ իննովկենտիոս ԺԱ. և ըստ առնուանն անմեղ և ամբիջ վարուք քաղաքավալաբեալ յազթեաց գժուարութեանց ժամանակին, և պատկառելի կացոյց զեկեղեցին Քրիստոսի: Ի սկզբան անդ բնաւ չէառ յանձն ընդունել զհըրեշտակս թագաւորաց՝ եթէ ոչ բարձրեն նոքազինքնահնար իրաւունս ապահարկութեան.ցուցեալ թէ անտի վլաս մեծ ծադի օգտի հասարակաց և բարի վարուց, երբ դեսպանք օտար ազգաց ընդ իւրոցն զեզիսին 'ի մոլութիւնս և մնան անպատիժ: յաւել 'ի վերայ և զպատիժ բանագրանաց, և զկոնդակն զայն հաւանութեամբ ամենայն կարդինալաց հաստատեալ հրատարակեաց 'ի 1687:

Ընդ այս գործ գառնացեալ Լուդովիկոսի ԺԴարբային Գաղղիոյ՝ տռաքեաց 'ի Հռովմ անսովոր պատգամաւորութեամբ զհենրիկոս Լավարդինոս հանդերձ զօրօք ահ արկանելով յետադարձուցանել զժառանդութիւնո ըստ վաղեմի իրաւանց: Սակայն սպառնալիք արբային ոչինչ շարժեցին զպապին, որ արհամարհեալ զնոքօք՝ բնաւթոյլ ոչ ետ դեսպանին երեւել անդամաշաց իւրոց: Վաղա պատուեր ետ փակել զտաճար սրբոյն Լուդովիկոսի, զի մի' Լավարդինոս երևեսցի անդ 'ի ժամաստուածային սպաշտամանց 'ի գիշերային հանդիսի ծննդեան Քրիստոսի: Վասն որոյ յետ ժամանակառ լինելոյ նորա 'ի Հռովմ զամբոս եօթնետամն՝ կոչեցաւ 'ի Գաղղիա:

Եւ պապն անդադար ճպներ հաստատել զիրաւունս եկեղեցւոյ և 'ի գեղեցիկ կարդս ամբացուցանել զսահմանադրութիւնս: Խրախուսեաց զթագաւորս ընդդէմ այլազգեաց. նպաստամասոյց եղեւ մարտադրաց ընչիւք. և ազգակցաց իւրոց ոչ միայն չեղեւ նպաստամասոյց, այլ և ատիպեր ևս զնոտառ ծափել զինչո 'ի ակտս պա-

աերազմաց ընդդէմ այլազգեաց . և միշտ սկազատէր առաեր վասն ամենայն յաջողութեանց , որով Պողոնիացիք յետո դարձուցին զկամենից , վէնեակեցիք զՊեղոպոնէս . իսկ կայսրն հաւածական արար զնոսա ոչ միայն 'ի ստհմանաց իւրոց՝ թափեալ զվեննա 'ի սկաշարմանէ , այլ և 'ի չունդարիոյ մեծապէս խորտակեալ զթշնամիսն : Եւ ծանուցեալ ամենեցուն թէ յաղթութիւնքս այս միջնորդութեամբ Տիրամօրն 'ի գըլուխ ելին 'ի տօնի անուանն նորին , նմին իրի պատուիրեաց պատին՝ զի ամ ըստ ամէ կատարեսցի տօննն այն 'ի յիշատակ մեծի պաշտամանութեաննորա : Իսկ Յովհաննու արքային Պողոնիոյ յընծայ արքայավայէլ առաքեաց զուուեր և զիսոյը յազագս արգեանց առաքինական մրցանացն :

Խնդութիւնն մեծ եղեւ իննովկենախոսի իբրեւ ըււաւ եթէ Յակովոսս Բ արքայ Անդղիոյ դարձաւ յուղղափառութիւն : Այլ Անդղիացիքիբերե հալածական արարին զարքայն և զկուսակիցանորա , ժողովեաց մարդասիրապէս արքայն Գաղղիոյ զՅակովոսս արքայ ընդ թագուհւոյն և ընդ կրսեր որդւոյն . որով և գուլեցաւ յոյժ 'ի մեծէն իննովկենախոսէ , մանաւանդ 'ի բռնտադատելնորա զաղանդաւորս զի կամ թողցեն զմոլորութիւնս և կամ զԳաղղիա :

Իննովկենախոս նորոգեաց զվճիու Ազեքանդրի է . զի որք հանդերձեալ են նուիրել զանձինս 'ի սուրբ կարդու կամ յուխտակրօնաւորութեան խոպառ հրաժարեսցին յընկերակցութենէ մարդկուն և առանձնացեալք 'ի կրթարանս իւրեանց պարապեսցին 'ի հոգեորս ըստ ստհմանագրութեան երանելոյն խգնատիոսի . որպէս զի քաջ մարզեսցին յանդորրու 'ի բարեպաշտ խորհուրդս և յաստուածախոհ կրթութիւնս զաւուրս տասն խոկալով լյաւիտենական փրկու-

թենէ: Արդել և միանձնուհեաց չպարապիլ և ոչ  
զբաղել յարուեստ երաժշտութեան և յեր-  
գըս խենեշութեան: Դատասկարտեաց զմոլորա-  
կան բանս բարոյական վարդապետութեան թը-  
ւով վաթսունեհինդ, և զգիրս Միքայէլի Մոլինայի  
սպանիացի քահանայի (876): Աշնչափէին նորա-  
ջանիք սակս պայծառութեան ճշմարիտ հաւա-  
տոյ և ուղղութեան քրիստոնէտիան կարգաց և  
օրինաց, մինչեւ նոքին խակ հերետիկոսք՝ի գովեստ  
տուեալ մեծարէին զնա: Սակայն յետ այսպիսի  
ուղղութեամբ վարելոյ զիշխանութիւն հայրա-  
սկետութեան ամս երկոտասան, ամիսս տամն և  
աւուրս քսանեերկու, կատարեաց զընթացք կե-  
նաց՝ի հասակի եօթանասունեութ ամոց՝ միով-  
աւուրբ յառաջ քան զիգոսս օգոստ: յամին  
1689<sup>1</sup>:

### ՄԽԳ

### ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ.

Ա. Տ. 1689, և կայսերական Լէոբուլու Ա. 38:

1563. Պետրոս Օտառբօնոս որդի մեծի աս-  
պետին Մարկոսի գլխաւոր ատենագորի վենետ-  
իկուն հտուարակապետութեան, կարգեցաւ քա-  
հանայապետ Հռովմայ հաճութեամբ ամենե-  
ցուն յառաջ քան զիգոսս հոկ: յամին 1689,  
և 'ի թագադրութեան անուանեցաւ Ազեքսանդր  
Բ: Սա ծնեալ՝ի Վենետիկ՝ի մեծապահծ վա-  
ղեմի զարմէ՝ քաջուս հանդիսացաւ յուսումնա-  
բանին Պատաւիոնի: և ապա անցեալ՝ի Հռովմ

1 Լամբէը • սահման • 79 և 104 : Սահմ. 186:  
Սիսնութեամբ վիճ. 1: Ծանօթ. 10 'ի Պիոս Ե: Ա-  
շեն: Ե: սահ. 169. հագ. 5. Կոնդակ. Ե: 566:

եկաց յեկեղեգական սպասահարկութեան , մինչև յ՛լուրբանոսէ Ը կարգեալ պաշտօնեայ մեծամեծ գործոց՝ գովելի գտաւ յամենայնի . և ապա պատուեցաւ աւագութեամբ յիննովկենախոսէ ձ 'ի 1652 : Յետոյ կարգեցաւ և եպիսկոպոս բրեշխայ , զոր կվեմէս թ հաստատեաց իւր թուականագիր 'ի վերայ աղերսագրոց :

Արդ քանզի մեծ եղև ցնծութիւն հայրենեաց իւրոց վենետիկեան տէրութեան ընդ քահանայ ասվետութիւն նորա , սորին վասն և նա կութեմեծ եցոյց առ իւրսն : Կորոդեաց զվաղեմի իրաւունս և զարտօնութիւնս խափանեալս : Օգնեաց նոցին զօրք և ընչիւք , որք քաջութեամբ մարտընչէին ընդ այլազգեաց : Խոկ մեծի զօրապետին ֆրանչիսկոսի Մավրոդինի շնորհեաց սուսեր և վիսոյր 'ի պարգև սակս տրդեանցն առ քրիստոնէական կրօն , զորս սովորաբար քահանայապետք ընծայէին կայսերաց և թագաւորաց : Ճոխացոյց գերազանց պատուով զառաջնորդն եկեղեցւոյ սրբոյն Մարկոսի որ կոչիւր Պոխմիկուր , շնորհեալ նմա զիշխանութիւն տալոյ զիոքք ատահճանս գղերաց իւրոց : Կապաստամատոյց եղև և կայսեր , որ անդադար մարտ մղէր ընդդեմ այլազգեաց : Օրինադրեաց ընտրել զեպիսկոպոսունս 'ի վերայ քաղաքաց առելոց յայլազգեաց : Ճոխացոյց զմատենագարան Վատիկանու , և յաւել ծախիւք իւրովք երկուհազար աղնուադիւտ գրչագիր մատեանս : Հաստատեաց զսահմանադրութիւն նախորդին իւրոյ , ստիպեալ ըզգեսպանս թագաւորաց գլուխ զիրաւունս ապահարկութեան . և պահանջեաց յարքայէն Գաղղիոյ գարձուցանել յառաքելական գահ զքաղաքին Աւենիոն հանդերձ շրջակայ սահմանօք : Ամրացոյց զսահմանս հաւատոյ , դատապարտեաց զմոլորական բանս թուով երեսունե մի : Դասեաց

ընդ սուրբս զերաննելին Լաւրենտիոս Ա պատ-  
րիարք Վենետիկոյ զաքանչելին սրբութեամբ և  
խմաստութեամբ, նա և զՅովհաննէս Օդոսատի-  
նեան անապատաւոր, զՅովհաննէս 'ի Գրաբիա-  
տրանէ, զՊասքաղէս Բայլոննեան, զՅովհաննէս  
ողորմած փորդուդեղ կարգապետ հիւանդապալա-  
հաց : Ամենայն գործք քահանայապետիս գովե-  
լի հանդիսացան յաջ աշխարհի : Եւ ինքն 'ի  
հասակի ութսուննեմի ամաց փոխեցաւ յաստեա-  
ցըս 'ի կաղանդս փետ . յամին 1691, կացեալ  
յիշանութեան ամիսս հնդետասան և աւուրս  
քսաննելեց <sup>1</sup> :

## ՄԽԴ

### ԽՆԱՌՎԿԵՆՏԻՌՍ ԺԲ

Ա. Տ. 1691, և կայսերական Լէոբուլի Ա. 40 :

1564. Զկնի հնդամսեայ քննութեան կար-  
դինալաց 'ի փակարանի յընտրութիւն նորոյ  
քահանայապետի 'ի չորս իդոսացն յուլիսի ընտրե-  
ցին զկարգինալն Անտոնիոս Պիկնատելոս արքե-  
պիսկոպոս Կէտապօլոյոյ : Ստ ծնեալ 'ի Կէտապօլիս  
'ի 13 մարտի 1615 յականաւոր զարմէ բարեկիրթ  
դտաւ և քաջավարժ յուսմունես, և յիննով  
կենտիոսէ ԺԱ բարձրացաւ յաւագութիւն 'ի  
1681 : Յորոյ յիշատակ բարերարութեանցն 'ի  
թագադրութեան, անդ անուանեցաւ իննով  
կենտիոսժիր, և առաքինութեանց նորա եղե հե-  
տեռոլ : Կմին իրի վաղվաղակի ձեռնամուխ եղե

1 Ապհմ. 35 և 36. Կապ. 9. Կոնդակ. Էբ. 96:  
Մ. Անդ. Սաբեւլիկոս Գիբտ 3. Եբ. 34. Իր.  
Ա. Էնէպ :

՚ի դլուխ տանել զամենայն զոր միանդամ խորհեալ և սկզբնաւորեալ էր նա :

Եհան և հզօր վՃիռս համաձայնութեամբ կարդինալաց , զի աղդակիցը հայրապետացն չուովայ մի բնաւ ճոխասցին ընչիւք եկեղեցւոյ , այլ այնպէս նպաստեսցին 'ի պապէն որպէս այլք 'ի կարօտելոց : Արգելընդ բանագրանոք և զընդվայր վէճում ոմանց , որք զծագումն կարդի կարմեղականաց հասուցանեինցմարդարէն Եղիսակամց Եղիսէ : Օրինագրեաց գեղեցիկ կարդս 'ի մէջ այլ և այլ պաշտօնէից պալատան , նախագահից , վերակացուաց , և 'ի մէջ երկոտասան գղերաց գանձատան : Գուն գործեաց բառնալ զհակառակութիւնն և զմարսս 'ի մէջ քրիստօնեայ թագաւորաց և ած զնոսս 'ի մի միաբանութիւն ընդդէմ այլազգեաց : Հրատարակեաց և զհանդէս յոբելինի առ խնդրելոյ 'իտեառնէ նպաստս զօրացուցիչս քրիստօնէից : Աւհմանեաց կարգս ժողովրդապետացն , զի 'իտօնի առ 'իպէտս ժողովրդեան պատարագեացնն : Եւ վասն պաշտօնէից խորհրդոյ տպաշխարութեան կարգ եդ արթուն և քաջ լինելոյ առ 'ի յուղղութիւն ածել զապաշխարող մոլորեալս . և հաստատեաց լու հրահանդս և զբարոյական մարզս վարուց : Առաքեաց ցոկանաւս յօդնութիւն վենետիկեան աերութեան շահատակելոյ ընդդէմ անհաւատից : Խեկ 'ի 1695 կառոյց մեծագործ աղքատանոց ընդ այլոց պիտանի պիտանի շինուածոց :

Ի նմին ամի ընկալեալ հաճութեամբ մեծաւ զթուղթ սիրոյ և հպատակութեան 'ի Կահապետէ կաթողիկոսէ՝ գրեաց անդրէն զպատասխանին քաղցր բանիւ , ապա յլեաց առնա ազնիւ ընծայս և աթոռ մի փառազարդ . առ որ դարձեալ ուղղեաց կաթողիկոսն թուղթ շնորհակալութեան և գաւաննութեան : Առաքեաց կրկին

կոնդակս շնորհաբաշխութեանց առ հայկազունի  
իշխաննելը ամսուս յԱլիկուռնա՝ բարձրա-  
ցուցեալ զնա՛ի կոմսութիւն։ Այնչափ էր նորա-  
գութ և խնամք առ աղքատս, զի թոյլ տուեալ  
էր ամենեցուն տղատօրէն մատչել առ նա։ Նայ-  
նախորհուրդ էր ՚ի գործս պիտանիս և քաջա-  
խոհ, օրինակ բարի ամենեցուն և մեծարու ա-  
ռաջի իշխանաւորաց և աւագաց։ Զայս օրինակ  
կառավարեալ նորա զեկեղեցին Քրիստոսի ամս  
ինն, ամիսս երկիւս և աւուրս հետեասան, մո-  
խեցաւ առ աէր ութսունեհինդ ամաց ՚ի հինգ  
կազանդացն հօկ։ 1700 <sup>1</sup>։

Դ. Ե. Պ. ԲՕԹՆԵԼՏԱՍՆԵՐՈՐԴԻ ԴԱՐԱՒՆ

### Ա. Տ.

- 1603. Արագիոն կաթողիկոս, որ և Գրիգոր Փառ-  
յաջորդէ զՄելքիսէթ։
- 1610. Յովհաննէս վերստին նստի պատրիարք ՚ի  
կոստանդինուսոլոլիս։
- 1611. Գրիգոր վերստին պատրիարք կանդնի։
- 1612. Միհայիլ տիրէ Մոսկովաց։
- 1613. Վարք սրբոյ Լուսաւորչին ածի յԱստա-  
հան։
- 1614. Հայք ՚ի Խրիմէ երթան ՚ի Լեհաստան։
- 1621. Յովհաննէս անդրէն նստի պատրիարք։
- 1623. Գրիգոր պատրիարք վերստին հաստատի։
- 1624. Սահակ Դ յաջորդէ զկաթողիկոսու-  
թիւն։

1 Ասհմ. 28, 35, 76, 175, 178. հապ. 9.  
Կանոնական կառավարութիւն 3 ՚ի Գրիգոր Ե ։ Պատրիարք Հայ. 410.  
Գիրք 6. վւ. իւ։ Առևտութեագ. 5. 2. հապ. 3. եր. 40.

1626. Զաքարիա նստի պատրիարք 'ի Կոստանց գինուազօլիս :
1629. Մովսէս Գ. կաթողիկոս կարդինալ :
1631. Յովհաննես գարձեալ լինի պատրիարք :
1633. Փիլիպպոս կաթողիկոս յաջորդէ զՄովսէս :
1636. Զաքարիա պատրիարք անդրէն նստի :
1639. Դաւիթ պատրիարք յաջորդէ զԶաքարիա :
1641. Կիրակոս նստի պատրիարք :
1642. Խաչատուր Ա. կարդինալ պատրիարք :
1643. Դաւիթ վերստին, ապա Թովմաս. դարձեալ Դաւիթ բազմի պատրիարք :
1645. Ալեքս սպայազատէ 'ի Ռուսսա :
1649. Տեղակալք աիրապետէնն . ապա Դաւիթ վերստին :
1651. Եղիազար նստի պատրիարք. ապա Յովհաննես Դ:
1655. Յակովը հաստատի կաթողիկոս :
1657. Թովմաս անդրէն նստի պատրիարք :
1659. Մարտիրոս Բ. և ապա Ղազար նստին պատրիարք :
1663. Յովհաննես Ե. և ապա Սարգիս Գ. կարդինալ պատրիարք :
1664. Եղիազար անթապցի ձեռնադրի առանձին կաթողիկոս և դնէ զաթոռն յԵրուսաղէմ :
1670. Ստեփանոս Բ. հաստատի պատրիարք :
1674. Յովհաննես Զ նստի պատրիարք :
1675. Անդրէաս ապա Կարապետ Բ. պատրիարք :
1676. Մխիթար արքայ ծնանի 'ի Սեբաստիա :
1678. Հայք բնակին 'ի Պաշպալով :
1679. Սարգիս Դ. , ապա Կարապետ վերստին կարդին պատրիարք :

1680. Եղիսազար գնայ յէջմիածին յաթոռ կա-  
թողիկոսութեան :
1681. Թորոս նստի պատրիարք . ապա Կարա-  
պետ վերստին :
1681. Պետրոս Աթագաւորէ 'ի վերայ Ռուսաց  
որպէս կայսր :
1684. Եփրեմ պատրիարք :
1687. Թորոս վերստին , ապա Խաչատուր պա-  
տրիարքունք :
1691. Կահապետ կաթողիկոս յաջորդէ :
1692. Մատթէոս պատրիարք :
1694. Եփրեմ վերստին կարդի պատրիարք :
1698. Մէլքիսէթ Ժ . ապա Մխիթար պատրի-  
արքունք :

Զայնու ժամանակաւ 'ի Կոստանդինուսօլիս  
թագաւորէր սուլդան Ահմէտ 'ի 1603 : Ապա  
Մուստաֆա Ա, և ապա Օսման Բ : Այլ 'ի 1621  
տիրէ վերստին Մուստաֆա , ապասուլդան Մու-  
րատ Դ , և ապա Խալրահիմ . յետոյ Մէհմէմետ  
Դ : Ի 1687 թագաւորէ սուլդան Սիւլէյման , ա-  
պա Ահմէտ Բ , և ապա Մուստաֆա Բ 'ի 1695 :

## ԱՌԹԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ ԴԱՐ

## ՄԽԵ

## ԿՂԵՄԻՍ ԺԱ

Ա. Տ. 1700, և կայսերութեան Լէոբուլսի Ա 49 :

1565. Ետք մահուան իննովկենտիոսի հաստատեցաւ քահանայապետ վիավիաքանօք ամենեցուն այրն առաքինի իմաստասէր կարգինայն Յովչաննէս Ֆրանչիսկոս յինն կաղանդացն դեկ. յամին 1700. որ 'ի հանդիսի թագադրութեան անուանեցաւ կղեմէս ժԱ: Սածնեալ յՈւրբին՝ ի վեհափառ զարմէ Ալպանի՝ գեր 'ի վերոյ հանդիսացաւ զամենեքումքը յիւրում ժամանակի. նախ կարգեցաւ դիւանադպիր կոնդակաց իննովկենտիոսի ժԱ, և ապա կարգինալ յԱզեքսանդրէ Ը: Իսկ յընտրութեան անդ 'ի ծայրագոյն իշխանութիւն ոգւով չափ ընդդէմեկաց՝ անարժան զանձն համարելով. այլ յետոյ աստուածային իմն ազդեցութեամբ բռնադատեցաւ 'ի չորից աստուածաբանից յանձն առնուլ զփոխանորդութիւն քրիստոսի:

Արդ իմաստուն առաջնորդութիւն և բարեհամբաւ ընթացքնորաայնպէս հիացուցաներզաշխարհ, մինչեւ նորիմբերդացի այլափառաց ոսկի և արծաթի դրամն հանել 'ի պատիւ անուաննորա: Այլ նորա յոշինչ գրեալ զգովեստ հասարակաց՝ ջան դնէր յառաջադէմսն նկրաել: Նմին իրի զառաջինն հաստատեաց անյեղի զվճիւ նախորդին իւրոյ՝ ոչինչ իւլիք ճոխացուցանել պապին զարենակիցս իւր. յաւել և զարգելս չպահանջել և չառ-

նուլ ինչ յումեքէ 'ի պարգևի մասին որպէս սովորութիւն էր վաղեմի: Ճանահնար եղեւ բառնալ զմարտս և զհակառակութիւնս 'ի միջոյքրիստոնեայ պայազատաց և հաստատել վիսաղաղութիւն: Օգնական եղեւ բազում ընչիւք ոչ միայն Յակովոսի Բ արքային Անդղիոյ, այլ և որդւոյ նորին Յակովոսի Գ: Յուցակս իմն յօրինեաց աստղաբաշխական՝ չափեալ զժամանակն ըստ ընթացից արեգակական հանդերձ միջօրէական գծիւառ: 'ի քաջ բացատրել զհաշիւ գրիկորեան տոմարի և զհասարակածն ըստ կանոնադրութեան Նիկիոյ ժողովոյն սակս կարգի զատկին: Սահմանեաց զի յամենայն տեղիս և յամենայն հաւատացելոց անխափան պաշտեսցի տօն սրբոյ յղութեան Աստուածածնին: որպէս և տօն սրբոյն Յովուէփայ Աստուածահօրն: Դասեաց ընդ սուրբս զՊիոս Ե, զԱնդրէաս Ավելլին, զՓելիքս 'ի կանդաղիկիոյ և զկատարինե բոնսնիացի: Խշանին Սաբաւդիոյ Եւգինէոսի յղեաց սուսեր և խոյր: Արար մեծագործութիւնս հոյակասլ շինուածոց սրբազան և արտաքին տեղեաց, և գեղեցիկ նորոգեաց զհիւրանոցն Հայոց (1549): Առատածեռն գտաւ 'ի նպաստաւորել անանկաց և բաշխել կարօտելոց գումարս ոսկւոյ:

Հաստահիմն արար զեկեղեցական վարդապետութիւնն, և զլոյս սրբոյ աւետարանին տարածեաց 'ի ձեռն մեծարու քարոզչաց 'ի Սինէացիս և 'ի Հնդիկս, 'ի Պարոս, յԵթովլիխ, յԵգիպտոս և յաշխարհս հիւսիսոյ. յորոց յոլովք գարձան 'ի խաւարէ կռապաշտութեան և սնապաշտութեան 'ի լոյս Շմարտութեան: Խնամուտ եղեւ հայրաբար և շահեցաւ զԱնտոնիոս Ուղտիկոս դուքս Բրունավիգայ և զՓեգերիկոս Օգոստոս կայսրընտիր Սաքսոնիոյ. որոց մերժեալ զաղանդն Լուտերի խոնարհեցան յուղղափառ հաւատաւ:

Զպատաս խանի թղթոյ Նահապետի կտթողիկուսին, որ տռ. Իննովկենախոս ԺԲ, հատոյց ընտառներար յորդորելով զնա հաստատուն կալ՚ի սէր միաբանական : Յետոյ ՚ի 1709 ընկալեալ զգիր սիրոյ և հպատակութեան յՆզեքսանդրէ կաթողիկոսէ՝ գրեաց զպատասխանին ՚ի յաջորդ ամինովին հայրախնամ սիրով : Գեղեցիկ յարմարեաց ՚ի զարդ Վատիկանեան տաճարի զարձանադիր Քրիստինեայ թագուհւոյ Շուետաց, որ արձանագրեալ էր ՚ինմին զմերժել իւր զազանդ հայրենեացն վասն ժառանգելոյ զթագն Էրկնային (1559): Կարճեաց զծանը ծանը վէճու արարողութեանց ինչ Սինէացւոց, և զաւելորդապաշտ սովորութիւնս պատուելոյ զնախահաւս իւրեանց : Զառաջնորդութիւն լենայիբարձրացոյց յարքեպիսկոպոսութիւն՝ գեղեցիկ իմն հաստատեալ զեկեղեցիս և զգզերս Գերմանիոյ: Դատապարտեաց զմոլար բանս հարիւր և մի թուով ՚ի բարոյական խորհրդածութենէ գրոց հօրն կուեանե զոսի ՚ի վերայ նոր կտակարանաց (878): Զօրացոյց և զվճիռս Իննովկենտիոսի ԺԱստկո նուիրելոց, որք միանգամ մուտ առնեն ՚ի կրօնաւորական կարգս և յեկեղեցական վիճակս առաջնորդելոյ հոգւոց՝ վասն առանձնահալոյ առուրսասն (1562). Քանզի ասէր՝ թէ այսու առանձնութեամբ ազատացեալ մարդոյ յերկրաքարշյօժարութեանց վերանայ մոօք առ Աստուած, և վառի սրտիւ ՚ի սէր անմահիցն :

Ի քաղաքին Զիվիթաքասթիլանա կանգնեաց կամուրջ բարձր յոյժ ՚ի վերայ անդնդախոր ձորոյ միացուցեալ զքաղաքն ընդ մեծի ժայռին: Կանգնեաց և վարժատունս սակս ու զղելոյ զվարս պատանեկաց. զի մի գատարկաշը ջիկ եղեալ թափառեսցին ՚ի հրապարակս ՚ի գայթակիլութիւն եկաց ուխտաւորաց: Խակ առ ՚ի ցանկալի ընծայ-

ել զլեզու յոյն և լատին՝ ներբողս իմն՝ ի ըսկը ժողովրդեանն խօսեցաւ հետեւողութեամբ նախնի քահանայապետաց, վայելուչ ցուցեալ՝ ի նմին զպերձախօսութիւն մեծին լեւոնի պաշտպանին իւրոյ : Այսպէս ընդ փութոյ պայծառութեան քրիստոսական կրօնից պայծառացոյց և զուսմունս կարեորս ։ Ճոխացոյց զմատենագարան Վատիկանու յոլով գրչագիրօրինակօք օտարելեզուաց մեծարեաց զուսումնասէրս և զուսուցիչս առատ պարզեօք : Հայրենիս իւր յ՛նորբին քաղաք զհրապարակական մատենագարան ի մենաստանին Գրանչեսկեան կրօնաւորաց :

Յաւուրս ժամանակաց այսոցիկ փայլեցաւ առաքինակրօն վարուք մեծն Մխիթար հիմնադիր կրօնիս մերոյ . զորոյ զկարեոր խնդիրս կրօնաւորական կարգացն լուեալ մեծի հայրապետին Կղեմայ յերկուց աշակերտաց նորա առաքելոց՝ ի Մեթոնայի հռովմյամի 1705, ուրախացաւ յոյժ, և խնամ տարեալ մանր քննութետմբ յամին 1712 հաստատեաց զմիաբանութիւնո մեր, պատուեալ և զառաջնորդ ուխտիս աբբայական անուամբ : Յետ այնորիկ ի 1718 ՚ի գնալ առնա Մխիթարայ աբբայի ի Վենետիկոյ՝ ոչ միայն գթասիրաբար հիւրնկալետաց զնահայրապետն, այլ և կատարեաց զամենայն հայցուածսնորա, և ունայնացուցեալ զանհիմն տիբաստանութիւնսոմանց, յաղթանակաւ ուղևորեաց զնա ՚ի Վենետիկոյ ի վանսն, ճոխացուցեալ զնա և հոգեորական պարգևեօք :

Զարմանալի էր կրօնասիրութիւն մեծի պատպին՝ ի վայելցացուցանել զարարողութիւնս և զթափօրս եկեղեցականս . զորս փաւաւորէր անձին ներկայութեամբ, և ոչ բնաւ պակասէր անտի, բայց եթէ ՚ի ծանր հիւանդութենէ իրիք արգե-

լեալ : Անպակաս շրջէր յանկելանոցս՝ ի սփոփու  
թիւն հիւանդաց՝ թէպէտ և ինքն չէր ազատ  
՚ի ցաւոց որով իւիք ոք կարօտէր, անթերի լնոյր  
զկարօտութիւննորա . և կարեկից լեալ ամենայն  
կարօտելոց՝ ստէպ երկրորդէր զայս բան . գիան  
ամենեքեան լինել առաջնորդ . այլ չէ ամենե-  
ցուն անթերի կատարել զայն պաշտօն :

Այսպէս յետանիթերի՝ ի գլուխ տանելոյ զկրկին  
իշխանութիւնն հաւատացեալ նմա՝ փափաքեաց  
այնուհետեւ վերին քահանայապետութեան այրն  
Աստուծոյ կղեմիս . կատարեաց՝ ի տաճարին Վա-  
տիկանու եւանդեամբ մեծաւ զխորհուրդ խոս-  
տովանութեան և ասկաշխարութեան՝ թողեալ՝ ի  
սրաէ զյանցանս յանցուցելոցն՝ ի նա . և կնքեալ  
զկեանսն հանգեաւ՝ ի Քրիստոս ամացեօթանա-  
սունեւերկուց՝ ի չորեքտասան կաղանդացն ապրիլի  
յամին 1721 . և եկացնա հայրապետ ամս քսան ,  
ամիսս երիս և աւուրս քսանեւհինդ : Գտանին սորա  
երեւելի ճառք և պիտանի դրութիւնիք <sup>1</sup> :

## ՄԽԶ

### ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ԺԳ.

Ա . Տ . 1721 , և կայսերական կարուլուն Զ 10:

1566 . Զկնի ինն աւուրց մահուան կղեմայ  
ոկեզբն եղեւ ընտրութեան նորոյ քահանայապե-

1 Լամբէր . յղ . ծառ . այ . գիր+3 . գլ . լա . 8 . և  
գիր+4 . 5 . 2 . գլ . ի . 5 : Սահմ . 120 , 187 , 217 .  
հապ . 10 . կոնդ : կոյն հապ . 11 . սահմ . 214 . 275 :  
Վար+սորա , գիր+6 : թառ-զլ 6 . լըշտէր . ՚ի շար . կոնդ .  
5 . 2 : Պապմ . զայ . հապ . 3 . եր . 727 և 749 : Վար+  
Մինիւտայ սբբոյի գլ . ձէ , ձլ , և իք :

աի . և ահա միաձայնութեամբ առագացն կար-  
դեցաւ յաջորդ նորա Միքայէլ Անկելս կար-  
դինալ կոմմեանց յութ իդոսացն մայիսի յամին  
1721 : Սա ծնեալ 'ի Հոռվմ' 'ի 15 մայ . 1655 ,  
'ի կարուլուէ դքսէ 'ի պայծառ և 'ի վաղեմիզարմէ  
կոմմիցն Հռովմայ՝ եզե ութերորդ պատ 'ի նոյն  
զարմէ : Անցեալ նորա նախ ընդ զանազան ե-  
կեղեցական պաշտօնս կտրդեցաւ ապա նուիրակ  
'ի Զմբցերի և 'ի Լիսբոնա , և ասկա կարդինալ  
Եպիսկոպոս 'ի Վիտերբիոն . և 'ի հանդիսի թա-  
գագրութեան անուանեցաւ իննովկենտիոս ԺԳ:  
Սա այր բարեբարոյ և հեղահոդի՝ զառտնին և  
զարտաքին դործո վայելքապէս կարգագրեալ  
հաստատեաց զահմանադրութիւնս եկեղեցւոյ  
յամբութիւն սուրբ հաւտատոյ : Առատաձեռն  
գտաւ տու ամենեսին , մանաւանդ յորոց երախ-  
տաւորեալ էր : Ուղղեաց զանուղղայս և զյան-  
ցաւորս , և շահեցաւ զամենեսեան քաղցրու-  
թեամբ . այնպէս զեղութեամբն չպակասեցաւ  
յարդարութենէ , և ոչ դարձեալ արդարու-  
թեամբն 'ի հեղութենէ : Քաջութեամբ խելա-  
մտեցոյց զկայսրն կարուսո , և զԱնկիլիացիս հան-  
դարտեցոյց 'ի տարագէպ պահանջմանց տու ա-  
դարտեցոյց զեկեղեցական իրաւունս : Օրի-  
նադրեաց պաշտել յերանելիս զԱնդրէասկոմ  
սեանց զեղօրորդի Ազեքսանդրի Դ'ի կարդէ Մի-  
նորից . և սահմանեաց տօն անուան Յիսուսի  
յերկրորդ կիւրակէի զկնի յայտնութեան : Եւ  
յետ կալց 'ի հայրապետութեան ամս երկուս ,  
ամիսս ինն և աւուրս քսանեինն , փոխեցաւ տո-  
տէր ամաց լաթսունեինունց 'ի նոնայս մարտի  
յամին 1724 :

1 Առեման . 26 . Համար . 11 . Քանդ . Եւ . 442 : Լամ-  
բէր . յշ . ծուռա . Ասպառածոյ գիր + 1 . գւ . լամ 16 :

## ՄԽԵ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԳ

Ա. Տ. 1724, և ի այս էրութեան կարութեան Զ 15:

1567. ԲԵՆԵԴԻԿՏՈՍ յառաջագոյն ձայնեալ  
վինչենցիոս Ուրսինոս կարդինալ ընտրեցաւ  
քահանայապետ յաթոռ սրբոյն Պետրոսի 'ի  
չորս կաղանդացն յունիօի յամին 1724: Այս  
գերահոչակ անձն աստուածարեալ ծնաւ 'ի 2  
փետ. 1649 'ի Փերամինանտոսէ Ուրսինեան, և  
մարզեալ 'ի վանս Դոմինիկեանց 'ի Վենետիկ ըն-  
կալաւ զսքեմ կրօնին 'ի 12 օգոս. 1667: Այլ  
վասն գովելի հանճարոյն և բարեկիրթ վարուցն  
փութով բարձրացաւ յաւագութիւն 'ի 1672:  
ապա եղեւ արքեպիսկոպոս Մանվիրետոնիոյ. ապա  
գեսանայ. և ապա 'ի 1687 եկաց առաջնորդ  
ԲԵՆԵՎԼԵՆՏԻ: Առ. մեծի խոնարհութեան իւրոյ  
և հեղութեան և ողորմածութեան յամենայն  
վայրո վարելի ընծայեալ զանձն՝ քաջ հովիտ  
հանդիսացաւ յեկեղեցւով 'ի ջատագովել զՃը-  
մարտութիւն և 'ի լաւ անդր փոխարերել զժողո-  
վուրդն իմաստուն առաջնորդութեամբ: Եւ  
անցեալ նորա'ի պատիւ քահանայապետութեան  
ոչ վերջացաւ 'ի սովորական մահացուցմանց  
մարմնոյն 'ի ծումապահութեանց և 'ի ժուժկա-  
լութեանց: Բայց 'ի վերքան զամենայն վառեալ  
առաքելական նախանձու պաշտպան եկաց սուրբ  
հաւատոյ և նորոգութեան կարգաց 'ի շինու-  
թիւն և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ: Յա-  
ռաջ քան զամենայն արգել աշխարհիկ արանց  
զգենու զարգնահաւորս և կրել 'ի պարանոցի զփազ-

պատ կղերիկոսաց ըստ սովորութեան ժամանակին. արգել և կղերաց զզարդս վարսից :

Ի 1725 ժողով գումարեալ՝ Լատերան՝ յետ բաղում բարեկարգութեանց հաստատեաց ըզկոնդակն , որ սկսանի Միածին . և ընդունելի արար զայն՝ ի գաղղիա : Հաւանեցաւ ընդ վարդապետութիւն թովմայականաց՝ որ յաղագս շնորհաց և նախառահմանութեան : Ի նմին ամի հրատարակեաց զհանդէս յոբելինի , և 'ի նմին տաճարի Լատերանու մատակարարեաց զիսորհուրդակալարուղահօր : Պատուեր հրամանի եհան ամենայն եպիսկոպոսաց Խաւալիոյ առ 'ի կառուցանել զուսումնարանս՝ ի մարդել զկղերիկոսացու մանկունս 'ի կարեոր ուսմունս և 'ի հմտութիւնս . յորոյ 'ի պէտս կարդեաց և կաճառ ուսումնտկանաց յառաջացուցանել զայն ձեռնոտուութեամբ առաջնորդաց : Խելամուտ արար զկայարն գարձուցանել առ ինքն զկոմակդոն , զոր յամի 1708 կալեալ ուներ :

Զեկեղեցին Լուգայի բարձրացոյց յարքետիսկոպոսութիւն՝ շնորհեալ նմա ազատութիւն և մասնաւոր կանոնական իրաւունս : Խոկ զեկեղեցին ԲԵՆԵՎԵՆՏՈՍ զվիճակ իւր պահեաց ընդառաջնորդութեամբ իւրով կառավարեալ 'ի ձեռն փոխանորդի , և գնայր անդ յայցելութիւն 'ի գարնանային եղանակի յառաջընթաց ունելով թափօր մեծ սրբոյ հազորդութեան լնկերակցութեամբ պաշտօնաւոր առագաց : Ի 1727 չոքաւ 'ի Վիտերբիոն առ 'ի ձեռնադրել յեպիսկոսոս զֆեդերիկոս կայսրընտիր կողոնացի : Խոկ զԳրիգոր կարդինալ Բարբադիկոս զայր մեծանուն սրբութեամբ՝ հանդիսաւոր արարողութեամբ անուանեաց Յարդելի՝ պատուեր տըւեալ հանել 'ի դերեզմանէ զպատուական մար-

մին նորա և գնել արտաքոյ՝ ի պատշաճաւոր տեղով՝ ի յարդութիւն ժողովրդեան : Զայլովս դասեաց ընդ սուրբս սակս մեծամեծ սքանչելքաց, որպէս և զՅովհաննէս՝ Սէբոմուշենոսկանոնիկոս բրակացի, սորա լեզու ըստնմանութեան լեզուի սրբոյն Անտոնի պատաւիոնացւոյ ոչ միայն ամբովզ կայր, այլ և թարմ որպէս կենդանւոյ յերեքհարիւր ութսուներկու ամաց հետէ զկնի մահուանն :

Բենեգիկոս մեծապէս պատուասիրեաց ըզդիտնականս՝ ի մատենագրաց ժամանակին, և հրամանաւ նորա մեծ բանաստեղծն իւռանարդինոս ասպետ պատկեցաւ՝ ի կապիտոլիոնի բանաստեղծական դաբնաւ : Եւ խնամկալաւ դարձետու միայն՝ ի բարեկարգել զիրս եկեղեցւոյ, այլ և նորոգել զեկեղեցիս ամբացուցանել զտաճարն Լատերանու ամենայն վայելցութեամբ : Անկելանոցս և աղքատանոցս հաստատեաց, դութ արկեալ՝ ի վերայ հիւանդաց, բորոտից և որբունոտաց : Ընկալաւ զթուղթ սիրոյ և հպատակութեան՝ ի կարապետէ կաթողիկոսէ Հայոց, ուրախ եղելոյժ և գովեաց զնտ սակս ունելոյ զփափաք բարի առ՝ ի բառնալ՝ ի միջոյ դերկ պառակութիւն աղդին : Զարմանալի եր նորա առաքինի չափաւորութիւն, մինչ զի յամենայն գնացս իւր՝ ի ծայրադոյն իշխանութեան անդփայլէր՝ ի վերայնորայաւետ կրօնաւորութիւն, քան թէ արքայակերպ մեծութիւն զոր ուներ այնպէս վարէր զտաշտօն իւր, զի երևէր յաչս աշխարհի ոչ իբրև քահանայապետ : այլ որպէս աղքատ միանձն :

Այսու անարատ քաղաքավարութեամբ եկաց՝ ի որաշտաման իւրում ամս հինգ, ամիսս ութ և աւուրս քսանեւերիս և՝ ի հասակի ութսունեմի ամաց և քսանեմի աւուրց լի արդեամբ փո-

իւղաւ առ տէր յինն կաղանդաց մարտի յամին  
1730, թողեալ 'ի գահարանի եկեղեցւոյ ըդ-  
գրաւոր արդիւնս, յորս փայլեն նորա անընկնե-  
լի հոգք և աշխատանք 'ի սէր եկեղեցւոյ և 'ի  
նախանձ փուացն Աստուծոյ մինչև ցյեալին  
ծանր հասակ ծերութեան :

## ՄԽԸ

## ԿՂԵՄԿՍ ԺԲ

Ա. Տ. 1730, և կայսերութեան Կաբուլով Զ. 19,

1568, Յետ մահուան մեծին թենեգիկոսի  
ժԴ ժողովեալ կարդինալացն ընտրեցին զկնի  
հինգ ամսոց յաթու քահանայապետութեան  
հոգմայ զԼաւրենտիոս կարդինալ եօթանա-  
սունեինն ամաց 'ի չորս իդոսացն յուլիսի յամին  
1730: Սա ծնեալ 'ի Փլորենտիա 'ի մեծանուն  
և 'ի հին զարմէ Կորաբինի յեօթն ապրիլի 1655  
յառաջադէմ գտաւ 'ի լաւ անդր և ընտիր յե-  
կեղեցական պաշտամոն, մինչև 'ի Կղեմայ ժԱ-  
հաստատեցաւ կարդինալ. յորոյ յիշատակ բա-  
րերարութեան կոչեցաւ Կղեմէս ԺԲ. և Հգնե-  
ցաւ վասն պայծառութեան սրբոյ եկեղեցւոյ  
գեղեցիկ բարեկարգութեամբ. ջան եղ և սակա  
շինութեան քաղաքին յօգուտ հասարակաց  
բարձրացուցեալ զհոյակապ շինուածս, և զար-

1 Սահմ. 67. հապ 11. և 233 հապ. 12. իոնդ:  
լամբէր. առհ. 59. և յշ. ծառ. Ասպուծոյ. ևս և  
ծաղ. թէ հական գիր 5. գլ. ծառ. սահմ. 59: Այն-  
ունցիս իտրդ. հապ. 5. էլ. 42: Պապմ. Հայ. հապ.  
3. գիր դ. գլ. ծառ. ծ:

մանալի նորոգութիւնս արարեալ՝ ի բազում տես զիս :

Գերապանծ վայելքացոյց զնակաա շատերանեան տաճարի, և 'ի ներքս կառոյց ղմեծագործ և զքնաղ մատուռն սրբոյն Անդրէի Կորսինի, յորում և վասն անձինն ոլատրաստեաց շիրիմ 'ի սորպիւրեան կռոյ : Իսկ տաճար Յովհաննու Մկրտչի ի Փլորենտիա գեղեցիկ զարդարեաց նոյնալէս 'ի հիմանց վերականգնեաց զեկեղեցի Յիսուսի և սրբոյն կելսոսի և Յուլիանոսի : Յատակեաց զնանապարհու քաղաքին Հռովմայ քառակուսի քարամբը • յարդարեաց և զայլուղիս կառոյց ղխորհրդարան և զպալատ կառավարութեան ընդ այլ կարեռը շնորհածոց : Ազբիւրս հաստատեաց բարեջուրս՝ առատացուցեալ զառողարարջուրն կոչեցեալ վաճինէ և վտակսիազացոյց ընդ պարտեզս և ընդ քաղաքս ոսուդանելով յոլով վայրս, և 'ի վերայ գետոյն կառոյց կամուրջ մեծագործ : Որովհե երաց ճանապարհ գնալ 'ի Հռովմայ մինչեւ ցծով ընդ մղոնս եօթն, և ընդ քայլս երկերիւր քտասասունեեօթն 'ի գիւրութիւն վաճառաց : Սոյնպէս ամրացոյց և զնաւահանդիսա Անքոնայ . հաստատեաց և հիւանդանոց և անկելանոց : Ծանրագին արտվք դնեալ բազմացոյց 'ի կապիսաոլիոնի զվարեմի և զարտեսատագործ արձանս յուսումն արձանագործաց և նկարչաց, ևս և 'ի հմտութիւն հնասոիրաց : Բարձեալ 'ի գաւթէ և ատերանու զարձան և զպատկեր եղ զվարենջականն մեծին կոստանդիանոսի կանգնողի տաճարին, որ մինչեւ յայժմ կոստանդեան ասի : Ճոխացոյց զմատենադարձն վասիկանու յոլով լագոյն մատենիւք . հաստատեաց զուսումնարան 'ի կաղաքիս սակս իսարացի Յունաց առ 'ի լուսաւորելոյ զՅունաստան :

Օրինադրեաց զի ըստ սահմանադրութեան

որբոյն Պիոսի Ե դարձուացեն յառաքելուկան  
գահն զգքսութիւն Բարմայի և Բւշենցայի. զի  
դուքսն Անտոնիոս անժառանգ մեռեալ, և դըք-  
սուհին Հենրիկեդա յղե՛ եթէ չծնանելը արու-  
ղաւակ, այն դքսութիւն վերաբերելը առ դահն:  
Ի 1755 կարդինալ կարդեաց զԼուգովիկոս Ան-  
տոնիոս որդի Փիլիպպոսի Ե արքայի Սպանիոյ:  
Խոկ' ի 1756 գասեաց ընդ սուրբս զԱ ինչենցիս  
Պօղոսեան, զՅովհաննես Ֆրանչիսկոս, զՅուլի-  
անէ Փաղկոններեանց, և զԿատարինէ Փղեաքա:  
Եւ 'ի 1758 զՄարիամ Ամալիա դուստր կայսր  
ընտրին Սաքսոնիոյ կամ արքային Պողոնիայ  
պսակեաց ընդ կարուլոսի արքային Սիկիլիոյ և զբօր  
վերոյառացեալ կարդինալին Լուգովիկոսի Ան-  
տոնիոսի:

Այլ մինչ գեռ զայս օրինակ առաքինանայր  
մեծահամբաւ քահանայապետն Կղեմես, առա-  
տաձեռն'ի մեծագործութիւնս և 'ի կարօտեալս,  
դթած յաղաճաւորս, և անաչառ'ի յանցաւորս,  
Եհաս նմա վախճան կենաց յութ իդասացն  
փետ. յամին 1740, կացեալ յիշխանութեանն  
ամո ինն, ամիսս վեց և աւուրս քսանեհինդ:  
Որ և 'ի փառաւոր հանդիսի թաղման 'ի տաճա-  
րի սրբոյն Պետրոսի դրուատեցաւ դամբանա-  
կան ճառիւ<sup>1</sup>:

1 Ալարք նորին, Եր. 541: Առաջեւական թուղթ:  
Սահմ. Կոնդակագիր+ հագ. 13. Եր. 187: Լահեւ.  
հահմ. 61. Եր. 304:

## ՄԽԹ

## ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԴ

Ա. Տ. 1740, և կայութեան-թեան Կարուլովի Զ. 28:

1569. Որ ցայս վայր ՚ի կարգ արկեալ զալատ-  
մութիւն վարուց և զառաքինութեանց քահա-  
նայապետացն Հռովմայ մատենադրեր պերճա-  
խօսութեամբ գերահոչակ մեծիմաստ կարդի-  
նալն Ամբերտինոս, նա ինքն աւանիկ անցեալ՝ ի  
կարդիս գերապանծ հանդիսանայ ՚ի շարս հայ-  
րապետացն: Որոյ ծնեալ ՚ի բոնոնիս յաւագ-  
զարմէ լամբերդինեանց քաջավարժ գաաւ յամե-  
նայն կարեւոր մակացութիւնս և խոհական յա-  
մենայն գործո իւր, և նախանձ պայծառութեան  
հաւատոյ ՚ի նմա: Ամբարձեալ՝ ի պաշտօն եկե-  
ղեցական կառավարութեան յամենայնի պահ-  
ծալի ցուցաւ: Վասն որոյ եղեւ ատենադպիր սըր-  
բազան ժողովոյն, և ապա եպիսկոպոս Անքո-  
նայ: յետոյ ՚ի բենեդիկտոսէ ԺԴ կարդեցաւ  
կարդինալ ապա ՚ի կղեմայ ԺԲ արքեպիսկոպոս  
բոնոնիայ: Հուսկ յետոյ յետ հասուն քննու-  
թեան ՚ի փակարանի ամիսս վեց՝ ընտրեցաւ ՚ի  
հասակի վաթմունեհինդ ամաց արժանաժա-  
ռանդ յաջորդ սրբոյն Պետրոսի ՚ի վեշտասան  
կաղանդացն սեպ: յամին 1740. իսկ յերկոտա-  
սան կաղանդաց նոյն ամսոյ ՚ի կիւրակէի սրտ-  
կեալ պատ անուանեցաւ բենեդիկտոս ԺԴ:

Արդ յամենայնի գեր ՚ի վերոյ հանդիսացաւ  
հայրապետա այս քան զբաղումս ամենայն բարե-  
կարգութեամբն իւրովք նորոգեաց զսրահ 1. Ե-  
րերիանեան մեծի ասճարին սիւնազարդ յօրի-  
նուածովք հանդերձ պալպաջուն քարամիք գե-

ղաղարդեաց զքակատ նորա երևելի արձանօք և  
դրուագօք . և յաւել 'ի վերայ այնորիկ զայլ  
սրահ , յորմէ 'ի տօնի վերափոխման Տիրամօրն  
հանդիսապէս շնորհէ հայրապէտն ժողովրդեան  
զառաբելական օրհնութիւն : Զներքին մասն  
մեծի տաճարին նորոգեալ հոյակապ զարդարեաց  
զամենայն խաթարեալ տեղիս Լատերանու , և  
զսրբազան պատկերսն և զվերնատունն չընա-  
զակերպ յօրինեաց : Զտաճարն անուանեալ 'ի  
ռամկաց Սուրբ խաչ յԵրուսաղէմ՝ հանդերձ  
յարկօք և սրահիւն դեղեցիկ նորոգեաց . յորոյ  
անուն ինքն կարդինալ կարգեալ էր : Ընդարձա-  
կեաց զանկելանոցս ընդ անուամբ հոգւոյն սրբոյ  
'ի Սաքսիա 'ի գիւրութիւն տնանկաց : Զետե-  
ղեաց պատուանդան առ 'ի կանգնել զսիւն Ան-  
տոնինոսի Պիտի , որպէս և զկոթող արևու 'որ 'ի  
Մարտեան հրապարակի . կառոյց զմատուռն մեծ  
նորոյ եկեղեցւոյ սրբոյն Աստվինարի հանդերձ  
մարմարինեայ սեամբք և ոսկեզօծ գրտւագօք :  
Ըստ նմանութեան նախորդին իւրոյ կղեմայ ԺԲ  
մոյթ կալաւ դեղազարդել զկապիտոլիսն հին  
անգրեօք , նշանօք , և արձանագրութեամբ , որ-  
պէս և զմատենադարանն Վատիկանու երևելի  
մատենիւք : Կարողոս Բորբոնեան արքայ կրկին  
Սիկիլոյ եկաւորեալ 'ի Հռովմ 'ի համբոյր ոտից  
սրբազանին՝ պատուասիրեցաւ յոյժ 'ի նմանէ :

Օրէնս վայելուց եդ հայրապէտն ժողովոյ  
աւագացն , և զամենայն ատեանս յուղղութիւն  
վերածեաց : Բազմացոյց և զվաճառականու-  
թիւն քաղաքացն հաստատեաց նոր կարդ բոկ-  
ուսն կրօնաւորաց՝ քարոզել զնաչելեալն Քրիս-  
տոս և վարուց նորին լինել նմանող : Խստիւ նա-  
խանձաւոր լեալ օրինաց՝ արգել կղերիկոսաց մի  
թարթափիել 'ի վաճառս և ոչ խակ ընդ անուամբ  
աշխարհականաց : Սահմանեաց՝ զի եթէ հարկ

լիցի տնօրինելուծմամբ՝ ի քառասնորդս և յայլ պահս առ տկարութեան՝ զմի տեսակ կերակրոյ և թէ կերիցեն : Մեծարեաց զարդիւնաւորս՝ ի կրօնաւորաց, մանաւանդ զբազմարդիւն Յիսուսնանս, ևս և զթէատինս և զբափուչինս : Ծնորհեաց ազատութիւն բազում մայր եկեղեցւոյն Պատաւիսնի . նոյնպէս և մետրապոլտական եկեղեցւոյն Մալդայի . յղեաց և առ կարգապետնոցա սուսեր և խոյր ՚ի պատիւ յաղթանակութեանցն ՚ի պաշտպանութիւնն հաւատոյ : Ծնորհեաց զիշխանութիւնս քահանայից Սպանիոյ և Լուսիտանիոյ երիցս պատարագելյաւուր յիշատակի համօրէն ննջեցելոց : Վերագրեաց յերանելիս զԱղեքսանդր Սողոսեան , զՀերոնիմոս Եմիլիանոս սեպուհ Վենետիոյ հիմնադիր կարդին Սոմասկեանց , զՅովսէփ հիմնադիր միաբանութեանքարեպաշտից , և զայլս յոլովս որպ փայլցան սքանչելի առաքինութեամբ . որպէս և զբազումն գասեաց ընդ սուրբս առ յաճախելոց հրաշեց : Իսկ զերևելիսն իմաստութեամբ և անարատութեամբ կարգեաց կարդինալս թուով երեսունեեօթն . յորս երեւելի էր Յովհաննէս թէոդորոս եղբայր կարողոսի է կայսեր :

Բենեդիկտոս և ՚ի գրաւոր վաստակս մեծանունն հանդիսացաւ . քառեակ գիրս գրեաց ստուարահատորս Յաղագս ծառայից Աստուծոյ երանութեան և դասակարգութեան ընդ սուրբս , բացատրելով զվՃիռս զարմանալի հմտութեամբ և քննութեամբ . թող զայլ և այլ խընդիրս աստուածաբանական , փիլիսոփայտական բժշկական և իրաւաբանական տեղեկութեանց . նոյնօրինակ հմտութեամբ գրեաց և զտէրունական տօնից Յիսուսի և մօր նորա , նա և յաղագս պատարագի և սրբոց պաշտելոց ՚ի Բոնոնիա : Եհանեկեղեցական սահմանս սակս բարեկարգու-

թեան, և յաւել՝ ի կոնդակագիրս և 'ի կանոնագիրս նախնի քահանայապետաց զկոնդակս և զվճիռս յետնոց, և զամենայն 'ի գեղեցիկ կարգ վերածեալ հոդացաւ 'ի ըստընծայել: Գրեաց և զվկայաբանութիւն չուովմայ. զոր և յանձնարար Յովհաննու Ե արքային Լուսիանիոյ հոգալ զծախս տպագրութեանն, որում առ մեծամեծ արդեանց շնորհեաց տիտղոս Ամենահաւատարիմ: Օրինագրեաց եպիսկոպոսաց սուրբ մեռնաւ օծանել զեկեղեցիս:

Հրաման արար զի յամենայն ամիսս 'ի պայմանեալ աւուրս ինչ ժողովեալ առ ինքն գիտնականաց ճառ արկեալ խօսեսցին 'ի վերայ հնութեանց չուովմայ, և զեկեղեցական պատմութեանց, զժողովոց և զարարողութեանց պատարագի: Հաստատեաց զուսումնարանս և գպրոյս, և դեղազարդեաց հանդիսարանս կամ սրահս նկարուց և երեելի արձանաց 'ի հմտութիւն ուսումնականաց: Զտաճար սրբոյն Պօղոսի նորոգեաց՝ զարդարեալ գեղեցիկ նկարուք. և զպատկերս քահանայապետաց 'ի շարի եղ միւսիոն նկարուք: Խոկ զվաղնջական տաճար սրբոյն Մարկեղինոսի և Գետրոսի 'ի հիմանց նորոգեաց: Սըրբեաց յեկեղեցի 'ի պատիւ բիւրուց վկայից զԱմփիլթէարոնն շինեալ 'ի Վեսպասիանոսէ բոլորաձև քառայարկ. ուր բիւրաւորք 'ի քրիստոնէից դազանակուր եղեն 'ի հնումն վասն հաւատոյ: Կորոգեաց զնաւահանգիստն Աբինիքազբին: Ընդարձակեալ զորահաւատութանին 'ի Լաւրետոն՝ կանգեաց առ նմին ըղբուրգին:

Եբարձ զպատրիարքութիւնն Ագութիայ, զմայր եկեղեցին արկեալ ընդ իրաւամբք առ աքելական գահին, և փոխան այնը հաստատեաց զարքեպիսկոպոսութիւնս Ռւտինեան և Կորիանան,

բաժանեալ նոցին պատրիարքական վիճակո և  
հաս : Ընորհեաց վենետիկեան ծերակուտին  
զիրաւունս անուանելոյ զերիս եպիսկոպոսունս  
Տորկեղեան , կղտանեան և կառարուցեան աջա-  
կիցս պատրիարքին Վենետիկոյ : Սահմանեաց  
նոր եպիսկոպոսութիւնս յԱմերիկա զՓուղ-  
գեան 'ի Գերմանիա , զՊենարողեան և զՏեր-  
լիտեան յԻտալիա : Եպիսկոպոսին Վարժիոյ  
շնորհեաց զՊալիում իշխանութեան՝ խաչա-  
նելով առաջի ըստ նմանութեան արքեպիսկո-  
պոսի : Կանոնաւորեաց զարարողութիւնս օրհ-  
նելոյ զՊալիումն 'ի նախատօնակի սրբոց առա-  
քելոցն Պետրոսի և Պողոսի . և որոշեաց 'ի սկա-  
պական մատրան տօնել զհանդէս անտրատ յը-  
ղութեան Աստուածածնին : Առաքեաց առ կա-  
թողիկոսն Հայոց Սաայ զՊալիում իշխանու-  
թեան : Ընկալեալ զնամակ 'ի մեծէն Միսիթա-  
րայ արքայէ և զօրինակ մի աստուածաշնչին  
տպագրելոյ 'ի նմանէ՝ գրեաց առ նա թուղթ սի-  
րոյ և շնորհակալութեան հանդերձ առաքելա-  
կան օրհնութեամբ 'ի 22 սեպ . 1742 :

Նոր վճռաւ արտասահմանեաց զաղանգաւոր  
Ֆուամասոնս (879) . գատապարտեալ մերժեաց  
զայլ և այլ մոլորական բանս , որպէս և զհինդ-  
վարդ ապետութիւնս որյալագո մենամարտու-  
թեան : Զտօն առաքելոցն Պետրոսի և Պողոսի  
սկառուիրեաց ութօրեայ տօնել : Ետ տօնել ըստ  
սլաշտաման հայրապետաց զտօն մեծին լեւոնի :  
Ի 1750 հռչակեաց զհանդէս յորելինի . և յա-  
մին որ զկնի՝ շնորհեաց զօրհնութիւն ներողու-  
թեան բաշխել ընդհանուր հաւատացելոց տա-  
րածելոց 'ի հեռաւոր աշխարհս : Զարքեպիսկո-  
պոսութիւնն բոնոնիայ՝ զօր ցայն վայր ուներ ընդ-  
իւրով իշխանութեամբ՝ յանձնեաց Վինչենցիոսի  
Մաղվեաիոսի կարդինալին : Իսկ 'ի համոլարտ-

նին արտք ոչ սակաւ շինութիւնս, և ընծայեաց  
նմա զգբատուն իւր ամբողջ և բազում գործիս  
առուեղաբաշխութեան :

Յետ այսր ամենայնիառանձնացեալ յինքեան՝  
պատրաստէր զանձն 'ի հոգեսոր ուղեգնացու-  
թիւն բարեպաշտ խորհրդավ և տատուածամէր  
եռանդետմբք • որ և 'ի հասակի ութսուներից  
ամացե երեսուներից աւուրց հասեալնմա վախ-  
ճան կենաց՝ փոխեցաւ առ քահանայապետն  
Քրիստոս 'ի հինգ նոնայց մայիսի յամին 1758,  
կացեալ յիշսանութեան իմաստուն կառավա-  
րութեամբ ամս եօթնետասն, ամիսս եօթն և ա-  
ւուրս վեշտասան : Որ աւուրբք յառաջ գրեալ էր  
պատախանիառ ազքեսիսկոստն կուանայ զոր-  
մանալի հմտութեամբ և գեղեցիկ բացաքննու-  
թեամբ յաղագս արդելմանց ամուսնութեան և  
աղատութեան : Այսպէս մինչեւ ցյետին շունչն  
վաստակեցաւ յօդուտ քրիստոսեան կրօնիցու և  
պայծառութեան սրբոյ եկեղեցւոյ <sup>1</sup>:

## ՄՃ

## ԿՂԵՄԻՍ ԺԳ

Ա. Տ. 1758, և իայսէրութեան Քրտնականիւն Ա. 15:

1570. Զկնի երկուց ամսոց և երից աւուրց  
փոխման յաստեացս մեծի հայրապետին Բենե-  
գիկոսի ժ. Դ. աւուրբք յառաջքան զնոնայս յու-  
լիսի ընտրեցաւ յաջորդ նորին կարոլոս Հռեցո-  
նիկոս կարդինալ սեպուհ վենետիկոյ և Եպիսկո-

1 Լամբեր. յշ. ծառ. • Ասպուծոյ. գիր. 1. գլ.  
ծշ. 10. և իմ. 10: Առև. 121. 13. 20. 27.  
49. 75. 103: Բան. գիր. 1. յշ. պատ. գլ. ծշ. 7:

պոս Պատաւիոնի, այր շքեղ և վառացի, խմաս-  
տուն և բարեղաշտ : Այլ զի բարձրացեալ էր  
յաւադութիւն՝ ի Կղեմայ ձի , նմին իրի ՚ի թա-  
գագրութեաննորեզելյեօթնետասն կաղտնդացն  
օդոս + անուանեցաւ Կղեմէս ժ.Գ + որոյ նախկին  
առաքինական գործքն համբաւեալ առ ամենե-  
սեան՝ և ևս հանդիսացան՝ ի քահանայապետա-  
կան լշխանութեան , յորս ՚ի վերքան զամենայն  
գերահոչակ գտաւ առատաձեռն ողորմութիւն  
նորա առ աղքատս , զորոյ լիշտակն թողեալ էր  
կահեսաւ ՚ի Պատաւիոն յառաջնորդութեան իւ-  
րում : Եհան ՚ի գանձէ զառատ ոռձիկ ՚ի կե-  
րակրել զնոսա իբրև բազմագութ հայր զորդիս:  
Ոչնչ ընդհատ յայսմանէ փոյթ տարեալ աս-  
տուածային սպասամանց և ուղղութեան հո-  
գւոց հիանալի կրօնասիրութեամբ՝ բարեկարգեաց  
զեկեղեցական օրենսե արարս քահանայապետա-  
կան մեծափառութեամբ : Վայելքացոյց զհան-  
դէսս ՚ի պաշտօն յարդութեան հրապարակաւ-  
առ սուրբ հաղորդութիւնն : Սահմանեաց և տօն  
սրտին Յիսուսի առ ՚ի նորոգել զյիշտակ չարչա-  
րանաց և մահուան փրկչին վասն փրկութեան  
ազգի մարդկան (1573) :

Մինչդեռ Կարողոս Գ արքայ Սպանիոյ խընդ-  
րէր ՚ի նմանէ պատշպան ունել տէրութեան իւ-  
րում զԱստուածամայրն՝ հաստատեաց Կղեմէս զի  
զտօն անարատ յղութեանն մասնաւոր եռան-  
դեամբ և կրօնասիրութեամբ սպասեսցեն : Կար-  
գեացընդ սուրբս հանդիսաւորարարողութեամբ  
զՅովհաննէս Կանտիս , զէերոնիմոս և զայլ  
յարդարոց , յորս տկանաւոր էր երանելին Գրի-  
գոր Բարբագիկոս Եպիսկոպոս Պատաւիոնի . որոյ  
առաքինութեանց նախանձաւոր էր և ինքն , և ՚ի  
սպատիւ նորա կանգնետոց մատուռն վայելուչ ՚ի  
տաճարի սրբոյն Մարկոսի ՚ի չոռովմ : Յղեաց զայ-

ցելուս 'ի Կորսիկա , որսկէս զի ծանօթ լիցի հանգամանաց ուխտին եկեղեցւոյ և հաւատացելոց : Մերժեաց զվատանգաւոր կարծիս ումանց յաղագս աղատութեան . գատապարտեաց ընդ նմին և զգիրս ինասարարս ուղղափառ հաւատոյ , մանաւանդ զերրորդ մասն Պատմութեան ժողովը դեան Աստուծոյ , որ պարունակէր զմեկնութիւն տռաքելական թղթոց : Նորոգեաց զհին կանոնս և զսահմանագրութիւնս 'ի ժողովի իւրում վասն բարեկարգութեան : Եհան և վճիռ ընդդէմ գըրսին Բարմայի սակս եկեղեցական աղատութեան Ճոխացոյց պատուով և զարդուք զմայր եկեղեցին Պատաւիոնի , և զկանոնիկոս մեծարեաց սլարտուպատշաճ շքով : Ընորհեաց պատրիարքաց , աւագաց , արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց մատակարարել ժողովութեան երկիցս 'ի տարւոջ զառաքելական օրհնութիւնն հանդերձ լիակատար ներողութեամբ զինի հանդիսաւոր պատարագի :

Առ սա գրեաց Յակովը պատրիարք Նալեան թուղթ յարգութեան և ինդրեաց 'ի նմանէ զնը խարս ինչ սրբոց : Կատարեցան ինդրուածք նորին , և աւաքեցաւ առ նա 'ի պարգև պատկեր Տիրամօրն , զոր եղ 'ի սենեկի իւրում . ընդ նմին և կենտց փայտ : Սոյնդունակ ոչինչ պակասեցաւ 'ի խնամակալ լինելոյ և մեծարելոյ զիշխանաւորս , և զՄարիամ թերեզա կայսրուհի . շնորհեաց և արքայից Հունգարիոյ տանել յառաջոյ զդրօշակ խաչանիշ : Գրեաց նամակ խնդակցութեան առ արքայն Պողոնիոյ Ստանիալաւոս Բոնեաթովաքի : Իսկ առ վենետիկեան աէրութիւն յղեաց զոսկի վարդ 'ի պատիւ (1500) . որոց և շնորհեաց իրաւունս անուանելոյ զոմանս 'ի գերագոյն ատենի երկոտասան օրենսգէտ վարդապետաց 'ի հոռվի :

Պատասպարեաց զնաւահանգիստն Անքոնայ :  
 Բնդարձակեաց զքաղաքն Սինիկալիա և զՁէն  
 թօչէլլա յաւեմամբ զանազան շինուածոց 'ի  
 դիւր մտից նաւուց: Ցամաքեցոյց զՃահիճո , զո-  
 րոց զջուրոն հոսեցոյց յանդս բոնոնիայ: Զնաւ-  
 արկութիւնն ընդ Տիբերիս գետ գիւրադնալի  
 գործեաց , և սլատասպարեաց զգետեզերս : Ըի-  
 նեաց 'ի քաղաքին երեկը շինուածու . ընդարձա-  
 կեաց և զարաւատն անուանեալ Կուիրինեան :  
 Զաղբիւր Աքոնին ջրոյն զարդարեաց վայելուչ  
 մարմարիոն քարամբը : Կառոյց յՆդրիանեան  
 հուշակաւոր դաստակերտի թանգարան սակա-  
 ւագիւտ իրաց . նոյնապէս և սենեակ փառաւոր  
 հաստատեաց 'ի մատենագարանին Վատիկանու  
 առ 'ի հաւաքել անդր զհնութիւնս : Եւ 'ի չորս  
 նոնայց փետր . յամին 1769 յանկարծական մա-  
 հուամբ յափշտակեցաւ յաստեացս առ տէր 'ի  
 հաստակի եօթանասունեհինդ ամսոց , տասն ամ-  
 սոց և քսանեվեց աւուրց , յանմիսիթար սուգ  
 ամենեցուն՝ մանաւանդ աղքատաց , կառավա-  
 րեալ զեկեզեցին ամս տասն , ամիսս վեց և ա-  
 ւուրս քսանես օթն<sup>1</sup> :

## ՄԾԱ

### ԿԴԵՄԻՍ ԺԴ

Ա. Տ. 1769, և կայսերական Յովեկայ Բ. 5 :

1571. Ժողովաւագաց միաձայն հաւանու-  
 թեամբ ընտրեաց յաջորդ յաթոռ քահանայա-

1 Օսման. 6. Բ. Ենեդ. Ժ. Գ. Ա. Ֆիշ 2 Դէլ. 1758:  
 Ա. արժ իննուն. Դ. Պատիմ. Հ. այ. հայ. 3. Եւ. 868:

պետութեան չոռվմայ զականաւոր վարդապետն արն քաջահմուտ և խոհական զԼաւրենտիսս կանկանելլի ՚ի կարգէ վանականաց Մինորից ՚ի չորեքտասան կաղանդացն յունիսի յամին 1769: Որոյ անցեալ ընդ զանազան պաշտօնս եկեղեցական կոռավարութեան յամենայնի անստգիւտ ընծայեցուցեալ էր զանձն, և արժանի մեծի իշխանութեանն այնորիկ: Նմին իրի ՚ի ցնծութիւն հասարակաց ձեռնադրեցաւ ՚ի հինգ կաղանդացն յունիսի, և աւուրբ յառաջ քան զնոնայս այնիր ամսոյ պսակեալ պատ անուանեցաւ Կղեմէս ԺԴ:

Որչափի յաճախին յին առ սովուր գառն պատահարք, նոյնչափ և ինքն դօտէպինդ ամրացեալ անսասան եկաց ընդդէմ ամենայն տլեաց վորձութեան: Զինամակս իմաստալիցո և զօրաւորը գրեալ առ եպիսկոպոսունս ընդհանուր եկեղեցւոյ և առ իշխանաւորս աշխարհի, կապեաց ՚ի սէր առաքելուկան դահին, և զարատքին թագաւորս հաշտ և խաղաղ պահեալ պնդեայ զորդիս եկեղեցւոյ զաւագորեար զարքայն Լուսիտանիոյ, և զբորբոնեան թագաւորս՝ զամենաքրիստոնեայն և զուղղտփառն ՚ի սէր միաբանութեան: Մինչ զի յոլովք ՚ի քաջ արանց եկաւորեալ ՚ի չոռվմմեծարէին զնա երկրագետն գարշապարգեալ գարշապարացն: Կարի յոյժ ճգնեցաւ անսասան պահելզկարգն Յիսուսեանց այլբռնադատեալ յիշխանաւորաց և զդուշացեալ ՚ի մեծագոյն չափանիւն ելոյժ զայն յԵւրոպիա ՚ի 21 յուլ. թողեալ զնորոգութիւնն ապա ժամանակի մինչեւ ցաւուրս մեր (1573): Բարեկարգեաց զկանոնս և զկրօնս միանձանց, զոմանս յաղաւեալ և զոմոնլու յաւելեալ. է զի զայլեայլ զիճակս միացոյց, և է զի նորոգ հաստատեաց զեսպիտկոպոսու-

թիւնս . որպէս և 'ի Հունդարիտ կարդեաց զեւ պիսկովոյ յունական ծխսիւ : Այնչափէր փոյթեւ ռանդն 'ի տարածել զուղղափառ հաւատս , զի յօտար և 'ի հեռաւուոր ազգաց ձգեաց զբազումը 'ի ծոց սրբոյ եկեղեցւոյ ողջամիտ վարդապէտութեամբ : Ծնդ երանելիս դասեաց զֆրանչիս կոս հիմնագիր ուխտին Մինորից , և զայլ չուշակեաց զհանդէս մեծի յորելինի . այլ չեւ ևս սկիզբն արարեալ եզերեաց զկեանս :

Զանայր խոհանկան հանձարով 'ի կատարումն ածել և զարտաքին գործս կարեորս : Թեթևացոյց զշարկապահանն ջութիւնս . ամիացոյց զնաւահանկանս Անքոնայ և Չենթօչելլայ . և ըդկալուածս եկեղեցւոյն չուովմոյ մեծացոյց՝ յաւելմամբ : 'ի նոյն զքաղաքն Բենելինոտ : Առատածեռն գտաւ առ աղքատս և առ ուսումնասէրս . այլ Ճիշդառ իւրոն : Ընդարձակեաց զանկելանոցս ընչեւք իւրովք , և զուսումնարանն Փերարայքարեկարդեաց՝ մեծարեալ զարս բանիբունս և արդիւնաւորս : Զհամալարանն չուովմայ ճոխացոյց ուսումնական գտատիարակօք և գեղեցիկ կանոնօք : Սապէս 'ի Վատականեան տաճարի վայելքացոյց միւսիոնեան նկարս 'ի նպաստ հմուտ ուսումնասիրաց , հանդերձ երեւելի յիշատակուրանօք , որ և կոչեցաւ Կղեմեան : Յամենայն գործս իւր երեւեր մեծանձնութիւն նորա առանց վառասիրութեան . մինչև 'ի զարմանս ածել զամենեսին , մանաւանդ 'ի խնամելին զկարծաւեալս և մտադիւր լինել յունկնդրութիւն աղաւաւորաց . որոց և գաղտ նպաստամատոյց լիներ : Յետ այսօր ամենայնի հասեալնմտ վախճան կենաց , ելիք զանցաւորս և եհաս առ Քրիստոս 'ի տասն կաղանգացն հոկտ . յամին 1774 'ի հասակի վաթսունեինն ամաց , զեկավարեալ

զեկեղեցին ամս հինգ , ամիսս չորս և տւուրի  
երիս :

## ՄԾԲ

### ՊԻՌՍ Զ

Ա. Տ. 1775, և կայսերական Յանձնիք թ. 11:

1572. Պիոս խոստովանող հայրապետ Հռով  
մայ յառաջագոյն ձոյնեալ Յովհաննես Անկե-  
լոս կարդինալ ընտրեցաւ քահանայապետ 'ի  
հնգետասան կազմանդացն մարտի յամին 1775,  
համաձայնութեամբ կարդինալացն ամենեցուն :  
Սա ծնեալ 'ի Չեղենս 'ի 1717 յիշտանաւոր զարմե-  
Պրապի անուանելոյ՝ մնաւ քաջ յիմաստս և 'ի  
վարս առաքինիս , և թողեալ զսլայտզատութիւնն  
էզբօր իւրում կրսերոյ՝ եմուտ յեկեղեցտկան վի-  
ճակ : Ապա 'ի 1740 դնացեալ 'ի Հոռովմ սիրելի  
եղե ամենեցուն իմաստութեամբ անձին և քաղց-  
րութեամբ և ընտիր վարուք . և բենեղիկոսս  
ԺԴ ընտրեաց զնա իւր նօտար և սենեկապետ ,  
և ապա կանոնիկոս եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի :  
Խոկ կղեմես ԺԴ հաստատեաց զնա գանձապետ  
սրբոյ աթուոյն . յետ այնորիկ կղեմես ԺԴ բարձ-  
րացոյց զնա յաւագութիւն 'ի 1773 : Հուսկ յետոյ  
յաջորդեալ զնա 'ի թագադրութեան անուա-  
նեցաւ Պիոս Զ 'ի սպատիւ սրբոյն Պիոսի Ե , որոյ  
առաքինութեանցն ցանկայր լինելնմտնող : Յո-  
լովք յիմաստնոց գուշակ լինեին թէ մեծամեծս  
գործելոց իցենա յօդուա եկեղեցւոյ և 'ի հաս-

1 Թառաղի 'ի լի կաղ . սէպ . 1770 : Կոնդակ տուա-  
ժելական 'ի ծբ կաղ . օդոս . 1773 . ևս և 'ի լի կաղ .  
սէպ :

տատութիւն սուրբ հաւատոյ յալեկոծեալ ժողովական ժամանակի անդ :

Ի սկիզբն հայրապետութեան վայելքական բարեկարգութեամբ պերճ հանդիսացոյց զվիճակ եկեղեցւոյ կատարեալզհանդէս յորելլինի զհուչակեալն 'ի նախորդէն . առա ձեռն արկ զարդարել զհուովմ գեղեցիկ շինուածովք . մեծագործութեամբ հիմն արկեալ 'ի 1776 կատարեաց զըըընալ աւանդատունն օրբոյն Պետրոսի : Եւ անդագար էր 'ի ջանս ուղղել զանուղղայս և 'ի խազաղութեան հաստատել զեկեղեցի և զհօտ իւր որպէս և 'ի 1782 չոքաւ 'ի վենաա առ կայսրի սակս օգտի եկեղեցւոյ և շինութեան կրօնի :

Բայց թէ որպիսի անընկՃնլի ոգւով մարտինել պարտ էր քահանայապետի մեծի ընդգեմ թշնամեաց եկեղեցւոյ , եցոյց Պիոս յորժամ 'ի մըրկել իւռովութեանց յամին 1790 եկաց նա անսասան . լիոքու նաւակաւն ճարտար զեկավարեալ ընդ կոհակս ալեաց բորբոքելոյ անսատուածութեանն ժամանակին . զի քաջալինդոգւով ձեռն 'ի գործ արարեալ գրեաց բանս իւմաստալիցս և զօրաւոր նամակս ոչ միայն առ ամենայն եպիսկոպոսունս Գաղղիոյ , այլ առ նոյն ինքն թագաւոր նորա՝ հաստատուն կալ 'ի սուրբ հաւատու և հաստատել զհօտս և մերժել զնորահնար աղանդս անսատուածիցն Առլութեռի և նման նեաց նորա (880) : Եւ նորին աղագաւ դադուղիացի իշխանաւորք արդէն ապականեալք 'ի նոյն աղանդոյ ոխակալ եղեն քահանայապետին , առ թի սպասեալ յաղարտ վարելոյ զհուովմ : Որոց յետ գլխատելոյ զթագաւոր իրեանց զլուգովիկոս ԺԶ արշաւեցին յիտալիս 'ի 1796 . և այն ինչ պատրաստ էին կոխել զհուովմ՝ սըրբազանն միջնորդ կալեալ զդեսպանն Սպանիոյ և կատարեալ զկամս Պօնարառութեի զօրապետին

հազիւ հանդարտեցոյց զնոստ առ ժամն : Աս կայն նոր կառավարութիւն նոցա դարձեալ առաջարկեաց հայրապետին կատարել և խնդիրս ինչ՝ թուով վաթսուն և չորս, որոց շատք ընդդեմ կրօնի էին . յայնժամ սուրբ հայրն համարձակ էտ պատասխանի թէ անմարթ է նմա ընդունել զայնպիսի անիրաւ պահանջմունաս, և ծանոյց ուղղափառ թագաւորաց զինդիրս նոցին , և զյօժարութիւն իւր թագիւլոյ զարիւն վասն 'ի Քրիստոս հաւատոց . նա և յորդոր մատոյց ժողովրդեան պաշտպան լինել քաջութեամբ ուղղափառ կրօնի ընդդեմ աղանդաւորացն այնոցիկ :

Յայնժամ ամենայն ժողովուրդքն ընդ աւագանւոյն միով ոգւով վառեցան բորբոքեցան 'ի սէր կրօնի , և միաբանեալ կացուցին երեքտասան հազարս պատերազմականաց և քսան հազարս պահապան զօրաց : Առ որ կայսրն և արքայն Անդղիոյ առաքեցին յօդնութիւն ութուտան հազար հրացանս և զօրապետս . իսկ Իռլանտացիք երեք միլիոն ոսկի : Յետ ամրացուցանելոյ Պիտոսի պապին զսահմանագլուխս և զամբոցս Հռովմայ յանձն արար զամենայն 'ի խնամն Աստուծոյ :

Իսկ Պօնաբառթէ տեսեալ զահեղ պատրաստութիւն Հռովմայեցւոց՝ սկսաւ խարեւութեամբ որսալ զբաղումն , իբր այն թէ եկեալ է պաշտպան լինել ուղղափառ հաւատոյ . և մեծարեալ զքահանայս և զկրօնաւորս թուլացոյց զօիրտս բազմոց . որով և ստիպեցաւ սրբազնն հաշտութիւն առնել՝ վճարելով Գաղղիացւոց ըգծանը ծանր տուրս : Այլ տեսեալ թէ նոքառչ դադարէն 'ի չարիս նիւթելոյ և յապստամբութիւն գրդուելոյ զժողովուրդն , հրաման արար ամենայն եկեղեցականաց տղօթիւք և պահովլք

ինդրել զվերին օգնականութիւն : Իսկ Գաղ-  
ղացիք յամենայն տեղիս խոստանալով ազ-  
տութիւն՝ շահեցան զժողովուրդն և անաշխատ  
աիրեցին ամենայն քաղաքաց Հռոմայ , մինչև մեր-  
ձեցան 'ի քաղաքանդր . և 'ի 1798 մայն 'ի Հռովմ  
առանց պատերազմի :

Արդ Գաղղիացիք իբրև աիրեցին Հռովմայ ,  
քարձեալ անտի զիշխանս հայրապետին՝ յափրշ-  
ակեցին զմեծութիւն և զդանձա մեծի քաղա-  
քին , և անուանեցին զժողով իւրեանց Հասա-  
րակապետութիւն Հռովմայ : Իսկ զքահանայա-  
պետն վակեցին 'ի պալատի իւրում իբրև 'ի պա-  
հետի , և յետոյ առաքեցին 'ի Դրոսքանա . որ և  
իջևանեցու 'ի վանա Սենայ քաղաքի , և անտի  
'ի Փլորենտիա 'ի մենաստանի Կարթուսէանց :  
Անդ հալէր և մաշէր երանելին 'ի լսելն եթէ  
գաղղիացիք ոչ միայն զպալատիւր կողոպտեցին  
և քարձեալ տարան 'ի քաղաքէ անտի զամենայն  
պատուական զարդո , զպատկերո և զդրչտիրո  
վատիկանու , այլ որ մեծն է՝ զեկեզեցիս և զվա-  
նորայս մերկացին՝ հալածական արարեալ զյոլով  
յեկեզեցականոց : Եւ 'ի յոժախսէլ առ նա լուց  
անկաւ 'ի մահիճս առ մեծի վշտաց :

Այլ 'ի 27 մարտի 1799 հանեալ զնա անտի  
առաքեցին 'ի Բարմա հիւանդագին , և անտի 'ի  
Թուրին . հուսկ յետոյ բաղում նեզութեամբ հա-  
սուցին զնա 'ի Պրիանսոն քաղաք Գաղղիոյ : Թէ-  
պէտ մեծապէս տանջեցաւ նա առ ծանրութեան  
հասակին և անտանելի հիւանդութեանն , բայց  
տանելը նա համբերութեամբ և միսիթարէր յոյժ  
իրեւ տեսանելը զի ժողովուրդք տեղեաց տեղեաց՝  
ընդ որ անցանելը , դիմեալ առ նա խմբէին առաջի  
կառաց նորա եռանդագին խնդրելով զհայրա-  
կան օրհնութիւն նորա . և ոմանք զդեստս և ծա-  
ղիկս տարածեալ 'ի Ճանապարհի ցուցանելին զե-

ուանդն աստու ածագաշութեամէ, մինչև զղջանալ և աղանդաւորաց սակս վարելց զնա 'ի Գաղղիա: Եւ հուսկը յետոյ հասուցին'ի Վալենցա:

Գաղղիացիք իբրեւ խորհէին տանել զսրբազանն անտի'ի Փարիզ, Ճանրացաւ նայոյժ ախտիւ թանշից, մինչև սլուկասել'ի զօրութենէ: Սակայն զդաստութեամբ մտաց և արիական բարեպաշտութեամբ պատրաստեցաւ 'ի մահ և ընկալաւ եւանդէամբ զմերջի զմերջին խորհուրդս և օրհնեաց զմերձակայս: Ապա գարձեալ առ ընթերակայ եպիսկոպոսն Սբինա ասաց. Յանձնեմ քեզ ասել յաջորդի իմում, զիներեսցէ Գաղղիացւոց, որսկէս և եսներեմ 'ի սրտէ: Զայս ասացեալ եկաց յազօթս անմռունչ իբրեւ վայրկեանս չորս և անդէնննջեաց զքուն արդարոց 'ի մէջ գիշերի 'ի հասակի ութեսուններկուց ամաց 'ի 28 օդոս. յամին 1799 'ի քսանեհինդերորդ ամի քահանայապետութեան իւրում: Ի մտարան տանն յորում վախճանեցաւ երանելին, 'ի վերայ մարմնոյ նորա եպիսկոպոսն Սբինա մատոյց զպաշտօն ննջեցելոց զաւուրս ութ հանդերձ քահանայիւք. և ապա փակեալ 'ի կապարեայ արկեզ զզմուեալ մարմին երանելոյն՝ կնքեցին, և վասն հոգւոյնորին յամենայն եկեղեցիս աշխարհի մատուցաւ պատարագ: Այլ մեծահանդէս պաշտօն իննօրեայ պաշտամամբ կատարեցաւ 'ի կարգինալաց յեկեղեցւոյն սրբոյն Մարկոսի 'ի վենետիկի. որում և ականատես իսկ եղեաք: Այլ յետայնորիկ 'ի 1802 'ի ինդրոյ յաջորդին առաքեաց Պօնտաբառ թէ ըդմարմին նորա 'ի Հռովմ, և ինքն ինդրեալ եառ զսիրտն հանդերձ ընդերօք, զորս մեծահանդէս յուղարկաւորութեամբ հանգոյց 'ի հոյակատ շիրմի կառուցելոյ յիւրմէ վասն մարմնոյ երանելոյն:

1 Ա արժ Պիտոնի Զ: Ասէմ. Կանդ. և Բուռլի:

ԴԻՊՐԵՏԱՄԱՍՆԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ

Ա. Տ.

1700. ՄԵԼքիսէթ վերսատին կարդի պատրիարդ :
- Մինիթար արքայ ելեալ 'ի հայաստանէց  
գնայ 'ի կոստանդինուպօլիս :
1701. Եփրեմ գարձեալ առնու զպատրիար-  
քութիւնն . և ապա Աւետիք վարդա-  
պետ :
1703. Գալուստ Կայծակին նստի պատրիարդ :
1704. Եհրուէս հաստատի պատրիարդ , ապա  
վերսատին Աւետիք :
1705. Մատթէոս վերսատին նստի պատրիարդ :
- Լէոբոլտ Ա կայսր մեռանի . Յովսէփ Ա  
թագաւորէ :
1706. Մինիթար արքայ գնացեալ 'ի Մուտ շինէ  
վանս 'ի Մեթոն քաղաքի : Խոկ 'ի Պօլիս  
Մարտիրոս , ապա Միքայէլ առնուն  
զպատրիարդութիւն :
1707. Ազէքսանդր Ա հաստատի կաթողիկոս: Խոկ  
Սահակ և Յովհաննէս նստին պատրի-  
արդ : Ի նմին ամի նահատակի Տէր Կո-  
միտաս :
1709. Պետրոս կայսր Ռուսաց՝ յաղթէ Շվետաց:
1711. Կարոլս Զ Եղբայր Յովսէփայ հաստատի  
կոյսյար զինի նորա :
1714. Յովհաննէս Ը նստի պատրիարդ :
1715. Աստուած ատուր կաթողիկոս յաջորդէ  
զԱզէքսանդր : Եւ Յովհաննէս Կոլոտ  
հաստատի պատրիարդ : Խոկ Մինիթար  
արքայ գնայ 'ի Վենետիկ հաստատել  
վանս միանձանց խրոց :

1717. Ակիզբն բնակութեան Մխիթարայ արքոյի ՚ի վանս սրբոյն Ղազարու։ Պետրոս կայսր Ռուսաց գնայ՝ ՚ի Փարիզ ։ յետ այնորիկ հաստատի կայսր Ռուսաստանու։
1724. Մեծն Պետրոս կայսր մեռանի։ և Կատարինէ Աթագուհին յաջորդէ զիա։
1726. Կարապետ Գնստի կաթողիկոս։
1726. Պետրոս Բ. կայսր Ռուսաց թուն մեծին Պետրոսի յաջորդէ զկատարինէ թագուհի։
1727. Թահմազ զուլի զօրանայ։
1729. Աննա Խվանովնա յաջորդէ զՊետրոս Բ. կայսր։ զոր ասկա յաջորդեաց Խվան Գ.։
1730. Աքրահամ Բ. նստի կաթողիկոս։
1734. Աքրահամ Գ. յաջորդէ ՚ի կաթողիկոսութեան։
1757. Ղազար կաթողիկոս յաջորդէ։
1740. Աննա Խվանովնուհի Մեքլենապուրկայ տիրէ Մոսկովաց։
1741. Յակովը նստի պատրիարք։ Եւ Եղիսաբեթ կրտեր դուստր մեծին Պետրոսի տիրէ։
1742. Կարոլոս Է. հաստատի կայսր։
1745. Ֆրանչիսկոս Ա կայսր յաջորդէ զԿարոլոս Է.։
1748. Պետրոս Բ. Քիւթիւր նստի կաթողիկոս։
1749. Վախճանի Մխիթար մեծ արքայ և յաջորդէ Ատեմիանոս Ա. Խակ ՚ի Պօլիս Պրոխորոն և ասկա Մինաս նստին պատրիարք։
1751. Մինաս կաթողիկոս յաջորդէ զՊետրոս։ Եւ Գէորգ նստի պատրիարք։
1752. Յակովը վերստին հաստատի պատրիարք։
1754. Ազեքսանդր Բ. նստի կաթողիկոս։
1755. Սահակ Ահագին յաջորդէ զԱզեքսանդր։

1759. Յակովը Ե կաթողիկոս յաջորդէ զԱա-  
հակ :
1761. Եղիսաբեթ գուստը մեծին Պետրոսի մե-  
ռանի, և Պետրոս Գնատի կայսր Ռու-  
սաց ապա թագուհին նորա Բ կատա-  
րինէ :
1763. Սիմոննատի կաթողիկոս :
1764. Գրիգոր Գ առնու զպատրիարքութիւն :
1765. Ֆրանչիսկոս Ա կայսր մեռանի, և որդի  
նորա Յովաէփ Բ յաջորդէ :
1769. Կաբոլէոն Պօնաբառթէ ծնանի 'ի Կոր-  
սիկա կզզի :
1771. Ռուսք տիրեն Խրիմի :
1773. Զաքարիա նատի պատրիարք :
1780. Ղուկաս կաթողիկոս յաջորդէ զՍիմոն :
1781. Յովհաննէս սլատրիարք համետանցի :
1782. Զաքարիա վերսաբին հաստատի 'ի պատրի-  
արքութեան :
1790. Յովաէփ Բ կայսր մեռանի, և յաջորդէ Եղ-  
բայր նորա Լէոբոլս :
1792. Ֆրանչիսկոս Բ որդի Լէոբոլսի նոտի  
կայսր զկնի մահուան նորա :
1793. Մահ Լուգովիլիկոսի Ժ Թագաւորին  
Գաղղիոյ :
1795. Բարձումն Թագաւորութեան Լէհաց :
1796. Կատարինէ Բ կայսրուհին Ռուսաց վախ-  
ճանի, և յաջորդէ որդի նորա Պօղոս Ա :
1797. Բարձումն տէրութեան Վենետիկեցւոց  
և Գենուացւոց :
1798. Դանիիլ նատի պատրիարք 'ի Կոստանդի-  
նուպօլիս :
1799. Վախճանի Ստեփանոս Ա Մէլքոնեան  
աբբայ Մխիթարեան ուխտին :
- Զայնու ժամանակաւ զկնի սուլդան Մուստա-  
ֆայի Բ Թագաւորէ սուլդան Ահմէտ Գ. 'ի 1703.

ապա 'ի 1730 յաջորդէ սուլդան Մահմետաշ. յե-  
տոյ 'ի 1754 սուլդան Օսման գ. : Ապա 'ի 1757  
սուլդան Մուսաֆաքա գ. : Իսկ 'ի 1774 թագա-  
ւորէ սուլդան Ազարիւլ Համիտ. զոր յաջորդէ  
սուլդան Ակլիմ գ. 'ի 1789 :

## ԷՆԵՒԹ ՏԱՐԱՆԵՐՈՐԴ ԴԱՅ

ՄԾԳ

ՊԻՌԱ Է

Ա. Տ. 1800, և կայսերութեան Ձբանւհանութիւն Բ 9:

1575. Այդ զինի երջանիկ կատարածի խոսականութեան քահանայապետին Պիոսի Զ յալէկոծութեան անդ եկեղեցւոյ համախմբեալ կարգինալացն 'ի Վենետիկ խորհուրդ կալսն ստկորնարութեան նորոյ քահանայապետի: Եւ անդ զըսաւորեալ նախ զհանդէս յուղարկաւորութեան վախճանելցյն՝ ասպա մատին յարդելականսենեակս փակարանին, զոր հաստատեցին 'ի վանս սրբոյն Գէորգայ 'ի մենարանի բենեդիկտեանց սրեց 'ի գեկ. 1799: Ապայետ հասուն քննութեան ընտրեցաւ գլուխ սրբոյ եկեղեցւոյ բարերարոյ կարդինալն Գրիգոր Քլարամոնդի այր մեծանուն իմաստութեամբ և առաքինութեամբ: 'ի 1/4 մարտի յամին 1800: Առ ծնեալ 'ի Զէղէնա 'ի 1/4 օգոստ. 17/2'ի Ծխալիոնէ կոմու անուանեցաւ 'ի մկրատութեան բառնաբառ Լուիժի: Բայց 'ի մանկութեան անձնատուրլեալ 'ի հսկեորս եմուտ 'ի կրօն կասմինեան 'ի Զէղէնա 'ի ախս վեշտասան ամաց՝ անուանեալ Գրիգոր բառնաբառ: Որ և ընակր գտեալ յամենայնի եանց ապա 'ի Հոռվիմ: և զհետ լեալ բարձրագոյն ուսմանց և կանոնադիմութեան՝ եղեւ ապա ուսուցիչ վիլխովիայութեան 'ի բարմա և աստուածաբանութեամն 'ի Հոռվիմ: Եւ 'ի 16 գեկ. 1782 կարդեցաւ 'ի Պիոսէ և պիտիկոս Գիլվոլեայ և ապա Խմոլայ, միանդա-

մայն և կարգինալ . և հուսկ յետոյ պատկետալ պատղ  
՚ի վենետիկ անուանեցաւ Պիոս ի : Ի հանդիսի  
անդ դժան և ոմանք՝ ի մերոցն սարկաւագութեամբ  
սպասահարկու ՚նմին ՚ի քահանայապէտական  
սպաշտաման : Առ որ ամենայն աւագորեար դունդ  
դունդ դնային ՚ի համբոյր գարշապարացն :

Այլ ՚ի զ մայիսի եկաւորեալ փառօք յայցե-  
լսւթիւն մենաստանն մերում սրբոյն Ղաղարու ընդ-  
կարգինալաց և յոլով իշխանաւորաց՝ զկնի աղօ-  
թիցն յեկեղեցւոջնստաւնախն ՚ի պատրաստական  
գահին յաւանդատան առ ՚ի տալ զհայրապէտաս-  
կան օրհնութիւն ու խտաւոր կանանց որ եկեալ  
Եկին անդքր ՚ի համբոյր ստից նորա . և ապա ելեալ  
անտի ՚ի մեծ սրահ վանացսնստաւ յայլ գահ փա-  
ռաւոր ընթերակայութեամբ կրկնին ծիրանա-  
ղդեցից ՚ի տալ վանականաց և այլոց զօրհնութիւն  
հայրական : Եւ ապա մտեալ ՚ի նորմնայրան  
և յուսումնարան մենարանիս օրհնեաց զմեզ և  
քաջալերեաց քաղցր բանիւք : Զկնի այսպիսի  
քաղցր կենակցութեան ժամս ինչ՝ գարձ արար ՚ի  
տեղի իւր նովին փառօք :

Ասդ ՚ի կարգի եղեալ հայրապէտին զամենայն  
դործս կարևորս զառանին և զարտաքին՝ ելաստա ՚ի  
վենետիկոյ իւրովքն հանդերձ ՚ի շն յունիսի  
1800, և չոքաւ ՚ի չոռովմ, որ հանդերձ ամե-  
նայն սահմանօքն զերծեալ եր յայնժամ ՚ի ձե-  
ռաց Գաղղիացւոց : Անդ խոհական խորհրդով  
խնամատար եղե հայրապէտն ոչ միայն նորոգել  
զիսաթարեալ եկեղեցիս և զբազում տեղիս, այլև  
զօրացուցաննել զեկեղեցականս և զկրօնս՝ աղջե-  
լով յամենեսին նոր հոդի ՚ի սեր անարատ հաւա-  
տոյ : Ուրով և արար զարմանալի ուղղութիւնս սպա-  
հեալ ՚ի խաղաղութեան զհօտ իւր և շահեալ ըլ-  
սիրտս թագաւորաց և իշխանաց : Այնպէս զի  
յանկրօնիցիսկ ժամանակին և որը միանդամ այն-

քանոյ խռովութեանց լետը էին ողատճառք՝ իսկարհեցան 'ի ծոց սրբոյ եկեղեցւոյ 'ի 1802, խոսառվանեալ յայտնապես թէ չիք կրօն փրկարար որպէս ուղղափառականն։ Եւ դարձուցին նոքայիւրաքանչիւր վիճակս զաքսորեալ եպիսկոպոսունս և զառաջնորդս 'ի Գաղղիա։

Ընդ այն ժամանակս Գաղղիացիք առ որս արծարծեալ էր կրօնասիրութիւն՝ բացեալ զեկեղեցիս 'ի Գաղղիա խնդրեցին թախանձանօք զի մեծքահանայապետն գնացեալ 'ի Փարիզ պսակեցի կայսր զւաբոլէոն Պօնարառութէ ըստնախնի սովորութեան։ Եւ նա կատարեաց 'ի 1805 որում ապա առաքեցաւ ծանրագին թադ պապական յօրինեալ ունելով 'ի վերայ երիս խորհրդաւոր դրուագու ։ Յետ զօրացուցանելով սրբազնին ըզկրօնն 'ի Գաղղիա և յամենայն տեղիս մեծաւ բարեկարդութեամբ հանդերձ դարձ արար 'ի գահիւր 'ի Հռովմ։

Զկնի այսորիկ ջանահնար եղիւ Նաբոլէոն կայսը յափշտակել 'ի ձեռաց հայրապետին զարտաքին իշխանութիւն Հռովմայ կամօք նորա ։ այլ ըլնդդիմանալ նորին դարձեալ անկաւ 'ի միջի դժամինութիւն մեծ մինչ զի 'ի 1811 ։ յուշ ։ բանացեալ Գաղղիացոց ածին զպապն 'ի Գաղղիա 'ի քաղաքն Կրէնօպլ, և սկսան սպառնալէօք 'ի նեղ արկանել զնա զի կատարեցի զկամս Նաբոլէոնի ։ Սակայն արիասիրան յոչինչ դրեալ զամենայն վիշտ և յախուռն սպառնալիս նոցա՛եկաց մնաց անպարտելի զամոն ինչ 'ի գառնութեան անդ աքսորանաց սպասեալ զուարթագին սրտիւ վերնոյ այցելութեան մինչև գործել սքանչելիս, որպէս պատմեն ականատեսոք ։

Այլ յետ անկման Նաբոլէոնի և խաղաղութեան Եւրոպայ ել խոսառվանող քահանայապետն յարդելանաց անտի, և եկաւորեալ փա-

ուօք՝ ի գահն ձեռն էարկ անդրէն նսրոգել ոչ  
միայն զաւերքաղաքին, եկեղեցեաց և վանորէից,  
այլ մանաւանդ զամենայն կրօնս միանձանց, դար-  
ձուցեալ զնոսա՝ յայլ և այլ աշխարհաց և վիճա-  
կաց՝ ի մենարանս իւրէանց և՝ ի կարգս աստուած-  
պաշտութեան։ Եհան վճիռս և սահմանադրու-  
թիւնս վասն բարեկարգութեան հաւատացելոց-  
որով և նորոգեաց անդրէն զկարդ Յիսուսեանց՝  
ժողովեալ զմնացորդս նոցա յիւրէանց մենաս-  
տանս՝ ի կողմանց աշխարհի (1571)։ Ասհմանեաց  
զնոր կարդ միանձնուէնեաց առընթեր կալ Արքու-  
թեան սրբոց յեկեղեցւոջ հանդիմաւոր պաշտա-  
մամբ զօրն ողջոյն։ Նոյնպէս վերանորոգեաց  
զբարեպաշտ ընկերութիւն սրտին Յիսուսի հան-  
դերձ լիակատար ներողութեամբ (1570)։ Իսկ  
՚ի 1821, յիդոսս սեպ։ Եհան կոնդակ և վճիռ  
բանադրանաց ընդդէմ Քարտոննար աղանդաւո-  
րաց (882)։ Զայս կոնդակ ընկալաւ և տէրութիւն  
Ռուսաց և ետ հրատարակել ընդ ամենայն երկիր  
կայսերութեանիւրոյ։ Թողզայլբարեպաշտական  
գործս սակո հիւանդանոցաց, աղքատանոցաց,  
գոլոցաց և ուսումնարանաց աղատական ա-  
րուեստից այլովքն հանդերձ։

Այլ իբրև զայսօրինակ առաքինանայր մեծա-  
պանծ քահանայապետն Պիոս՝ գիպուածով-  
ինն անկաւ ՚ի գետին և վնասեցաւ փոքր մի։ Եւ  
բժշկաց դարման տարեալ նմա թէպէտ թէթէ-  
ւացաւ առ ժամն' իցաւոց, բայց ասդա զայրացեալ  
ախտին տկարացաւ յոյժ։ և ընկալեալ եռան-  
դեամբք զվերջին սուրբ խորհուրդս պատրաստե-  
ցաւ ՚ի մահ, և ընթերակայութեամբ չորեցունց  
նախապատիւկարդինալաց աւանդեաց խաղաղու-  
թեամբ զհոդին՝ ի ձեռս Աստուծոյ ՚ի վեց ժամու-  
ընդ առաւոնն ՚ի 20 օդոսա 1823 ՚ի հաստկի  
ութառնեւրկուց ամացելեց աւուրց, կացեալ՝ ՚ի

հայրապետութեան ամս քսանելերիս, ամիսահինդ և առուրս վեց :

Յետ այնորիկ սկիզբն արարին հանգիսի թաղման նորա լինեօրեայ պաշտամամբ : Կառուցաւդամբարան մեծաշեն 'ի տաճարի սրբոյն Պետրոսի . խարիսխնորա լայնանիստ չորեքդիմի՝ շուրջանակի աստիճանօք . 'ի չորից անկեանցն 'ի գուրս ելանէին մի մի եռանկիւնիք կամ խարիսխսք չորից աշտանակաց : Ընդ միջոց չորից կողմանցն էին չորսնկարք, առաջինն կենդանագրեր զիրկիին կանգնումն Յիսուսեանց 'ի ձեռն նորին հայրապետի, երկրորդն զյետագարձն առ նա հնդից գաւառաց տէրութեան Հռովմայ, երրորդն զփառտուոր գարձ նորա յաթոռ իւր յետ այնչափ աղետիցն որոց տարաւ անպարտելի արիութեամբ : Խոկ չորրորդն զսատարել նորա 'ի զարդացումն ազատական արուեստից : Ի վերայ այնը խարիսի դոյր այլ քառակուսի, յորոյ վերայ յաւաղջո կողմանէ տասկան առիւթաճիրան, 'ի վերայ նորա բարձկնեար, և 'ի վերայ խոյր քահանայապետական և բանալիք . խոկ 'ի միջավայրի այնը քառակուսոյ բոլորաձև պատուանդան մեծ, յորոյ 'ի չորեսին կողմանս արձանագրութիւնք մեծամեծ գործոց նորա : Ի վերայ մեծի պատուանդանի ամբառնայր նոյնակէս բոլորաձև տաճար . յորոյ 'ի գագաթան էր արձան կրօնի, և ընդ չորեսին կողմանս ընդ մեջ յոնիական սեանց արձանք չորից բարոյական առ աքինութեանց : Բարձրութիւն շինուածոյն էր 120 թղաչափ և լայնութիւն խարսխին 160 : Հանդիսացաւ սյս դամբարան 'ի 31 օգոստոսի . ուր 'ի կատարումն իննօրեայ պաշտամանց մատոյց նախ պատարագ հանգստեան կարգինալն Սբինա եալիսկոպոս յառաջիկայութեան համօրէն կարդինալոց . յետ այնորիկ շուրջ ածեալզդ ամբարձանաւն կատարե-

ցին զշինդկարգեան պաշտօննն: Ապա'ի ժողով խըմբեցան վասն իրաց կարևորաց: մատեաւ'ի ժողով անգը հրեշտակ արքային՝ Նէտալուսոյ կարեկից լինել'ի գիմաց թագաւորին իւրոյ ընդ մահ քահանայապետին: Սմին նման զկնի եօթներորդաւուր պաշտաման յանդիման եղե 'ի ժողովի աւագաց ասպետն իդալինսքի գետպան Ռուսաց ցաւակից եղեալ'ի գիմաց կայսեր իւրոյ ընդ մահ հայրապետին: Այսպէս արար և հրեշտակ արքային Սարգենիայ:

Եւ յետ զայսօրինակ կատարելոյ զպաշտօնն հանգստեամնաւուրս ինն, յիններորդում աւուր տաենաբանեաց Ֆօռքօլ արքեպիսկոպոս Կորկիւրայ լատիներէն զարձանականն 'ի ներբող դիւցազն առաքինութեան հանգուցեալ հայրապետին Պիտօի ի: Եւ այսպիսի փառաւոր Ժուղարկաւորութեամբ հանգուցին զպատուական մարմին նորա 'ի բուն դամբարանի ըստ սովորութեան կարդի քահանայապետաց<sup>1</sup>:

## ՄԾԴ

### ԼԵՒԱՆ ԺԲ

Ա. Տ. 1825, Ն Հայունութեան ՖրանԼիուսի Յ1:

1574. Յետ աւուրցն այնոցիկ սկիզբն արարին կարդինալք ձեռնամուխ լինել յընտրութիւն նորոյ հայրապետի յաթունառաքելական: Գահերէց կարդինալն Սոմալիա զառաջինն մատոյց հանգիստոր պատարագ յեկեղեցւով որբոյն Պետրոսի 'ի պատիւ հոգւոյն սրբոյ 'ի ներ-

<sup>1</sup> Ալարծ Պիտօսի ի: Կռնդակի: Օբագ: Համ. Յ սեպ. 1825:

կայութեան համօրէն աւագաց . որք ընդ երեկօ  
գումարեցան յեկեղեցի սրբոյն Սեղբեստրոսի , և  
զկնի պաշտաման երգելով զերգնածկ սուրբ Հո-  
գիա ելին անտի թափօրիւ և անցեալընդ հրապա-  
րակն կուիրինալ՝ մտին 'ի հայրապետական պա-  
լատն , ուր եր պատրաստեալ տեղի փակարանին  
'ի 2 սեպտ : Անդ 'ի Պօղոսեան մատրան գահե-  
րէց կարդինալն խօսեցաւ բանս քաջալերականս  
առ կարդինալն ջան դնել յընարութիւն նորոյ  
հովուի ընդհանուր եկեղեցւոյ : Ընթերցան ա-  
պա զամենայն կոնդակս հայրապետաց որ վասն  
եղանակի ընարութեան պատին : Յայնժամ եր-  
դուանտմենայն կարդինալք զգուշանուլ՝ ի պահ-  
պանութիւն նոցին . նոյնպէս երգուան 'ի կա-  
տարութին յանձնառուեալ դործոյն իւրաքանչիւր  
դործակալք արտաքոյ փակարանին՝ որ եկեղե-  
ցականք և որ աշխարհականք : Յերրորդ ժամու-  
յետ մտիցն արեւու 'ի հնչիւն սահմանեալ զան-  
դակին ելին 'ի դուրս 'ի փակարանէն ամենայն  
արտաքինք , և առաջի գահերիցուն և պահապան  
մորեշալին փակեցաւ դուռնն : Զկնի աւուրց  
ինչ հասեալ 'ի չոռվմ յայլ և այլ կողմանց ումանք  
'ի կարդինալաց և յեպիսկոպոսաց՝ յաւելան 'ի  
փակարանն :

Արդ յետ քառասուն աւուրց զկնի վախճա-  
նին Պիոսի ի և յետ քսանեւօթն աւուրց մոտ-  
նելոյ կարդինալաց 'ի փակարանն , 'ի 28 սեպտ .  
յամին 1825 'ի կիւրակէի աւուր ել վիճակ ընտ-  
րութեան յարժանապատիւ կարդինալն Աննի-  
բաղ Տէլլս Ճէնկա սբոլետացի ծնեալ 'ի Ճէնկա  
'ի հայրենի կալուածս իւր 'ի 2 օգոստ . 1760 ,  
աւագերէց Լիբերէան մեծի եկեղեցւոյն և ընդ-  
հանուր աթոռակալ Հոռվմայ: Աա 'ի մատաղ հա-  
սակի անդ գիմեալ 'ի Հոռվմ մարզեցաւ 'ի Ճէ-  
մարանի տղնուական եկեղեցականաց . զորոյ տե-

սեալ և քննեալ զկատարելութիւն հոգւոյն մեծ-  
իմաստ քահանայապետն Պիոս Զ, կոչեաց զնա  
'ի կանոնիկոսութիւն եկեղեցւոյ սրբոյն Պետրո-  
սի: Որ և 'ի 1790 շաբաթբեալ ճարտարաբանեաց  
զիմատալից դամբանականն կայսեր Յովսէ-  
փայ Բ 'ի քահանայապետական մատրան կուի-  
րինալէ: Յետ այնորիկ կարգեցաւ արքեպիս-  
կոպոս թիրոյի և նուիրատկ 'ի կողոնիա • ուր մե-  
ծաւ խոհեմութեամբ վարեալ զպաշտօն իւր  
ցրուեաց զժողովակս և զհերձուածս մոլորելոց  
ոմանց • բայց 'ի ժամանակս խոռովութեանց  
Գաղղիայ գարձաւ 'ի հայրենիս իւր իբրև յա-  
ռանձնութեան կալով: Այլ սրբազան հայրա-  
պետն Պիոս Խ ծանօթ գերապանն խոհականու-  
թեան նորին՝ առաքեաց զնա նուիրակութեամբ  
'ի Ռատիսբոնա և 'ի Գաղղիա • ուրանօր փառա-  
ւոր արար զգործ պաշտաման իւրոյ, մանաւանդ  
'ի Ժարիլ: Ի 1816 • 'ի մարտի 2 կարգեցաւ 'ի  
Պիոսէ Խ կարգինալ և եպիսկոպոս Սինիկալեայ-  
այլ բազում զժուարութեամբ յանձն էառ զայն  
մեծութիւն առ կարի խոնարհութեանն. և ապա  
'ի 1820 եղեւ աթոռակալ:

Առդ իբրև Ել վիճակ քահանայապետութեան  
'ի վերայ նորա՝ մատեաւ առ նա գահերէց կար-  
դինալն Սոմալիա, և ընկալաւ 'ի նմանէ հաւա-  
նութիւն ոչ սակաւ դժուարութեամբ: Յայն-  
ժամ ողջոյն յարգութեան մատուցեալ նմա ա-  
մենեցուն, առին 'ի մէջ իւրեանց և մատուցին ա-  
ռաջի սեղանոյն, և յետ համառօտ աղօթիցն  
տարեալ զնա յաւանդատուն բազմեցուցին 'ի  
գահ, և հանեալ 'ի նմանէ զհանդերձս կարգի-  
նալի տգուցին զպապականն՝ սանդալ խաչանիշ,  
ուկեթել պատմուձան սպիտակ մետաքսեայ,  
թիկնոց, մուշտակ, ուրար, և դտակ 'ի  
գլուխ: Եւ ապա եղեալ զբառնալի դահն 'ի

վերայ պատուանդանի սեղանոյն՝ մատուցին ըլլ-  
սրբազաննի սեղան անդք նախասարկաւագ կար-  
դինալք : Ուր նստեալ նորա 'ի գահն ընկալաւ  
զառաջին նուեր հապատակութեան համբուրի  
ձեռաց և գրկախառն ողջունի համօրէն կարդի-  
նալաց մի առ մի մատչելոց առ նու ըստ կարդի-  
երիցութեան . և կարդինալն Փագդա գամեու-  
լէնկօ եղ զմատանին ձկնորսական 'ի ձեռու նորա  
(1503) :

Յետ այնորիկ կարդինալն Թամբիցիօ ել 'ի  
հովանոցն՝ որ 'ի վերայ Կուբիրինալ հրապարակին .  
ընդ նմին և ոմն 'ի վերակացուաց՝ ունելով 'ի ձե-  
ռին խաչ վերամբարձ պապական 'ի ձայն բար-  
ձրը ծանոյց ժողովրդեան զընտրութիւն նորոյ  
քահանայապետին . որով հնչեցաւ ձայն ուրա-  
խութեան ընդ քաղաքն ողջոյն :

Աստա յերեկոյին հաւաքեալ քառասունեվեց  
կարդինալաց մահին յատարանս Վատիկանու և  
դաստկարդեցան 'ի Սիստենեան մատրան : Յայնմ  
սկսհու որբազանն ելեալ 'ի Կուբիրինալ տպարա-  
նից եհաս 'ի Վատիկան . անդ զգեցաւ զքահա-  
նայապետական զգեստս յաւանդատան նոյն  
մատուան . ապա մատեալ 'ի մատուան՝ յետ ազօ-  
թից բազմեցաւ առ սեղանով , ուր ընկալաւ  
գարձեալ զհամբոյր խոնարհութեան և զերկրպա-  
գութիւն յարդութեան ամենեցուն : Անտի ա-  
պա մեծահանդես փառ օք բազմեցուցեալ 'ի գահ  
բառնալի ածին 'ի տաճար սրբոյն Պետրոսի մերձ  
'ի սեղանն սրբութեան , և անտի յատեան եկե-  
ղեցւոյն , ուր 'ի ձայն երգոց և տղօթից մատու-  
ցաւ նմա երրորդ անգամ խոնարհ հպատակու-  
թիւն կարդինալաց : Անդանօր յոտն կացեալ  
սրբազանին 'ի սլատուանդանի սեղանոյն՝ օրհնեւաց  
առաքելուկան օրհնութեամբ զայս առաջին  
նուագ զբաղմամբոխ ժողովուրդն հոծեալ 'ի

մեծի եկեղեցւոջն, որ 'ի ձայն ցնծութեան բարեմաղթեին նմա զյաջողուածս : Ընդ հնչւն երեկոյեան զանդակաց կատարեցաւ հանդէսն, և սրբազանն հանեալ զքահանայտապետական զգեստս դարձ արար 'ի պալատ իւր . առ որ յաճախեին 'ի յարգութիւն ցաւուրս երիս տմենայն իշխանաւորք և արքայազունք :

